



ՀՐԱՄԱՆԱԲ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՍԿՍԵԱԼ

Ի 1772 ԱՄԷ ՓՐԿՉԻՆ ՄԻՆՉԵՒ ՑԱՄՆ 1860

ՀԱՆԴԵՐՉ ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄԲ

ԵՒ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՐԵԲԵԼԻ ԻՐԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱԲԵՏԻՍ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԳԱԼՈՒՄՏ ԱՂԱՅԻ ՔԷՄՀԱՃԵԱՆ  
ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍ ԱՏԱՂՁԱԳՈՐԾԻ  
ԱՐՔՈՒՆԻ ՇԻՆՈՒԱԾՈՑ

ԵՒ

ՀՕՐ ԲԱՉՄԱԹԻՒ ԱՐՈՒԵՍԱԲՈՐԱՅ  
ՆՈՒԷՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՂԱՅ

ԿՈՍՏԱՆՂՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԻ ՔԻՐԻՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

–1871–

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ՍԿՍԱԾ

1772 ՓՐԿՉԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1860 ԹՎԱԿԱՆ  
ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ԵՎ

ԵՐԵՎԵԼԻ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ  
ԱՎԵՏԻՍ ՎԱՐԺԱՊԵՏ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ

Բ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ – 2008

ՀՏԴ  
ԳՄԴ  
Հ -

**ԱԻՏԵԻՍ ՎԱՐԺԱՊԵՏ ՊԷՐՊԷՐԵԱՆ**  
Ա - **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ**: -Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջ-  
միածին, 2007, էջ:

ԳՄԴ

Տպագրվում է մեկենասությամբ՝

ISBN

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

**ԵՐԿՈՒ ԽՈՍՔ**

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բազմավաստակ Հայր Միքայել վարդապետ Զամչեան սկսեալ զպատմութիւն Հայոց յարարչութենէ աշխարհի, բերէ եւ հասուցանէ յեռահատոր գիրս պատմութեան իւրոյ մինչեւ յիւր ժամանակս, այս է՝ մինչեւ յամ տեառն 1772, յորում դնելով զՂուկաս կաթողիկոս սրբոյ Էջմիածնի, զԶաքարիա պատրիարք Կոստանդնուպօլսոյ, եւ զՍուլթան Մուստաֆա Գ. կնքէ զպատմութիւն իւր:

Իսկ անտի եւ այսր ազգային դէպք եկեղեցականք եւ քաղաքականք յանձանձօթս էին, եւ ամենայն ոք ՚ի ծերութեանց պէսպէս եղանակաւ պատմէր. երկոքին իսկ ականատեսք պատմէին զմի եւ զնոյն իր, բայց երկոցունցն պատմութիւն չէր միաբան ՚ի ստուգութեան մասին, թէեւ երկաքանչիւրն զիւր խօսսն պնդէր հաւաստի ցուցանել. եւ այս անհամաձայնութիւն նոցին հալէր եւ մաշէր զոգի իմ, որ ՚ի մանկական տիոց անպատմելի սէր եւ փափագ ունելով ընթեռնուլ զպատմութիւն ազգիս, մինչեւ զերիս հատորս Զամչեան պատմութեան ծայրէ ՚ի ծայր ինն անգամ ընթերցեալ, եւ չէի լիովին յագեալ:

Իսկ մինչ ՚ի 1812 ամին դէպ եղեւ մեզ մտանել պաշտօնիւ փոքրաւորութեան առ ոտս Յովհաննու պատրիարքի Կոստանդնուպօլսոյ, որ հրաժարեալ ՚ի պատրիարքութենէն նստէր յիւ սքիււատոր ՚ի վանս սուրբ Երուսաղէմի, (որ այժմ ճեմարան ասի) տեսեալ զսէր եւ զբաղձանս մեր առ սէր պատմութեան ազգիս, հրամայեաց մեզ զժամանակակից դէպս պատմութեան ազգիս շարակարգել պարզ շարադրութեամբ. եւ զանցեալ դէպսն ինքն իսկ պատմէր բանիւ բերանոյ եւ առաջի իւր տայր գրել:

Եբաց եկ զարկղ մի մեծ, յորում էին նամակք, կանդակք աւելի քան գերկերիւր, գրեալք ՚ի սուրբ Աթոռոցն Էջմիածնի եւ Երուսաղէմի եւ առաջնորդաց. զորս զա ենեսին ետ ինձ մի առ մի ընթեռնուլ եւ քաղել ՚ի նոցունց զվերաբերեալսն պատմութեան ազգիս, յամենայնի զստոյգն բացատրելով եւ մեկնելով:

Դէպ լինէր բազում անգամ, զի եղծանել տայր զգրեալս իմ եւ ասէր այդմ չարեաց ես ինքն պատճառ էի եւ եղէ. յանցանքն եւ մեղքն իմ են ստոյգն այս է. այսպէս գրեա, զի պատմութիւնն ասէր պարտի լինել ճշմարիտ եւ պատմիչն ճշմարտապատում:

Յետ մահուան Յովհաննու պատրիարքին որ ինչ անցք եւ դէպք պատահեցան յաւուրս պատրիարքութեան Աբրահամու, Պողոսի եւ Կարապետի, քաղեղաք յընդարձակ դիւանէ պատրիարքարանին, զորս եւ աչօք իսկ տեսեալ էր մեր. բայց ՚ի նմա արձանագրեալ էին նամակք, վճիռք, եւ ժողովք, եւ ստորագրութիւնք եկեղեցականաց եւ աշխարհականաց. ափսոս, զի այս գեղեցիկ դիւանն արեցաւ ՚ի հրդեհին Հօճա փա ալի յաւուրս Կարապետ պատրիարքի ընդ Մայր եկեղեցոյն եւ պատրիարքարանին եւ ձեռագիր մատենից, յորս էր եւ այն հազուագիւտ Կանոնագիրքն գրեալ ՚ի մագաղաթի ՚ի Տարսոն քաղաքի Կիլիկիոյ ՚ի թուին Հայոց ՈՒՆԷ:

Իսկ որ ինչ դէպք պատահեցան յաւուրս պատրիարքացս Ստեփանոսի, Յակոբոսի, Աստուածատրու, եւ Մատթէոսի, գրեցաք զամենայն ըստ եղելութեանն՝ գոլով մեր իսկ ականատես քարտուղարութեան պաշտօնիւ ՚ի դիւանի պատրիարքարանին. եւ յաւուրս Գէորգայ պատրիարքի գնացեալ մեր ընդ Մատթէոս կաթողիկոս ՚ի սուրբ Էջմիածին քարտուղարութեան պաշտօնիւ, զդէպս վերաբերեալս յայնոսիկ կողմանս հարցուփորձ արարեալ ձերունի արքեպիսկոպոսաց, ուղղագրեցաք որ ինչ երկբայելի թուէին մեզ:

Իսկ ՚ի քաղաքական մասին ոչ սակաւ օգնեաց մեզ Շանէ գատէ Մուհամմէտ էֆէնտի դիւանապետն Օսմանեան պետութեան, որ զարձանագիրսն զամենայն պահէր առ իւր եւ արձանագրէր ըստ ծանուցանելոյ Բ. Դրան: Եւ զայսոսիկ նշանակեալ եմք ՚ի ժամանակագրութիւնս երեւելի իրաց, զամսաթիւն եւ զամս իւրաքանչիւրոցն առաջի շարակարգելով:

Ի տասն ամաց հետէ աւարտեալ զայս գործ յիսնամեայ աշխատասիրութեան իմոյ, զհետ էի հնարս գտանել հրատարակութեան ՚ի ձեռն պատմասիրի ուրուք ազգայնոյ: Մինչ այս մինչ այն եւ ահա պատահեցաւ մեզ Պ. Ստեփան Պողոս Փափաղեանց, որ ձեռն արկեալ ՚ի պատրաստութիւն ազգային պատմութեան դասական ոճիւ ՚ի պէտս վարժարանաց, եւ ազգային վերջին դիպաց իսկ հետամուտ լեալ, եկն եգիտ զիս առ ՚ի ճշդել զթուականս ինչ եւ զդէպս, մանաւանդ անգուգական բարերարի, զորոյ կենսագրութիւնն ստացեալ յինչին առժամայն ՚ի լոյս ընծայեաց ՚ի հնգետասանօրեայ ժամանակ հայրենանուէր հանդիսի իւրում յամի 1863, իսկ վասն հրատարակութեան պատմութեանս այլում դիպող առթի մնալով, յանցելում ամի ձեռն արկ եւ զայս ՚ի լոյս

ընծայել բաժանորդագիր հանգանակութեամբ ազգայնոց: Սակայն ոչ այնչափ յաջողութիւն խոստանայր եւ այս եղանակ 'ի հրատարակութիւն պատմութեանս, որ բաւական ծախուց կարօտէր. եւ ահա Տիկին Արուսեակ Պէզիրճեան, անդրանիկ դերասանուհի՝ որ յազգային թատերաբեմին առաջին մրցանակի արժանի հանդիսացաւ յամի 1861, եւ այր նորա Պ. Սոփոնիկ Պէզիրճեան քաջ 'ի նկարչութեան արուեստի, այսպիսով կարեւոր գործոյ սիրողք լեալ, առաւել յըզձից ազգասիրութեան քան 'ի ձեռնահասութեան խրախուսեալ, յորաժեցան ձեռնտու լինել տպագրութեան գործոյս, եւ իբրեւ արուեստաւորք՝ գեղեցիկ խորհրդով մտաբերեցին նուիրել 'ի յիշատակ անմահ հոգւոյ Գալուստ աղայի Քէմհաճեան, ճարտարարուեստ ատաղձագործի արքունի շինուածոց, որ հայր եղեւ բազմաթիւ արուեստաւորաց, եւ պատճառ բարեկեցութեան բազմաց:

Ի վախճանի զայս եւս արժան համարիմ ծանուցանել, զի զայս աշխատութիւն իմ եւ զվաստակ նուիրելով սիրելի ազգիս խնդրեմ անբասիր առնել զիս 'ի թերութեանց, որք գտանիցին յայսմիկ, գիտելով թէ որքան սրտամաշ ջանից եւ յոգնահոսան քրտանց պէտս ունին այսպիսի աշխատութիւնք: Նա միայն գիտէ, որ զայսպիսի գործ մեծ եւ տարժանակիր յանձին կրեալ է զբազում անմիաբանս զտել եւ պարզել, զփաստս եւ զապացոյցս նոցին խնդրել որոնել, զհաւանականագոյնս ընտրել եւ շարակարգել:

Արդ եթէ հաճոյ թուիցի այս աշխատութիւն իմ յաչս սիրելի ազգիս, այն եւ եթ լիցի ինձ մխիթարութիւն եւ պարծանք առ յապա:

22 Դեկտեմբեր 1870

Ա. Պէրպէրեան



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս պատրիարքութեան Զաքարիայ, եւ Յովհաննու Համատանցւոյ, եւ  
հալածանաց Հռովմէական Հայոց:

(1772) **Զաքարիա** պատրիարք կաղզսւանցի՝ միաբան աթոռոյն էջմիածնի եւ նուիրակ, նստաւ յաթոռ պատրիարքութեան կոստանդնուպօլսոյ՝ ՚ի վեցերորդ ամի թագաւորութեան Սուլթան Մուստաֆա արքայի, եւ ՚ի տասներորդ ամի Հայրապետութեան տեառն Սիմէօնի Հայոց կաթողիկոսի՝ յամի տեառն 1772 ՚ի նոյեմբերի 30:

(1777) Յաւուրս սորա տէր Սիմէօն կաթողիկոս էջմիածնի՝ արար փոփոխութիւն Տօնացոյցին Հայոց, զոր շինեալ էին նախնի սրբազան Հարք, սուրբն Իսահակ Պարթեւ եւ սուրբն Մեսրոպ. որոց զկնի եւ սուրբն Գրիգոր Վկայասէրն՝ եղբայր Ներսէսի Շնորհալուոյն՝ զվարս սրբոց թարգմանեալ ՚ի Յունականէն, եւ բերեալ ՚ի մի ըստ աւուրց նահատակութեան նոցին՝ կարգաւորեաց զՏօնացոյցն, եւ բանադրանս յաւելեալ ՚ի վերայ՝ փակեաց զնա, յասելն.՝ Որպէսզի մի՛ իշխեացէ այլ ոք օտար ինչ եւ սխալական գիւտ մուծանել ՚ի յայս հաւաստասահմանեալն Տօնացոյցն՝: Իսկ Սիմէօն կաթողիկոս առ ոչինչ համարեալ զայս կապ բանադրանաց, արար փոփոխութիւն տօնախմբութեանց՝ որպէս ինքն զՅովհան Որոտնեցի, զԳրիգոր, եւ զՄովսէս Տաթեւացիս, եւ սահմանեաց տօնել զնոսա ընդ սուրբ եւ աստուածաբան Հայրապետին Յովհաննու Օձնեցւոյ՝ յերրորդում շաբաթու քառասնօրեայ պահոցն: Եւ այսպէս կարգադրեալ Սիմէօն զՏօնացոյց իւր, առաքեաց ՚ի Կոստանդնուպօլիս, զի խափանեալ զառաջինն, զայս զշարակարգեալն յիւրմէ՝ ՚ի կիր արկցեն՝ Իսկ Զաքարիա պատրիարք ընթերցեալ զՏօնացոյցն զայն, մինչդեռ ծանօթացաւ փոփոխութեանց նորին, կամեցաւ հերքել զնա ՚ի բաց, այլ ակնա-

ծեալ յայնժամ 'ի Սիմէօնէ՝ չեղեւ կարող առնել՝ զոր կամէրն, ուստի եւ 'ի կիր ածին զնա 'ի Կոստանդնուպօլիս իբրեւ զամս չորս:

(1780) Այս Զաքարիա պատրիարք յարոյց հալածանս 'ի վերայ Հռովմէական Հայ կոչեցեալ ժողովրդեանն 'ի մարտի 25. եւ զբազումս 'ի նոցանէ առաքեաց 'ի ծառայութիւն թիոյ 'ի նաւատեղին, որոց անուանքն են այսոքիկ. Կոյր Մինաս, Գափամաճի Լօրէն, Վարդան մանկավարժ, Թիւլպէնտճի Յովսէփ, մահտեսի Քերովբէ, Դերձակ Սերովբէ, ժամագործ Սերովբէ, երկու եղբարք Աբիկ եւ Յովհաննէս, ճամպազեան մահտեսի Յարութիւն: Երկուք 'ի սոցանէ այսինքն կոյր Մինաս եւ ճամպազեան մահտեսի Յարութիւնն մեռան 'ի բանտի անդ նաւատեղեաց: Արգել Զաքարիա եւ զքահանայս չմկրտել զերեխայս նոցա, եւ չթաղել զմեռեալս, որով մեռեալք հոտէին 'ի տան:

Բայց եւ նոքա 'ի ձեռն դեսպանին Գերմանացւոց հայթհայթեցին զծանր վնաս յանցանաց վասն նորա, իբրեւ զի "Զաքարիա պատրիարք Հայոց 'ի ձեռս բերեալ զկնքեալ թուղթ տէրութեան Գերմանացւոց, լուծեալ է զկնիք նորա եւ ընթերցեալ" զայսպիսի բարուրանս եղեալ 'ի վերայ նորա, եւ ծանուցեալ արքունի դրան, փոխեցաւ Զաքարիա առ ժամանակ 'ի տեղի նորա զՀամատանցի Յովհաննէս վարդապետ զառաջնորդն Պրոսպայու:

(1781) Սա այնչափ սաստկացոյց զհալածանս Հռովմէական Հայ ժողովրդեան, մինչեւ խնդրել նոցա կրկին անգամ զԶաքարիա պատրիարք, քանզի եղեւ պատճառ Յովհաննէս սպանելոյ եւ զմի ոք 'ի Հռովմէական Հայոց, եւ ոմանց յեղաշրջելոյ 'ի Մահմէտական օրէնո: Առաքեաց 'ի ծառայութիւն թիոյ 'ի նաւատեղին եւ զբազումս, յորոց գլխաւորքն են այսոքիկ. Հանըմ օղլու, աքտէր Սուքիաս, Պարոն օղլու, Նիկողիմոս, Նալպանտեան Գրիգոր, ժամագործ Մատթիա, Երկանեան Պետրոս, Արմաքէշ Պարոն, Պողոճի Սերովբէ, Արմաքէշ Հիւրմիւզ: Իսկ Թառփօճի Կոմիտաս, եւ Ծոռովիգեան Անտօն, եւ Չիլինկիր Պետրոս, սոքա եղան 'ի բանտի, բայց ազատեցան 'ի գնալոյ 'ի թի: Խայտառակեաց Յովհաննէս պատրիարք եւ զթաղումն նոցա, բոժոժ կախեալ զբազաղէ մեռելոցն 'ի ճանապարհի, եւ զձեւ դազաղին եւս փոխեալ, սանդղաձեւ յօրինեաց վասն նոցա, եւ յայսմ միջոցի մեռաւ Թընկըրեան Գրիգորի, եւ զկնի երից աւուրց ժահահոտեալ թաղեցաւ խղճաբար: Արդ այսպիսեօք անհանդուրժելի նեղութեամբք այնչափ տառապեցոյց զնոսա Յովհաննէս պատրիարք, մինչեւ յետ

տասն ամսոց հանին զնա 'ի պատրիարքութենէն, եւ առաքեցին զնա 'ի գիւղն Խարթալ, յորմէ ապա զնաց յառաջնորդութիւն Ամասիայ քաղաքի, եւ դարձուցին վերստին զՋաքարիա վարդապետ յաթոռ պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ, յամի տեառն 1782 'ի մարտի 31: Այլ 'ի վերադառնալ Ջաքարիայ պատրիարքի՝ ոչ այնչափ եցոյց նոցա զհալածանսն, եւ սակաւ առ սակաւ ետ նոցա զհամարձակութիւն եւ զթոյլտութիւն, բայց արար ժողով 'ի պատրիարքարանին, եւ օրինադրեաց, զի Հայք մի՛ արասցեն խնամութիւն ընդ Հռովմէական Հայոց, եւ մի ազգականութիւն, եւ այսպէս որոշեաց զնոսա Ջաքարիա իբրեւ զազգ մի. որոց ուրախացեալ ընդ այս, առաւել եւս վստահացան յորոշումն իւրեանց, եւ սկսան յայնմհետէ չերթալ երբէք յեկեղեցիս Հայոց, այլ միայն յեկեղեցիս Լատինացւոց:

(1785) Եկն 'ի սմին ժամանակի 'ի Կոստանդնուպօլիս Սահակ եպիսկոպոս՝ նուիրակ էջմիածնի, այր ահագին եւ փառահեղ տեսլեամբ: Սմա այնչափ ատելի էր Ջաքարիա պատրիարք, մինչ զի բազում անգամ ելեալ Սահակ յեկեղեցւոջ յատենաբանութեան իւրում քար արձակէր առ նա, պէսպէս իրաց նմանութիւնս կուտակելով 'ի վերայ նորա առանց տալոյ զանուն նորա, եւ երբեմն բերեալ 'ի կարգ բանից իւրոց զբառս՝ «այլ յափշտակող» արտաբերեալ ընդ բերանն բարձր ձայնիւ, ձեռամբ իւրով զՋաքարիա պատրիարք ցուցանէր:

Սա՛ յաւուր միում առանձինն գտեալ զՋաքարիա 'ի սենեկի իւրում, եւ ի վիճել երկոցունց վասն աթոռոյն էջմիածնի, զայրանայ Սահակ ընդ Ջաքարիա, եւ յարուցեալ 'ի տեղւոջէ իւրմէ՝ բռնն հարկանէ զնմանէ, եւ կռուփա հանէ նմա ամենայն զօրութեամբ, եւ ելեալ անտի գնայ այլուր: Իսկ Ջաքարիա պատրիարք լցեալ սրտմտութեամբ եւ բարկութեամբ՝ հանէ վասն նորա հրովարտակ արքունի յաքսորա առաքել զՍահակ, բայց նորա ծանուցեալ զայն, խոյս տայ 'ի Կոստանդնուպօլսոյ, զորոյ զկնի իմացեալ Ղուկաս կաթողիկոս, առաքէ նուիրակ զՄինաս եպիսկոպոս զայր բարեբարոյ եւ հեզ, որ յառաջ քան զՍահակ վարդապետ եկեալ էր եւ երբեմն 'ի նուիրակութիւն Կոստանդնուպօլսոյ, եւ Սահակ գնայ 'ի Զմիւռնիա, եւ մնայ անդ, ուր եւ վախճանեցաւ յետ տասն ամսոց:

## ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս փոփոխութեան Տօնացուցին Հայոց, եւ կաթողիկոսութեան Սսոյ տեառն Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Երուսաղէմի տեառն Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ տեառն Դանիէլի:

**Կ**ացեալ Սիմէօն յաթոռ հայրապետութեան զամս եօթն եւ տասն եւ կէս, վախճանեցաւ, եւ յաջորդեաց յաթոռ նորա Ղուկաս կաթողիկոս, ընդ այս դժկամակեալ Զաքարիա պատրիարք, վասն լինելոյ Ղուկասու կաթողիկոս առանց զիտութեան իւրոյ, ոչ յիշատակեաց զնա ամիսս ինչ, այլ յետ տասն ամսոց ժողովեալ իշխանաց առ նա, եւ շահելով զկամս Զաքարիայ, զրեցին առ Ղուկաս թողթ մահասարական՝ ընկալեալ զնա կաթողիկոս կնքով պատրիարքին եւ ամենայն մեծամեծաց:

(1784) Ի սորա ժամանակս Զաքարիա պատրիարք՝ որ չէ հաճեալ ընդ Տօնացոյց Սիմէօն կաթողիկոսի, արար ժողով եպիսկոպոսաց, որք գտան յայնժամ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ քահանայից, եւ մեծամեծացն Հայոց, եւ համահաւանութեամբ ամենեցուն՝ վճռեաց ՚ի ժողովին ՚ի գործ արկանել զհին Տօնացոյցն, որպէս յառաջն, եւ չընդունել զՍիմէօնին ամենեւին երբէք, զի ազգ մեր ասէ՝ ամուր եւ հաստատ է ՚ի վերայ ամենայն ծիսից եւ աւանդութեանց նախնեաց մերոց, եւ չէ կարող զհին աւանդութիւնս իւր փոփոխել երբէք:

Եւ այսպէս հրամանաւ ժողովոյն ուր ուրեք գտանէին ըզ Տօնացոյց Սիմէօնին, բերէին առ Զաքարիա պատրիարք, որ գաղտ թագուցանէր զնոսա ՚ի հուր, եւ եկաց մնաց առաջինն ՚ի գործածութեան յաւուրս Զաքարիայ պատրիարքի: Բայց յետ ժամանակաց յաւուրս Դանիէլի պատրիարքի արգելաւ վերստին գործածութիւն հին Տօնացուցին, եւ զՏօնացոյց Սիմէօնի տպագրեալ ՚ի Կոստանդնուպօլիս, սկիզբն արարին ՚ի կիր առնուլ, յորմէ մինչեւ ցայսր ՚ի գործ ածի յեկեղեցիս Հայոց:

(1784) Յաւուրս յայտոսիկ վախճանի տէր Եփրեմ կաթողիկոս Սսոյ ՚ի տանէ աջապահից, դեղ մահու արբուցեալ յայլազգի իշխանէ տեղւոյն, եւ յաջորդէ զաթոռ կաթողիկոսութեան Սսոյ՝ Թորոս եպիսկոպոս Սսեցի, զորոյ զհանդէս օծութեանն կատարեցին յամսեանն սեպտեմբերի յամի տեառն 1784 ՚ի Կոստանդնուպօլիս յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնի, ուր եւ գտան առաջակայ վեց

եպիսկոպոսունք, երկոտասան վարդապետք, քսան եւ չորս քահանայք՝ եւ սարկաւագունք ինն, զոր յետ երկոտասան աւուրց առաքեցին ՚ի Սիս:

(1796) Եկն յայտոսիկ աւուրս ՚ի Կոստանդնուպօլիս Դանիէլ եպիսկոպոս նուիրակ սուրբ Էջմիածնի՝ այր խոհեմաազարդ եւ գովելի վարուք, միանգամայն եւ շքեղ կերպարանօք՝ պատուեալ յաչս մեծամեծացն Հայոց, եւ կատարեալ զգործս պաշտաման իւրոյ, գնաց ՚ի Չմիւռնիա ըստ սովորութեան նուիրակացն Էջմիածնի մնալ անդ գամս երիս:

Բայց սակայն խռովութիւն ինչ ծագեալ անդր ՚ի հասարակութեան վասն Դանիէլի, եւ երկպառակութիւն մեծմտեալ ՚ի մէջ նոցա լինէր կռիւ ոչ սակաւ: Եւ թէպէտ Չաքարիա պատրիարք բազմօք ջանացաւ խաղաղեցուցանել զնոսա, եւ հաստատել զԴանիէլ յառաջնորդութեան իւրում, այլ չեղեւ հնար վասն որոյ եւ այն մասն ժողովրդեան՝ որք չէին հաճեալ ընդ Դանիէլ, գրեցին առ Ղուկաս կաթողիկոս բառնալ ՚ի միջոյ իւրեանց զԴանիէլ, զի բարձցի եւ երկպառակութիւնն ՚ի միջոյ իւրեանց, եւ Ղուկաս կաթողիկոս առ դարման տանելոյ այսմ, առաքեաց ՚ի Կոստանդնուպօլիս զՄարտիրոս եպիսկոպոս Կեսարացի՝ այր հեզ եւ խոնարհ՝ եւ շահեցող յամենայնի. եւ ետ նմա զերկուս կոնդակս, զմին՝ վասն նուիրակութեան ՚ի կողմանս Բուժէլիյի, եւ զմիւսն՝ վասն առաջնորդութեան Չմիւռնիոյ, եւ խօսեցաւ ընդ նմա, զի եթէ Չմիւռնացիք ամենեքեան հաճեսցին ընդ Դանիէլ, գնասցէ Մարտիրոս ՚ի նուիրակութիւն Բուժէլիյի. իսկ եթէ չհաճեսցին, Մարտիրոս գնասցէ ՚ի Չմիւռնին, եւ Դանիէլ ՚ի Բուժէլի, որպէս եւ եղեւ իսկ, վասն զի Չմիւռնացիք ոչ հաճելոյ բնաւ երբէք ընդ Դանիէլ, առաքեաց Չաքարիա զՄարտիրոս եպիսկոպոս ՚ի Չմիւռնին, եւ Դանիէլ դարձաւ ՚ի Կոստանդնուպօլիս: (1797 փետրուար 1):

Ի վերադառնալ Դանիէլի այսր, մինչդեռ յանդիման եղեւ Չաքարիա պատրիարքի՝ նախատեաց զնա Չաքարիա բազմազիմի բանիւք, եւ ՚ի սաստիկ ձմերան եղանակի առաքեաց ՚ի նուիրակութիւն ՚ի Բուժէլի՝ եւ հանդարտեցաւ խռովութիւնն այն մեծ:

(1798) Յետ այս ամենայնի խնդրեաց հրաման Չաքարիա պատրիարք յԵպարքոսէն մեծէ՝ որ կոչէր Իզգէթ Մէհէմմէտ փաշա, նորոգել զեկեղեցին ՚ի Ղուրուչէշմէ յանուն սուրբ Խաչի, որ ՚ի բազում ժամանակաց հետէ աւեր եւ ամայի մնացեալ էր, եւ նորա ծանուցեալ արքայի զխնդիր նորուն, էառ հրաման ՚ի նմանէ

եւ նորոգեաց Ջաքարիա զեկեղեցին զեղեցիկ յոյժ քան զառաջինն, եւ էօժ զնա յամի տեառն 1798 ՚ի փետրուարի 28 ՚ի Տնտեսի կիւրակէի աւուր մեծի պահոցն:

Յետ չորից ամսոց շինութեան եկեղեցւոյն՝ էառ հրաման Ջաքարիա պատրիարք եւ վասն եկեղեացն Պրուսայու եւ Անգրիանուպօլսոյ, եւ ընկալեալ զհրովարտական արքունի՝ առաքեաց առ իշխանս քաղաքացն, որոց վաղվաղակի քակեալ զեկեղեցիս ՚ի հիմանց՝ նորոգ կառուցին զնոսա զեղեցիկ եւ վայելուչ քան զառաջինն եւ մեծ:

Ի սորա ժամանակս շինեցին եւ զորմունս պարտիզի սուրբ Աստուածածին եկեղեցւոյն պատրիարքարանի, բայց վասն առաւել բարձրութեան նորին քակեցին զնա, թէպէտ հրամանաւ Եպարքոսին դարձեալ շինեցին զնա խոնարհ քան զառաջինն:

Իսկ Դանիէլ եպիսկոպոս՝ որ զնացեալ էր ՚ի Րումէլի ՚ի նուիրակութիւն, յետ միոյ ամի վճարեալ զգործս իւր, եկն ՚ի Կոստանդնուպօլիս յաւուրս մեծի պահոց, եւ անտի եւս կամէր զնալ յէջմիածին. բայց վասն զի Ջաքարիա պատրիարք անկեալ կեայր հիւանդագին ՚ի մահիճս, վասն որոյ եւ մեծամեծք Հայոց ոչ հաճեցան ընդ զնալն նորա, եւ ոչ թոյլ ետուն նմա հրաժարիլ ՚ի Կոստանդնուպօլսոյ, զի գիտէին, թէ մերձ էր վախճան պատրիարքին, եւ կամէին նստուցանել զնա յաթոռ պատրիարքութեան, վասն որոյ արգելին զզնացս նորա, եւ մնաց Դանիէլ ակամայ կամօք ՚ի Կոստանդնուպօլիս:

Իսկ յաւուր միում ուրբաթու ՚ի մարտի 11 ՚ի հինգերորդ ժամու վճարեաց զկեանս իւր Ջաքարիա պատրիարք, կալեալ զաթոռ պատրիարքութեանն ամս քսան եւ վեց, եւ ընդ առաւօտն յաւուրս շաբաթու նա ինքն Դանիէլ եպիսկոպոս կատարեաց զկարգ թաղման նորա, եւ տարեալ ՚ի Ղուրուչէճմէ, թաղեցին զնա յեկեղեցւոջն, եւ հրամանաւ Դանիէլի յաւուրսն յայնոսիկ լինէր պատարագ յայտնի ակներեւ վասն հոգւոյ հանգուցեալ պատրիարքին, բացեալ զվարագոյրս խորանացն, որք ծածկեալ էին ըստ գօլոյ աւուրցն ՚ի պահս քառասնօրեայ, եւ յաջորդեաց զաթոռ պատրիարքութեան Դանիէլ յամի 1799 ՚ի մարտի 15:

## ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս վախճանի Ղուկասու կաթողիկոսի, եւ ընտրութեանն Յովսէփայ, եւ Բարթողոմէայ, եւ Դանիէլի:

**Յ**ետ անցանելոյ ութն ամսոյ եղեւ նորոգութիւն շինութեան եկեղեցւոյն Ղալաթիոյ՝ որ յանուն սուրբ Լուսաւորչին. եւ գնացեալ անդ Դանիէլ պատրիարք էօծ զեկեղեցին ՚ի նոյեմբեր 13:

Անդ առաջակայ գտան Յովհաննէս, Պետրոս, եւ Յակոբոս եպիսկոպոսունք աշակերտք Զաքարիայ պատրիարքի յօծման եկեղեցւոյն, ընդ որս գտաւ եւ գալուստ նուիրակ սուրբ Էջմիածնի՝ այր ծեր եւ պարզամիտ, որ նորոգ եկեալ էր յայնժամ ՚ի Կոստանդնուպօլիս, թէպէպեւ յառաջ քան զերիս ամս եկեալ էր երբեմն եւ յաւուրս Զաքարիայ պատրիարքի:

Յետ չորից ամսոց եղեւ նորոգութիւն եւ սուրբ Եղիայ եկեղեցւոյն՝ որ յէյուպ, եւ հրամանաւ Դանիէլի պատրիարքի գնաց Յովհաննէս եպիսկոպոս, եւ էօծ զեկեղեցին յամի տեառն 1800 ՚ի մարտի 26:

Իսկ իբրեւ ամն լրանայ պատրիարքութեան Դանիէլի, վախճանեցաւ Ղուկաս կաթողիկոս կալեալ զաթոռ կաթողիկոսութեանն գամս քսան եւ մի, եւ լուր մահուան նորա եհաս ՚ի Կոստանդնուպօլիս:

Եւ միբանաք սուրբ Էջմիածնի ամենեքին արարեալ ժողով ՚ի յընտրութիւն կաթողիկոսի՝ գտին ընտիր եւ արժանաւոր կաթողիկոսութեան զԴանիէլ պատրիարք Կոստանդնուպօլսոյ. վասն որոյ թուղթ մահսերական գրութեան գրեալ եւ կնքեալ յականէ յանուանէ եպիսկոպոսք, վարդապետք, եւ բոլոր միաբանութիւն սուրբ ուխտին, առաքեցին առ Դանիէլ ՚ի ձեռն Դաւթի եպիսկոպոսի Լօռեցւոյ՝ որդւոյ Պօրչալւոյ Տփխիսեցւոյ, որ էր այր բարձրահասակ եւ մեծակն, երկարամօրուս եւ թխադէմ, խորագէտ եւ դարանագործ: Սա եկեալ ՚ի Կոստանդնուպօլիս, մատոյց զթուղթն առ Դանիէլ պատրիարք, յորում հրաւիրէին զնա ինքն զԴանիէլ ՚ի հովուապետութիւն ընդհանուր ազգիս:

(1800) Ընդ այս ժամանակ եւ Յովսէփ արքեպիսկոպոս առաջնորդն բոլոր Ռուսաստանու, այր մեծահամբաւ եւ գրասէր, որ

Հաստատեալ զտպագրատունն Հայոց 'ի Ռուսաստան, զբաղումս գիրս ետ տպել, որպիսիք են՝ Ընդհանրական, եւ Յիսուս Որդի, Պատմութիւն Թելեմաքին, Աղօթագիրք, Նարեկ եւ այլ այնպիսիք, եւ յամին 1796 առաքեաց նաեւ զՕրացոյց տպեալ անդր գեղեցիկ յօրինուածով:

Սա լուեալ զլուր մահուան Ղուկասու, եւ 'ի ձեռն տէրութեան Ռուսաց գուն գործեալ յինքն ընկրկել զիշխանութիւն կաթողիկոսութեան, գրէր առ որս հաւատարիմ կարծէր ինքեան, զի ընտրեացեն զինքն 'ի կաթողիկոսութիւն էջմիածնի, պատճառս դնելով, թէ ինքն իցէ 'ի հնագոյն եպիսկոպոսաց սուրբ աթոռոյն, եւ վասն այն քան զամենեսին արժանաւոր:

Այս համբաւ տարածեալ 'ի Կոստանդնուպօլիս, 'ի խորհուրդ մտին մեծամեծք Հայոց յընտրութիւն կաթողիկոսի, եւ թէպէտ Դանիէլ պատրիարք կամեցաւ զնալ ինքն 'ի կաթողիկոսութիւն ըստ խնդրոյ բոլոր միաբանութեանն սուրբ էջմիածնի, այլ իշխանք մեծամեծք ոչ երբէք թողուին զնա 'ի կամս իւր՝ ասելով. "Եթէ ոչ թոյլ տամք քեզ հրաժարել 'ի պատրիարքութենէս, զի ոչ մեկնիմք 'ի քէն. զի բոլոր հասարակութիւն քաղաքիս ոչ զայլ ոք ճանաչեն պատրիարք իւրեանց, բայց միայն զքեզ:

"Բայց զի միաբանք ամենեքին խնդրեալ են զքեզ, ընտրեմք մեք հրամանաւ քով փոխանակ քո զմի ոք յեպիսկոպոսաց՝ առաքինի եւ իմաստուն, խոհեմ եւ յանձանձիչ կառավարութեան սուրբ աթոռոյն":

Իսկ Դաւիթ որ եկեալ էր յէջմիածնայ մահարական գրութեամբն, ստիպէր զԴանիէլ պատրիարք մեկնիլ յաթոռոց պատրիարքութեան՝ ասելով. "Եթէ Հայր սուրբ, միաբանք զքեզ կամին ամենեքին, եւ անհնարէ այլոց ումեք նստիլ յաթոռ կաթողիկոսութեան անդ. մինչ զի եթէ ոչ կամեսցի տէրութիւն քո, ծանիցես, զի սուրբ տունն խանգարի եւ կործանի, եւ պատճառ կործանման նորա լինի չընդունելութիւն քո, հապա՝ 'ի փառս ազգիս եւ յօգուտ սուրբ աթոռոյն ընկալ զիշխանութիւն հովուապետութեան ազգիս":

Այս էր միտ դիտաւորութեան Դաւիթին, զի հրաժարեալ Դանիէլ 'ի պատրիարքութենէն, ինքն յաջորդեսցէ 'ի տեղի նորա. քանզի գիտէր ստուգիւ, զի անհնար էր լինել ինքեան կաթողիկոս, վասն որոյ եւ զաթոռոյն Կոստանդնուպօլսոյ ջանայր յինքն կորցել զիշխանութիւն պատրիարքութեան, ուստի եւ զայսոսիկ



եւ որ սոցին նման են բանք, խօսեցաւ Դաւիթ առ Դանիէլ, եւ հաճեցոյց զնա առ այս միտ:

(1800) Իսկ իշխանք Հայոց ժողով արարեալ յեկեղեցւոջն սուրբ Աստուածածնի յաւուր հինգշաբթի, ընտրեցին զԲարթոլղիմէոս եպիսկոպոս՝ Կապուտիկ վերակոչեցեալ՝ զաշակերտ Զաքարիայ պատրիարքի՝ այր շնորհազարդ եւ գովելի վարուք, իմաստուն եւ խորախորհուրդ, արժանաւոր արդանեւ կաթողիկոսական վերամբարձ իշխանութեան, որ առաջնորդն էր յայնժամ ՚ի Նիկոմիդիա: Հաճեցուցին եւ զԴանիէլ պատրիարք ՚ի կամս իւրեանց, եւ հրամանաւ նորա եւ հաւանութեամբ ժողովոյն առաքեցին հրաւիրակս առ Բարթոլղիմէոս եպիսկոպոս գալ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ ընդունիլ զիշխանութիւն կաթողիկոսութեան, եւ զնալ յէջմիածին:

## ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս գործոց Յովհաննու եպիսկոպոսի Կոստանդնուպոլսոյ, եւ Գալուստ նուիրակին էջմիածնի, եւ ընտրութեանն Դանիէլի՝ ի կաթողիկոսութիւն, եւ Դաւթի՝ ի պատրիարքութիւն:*

Նստէր ՚ի սմին ժամանակի ՚ի Պալատ Յովհաննէս եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի աշակերտ Զաքարիայ պատրիարքի՝ այր հաճարեղ եւ խորադէտ, որ էր յայնժամ քարոզիչ սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն Պալատու:

Սա տեսեալ զայսպիսի փոփոխութիւնս, եւ լուեալ զխորհուրդս ընտրութեան կաթողիկոսի եւ պատրիարքի, կամեցաւ յինքն ընկրկել զպատրիարքութիւն Կոստանդնուպոլսոյ, այլ չէր նմա հնար յառաջ տանիլ զայս իղձ սրտի իւրոյ՝ ոչ ուստեք, եթէ ոչ՝ երկպառակութիւն ինչ անկցի ՚ի ժողովրդեան, որով գուցէ մարթ իցէ նմա ՚ի գլուխ հանել զփափագ իւր: Սա հանապազ կենակցէր ընդ Գալուստ նուիրակին էջմիածնի, որ էր այր պարզամիտ եւ անխոհեմ, եւ հաւատացուցեալ էր նմա զինքն իբրեւ ճշմարիտ եւ սիրելի եւ հարազատ բարեկամ:

Արդ յայսոսիկ աւուրս հրաւիրեալ զնա ածէր ՚ի Պալատ, եւ սկսանէր նմա առանձինն խօսել վասն աթոռոյն էջմիածնի, եւ խռովեցուցանէր զսիրտ նորա վասն ընտրութեան Բարթողիմեայ եպիսկոպոսի ՚ի կաթողիկոսութիւն, ասելով.՝ «Եթէ՝ այր դու՝ ո՞չ երկնչիս յԱստուծոյ, որ գիտես բարւոք զլաւն եւ զյոռին, եւ խցեալ զբերան քո՝ ոչ խօսիս երբէք:

“Ո՞չ գիտես զԲարթողիմէոս եպիսկոպոսն, զոր ընտրեցին ՚ի կաթողիկոսութիւն ընդհանուր ազգիս, իցէ՞ արդեօք նա անժանաւոր այնմ աթոռոյն, ո՞չ ապաքէն իբրեւ զաշխարհականս ծխախտիւ եւ նարգիլակաւ շատանայ նա:

“Ո՞չ ապաքէն դու ՚ի քառասուն ամաց հետէ միաբան այնմ աթոռոյն եւ եպիսկոպոս եւ նուիրակ նորա ես, եւ ընդէ՞ր զքեզ ոչ համարին արժանաւոր ընտրութեան, որ ես այր շնորհագարդ եւ գովելի վարուք, ծեր ամօք եւ սիրելի եւ հաճոյ յաչս ամենայն ժողովրդեանն Հայոց, որք որպէս գտուրբ եւ զայր Աստուծոյ ճանաչեն զքեզ: Ընդէ՞ր ոչ խօսիս, ո՞վ բաւական է քեզ առնել ինչ” եւ ալն:

Զայսպիսի եւ գսոցին նման բանս խօսեցաւ Յովհաննէս առ Գալուստ, եւ ամբոխեաց զսիրտ նորա իբրեւ ծով ալէկոծեալ, որոյ անշուշտ եւ աներկբայ մտօք հաւատացեալ բանից Յովհաննու՝ գնաց ՚ի Պալատէ ՚ի Խումդափու ՚ի տունն Էջմիածնի հանդիման մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի, եւ զգիշերն ողջոյն ոչ կարացեալ ննջել վասն խռովայոյզ ալեաց սրտի նորա, որք ամբոխէին զհոգի նորա, յաւուր ուրբաթու ընդ այգանալ առաւօտուն գնայ յեկեղեցին եւ կանգնի ՚ի տեղի իւր, որ էր յարտաքին գաւթին եկեղեցւոյն:

Եւ մինչ էր ժամ ընթեռնլոյ զաւետարանն սուրբ պատարագին, դարձեալ ընդ կրունկն Գալուստ, եբաց զբերան իւր, եւ սկսաւ խօսիլ առ ժողովուրդս, ասելով. “Եթէ սակաւ ինչ բան ունիմ ասել ձեզ”. եւ յետ քանի մի բանից առաջարկեաց ժողովրդեանն զընտրութիւն Բարթողիմէոսի առանց գիտութեան իւրոյ, ասելով. “Եթէ այն այր՝ որ քարչէ գնարգիլակ եւ զծխախոտ, եւ ուտէ հանապազ ընդ աշխարհականս, զայնպիսի այր՝ որ անվայել եւ անարժան իսկ է քահանայութեան, ընտրեն ՚ի յընդհանուր կաթողիկոսութիւն ազգիս. եւ զիս՝ որ քառասնամեայ միաբան սուրբ աթոռոյն եմ, եւ ՚ի մանկութենէ սնեալ եմ ՚ի սուրբ ուխտ նորա, ոչ կոչեցին, եւ ոչ հարցին ինչ:

“Ինքեանք ըստ կամաց իւրեանց առնուն եւ տան, ընտրեն եւ իջուցանեն, եւ զայլ սոյնպիսիս.

“Արդ՝ կաթողիկոսն այն՝ զոր ընտրեցին սոքա, նզովեալ է եւ եղիցի, եւ որք ընտրեցին զնա՝ եւ ընկալան՝ եւ կամ որք ընդունին, անիծեալ եղիցին ՚ի Հօրէ եւ յՈրդւոյ եւ յամենասուրբ Հոգւոյն”:

Զայս լուեալ ժողովրդեան, խռովեցան ամենեքին, եւ սկսան ամբոխել զիրեարս, եւ լինէր աղմուկ մեծ ՚ի ժողովրդեան:

(1800 ապրիլ 22) Իսկ Դանիէլ պատրիարք տեսեալ զայս գործ Գալուստ նուիրակին, եւ ՚ի թելադրութենէ բանից Դաւթին դրդեալ, խօսեցաւ ընդ մեծամեծս Հայոց, եւ յաւուր կիւրակէի արար ժողով մեծ ՚ի Մայր եկեղեցւոյն, յորում եղեւ բազմութիւն մեծ, եւ առաջի ամենեցուն ետ ընթեռնուլ զթողթ մահասարական գրութեան բոլոր միաբանիցն Էջմիածնի, որք մեծաւ թախանձանօք յորդորէին զնա իջանել ՚ի պատրիարքական աթոռոյն եւ յանձն առնուլ զհայրապետութիւն աթոռոյն Էջմիածնի. յորում

յետ բազում փոյթ յանձին ցուցանելոյ վասն կաթողիկոսութեան նորա, գրեալ էին այսպէս.

“Կոչէ զքեզ տէր Աստուած ՚ի կոչումն սուրբ:

“Մի արհամարհեր զնովաւ:

“Կոչէ զքեզ տէր քո, մի խուսափեր, այլ հայեցեալ ՚ի ” գրեցեալսն նախնի երջանկացեալս, այսինքն ՚ի Մովսէս, յԵսայի, եւ յԵրեմիա, եւ յայլսն, փուլթա կամաւորութեամբ հաճասանել կոչողին զհետ Քրիստոսի տեսուն մերոյ, զի արդարեւ նոյն ինքն է, որ զքեզ որոշեալ հրաւիրէ փոխանորդել իւր, որում եթէ ոչ անսացես, ոչ բարւոք առնես, եւ առաջի նորա ձեռն մեր ՚ի քո զբաւանս մնայ, եւ դու կաաս եւ մնաս մեզ՝ եւ սրբոյ Էջմիածնի՝ եւ ամենայն լաւութեան եւ վատութեան մերոյ պարտական”:

Այս թողթ էր բազմակնիք, զոր եբեր Դաւիթ առ Դանիէլ, եւ բաց յայսմանէ էին եւ այլ թողթք բազմակնիքք գրեալք ՚ի քաղաքաց քաղաքաց՝ եւ յառաջնորդաց՝ առ Դանիէլ պատրիարք, զի յանձն առցէ զիշխանութիւն կաթողիկոսութեան ազգիս:

Զայս ամենայն ետ ընթեռնուլ Դանիէլ ՚ի լուր ամենեցուն, եւ զկնի ընթերցման՝ եհարց ցամենեսին ասելով, եթէ որդիք իմ սիրելիք, այսոքիկ ամենեքին ընտրեալ զնուաստութիւն իմ կաթողիկոս սուրբ աթոռոյն, խնդրեն զիս, որպէս լուսայդ յայսչափ գրոց՞ դուք զի՞ կամիք, հաճեցա՞յք արդեօք ընդ ընտրութիւն սոցա, եթէ ոչ:

Պատասխանի ետուն եւ ամենեքին՝ որք ժողովեալ էին, եւ ասեն, զոր նոքա ընկալան, ընկալաք եւ մեք, եւ ամենեցուն ընդունելի է:

Յայնժամ ելեալ Դանիէլ ՚ի բեմն եկեղեցւոյն, եդ զաթոռ իւր, եւ արար ատենաբանութիւն մեծ նկատելով զընտրութիւն իւր, եւ ՚ի վերջաբանութեան իւրում ասէ. եթէ աւանիկ երթամ ես ՚ի կաթողիկոսութիւն սուրբ Էջմիածնի ըստ կոչելոյ եւ ընտրելոյ ամենայն միաբանից սուրբ ուխտին, բայց մի տրտմեսջիք դուք, ես ինքնին հրաժարիմ ՚ի պարիարքութեանէս, թէպէտ հեռանամ ՚ի ձէնջ մարմնով, այլ հոգւով մերձ եմ, եւ միշտ օրհնաբեր կոնդակաւ իմով տեսանեմ զձեզ. բայց որովհետեւ պարտ է ձեզ ունել զմի ոք ՚ի պատրիարքութիւն աթոռոյս, ահա ընտրեմ ձեզ փոխանակիմ իմ զ Դաւիթ եպիսկոպոս միաբան սուրբ Էջմիածնի, որ արժանաւոր իսկ է ձեզ լինել պատրիարք:

Եւ զայս ասացեալ՝ կոչեաց զԴաւիթ առ իւր, եւ հանեալ զմատանին՝ ՚ի ձեռաց իւրոց, էարկ ՚ի մատունս նորա, եւ ետ զգաւազան իւր ՚ի ձեռս նորա, եւ օրհնեալ զնա՝ ասէ:

“Գտի զԴաւիթ ծառայ իմ այր ըստ սրտի իմոյ, եւ իւզով սրբով օծի զնա, ձեռն իմ ընկալցի, եւ բազուկ իմ զօրացուցէ զնա” եւ այլն:

Եւ տուեալ զօրհնութիւն ժողովրդեան՝ էջ յաթոռոյ իւրմէ:

Յետ լռելոյ նորա եւ Դաւիթ արար ատենաբանութիւն ժողովրդեան՝ ներբողելով զվարս եւ զընտրութիւն Դանիէլի, եւ յետ ատենաբանութեան իւրում դարձուցեալ զերեսս իւր ՚ի խորանն սուրբ, ընթերցաւ մի ոմն ՚ի վարդապետաց զքարոզն՝ Սուրբ ճգնաւորօք աղաչեսցուք զՏէր”, եւ Դաւիթ գոչեաց ՚ի ձայն բարձր, եւ ասէ զաղօթսն՝ Որ ընտրեցեր եւ ընկալար զերանելի եւ զերջանիկ հայրապետն մեր՝ զՏէր Դանիէլ կաթողիկոսն...” եւ աւարտեալ զժողովն, գնացին իւրաքանչիւր ոք ՚ի տեղիս իւրեանց, եւ Դանիէլ սկսաւ տեսանել զպատրաստութիւն չուելոյ յէջմիածին:

Իսկ Դաւիթ ուրախանայր մեծապէս եւ ցնծայր հոգի իւր, վասն զի կարծէր, թէ լցաւ փափագ սրտի իւր, որում զհետ եղեւ ամենայն ոգւով:

## ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս խռովութեան եւ երկպառակութեան ազգիս 'ի Կոստանդնուպօլիս եւ պատրիարքութեան Յովհաննոս:

(1800) Լուեալ զայսոսիկ Յովհաննէս եպիսկոպոս 'ի Պալատու, խռովեցաւ յանձն իւր, զի երկպառակութիւնն, որոյ ինքն եղեւ բարոյական պատճառ, ոչ ինքեան եղեւ օգուտ, այլ Դաւթի:

Ուստի կոչեալ կրկին անգամ զԳալուստ նուիրակ առ ինքն, յորդորեաց զնա եւ ասէ. "Ո՞չ տեսանես մարդ որք առնեն ժողով, եւ ըստ հաճոյից իւրեանց կացուցանեն կաթողիկոս եւ պատրիարք, եւ զքեզ ոչինչ համարին, եւ ոչ ճանաչեն ոչ որպէս զնուիրակ Էջմիածնի, գէթ եւ ոչ իբրեւ զաբեղայ մի, ահա յերեկեան աւուր ժողով արարեալ բազմութեամբ, զմի ոք կացուցին կաթողիկոս եւ զայլ ոք պատրիարք, եւ ընդէ՞ր զքեզ ոչ կոչեցին, եւ ոչ հարցին ինչ, եթէ արժանաւո՞ր իցեն, եւ եթէ ոչ:

"Ընդէ՞ր լուեալ կաս մարդ, խօսեաց եւ մի երկնչիր, զի ես ընդքեզ եմ 'ի փրկել զքեզ յամենայն վտանեէ, եւ ոչ ոք կարէ խորհել զքէն չար ինչ:

"Մանաւանդ զի եւ բազումք յիշխանաց Հայոց եկեալ առիս հարցին ինձ, եթէ ընդէ՞ր եւ Գալուստ նուիրակ ոչ հրաւիրեցաւ 'ի կոչունս ժողովոյն, զոր մեք համարիմք այր սուրբ եւ մաքուր, եւ խոհական, եւ արժանաւոր կաթողիկոսութեան, որոց ես զոչինչ կարացի տալ պատասխանի:

"Արդ զգոյշ լերով մարդ, եւ երկիր յԱստուծոյ. զի ժամ է քեզ խօսելոյ, մի լուեր, զի լուութիւն այսպիսեաց պատիժ բերէ առ յԱստուծոյ":

Զայսոսիկ լուեալ Գալուստ, այլագունեցան դէմք նորա, եւ փոխեցաւ հոգի նորա 'ի դառնութիւն, եւ ելեալ անտի յաւուր շաբաթու եկն 'ի Խոնդափու:

Եւ յաւուր կիւրակէի ընդ առաւօտն գնացեալ յեկեղեցի, կանգնեցաւ 'ի տեղի իւր, սկսաւ զժամերգութիւնն, օրհնեալ տէր մեր, եւ տէր զի բազում, եւ այլն:

Եւ մինչդեռ երգէին՝ առաւօտ լուսոյ, եկն Դաւիթ պատրիարքական շքով յեկեղեցին, եւ որովհետեւ անդ էր տակաւին Դանիէլ, եւ կանգնեալ էր յաթոռ իւր. եւ նոյն ժամայն սպասաւորք

Դաւթին բուռն հարին զհանդերձից Գալուստ նուիրակին, եւ հանեալ զապտակ ընդ ծնօտ նորա, իջուցին զնա յաթոռոյ իւրմէ, եւ զԴաւիթ բազմեցուցին յաթոռ նորա, եւ Գալուստ գնացեալ կանգնեցաւ ՚ի մէջ ժողովրդեան ՚ի ներքոյ ամպիոնին, եւ երկու վարդապետք իւր ընդ նմա:

Բայց այս ոչ եղեւ բարւոք, զի ժողովուրդն՝ որ հետզհետէ գային յեկեղեցին, ՚ի տեսանելն այսպէս զԳալուստ նուիրակ ՚ի մէջ ժողովրդեան, մորմոքէին ՚ի վերայ նորա. եւ եղեւ շշնչիւն մեծ ՚ի ժողովրդեան, բայց Գալուստ մեկնեալ անտի գնաց ՚ի տուն էջմիածնի:

Իսկ ժողովուրդն, որ ոչ կարացին տանել այսմ, ամբոխ մեծ գումարեալ գնացին ՚ի տուն էջմիածնին, եւ բարձեալ անտի զԳալուստ մեծաւ փառօք, ածին յեկեղեցին, եւ խուռն ընթացեալ ՚ի ներքս, վանեցին անտի զԴաւիթ ասելով. “Եթէ դու՝ որ պատրիարք եղեր, գնա ՚ի ներքս յեկեղեցին, եւ կաց ՚ի տեղի քո, զի այս տեղի նուիրակի է, եւ ոչ պատրիարքի. եւ Դանիէլ որ եղեւ կաթողիկոս, զի՞ դեգերի ընդունայն ՚ի քաղաքիս, գնասցէ յէջմիածին”: Եւ զայս ասացեալ նստուցին զԳալուստ յաթոռ իւրում, եւ զԴաւիթ յաթոռ պատրիարքութեան, եւ Դանիէլ խոյս ետ ՚ի պատրիարքարանն:

Եւ իբրեւ ժամ եղեւ քարոզի, ընթացեալ դարձեալ ժողովրդեանն՝ ստիպեցին զԳալուստ, զի արասցէ ատենաբանութիւն.

Եւ նա առեալ զգաւազան ՚ի ձեռին իւր, եւ կանգնեալ ՚ի միջի դրանն, արար ատենաբանութիւն, եւ սկսաւ գանգատիլ զԴաւթէ, “Եթէ հարին զիս սպասաւորք նորա, գանեցին եւ վանեցին ՚ի տեղւոյն իմմէ, զի՞նչ չար գործեցի ես նոցա, զի զայսպիսիս հատուցին ինձ, ո՞չ ապաքէն եւ ես մի եմ ՚ի միաբանութենէ էջմիածնի, այր անցեալ զաւուրբք, եւ կրեալ յոյժ գնեղութիւն վասն սուրբ ուխտին. միթէ զհերետիկո՞ս դատապարտեն”, եւ այլն:

Եւ այսպիսեօք առաւել եւս խռովեաց զժողովուրդն այնչափ՝ մինչ զի յաւարտիլ քարոզին՝ բուռն հարին ժողովուրդք զնմանէ, եւ տարեալ եգին յաթոռ պատրիարքին, եւ զԴաւիթ փախուցին ՚ի պատրիարքարանն, եւ այս էր ՚ի ժամ պատարագին:

Իսկ իբրեւ եհաս պատարագիչն յայն տեղին, ուր ասէ, “Եւս առաւել գեպիսկոպոսապետն մեր”. գոչեցին ժողովուրդք, եթէ յիշեա զԳալուստ պատրիարք մեզ, եւ ետուն նմա յիշել:

Եւ ընդ աւարտիլ եկեղեցւոյն, ժողովուրդք բազմուք՝ ընդ որս էին եւ բազմութիւնք Կեսարացի արուեստաւորաց, առեալ գ Գալուստ մեծաւ շքով տարան՝ ի տուն Էջմիածնի, եւ կամէին զի տարեալ ՚ի դուռն արքունի ըստ կամաց իւրեանց կացուցեն գ Գալուստ պատրիարք Կոստանդնուպօլսոյ:

Իսկ մեծամեծք Հայոց իբրեւ տեսին, զի ոչ մեկնին յեկեղեցւոյն, այլ հետզհետէ ոմանք բրովք եւ ոմանք կացնովք ժողովին յեկեղեցւոջն, ծանուցին ՚ի դուռն արքունի, եւ զօրապետն մեծ Եէնիչէրի աղասին եկեալ բազմութեամբ զօրաց, եմուտ յեկեղեցին, եւ զորս միանգամ գտին անդ, հարին չարաչար, եւ զանեցին, եւ զգլխաւորս նոցա ձերբակալեալ տարան ՚ի բանտ, եւ մնացեալք խոյս ետուն ամենեքին հարուածեալք յոյժ:

Եկին յայնժամ իշխանք եւ վարդապետք յեկեղեցին, եւ ծանուցեալ Եէնիչէրի աղասին զապստամբութիւն հասարակութեան Հայոց ընդդէմ պատրիարքին՝ ցուցին գլխաւոր պատճառ այսմ խռովութեան գ Գալուստ նուիրակ, եւ հրամանաւ նորուն հանեալ ՚ի տանէն գ Գալուստ, յանձնեցին զօրաց տանել ՚ի դուռն արքունի:

Անդ էր եւ վարդապետ ոմն Աստուածատուր անուն, սա գանեալ գ Գալուստ նուիրակ, եհար զգլուխ նորա բռամբ յոյժ, եւ հանեալ զվեղարսն ՚ի գլխոյ նորա, մատոյց ՚ի ձեռս զօրաց յասելն, եթէ առէք զգլուխ եւ զպատճառ ապստամբութեանս, եւ սոնպէս չարաչար հարուածովք տարեալ ՚ի դուռն Եպարզոսին հարին զոտս նորա ՚ի կոճեղս եւ եդին ՚ի բանտի, եւ զգլխաւոր անձինս ըմբռնեալ՝ տարան եւ զնոսա ՚ի բանտ, եւ արկին ՚ի կոճեղս:

Առեալ զլուր այսոցիկ Յովհաննէս եպիսկոպոս ՚ի Պալատու, ուրախացաւ յանձն իւր, եւ որովհետեւ որսացեալ ունէր զբազումս ՚ի մեծամեծաց Հայոց ՚ի կողմն իւր, ՚ի ձեռն նոցին ծանուցեալ արքունի դրան, յետ չորից աւուրց կոչեալ զՅովհաննէս եպիսկոպոս ՚ի դուռն Եպարզոսին, եւ տուեալ նմա զիշխանութիւն պատրիարքութեան, առաքեցին մեծաւ շքով ՚ի պատրիարքարանն, յամի տեառն 1800 մայիս 19:



---

## ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս աքսորանացն Դանիէլի եւ Գալուստ նուիրակին, եւ ընտրութեանն Յովսեփայ 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնի եւ վախճանի նորա:

(1800) Յետ նստելոյ Յովհաննու յաթոռ պատրիարքութեան, եկն հրաման յարքունուստ գտանել զպատճառ խոռովութեանս, եկն հրաման յարքունուստ գտանել զպատճառ խոռովութեանս այսմիկ, եւ Յովհաննէս պատրիարք՝ որովհետեւ զժկամակ էր առ Դանիէլ վասն կացուցանելոյ նորա պատրիարք զԴաւիթ, եւ առ ոչինչ համարելոյ զինքն, գրեաց 'ի դուռն արքունի, եթէ պատճառ այսմ ամենայնի եղեւ Դանիէլ, որ առանց հրամանի եւ գիտութեան բարձր եւ հզօր թագաւորութեան ձերում հրաժարեալ ինքն 'ի պատրիարքութենէ, ընտրեաց զԴաւիթ 'ի պատրիարքութիւն, եւ Գալուստ վարդապետ զոր ըմբռնեալ տարայք 'ի բանտ, ընդդէմ եկաց գործոց սորա, ուստի եւ ժողովուրդք յերկուս պառակեալ, ոմանք 'ի կողմն Դանիէլի, եւ այլք 'ի կողմն Գալուստ վարդապետին, յարեան յոտս եւ արարին զայս խոռովութիւն:

Արդ այս պատասխանի ծանուցեալ 'ի լսելիս արքային, եղեւ հրաման աքսորել զԴանիէլ 'ի Տենդոս կղզի, եւ զԳալուստ 'ի Կիպրոս, եւ զգլխաւոր անձինս աշխարհականաց՝ որք 'ի բանտի էին, առաքեցին 'ի ծառայութիւն թիոյ, եւ այսպէս հանդարտեցաւ աղմուկ ժողովրդեանն:

Յետ այսր ամենայնի կոչեալ Յովհաննէս պատրիարք զԴաւիթ, խօսեցաւ ընդ նմա, եւ նա առ երկիւղի արդարացոյց զգործս նորա, եթէ օրէն էր այսպէս առնել, եւ բազմադիմի բանիւք յանկոյց զսիրտ Յովհաննու 'ի կամս իւր, եւ հաճոյ եցոյց նմա զինքն այնչափ, մինչ զի եւ Յովհաննէս պատրիարք խօսեցեալ ընդ իշխանաւորս Հայոց, որք էին բարեկամք իւր, հաճեցոյց զնոսին յընտրել զԴաւիթ 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, եւ հաւանութեամբ նոցին առաքեցին զԴաւիթ Եջմիածին, զի զնացեալ անդ գացէ զեղանակ եւ զճանապարհ իմն՝ յինքն ընկրկել զկաթողիկոսութիւն, քաջալերս տուեալ նմա, եթէ որով եւ իցէ եղանակաւ մարթասցի լինել կաթողիկոս, ընկալցին զնա Կոստանդնուպօլսեցիք:

Գնաց Դաւիթ յէջմիածին, եւ իբրեւ պատմեաց զամենայն եղելութիւնս եւ զանցս Կոստանդնուպօլսի, եւ զաքսորանս Դանիէլի, վշտացան միաբանք ամենեքին, եւ ՚ի խոր խոցեցան յոյժ, եւ ժողով արարեալ ետուն ակամայ կամօք հաւանութիւն լինելոյ կաթողիկոս Յովսէփայ արքեպիսկոպոսին Ռուսաստանու, միայն զի եւ Կոստանդնուպօլսեցիք ընկալցին զնա կաթողիկոս, եւ տացեն զհաւանութիւն մահասարական գրութեամբ իւրեանց:

(1800) Իբրեւ իրագեկ եղեւ Յովսէփ այսմ, ՚ի ձեռն տէրութեան Ռուսաց հայթհայթեաց հրաման առաքել առ Կոստանդնուպօլսեցիս, զի ընկալցին զՅովսէփ ՚ի կաթողիկոսութիւն. եւ դեսպանն Ռուսաց՝ որ նստէր ՚ի Կոստանդնուպօլիս, ծանոյց արքունի դրան զմիտս եւ զհաւանութիւն Ռուսաց տէրութեան, ասելով, եթէ կաթողիկոսն Հայոց՝ որ նստի յէջմիածին ընդ իշխանութեամբ Պարսից, վախճանեալ է, եւ տէրութիւնս մեր ՚ի խնդրոյ Հայազգեաց՝ որք են ՚ի բաժնի մերում, ընտրեալ է նոցա կաթողիկոս զՅովսէփ արքեպիսկոպոսն նոցա. արդ՝ հրամայեալիք եւ դուք ամենայն Հայոց՝ որք գտանին ընդ իշխանութեամբ ձերով, զի եւ նոքա ընկալցին զնա կաթողիկոս ինքեանց մահասարական գրութեամբ իւրեանց:

Այս հրաման եւ խնդիր թէպէտ ծանր եղեւ առաջի Օսմանեան տէրութեան, եւ գաղտնի հրաման առաքէր ՚ի պատրիարքարանն, զի մի ընկալցին զՅովսէփ կաթողիկոս լինել ինքեանց, բայց այսու ամենայնիւ կոչեալ զիշխանաւորս Հայոց ՚ի դուռն Եպարզոսին ՚ի ներկայութեան դեսպանին Ռուսաց, հրամայէր Եպարզոսն յասելն, ”Եթէ կաթողիկոսն ձեր վախճանեալ է, եւ բարձր տէրութիւն Ռուսաց ըստ խնդրոյ ազգի ձերում ընտրեալ է ձեզ կաթողիկոս զՅովսէփ վարդապետ, արդ հրամայեմք եւ մեք զի ընտրեալն ՚ի նմանէ՝ ընտրեալ է եւ ՚ի մէնջ, եւ դուք պարտիք հնազանդիլ, եւ ընդունիլ զնա ձեզ կաթողիկոս”:

Պատասխանի ետուն իշխանաւորքն Հայոց եւ ասեն. ”Ոչ այդպէս տէր մեր, ազգ մեր ոչ ընդունի զնա երբէք, եւ ոչ մեք”:

Յասուցեալ որպէս թէ ընդ այս Եպարզոսն՝ հրամայէ առ երեսս իջուցանել զնոսս ՚ի բանտ, զի ակամայ կամօք յանձն առցեն հաւանութիւն տալ. եւ այնպէս կեղծաւորէր Օսմանեան դուռն առաջի դեսպանին Ռուսաց, զի յայտնի հրամայէր եւ սպառնայր ընդունել, եւ գաղտնի հրամայէր եւ յորդորէր չընդու-

նել երբէք, եւ վասն այսր յերկարէր եւ յապաղէր կաթողիկոսութիւնն Յովսեփայ մինչեւ ցամ մի:

Իսկ Դանիէլեանք ամենեքին աղաչանօք եւ յորդորանօք հաճեցուցեալ զմիտս Յովհաննու պատրիարքին՝ յետ չորից ամսոց աքսորանացն հանին զհրաման ազատութեան Դանիէլի, տալով նմա եւ զառաջնորդութիւն Եւդոկիոյ քաղաքի, եւ զԳալուստ նուիրակ առաքեցին յառաջնորդութիւն Ակնաց քաղաքի:

Յայսմ միջոցի եւ Յովսէփ եպիսկոպոս մինչդեռ հանդերձեցաւ հրամանաւ տէրութեանն Ռուսաց գնալ յէջմիածին, եւ անդ օծանիլ կաթողիկոս, եկեալ 'ի Տփիսիս քաղաք, հիւանդացաւ, եւ վախճան մահու հասեալ նմա, թաղեցաւ անդ 'ի Տփիսիս յամի տեառն 1801 'ի մարտի:

## ԳԼՈՒԽ Է.

*Յաղագս երկիցս անգամ ընտրութեանն Դանիէլի, եւ բռնանալոյն Դաւթի 'ի կաթողիկոսութիւն, եւ գործոց նորին:*

(1801) Իբրեւ լուր մահուան նորա լսելի եղեւ յականջս միաբանութեանն Էջմիածնի, ըստ առաջնոյ ընտրութեանն ընտրեցին դարձեալ զԴանիէլ եպիսկոպոս, եւ հրաւիրակս առաքեցին առ նա յԵւզոկիա, փութանակի ժամանել յԷջմիածին, գրելով առ նա զբազմակնիք մահասար ընդունելութեան, յորում էր եւ կնիք Դաւթի եպիսկոպոսին, ուր եւ զմահ Յովսէփայ առաջադրեալ էին այսպէս, եթէ.

“Եւ քանզի Յովսէփ արհի եպիսկոպոսն եկեալ 'ի Տիբիս քաղաք, վախճանեցաւ անդ, հաւատամք, եթէ 'ի բարերար կամացն Աստուծոյ եղեւ, որ ինչ եղեւ, վասն որոյ նորոգ ժողով արարեալ հանդերձ քահանայիւք, իշխաօք, եւ ժողովրդովք երկրիս, ըստ աստուածային ազդեցութեանն եւ ըստ առաջնոյ ընտրութեանն մեր՝ վերստին գամենապատուական Հայրդ մեր ընտրեցաք լինիլ գահակալ սուրբ աթոռոյս, եւ կաթողիկոս եւ տէր հոգեւոր Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ, եւ բնաւից պաշտօնէիցս... ապաքէն միամտութեամբ փութացուցես զնորհաբեր գալուստդ. զի ահա տէր է՝ որ յաջողէ եւ կոչէ զսրբութիւնդ գալ պսակիլ ընդ անարատ հարսին լուսոյ, առ 'ի կատարել զխնդրուածս ծառայից իւրոց, զոր հաստատուն հաւատով խնդրէաք 'ի վաղուց հետէ, եւ աներկբայ յուսով սպասէաք ընդունել. վասն որոյ պարտ է եւ սրբութեանդ հնազանդել տեառն կոչողին զքեզ 'ի յայս գերագոյն պատիւ քահանայապետութեան, եւ լսել ձայնի աղաչանաց մերոց”, եւ այլն:

Բայց յայսմանէ զրեաց եւ Դաւիթ յատուկ ձեռագրով իւրով գայլ իմն գիր հրաւիրանաց առ Դանիէլ յԵւզոկիա, ուր գրէ այսպէս.

“Եթէ ես զբան առաքելոյն 'ի միտ բերեմ, եթէ ոչ ըստ այնմ ինչ է, որ կամիցի կամ ընթանայցէ... արդ՝ թէպէտ բազումք կամեցան եւ ընթացան, այլ Աստուած է, որ յաջողէ գամենեսեան... եւ ո՞վ է, որ Աստուծոյ կամացն կայցէ հակառակ... որովհետեւ եւ այս այսպէս է. հրաշագործողին Աստուծոյ զփառս եւ զգոհու-

թիւնս վերառաքեմք, եւ քեզ ո՛վ Դանիէլ այր սուրբ եւ սրբազան ՚ի յԱստուծոյ ընտրելոյդ եւ կոչեցելոյդ գովիչ լինիմ, զի դու ես արժանաւոր լինել այցելու սուրբ տանս Հայոց” եւ այլն:

ԶԱյս ամենայն ընթերցեալ Դանիէլ, եւ հաւանութիւն առեալ եւս ՚ի Կոստանդնուպօլսեցւոց, ել եւ պատրաստեցաւ գնալ յէջմիածին. իսկ Դաւիթ յայսմ միջոցի ցանկալով յինքն ընկրկել զկաթողիկոսութիւն էջմիածնի, գնացեալ ՚ի Տփիսիս անկաւ առ Դաւիթ խանն Վրաց՝ որդի Կէօրկի խանին, եւ մեծամեծ պարգեւս խոստացաւ նմա, զի հաճեցուցէ զմիաբանսն էջմիածնի ՚ի կաթողիկոսութիւն իւր, որովհետեւ ասէ եւ պատրիարքն Կոստանդնուպօլսի եւ մեծամեծք Հայոց, որք անդ էին, ընտրեցին ասէ զիս, բայց սոքա ոչ կամին, եւ ոչ ընդունին երբէք:

Լուեալ զայսոսիկ Դաւիթ խանին, գրեաց զգիր առ միաբանսն էջմիածնի, զի ընտրեսցեն ՚ի շնորհս իւր զԴաւիթ կաթողիկոս:

Իսկ նոքա ոչ երբէք ընդունելով զխնդիր նորա, գրեցին առ նա զպատասխանի, ”Եթէ ՚ի կողմանէ սիրելւոյն մերոյ Դաւիթ արհի եպիսկոպոսին՝ զոր հրամայեալ էիք ընտրել եւ կացուցանել զնա կաթողիկոս, բարի էր թէպէտ հրաման ձեր, բայց մեք՝ որ միանգամ խնդրեցաք զԴանիէլ սրբազան արհին գալ ՚ի կաթողիկոսութիւն մեզ, դաշնադիր եւս եղաք ՚ի մէջ աստուածաբնակ տաճարիս՝ երդուելով ՚ի կենսատու սուրբ խաչն Քրիստոսի, եւ ՚ի նորին կողմուխ սուրբ գեղարդն, եւ ՚ի նշանագործ աջ սուրբ Լուսաւորչին մերոյ, զի բաց ՚ի Դանիէլ սրբազան արհւոյն զայլ ոք ոչ ընդունիցիմք ՚ի գահակալութիւն սրբոյ աթոռոյս, եւ նզով եւս եղաք... զի եթէ ոք ՚ի մէջ ինքնընծայ բռնութեամբ ձեռնադրեսցի կաթողիկոս, անիծեալ լիցի ինքն եւ ձեռնադրողքն իւր: Արդ այսպիսի հաստատութեամբ երդուեալ եմք, եւ սաստիկ նզովիւք փակեալ եմք, եւ չեմք կարող երդմնագանց լինիլ, թէ եւ մահ եւս հանդիպեսցի”:

Իբրեւ ետես Դաւիթ, եթէ ոչ յաջողեցան ջանք իւր յայսպէս, փութացաւ գնաց յԵրեւան, եւ անդ յանդիման եղեալ խանին Պարսկաց, պատմեաց նմա զընտրութիւն իւր ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի կաթողիկոսութիւն էջմիածնի, եւ զարհամարհութիւն եւ զչընդունելութիւն միաբանիցն, եւ խոստացաւ նմա բազում ինչ, զի ՚ի լրումն հանցէ զփափագ սրտի իւրոյ:

Եւ նա առաքեաց ՚ի կողմանէ իւրմէ զերիս արս Պարսիկս, եւ գրեաց առ միաբանսն ընդունել զԴաւիթ կաթողիկոս, այլ նոքա

ոչ երբէք խոտորեալ 'ի բանից իւրեանց իբրեւ զառաջինն՝ գրեցին առ նա պատասխանի, յորում գրեալն էին.

“ Եթէ մի բռնադատեսցես զմեզ տէր մեր՝ առնել զայլ ոք կաթողիկոս, զի ահա մեք երդուեալ եմք 'ի սուրբ տաճարս եւ 'ի սուրբ գեղարդն, եւ անիծիւք հանդերձ փակեալ եմք, զի մինչեւ 'ի գալ այսր Դանիէլի վարդապետին՝ ով ոք ինքնակամ լիցի կաթողիկոս, ամենեւին անընդունակ լինելոց է”:

Զայս լուեալ Դաւիթ 'ի խանէն, եւ անճարացեալ յայնմ հետէ առնել ինչ, յաւել այլ եւս զխոստմունս իւր, տալ նմա զբազմութիւն ոսկւոյ եւ արծաթոյ, զի բռնութեամբ արասցէ օժանել զինքն կաթողիկոս:

Եւ նորա լուեալ զայս, առաքեաց զԴաւիթ բազմութեամբ զօրաց Պարսից յէջմիածին, զի հրամանաւ իւրով օժցեն զԴաւիթ կաթողիկոս եւ ընկալցին, եւ որ ոք անհնազանդ գտցի հրամանաց նորուն, գտնեսցեն զնա ուժգին, եւ առաքեսցեն առ ինքն:

Եկեալ նոցա յայնժամ եւ մտեալ յէջմիածին, ցուցին զհրաման խանին, եւ ծանուցին նոցա, եթէ ոք ոչ հպատակ կայցէ հրամանիս, չարաչար ունի սպանանել:

Եւ նոցա լուեալ զայս, եւ յուսահատեալ ոչ գիտէին, թէ զինչ արասցեն:

Եւ 'ի թելադրութեանէ Դաւթին՝ բռնութեամբ ժողովեալ զօրաց Պարսից գեպիսկոպոսունս էջմիածնին, եւ ինքեանք սրովք եւ բրովք 'ի վերայ նոցա կացեալ՝ ետուն օժանել զԴաւիթ կաթողիկոս, եւ նստուցանել զնա 'ի գահ կաթողիկոսութեան յամի տեառն 1801 յապրիլ 28:

(1801) Յայսմ ժամանակի եւ Դանիէլ՝ որ ելեալ յԵւդոկիոյ՝ կամէր գնալ յէջմիածին, եւ չեւ եւս հասեալ 'ի Պայագիտ, ընկալաւ գիր 'ի միաբանից սրբոյ էջմիածնի, ուր լալագին ողբովք պատմէին զբռնութիւն Դաւթի, եւ գանհնարին աղէտս եւ զտառապանս իւրեանց, զոր ընթերցեալ Դանիէլ, ասաց, փա՛ռք ձեզ ամենակալ Աստուած, որ հայեցեալ յանարժանութիւն ծառայի քո՝ խոտեցեր եւ յետս ընկեցեր զիս, զայս ասացեալ սկսաւ մխիթարել զորս ընդ իւր էին զամենեսին:

Եւ գնացեալ 'ի Պայագիտ՝ խաղաղեցաւ 'ի լուսաւորչաչէն վանսն՝ կոչեցեալ Իւչ քիլիսա:

Իսկ Դաւիթ իբրեւ օժաւ կաթողիկոս, սկսաւ նոյն հետայն բռնանալ 'ի վերայ միաբանիցն, եւ խօսակցեալ ընդ Երեւանու

խանին՝ պահէր զգօրս նորա առ իւր, եւ զմի մի եպիսկոպոսաց սնոտի ինչ պատճառանօք առաքէր առ նա, որք զնացեալ անդ գանէին, եւ տուծէին զբազում ոսկիս, եւ դառնային չարաչար հարուածովք յէջմիածին:

Եւ այնչափ 'ի նեղ էարկ զեպիսկոպոսունսն անհանդուրժելի չարչարանօք եւ գազանական անգթութեամբ, մինչ ոչ կարացեալ տոկալ բոլոր միաբանութեան սուրբ ուխտին, սկսան բողոքել աղերսանաց գրովք առ ամենայն տեղիս, ուր տանէին Հայագգիք:

Գրեցին 'ի Կոստանդնուպօլիս եւ զմատար բողոքանաց՝ պատմելով զանարժան գործս Դաւթի, եւ խնդրելով 'ի նոցանէ զօգնութիւն եւ զկարեկցութիւն, ուր յետ այլոց բանից գրեալ էր այսպէս.

“Թէ յօրէ յայնմանէ՝ յորում բռնաւորեաց բարբարոսս” այս, չմնաց չարիս՝ յորս ոչ եղեւ ձեռնամուխ:

“Ի սկիզբն բռնաւորելոյն իւրոյ առ ոտն եհար եւ արհամարհեաց զԱստուածային եւ զեկեղեցական օրէնս: Էարկ զինքն ընդ նզովիւք, եւ ջանաց զազգն եւս ընդ ինքեան արկանել... գործով եւ ամենայն արարողութեամբ իւրով գերազանցեաց քան զայլագգիս, որք կաշառակուր եղեալ ընտրեցին գաս:

“Քանզի բարբարոսս այս՝ չար քան զԴեկոս անաստուած՝ եւ եղբայրասպան ուրացողս՝ ամենեւին ուրացեալ զաւանդութիւն եւ զկարգ հայրենի, եւ զկանոնս սրբազան հայրապետացն, ցանկանալով յափշտակութեան յուսացաւ յանիրաւութիւն: Եւ զբռնաւորս բազում քաղաքաց յագեցուցանելով կաշառօք, կատարեաց զչար կամս անձին իւրոյ, եւ ընծայեցուցեալ զանձն իւր բռնութեամբ՝ յափշտակեաց զայս աստիճան, որում չէր արժանի:

“Աստուածագումար սուրբ միաբանութեան եւ բոլոր Աստուածայնոց արանցն ցրուելով զխորհուրդս՝ եղեւ արծաթընտիր գայթակղոս. եւ առ 'ի պատրուակել զիւրն չարութիւն՝ բազում անգամ զմահսէրս բազում՝ գրեալ ըստ կամս իւր 'ի դիմաց միաբանից եւ երկրացւոց 'ի ջատագովութիւն ինքեան, ելից զնոսս ամենապատիկ ստութեամբ, եւ բռնութեամբ կնքել ետ, եւ յղեաց ու ունէր յղել, որք ամենեքեան են սուտ եւ սնոտիք...:

“Վատնէ զինչս հասարակաց եւ զապրուստն միաբանից յումպէտս, զի ինքն միայն բարւոք ապրեսցի: Խանգարէ զազգն 'ի բարեկարգութեանց, եւ զաթոռն 'ի պայծառութեանց, զի ինքն

միայն պայծառացի: Ձագատ կեանս միաբանից գրաւեալ 'ի գե-  
րութիւն, զի ազատապէս իշխեսցէ 'ի վերայ ամենից:

“Ձկաշառատուութեան յանցանս դնէ 'ի վերայ յօժարութեամբ  
ընտրելոյն մերոյ տեսուն Դանիէլի սրբազանին, զի ինքն անյան-  
ցանք երեւեսցի, վասնորոյ եւ յանուն նորա զկնիք փորագրել  
տուեալ, գրէ զթէմէսիւկս յանուն Երեւանաւ խանին եւ այլոց, եւ  
առաքէ աստ եւ անդ, զի գայթակղոցեցուցէ զպարզամիտսն:  
Բայց եթէ կամք լինէր ընտրեալ հայրապետին մերոյ կաշառօք  
գալ եւ նստիլ յիւրն աթոռ, մեք հեշտեալ բերէաք զնա, զի միա-  
բանք ամենեքին հոգևով 'ի նա եմք կապակցեալ:

Մինչ գողացեալ զսուրբ գեղարդն եւ զայլ սրբութիւնս եւ  
զայլ գանձս պատուականս, եւ բարձեալ սիսուամբ 'ի վերայ գրաս-  
տու՝ առաքէր 'ի փլչելի տուն եղբօր իւրոյ, զոր ըմբռնեաց եւ  
դարձոյց կենդանի նահատակ Յովհաննէս արքեպիսկոպոսն, 'ի  
վրէժխնդրութիւն բրդեալ բոլոր միաբանութեամբ՝ կամէաք կոր-  
ծանել զսա յայնժամ:

“Բայց բազում երգմամբ եւ ազգի ազգի պատրանօք խաբեալ  
զմեզ առ ժամն, յետոյ բերել ետ ծածկաբար զՊարսիկ զինաւորս,  
եւ նոքօք բռնացաւ 'ի վերայ մե մահու չափ սպառնացմամբ, ո-  
րով եւ մեք յակամայ կամս տանջէաք զոր ինչ առնէր մինչեւ  
ցայնժամ, եւ ոչ խօսէաք ինչ առ երկիւղի:

“Բայց իբրեւ տեսաք, թէ անցանեն ըստ չափ բարբարոսական  
գործք սորա, զմահ յանձն առեալ ընդգիմացաք ընդգիմացելոյն  
Աստուծոյ... քանզի 'ի մէջ աւագ շաբաթու՝ սա զՅովհաննէս  
սրբազան արքեպիսկոպոսն Ակնեցի գեղարդակիր՝ առաքեաց յԵ-  
րեւան առ գործոյ իրիք, եւ նա տեսեալ զգործս իւր եւ գտեալ  
ժամ դիպուկ՝ խոյս տուեալ էր անտի 'ի Թիֆլիզ՝ հոգ տանիլ ազա-  
տութեան սրբոյ տանս եւ միաբանութեանս մերոյ... եւ յաւուր մե-  
ռելոցի Ձատկին գիտացեալ սա, ըստ իւրն անբարի բնաւորու-  
թեան կատաղեցաւ զազանաբար, եւ կալեալ էարկ 'ի բանտ խա-  
ւարային զՂազար եպիսկոպոսն ծերունի խոստովանահայր Ղու-  
կասու հոգեւոյս վեհին, (որոյ սրբութեան համբաւն իցէ թէ հա-  
սեալ իցէ յունկն ձեր):

“Եւ զնորընծայ տէր Կարապետ արեղայ մի՝ որ զքառասունս  
պահէր յեկեղեցւոջ, եդ յայլում բանտի առեալ զփիլոնն եւ զվե-  
ղարն:



“Եւ զայլ ոմն վարդապետ Յակոբ անուն, եղ յայլում բանտի, եւ զոտս՝ երիցս եւս շղթայեաց, եւ պատրաստել ետ զփայտ, զի յայլ միաբանսն եւս ձեռնարկեսցէ, եւ ՚ի գիշերի գանակոծ արասցէ զամենեսան: Նմին իրի միաբանքն ամենեքեան ապաւինեալ յԱստուած՝ դիմեցաք ՚ի վեհարանն քարիւ եւ փայտիւ, եւ հանաք զեղբարսն մեր ՚ի բանտից եւ ՚ի կապանաց, եւ ապա բուռն բազմութեամբ զնացաք յեկեղեցին՝ եպիսկոպոսք, վարդապետք, աբեղայք, եւ սարկաւագունք՝ եւ բոլոր ուխտ եկեղեցոյ, եւ քննութիւն արարեալ գտանք զսա՝ ընդդէմ Աստուածային եւ եկեղեցական օրինաց՝ խանգարիչ բարեկարգութեան ազգին՝ եւ աւերիչ սրբոյ աթոռոյս:

“Վասն որոյ ուխտեցաք առաջի Քրիստոսատէջ սուրբ տեղոյս, եւ ՚ի հաստատութիւն բանիս գրեցաք գիր մի առ ինքն Դաւիթն, թէ վասն զանազան անկարգութեանց եւ բարբարոսական գործոց քոց ոչ ընդունիմք զքեզ, եւ միանգամայն նզովեցաք զինքն եւ զհամախոհս նորա:

“Եւ ՚ի միում աւուր յերեքշաբթի Զատիկին եպիսկոպոսունք՝ վարդապետք՝ աբեղայք՝ սարկաւագունք եւ մանկունք վարժարանին՝ եւ բոլոր միաբանք՝ քանզի փակեալ էր զբրունսն, քակեցաք զորմն հիւսիսոյ կողմանց՝ որ հայի ՚ի շուկայն, եւ իջեալ անդուստ խուռն բազմութեամբ դիմեցաք յԵրեւան յապարանս խանին, եւ բողոքեցաք ամենեքեան, թէ կամ բարձ ՚ի միջոյ մերմէ զԳողիթն գայն, եւ բեր զօրինաւոր հայրապետն մեր, եւ կամ սպան զմեզ զամենեսին:

“Առ որ եւ խանն զառաջինն ունկնդիր եղեալ, խոստացաւ թէպէտ կատարել զխնդիր մեր, բայց յետոյ չընչահաւատ մելիքն ՚ի ձեռն մեծագումար կաշառաց՝ շրջեաց զմիտս նորա, որ ժխտեաց զխոստումն իւր, եւ դաժանացեալ ՚ի վերայ միաբանութեանս, հրամայեաց զնել շղթայիւք ՚ի բանտի զԱստուածատուրն եւ զԲարսեղ, եւ զԱւետիս եպիսկոպոսունս, եւ պահանջեաց զտուգանս 9000 դահեկան:

“Իսկ զայլ ծերս եւ զտղայս մատնեաց ՚ի ձեռս ծառայից իւրոց, որք ձիւղորեալք եւ զինագարդեալք՝ ձգեցին զբազմութիւն քահանայակարգ միաբանիցն առաջի երիվարացն իւրեանց, եւ գտնելով եւ հարկանելով գլխիբաց եւ բոկոտն հանին ՚ի ճանապարհ, եւ ստիպէին ընթանալ փութով:

“Էր ժամանակի գիշերային՝ մուլթն՝ անձրեւուտ եւ տղմուտ, ուստի ոմանք ՚ի ծերոց՝ որք յամր ընթանային, ուժգին գանէին, զի արագ ընթացեն, վասնորոյ ոմանք զոտս իւրեանց հարկանէին, ոմանք անկանէին ՚ի խորխորատ, եւ ոմանք ոչ գտեալ զագանելիս, բոկոտն ընթանային զերկարածիգ ճանապարհն, որոց որք ծակոտեցան եւ վիրաւորեցան:

“Եւ այսպէս տուայտանօք՝ տառապանօք՝ ողորմելի կերպիւ հասուցին զմեզ ՚ի սուրբ աթոռն, եւ փակեալ զիւրաքանչիւրն ՚ի սենեակս իւրեանց՝ արարին զբանկարանս մեր մեզ՝ բանտք եւ արգելանոցք:

“Որ ՚ի լուսանալ առաւօտուն ձայնէաք ՚ի ներքուտ, թէ բացէք զդրունս մեր, զի զնացեալ արտաքս վասն կարեաց որովայնից մերոց՝ եկեսցուք, եւ ապա փակեցէք միւսանգամ, բայց ոչ ոք էր, որ ունկնդիր լինէր:

Վասնորոյ նեղացեալ բազումք, ոմանք կոտորեցին զսափորս ջրոյ, եւ յայնս հոգացին զպէտս որովայնից, ոմանք ՚ի կոնքս, եւ այլք յայլ անօթս, զորպիսիս տեսեալ մեզ երազ համարէաք. եւ մինչեւ ցարդ այսու կերպիւ եմք անցուցեալ զկեանս մեր, որ չիք ումեք տեսեալ զայսպիսի զանխիղճ բռնութիւն:

“Եւ ապա ՚ի դիմաց միաբանից գիր գրել ետ առ խանն զայս օրինակ, եթէ ոք ՚ի մէնջ փախիցէ եւ կամ ուրեք զգիր ինչ գրեսցէ, ՚ի յըմբռնելն գերծցին զմօրուս նորա, եւ քեզ հարիւր թոման տուծեսցի այսինքն 1250 գահեկան:

“Եւ եթէ ոք ընդդիմացի կաթողիկոսին, նմա եւս զայն պատիժ հատուցեն:

“Եւ հանեալ մի մի ՚ի սենեկաց, բռնութեամբ կնքել ետ իւրաքանչիւրոցն զթուղթն զայն, եւ արձակեաց զոմանս:

“Բայց զքանի վարդապետն հանեալ ՚ի սենեկաց իւրեանց արգել յայլ եւ այլ բանտս:

“ԶԱբրահամ վարդապետն Աժդարխանցի արկ ՚ի բանտ խաւարային:

“ԶՓիլիպպոս վարդապետն Եւզոկացի յամբարն գարւոյ:

“ԶՅակոբ վարդապետն Պօլսեցի ՚ի սենեակ մի Ղազարապատին:

“ԶՍտեփանոս վարդապետն յայլում սենեկի նոյն Ղազարապատին:

“ԶԿարապետ արեղայն նորընծայ՝ ետ յայլում բանտի:

“Զփոքրաւորն Բարսղի արքեպիսկոպոսին զՌեթէոս վարդապետն եւ զՎիրեմ սարկաւազն ՚ի միասին յայլում բանտի:

“Եւ զՂազար արքեպիսկոպոսն խոստովանահայր յիւրում սենեկի:

“Զայսոսիկ զամենեսեան եհան ՚ի բանտէ, եւ նոցա եւս կնքել ետ բռնութեամբ զտաճկական գիրն, եւ Ղազար եպիսկոպոսն եւ Աբրահամ վարդապետն տակաւին են ՚ի բանտի եւ երեք եպիսկոպոսունք են յերեւան:

“Եւ կնքել ետ զսենեակս Աստուածատուր եւ Բարսեղ եւ Յովհաննէս եւ Աւետիս եպիսկոպոսացն:

“Նաեւ սենեակք Աբրահամ վարդապետին եւ տիրացու Իգնատիոսին՝ կան տակաւին այնպէս կնքեալք:

Եւ բերել ետ ՚ի խանէն գերեւելի տաճիկս, զի յաւելցէ զբռնութիւն իւր ՚ի վերայ միաբանիցս, եւ մանաւանդ զի լիցին ակնածու ընդ սպասաւորաց իւրոց՝ զի մի կարասցեն միաբանք խոյս տալ, եւ պահապանս եղ ՚ի վերայ ամենայն ճանապարհաց, զի մի ոք կարասցէ հանել ուրեք զգիր, կամ ազատիլ փախստեամբ:

“Արդ՝ եթէ կամիցիմք մի ըստ միոջէ զամենայն բարբարոսական գործս նորա գրել, անբաւականանայ թուղթ եւ մեկան, ուստի այսու միայն համառօտեմք, զի եկաց յամենայն ճանապարհ, որ ոչ է բարի, եւ ՚ի չարէ երբէք ոչ ձանձրացաւ, եւ չունի ձանձրանալ ՚ի բոլոր կեանս իւր:

Ապաքէն գիտացեալ ձեր զայսոսիկ, կարեկից եւ ցաւակից լերուք խղճալի միաբանութեանս, եւ զամենայն տառապանս մեր՝ անձանց ձերոց համարեալ, ջանասջիք ազատե՝ զաթոռն, եւ զմեզ ՚ի ձեռանէ բարբարոսիս այսմիկ:

“Որով ընկալջիք զվարձս բարեաց յԱստուծոյ, եւ ժառանգեսջիք զաղօթս եւ զօրհնութիւնս սրբոյ Լուսաւորչին մերոյ”:

## ԳԼՈՒԽ Ը.

*Յաղագս գրութեան Եփրեմայ արհի եպիսկոպոսի առաջնորդի Ռուսաստանու, եւ աքսորանացն Յովհաննու պատրիարքի, եւ պատրիարքութեան Գրիգորի, եւ վախճանի Թորոսի կաթողիկոսին Սոյ, եւ յաջորդելոյ Կիրակոս եպիսկոպոսին:*

(1802) Այս օրինակ գրութիւնք բողոքանաց՝ գրեալք առ ամենայն կողմանս ՚ի կարեկցութիւն եւ յողբ շարժեցին զյսողս զամենեսին, բայց առաւել զժողովուրդս Ռուսաստանու. որոց էր յայնժամ առաջնորդ եւ վերատեսուչ՝ Եփրեմ արհի եպիսկոպոս՝ յաջորդն Յովսեփայ:

Սա գոլով առաւել պաշտպան եւ ջատագով Դանիէլի, եւ լուեալ զբռնութիւն Դաւթի եւ զայս ամենայն արարս նորին՝ եւ զխղճութիւն միաբանիցն, յարեալ ՚ի վրէժխնդրութիւն նորին: Եւ թէպէտ ՚ի ձեռն տէրութեան Ռուսաց կամեցաւ վճարել՝ զոր եղեալն էր ՚ի մտի իւրում, բայց խոհեմութեամբ ձեռն ՚ի գործ արկեալ լաւ համարեցաւ յառաջագոյն զգիտաւորութիւն եւ զմիտս Կոստանդնուպօլսեցւոց գիտել եւ փորձել, եւ ապա ՚ի պայքար մտանել ընդ Դաւթի, ուստի եւ գրեաց զգիր իմն ՚ի Կոստանդնուպօլիս՝ խնդրելով զպատասխանի նորուն ՚ի Յովհաննէս պատրիարքէ՝ զայս օրինակ:

“Վեհապատիւ յարգելի եղբօրդ իմոյ, տեառնդ Յովհաննէս սրբազան պատրիարքի մեծիդ Պօլսոյ, շքեղաշուք եւ մեծահաւատ բարեմիտ իշխանաց, ամիրայից, արդարավաստակ էսնաֆից, եւ արիաջան արհեստաւորաց, եւ առ հասարակ օրհնեալ ժողովրդականաց մեծին Պօլսոյ, այս ինչ յԱստուածակոյս կողմանէ յայտարարութիւն:

“Սոսկալի է ինձ ձայն Փրկչին՝ որ ասէ. վա՛յ այնմիկ, որ ասիցէ զլոյսն խաւար, եւ զխաւարն լոյս, զգառն քաղցր, եւ զքաղցր դառն:

“Զիա՞րդ ուրեմն ամենաբուն բարին զլոյս բանականութեան տնօրինեաց ՚ի մարդն, որ ոչ զգայ զբարին, եւ ոչ խորշի ՚ի չարէն:

“Զի անբանք միմիայն երեւակայութեամբ զգալով ընդ որս ունին ընթանալ, ոչ թիւրեն զճանապարհ իւրեանց, քանզի ՚ի մթնաշորթ գիշերի եւս ճանաչեն զելս շաւղաց իւրեանց, ՚ի յօտարէ եւ յանձանօթէ խորշին, եւ զայնս՝ որոց գիտեն գոլ բարիս,

Թողլով զբնականն իւրեանց զգժնէութիւն, ընդ ոտիւք նոցին թաւալին, որպէս առ այս գանգատէ տէր, ըստ Եսայեայ, թէ ծանեալ եզն զստացիչ իւր, եւ էշ զմսուր տեառն իւրոյ, եւ Իսրայէլ զիս ոչ ծանեալ, եւ ժողովուրդն իմ զիս ՚ի միտ ոչ էառ:

“Զարթիր Պօլիսդ, եւ տես, թէ զիա՞րդ ՚ի թուլութենէ եւ ՚ի զանցառութենէ ազգին մերոյ քակտեցան հիմունք հաւատոց մերոց, դարձան օրէնք եւ կրօնք մեր ՚ի տեսարանս թէատրօնից, եւ ճշմարտութեանն ճրագ լուսաւորչադաւան կրօնից մերոց՝ ՚ի ներքոյգրուանի թագուցաւ, եւ բանականութիւն մարդկայինս սեռի աղաւաղեալ ոչ զգայ բնաւ զցաւ: Արդեօք ցի՞նչ է պատճառն այսց ամենից խանգարմանց, եթէ ոչ՝ բարձումն սիրոյ եւ համաձայնութեան:

“Զրկեանք ՚ի թագաւորութենէ ո՛վ տառապեալ մերազնեայք, եւ մխիթարութիւն մեզ է հոգեւորապէս, եթէ ունիմք բարձրագահ աթոռ ՚ի Քրիստոսէ հիմնեցեալ, աթոռ սուրբ Լուսաւորչին՝ որով պարծիմք ՚ի մէջ ամենայն ազգաց, այժմ նոյն պարծանքն մեր եղեւ մեզ նախատինք ՚ի մէջ ամենայն աշխարհին, միթէ՞ նոյն բռնութեանցն զօրութիւնք բարձա՞ն, քաւ լիցի, այլ մեք մեղեն արարաք զլուսատու տունն այն՝ տուն աւագակաց:

“Աւաղ կարգամ ՚ի վերայ անձինս ո՛վ Պօլիսդ լռեալ, զի որ երբեմն զճշմարտութենէն բռնն հարեալ, ՚ի մի շունչ եւ ՚ի մի հոգի գտեալ՝ զդաշինս կռէիր, գահակալ սուրբ Լուսաւորչին՝ ընտրութեամբ բոլոր ազգին լինել. այժմ օտարածնին հնազանդի, որ պատառեաց զքօղ հարսինն անարատի:

“Ու՞ր է տառապեալն Դանիէլ, ո՞չ ապաքէն ՚ի Պօլիսդ էր, որ կալեալ զնա բարձրացոյց յաստիճան պատրիարքութեան, ո՞չ ապաքէն ընտրութիւն ընդհանուր ազգին էր, եւ խորհուրդ սիւնհոգոսին արքեպիսկոպոսաց, եւ բոլոր միաբանիցն՝ ՚ի պատրիարքութենէ հանել զնա, եւ հրաւիրել ՚ի ծայրագոյն պատրիարքութիւն ամենայն Հայոց՝ յետ վախճան լուսահոգի հայրապետին Ղուկասու:

“Դիցուք թէ յայնժամ Յովսէփ արքեպիսկոպոսն յառաջանալով, իբրու օրինաւոր առաջադրութիւնս առնէր, թէ ես եմ հնագոյն արքեպիսկոպոս, եւ մանաւանդ հաճոյ գտեալ յաչս բարեյիշատակ կայսերն Պօղոսի, որ կատարէր զաղերս նորա լինիլ հայրապետ Հայոց. եւ ողորմելին Դանիէլ ՚ի յաքսորս մատնեցաւ ՚ի գուրն առիւծուց:

“Բայց տեսէք զխոհականութիւնն Յովսեփայն:

“Որ ոչ յառաջ մատեալ՝ ըստ որում գիտէր վաղուրեմն զճշմարտական համաձայնութիւնն ձեր, սպասէր ձերդ շնորհաւորութեան, զորս ստացեալ աստ ՚ի Մոսկօյ՝ ապա դիմեաց ՚ի սուրբ Աթոռն:

“Տեսէք այժմ, որ արեղայ մի՝ վատնելով զկայս հանգուցեալ Յովսեփին իբրու ընդհանրական գլուխ, իւրովի յառաջացոյց. միթէ առաջին վէրք եւ տարապարտուց խայտառակութիւնք ողբալի Դանիէլին չէ՞ր նմա բաւական, որ կրկին հրաւիրանօք բոլոր եպիսկոպոսաց եւ միաբանից՝ եւ ընտրութեան ընդհանուր ազգին, ետուք շարժիլ ՚ի յԵւդոկիոյ, հասուցանել մինչ ցՊայագիտ, եւ անդէն նոր ՚ի նորոյ զվէրս ՚ի վերայ դնելով՝ ետուք խայտառակել ՚ի մէջ աշխարհի:

“Պահեալ կան առ իո ո՞վ Պօլսեցիք զանազան աղաղակք եւ բողոքք առ հասարակ արքեպիսկոպոսաց, որք միաձայն եւ միահոգի զգանգատանս գրէին ՚ի չար արեղայէն, թէ զհաւատս մեր ընդ ոտիւք էարկ, եւ կամի զԴաւիթն յառաջացուցանել, զի ինքն լիցի եպիսկոպոս, եւ զամենայն կայս սրբոյ աթոռոյն վատնէ հազարաւորաւ, եւ զմեզ եւս բռնութեամբ կալանաւորեալ, ոչ թողու ելանել ՚ի Թիֆլիզէ. բայց մեք երդուեալ եմք ՚ի վերայ սրբոյ գեղարդեանն՝ եւ մասանց սրբոց՝ բաց ՚ի Դանիէլէ գոչ ոք ճանաչել, որպէս եւ չորք անձինք՝ երկու եպիսկոպոսք եւ երկու վարդապետք առաքեալ եմք հրաւիրակք նմա, զի եկեսցէ:

“Բայց զարդիս լսեմք, որք դուք եւս ՚ի նախնական բարի դաշնաւորութենէ շեղեալք, հաւանութիւն մատուցանէք ապօրինաւորին այնմիկ՝ Ֆէրման տալով նմա:

“Լուարուք, լուարուք, նա՞ իցէ փոխանորդն Քրիստոսի, որ զկնիքն իւր երեւելի եղեալ ՚ի վերայ մահասարի ընդ այլ երեւելի արքեպիսկոպոսաց, հրաւիրեաց զԴանիէլն, եւ ապա ՚ի ներքուստ ՚ի չարամոլ փառացն դրդեալ, ՚ի ձեռն անպատմելի կաշառուց գանիւ եւ սաստիւ ահացուցանելով զեպիսկոպոսունս, զօծումն ընկալաւ զինուորօք:

“Բռնութեամբ բռնակալաց՝ ոչ թէ հոգի շնորհաց, այլ թէ հոգի դիւական հանգեալ ՚ի վերայ նորա, որ յայնմ օրէ մինչեւ ցարդ ՚ի դրամն ապաւինեալ՝ զարծաթեայ եւ զոսկեայ գլխատակսն սրբոյ աթոռոյն հալէ՝ եւ անխնաբար վատնէ աստ եւ անդ

վասն միոյ անուան կորստականի, եւ գանիւ ահացուցանէ զամենայն որպէս բարբարոս:

“Զբնիկ Պօլսեցի կենդանի նահատակ Յովհաննէս արքեպիսկոպոսն՝ որ գրեթէ ՚ի վերայ գեղարդեանն Քրիստոսի գկեանս իւր դնէր, եւ յայնմ միջոցի գնորին կառավարութեամբն մնայր անվրդով յաթոռն սուրբ, զայնպիսի հարազատ որդին տայ ՚ի կապանս, արկանէ ՚ի բանտ, եւ հարկանէ զգլուխն: Լուսատուն հոգւոց մերոց՝ Գրիգոր զպակասութիւն չարչարանաց Տեառն ՚ի մարմնի իւրում կրէր, եւ սա զպակասութիւն չարչարանաց նորին՝ իբրեւ անողորմ բարբարոս այլոց տայ վճարել:

“Բացէք գնեքսէս Շնորհալուոյ Ընդհանրական գիրքն ՚ի չորս գլուխ, եւ ԽԴ. համարն, թէ զի՞նչ գրէ վասն այսպիսեաց ապօրինաւորաց յառաջ մատչելոց ՚ի մաքուր աթոռն հայրապետութեան, որ եթէ գնա՝ եւ թէ զընդունօղս նորին ընդ նզովիւք սրբոց հայրապետացն արկանէ:

“Ոչ, ոչ անզգայնութեան մերոյ, զի ՚ի միոյ քահանայի նզովից երկնչիմք, եւ փութամք ՚ի կապանաց արձակումն խնդրել:

“Իսկ յայնքանեաց սրբացանից արքեպիսկոպոսաց՝ որք հոգւով սրբով խօսէին՝ ոչ զգամք բնաւ:

“Տեսէք ով Պօլսեցիք, որ ՚ի սոյն վիճակիս եղեալ հայկազունքն գիտելով զձերդ երկիցս ընտրութիւնն, եւ մանաւանդ զճշմարտասէր համաձայնութիւն ձեր, որ ոչ ընդունիք զայնպիսի օտարածինն, այլ ՚ի վերայ ճշմարտութեան զմահ յանձն առնուք, վասնորոյ պատիւ եւ յարգանս տալով ձեզ՝ գրեցին վասն աթոռոյ միաբանիցն բազմակնիք մահասար՝ առ ամենողորմ կայսրն, թէ նա չէ ընտրութեամբ ազգին յառաջացեալ, այլ այսպիսի չարահնար արեղայի արարմամբ:

“Ընդ որս եհաս ՚ի Պայաղիտէ աղերս ՚ի Դանիելէն առ ականջս ամենողորմ մեծի կայսերն մերոյ, զոր լուեալ սգաց մեծաւցաւակցաբար, եւ իսկոյն գրեաց Թամարով դեսպանին յեղաշրջել զՖերման Դաւթին, եւ վասն Դանիելին հաստատել, եւ բարձրագոյն հրաման եւս առ Երեւանու խանն թէ զինչ փոյթ է քեզ ընդ հոգեւորական գործս խառնիլ, եւ ընդ օրինաւոր հայրապետութիւն Դանիելին ներհակիլ, որ ազգն գնա կամի:

“Ահա զայս համբաւն գրեալ էր աղա Յովհաննէսն առ եղբարսն իւր, առ աղա Մինասն եւ առ աղա Յովակիմն, զորոյ օրինակն ընդ գրոյս մատուցի:

“Ամենողորմ կայսրն եւս մեծաշուք հանդիսիւ եմուտ ’ի քաղաքս, եւ ’ի ԺԵ. աւուր սոյն ամսոյ՝ օծաւ աշխարհախումբ հանդիսիւ, որ ’ի ժամ օծմանն մեք եւս անդ ներկայացեալ էաք ’ի Սօբոռն, որ է հռչակաւոր վանք, եւ կացեալ էաք ’ի չարս արքեպիսկոպոսացն Ռուսաց, որ բնաւ յոչինչ ժամանակս յազգէ մերմէ արքեպիսկոպոս չէր պատահեալ այսպիսւոյ բարեբաղդութեան:

“Թէպէտ անկարելի էր եւ իմս պատահելն անդ՝ ’ի մէջ Սօբօռին, բայց տէր օրհնեսցէ զծնունդս նորին գերագանցութեան՝ աղա Յովհաննէսին, եւ եղբարց իւր վեհագնեայ աղա Մինասին, եւ աղա Յովակիմին որ գորով վառեալ ’ի սէր մեր եւ բոլոր ազգիս՝ այնքան հետեւողութիւնս արարին, զի առ հասարակ մեծամեծացն Ռուսաց թէ հոգեւորականաց եւ թէ մարմնաւորականաց նախ ծանօթս արարին զմէնջ, եւ ապա ’ի Սօբօռն մուծին:

“Յիրաւի յիրաւի՝ ’ի կողմանէ ազգին այնքան ջատագով են, որ թողեալ զսեպհական անձանցն զհոգս, տքնին վասն պայծառութեան ազգին:

“Եւ իմս այս հետեւողութիւնն՝ ոչ թէ մի միայն վասն անձին իմոյ առնեմ, այլ կամիմ մինչ ցսպառիլ շնչոյս՝ բոլոր ազգին զօգուտն խորհիլ, եւ կարեկից գտանել: Եւ յետ քանի աւուրցս՝ ունի կայսրն հրովարտակա հանել, որ ազգին հաւանեալն Դանիէլն է, եւ նա պարտի լինել կաթողիկոս, եւ այժմ այս կողմանցս վիճակք մինչ լսեն զհնազանդութիւնս ձեր ապօրինաւորին այնմիկ, հիանան եւ զարմանան:

“Բայց գիտեմ ես, զի դուք պատճառս առ բերէք, թէ որպէ՞ս յայնժամ ’ի ժամանակս Յովսեփայն՝ յահէ դեսպանին արարիք, նոյնպէս եւ այժմ երկիւղ նորին եդ ձեզ առնել զայս:

“Բարւոք ասէք, բայց այժմ ըստ փիլիսոփայից՝ ’ի բառնալ պատճառին, բարձցի եւ պատճառելին. տամ ահա բարձումն պատճառի ձերոյ, որ ամենողորմած կայսրն ըստ ըղձի ազգին արար՝ զայս խնամ եւ զողորմութիւն իւր, հաստատելով զհայրապետութիւն Դանիէլին:

“Եւ ’ի ձէնջ այժմ սպասեմ մահասարական գրութեան՝ զճշմարիտ դիտաւորութիւն ձեր ծանուցանելով ինձ օր մի յառաջ, որ այսուհետեւ ’ի կամս ազգին յառաջացի տէրութիւն հայրապետութեանն: Գիտեմ հաւաստեալ, զի ’ի բարի խորհրդոց չունիք շեղիլ, մի արասցէ տէր. եթէ դուք եւս խորհրդոց չունիք շեղիլ, մի արասցէ տէր. եթէ դուք եւս ցանկայք ընդ ոտս միոյ արեղայի



Թաւալիլ, յայնժամ ես անպարտ եւ ազատ գտանելով Հանդերձ սոյն վիճակաւս իմով, ոչ զաթոռն իմ ճանաչելոց եւ ոչ զչօծեալն այն, եւ ոչ ընդ այսքանեաց սրբազան ժողովոցն նզովից ներքոյ մնալ:

“Թէպէտ ժամանակ ՚ի ժամանակ բազում անկարգութիւնք եղեալ են, բայց ոչ այսպիսի, որ ՚ի ժամ չօծման Մահմետական զինուորք եւ բռնաւորք ՚ի վերայ եպիսկոպոսաց կանգեալ Հանդէպ սրբոյ տաճարին, սրովք՝ մրձօք՝ եւ այլ ահացուցչական գործօք սաստ տալով՝ այնպէս տան օժանել:

“Իմ սիրելիք, եթէ դուք ՚ի վերայ երկիցս հաւանեալ ընտրութեանն ձերոյ Հաստատուն կայք, նախ ինձ ծանուցէք զգիտաւորութիւնն ձեր, թէ մեք ահամայ բռնադատեալ հաճեցաք:

“Իսկ որովհետեւ ամենողորմ կայսրն բարեհաճեալ է թողուլ ՚ի կամս ազգիս, ըստ նախնական ծիսի մեր եւ օրինի ընտրել զօրինաւոր հայրապետ, ահա մեր երկիցս ընտրեալն Դանիէլն է, արդ եւ թէ ձեօք եւ թէ Պարսից բռնակալութեամբ զապօրինաւորդ այդ արտաքսեցէք, եւ զԴանիէլն մուծէք ՚ի ներքս: Իսկ եթէ երկիւղ իցէ ՚ի կողմանէ Պարսից, գրեցէք Դանիէլին գնալ յԻւջ քիլիսս, եւ անդ օժանիլ: Գիտէ Աստուած, որ ես հանդերձ վիճակաւս իմով՝ ոչ թէ ՚ի յօգուտ եւ ՚ի նպաստ Դանիէլին առնեմ զայս, այլ թէ վասն Հաստատութեան նախնական բարի ծիսի եւ կրօնի մերում, զի մի իսպառ ոտնհար լիցի. իմ պարտաւորութիւնս այսչափ, եւ ձերդ բարեաց նախանձախնդիր լինելն դուք գիտէք:

“Եւ սակս երկու պատճառի ասեմ Դանիէլին ՚ի յԻւջ քիլիսս օժանիլ, նախ՝ որ նա ինքն չօծեալն միայն մնասցէ, եւ հետեւեալքն իւր չկարասցեն մտանել ՚ի Տէրութիւնս Օսմանցոց, եւ կամայ ահամայ ճարակտուր լեալ հերքեսցեն զնա անտի: Եւ երկրորդ, զի յայսպիսի չարաշուք ժամանակի ոչ բարեք վարկանիմ Դանիէլին ՚ի սուրբ աթոռն լինիլ, եւ անդ մնալ, որովհետեւ յերկիւղէ Պարսից վնաս մեծամեծ հարկապահանջութեանց յառաջանալոց է, որոյ աղազաւ ես վաղուրեմն ունիմ գրեալ նախանկատ գիտմամբ թէ ՚ի սուրբ Աթոռն, եւ թէ առ Դանիէլ արքեպիսկոպոսն, մինչ յայդր ՚ի պատրիարքութեան էր, զոր դուք եւս ընթերցեալ էք զայն գիր, եւ ընդ այն հաւանութիւն տուեալ:

“Չկաթողիկոսն այն՝ զգիւլաբնակ Գրիգորն չեպիսկոպոս արարեալ՝ առաքեալ էր ՚ի կողմանս յայս ընդգէմ կամաց ժողովրդոյն Ռուսաստանու, որք քանիցս մահասարական գրութեամբ գրեալ

էին մի առաքել, բայց նա յանդ գնեալ առաքեալ էր բնաւ ոչինչ անսալով կամաց հասարակութեանս, որոյ 'ի մտանելն 'ի Մօզսօք, թէ զո՞րպիսի անարգանս եւ անվատութիւնս կրեալ է 'ի ժողովրդոց, ընդ գրչաւ եզրափակել ոչ լինի, եւ կամ թէ զի՞նչ ինչ հատուցումն եւս կրելոց է այսուհետեւ:

“Եւ կողմանցս ազգ Հայկազունեաց զչարահնարութիւն նորին հատուցանելով յունկն ամենողորմ կայսերն, հրաման գրեաց արգիլեալ մնալ 'ի սահմանի Ռուսաց, մինչեւ ըստ արժանւոյն իւր զվրէժս ընկալցի:

“Որ ահա զժողովրդոց մահասարական օրինակն, եւ 'ի Թիֆլիզու չորս եպիսկոպոսաց առ իս գրեցեալն, եւ առ կուսակալ Կառլ Ֆէտրիչ տնօրինողն, զնոցուն օրինակն եւ զայլոցն եւս՝ ահա ընդ գրոյս առաքեցի, զորս ունիք տեսանել, թէ զի՞նչ ինչ անցք անցեալ են:

“Տէր օրհնեսցէ զկայսերութիւն նորին, ամենայն ինչ 'ի կամս ազգին եթող եւ թողոց է այսուհետեւ, մեծ շնորհ եւս վերաբերէ 'ի վերայ նուաստիս, զորմէ յինէն պատմելն է անվայել:

“Եթէ զայս առաջարկէք, թէ ժամանակ 'ի ժամանակ այսպիսի գործառնութիւնք են եղեալ, որպէս Եղիազար Անթափեցւոյն, Փոլթառին եւ այլոցն, միթէ եւ յայնժամ բարւո՞ք են արարեալ, զորս իսայտառակէ Միքայէլ Չամչեանն:

“Ո՞չ ապաքէն ազգին թոյլտուութեամբն եւ ընդ նզովիւք նոյն սրբազան ժողովիցն մնալով՝ ոչ երբէք բանամք զաչս 'ի յանյաջողութենէ:

“Եթէ հաստատութեան սրբոյ աթոռոյն ցանկայք, չունիք այլ եւս արգելման առիթս, հետեւեցէք ճշմարտութեան, որ յապագայն ազատ մնասցուք յայսպիսի յանկարգութեանց, եւ իսպառ 'ի մէջ այլազգեաց մի լիցուք առակ նշաւակի:

“Ես հաստատուն գիտեմ, եւ տեղւոյս ժողովրդոցն եւս պատասխանեալ եմ, թէ նոցա կամօք չէ, այլ յերկիւղէ դեսպանին առնեն:

“Ահա ապահովութիւն սրտի ձեր՝ որ ամենագթած կայսրն ըստ ըղձի եւ փափագանաց ձերոց պարգեւեաց, որ եւ ցանկալով բարեընկուցեան սրբազան պատրիարք յարգելի եղբօրդ իմոյ, եւ վասն օրհնեալ իշխան ամիրայից եւ ժողովրդոց՝ մնամ ջեմեռանդ աղօթարար, եւ մինչեւ ցապառիլ չնչոյս 'ի վերայ ճշմար-

տուլթեան հաստատուն մնացող, ամենախոնարհ Եփրեմ արքեպիսկոպոս բոլոր Հայոց Ռուսաստանու”:

*Յամի տեառն 1801 եւ ՚ի սեպտեմբեր 19.  
Ի յարքայանիստ քաղաքս Մոսկով:*

(1801) Այս թուղթ Եփրեմայ արհի եպիսկոպոսի տարածեալ ՚ի Կոստանդնուպօլիս հարկ շնչիւն ՚ի լսելիս ժողովրդեան, յեղաշրջեաց զմիտս բազմաց, եւ վառեաց զնոսա ՚ի նախանձ պաշտպանութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի, մինչեւ եւ կողմնակալքն Դանիէլի քաջալերութիւն եւ վստահութիւն քաղեալ ՚ի նոցանէ, յարեան յոտս ոգւով չափ ջանալ եւ գուն գործել նուաճեցուցանել զկողմն Դաւթի, եւ ՚ի ձեռն բազում եւ մեծամեծ ընծայից եւ կաշառուց աղերս աղաչանաց մատուցեալ առ մեծամեծս տէրութեանն, յանկարծ իջուցին զՅովհաննէս պատրիարք յաթոռոյ իւրմէ, եւ յաքսորս վտարեցին զնա ՚ի քաղաքն Եւրոկիա, յամսեանն հոկտեմբեր 29, եւ սկսան ՚իխորհուրդ մտանել վասն ընտրութեան պատրիարքի եւ խնդրել զայնպիսի պատրիարք, զի զկողմնգ Դանիէլի զօրացուցէ, եւ զհակառակորդս նորին զամենայն ընդ ոտիւք իւրովք նուաճեսցէ:

Եւ յետ բազմաց ժողովոց գումարեցան վերջապէս եւ ՚ի միում աւուր ՚ի Պապալը կոչեցեալ փռան հացագործի ՚ի շուկայն, եւ անդ առաջարկեալ զքանի ինչ եպիսկոպոսունս, յետ բազում հարցաքննութեանց ջատագովութեամբ եղբօր որդի տէր Պօղոս քահանայի՝ ստորագրեցին եւ կնքեցին կացուցանել պատրիարք, զի զկողմն Դանիէլի զօրացուցէ, եւ զհակառակորդս նորին զամենայն ընդ ոտիւք իւրովք նուաճեսցէ:

Եւ յետ բազմաց ժողովոց գումարեցան վերջապէս եւ ՚ի միում աւուր ՚ի Պապալը կոչեցեալ փռան հացագործի ՚ի շուկայն, եւ անդ առաջարկեալ զքանի ինչ եպիսկոպոսունս, յետ բազում հարցաքննութեանց ջատագովութեամբ եղբօր որդի տէր Պօղոս քահանայի՝ ստորագրեցին եւ կնքեցին կացուցանել պատրիարք զԳրիգոր եպիսկոպոս խամսեցին զնուիրակն սրբոյ էջմիածնի, որ դեգերէր ՚ի կողմանս Եւրոկիոյ:

Եւ ծանուցեալ վասն նորին ՚ի գուռն արքունի՝ հանին հրաման ածել զնա այսր, եւ հրաւիրակս առաքեալ առ նա զԱստուածատուր վարդապետ զոմն, ածին զնա ՚ի Կոստանդնուպօլիս, եւ

տարեալ 'ի դուռն արքունի, զգեցոյց նմա եպարզոսն զկապայն պատրիարքական իշխանութեան, եւ մեծաւ հանդիսիւ դարյոյց զնա 'ի պատրիարքարանն յամի տեառն 1801 'ի դեկտեմբերի 19:

Եւ յետ աւուրց ինչ զաշակերտն Մինասայ զԳէորգ եպիսկոպոս՝ որ գնացեալ էր 'ի նուիրակութիւն 'ի Րումելի, ետուն բերել 'ի Կոստանդնուպօլիս, եւ արարին վէքիլ Գրիգոր պատրիարքին:

(1801) Ի սմին ամի Թորոս կաթողիկոս Սսոյ՝ որ օծեալն էր 'ի Կոստանդնուպօլիս յաւուրս Զաքարիայ պատրիարքի, սպանանի յօշատեալ անդամ անդամ 'ի Խոզան օղլու կոչեցեալ յայլագգի իշխանէ տեղւոյն արտաքոյ պարսպին Սսոյ 'ի վերայ կամըջոյ գետոյն, որում յաջորդէ՝ եղբօր որդի նորուն Կիրակոս արքեպիսկոպոս Սսեցի՝ այր առաքինագարդ եւ սրբակրօն՝ երիտասարդ քսան եւ չորս ամեայ՝ փառահեղ դիմօք եւ գեղեցիկ տեսլեամբ, եւ յետ միոյ ամի գնացեալ յԵրուսաղէմ յուխտ եւ յերկրպագութիւն, փառաւորի մեծաւ պատուով, եւ դառնայ յաթոռ իւր:

## ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս օժման Դանիէլի 'ի կաթողիկոսութիւն, եւ ժողովոյն Պայագիտու:

(1802) **Գ**րիգոր պատրիարք՝ որ յաջորդեացն Յովհաննու յայսմ խռովութեան ժամանակի, գոլով անհնարին թշնամի Դաւթի, եւ սերտ բարեկամ եւ ջատագով Դանիէլի, եւ ինքն ըստ բարուցն գոլով անխոհեմ եւ անվարժ, եւ չգիտելով զկեղծաւոր բարս եւ գսովորական ընթացս Կոստանդնուպօլսեցւոց, սկսաւ անխոհեմաբար ձեռն 'ի գործ արկանել եւ յաղթահարել զկողմնապահս Դաւթի. եւ փոխանակ ողոքանօք եւ քայցրութեամբ համոզվելոյ եւ որսալոյ զժողովուրդն՝ սկսաւ բռնաբար խոշտանգանօք եւ սպառնալեօք վարիլ ընդ նոսա:

Եւ ձեռնատուութեամբ կողմնակալաց իւրոց ծանուցեալ 'ի դուռն արքունի էառ զհրովարտակ կաթողիկոսութեան Դանիէլի, եւ 'ի ձեռն Ներսիսի վարդապետի՝ որ աշակերտն էր Դանիէլի, առաքեաց առ նա 'ի Պայագիտ:

Գրեաց եւ առ միաբանսն սուրբ Էջմիածնի, եւ գաղտ 'ի Դաւթին՝ ետ տանել զօժման գիրքն առ Դանիէլ. գրեաց եւ առ կաթողիկոսն Աղթամարայ, եւ առ երեւելի առաջնորդս եւ եպիսկոպոսունս բազմաց քաղաքաց երթալ ժողովիլ 'ի Պայագիտ, եւ օժանել զԴանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց:

Եւ իբրեւ այս այսպէս եղեւ, եւ օր քան զօր զօրացաւ կողմն Դանիէլեան, ժողովեցան 'ի Պայագիտ բազմութիւնք եպիսկոպոսաց եւ վարդապետաց, եւ ըստ օրինի եւ կանոնի կաթողիկոսութեան քննութիւն արարեալ առանց կեղծեաց, գտին զԴաւթի պարտաւոր՝ մեղաւոր՝ եւ բռնաւոր՝ եւ անարժան կաթողիկոսութեան, եւ զԴանիէլ անմեղ եւ անպարտ եւ արժանաւոր օժման շնորհին, եւ վճռահատեալ ստորագրութեամբ ամենեցուն օժին զԴանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց 'ի նոյն վանսն Իւջ Քիլիսսա կոչեցեա, յամի տեառն 1802 'ի մայիս 28:

Եւ զքննութիւն եւ զվճիռ սիւնհոգոսին գրեցին 'ի Կոստանդնուպօլիս օրինակ զայս:

## ՔՆՆՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՒՆՀՈԴՈՍԻՆ

## ԲԱՆ Ա.

“Ուր իցեն երկու եւ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ՚ի մէջ նոցա, ասաց Քրիստոս տէրն մեր. վասնորոյ եւ ՚ի ժամանակիս յայսմիկ մինչ ձեռնարկեաց ամենաչարն խանգարել զեկեղեցի սուրբ, յանուն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ժողովեցաք բազմութիւնք եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝ քահանայից՝ եւ այլ ժառանգաւորաց՝ յերեք Վանք կոչեցեալ սուրբ ուխտս՝ որ ՚ի ստորոտ նպատ լերինն ՚ի Բագրեւանդ գաւառի... եւ աստ ՚ի մէջ սքանչելահարաչ տաճարիս կառուցելոյ... առաջի սրբութեան սեղանոյն վկայութեամբն Աստուծոյ եւ սրբոյ Աւետարանի նորա՝ ուղիղ ակնարկութեամբ ՚ի հանդէս մատուցեալ քննեցաք զգատաստան Դաւթի Թիֆլիզեցւոյ՝ որ անձնընծայ եղեալ անուանեցաւ կաթողիկոս Հայոց՝ յամի 1801 ՚ի 20 ապրիլի, յորմէ եւ այսր ոչ տեսանէ երբէք եկեղեցիս Հայոց զերեսս խաղաղութեան, զորս վայելէր առատապէս յերեկն եւ յեռանդ:

“Եւ ՚ի զննին եղեալ Համեմատութեամբ ավետարանական բանից եւ առաքելական եւ մարգարէական գրոց՝ ծանեաք զնա ամենեւին խտտորեալ ՚ի շաւղաց կենարար վարդապետութեան նորին, եւ հետախոյզ քննութեամբ կանոնաց հարցն սրբոց առաջնոց՝ եւ բարւոք վերահասութեամբ քանի քանի բազմօրինակ բազմակնիք գրութեանց քահանայակարգ միաբանութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի՝ գտաք զնա իսկապէս ընդ դատապարտութեամբ եկեղեցւոց, եւ ապօրինաւոր օծութիւն նորա:

“Եւ զի մի ընդ Համառօտն ընթացեալ, ՚ի տարակուսի թողուցումք զմիտս այնոցիկ, որք դարձ տեղեկութեան պարագայից՝ միայն պարզ մտօք ընկալեալ զնա զառաջինն որպէս կաթողիկոս վաւերական օծութեամբ, գայթակղեսցին վասն դատաստանի սուրբ սիւնհոգոսիս մերոյ, արժան Համարեցաք առաջի առնել գրով եւ ստորագրութեամբ մերով:

“Որպէս զի լաւ վերծանութեամբ իրացն հանգամանաց՝ սրբեսցի խիղճ մտաց ամենայն հասարակութեան հեռաւորաց եւ մերձաւորաց ազգիս մերոյ, եւ մնասցէ այնպէս վասն Հաստատութեան սուրբ եկեղեցւոյ ՚ի յիշատակ անջնջելի յապայս ժամանակի”:

Կանոնք վասն ընտրութեան կաթողիկոսի:

ԲԱՆ Բ.

“Արդ ՚ի սկզբան անդ խնդրեցաք զկանոնս վասն ընտրութեան կաթողիկոսի, եւ գտաք ՚ի գլուխս գրքոյն օծութեան կաթողիկոսի այսպէս.” Յորժամ հանդերձեալ լինին բարձրացուցանել զոք ՚ի պատիւ կաթողիկոսութեան տանս Հայոց, բոլոր ժողովուրդք Հայկազեան ազինս հանդերձ ամենայն ժառանգաւորօք եւ երկոտասան եպիսկոպոսօք ժողովեալ ՚ի մի, ընտրեսցեն նախ զերիս, եւ ապա քննութեամբ ամենայն ժողովողն որոշեալ զմինն յերիցն՝ վկայել յամենայն գործս բարիս եւ ՚ի վարս առաքինիս սուրբս եւ անարատս, լի գիտութեամբ եւ իմաստութեամբ:

“Եւ մի լիցի ՚ի հաւատս թիւր, ՚ի բարս ժանտ, ՚ի վարս անողիղ, եւ ՚ի բանս անհաստատ, մանաւանդ՝ զի մի լիցի անձնընծայ եւ ընտրեալ արծաթով ՚ի ձեռն կաշառաց յայլագգի իշխանաց, զի պիղծ է այնպիսի առաջի Աստուծոյ, եւ բանադրեալ է իսկ:

“Այլ եւ գտաք յընդհանրական գիրս Ներսիսի Շնորհալուոյն, գլուխ Գ. երես 44. ուր ընդ երկար գրէ վասն Դաւթի եպիսկոպոսի ուրումն, որ սոյնպէս յաչաղանօք՝ բռնութեամբ՝ ՚ի ձեռն կաշառաց՝ ընկալեալ է զօծումն հայրապետական ՚ի գլուխ իւր, այլ բազմութիւն եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝ հարց վանականաց՝ եւ միանձանց՝ աւելի քան երկու հազար եւ հինգ հարիւր անձանց, ընդ որս են եւ սուրբն Ներսէս Շնորհալին, եւ եղբայրն իւր սուրբն Գրիգորիս, ժողովեալ ՚ի Սեաւ լեառն, եւ մեծաւ սիւնհողոսին դատապարտեալ զնա, նզովեալ եւ հերքեալ են յեկեղեցոյ Քրիստոսի... գրեալ են զկանոնս զայս թէ՛” Որք ոչ ընտրութեամբ Աստուծոյ եւ Աստուածայնոց արանց՝ այլ ինքնաշարժ ախտիւք՝ եւ բռնակալաց աշխարհի հրամանօք զնձինս իւրեանց բարձրացուցանեն յաստիճան սրբազան քահանայապետութեան, ոչ միայն քահանայապետութեան չեն արժանիք, այլ եւ ոչ քրիստոնէական հաւատոյ, ոչ սրբոյ պատարագի յիշատակութեան՝ եւ ոչ օրինաւոր թաղման անգամ”:

Յետ այսոցիկ ՚ի մէջ բերէ զթուղթս միաբանիցն սրբոյ էջմիածնի:

## ԲԱՆ Գ.

Յորս մի առ մի պատմէ զանարժան գործս Դաւթի, եւ զբողոքս եպիսկոպոսաց զնմանէ, եւ յետ այնորիկ զնէ զվճռահատութիւն սիւնհոգոսին զայս օրինակ:

## ԲԱՆ Դ.

“Տեսաք եւ ընթերցաք եւ զայլ բազում գրութիւնս որոց ամենեցուն համեմատութեամբ զտաք զԴաւիթն ամենեւիմբ հակառակ հարցն կանոնաց, եւ անընդունելի ընտրութիւն եւ օծութիւն նորա, որովք՝ եթէ օծեալ եւ եթէ չօծեալ՝ մի եւ նոյն է, եւ ըստ հարցն օրինաց դատապարտէ օծութիւն նորա զինքն եւ զընդունողսն իւր, ըստ որում եւ գրեալ է, թէ Արժանի են մահու, ոչ միայն որք զչարն գործեն, այլ եւ որ կամակից լինիլ գործողացն, ուստի խոտեցաք զնա ըստ բանի մարգարէին, թէ” Խոտեցին այնոքիկ, ոյք ընտրեալ են արծաթով” եւ հարաք զնա ՚ի վէմն Քրիստոս, եւ դատապարտեցաք զնա ինքն զԴաւիթ եւ զամենայն համախոհս նորա, դատապարտութեամբն եկեղեցւոյ, մինչեւ զղջացեալ ապաշխարեցեն, եւ դիմեալ յոտս օրինաւոր սրբազանին՝ գտցեն զազատութիւն ինքեանց”:

Եւ յետ այսորիկ կարգէ զբազմակնիք մահասարս միաբանիցն եւ երեւելի առաջնորդաց այլոց քաղաքաց վասն խնդրելոյ զԴանիէլ ՚ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, նաեւ զնոյն ինքն իսկ զվկայութիւն Դաւթի վասն արժանաւոր կոչմանն Դանիելի, եւ երեւալ զսոսա՝ պատմէ զչնորհելոյս օծումն տեսուն Դանիելի՝ ասելով այսպէս:

## ԲԱՆ Ե.

“Ուստի եւ մեք համաձայնեալ նոցին ընտրութեանց՝ ընտրեցաք եւ մանաւանդ ընկալաք զարժանապէս ընտրեալն ՚ի բազմաց՝ զտէր Դանիէլ սրբազան արքեպիսկոպոսն, որ ՚ի քսան եւ հիգերորդ աւուր ամսոյս մայիսի՝ հեղմամբ սրբալոյս միւռոնին յարժանաւոր գազաթ նորա՝ օծաք զնա օծմամբ սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ կաթողիկոս եւ քահանայապետ ամենայն Հայոց, եւ ծայ-



րագոյն պատրիարք սրբոյ էջմիածնի. գոր տէր Աստուած Հաստատուն պահեսցէ ընդ երկար ամս...:

“Ապա յայսմհետէ որ ոք բերանով եւ գրով իւրով խօսեսցի ընդ ձեզ զայլս՝ ներհակ դատաստանի յանուն Աստուածոյ ժողովելոցս, ծանիջիք զայնպիսին ըստ առաքելոյն՝ վարդապետ ստութեան՝ մուծանող հերձուածոց յազգս եւ յեկեղեցիս մեր...:

“Եւ եթէ ոք առաջարկեսցէ, թէ օծեալ էր Դաւիթն, եւ ՚ի վերայ այնր չէր պարտ զայլս օծանել:

“Զպատասխանի սորուն յառաջագոյն իսկ գրեալ է սրբազան առաքեալն, թէ՛՝Ոչ, որ զանձն ընծայեցուցանէ, նա է ընտրեալ, այլ գոր տէրն ընծայեցուցանէ”:

“Ըստ որոյ եւ ժողով երկու հազար հինգ հարիւր հարցն (յաւուրս Շնորհալուոյն) զմիւս Դաւիթ ապօրինաւորութեամբ օծեալն յայնմ ժամանակի՝ ՚ի մասնակցութենէ քրիստոնէութեան եւս հատանէ...:

“Եւ եթէ ոք զտեղին պատճեսցէ, թէ օրինաւոր սրբազանն օծաւ արտաքոյ սրբոյ էջմիածնի օծեալ են օրինաւորութեամբ՝ ընդհանրական կաթողիկոս ամենայն Հայոց, որպէս եւ ՚ի մերձակայ ժամանակիս տէր Կարապետ Ուլնեցի՝ օծաւ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի Միջագիւղն, եւ ձեռնադրեաց զեպիսկոպոսունս, եւ ապա եկն ՚ի սուրբ աթոռն զկնի ժամանակաց...:

“Զայս եւս արժան համարիմ ծանուցանել օրհնեալ ազգիս մերում, թէ ՚ի վերոյգրեալ Դաւթէ դաւաճանէ ձեռնադրեալ եպիսկոպոսունքն, եւ ՚ի նոցանէ ձեռնադրեալ քահանայք եւ այլ ամենայն աստիճանաւորք՝ անընդունակք են եկեղեցւոյ եւ բոլոր ազգի մերում... մինչեւ զղջացին, եւ դիմեսցեն առ ոտս հոգեւրնտիր կայսերակոչ եւ ազգահրաւէր տեառն Դանիէլի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց, եւ ընկալցին զներումն եւ զթողութիւն:

“Եւ տէր որ կոչեաց եւ արդարացոյց, եւ փառաւոր արար զընտրեալն իւր ՚ի սկզբանէ՝ զտէր Դանիէլ սրբազան կաթողիկոսն ամենայն Հայոց, պայծառացուցէ զգաւազան իշխանութեան սորա, եւ արասցէ զսա պարծանք ազգիս, եւ սիւն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, եւ զձեզ զամենեսին ընդ հովանեաւ սորա քրիստոսատիպ բարի հովուութեան տածելով ՚ի վայրի դալարւոջ եւ ՚ի ջուրս հանգստեան, պահեսցէ անփորձ կենօք եւ անսասան ժամա-

նակօք՝ ամենայն բարօրութեամբ եւ անտրտում ուրախութեամբ, ամէն:

“Ողջ լերուք, եւ շնորհք տեառն Աստուծոյ ընդ հոգւոյդ ձերում”:

Ապա զնէ զստորագրութիւն անուանց սիւնհոգոսին, այսպէս շարակարգեալ:

- 1 Կարապետ կաթողիկոս Աղթամարայ:
- 2 Գէորգ եպիսկոպոս Դաթէոս առաքելոյ առաջնորդ:
- 3 Յովհաննէս եպիսկոպոս միաբան Մշու սրբոյ Կարապետի:
- 4 Գրիգոր եպիսկոպոս՝ Բաղեշու:
- 5 Մարտիրոս եպիսկոպոս՝ միաբան սրբոյ Էջմիածնի:
- 6 Յովհաննէս եպիսկոպոս՝ երկոտասան առաքելոց առաջնորդ:
- 7 Անտոն եպիսկոպոս՝ սուրբ Աղբրկայ:
- 8 Գրիգոր եպիսկոպոս՝ առաջնորդ Բալուսոյ:
- 9 Փիլիպպոս եպիսկոպոս՝ առաջնորդ Խարբերդու:
- 10 Գրիգոր եպիսկոպոս՝ առաջնորդ Սեբաստիոյ:
- 11 Աբրահամ եպիսկոպոս՝ սուրբ Սահակայ:
- 12 Կարապետ եպիսկոպոս:
- 13 Մանուէլ եպիսկոպոս Վարդի հօր վանից:
- 14 Աբրահամ եպիսկոպոս Դերջանու:
- 15 Սահակ վարդապետ Իւչ քիլիսայու:
- 16 Աւետիս վարդապետ ժամօրհնող:
- 17 Գալուստ վարդապետ լուսարար:
- 18 Յարութիւն վարդապետ:
- 19 Մկրտիչ վարդապետ:
- 20 Գէորգ վարդապետ:
- 21 Յարութիւն վարդապետ միւս:
- 22 Գասպար վարդապետ Թովմայ առաքելոյ:
- 23 Յովսէփ վարդապետ Տաթեւու:
- 24 Եղիա վարդապետ Վաղարշակերտի:
- 25 Եղիա վարդապետ Բագրեւանու:
- 26 Յարութիւն վարդապետ Տաթեւու:
- 27 Վարդան վարդապետ Կոբայ՝ Ս. Դանիէլի առաջնորդ:
- 28 Ներսէս վարդապետ բնիկ միաբան սուրբ Էջմիածնի, եւ հարազատ զաւակ հոգեբնտիր վեպետիս մերոյ:
- 29 Խաչատուր վարդապետ Բաղեշու:

30 Կարապետ վարդապետ Դաթէոս առաքելոյ:

31 Առաքել վարդապետ:

32 Մարտիրոս վարդապետ՝ միաբան Մշու սրբոյ Կարապետի:

“Եւ այլ վարդապետք եւ քահանայք հոլովք, զորովք զանց արարաք առ ՚ի չտալոյ ձանձրոյթ ընթերցողաց, որոց համակամութեամբն գրեցաւ եւ կնքեցաւ, ՚ի թուին Հայոց ՌՄԾԱ. ՚ի մայրիսի 28, յԵրեք խորան կոչեցեալ սուրբ վանս, որ ՚ի Բագրեւանդ գաւառ”:

Այս ամենայն գրութիւնք՝ ընդ որս եւ քահանայապետական կոնդակ տեառն Դանիելի նորապսակ կաթողիկոսին՝ եկեալ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի ձեռն Գրիգորի արհի եպիսկոպոսի ՚ի լուր ամենեցուն, եւ մի առ մի բացատրեալ զգրաբառ բանս անհասկանալիս ռամիկ ժողովրդեանն, ուրախացան մեծապէս Դանիէլեանք, եւ ծափ գծափի հարեալ՝ տօն ուրախութեան սկսան կատարել ՚ի տունս միմեանց, երգիծանելով եւ զմիւս կողմն Դաւթի, որ իբրեւ յանցաւորս մահու չափ մեղաց սկսանէին հայիլ ՚ի խոնարհ տրտմալից սրտիւք եւ խոժոռեալ դիմօք:

Իսկ Գրիգոր պատրիարք ժողով արարեալ ՚ի պատրիարքարանի եկեղեցւոյ, ընթերցաւ դարձեալ ՚ի լուր ամենեցուն զգրութիւնս սիւնհոգոսին, եւ զկոնդակ տեառն Դանիելի կաթողիկոսին, եւ բազում բանս գովութեան խօսեցեալ զԴանիէլէ՝ խնդրեաց ՚ի ժողովոյն գրել ստորագրութեամբ ամենեցուն զթուղթ շնորհաւորութեան օծման տեառն Դանիելի՝ ՚ի դիմաց համօրէն լրութեան Կոստանդնուպօլսոյ՝ առաքել առ նա ինքն Դանիէլ, զոր եւ յառաջագոյն գրեալ եւ պատրաստեալ էր նա ինքն Գրիգոր պատրիարք, եւ ՚ի ժողովին յայնմիկ ետ ստորագրել ամենեցուն, որոյ օրինակն է այս:

“Աստուածընտիր՝ արքայակոչ՝ եւ ազգահրաւէր՝ սրբազնափայլ վեհապետի տեառն մերոյ, որդիական խոնարհութեամբ մատուցանեմք համբոյր շնորհաբաշխ աջոյն, մեք՝ կայսերապերճ մայրաքաղաքիս պատրիարք, եպիսկոպոսք, վարդապետք, աւադերիցունք, եւ քահանայք աթոռակալք, իշխանապետք, միւթէվէլլիք, իշխանք, բոլոր արուեստաւորք, եւ էսնաֆք, եւ համայն լուսաւորչածին հաւատացեալքս, մնալ քեզ երկար ամօք ՚ի ցնծութիւն մեր:

“Ըստ որում վերին ակնարկութեամբ այցելութիւնն հզօրաձեռն արքային եղեալ լրութիւնն փափագանաց ազգիս տառապելոյ, բարեկարգեաց զվեհանձութիւնդ փոխանորդ եւ յաջորդ նախկին լուսատուաց մերոց՝ երջանիկ հարցն սրբոց, եւ աւետաբեր նամակդ օրհնութեան՝ եւ սուրբ սիւնհոգոսին ձեր կանոնական մահսերագրութիւնն հնչեաց առ լսելիս մեր զմեծահանդէս ածմանդ սքանչելահրաշ եղանակ, եւ հետեւաբար ժամանեալ եղեւ քահանայապետական անդրանիկ օրհնութեանդ կոնդակ առ հասարակութիւն մեր, որպէս զանձրեւ ՚ի վերայ սիգոյ, եւ որպէս զջուր բարեհամ առ ծարակեալս:

“Ուրախ եղաք փոխանակ աւուրցն անցելոց, եւ ըստ բազում ցաւոց սրտից մերոց՝ մխիթարութիւնն երկնածիր պարգեւաց՝ զոր եհեղ սուրբ հոգին առ պանծալի գլուխդ մեր առ ՚ի սփռել յանդամս քո ՚ի մեզ, մեծապէս ուրախ արար զմեզ:

“Վասն որոյ նախապէս շնորհաւորեմք զսրբազան օծումն քո հոգեծիր, եւ խնդրեմք յաստուածապետական բարերարութենէն հարուստ ամօք վայելել քեզ զաստուածափոխան քահանայապետութիւնդ, եւ հովանաւորել զաստուածահաճոյ աղօթիցդ օժանդակութիւն ՚ի վերայ սրբոյ եկեղեցւոյս:

“Եւ երկրորդ շնորհակալ եմք մեծապէս, որ սրբազան օծութեանդ աւետեօք եւ յատկապէս օրհնութեանդ կոնդակաւ՝ զոր շնորհեալ էիք առաքելով ՚ի ձեռն Սեբաստիոյ առաջնորդ խոհեմառատ Գրիգոր արքեպիսկոպոսին, զուարճացուցեր զտրտմագեաց սիրտս մեր, եւ արհնակոչ փառատրութեամբ բարձրացուցաք զԱստուածն մեր ճշմարիտ, որ արդար է եւ զուղղութիւն տեսանեն երեսք նորա:

“Որ եւ կոնդակաբեր մտածարտար արքեպիսկոպոսն ՚ի յատենի սրբոց եկեղեցեաց ընթերցեալ բարևք բացայայտութեամբ, եւ լեզուով եւս ճառեալ ելից ՚ի միտս մեր ամենեցուն:

“Յայնժամ լցան բերանք եւ սիրտք մեր խնդութեամբ, եւ լեզուք մեր ցնծութեամբ, վասն այնորիկ երրորդապէս որդիական սիրով յօժարեցաք վստահանալ ՚ի խնդիրս յայս յատուկ, զաստուածապէս ներումն շնորհեսցես ողջացեալ անգիտութեամբ յանցաւորացն քոց, եւ նոյն օրհնութեան շնորհին մասնակից պահողորդ առնել զհամայն ազգս մեր, առաքելով զպատշաճաւոր նուիրակս աստուածագործ սրբալոյս միւռոնիւ, եւ շնորհաբուղիս օրհնութեան կոնդակաւ:

“Որպէս զի նոքօք սփռեալ ծաւալեսցի իմանալի լոյս աստուածային շնորհաց առ ամենայն հաւատացեալ մերազնեայքս իբրեւ զլոյս արեգական, որք տեսեալ ընկալցին զհայրագութիւնամս ձեր, եւ գոհանալով փառաւորեսցեն ընդ զամենասուրբ Երրորդութիւնն զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին, որում միշտ գետնամած երկրպագութիւն եւ փառք յաւիտեանս ամէն”:

- 1 Գրիգոր պատրիարք Կոստանդնուպօլսոյ:
- 2 Յակոբ եպիսկոպոս առաջնորդ Թրակիոյ:
- 3 Պետրոս եպիսկոպոս միաբան սուրբ Երուսաղէմի:
- 4 Գէորգ եպիսկոպոս վէքիլ պատրիարքարանի:
- 5 Յակոբ եպիսկոպոս վէքիլ սրբոյ Երուսաղէմի:
- 6 Կարապետ եպիսկոպոս միաբան պատրիարքարանի:
- 7 Յարութիւն վարդապետ վէքիլ սրբոյ Կարապետի:
- 8 Մկրտիչ վարդապետ միաբան սրբոյ Կարապետի:
- 9 Մկրտիչ վարդապետ Վանցի միաբան սրբոյ Կարապետի:
- 10 Գրիգոր վարդապետ միաբան պատրիարքարանի:
- 11 Մանուէլ վարդապետ միաբան պատրիարքարանի:
- 12 Սիմէօն վարդապետ միաբան պատրիարքարանի:
- 13 Մկրտիչ վարդապետ միաբան պատրիարքարանի:
- 14 Մեսրոպ վարդապետ միաբան պատրիարքարանի:

Եօթն սրբոց եկեղեցեաց աւագ երիցունք, եւ աթոռակալք, եւ միւթէվէլլիք, եւ եկեղեցապանք, եւ վարժապետք, ամիրայք, իշխանապետք, իշխանք եւ բոլոր էսնաֆից գլխանաւորք, որոց համակամութեամբն գրեցաւ եւ կնքեցաւ համահաճական մահասարսայս:

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս գործոց Գրիգորի պատրիարքի, եւ աքսորանաց նորին եւ Դանիելի, եւ վերադառնալոյ Յովհաննու կրկին անգամ յաթոռ պատրիարքութեան կոտանդնուպօլսոյ:

(1802) Առաքեալ Գրիգորի պատրիարքի զայս թուղթ շնորհաւորութեան առ Դանիէլ կաթողիկոս 'ի յԻւջ քիլիսա, եւ ընդ ամենայն տեղիս զկոնդակ եւ զհրամանագիրս, զի զԴանիէլ կաթողիկոս յիշատակեսցեն 'ի պատարագին, եւ մի երբէք զԴաւիթ, եւ այսպէս երկու կաթողիկոսք երեւացան 'ի մի եւ 'ի նոյն ժամանակի՝ եւ 'ի վերայ մի նոյն աթոռոյ եւ ազգի, մինն՝ Դանիէլ օրինաւոր կաթողիկոս օծեալն 'ի յԻւջ քիլիսա, եւ միւսն՝ Դաւիթ բռնաւոր կաթողիկոս ապօրինաւորն կոչեցեալ, եւ երկպառակութիւն մի եւ նոյն ազգի յերկուց կողմանց սկսաւ ճարակիլ օր քան զօր, եւ հրդեհել աւերել զգեղեցիկ շէնս եւ զբնակութիւնս ողորմելի ազգիս:

Եւ Գրիգոր պատրիարք՝ փոխանակ խոհեմութեամբ եւ քաղցրութեամբ ամոքելոյ զսիրտս ժողովրդեան երկուց կողմանց, եւ հայրաբար խրատելոյ եւ հանդարտելոյ զաղմուկ խռովութեանն, ըստ անխոհեմ բարուց իւրոց եւ սա՝ 'ի միւսմէ կողմանէ նաւթ եւ ձէթ արկանէր 'ի հուրն բորոքեալ, առաւելուլ եւ տարածանել զխռովութիւնն վնասիչ օգտի հասարակութեանն:

Քանզի՝ սկսաւ բռնաբար խոշտանգել զԴաւիթեանս, եւ զկծեցուցիչ բանիւք նախատել երգիծանել եւ զայրացուցանել զնոսա 'ի քարոզս եւ յայլ գինչ եւ իցէ ատենաբանութիւնս իւր, որպէս եւ 'ի միում նուագի 'ի քարոզի իւրում 'ի մէջ եկեղեցւոջն պատրիարքարանին՝ 'ի մէջ արկեալ զԴաւիթ, ստուգաբանեաց զանուն նորա, զմի վանկն տառադարձութեամբ հայերէն բացատրելով, եւ զմիւս վանկն ըստ տաճկական բարբառոյ, զի ասէ՝ "Յիսուս կոչեցաւ Դաւիթ, այսինքն թաւ, իթ, զի թաւն նշանակէ մազոտն, եւ իթն՝ զշուն" որով եւ Դաւիթն ստուգաբանի մազոտ շուն, եւ այլն:

Արդ այսպիսի զրուցաբանութիւնք թէ ո՞րքան անվայել են բերանոյ խոհական մարդոյ՝ թող թէ՛ պատրիարքի եւ կարգաւորի, եւ թէ՛ զիա՞րդ անհեթեթ եւ ստայօդ իցէ գտառս Շ դարձուցանել 'ի Թ, եւ զպարզ անունն Դաւիթ բարգել տաճկական նշանակութեամբ:

Բայց զայս ոչ բարւոք արար, զի ոչ մի միայն 'ի բարկութիւն

եւ ՚ի սրտմտութիւնն շարժեաց զԴաւթեան կողմն, կամ զայնոսիկ՝ որոց անուանքն էին Դաւիթ, այլ նաեւ վրդովեաց եւ պղտորեաց զմիտս բազմաց եւ գայթակղեցոյց նաեւ զԴանիելեանս, ուրեմն եւ Դաւիթ Աստուածահայրն իցէ մագոտ, եւ այլ եւս սուրբք Դաւիթ անուանակոչեալք:

Ուստի սկսան գաղտնի խորհուրդ առնել կողմնակալքն Դաւթի, եւ ՚ի ձեռն կաշառաց յանկուցեալ զմեծամեծս տէրութեանն, յետ մետասան ամսոյ պատրիարքութեան նորա իջուցեալ զԳրիգոր ՚ի պատրիարքութենէն, վտարեցին զնա ՚ի Քաղկեդոն, յաւուր երեքշաբթի ՚ի հոկտեմբեր 11 յամի տեառն 1802, եւ վերադարձուցին վերստին զՅովհաննէս պատրիարք յԵւդոկիոյ քաղաքէ՝ ուր աքսորեալն էր:

Եւ ՚ի յայսմ միջոցի նստաւ տեղապահ պատրիարքի՝ Անդրէաս եպիսկոպոս աշակերտակիցն Յովհաննու, որ գոլով ՚ի կողմն Դաւթի՝ սկսաւ հալածել եւ որոնել զԴանիելեանս, եւ զորս միանգամ գտանէր, մատնէր ՚ի գան եւ ՚ի բանտ, եւ զոմանս յաքսորս եւ ՚ի թի նաւատեղեաց:

Իսկ Յովհաննէս պատրիարք վերադարձեալ յԵւդոկիոյ՝ զգեցաւ զկապայն պատրիարքական իշխանութեան, ՚ի դեկտեմբեր 3, եւ հրամայեաց յիշատակել ՚ի պատարագի զանուն Դաւթի կաթողիկոսի, եւ փախստական արար զԴանիելեանս առ հասարակ, եւ ՚ի սոսին աւուրս Մանուէլ վարդապետ աշակերտն Դանիելի ունելով ընդ ինքեան զմահասար Դանիելի կաթողիկոսութեան, խոյս ետ ՚ի Ռուսաստան:

Այլ Յովհաննէս ոչ շատացեալ այսու ամենայնիւ, նաեւ գերկպառակութիւնն կաթողիկոսաց բառնալ կամելով, եհան հրովարտակ ՚ի տէրութենէն զխռովարարսն առաքել յաքսորս, ուստի զԳրիգոր պատրիարք բարձեալ ՚ի Քաղկեդոնէ՝ եւ զԴանիէլ կաթողիկոս ՚ի Պայագիտէ՝ առաքեաց յաքսորս յէջմիածին, մատնեալ զնոսին ՚ի ձեռն Դաւթի, եւ զԳէորգ եպիսկոպոս վէքիլն պատրիարքարանի՝ զառաջինն առաքեալ ՚ի նուիրակութիւն յԱնդիանուպօլիս, անտի եւ զնա առաքեաց յաքսորս յէջմիածին:

Եւ զԿարապետ եպիսկոպոս զառաջնորդն սուրբ Դանիելի վանիցն Կեսարիոյ՝ զոր Գրիգոր պատրիարք բերեալ էր ՚ի Կոստանդնուպօլիս, զնա եւս առաքեաց ՚ի տեղի իւր:

(1802) Իսկ Դաւիթ՝ ռխերիմ թշնամին Դանիելի, իբրեւ ետեսգատելիս իւր մատնեալ ՚ի ձեռն իւր, զուարճացաւ անպատմելի

խնդրութեամբ, եւ ըստ անողորմ եւ անգութ բռնաւորութեան իւրոյ սկսաւ մատնել զնոսա՝ ՚ի բանտ, եւ չարչարել դառն տանջանօք:

Սովամահ արար զԳէորգ եպիսկոպոս անդ՝ ՚ի բանտին, եւ զպատուական մօրուս տեառն Դանիելի գերծեալ յետ բազում չարչարանացն՝ առաքեաց յաքսորս ՚ի Մարաղա քաղաք հրամանաւ Շահին Պարսից, եւ ոչ շատացեալ այսու՝ գուն գործեաց ՚ի ձեռն կաշառաց հրովարտակ առնուլ ՚ի Շահէն վասն կարճելոյ զԴանիէլ ՚ի կենաց:

Այլ իբրեւ գնաց հրովարտակն ՚ի խանն Մարաղա քաղաքին՝ ուր աքսորեալն էր Դանիէլ, ընթերցեալ զնա խանին՝ առաքեաց զդահիճս՝ զի սպանեցեն զնա, եւ դահճացն ընթացեալ՝ իբրեւ կամէին մտանել ՚ի ներքս առ Դանիէլ, տեսանեն առաջի նորա գերկուս առիւծս պաշտօնատարս նմա, եւ զդողանի հարեալք դառնան յետս՝ եւ պատմեն խանին, եւ նորա ոչ հաւատացեալ՝ անձամբ անձին երթայ առ նա ՚ի ստուգել զպատմութիւն նոցա, եւ ինքն եւս տեսեալ այնպէս, իմանայ զանմեղութիւն եւ զսրբութիւն Դանիելի, եւ կոչէ զնա բարձր ձայնիւ արտաքս ասելով, ո՛վ այր Աստուծոյ Դանիէլ՝ հրամայեա՛ արտաքս առ իս, զի յայտնի արար Աստուած զանմեղութիւն քո առաջի աչաց մերոց:

Եւ Դանիէլ ելեալ արտաքս ՚ի սենեկէն՝ ել եւ չոգաւ յոտս խանին, որ առեալ զնա բազում պատուով եւ մեծարանօք, յղեաց ՚ի տուն ունումն իշխանաւորի Հայոց, կալ մնալ անդ անդորր եւ խաղաղ կենօք, ուր գնացեալ մնաց անդ աղօթից եւ ճգնութեան պարապեալ՝ ողբալով զմերկութիւն սրբոյ աթոռոյն Էջմիածնի, եւ զխղճութիւն միաբանիցն:

Իսկ Գրիգոր պատրիարք մնաց անդ ՚ի բանտին Էջմիածնի՝ ոչ տեսեալ երբէք զերեսս Դաւթի, որպէս եւ ինքն ուխտեալ էր իսկ Աստուծոյ:

(1803) Ի սմին ամի հրամանաւ տէրութեանն նորոգեաց Յովհաննէս պատրիարք ՚ի հիմանէ զհիւանդանոցն Կոստանդնուպօլսոյ, շինեալ ՚ի նմին եւ զմատուռ մի յանուն սրբոյն Յովհաննու Աստուածաբան աւետարանչին, որ յետ ժամանակաց եղեւ բոլորովին եկեղեցի, եւ յետ ամսոց ինչ ձեռն էարկ ՚ի շինութիւն սուրբ Գէորգ եկեղեցւոյն Սամաթիոս, զորոյ աւարտեալ զշինութիւնն յամսեանն յուլիս 2, էօժ փառաւոր հանդիսիւ աղօթս մատուցանելով վասն կենաց արքային:



## ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս պատերազմին Պարսից եւ Ռուսաց, եւ դարձին Դանիելի յաքսորանացն, եւ նստելոյ յաթոռ կաթողիկոսութեան յէջմիածին:

(1804) Այն ինչ Դանիել էր 'ի Պայազիտ, եւ չեւ եւս օծեալ էր կաթողիկոս Հայոց, բացաւ պատերազմն 'ի մէջ Ռուսաց եւ Պարսից, եւ տեւեաց զամս երկուս, յորում յաղթող Հանդիսացաւ տէրութիւնն Ռուսաց, եւ էառ պատերազմաւ զբազում քաղաքս Պարսից, եւս եւ զէջմիածին, եւ պաշարեաց եւ գերեւան քաղաք, եւ զանհնարին տազնապ տառապանաց հասոյց 'ի վերայ նոցա:

Եւ 'ի յայսմ միջոցի խռովութեան ժամանակի Դանիել կաթողիկոս եւ Գրիգոր պատրիարք աքսորեալ յէջմիածին, մատնեալ կային 'ի ձեռս Դաւթի, եւ էին 'ի բանտի բերդին Երեւան քաղաքին:

Իսկ Շահն իբրեւ ետես զաղետալի տազնապ տէրութեան իւրոյ, որ մերձ էր 'ի կործանիլ, եւ անճարացեալ գտանիլ զայլ իմն հնար յաղթական լինելոյ Ռուսաց, փութացաւ դեսպանս առաքել առ տէրութիւնն Ռուսաց, յամենայնի ընդունելով զպայման եւ զգաշնադրութիւնս նորին, եւ ամ յամէ հատուցանել նմա զպայմանեալ գումար դրամոցն եւ զամենայն ծախս պատերազմին, եւ յաղագս այսր մինչդեռ խնդրէր գտանել միջնորդս եւ բարեխօսս առաքել առ Ռուսս, աճապարեաց Դաւիթ, եւ հաճեցոյց զմեծամեծս Պարսից, զի զԴանիել եւ զԳրիգոր առաքեսցէ դեսպանութեամբ առ Ռուսս, որպէս թէ ըստ ամենայնի ընդունելի իցեն ազանք եւ խնդրուածք սոցին առաջի տէրութեանն Ռուսաց:

Ուստի եւ եղեւ հրաման, եւ ածին յատեան զԴանիել եւ զԳրիգոր առաջի Շահին Պարսից, եւ հրամայեաց Շահն, եւ ասէ ցնոսա, ահա օր եւ ահա ժամ, զի յայտնի արասջիք զհաւատարիմ ծառայութիւն ձեր եւ զսէր՝ զոր ունիք առ թագաւորութիւնս իմ, եւ ես ձեզ հատուցից փոխարէն հաւատարմութեան ձերոյ զբարիսն՝ որք վայելելն իմումս առատապարգեւ թագաւորութեան:

Արդ՝ այսօր ետու ձեզ իշխանութիւն եւ պատիւ դեսպանութեան 'ի կողմանէ իմմէ գնալ առ տէրութիւնն Ռուսաց, եւ խաղաղեցուցանել զվրդով պատերազմիս, եւ օր սահմանել, զի յերկուց կողմանց մեծամեծ նախարարք եւ երեսփոխանք 'ի մի եկեալ, վճարեսցեն եւ կնքեսցեն զբանս եւ զգաշնադրութիւնս մեր:

Լուեալ զայս Դանիելի՝ պատասխանի ետ եւ ասէ ցնա, ես ուստի՞ զիտեմ եւ ճանաչեմ զմեծամեծս Ռուսաց, զի բանք եւ խնդրուածք իմ հաճոյ գտանիցին առաջի նոցա, եւ ըստ աղաչանց իմոց արասցեն եւ վերջացուցեն զպատերազմս, զոր բացեր դու ընդդէմ նոցա. ոչ կարեմ առնել ես զայդ, զայլ ոք՝ ի ծառայից քոց առաքեսցես, որ ծանօթ եւ սիրելի իցէ յաչս նոցա:

Ձայրացաւ Շահն՝ իբրեւ լուաւ զայս ՚ի Դանիելէ, եւ թելադրութեամբ բանսարկուին Դաւթի հրամայեաց փութանակի յաքսորս վտարել զնա ՚ի Մարաղա քաղաք, եւ կարճել զկեանս նորա, բայց նախախնամութիւնն Աստուծոյ պահեաց զնա կենդանի եւ անվնաս ՚ի ձեռն սքանչելեաց իւրոց, զոր ՚ի վեր անդր յիշեցաք:

Բայց Գրիգոր պատրիարք տեսեալ զայս աքսորանս Դանիելի, եւ կամելով զերծանիլ ՚ի ձեռաց Պարսից, եւ ըստ ուխտադիր լինելոյ չտեսանել զերեսս Դաւթի ատելւոյն իւրոյ, ընկալաւ զհրաման Շահին, եւ յաճն էառ գնալ դեսպանութեամբ ՚ի կողմն Ռուսաց, եւ հաճեցուցանել զմիտս սպարապետի նոցին եւ ամենայն մեծամեծաց:

Եւ այսու եղանակաւ ելեալ ՚ի բանտէն Երեւանու՝ զնաց ՚ի Տփլիս քաղաք, եւ անդ վանեաց զթիկնապազս իւր Պարսիկս՝ զորս եղեալ էր Շահն զնալ ընդ Գրիգոր եւ օգնական լինել նմա ՚ի բանս եւ ՚ի խորհուրդս, եւ անդ եկաց մնաց մինչեւ ցվախճան կենաց իւրոց:

(1804) Իսկ իբրեւ այլով եղանակաւ վճարեցաւ զործ պատերազմին, եւ յերկուց կողմանց երեսփոխանք եկին ՚ի միասին գրել եւ կնքել զպայման դաշնադրութեան տէրութեանցն, յայնժամ Եփրեմ արհի եպիսկոպոսն առաջնորդն Ռուսաստանու ՚ի ձեռն Հայ ազգի մեծամեծ իշխանաց իւրոց՝ մատոյց աղերս առ կայսրն եւ առ խորհրդականս տէրութեանն, զի ՚ի վճիռս դաշնադրութեանն յաւելուցուն եւ զայս, զի բարձցէ Շահն զԴաւիթ բռնաւորն յէջմիածնայ, եւ զԴանիէլ հարազատ կաթողիկոսն ազգին կարգեսցէ եւ դիցէ յաթոռ իւր:

Եւ զայս այսպէս կարգեալ եւ պայմանեալ եւ մեկնեալ ՚ի միմեանց, իբրեւ բերին երեսփոխանք զդաշնադրութիւնս կնքեալս, եւ ցուցին Շահին իւրեանց, ընկալաւ զամենայն գրեալսն, եւ զրեաց հրովարտակ առ խանն Երեւանու, զի զԴանիէլ կաթողիկոս յետս կոչեալ յաքսորանացն ՚ի Մարաղա քաղաքէ՝ նստուցէ զնա յաթոռ

իւր, եւ զԴաւիթ ապօրինաւորն մատնեսցէ 'ի ձեռն Դանիելին՝ առնել նմա զինչ եւ կամեսցի:

Եկեալ Հրովարտակ Շահին առ խանն Երեւանու, փութանակի կատարեաց զհրամայեալսն 'ի տէրութենէն, եւ բերեալ զԴանիէլ մեծաւ պատուով յաքսորանացն՝ բազմեցոյց զնա 'ի սենեկի իւրու՝ մանրիման աչաց իւրոց, եւ զԴաւիթ բերեալ յէջմիածնէ հրամայեաց կացուցանել զնա առաջի իւր, եւ յետ բազմօք նախատելոյ զնա եւ հայհոյելոյ՝ հրամայեաց մերկացուցանել զնա, առեալ 'ի նմանէ զքօղ կաթողիկոսութեանն՝ եւ զվերարկուն՝ եւ զմատանին՝ եւ զգլազանն, զգեցուցեալ զնոսա Դանիելի, հրամայեաց զԴանիէլ հեծուցանել յերիվար գարդարեալ եւ շքեղ, եւ զԴաւիթ բոկոտն եւ բացաւ զլխով ընթացուցանել յառաջոյ երիվարին մինչեւ ցէջմիածին:

(1804) Այլ ընդ այս ոչ հաւանեալ անյիշաչար տեսուն Դանիելի, եւ աղաչանօք իւրովք հաճեցուցեալ զկամս խանին, ետ եւ զնա նստուցանել յերիվար, եւ 'ի միասին զնալ եղբայրաբար եւ համապատիւ շքեղութեամբ մինչեւ յաթոռն սուրբ. եւ հասեալ յէջմիածին բազմեցաւ ինքն 'ի գահ կաթողիկոսութեան իւրոյ կամօքն Աստուծոյ եւ ընտրութեամբ ազգին, եւ վասն Դաւիթին հրամայեաց յատուկ սենեակ զարդարել եւ պատրաստել, եւ տնօրինեալ նմա զկերակուրս եւ զսպասաւորս, մերթ ընդ մերթ յայց ելանէր նմին, եւ մխիթարէր սիրով, ըստ ամենայնի բարիս հատուցանելով չարեացն ամենայնի՝ զոր ընկալաւ յանգուլթն բռնութենէ եւ 'ի ձեռաց նորին: Իբրեւ այսպէս հաստատեցաւ Դանիէլ 'ի կաթողիկոսութիւն իւր ըստ ընտրութեան ազգին եւ ըստ խնդրելոյ ամենայն միաբանիցն, յետ միոյ ամի գրեցին միաբանք զգիր մահասարանաց համահաճութեամբ ամենեցուն 'ի Կոստանդնուպօլիս առ Յովհաննէս պատրիարք եւ առ իշխանաւորս ազգիս, եւ առաքեցին զգիրն 'ի ձեռն գայլակեր կոչեցեալ Յովհաննու եպիսկոպոսին:

(1805) Որ բերեալ զգիրն՝ մատոյց 'ի ձեռն Յովհաննու պատրիարքին, եւ նորա ժողով արարեալ 'ի պատրիարքարանի յեկեղեցւոջն՝ հաւանութեամբ ամենեցուն ընկալան եւ հաստատեցին զԴանիէլ 'ի կաթողիկոսութիւն բոլոր ազգին, եւ ծանուցեալ արքունի դրան՝ առին զհրովարտակ իշխանութեան նորա, եւ առաքեցին առ Դանիէլ կաթողիկոս 'ի ձեռն Աստուածատուր վարդապետին Կոստանդնուպօլսեցւոյ:

Որոյ ելեալ եւ գնացեալ 'ի Շապին գարահիսարն, ուր էր յայնժամ առաջնորդ Երեմիա վարդապետն Կոստանդնուպօլսեցի, եւ գնա եւս առեալ ընդ իւր 'ի խնդրոյ իշխանաւոր անձանց տեղւոյն, յուղարկաւորեցաւ 'ի սուրբ էջմիածին, եւ մատուցեալ առաջի տեառն Դանիէլի գհրովարտակ կաթողիկոսութեան իւրոյ յարքունի դրանէ Կոստանդնուպօլսոյ, ուրախացաւ Դանիէլ եւ բոլոր միաբանութիւն սուրբ ուխտին, զի այսու երկպառակութիւն եւ խռովութիւն ազգին բարձաւ 'ի միջոյ, եւ սէր եւ խաղաղութիւն տարածեցաւ յամենեսին:

Ուստի եւ 'ի շնորհս այսր ընդունելութեան ձեռնադրեաց Դանիէլ կաթողիկոս զԱստուածատուր եւ զԵրեմիա վարդապետսն եպիսկոպոս, եւ գրեալ զկոնդակ օրհնութեան իւրոյ առաքեաց 'ի ձեռն նոցին 'ի Կոստանդնուպօլիս:

Որ իբրեւ եւն՝ եւ ընթերցաւ 'ի լուր ամենեցուն յեկեղեցիս Կոստանդնուպօլիս, եղեւ ուրախութիւն մեծ ամենեցուն, եւ յայնմ օրէ սկսան յիշատակել 'ի պատարագի զԴանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս գալոյ Անգլիացւոց պատերազմական նաւուք 'ի Կոստանդնուպօլիս, եւ բազմադիմի խռովութեանցն, որք եղեն 'ի Կոստանդնուպօլիս:

(1806) Ի սմին ժամանակի բացաւ պատերազմն մեծ 'ի մէջ Գաղղիացւոց եւ Ռուսաց, եւ ամենայն Եւրոպա խռովեցաւ իբրեւ ծով ալեկոծեալ յասէ եւ յերկիւղէ Նաբոլէօն Պօնաբարթ կոչեցեալ արքային Գաղղիացւոց:

Եւ Սուլթան Սէլիմ արքայն Օսմանեան յարեցաւ 'ի կողմն Պօնաբարթին՝ ուխտ եւ ջաշն հաստատելով ընդ նմա, բարեկամի նորուն լինել բարեկամ, եւ թշնամուոյն թշնամի:

Իսկ Անգլիացիք՝ որք էին 'ի կողմն Ռուսաց, սկսան յորդորել եւ համոզել զմեծամեծս տէրութեանն Տաճկաց, զի թողեալ զՊօնաբարթ յարեսցին 'ի կողմն Ռուսաց:

Եւ թէպէտ մեծամեծք տէրութեանն համոզեցան եւ կամէին բարեկամանալ ընդ Ռուսս, բայց չեղեւ հնար համոզելոյ զՍուլթան Սէլիմ, զի յամենայնի մտերիմ ոգևով եւ հաւատարիմ սիրով կապեալ էր ընդ Պօնաբարթին:

Վասն որոյ նաւատորմիղն Անգլիացւոց մետասան պատերազմակա նաւուք յանկարծակի եմուտ ընդ նեղուցն Միջերկրական ծովուն յաւուր յիշատակութեան Յովնանու մարգարէին 'ի փետրուար 8, յամի տեառն 1807, եւ եկն յանդիման քաղաքին Կոստանդնուպօլսոյ առաջի Հէյպէլի կղզւոյն, եւ պատրաստեցաւ 'ի պատերազմ:

Եւ այս գաղտնի խորհրդով մեծամեծաց տէրութեանն էր առ 'ի ահացուցանել զՍուլթան Սէլիմ արքայ, զի հաճեսցի ակամայ կամօք յարիլ եւ միաբանիլ ընդ Ռուսս:

Որ թէպէտ երկեաւ յոյժ յերկիւղ մեծ, եւ հրաման եհան վաղվաղակի նորոգել զծովահայեաց կողմանս պարսպաց քաղաքին, եւ ամրացուցանել զնոսա թնդանօթօք եւ ուբազործեօք, եւ կանգնել պատնէչս առաջի դրանց քաղաքին:

Եւ հրաման արար իւրաքանչիւր ազգաց գնալ ժողովիլ 'ի պաշտօն եւ 'ի գործ բերդաշինութեան, վասն որոյ եւ հարկ եղեւ Յովհաննու Պատրիարքի հանդերձ հասարակ ժողովրդեամբ գնալ 'ի պալատն արքայի, եւ ինքն առաջակայ լինելով ժողովրդեանն՝

սկսաւ հող կրել 'ի թիկունս իւր, եւ կիր՝ եւ որ ինչ պիտոյք էին 'ի գործ շինութեան:

Տեսեալ զայս Սուլթան Սէլիմ արքայ, եւ հարցեալ թէ ո՞վ ոք իցէ նա, եւ իմացեալ՝ հրամայէ զգեցուցանել զնա յաթոռ, զի ինքն մի աշխատ եղիցի, այլ ժողովուրդ իւր փոխանակ իւր:

Արդ՝ թէպէտ մեծ եւ ծանր էր գործ շինութեանն, եւ թերեւս անպիտան առաջի մեծագոր հնարագիտութեանց Անկլիացւոց, բայց որովհետեւ միայն յահաբեկութիւն արքայի եկեալ էին նոքա եւ ոչ 'ի պատերազմ, ուստի դաշն եւ ուխտ հաստատելով ընդ արքայի, զի թողեալ զԳաղղիացին՝ միաբանեսցի ընդ Ռուսս, եւ այնպէս յետ ութ եւ տասն աւուրց առանց միոյ ուրուք վնասելոյ դաձան՝ ընդ որ եկեալն էին. թէպէտ յետ զնալոյ նոցին՝ ստեալք դաշինն եւ ուխտին՝ զոր արարին ընդ նոսա, նաւատորմիղն արքայի գնացեալ զկնի նոցին եւ ելեալ արտաքս 'ի նեղուցէն Կոստանդնուպօլսի, առաջի Տենեդոս կղզւոյն պատերազմեցան չարաչար, եւ ութ եւ տասն մեծամեծք նաւք արքային՝ այրեցան եւ կորեան 'ի ծովն:

(1807) Յետ չորից ամսոց 'ի մայիսի 16 ապստամբ զօրքն Օսմանեան՝ որ կոչին Եէնիչէրիք, յարեան յոտս զազանաբար, եւ յաւուր միում, որ օր էր հինգշաբթի, սրախողխող կորուսին զերկոտասան մեծամեծս տէրութեանն, եւ յաւուր ուրբաթու առաջնորդութեամբ Մուսս փաշա գայմազամի՝ իջուցեալ յաթոռոյ թագաւորութեանն զՍուլթան Մուստաֆա՝ որդի Սուլթան Համիտի՝ զայր կնաբարոյ եւ անմիտ:

(1808) Բայց յետ միոյ ամի 'ի յուլիսի 16 եպարզոսն Ռուսնուգ քաղաքին՝ որ կոչէր պայրագտար Մուստաֆա փաշա, եկեալ բազմութեամբ զօրաց Բումէլիյի՝ ընդ որում եւ բանակն արքայի՝ դարձեալք 'ի պատերազմէն Ռուսաց, եկեալ բանակեցաւ արտաքոյ Կոստանդնուպօլսի 'ի Տավուտ փաշա կոչեցեալ տեղւոջն, եւ յետ երկուց աւուրց հորդան տուեալ բազմութեամբ զօրացն՝ եկն եւ եմուտ 'ի դուռն եպարզոսին, եւ ընկեցեալ յիշխանութենէն զմեծ եպարզոսն Չէլէպի Մուստաֆա փաշա կոչեցեալ, զնաց ապա 'ի պալատն արքունի՝ ընկենուլ յաթոռոյ զՍուլթան Մուստաֆա, եւ դնել դարձեալ զՍուլթան Սէլիմ:

Այլ նորա իրագեկ եղեալ խորհրդոյ եւ մտաց Մուստաֆա փաշային, նոյն ժամայն խեղդամահ արար զՍուլթան Սէլիմ, զի մի ինքն ընկեսցի յաթոռոյ իւրմէ:

Կամեցաւ եւ զեղբայր իւր զՄահմուտ սպանանել, այլ փախուցին զնա թիկնապահօք նորին:

Իսկ իբրեւ ետես Մուստաֆա փաշա զխեղդամահ մարմին Սուլթան Սէլիմ արքային սիրելւոյն իւրոյ, կատաղեցաւ գազանաբար, եւ կոտորեալ զդրունս պալատանն՝ յարձակեցաւ իբրեւ զառիւծ ՚ի վերայ պալատականաց արքային, եւ սրախողխող արարեալ՝ զորս միանգամ դիմակաց իւր գտանէր, ընթացաւ ՚ի ներքս, եւ ընկեցեալ զՍուլթան Մուստաֆա յաթոռոյ՝ եղ ՚ի տեղի նորուն զեղբայր նորին զՍուլթան Մահմուտ յաթոռ թագաւորութեանն ՚ի յուլիսի 30, 1808, եւ ՚ի հիճրէթի տաճկաց 1223 ՚ի ճէմագիլ ախրը չ:

Եւ ՚ի նմին աւուր առեալ եւ ինքն զփոխարքայութիւն՝ եկն հանդիսիւ ՚ի դուռն եպարգոսին. եւ նստաւ ՚ի տեղի իւր, եւ սկսաւ յայնմ օրէ անտի կորուսանել եւ ՚ի սուր սուսերի մաշել զգլխաւորս Ենիչէրի գօրացն՝ զշարժառիթ անձինս ապստամբութեանն:

Ետ բերել եւ զտէրէպէկիս բազումս ՚ի Կոստանդնուպօլիս, եւ արար նոցա ընթրիս բազմածախս ՚ի Քեաղատ խանէն, եւ այսու ահաբեկ արար զամենայն Ենիչէրիս եւ զգատաւորս Կոստանդնուպօլսոյ:

(1808) Եւ յայսմ միջոցի եկն եւ Մանուկ պէյ երեւեցի իշխանն Ռուսճուխցի՝ որ սիրելին էր յոյժ Մուստաֆա փաշայի, եւ մեծամեծ փառօք պատուեցաւ ՚ի նմանէ ՚ի Կոստանդնուպօլիս:

Այլ յետ չորից ամսոց գաղտնի խորհրդով եւ թելադրութեամբ Արապգատէ կոչեցեալ Շէյխիսլամին՝ ՚ի գիշերի միում, որ օր էր երկուշաբթի նոյեմբեր 2, եւ ընկէզան ամսոյ նոցա 26 յարեան յոտս Ենիչէրիք դարձեալ, եւ բազմութեամբ եկեալ հրդեհեցին զդուռն եպարգոսին:

Ձայս իբրեւ ետես Մուստաֆա փաշայն, խոյս տուեալ թագեաւ ընդ երկրաւ, որ էր շինուած քարուկիր, եւ ՚ի նմա էին տակառք վառօդոց:

Եւ ՚ի հուր մատուցեալ գտառակս զայնոսիկ՝ ամբարձ յօղս զշինուածն ամենայն, եւ զորս միանգամ գտան անդ ՚ի գօրաց ապստամբաց՝ ՚ի հուր վառեաց զնոսա զամենեսին, բայց եւ ինքն խեղդամահ եղեւ ՚ի ծխոյն՝ որ լցեալ էր զգետնայարկն ողջոյն:

Եւ զկնի երից աւուրց գտեալ Ենիչէրիք զգի նորին, եւ կապեալ չուան ընդ ոտսն՝ անարգանօք քարչեցին զնա ՚ի յէթ մէյտան կոչեցեալ տեղին:

Ի սմին գիշերի խոյս ետ 'ի Կոստանդնուպօլսոյ Մանուկ պէյ իշխանն, եւ անվնաս զերծոյց զանձն փախստեամբ 'ի Ռուսաստան:

Իսկ Սուլթան Մահմուտ արքայ երկուցեալ, զի մի ընկեսցի յաթոռոյ իւրմէ, խեղդամահ արար գիշերայն զեղբայր իւր զՍուլթան Մուստաֆա, եւ մնաց ինքն միայն ժառանգ թագաւորութեան:

Յետ ւաւորց ինչ այրեցին Ենիշէրիք եւ զձմերանոցսն, զորս շինեալ էր Սուլթան Սէլիմ արքայ 'ի Լէվէնտ չիֆթլիկի եւ 'ի յԻսկիւտար:

Եւ յետ եօթն ւաւորց հանդարտեցաւ խռովութիւնն, եւ բացան դրունք քաղաքին Կոստանդնուպօլսոյ, որ զաւուրս եօթն փակեալ մնացին:

Եւ 'ի մէջ խռովութեան ւաւորցս այսոցիկ չեղեւ վնաս երբէք եւ ոչ միոյ ումեք 'ի Քրիստունէից, բայց 'ի Տաճկաց բազմուք կորեան գրեթէ իբրեւ քսան հազար հոգիք:



## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս ջանալոյ Յունաց գրաւել զվանս սրբոյն Յակոբայ 'ի յերուսաղէմ, եւ յաղագս դատի նոցին ընդ Հայս:

Ընդ այս ժամանակ նստէր եպարզոս Քեօր Եռսուֆ փաշա կոչեցեալ՝ այր ժանտ եւ ագահ. սմա մատուցին Յոյնք զբազմութիւն կաշառաց եւ զընծայս մեծագինս, եւ որսացին զնա 'ի կողմն իւրեանց:

Եւ նա 'ի շնորհս նոցա գրեաց առ արքայ զխնդիր նոցա՝ յասելն, եթէ կայ վանք մի կոչեցեալ Մարեագուպ (այսինքն է՝ սուրբ Յակոբ) 'ի յերուսաղէմ, եւ այս վանք գոլով յառաջին ժամանակս սեպհական ստացուած Յունաց ազգին, յետ ժամանակաց Հայք 'ի ձեռն կաշառուց գրաւեալ են զնա, եւ մինչեւ ցարդ մնացեալ է 'ի ձեռս Հայոց:

Արդ այժմ Յոյնք աղերսեն եւ աղաչեն ազգովին զարդարադատ կամս ձեր, զի հանեալ զնա 'ի ձեռաց Հայոց շնորհեսցես ազգին Յունաց զսեպհական ստացուած իւրեանց, որք եւ վասն այսր զհազար քսակ ոսկւոյ պաշտօն ընծայեն արքունի գանձարանին:

Ընթերցեալ զայս արքայ՝ ոչ իսկ եւ իսկ հրաման արար հանել 'ի ձեռաց Հայոց զվանքն, կամեցեալ ստուգիւ ճշմարտել զիրսն, եւ Հայք թէպէտ իրազեկ եղեն այսմ 'ի ձեռն մեծամեծացն արքայի, եւ զիտացին զչար խորհուրդս անիրաւութեան նոցա, բայց զիտելով, զի եպարզոսն մեծ է 'ի կողմն նոցա, լուեցին առժամս ապաւինեալ յօգնականութիւնն Աստուծոյ, եւ համբերելով հրամանաց արքային՝ թէ զի՞նչ ինչ հրաման ծագիցի:

Վասն զի յաւուրսն յայնոսիկ բացեալ էր պատերազմն մեծ ընդդէմ Ռուսաց, եւ հանդերձեալ էր եպարզոսն կարգել զբանակն արքայի եւ գնալ 'ի պատերազմ:

Եւ իբրեւ յետ չորից ամսոց ել զնաց եպարզոսն մեծ, եւ նստաւ փոխանոգ նորին Շաքիր Ահմէտ փաշա, զսա փութացան Հայք առնուլ 'ի կողմն իւրեանց, եւ հաճեցուցեալ զկամս նորին, խորհրդով եւ հաւանութեամբ նորին ետուն առ արքայ զիր աղերսանաց յաւուր ուրբաթու յապրիլ 23, 'ի գնալն 'ի մզկիթն Հէքիմ օղլու Ալի փաշա ճամիսի կոչեցեալ, յորում յայտ արարեալ էին Հայք զանիրաւ պահանջումն ազգին Յունաց, եւ զլինելն այն

վանուցն սեպհական ստացուած Հայոց ազգին՝ յաւուրց անտի ա-  
միրապետութեանն էօմէրի Խալիֆայի, եւ յետ նորուն Եւփուզ  
կոչեցեալ Սուլթան Սէլիմի, գրով եւ կնքով նոցին տուեալ ազգին  
Հայոց:

Ընթերցեալ արքայի զայս ամենայն, եթող 'ի կախ զկուր եւ  
զվէճ երկուց ազգացս, եւ կամէր այլ ուստեք բարիոք զգուշու-  
թեամբ ստուգել եւ տեղեկանալ ճշմարտութեան իրացն եղելոց:

Յայնժամ ժողով արարեալ Յովհաննու պատրիարքի զիշխա-  
նաւորս ամենայն եւ զգլխաւոր անձինս յամենայն արուեստից, եւ  
'ի ձեռն մահտեսի Տատ Առաքել Համիրայի իշխանին յորդորեաց  
եւ զմեծամեծս կաթողիկոսաց միաբանիլ ընդ իւրեանս յայս հոգե-  
ւոր գործ ազգասիրութեան:

Եւ յաւուր շաբաթու 'ի յունիս 24, 1811, արար Յովհաննէս  
պատրիարք ժողով մեծ 'ի պատրիարքարանին հաւանութեամբ իշ-  
խանաւորաց Հայոց, եւ հրաւիրեաց անդ զմեծամեծս կաթողիկո-  
սաց, զՅովհաննէս Չէլէպի Տիւղեան, զՄօնսիօ Մինասն Թընկը-  
րեան, զԱնտոն աղան Գըլճեան, եւ զայլս, եւ 'ի նմին ժողովի ա-  
րար ատենաբանութիւն իմն գեղեցիկ, յորում յորդոր 'ի մէջ էարկ  
ազգովին պաշտպան լինելոյ սրբոյն Յակոբայ վանիցն, եւ յաղ-  
թական լինելոյ ազգին Յունաց:

Եւ այնչափ խրախուսեաց զնոսա յայս հոգեւոր գործ ազգա-  
սիրութեան, մինչեւ 'ի կարեկցութիւն եւ 'ի յողբ շարժել զնոսա  
զամենեսին, եւ փոյթեռանդն ոգևով վառիլ 'ի պաշտպանութիւն  
սուրբ ուխտին:

Եւ այսու հոգեւոր սիրով վառեցան եւ կազմեցան պատրաս-  
տեցան իշխանաւորքն աստուածասէրք, եւ ամենեքին ըստ իստի-  
ճանի եւ կարի իւրեանց սկսան նպաստամատոյց լինել բանիլ եւ  
արդեամբք, եւ յօժարեցուցանել զմեծամեծս տէրութեանն 'ի լուր  
աղաչանաց եւ դատի Հայկազոն ազգիս:

Եւ որովհետեւ Յովհաննէս չէլէպի Տիւղեան սիրելի էր յոյժ  
պալատականացն արքայի, 'ի ձեռն նոցին ծանուցին արքայի  
զճշմարիտ պատմութիւն իրացն եղելոց, եւ ազգարարութեամբ  
նոցին ետուն երկրորդ անգամ զգիր աղերսանաց յաւուր ուրբա-  
թու 'ի յուլիս 23 'ի գնալն արքայի 'ի մզկիթն Մահմուտիէ կոչե-  
ցեալ 'ի յԱյազման նաւահանգստին Իւսկիւտարու. եւ զայս գիր  
աղերսանաց ետ Աստուածատուր եպիսկոպոսն, եւ Պօղոս վարդա-  
պետ վէքիլն սրբոյ Երուսաղէմի, Պօղոս եպիսկոպոս ծերունի ա-

ուաջնորդն Պրուսայու, եւ Վարդան վարդապետ Մշեցի՝ հանդերձ քահանայիւք եւ ժողովրդովք՝ բաղկատարած եւ բացաւ գլխով, զոր տեսեալ արքայի եւ շարժեալ ՚ի դուրս եւ ՚ի սէր ազգիս Հայոց, հրամայեաց անաչառ քննութեամբ դատաստան առնել Հայոց եւ Յունաց ՚ի դուռն Դենպետին մեծի՝ որ կոչի Շէյխիսլամ էֆէնտի, եւ դատաւորք կարգեցան հրամանաւ արքայի՝ Տիւրի զատէ Ապտուլլահ Շէյխիսլամն:

Գաղիասկէրն Բումէլիյի՝ Իզզէթ պէյ:

Գաղիասկէրն Անաթօլիյի՝ Մէհմէտ Թահիր պէյ:

Գայիմմագամ Շաքիր Ահմէտ փաշա:

Նագիպ իւլ էշրէֆ Սայիտ էֆէնտի:

Յէթվա էմինի Արեանի զատէ Մէհմէտ Բաշիտ:

Բէիս էֆէնտի Մուստաֆա:

Չավուշ պաշի Իպրահիմ:

Պէկլէկճի Ահմէտ Աֆիֆ:

Ամէտճի Սէյիտ Մուհամմէտ:

Իսկ յազգէ մերմէ գտան անդ ՚ի դատին:

Պօղոս վարդապետ վէքիլն Երուսաղէմի:

Դիոնէսիոս վարդապետ միաբան սրբոյ Երուսաղէմի:

Սարրաֆլէր քէթիսուտասի Ազնաւուրեան Կարապետ:

Մահտեսի Յովհաննէս Երկանեան:

Չարազեան Գրիգոր:

Փափագեան Ճանիկ:

Գըլճեան Անտօն:

Վալիտէ սարրաֆի Խաչատուր:

Շնորհքեան Մանուէլ:

Եւ յազգէն Յունաց գտան անդ ՚ի դատին:

Եարասմօս մետրապօլիտ Թեսաղոնիկեցւոց:

Աթանասիոս մետրապօլիտն Նիկոմիդացւոց:

Աթանասիոս փոխանորդն պատրիարքին Երուսաղէմի:

Կեսարիոս գանձապետն պատրիարքին Երուսաղէմի:

Տիմիթրաքի, եւ Լամպիկ, եւ Եօրկի, եւ Խրիսթօ, եւ Անանիա, եւ Անէսթի, եւ Թօքօրոս, եւ Փանայօտ, մեծամեծքն Յունաց:

Իսկ մինչ սկիզբն եղեւ խօսելոյ ՚ի դատաստանին, եհան Պօղոս վարդապետ զկնքեալ Ահտնամէ՝ այն է հրամանագիր մեծի Ամիրապետին Հագարացւոց՝ էօմէրի Խալիֆայի, որ յառնուլ իւր զԵրուսաղէմ, տուեալ էր հրովարտակաւ իւրով զվանքն սուրբ Յա-

կորայ՝ Հայոց ազգին, եհան եւ զինքնագիր հրովարտակ Եավուզ Սուլթան Սէլիմ արքային, որ 'ի հնգետասաներորդ գարու եւ հիճ-րէթի Տաճկաց 943, 'ի քսան եւ հինգերորդ աւուր սաֆէր ամսոյ նոցա՝ եկեալ եւ առեալ գերուսաղէմ, եւ կոչեալ առաջի իւր զՍարգիս պատրիարքն Հայոց, եւ զԱթալիս պատրիարքն Յունաց, եւ ընթերցեալ զհրամանագիրս Էօմէրի Խալիֆային մեծի, եւ ինքն իսկ ձեռովք իւրովք գրեալ եւ շնորհեալ էր Հայոց զսուրբ Յակոբ վանքն Երուսաղէմի:

Եւ 'ի գրին յայնմիկ մանրամասնաբար որոշեալ էր զուխտա-տեղիս Հայոց եւ Յունաց, զսեպհականս եւ զգատեալս, եւ զայնս՝ ընդ որս համահաւասար մուտ եւ ել է երկուց ազգաց՝ Հայոց եւ Յունաց:

Արդ՝ զայս ամենայն ընթերցեալ դատաւորացն, եւ անաչառ քննութեամբ բացատրեալ եւ հարցափորձեալ մի առ մի զամե-նայն տեղիսն, եւ վկայութեամբ այլոց ազգաց հաստատեալ եւ ա-պացուցեալ, 'ի չորրորդ գումարման վճռեցին դատաւորք ամենե-քին, եւ զուղիղ պատմութիւն դատաստանին եւ զվճիռս ժողովոյն գրեցին առ արքայ: Որ ընթերցեալ եւ տեղեկացեալ զամենայնէ՝ հրամայեաց արքունի հրովարտակ գրել եւ կնքել կնքով արքայի, եւ տալ 'ի ձեռս երկուց ազգաց Հայոց եւ Յունաց, յորում յայտնի որոշէ զսուրբ Յակոբայ վանքն լինել միայն Հայոց, եւ բացատրէ եւ զայլ ուխտատեղիս, ընդորս ունի Հայն բաժին իւրացուցանե-լոյ, եւ պատարագ առնելոյ, որպիսի է սուրբ Ծնունդն Քրիստոսի, յոր մինչեւ ցայնժամ չէր կարող Հայն պատարագ մատուցանել, իսկ այժմ հանապազօր պատարագէ անդ Հայ քահանայ: Նաեւ սուրբ Գերեզմանն Քրիստոսի, եւ Բանտն Քրիստոսի, եւ սուրբ Գերեզմանն Աստուածամօրն, որք են երկուց ազգաց անխտիր:

Չայս ամենայն գրեալ արքունի հովարտակաւ, ետ մեծագոր արքայն զսուրբն Յակոբ ազգիս Հայոց, եւ երզմամբ յանուն Մահմէտի եւ բանադրանօք նորին կնքեաց զգիրն չլինել յայսմ-հետէ վէճ այսպիսի, եւ կամ փոփոխութիւն ինչ, եւ այսպէս դա-դարեցաւ խռովութիւն մեծ, եւ եղեւ ուրախութիւն անպատում համօրէն լրութեան ազգիս:

Յաւուրս յայսոսիկ դէպ եղեւ բարեխնամ արքայի երթալ 'ի լբօսանս յՕրթագիւղ 'ի Երլտըզլը քէօշք կոչեցեալ տեղին, եւ պա-տահմամբ ընդ առաջ եղեն նմա մանկունք դպրոցին Օրթագիւղի երկու հարիւր տասն թուով, որոց իսկ եւ իսկ շարակարգեալք

դաս առ դաս, բաղկատարած հայցմամբ սկսան աղօթել առ Աստուած վասն կենաց արքային՝ քաղցր նուագերգութեամբ տաղից եւ ոտանաւորաց:

Տեսեալ զայս արքային, եւ իմացեալ, թէ յազգէ Հայոց են տղայքն, անդէն ՚ի ձեռն նախարարի ուրումն մեծի Ալի պէյ կոչեցելոյ պարգեւս բաշխեաց ամենեցուն, իւրաքանչիւրումն մէն մի ոսկի, որոց ընկալեալ խոնարհութեամբ եւ երկրպագեալ արքայի՝ գնացին յիւրաքանչիւր տեղիս:

Անդ էի ընդ նոսին եւ ես սոյն պատմութեանս գրիչ, որ յայնմ ժամանակի կարգեալ էի ՚ի խալֆայութիւն մանկանց դպրոցին, եւ ընկալեալ յայնմ աւուր գուլթն ոսկիս ՚ի ձեռանէ նորին իսկ նախարարին, յօժարեցայ գրել զայս ՚ի կարգի պատմութեանս՝ թողուլ յիշատակ առ յապայս:

Ի սմին ժամանակի շինեցաւ նորոգ եւ եկեղեցին Խասմ փաշայի յանուն սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին, զորոյ զհանդէս օծութեանն կատարեաց Երեմիա եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի հրամանաւ Յովհաննու պատրիարքի յամի տեառն 1810 ՚ի սեպտեմբեր 29:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս վախճանի տեառն Դանիելի կաթողիկոսի, եւ յաջորդելոյ Եփրեմի, եւ յաղագս բանի միաբանութեանն ընդ Հռովմէական Հայ կոչեցեալ ժողովրդեանն:

(1809) Ի սմին ժամանակի դարձեալ զրգուեցաւ պատերազմն 'ի մէջ Պարսից եւ Ռուսաց, եւ Դանիել կաթողիկոս կոչեցեալ Հրամանաւ Շահին Պարսից 'ի քաղաքն Երեւան հանդերձ երկոտասան արհի եպիսկոպոսօք, եւ եղան 'ի բանտի բերդին, զի մի յարեսցին 'ի կողմն Ռուսաց, եւ թիկնածուք եւ օգնականք գտանցին նոցա:

Եւ յայսմ միջոցի բանտարգելութեան հիւանդացաւ Դանիել կաթողիկոս, եւ գրեաց յէջմիածին, եւ խնդրեաց զբժշկական գիրս Մխիթարայ բժշկին, զի թերեւս դարման եւ դեղ գտանիցէ 'ի նմանէ:

Եւ որովհետեւ այն գիրք էին պահեալք յարկեղս Դաւթի, եկին քանի ինչ եպիսկոպոսք եւ վարդապետք առ Դաւիթ, եւ պահանջեցին 'ի նմանէ տալ ինքեանց զգիրքն զայն: Եւ Դաւիթ ոչ գիտելով, թէ Դանիել խնդրէ զգիրքն, ասաց նոցա, թէ չիք իմ տեսեալ զգիրն զայն, եւ չէ առ իս:

Ջայս լուեալ նոցա, զայրացան անհնարին բարեկամութեամբ, եւ որովհետեւ ունէին ընդ նմա որս ատելութեան, սկսան ասել, թէ ասա ժամանակ, զի առցուք զվրէժս 'ի թշնամուոյն մերմէ:

Եւ զի Դանիել կաթողիկոս չէր անդ, որ ոչ թոյլ տայր առնել, զոր կամէինն, ուստի խուռն ընթացեալք 'ի ներքս 'ի սենեակ նորին, ոմանք բրօք եւ ոմանք քարամբք եւ փայտիւք, Գան Հարին չարչար, եւ մերկացուցեալ զնա գերծեցին զմօրուս նորին, եւ եւին 'ի բանտի:

Եւ յարկեղէ գրոց նորին յուզեալք գտին զգիրսն բժշկական, եւ առաքեցին յԵրեւան առ Դանիել կաթողիկոս, պատմելով նմա զանցս՝ որ անցին ընդ Դաւիթ: Ի լսելն զայս տեառն Դանիելի, հառաչեաց 'ի խորոց սրտէ, եւ յոգւոց եհան, եւ ապա 'ի յուշ եկեալ սկսաւ լալ եւ արտասուել, զի ինքն առիթ եղեւ գանակոծ լինելոյ Դաւթին վասն խնդրելոյ ըզգիրն զայն: Եւ դառնացաւ ոգի նորա 'ի յանձն նորա, եւ ախտ ցաւոցն առաւել եւս զայրացաւ, եւ այնպէս յետ չորեքտասան աւուրց հիւանդութեան նորա հան-

գեաւ 'ի Քրիստոս տէր Դանիէլ կաթողիկոս, կացեալ 'ի Հայրապետութեան զամս վեց եւ կէս:

Բայց որովհետեւ անդ 'ի բանտին բերդին Երեւանու վախճանեցաւ, կատարեցին եպիսկոպոսունք զօծումն եւ զկարգ թաղման նորա, եւ պատառեալ զորովայն նորա, մաքրեցին եւ զմուսեցին զմարմինն, եւ եղին 'ի տապանակի միում պատեալ բեհեզօք եւ շուրջառովք, եւ պահեցին զգուշութեամբ եւ պատուով:

Իսկ յետ չորից ամսոց իբրեւ դադարեցաւ պատերազմն, եւ եղեւ հրաման գնալ 'ի տեղիս իւրեանց, ելին եպիսկոպոսունք, եւ բարձեալք զտապանակն մեծաւ փառօք եւ պատուովք, բերին էջմիածին, եւ եղին 'ի դիրս հանգստեան կաթողիկոսաց:

Եւ յանմ միջոցի Եփրեմ արհի եպիսկոպոս առաջնորդն Ռուսաստանու՝ ըստ ընտրութեան եւ խնդրոյ միաբանից սրբոյ էջմիածնին՝ եւ հրամանաւ մեծի կայսերն Ռուսաց, եկն հանդիսիլ 'ի սուրբ էջմիածին, եւ օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց, յամի տեառն 1809 'ի դեկտեմբեր 26, եւ առաքեաց յառաջնորդութիւն փոխանակ իւր զԳայլակեր կոչեցեալ Յովհաննէս արքեպիսկոպոսն, եւ զԴաւիթ հանեալ 'ի բանտէն՝ պահեաց պատուով եւ յարգութեամբ ռոճիկս կարգեալ նմա, եւ սենեակ շքեղ եւ զարդարուն տալով նմա մինչեւ ցվախճան նորին:

(1810) Թէպէտ յառաջին ժամանակս ոմանք 'ի մերոց պատրիարքաց եւ իշխանոց՝ փոյթ տարեալ են զՀռովմէական Հայ կոչեցեալ ժողովուրդս մուծանել յեկեղեցիս մեր բուռն իշխանութեամբ, եւ գանիւ եւ սաստիւ ահացուցանել զնոսա, բառնալ կամելով 'ի միջոյ գերկպառակութիւն ազգիս, բայց այնու առաւել եւս զայրացուցեալ էին զխռովութիւն ազգիս վիրօք զվէրսն բժշկել կամելով:

Ապա՝ ոչ սաստկագոյն գանիցն յաճախութիւնք, ոչ չզթայապինտ բանտարգելութիւնք, ոչ պատիժք աքսորանաց 'ի դժնդակ վայրս, ոչ բազմապատիկ տուգանք տուժից, եւ ոչ այլ ինչ դառնագին պատուհասք կարացին գործել ինչ օգուտ ազգիս, քան եթէ տուգանաց եւ վնասու եղեն մեզ պատճառք, եւ համարձակութեան առիթ նոցին իսկ հատուածելոց, եւ սիրոյ օրինաց մերժումն:

Իսկ յայսմ ժամանակի մինչդեռ բռնաւորութիւն ազգին Յունաց եւ զրկողութիւն՝ որ յաղագս Երուսաղէմի, ականբեւ ցուցաւ, եւ ազգ մեր ողջոյն 'ի խոր խոցեցան, եւ մեծամեծք եւ փոքունք 'ի

խորհուրդ մտեալ բազմօրեայ քննութեամբ, զելս իրացն խնդրէին գտանել:

Բազումք՝ որ թշնամիք էին միմեանց, եւ ատեցողք, մոռացան զայն ամենայն, եւ միաբանեցան ՚ի սոյն: Ուստի եւ բարիոք տնտեսութեամբ եւ խոհական խորհրդով Յովհաննու պատրիարքի՝ զոր, ՚ի վեր անդր յիշեցաք, իշխանապետք մեր առհասարակ յամենայնի խորհրդակից իւրեանց առնէին եւ զերեւելի եւ զմեծանուն իշխանս Հռովմէական Հայոց, եւ եղբայրական սիրով արգահատէին զմիմեանս, ջանալ ճգնիլ ամենայն յօժարութեամբ ՚ի պարծանս ազգիս, եւ զծերուցանել զազգն մեր յարհամարհանաց անտի եւ ՚ի մեծաբանութեանց Յունաց:

Չերեւէին երբէք ՚ի նոսին ցոյցք ատելութեան կամ հատուածման, այլ մանաւանդ ՚ի մի սիրտ եւ ՚ի մի հոգի համազուգեալ փութային կամակար աշխատասիրութեամբ, եւ յերկուց կողմանց մի քան զմի առաւելեալ հայրենասէր բարոյիւք, յամենայն ատենի գտանէին ՚ի միասին ընդ մերոց իշխանաւորաց, եւ զեզերէին անձանձիր յօժարութեամբ ՚ի դրունս արքունեաց:

Եւ այսու օրինակաւ օր քան զօր առաւելեալք ներքին հոգեւոր սիրով, զրոյցս ստէպ ՚ի մէջ արկանէին բառնալոյ իսպառ զկրճիմն հակառակութեան ՚ի միջոյ:

Այն ինչ օգնականութեամբ Տեառն յաջողեցան իրքն սրբոյ Երուսաղէմի, ուրախամիտ եղեալ մեծարու իշխանք մեր՝ ասացին նոցա յայտ առնել զրով զայնոսիկ բանսն, զորոց լինին վիճաբանութիւնք:

Եւ նոցա գումարեալ զկարգաւորս եւ զիշխանս իւրեանց, եւ ՚ի քանի մի տեղիս ժողով արարեալ, նշանակեցին ՚ի թղթի, եւ ետուն իշխանաց մերոց, եւ էր խնդիր նոցին հնգեքին այսոքիկ:

Նախ՝ թէ Քրիստոս ունի զերկուս բնութիւնս եւ զերկուս կամս եւ զերկուս ներգործութիւնս:

Երկրորդ՝ թէ ամենասուրբ Հոգին Աստուած է ՚ի Հօրէ եւ յորդուոյ:

Երրորդ՝ թէ հոգիք սրբոցն փառաւորեալք են այժմ, եւ մեղաւորք դատապարտեալք:

Չորրորդ՝ թէ Պետրոս է զլուխ առաքելոց, եւ զնոյն զլիսաւորութիւն ունին յաջորդք նորա:

Հինգերորդ՝ թէ վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ, հաստատեալ ՚ի սրբազան առաքելոյն Յակոբայ:



Յաւելին յայտոսիկ եւ վկայութիւնս ՚ի գրոց սրբոց Հարց եւ վարդապետաց մերոց, յայտ առնելով՝ եթէ եւ դուք ընդունիք զայտոսիկ, ամենայն ողջմտութեամբ, հաշտեալ միաբանիմք եւ մեք ընդ ազգիս մերոյ, ընդունելով զամենայն ծէսս եւ զդաւանութիւնս եւ զարարողութիւնս, եւ ճանաչելով ընդունելով մեզ զլուխ եւ առաջնորդ զյաջորդ սրբոյն Գրիգորի հօրն հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ:

Իսկ իշխանաւորք ազգիս հրաւիրեալ էին յառաջագոյն վասն սմին իրի զՄարտիրոս եպիսկոպոս առաջնորդն զՄիւռնոյ, եւ ժողով արարեալ հնգիցս ՚ի տաճարի Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի որ ՚ի Կոստանդնուպօլիս, յորում ներկայ գտան Յովհաննէս պատրիարք Կոստանդնուպօլսի, Աբրահամ եպիսկոպոս նուիրակն սրբոյ էջմիածնի, Մարտիրոս եպիսկոպոս առաջնորդն Ջմիւռնոյ՝ հանդերձ Ստեփան վարդապետիւ, Պօղոս արքեպիսկոպոս առաջնորդն Պրուսայոլ՝ հանդերձ երկու աշակերտօք, Երեմիա եպիսկոպոս առաջնորդն Եւդոկիոյ, Պօղոս վարդապետ վէքիլն սրբոյ Երուսաղէմի, Վարդան եպիսկոպոս վէքիլն Մշու սրբոյ Կարապետի, եւ յիշխանաւորաց երեք անձինք գիտնականք՝ մահտեսի Առաքել արքունի վառօդապետն, Չարագեան Գրիգոր, եւ Սախայեան Գրիգոր:

Եւ ՚ի վարժապետաց՝ տէր Մեսրոպ պահանայն, Գէորգ դպիր պալատական, Գրիգոր Փէչտմալճեան, եւ Խաչատուր, եւ Յարութիւն, եւ այլ անձինք տասն եւ ութ:

Եւ կնքեալ զայտոսիկ զլուխս խնդրոց՝ պատասխանի ետուն ոչ յինքնայօժար բանից իւրեանց, այլ ՚ի գրոց սրբոց հարց եւ վարդապետաց մերոց, հիմն ամենայնի եղեալ զհանգանակն նիկիական, եւ ՚ի բացատրութիւն նոցին՝ զհոգեշունչ բանս սրբոց հարց:

Առ վարդապետութիւն բնութեանցն Քրիստոսի՝ որ էր խնդիր առաջին, վկայութեամբ սուրբ Լուսաւորչին եւ Աթանասի եւ Կիւրղի՝ ցուցին ողջամիտ լինել խոստովանութիւն միոյ բնութեան մարմնացելոյ՝ ընդդէմ Նեստորի բաժանողի, եւ միաւորութիւն երկուց բնութեանց անբաժանելի ՚ի մի անձն ընդդէմ Եւտիքեայ շփոթողի, կնքելով զայս խնդիր ընդարձակ եւ անըստերիւր վարդապետութեամբ Շնորհալուոյն՝ եւ Գրիգոր կաթողիկոսի՝ եւ Լամբրոնացւոյն:

Առ երկրորդն՝ թէ Հոգին սուրբ է ՚ի Հօրէ եւ յՈրդւոյ, պատասխանի ետուն ՚ի բանից Քրիստոսի եւ սրբոյ Լուսաւորչին՝ եւ Ա-

Թանասի՝ եւ Կիւրդի՝ եւ այլոց հարց, եւ ցուցին. թէ Հայր է յանձն է, Որդի՝ ՚ի Հօրէ, եւ Հոգին սուրբ՝ ՚ի նոցունց էութենէ, որպէս վարդապետեաց եւ ուսոյց Հայրն հաւատոյ Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ:

Առ երրորդն՝ թէ սուրբք ՚ի փառս են, եւ մեղաւորք յանարգութեան եւ ՚ի դատապարտութեան, պատասխանի ետուն ՚ի բանից սուրբ Լուսաւորչին՝ եւ Շարակնոցին՝ եւ Լամբրոնացւոյն՝ եւ այլոց հարց. եւ ցուցին թէ հոգիք սրբոց ՚ի փառս են յուսովն, իսկ անզեղչ մեղաւորք ՚ի պատիժ դատապարտութեան յուսահատութեամբ:

Առ չորրորդն՝ թէ Պետրոս գլխաւոր է յԱռաքեալսն, եւ յաջորդք նորին ՚ի հայրապետս, պատասխանի ետուն ՚ի բանի աւետարանչաց՝ եւ սրբոյ Լուսաւորչին՝ եւ Սարգսի Շնորհալուոյն, եւ ցուցին ամենայն առաքելոց ունիլ բացարձակ իշխանութիւնն նոյնպէս եւ յաջորդաց նոցին ՚ի վերայ յատուկ ազգի իւրեանց, ըստ այնմ, թէ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի:

Ուստի անկախ գոլով ՚ի միմեանց ամենայն յաջորդք առաքելոց՝ զնոյն իշխանութիւնն եւ պատիւ ունին, զոր ունէին նախնիք իւրեանց սուրբ առաքեալքն, ըստ սահմանադրութեան սուրբ ժողովոյն Նիկիոյ եւ Կոստանդնուպօլսոյ:

Առ հինգերորդն՝ որ էր օծումն վերջին, պատասխանի ետուն, թէ վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ, վասն որոյ ըստ սրբազան առաքելոյն Յակոբայ՝ եթէ ՚ի մէնջ հիւանդանայցէ, կոչեմք զերիցունս եկեղեցւոյ, եւ առնեմք ՚ի վերայ նոցա աղօթս:

Բայց օծանելն իւրով զհիւանդս՝ չէ ՚ի գործածութեան, եւ չէ հարկաւոր յոյժ, որպէս գրէ մեծն Խոսրով ՚ի գիրս մեկնութեան ժամագրքի:

Մինչ զայսոսիկ պատասխանի գրեցին Հայք եւ ետուն հատուածեալ կողմանն, նոցա դարձեալ ժողով արարեալ վարդապետօք եւ իշխանօք, գրեցին եւ պահանջեցին ՚ի Հայոց նախ՝ չիւղել ՚ի պատարագի զանուանս Յովհաննու Որոտնեցւոյ՝ եւ Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեաց, պատճառելով, զի նորա մուտք են այն անուանք:

Եւ երկրորդ՝ բառնալ ՚ի շարակնոցէ եւ ՚ի ձեռնադրութեան գրոցն զնգովսն Լեւոնի եւ ժողովոյն Քաղկեդոնի, պատճառելով եւ հաստատելով, թէ այն բանք նգովից ոչ են շարակարգեալք ՚ի

նախնի սրբոց հարց մերոց, այլ 'ի յետին ժամանակս յանզգոյշ եւ 'ի խռովասէր անձանց ոմանց:

Եւ զայս երկոսին խնդիրս գրեալ նոցա ետուն իշխանաց Հայոց, եւ նոցա գումարեալ հանդերձ ամենեքումբք, մինչ ամենեքին ցուցանէին զհաճութիւն եւ զհաւանութիւն, եւ առաւել եւս Յովհաննէս պատրիարքն եւ վարժապետք վերոյիշեալք, բայց ոմանց անընդունելի եղեւ այս բան:

Մանաւանդ Երեմիա եպիսկոպոսն եւ Զաքարիա վարդապետ ոմն՝ որոց 'ի լսելն զայս՝ ընդոստուցեալք 'ի տեղեաց իւրեանց, աղաղակ բարձին 'ի ժողովին ասելով. "Թէ անկարելի է սոքին եւ անընդունելի է մեզ, զի զոր ինչ գտեալ եմք 'ի նախնեաց մերոց, ոչ կարեմք փոփոխել կամ յաւելուլ եւ կամ նուազեցուցանել:

Եւ առ այս համամիտ գտան եւ ոմանք 'ի քահանայից եւ յիշխանաց, անգէտ գոլով հնութեան եւ նորութեան, եւ եկեղեցական պատումթեանց եւ ժողովոց սահմանադրութեանց:

Եւ ծագեցաւ 'ի մէջ ազգին շփոթութիւն մեծ, եւ տարաձայնութիւն, ոմանց ասելով թէ՛ մոլորական իրք են, եւ պարտին բառնալ, եւ ոմանց պտղել ընդհակառակն, թէ սուրբք են եւ պաշտելիք, եւ այսպէս օր 'ի յօր յաճախեաց շփոթութիւնն 'ի մէջ ժողովրդեանն, զոր տեսեալ Յովհաննու պատրիարքի, խոհական խորհրդով մտածելով զապագայ չարիսն՝ որոց մարթ էր ծագիլ 'ի խռովայոյզ անձանց ժամանակին, դարձոյց զբանն, եւ հրամայեաց ըստ առաջին կարգացն ընթանալ իւրաքաչիւր ումեք զճանապարհս իւրեանց:

Բայց այսու ամենայնիւ արգել հրամանաւ իւրով չընթեռնուլ զերիս հետամուտ տունս ՈՎ ՀՐԱՇԱԼԻ շարականին 'ի տօնի սուրբ հայրապետաց, եւ այսպէս մնաց անկատար այն հոգեւոր եռանդն եւ գործ միաբանութեան ազգիս, այլում ժամանակի թողեալ ըստ կամացն Աստուծոյ:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս Հրաժարելոյ Յովհաննու 'ի պատրիարքութենէ, եւ յաջորդելոյ Աբրահամ պատրիարքի:

(1813) Յետ այսր ամենայնի հիւանդացաւ Յովհաննէս պատրիարք անբժշկելի խիտիւ փայծեղնացաւութեան՝ նեղեալ 'ի բազմադիմի հոգոց եւ աշխատութեանց ազգին:

Եւ մինչ յոյս առողջութեան ոչ գտաւ, եւ խիտ ցաւոցն օր քան օր զօրացաւ, մինչեւ չկարել յոտին կալ եւ պատարագել՝ վասն որոյ եւ իշխանք եւ մեծամեծք ազգիս ժողով արարեալ, խորհեցան զայլ ոք դնել յաթոռ պատրիարքութեան, եւ զնա հանգուցանել 'ի վանս սուրբ Երուսաղէմայ, որ 'ի Խրիստապօլիս:

Ուստի եւ 'ի միում աւուր ժողովեալ ամենեցուն 'ի պատրիարքարանի, յայտնեցին նմա զխորհուրդս իւրեանց, խոստանալով երդմամբ յանուն Աստուծոյ, զի պահեսցեն զնա յանդորրու՝ հոգ տանելով զամենայն պիտոյից նորին մինչեւ ցվախճան նորին:

Լուեալ զայս ամենայն Յովհաննէս պատրիարք, եւ յօժարակամ հաճեալ ընդ խնդիր նոցա, ասէ ցնոսա. "Ընտրեցէք ձեզ զմն առաջնորդ եւ պատրիարք, եւ ես 'ի պատրաստի եմ հրաժարիլ յաթոռոյս":

Եւ նոքա ասեն միաբերան, թէ՛ "Ոչ վայելէ մեզ ընտրել պատրիարք, այլ այդ տնտեսութիւն ձերումդ խոհականութեան անկ:"

Զայսու ժամանակաւ Աբրահամ եպիսկոպոսս Գոլեան՝ նուիրակ սուրբ Էջմիածնի, շրջեալ ութ 'ի նուիրակութիւն, եւ ապա ելեալ 'ի Կոստանդնուպօլիս նստէր յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնի, եւ Յովհաննէս պատրիարք սէր ցուցեալ նմա, առաքէր յեկեղեցիս յաւուրս տօնախմբութեանց նոցին իբրեւ իւր իսկ փոխանորդ:

Եւ սա՝ զի ունէր ինչս առ իւր ժողովեալ 'ի նուիրակութենէ, վատնեաց զնոսա տալով աստ եւ անդ՝ եւ նոքօք որսաց զբազումե յիշխանաւորաց ազգիս 'ի կողմն իւր:

Գիտելով զայս ամենայն Յովհաննէս պատրիարք, ընտրեաց 'ի ժողովի իշխանաց զԱբրահամ նուիրակ 'ի պատրիարքութիւն, որոց 'ի լսելն զայս՝ միակամ հաւանութեամբ հաճեցան եւ խնդրեցին 'ի Յովհաննէս պատրիարքէ՝ տալ թուղթ հրժարական, եւ առաքել 'ի դուռն արքունի:

Եւ Յովհաննէս պատրիարք կոչեալ զգրագիր պատրիարքարանի, ետ գրել 'ի լեզու տաճկաց զգիրն, եւ առաքեաց 'ի ձեռն փոխանորդին իւրոյ Սահակայ վարդապետին 'ի դուռն եպարզոսի, եւ եպարզոսն առաքեաց առ Թագաւորն:

Յայն Թուղթ յայտ առնէր Յովհաննէս պատրիարք, թէ ինքն կամակար մտօք հրաժարի 'ի պատրիարքութենէ վասն տկարութեան անձին, եւ խնդրէր, զի տացի այն պատիւ Աբրահամ վարդապետի:

Այլ Թագաւորն՝ որ իմաստութեամ առնէր զամենայն, կասկածեալ, թէ գուցէ աւամայ ինչ իցէ այն եւ կամ դաւաճանութեամբ այլոց, յղեաց 'ի պատրիարքարանն զարս հաւատարիմս հարցանել, թէ ճշմարտիւ կամիցի՞ Յովհաննէս հրաժարիլ 'ի պատրիարքութենէ, եւ թէ իւր իցէ գրել տուեալ զԹուղթն հրաժարական:

Եւ իբրեւ ստուգեաց զամենայն, յղեաց պատգամ առ եպարզոսն կոչել զԱբրահամ վարդապետ 'ի դուռն իւր, եւ զգեցուցանել նմա զվերարկու պատրիարքական պատուոյ, եւ նա վաղվադակի կատարեաց զհրամանն 'ի մայիս 5 յամի տեառն 1813, եւ հանդիսիւ դարձոյց զնա 'ի պատրիարքարանն:

Ի հասանել նորա անդր՝ ելին ընդ առաջ նորա մեծամեծք Հայոց, եւ ընկալեալ զնա մեծաշուք պատուով, ածին 'ի ներքս առ Յովհաննէս պատրիարք, զորոյ համբուրեաց զաջ Աբրահամ պատրիարք, զոր եւ սիրով ընկալեալ Յովհաննու պատրիարքի՝ օրհնեաց զնա, եւ հանեալ զմետաքսեայ ծիրանի փիլոնն պատրիարքական յանձնէ իւրմէ՝ էարկ 'ի վերայ նորա, նոյնպէս եւ զպատուական յակինթ մատանին հանեալ 'ի ձեռաց իւրոց՝ եղ 'ի մատն նորա, եւ զգաւագան իւր փղոսկրեայ՝ արծաթապատ եւ ոսրեզօժ՝ մատոյց 'ի ձեռս նորա. եւ յերրորդում աւուր յանձն արարեալ նմա զամենայն ինչ, եւ տուեալ նմա զողջոյնն հրաժարական, ելեալ նստաւ յերիւար զարդարուն եւ շքեղ:

Ընդ առաջ նորա բազմութիւնք քահանայից եւ իշխանաց, եւ յետուս նորա ամբոխ հասարակ ժողովրդեան, էջ 'ի նաւահանգիստն 'ի Գուճգափու: Անդ զկայ առեալ Յովհաննու պատրիարքի՝ ասաց նոցա բանս մխիթարութեան, եւ օրհնեալ զնոսս սուրբ Երուսաղէմի՝ որ անդ, կացեալ 'ի պատրիարքութեան զամս 14:

## ԳԼՈՒԽ ԺՁ.

Յաղագս գործոց Աբրահամ պատրիարքի եւ աքսորանաց նորին, եւ յաջորդելոյ Պօղոսի եպիսկոպոսի Անդրիանուպօլսեցոց:

(1813) ՀԱՄԲԱԻ պատրիարքութեանն Աբրահամու՝ գրեալ եւ ազդ արարեալ ՚ի սուրբ Էջմիածին, առաքեաց Եփրեմ կաթողիկոս զՅովհաննէս արհի եպիսկոպոսն Կարբեցի առնուլ յԱբրահամ պատրիարքէ զհաշիւ նուիրակութեանն, եւ դառնալ յԷջմիածին. եւ մինչդեռ լուաւ Աբրահամ պատրիարք զգալուստ նորին, ածապարեաց եւ վաղվաղակի սուրհանդակս առաքեաց առ նա, եւ գրեաց. զի դարձցի յԷջմիածին, եւ մի եկեսցէ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ ինքն խոստանայր ՚ի թղթին զգումարեալ ինչս եւ զհաշիւ նուիրակութեան իւրոյ՝ ամբողջ հասուցանել յաթոռն սուրբ:

Այլ նորա արհամարհեալ զգիր եւ զխոստումն նորա, եւ յուսացեալ ՚ի բազուկ զօրութեան ամենայաղթ կայսերութեանն Ռուսաց, ընդ որոյ պաշտպանութեամբ էր նա ինքն Յովհաննէս եպիսկոպոս, եկն ՚ի Կոստանդնուպօլիս, եւ անցեալ ընդ Բերա՝ այն է Պէյօղլու, գնաց ՚ի տուն մեծի թարգմանի դեսպանին Ռուսաց՝ որ կոչիւր միւսիւ Բիգանի, առ որ ունէր եւ զգիր յանձնարարութեան ՚ի մեծ է կուսակալէն Վրաստանու, եւ անդ նստաւ, եւ ՚ի ձեռն նորին ազդ արար Աբրահամ պատրիարքի՝ զի զհաշիւ նուիրակութեանն ամբողջ հասուցէ ՚ի ձեռս իւր, ապա թէ ոչ՝ ՚ի ձեռն դեսպանին ազդ առնեմք ՚ի դուռն արքունի, եւ արքունի հրամանաւ պահանջեմք եւ առնումք՝ որչափ եւ կամիմք:

Լուեալ գայս Աբրահամ պատրիարք՝ արար ժողով իշխանաց, եւ ՚ի նմին ժողովի յայտ արար, որոց ինչ տուեալ էր ՚ի գանձուց նուիրակութեան իւրոյ, եւ խորհուրդ խորհեալ, զի վնաս մեծ երեւէր ինքեանց, եթէ դեսպանն ազդ արասցէ ՚ի դուռն արքունի, վասն որոյ ահամայ կամօք հատուցին գամենայն՝ զոր ինչ առեալ էին յԱբրահամ պատրիարքէ, եւ ժողովեալ զգանձան եւ զհաշիւ նուիրակութեանն, տարան երեք ոմանք յիշխանաց առ նա ինքն Յովհաննէս եպիսկոպոս ՚ի տուն թարգմանին, եւ յորդորեալ զնա աղաչանօք եւ ընծայիւք, եւ հաճեցուցեալ զմիտս նորին առաքեցին ՚ի սուրբ Էջմիածին:

(1814) Իսկ Աբրահամ պատրիարք յետ միոյ ամի պատրիարքութեան իւրոյ՝ փոխեաց զբնութիւն իւր, եւ որ յառաջն ձեւանայր այր բարեկեցիկ եւ հեղահոգի եւ առատաձեռն, յետոյ եղեւ այր ժլատ եւ ագահ եւ բարկացող, եւ սկսաւ հակառակութիւն եւ երկպառակութիւն սերմանել ՚ի մէջ ազգին, կեղեքել զժողովուրդսն, եւ յանիրաւի յափշտակել եւ պահանջել ՚ի նոցանէ զոսկի եւ զարծաթ: Եւ որովհետեւ գտեալ էր եւ ինքն ՚ի ժամանակս Յովհաննու պատրիարքի ՚ի ժողովի միաբանութեանն Հայոց ընդ Հռովմէական Հայոց, եւ տեղեակ էր ամենայն անցից եւ վիճաբանութեանց եղելոց ընդ նոսա, այժմ կամեցեալ երեւեցուցանել զինքն հաճոյ յաչս նոցա՝ յուսալով առնուլ ՚ի նոցանէ զինչս բազումս, եւ կեղծապատիր հնարիւք հրաւիրէր զմեծամեծ իշխանս նոցին ՚ի պատրիարքարանն, եւ խօսակցեալ ընդ նոսին քաղցրութեամբ եւ սիրով՝ պատիւ եւ ընդունելութիւն ցուցանէր նոցին առաւել քան զարժանն: Եւ սմին իրի կոչեալ առ ինքն զՓէշտիմալձեան Գրիգոր զիտնական վարժապետն Օրթագիւղի՝ խօսեցաւ ընդ նմա զաղտնի, եւ հրամայեաց, զի գտցէ զհին ձեռագիր Շարական մի, եւ բաղդատեսցէ զնա ընդ տպագրելոյն, եւ բարձցէ ՚ի նմանէ զերիս յետամուտ տունս ՈՎ ՀՐԱՇԱԼԻ շարականին, եւ տացէ տպագրիչ Արապեան Պօղոսին՝ տպել զՇարականն ըստ այնմ օրինակի:

Յանձն առեալ վարժապետին զայս տարժանելի գործ աշխատութեան՝ հրամանաւ նորին եւ ՚ի սէր ազգին, որոնեաց աստ եւ անդ եւ եզիտ զընտիր ձեռագիր Շարական մի՝ գրեալ ՚ի վերայ մագաղաթի՝ ի թուին Հայոց ՉԾԱ: Ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ արքայի, ՚ի Խորէվն կոչեցեալ անապատին, ՚ի ձեռն Թովմայի Սեւակրի՝. եւ զայս Շարական եզիտ առ արքունի վառօդապետ մահտեսի Տատ Առաքել գրասէր իշխանին, եւ առեալ ՚ի նմանէ աշխատ եղեւ զամիսս վեց գտիւ եւ զգիշեր՝ (ընդ որում եւ ես ոչ սակաւ վաստակեցայ ՚ի բաղդատութիւն ընթերցուածոյն եւ գրութեան նորին, որ յայնմ ժամանակի պարապէի յուսման առ ոտս նորին):

Եւ աւարտեալ զսրբագրութիւն նորին՝ ետ Արապեան Պօղոսի ծերունւոյն տպագրել զնա հրամանաւ պատրիարքին:

Եւ նորա գնացեալ առ Աբրահամ պատրիարք, եւ ստուգեալ ՚ի նմանէ զհաճութիւն եւ զտուչութիւն հրամանի նորին, եւ ձեռն ՚ի

գործը արկեալ յանկ եհան եւ կատարեաց զտպագրութիւն նորին, եւ սկսաւ վաճառել եւ տարածել զնորոգ տպեալսն:

Այլ իբրեւ տարածեցաւ այս աստ եւ անդ, ոմանք 'ի տգէտ քահանայից եւ յիշխանաց սկսան շփոթութիւնս արկանել 'ի լսելիս ռամիկ ժողովրդեան, որպէս թէ բանք շնորհալուոյն բարձեալ իցեն 'ի Շարակնոցէն, եւ եկեալ առ Աբրահամ պատրիարք, հարցանէին զնա եւ ցաւէին, թէ ընդէ՞ր փոփոխութիւնս եւ պակասութիւնս եմոյժ 'ի բանս Շարակնոցին:

Եւ որուհետեւ երեւելի էր յայն աւուրսն Ազնաւուրեան Կարապետ գլխաւորն հատավաճառաց, եւ նա էր մին 'ի դատախազիցն այսր իրի, որք եկեալ էին առ Աբրահամ պատրիարք, 'ի լսելն զայս Աբրահամն՝ որպէս թէ ամենեւին չիցէ լուեալ զայս սրբագրութիւն Շարականին, ասէ ցնոսա. զինչ ասէք ո՞վ յարգի իշխանք, իմ չէ լուեալ զայդ երբէք, եւ ոչ գիտացեալ:

Եւ իսկոյն կոչեալ զվէքիլ իւր առաջի նոցա, սպառնացաւ նմա, զի փութանակի կոչեսցէ զտպագրիչն, եւ հարցցէ եւ տեղեկասցի 'ի նմանէ թէ ո՞վ ետ նմա առնել զայս, եւ նորա կոչեալ զնա 'ի պատրիարքարանն, ասէ ցնա, դու որո՞յ հրամանաւ փոփոխեցեր եւ բարձեր 'ի Շարակնոցէն զայն երիս տունսն:

Եւ նա ասէ ցնա, հրաման պատրիարքին եւ սրբագրութեամբ Գրիգորի վարժապետին:

Ընդ այս պատասխանի նորուն զայրացեալ վէքիլ վարդապետին, հրամայեաց, զի մի ումեք վաճառեսցէ 'ի պատրիարքարանն, եդ 'ի դիպահոջ, զի առաքեսցէ զնա յաքսորա:

Այլ նա փութանակի գրեալ զգիր աղերսանաց առ Տիւղեան Գրիգոր չէլէպի, ազդ արար նմա զանմեղութիւն իւր եւ զանիրաւ բանտարգելութիւն:

Եւ նորա կոչեալ առ ինքն զԱզնաւուրեան Կարապետ եւ զմահտեսի Յովհաննէս Երկանեան զիշխանսն Հայոց, խօսեցաւ ընդ նոսա, զի ազատեսցեն զԳրիգոր վարժապետ յարգելանաց բանտին, ապա թէ ոչ՝ ինքն կարէ ազատել 'ի ձեռն մեծամեծացն արքայի:

Եւ նոցա լուեալ զայս, եւ գիտելով՝ զի կարող է առնել, զոր կամի նա, իջին 'ի պատրիարքարանն, եւ խօսեցեալք ընդ Աբրահամ պատրիարքի՝ թոյլ ետուն Գրիգոր վարժապետի զնալ անվնաս 'ի տեղի իւր:



Եւ յետ ոչ բազում աւուրց տպագրիչ Պօղոս ծերունին սկսաւ վաճառել զՇարականսն զայնոսիկ, որք մինչեւ ցայսօր գտանին աստ եւ անդ, բայց վասն այսր ոչ սկսաւ ատելութիւն եւ խէթ անկաւ ընդ Տիւզեան իշխանացն եւ ընդ Աբրահամ պատրիարք, ուստի եւ գաղտնի խորհրդակցութիւնս արարեալ ընդ ոմանց իշխանաց Հայոց, առաքեցին 'ի սուրբ Էջմիածին զՊօղոս վարդապետ վէքիլն սրբոյ Երուսաղէմի. զի ընկալեալ զօծումն շնորհի եպիսկոպոսութեան դարձ արասցէ 'ի Կոստանդնուպօլիս, խորհուրդ եւ դեալ ընդ նմա կացուցանել զնա պատրիարք Հայոց:

(1814) Եւ Պօղոս վարդապետ 'ի Կոստանդնուպօլսոյ, եւ հանդերձ վկայական թղթով իշխանաց իւրոց կուսակցաց, յորում էր եւ կնիք Յովհաննու պատրիարքին, որ նստէր յայնժամ 'ի յիւսկիւտար, գնաց 'ի սուրբ Էջմիածին, եւ առեալ զսրբագան կարգ եպիսկոպոսութեանն դարձ արար անդրէն 'ի Կոստանդնուպօլիս:

Յաւուրս յայտոսիկ Աբրահամ պատրիարք հակառակ երեւեցաւ միաբանից սրբոյ Երուսաղէմի, որք էին 'ի Կոստանդնուպօլիս, զոմանս աքսորեաց, եւ զոմանս արգել 'ի քահանայութենէ եւ 'ի պատարագելոյ, արգել եւ զԳրիգոր վարդապետ զոմն 'ի քահանայութենէ՝ լոկ աշխարհական կարգացեալ զնա, միջնորդեսցէ վասն իւր առ Աբրահամ պատրիարք, եւ հաճեցուցէ զնա տալ հրաման ինքեան պատարագելոյ:

Ստուգեալ Յովհաննու պատրիարքի զանմեղութիւն նորա, կոչեաց առ ինքն զիշխան ոմն Պեզճեան Յարութիւն կոչեցեալ, որ երեւելին էր 'ի դրան Տիւզեանց եւ գործակալ նոցին. եւ յորդորեաց զնա գնալ անձամբ անձին առ Աբրահամ պատրիարք, եւ առնուլ 'ի նմանէ զհրաման եւ զթոյլտուութիւն վասն պատարագելոյ Գրիգորի վարդապետին:

Եւ նորա գնացեալ աղաչեաց եւ բազմօք թախանձեաց զԱբրահամ պատրիարք, զի ներեսցէ յանցանաց Գրիգորի վարդապետին. իսկ Աբրահամ պատրիարք յետ քանիցս անգամ ասելոյ, թէ անկարելի է այդմ աղաչանաչ լինել ընդունելի, ասաց 'ի վերջոյ եւ զայս, թէ ո՞ իցես դու, որ այդպիսի վստահութեամբ յանդգնեցար յայդ աղաչանս, 'ի բաց զնա յինէն դեսպան հերձուածողաց:

Ձայս լուեալ Յարութիւն Պէզճեան, եւ խոժոռ իմն հայեցիւք պատասխանի տուեալ նմա, ասէ. դու զդեսպանութիւն իմ աստ 'ի Կոստանդնուպօլիս ծանեար եւ պատմեցեր, եւ ես յարեւելս զքոյդ

ինքնակալ թագաւորութիւն քարոզեցից. եւ զայս ասացեալ ել արտաքս:

Եւ զնացեալ առ Գրիգոր Չէլչպի Տիւզեան, պատմեաց նմա զամենայն, զոր ինչ լուսան յԱբրահամ պատրիարքէ. եւ նա զազանի խորհրդակցութեամբ ընդ ոմանց իշխանաց Հայոց բան եդեալ, հաստատեցին իջուցանել զԱբրահամ յաթոռոյ, եւ նստուցանել պատրիարք զՊողոս եպիսկոպոս փոխանորդն սրբոյ Երուսաղէմի, որպէս եւ յառաջ քան զամ մի զնոյն խորհուրդ խորհեալ էին:

(1814) Յայսմ միջոցի շինեցաւ նորոգ եւ սուրբ եկեղեցին Քաղկեդոնի սուրբ Թագաւոր կոչեցեալ, եւ առաջարկայ գտան յօժման նորա Յովհաննէս նախկին պատրիարք, բրահամ պատրիարք, Կարապետ եպիսկոպոս ծերունի, Աստուածատուր եպիսկոպոս, Պողոս եպիսկոպոս՝ փոխանորդն սրբոյ Երուսաղէմի, Յակոբոս եւ Մատթէոս վարդապետք՝ աշակերտք Յովհաննու պատրիարքի, Յովակիմ վարդապետ՝ աշակերտ Աբրահամ պատրիարքի, Պողոս վարդապետ Մշեցի, Գրիգոր վարդապետ Նարեկայ, եւ բազմութիւնք քահանայից, եւ դպրաց, եւ մեծաւ հանդիսիւ օծին զսուրբ եկեղեցին յամսեանն յուլիսի 4, յամի տեառն 1814:

Այս հանդիսաւոր օծումն եկեղեցւոյն Քաղկեդոնի՝ զրգուեաց զսիրտս ժողովրդոցն Բերայի (այն է Պէյօղլու) նորոգել եւ զեկեղեցին իւրեանց, որ ՚ի բազում ամաց հետէ հրակէզ լեալ, աւեր եւ անշէն մնացեալ էր:

Եւ ժողով արարեալ նոցին, բազմութեամբ եկին առ Աբրահամ պատրիարք, եւ աղաչեցին զնա, զի հրաման առցէ յարքունուստ նորոգել զեկեղեցի իւրեանց:

Եւ նա փոխանակ քաղցրութեամբ համոզելոյ եւ ամօքելոյ զսիրտս նոցա, խրոխտ սպառնալեօք վանեաց զնոսա յառաջոյ իւրմէ, ասելով, բերէք այսր առ իս զհազար քսակ ոսկւոյ, զի հրաման առից նորոգել զեկեղեցի ձեր:

Ընդ որ ցասուցեալ ժողովրդոցն անհնարին տրտմտութեամբ, բողոք բարձին ՚ի զրունս մեծամեծացն Հայոց, զի զթասցին յինքեանս եւ յեկեղեցի իւրեանց, եւ գտցեն զճանապարհ նորոգութեան եկեղեցւոյն:

Այս ազմուկ եւ խռովութիւն ժողովրդոցն Բերայի՝ եղեւ կողմնակի իմն պատճառ քսորանաց Աբրահամ պատրիարքին, զի իբրեւ լուսան զայս Գրիգոր Չէլչպի Տիւզեան եւ խորհրդակիցք իւր,

’ի ձեռն ոմանց խորագէտ եւ խորհրդապահ ծանօթից, զի միաբան ժողովեացին յաւուր ուրբաթու տալ առ արքայ զգիր աղերսանաց վասն հրամանառութեան եւ նորոգութեան եկեղեցւոյն իւրեանց:

Եւ ինքեանք ետուն զրել զգիր ’ի դիմաց համօրէն լրութեան ազգիս, թէ պատրիարք մեր չունի զխոհականութիւն եւ զբարիոք կառավարութիւն շահելոյ զազգն, եւ թէ յանիրաւի բռնանայ եւ կեղեքէ զժողովուրդն յափշտակութեամբ ընչից եւ զրկողութեամբ իրաւանց, ուստի խնդրեմք ’ի մեծազօր տէրութենէ ձերմէ, զի բարձցես ’ի միջոյ մերմէ զայրս զայս անիրաւ եւ յափշտակող, եւ դիցես մեզ պատրիարք զայլ ոք իրաւասէր, խոհական, եւ շահեցող:

Ձայս գիր միայն ինքեանք գիտէին, որք ետունն զրել, իսկ հաւաքեալ ժողովուրդն այնպէս գիտէին, որպէս թէ վասն նորոգութեան եկեղեցւոյն Բերայի տան առ արքայ զգիր աղերսանաց:

Եւ այսպէս միահամուռ բազմութեամբ քահանայից եւ ժողովրդոց ետուն առ արքայ զգիրն լալագին պաղատանօք ’ի մզկիթն Թօփհանէի, եւ ինքն Գրիգոր Չէլէպի Տիւզեան ’ի ձեռն մեծագին ընծայից յանկոյց զսիրտս պալատականացն արքայի գթալ յազգն եւ ’ի ժողովուրդն, եւ զերծուցանել զնոսա յանիրաւ բռնութենէ Աբրահամ պատրիարքի:

Ընթերցեալ արքայի զգիրն, եւ լուեալ ’ի պալատականաց իւրոց զկեղծեալ բողոք եւ զպաղատանս ժողովրդոցն, հրամայեաց փոխանորդի իւրում մեծի եպարզոսին, իջուցանել զԱբրահամ պատրիարք յաթոռոյն, եւ դնել զայլ ոք ըստ ընտրութեան ազգին Հայոց:

Իմացեալ զայս իշխանաց Հայոց, յորոց բազումք էին ’ի կողմն Աբրահամ պատրիարքի, ժողովեցան ’ի պատրիարքարանն, եւ համահաճութեամբ ժողովոյ իւրեանց գնացին ’ի դուռն եպարզոսին, եւ աղաչեցին ’ի դիմաց լրութեան ազգիս, խնդրելով հաստատել զնոյն ինքն զԱբրահամ ’ի պատրիարքութիւն ինքեանց. բայց ոչ լուաւ նոցա եպարզոսն, մի՛ զի հրաման արքայի այնպէս էր հրամայեալ՝ եւ դժուարին երեւէր յետս կոչել զհրամանն, եւ երկրորդ՝ զի ’ի ձեռն կաշառաց եւ ինքն եպարզոսն էր ցասուցեալ առ Աբրահամ պատրիարք:

Վասն որոյ եւ յաւուր երեքշաբթի ’ի նոյեմբեր 29 առաքեաց եպարզոսն զհրամանագիր արքայի ’ի պատրիարքարանն, եւ ըն-

կեցեալ զԱբրահամ յաթոռոյն, առաքեաց զնա 'ի Ղատիգիւղ, յորմէ ապա զնաց յառաջնորդութիւն Մարգուան քաղաքին:

Եւ յետ երկուց աւուրց ժողով մեծ եղեւ 'ի պատրիարքարանն, յորում գտան Գրիգոր եւ Սարգիս չէլէպիք Տիւզեան, եւ հարցուփորձ արարեալ ընդ միմեանս՝ ընտրեցին զՊողոս եպիսկոպոս փոխանորդն Սրբոյ Երուսաղէմի, եւ ծանուցեալ վասն նորին 'ի դուռն արքունի, յաւուր հիգշաբաթի 'ի դեկտեմբեր երեք 1815 կոչեաց եպարգոսն առաջի իւր զՊողոս եպիսկոպոս, եւ խօսեցեալ ընդ նմա, հրամանաւ արքայի զգեցոյց նմա զվերարկու պատրիարքական պատուոյ, եւ մեծաւ հանդիսիւ յղեաց զնա 'ի պատրիարքարանն:

Որոյ եկեալ պատրիարքական պատուովն, կանգնեցաւ 'ի բեմի Մայր եկեղեցոյն սուրբ Աստուածածնի, եւ արար գեղեցիկ ատենաբանութիւն իմն, անարժան համարելով զընտրութիւն անձին իւրոյ, եւ ապաստան լինելով 'ի կոչումն Աստուծոյ, եւ 'ի վերջոյ յարեալ զմաղթանս եւ զօրհնութիւն իւր առ Աստուած, կնքեաց զճառ իւր գոհաբանական նուագօք:

(1817) Յետ երկուց ամաց երջանիկ վախճան ընկալաւ Յովհաննէս պատրիարքն Կոստանդնուպօլսոյ, եւ թաղեցաւ 'ի գերեզմանատանն Իսկիւտարու:

(1818) Վախճանեցաւ եւ յետ ամսոց ինչ եւ թէոդորոս պատրիարքն Երուսաղէմի՝ կացեալ 'ի պատրիարքութեան զամս 25, եւ եդաւ յաթոռ նորին Գաբրիէլ եպիսկոպոս 'ի միաբանութեանն սրբոյ Երուսաղէմի:

## ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս կոչելոյ Պօղոսի պատրիարքին զՀռովմէական Հայոս  
'ի սէր միաբանութեան:

**Ի** սմին ժամանակի ժողովուրդ Հռովմէական Հայոց համարձակութիւն գտեալ 'ի կողմանէ Հայոց, եւ առաւել եւս՝ զի 'ի բազում քաղաքս ծառայողք եպարզոսաց եւ ոստիկանաց 'ի Հռովմէական հայոց անտի գտանէին, եւ ըստ հաճոյից իւրեանց համոզելով եւ որսալով զեպարզոս, 'ի ձեռն նոցին նեղէին եւ չարչարէին զհայկազուն ժողովուրդս, որք գտանէին 'ի քաղաքսն յայնոսիկ, համարձակ շրջեցուցանէին զկարգաւորս իւրեանց, եւ զպարզամիտ ժողովուրդս մեր հանէին 'ի հնազանդութենէ սեպհական հովուի իւրեանց, եւ նախատելով եւ արհամարհելով զազգ եւ զեկեղեցի մեր՝ գոմ անուանէին եւ ախոռ ձիոց, եւ զեկեղեցականս մեր կոչէին խաբեբայս՝ եւ ստասացս՝ հերձուածողս՝ եւ հերետիկոսս, որովք զբազմաց որդիս յորդորելով եւ համոզելով որոչէին 'ի ծնողաց իւրեանց, զեղբայր յեղբօրէ բաժանելով, եւ զկնի յառնէ իւրմէ օտարացուցանելով, եւ զորս միանգամ որսայինն, խրատէին իսպառ հեռանալ իմն համարելով:

Չայս ամենայն առնէին ազգի ազգի շողոքորթութեամբ՝ ոմանց դրամս տալով, եւ ոմանց ձեռնտուութեամբ իւրիք օգնելով, եւ բազմաց զլայն եւ ընդարձակ ճանապարհ ցուցանելով 'ի լրումն մարմնոյ հեշտութեանց:

Եւ յորժամ որսային զոք 'ի կողմն իւրեանց, տօն ցնծութեան եւ ուրախութեան կատարէին 'ի միջի իւրեանց, ասելով, թէ զհոգի մի ազատեցաք 'ի դժոխոց, որպէս թէ յառաջագոյն անհաւատ ոմն էր այն:

Եւ զայս ոչ միայն առ իշխարհականս, այլեւ առ եկեղեցականս առնէին, տեղի եւ տուն պաստամբաց եղեալ, վասն զի՝ ոմանք 'ի մերոց տգէտ քահանայից եւ վարդապետաց՝ յանդիմանեալք վասն անկարգ գնացից իւրեանց, վաղվաղակի գիշերադնաց փախչէին 'ի մէնջ 'ի կողմն նոցա, եւ ազատ գոլով 'ի հրամանաց մեծաւորաց, եւ ուխտազանց եղեալք 'ի կրօնաւորական կարգաց իւրեանց, բնակէին 'ի տունս նոցա, եւ անդ բացեալ զանդուռն բերանս իւրեանց՝ բիւր բանբասանօք չարախօսէին զազգէս մերմէ ասելով, թէ Հայք այսպէս առնեն, այնպէս առնեն, հեր-

ձուլածոյ եւ հերետիկոս են, վասն որոյ փախեալք եւ որոշեցաք ՚ի նոցանէ առ փրկութիւն հոգւոց մերոց, եւ այլն:

Եւ իբրեւ այս այսպէս լինէր ՚ի բազում տեղիս, սկսան ՚ի բազում քաղաքաց աղաղակք եւ բողոքանաց գրութիւնք հասանիլ մի գկնի միոյ առ Պօղոս պատրիարք, աղաղակելով եւ աղերսելով, զի գտցէ զհնար իմն այսմ անբժշկելի ախտիս, որ օր քան զօր ունի զայրանալ եւ ճարակիլ յամենայն անդամս եկեղեցւոյ մերոյ, եւ յապականութիւն մահու հասուցանել զբոլոր մարմնի ազգիս:

Ընթերցեալ զայս ամենայն գրութիւնս Պօղոսի պատրիարքին, եւ ոչ կարացեալ լռել եւ տոկալ անըմբերելի խոցուածոյս, վասն որոյ ՚ի նոյեմբեր 9 յամի տեառն 1816 սկիզբն արարեալ խորհուրդ արար ընդ իշխանապետս ազգի մերում, եւ ապա ՚ի 23 աւուր նոյեմբերի հրահրեաց ՚ի պատրիարքարանն զերեւելիս միւս կողման, որք էին Տիւղեան Գրիգոր Չէլէպին, Աբիկեան Պօղոս, Կարնեցի Աստուածատուրեան Մատթէոս, Տափուտեան Անտօն, եւ Թընկերեան Յովսէփ:

Եւ յորդորելով զսոսա քաղցրութեամբ եւ սիրով, սկիզբն արար հարցանել, թէ զի՞նչ է պատճառն այսր բաժանման եւ վնասուց, ո՞չ ապաքէն մի եւ զնոյն սուրբ հարս՝ հեղինակ ուղղափառ հաւատոյս մերոյ ունիմք զսուրբ Լուսաւորիչն եւ զսուրբ Ներսէս Շնորհալին, եւ ահա գրեանք նոցին Յաճախապատումն եւ Ընդհանրական՝ զօրհանապազ պաշտին յեկեղեցւոյ մերում, եւ զոր ինչ ընկալաք յերից սուրբ ժողովոց եւ ՚ի սուրբ հարց մերոց, զնոյն անխախտ պահեալ եմք հաւատովք եւ արարողութեամբք:

Արդ ընդէ՞ր կարգաւորք ձեր ջանան թիւրել զազգս մեր, օտարացուցանել եւ բաժանել յեկեղեցւոյ մերմէ, եւ այսր ամենայնի խռովութեան եւ չարեաց ճգնին լինել պատճառ:

Առ այս պատասխանի ետուն նոքին եւ ասեն, թէ մեք եւս ընդունիմք զսուրբ Լուսաւորիչն եւ զՆերսէս Շնորհալին, եւ ամենայն բանք նոցին ուղղափառութիւն են:

Յայնժամ ասէ Պօղոս պատրիարք, թէ այդ իսկ են սքանչելիք, զի թէ մեք եւ թէ դուք, միաբան ընդունիմք զսուրբ հարս, եւ այսու ամենայնիւ վիճիմք ընդ իրեախս, ուստի եկայք քննեսցուք, թէ նախ քան զբաժանիլն ձեր ՚ի մէնջ՝ զի՞նչ դաւանութիւն ունէր սուրբ եկեղեցին մեր, եւ այժմ զի՞նչ դաւանի, եթէ գկնի նոր ինչ մոծեալ եմք ՚ի հաւատս մեր, ցուցէք եւ վկայեցէք, եւ մեք զիտասցուք եւ ուղղեսցուք զմեզ. ապա թէ ոչ՝ զի՞նչ է, զի այսպէս չա-

րիք եւ զրպարտութիւնք յառաջ գան 'ի ձերոց կարգաւորաց, եւ զիա՞րդ կարասցուք լուել:

Յետ այս ամենայն բանից՝ պայմանադրեցին 'ի ժողովին, զի զրեսցեն յամենայն քաղաքս, զի սիրով եւ խաղաղութեամբ վարեսցին Հռովմէական Հայք ընդ Հայոց, մինչեւ աստ ինքեանք տացեն զպատասխանի:

Բայց առաւել եւս յաճախեցին խռովութեան առիթք եւ ազգի ազգի զրպարտութիւնք եւ վնասք, մինչեւ եւ զեկեղեցիս մեր փութային գրաւել եւ յափշտակեալ 'ի Գաղատիա եւ 'ի Տրապիզոն, եւ այս ամենայն գրութիւնք հասանէին առ Պօղոս պատրիարք:

Ապա 'ի 23 աւուր մայիսի կրկին կոչեաց Պօղոս պատրիարք զերեւելի իշխանս նոցին, որք էին գերագնիւ Գրիգոր Չէլչպին Տիւզեան, Կարնեցի Մատթէոս, Խըլճեան Անտօն, եւ Թընկըրեան Յակոբ:

Եւ 'ի ժողովին եցոյց նոցա զգանգատանաց թուղթսն, եւ ընթերցան զաղետալի գործսն եւ զմահառիթ վնասս, որք լինէին 'ի Հռովմէական Հայոց 'ի քաղաքս բազումս:

Որոց ընթերցեալ իրաւունս ետուն պատրիարքին, բայց խնդրեցին երթալ խորհիլ, եւ տալ նմա զպատշաճ պատասխանին:

Գնաց Պօղոս պատրիարք 'ի գիւղն Ղուրուչէճմէ 'ի պատրիարքարանն, եւ 'ի 15 աւուր յունիսի կոչեաց զվերոյիշեալ իշխանսն, եւ ստիպեաց զնոսա, զի պատրաստեսցին եւ գայցեն տալ ինքեան պատասխանի, եւ նոքա խնդրեցին համբերել եւ տալ զմիջոց վաթսուն աւուր, որպէս զի խորհեսցին ընդ իրեարս, եւ լրումն տացեն պատասխանւոյ հարցուածոց պատրիարքին:

Յետ վաթսուն աւուրցն կրկին հրաւիրեաց պատրիարքն զնոսա յառաջնումն աւուր հոկտեմբերի, եւ եկին միայն Գրիգոր Չէլչպին Տիւզեան, եւ Կարնեցի Մատթէոս աղայն, եւ մնային ընկերաց իւրեանց, բայց նոքա ոչ եկին, վասնորոյ եւ նոքա տրտնջելով զնոցանէ, խնդրեցին 'ի պատրիարքէն յառաջակայ ուրբաթի ժողովս առնել, եւ 'ի նոյն ատենի զոր ինչ արժանն է՝ խօսիլ եւ տալ զպատասխանի:

Իսկ Պօղոս պատրիարք կամեցեալ յայտ առնել զայս ամենայն ազգի մերում, արար ժողով մեծ 'ի 17 հոկտեմբերի, կոչեաց զքահանայս եւ զիշխանս եւ զգլխաւոր անձինս յամենայն արհեստէ, եւ յայտ արարեալ նոցա զամենայն, որ ինչ մինչեւ ցայն էին խօսակցութիւնք, էառ բացարձակ հաւանութիւն 'ի ժողովոյն տնօրի-

*նեղ զամենայն ըստ իւրումն խոհեմտութեան եւ օրհնեալ զնոսա  
արձակեաց զամենեւին:*

*Ապա յատուկ հրամանագրով իւրով կոչեաց 'ի Հոկտեմբեր 23  
զերկուց կողմանց իշխանաւորս 'ի պատրիարքարանն Ղուրուչէշ-  
մէի, եւ 'ի նմին ատենի արար զայս ատենաբանութիւն:*



## ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս ատենաբանութեան Պօղոսի պատրիարքին,  
եւ կանոնական կոնդակի նորին:

(1817) “Նոգին սուբ որ է աղբիւր սիրոյ եւ խաղաղութեան, տացէ մեզ խորհիլ զհաճոյս իւր, եւ ձեզ լսել եւ ՚ի գործ դնել, որպէս զի բարձցի ատելութիւն եւ խռովութիւն ՚ի պայծառութիւն ազգիս լրութեան:

“Մեծ ուրախութիւն է ինձ այսօր, զի տեսանեմ զսիրտ մեր ամենեցուն վառեալ բարի նախանձու ուղղափառութեան հաւատոյ եւ սիրոյ խաղաղութեան:

“Բայց միանգամայն եւս տրտմութիւն մեծ է ինձ այսօր, զի ընդէ՞ր բնաւ գտաւ սատանայական որոմն ՚ի մէջ ազգիս արմատացեալ, որովհետեւ հարազատ մի ազգ եւ մի արիւն եմք, միոյ մօր սուրբ եկեղեցւոյ զաւակունք՝ միով կաթամբ Լուսաւորչական վարդապետութեան զարգացեալք:

“Ողբամ զանձն իմ, զի վասն մեղաց իմոյ տեսանեմ զազգս իմ բաժանեալս ՚ի միմեանց, եւ թշնամութեան աչօք հայեցողս առ միմեանս:

“Խնդամ, զի թերեւս բարձցի ՚ի միջոյ վէմն գայթակղութեան, եւ հաստատեսցի զլուխ անկեան բաժանեալ որմոցս միացուցիչ սուրբ Լուսաւորիչ հայրն մեր:

“Ձի՞նչ արդեօք կարծէք զարամեանս ազգ եւ զսուրբ եկեղեցին Հայոց, միթէ փոքր եւ արհամա՞րհ գտաւ ՚ի մէջ աշխարհի, ոչ երբէք, քանզի առ ազգս մեր եւ առ սուրբ եկեղեցիս Հայոց խնամք եւ փառքն Աստուծոյ ՚ի վեր է քան զբազում ազգս, մինչեւ գոչել մեր զմարգարէականն բան, թէ մեծ արար տէր զառնել իւր ընդ մեզ:

“Ձի մինչ մեք էաք ՚ի խաւարի եւ ՚ի սուերս մահու կռապաշտութեան, ծագեաց առ մեզ զլոյս ողորմութեան եւ արդարութեան, քանզի յարոյց Աստուած զառաջին քահանայապետն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն, եւ ՚ի ձեռն նորին կանգնեցաւ խորան վկայութեան, տաճար փառացն Աստուծոյ, այս է՝ մայր անթոռն մեր կաթողիկէն սուրբ Էջմիածնի ՚ի դաշտն Արարատեան, յոր միածին Որդին Աստուծոյ իջեալ ոսկի ուռամբ հզօր ձեռին՝

ձեւացոյց լուսով՝ ի պարծանս ազգիս, եւ անխախտ պահեալ է մինչեւ ցայսօր, եւ ապհէ մինչեւ ՚ի կատարած աշխարհի. առ որ յարմարի եւ միւս բան մարգարէին, թէ ոչ այսպէս արար ամենայն ազգաց տէր:

“Ապա զի՞նչ պակաս ունիս քան զայլ քրիստոնեայս, միթէ լեզու ո՞չ ունիս սեպհական հնչմամբ հարստացեալ:

“Գիր ո՞չ ունիս աստուածահրաշ տեսեամբ պարգեւեալ, գիրք ո՞չ ունիս Աստուածաշունչ կտակարանօք եւ պէս պէս գիտութեամբք պերճացեալ, աթոռ ո՞չ ունիս հոգեւոր իշխանութեամբք հաստատեալ, կաթողիկոս եւ պատրիարք ո՞չ ունիս եկեղեցական ուխտիւք զարդարեալ, զիա՞րդ թողեալ զսեպհական հովիւս եւ վարդապետս քո, որք Աւետարանաւն ծնեալ են զքեզ, գնացեալ իբր անազգի յարիս յօտար հարս, վասն է՞ր ամայի լքեալ զհացալից սեղանս հօր քոյ, իբր սովալլուկ դեգերիս առ դրունս այլոց:

“Վասն այսր հաշեալ եւ մաշեալ են սիրտք հարցն մերոց՝ որ նախ քան զմեզ, եւ զմեծամեծ տառապանս կրեալ են վասն սուրբ եկեղեցոց պայծառութեան եւ ազգիս խաղաղութեան, նոյն վտանգ կայ եւ մեր առաջի:

“Ապա քաղցր է ինձ զմահ ճաշակել, քան զազգս իմ յայսպիսի դառն աղէտ տեսանել, եւ ո՞րպէս կարացից համբերել:

“Նա՛ պարտաւորութիւն է ինձ զայսոսիկ ազգելս՝ զոր եթէ լռեմ, վա՛յ է ինձ, եւ եթէ խօսիմ, ոչինչ առաւելութիւն, ըստ որում յաստուածային կողմանէ հովիւ կարգեցայ, հանապազ հնչէ յականջս իմ ահագնալուր ձայն աստուածային, թէ որդի մարդոյ՝ դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայելի:

“Իսկ եթէ վասն այսր զմարմնական ինչ վասն կրեցից յազգէն, եւ այն իսկ ուրախութիւն է ինձ, ըստ որում գերծեալ ՚ի դատապարտութենէս, ազատ գտանիմ ՚ի յաւիտենական դատապարտութենէն, որպէս եւ ասէ Աստուած նոյն մարգարէիւն եւ զմիւս բանն, ապա թէ դու յառաջագոյն պատմեսցես, եւ նոքա ոչ լուիցեն, դու զանձն քո ապրեցուցես, եւ արեան իւրեանց ինքեանք եղիցին պարտական:

“Առ այս միւս եւս յայտնի օրինակ իմն, միոյ հովուի ոչխարք յերկուս ճեղքեալ՝ մինչ զմիմեանս կոտորեն, զի՞նչ պարտ է հովուին առնել, արդեօք փախչի՞լ եւ ՚ի բացու՞ստ դիտել, եթէ ՚ի մէջ հօտին մտեալ ՚ի խաղաղութիւն համոզել:

“Այս օրինակ այժմ եւ իմ առաջի կայ. ոչխարք իմ են յոյժ խոռվեալ եւ աղմկեալ, թէեւ չանսալով խրատուց իմոց առ ոտն կոխեսցեն զիս, սակայն եւ այն փառք է ինձ յայսպիսի ճգունս մեռանիլ, զի ոչ առ հանգիստ մարմնոյ հրաւիրեաց յայս իշխանութիւն պատրիարքական, եւ ՚ի վերայ ազգիս իմոյ ՚ի վիշտս եւ ՚ի տառապանս որբեալ եմ զանձն իմ, եւ չիք առ այժմ քան զայս հարկաւոր, զի այս ախտ օր ըստ օրէ զօրացեալ ճարակի յազգի մերում, մինչեւ անյոյս մնալ եւ ՚ի ճարտարութենէ բժշկաց:

Եւ չիք քան զայս դարձեալ դժուարին, զի կարի քաջ արմատացեալ է, եւ յամենայն տեղիս ոստս արձակեալ, եւ որ առաւել զարմանալի եւ անհերքելի մեքենայ չարին է, զի զայս վէճ եւ զայս երկպառակութիւն հաստատելն՝ իւրաքանչիւր ոք համարի Աստուծոյ հաճոյական պաշտօն ընծայել:

“Եւ այս յիրաւի, կարի քաջ պարտական է իւրաքանչիւր քրիստոնեայ մինչեւ ՚ի մահ մարտնչել եւ պահել զուղղափառ հաւատն, քանզի հաւատքն է գլուխ հոգւոյն, եւ ուղղափառութիւնն է կենդանութիւն նորին, եւ որպէս անդամք մարմնոյ ՚ի գլխոյն առնուն զկենդանութիւն, եւ ՚ի վշտանալ եւ ՚ի բառնիլ գլխոյն՝ վշտացեալ եւ բարձեալ լինի եւ կենանութիւն մարմնոյն, ուստի եւ անդամք մարմնոյն պարտաւոր են պահպանել զգլուխն եւ օգնել առողջութեան նորին:

“Այսպէս եւ իւրաքանչիւր մարդ ամենայն կարեօք՝ գոյիւք՝ եւ ստացուածովք պարտական է եւս եւ ամենայն մասամբք հոգւոյ եւ մարմնոյ՝ պահպանել զգլուխ հոգւոյն, այսինքն զհաւատս քրիստոնէական, եւ զկենդանութիւն նորին զուղղափառութիւն, եւ թէ հնար է զմարմինն եւս փոխանակել, զի հոգին կեցցէ, ըստ որում հոգի առաւել է քան զմարմին:

“Բայց սակայն առ այժմ յայսոսիկ ոչ է այնպէս՝ զոր կարծէքն, նա աւանիկ՝ եկ, երկոքումբք աչօք քննեա եւ տես, զի Հայաստանեայց սուրբ եկեղեցի առողջ ունի զգլուխ հոգւոյն զուղղափառութիւն հաւատոյն, զոր ՚ի սուրբ Լուսաւորչէն է ընկալեալ, եւ ՚ի սահմանի նախկին երից սուրբ ժողովոցն հաստատեալ կայ, եւ ոչ իւրք պակասեալ ՚ի հարկաւորացն առ կենդանութիւն հոգւոյ. ապա թողեալ ձեր զճշմարտութիւնն, եւ ոչ գիտելով զձեր ուղղափառութիւն, զճշմարտութիւն եւ զուղղափառութիւն խնդրէք, ՚ի խնդիր աստուածասիրութեան եղեալ՝ յաստուածատեցութիւն ժամանէք:

“Ապաքէն թողեալ զայս ամենայն, զորս ոչ միայն այժմ, այլ եւ ՚ի սկզբանէ վերատեսչութեանս մինչեւ ցայժմ բազմիցս խոսեալ եմք, եւ այժմ վերստին զնոյն հարցանեմք եւ ոչ դադարիմք ՚ի խնդրելոյ զայս, թէ զի՞նչ կարծիք ունիք զուղղափառութենէ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս, բաց յայսմանէ առ այժմ չունիմք զայլ ինչ ասել ձեզ, եւ խնդրել ՚ի ձէնջ, եւ յորժամ այս հարցմանս տայք զպատասխանին, յայնժամ ըստ կարգի յառաջասցի բանս՝ մինչ ՚ի նպատակ խաղաղութեան ազգիս, առ որ պարտական եմք հոգւով եւ մարմնով ճգնիլ, մինչեւ ՚ի ձեռս բերցուք, զոր միայն խնդրէ Աստուած յամենայն անձնէ, ըստ այնմ, չիք հնար ընդ Աստուծոյ առնել զխաղաղութիւն, մինչեւ առ եղբարս զնոյն ուղղեալ իցեմք:

“Եւ որովհետեւ ցանկայիք ՚ի միասին գալ ընդ գլխաւորս մեր, եւ այնպէս զպատասխանին տալ, ահա այս է այն ատեանն, այս է ժականակն, յայսմ հանգիսի հրամայեցէք, ամենեցուն յայտնի ծանուցէք զմիտս ձեր, զոր ինչ համարումն ունիք վասն սուրբ եկեղեցւոյս Հայոց”:

Յայս վերջացուցեալ զբանս իւր պատրիարքն, լռեաց: Յայնժամ երեւելի իշխանք միւս կողման միաբան աղաղակեցին, թէ մեք եւս ճանաչեմք եւ ընդունիմք ընդհանուր ազգիս Հայոց զառաջին քահանայապետն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն եւ զսուրբ Ներսէս Շնորհալին, սոցին ուղղափառութեանն հետեւիմք, ուստի ՚ի միջի բերցուք զգիտնական ինձինս երկուց կողմանց, զի անաչառ սիրով քննեսցեն եւ ծանուցեն զուղղափառութիւն սուրբ եկեղեցւոյս համաձայնութեամ սուրբ գրոց հարց մերոց, որոց ամենեքեանքս համաձայնեալ հնազանդիմք պատգամաց նոցին:

Եւ առ այս իբր քսան օր միջոց խնդրեցին, որպէս զի իւրաքանչիւր կողմանք զարժանաւոր անձինս որոշեալ՝ ՚ի պայմանեալ օրն անպատճառ ՚ի միասին գայցեն, եւ ըստ այսց գրոց եւ բանից քննեալ եւ ստուգեալ արասցեն զարժանն, եւ այսպէս սիրով վճարեալ այս ժողով՝ արձակեցաւ ՚ի խաղաղութիւն:

Ապա յերրորդում աւուր հրաւիրեաց պատրիարքն զարք եպիսկոպոսունս՝ զվարդապետս՝ եւ զքահանայս՝ եւ զգիտնական անձինս ՚ի մեր կողմանէ, եւ միաբան խորհրդով որոշեաց զպատշաճաւոր անձինս խօսել ընդ գիտնական այնր կողման, որոց կարգ եւ սահման եղ ըստ պայմանի ժողովոյն՝ կանոնական կոն-

դակալ իւրով, եւ ետ կնքել նոցա եւ ստորագրել, զի ըստ այնմ պայմանի խօսեցեալ կատարեսցեն զամենայն ինչ:

Եւ այս իսկ է օրինակ կանոնական կոնդակին պատրիարքին:

“Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Պօղոս արքեպիսկոպոս, եւ շնորհիւ սուրբ Հոգւոյն վերատեսուչ եւ պատրիարք մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ, յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբ ծաներուք սիրելիք մեր ՚ի տէր, զի հովուապետութեան պաշտօնիս պարտաւորութիւն ստիպէ հոգ տանիլ պայծառ հաստատութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, սիրովն Քրիստոսի ՚ի խաղաղութեան պահելով:

“Եւ քանզի յառաջ քան զաւուրս մեր ՚ի ժամանակս նախկին սրբազան պատրիարքաց, եւ յաւուրս պատրիարքութեան մերում, ՚ի բազում քաղաքաց հասանէին յականջս մեր բողոքք եւ աղաղակք անլուելիք, իբր զի՝ համազգային հարագատք՝ միոյ սուրբ աւագանի ծնունդք, եւ միոյ հօր սուրբ Լուսաւորչի ժողովուրդք, ոմանք այլ ընդ այլոյ առմամբ համարին զեկեղեցիս Հայաստանեայց հեռացեալ ՚ի Լուսաւորչական հաւատոյ յուղղափառութենէ, ուստի եւ ՚ի դատապարտութիւն անձանց ՚ի չարիս իրերաց յառաջացեալ գտանին անհիմն հակառակութիւնք, անհաշտ խռովութիւնք, ազգի ազգի վնասք եւ տուգանք, (եւ թէ մարթ է ասել) աստուած ընդդէմ հայհոյութիւնք, տանց եւ եկեղեցեաց աւերութիւնք, մինչեւ անողորմ մահ եղբարք եղբարց պատճառեցին:

“Վասնորոյ եւ մեք ամենախնամ հայրութեամբ մերով ՚ի ջատագովութիւն ուղղափառութեան Լուսաւորչակրօն հաւատոյս մերոյ՝ եւ առ ՚ի բժշկել եւ բառնալ զայս ազգակորոյս ժանտախտս, խորհեցաք եւ խօսեցաք ընդ երեւելի մեծարու անձինս ՚ի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի, եւ սիրով հարցումն արարաք, թէ առ ի՞նչ պատճառ այս ամենայն չարիք լինին, զի՞նչ երկբայութիւն կամ կարծիք զԼուսաւորչաւանդ հաւատոյս մերոյ ունին, զոր մինչեւ ցայսօր անխախտ պահեալ է եւ պահէ սուրբ եկեղեցիս Հայոց, եւ զայս բան իբր միոյ տարւոյ միջոցաւ հարցեալ, զբանաւոր պատասխանի ինչ ոչ ընկալաք:

“Ապա ՚ի Ղուրուչէչմէ ՚ի պատրիարքարանի մերում ՚ի հոկտեմբեր 23, ժողովեալ առհասարակ զգերյարգի իշխանս եւ գերեւելի անձինս երկուց կողմանց, եւ ՚ի նոյն հանդիսի վերստին առաջարկեցաք զնոյն հարցումն մեր:

“Իսկ միև կողմի յարգի երեկելիքն յայլ իմն դարձուցեալ զբանն, խնդրեցին ՚ի մէնջ գնոր իմն խնդիր այսպիսի, թէ յերկուց կողմանց խղաղասէր խոհեմագոյն գիտունք ՚ի միասին նստեալ ՚ի ներկայութեան գերյարգի իշխանաց, առաջի արասցեն զսուրբ Լուսաւորչի ուսուցեալ զուղղափառ հաւատս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, եւ առ այս ամենայն ժողովն հաճեալ միաբերան խոստովանեցան, թէ զսուրբ Լուսաւորչին մերոյ ուսուցեալ զհաւատս խնդրեմք, զոր ինչ սուրբ Լուսաւորիչ եւ սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետք մեր գրեալ են, ամենեցունցս ընդունելի են, ամենեքեանքս այնպէս հաւատամք, ՚ի սուրբ Լուսաւորչէ բնաւին ոչ շեղիմք, զի սոցին միջնորդութեամբ ընկալաք զուղղիղ հաւատս:

“Ուստի եւ մեք սիրով ընկալաք զայս խնդիր բոլոր ժողովոյս, վասնորոյ եւ յատկացուցաք առ այս գործ զայսոսիկ զանձինս:

“Սրբոյ Երուսաղէմի նուիրակ ծերունագարդ Մարկոս արքեպիսկոպոսն, մեր որդի Կարապետ եպիսկոպոսն, Պետրոս վարդապետն, աթոռակալ տէր Մեսրոպն խումխաբուի, աթոռակալ տէր Բարթողիմէոսն Իւսկիւտարու, Թագւոր վարժապետն պատրիարքարանի, եւ նօտարք են Ղալաթիոյ տէր Զաքարիայն, եւ պատրիարքարանի տիրացու Գրիգորն:

“Որք լինիցին միայն բացայայտիչք Լուսաւորչական հաւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս ընդունելի գրովք, եւ ոչ ունին իշխանութիւն բնաւին զտնօրէնութիւն եւ զտնտեսութիւն իմն առնելոյ:

“Որոց պատրիարքական իշխանութեամբ մերով հրաման տուաք, զի յայտնեսցեն զսուրբ Լուսաւորչին մերոյ աւանդեալ զքրիստոնէական հաւատս զհարկաւորս փրկութեան հոգւոց, զոր անկորուստ եւ անխախտելի պահեալ ունի սուրբ եկեղեցիս Հայոց մինչեւ ցայսօր, սակայն որպէս ՚ի մէջ այն ժողովոյն պայման եղաք, այնպէս պատուիրեմք գիտել, թէ ի՞նչ կերպ պարտ է խօսիլ, եւ ո՞ր գրովք ունին յայտնել:

“Կերպ եւ եղանակ խօսելոյ նախապէս հարկիւ պատուիրեմք համայն ժողովելոց՝ մեծաւ խոհեմութեամբ զգուշութիւն ունիլ ընդ առաքելական խրատուն, մի բանակոիւ լինել, եւ մի խոռովեցուցանել զմիմեանս, այլ առանց երգիծանութեան ճշմարտութեամբ քաղցր եւ աստուածային սիրով խօսել, եւ յայտնել զճշմարտութիւն ուղղափառութեան մերս սուրբ եկեղեցւոյ, զի եւ

անուանն Աստուծոյ փառաւորութեան եւ ազգիս շինութեան լինիլիք պատճառ, ըստ պայմանին սահմանելոյ 'ի ժողովին, եւ չունիմք բնաւին հրաման անցանել անդր քքան զայս սահման:

“Գիրք բացայայտիչք ուղղափառ հաւատոյ Հայոց սուրբ եկեղեցւոյս՝ բացի յԱստուածաշունչ գրոցն են յատկապէս այնք, որքք սրբազան հայրապետաց մերոց սահմանադրութեամբ հանապազօր պաշտին յամենայն սուրբ եկեղեցիս Հայոց, որովք խոստովանիմք զուղղափառ հաւատս մեր առաքելական եւ մարգարէական բանիւք հաստատեալ, եւ են այսոքիկ, ժամագիրքն, Շարականն, Խորհրդատետրն, Ճաշոցն, եւ Մաշտոցն, ընդ որս եւ գիրք սուրբ Լուսաւորչին եւ Ընդհանրականն սրբոյն Ներսէսի Շնորհալուոյ, յայսոսիկ գրեանս լուսաւոր մտօք հաւաքեալ գանձին բանք ուղղափառ վարդապետաց եկեղեցւոյ մերոյ հարկաւորքն 'ի փրկութիւն հոգւոց, եւ բաց 'ի սոցանէ չունիմք հրաման զայլ գիրք բերել, քանզի սոքա են հիմունք ուղղափառութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ:

“Այս գրոց բանք ընդունելի են ըստ մտաց հեղինակին դիւրիմաց մտօք՝ նոյն բառիւք՝ ոչ առաւել եւ ոչ պակաս:

“Դիւրիմաց մտօք այն է, զոր բանն ըստ ինքեան առաջին իմացմամբն ցուցանէ, կամ որպէս բազում սուրբ հարք իմացեալ յառաջ բերեն 'ի գիրս իւրեանց, հարկ է եւ մեզ այնպէս ճանաչել զստոյգն, ուստի գմթին եւ գերազանց բանս նոցին պարտաւորիմք ստուգել վկայութեամբ սուրբ հարցն մերոց, որք վասն այնր պարզապէս գրեցին, եւ մի այժմ նորոգ մեկնութիւն տալով բռնաբարել:

“Նոյն բառիւք, այսինքն մի եւ մի լիցի գիտնական ոճիւ աւելի բառ ինչ իբր 'ի յայտնութիւն մուծանել, այլ նոցին բարբառով զնոցայն խօսիմք:

“Այս է ժողովոյն պայմանն, եւ այսքան է մեր այժմ աստ հրաման:

“Ողջ լերուք, եւ հոգին ճշմարտութեան առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ”:

Յամի տեառն 1817, 'ի նոյեմբեր 22

Ի պատրիարքարան ամենայն Հայոց:

Արդ 'ի կատարիլ պայմանադրեալ քսան աւուրց՝ զոր նոքա խնդրեցին, ըստ սեպհական սովորութեան իւրեանց յանհոգս կա-

յին, ոչինչ բան եւ լուր պատրաստութեան իւրեանց ծանուցանէին մերոյն կողման:

Իսկ պատրիարքն 'ի ձեռն Ազնաւուրեան Կարապետ ամիրային ազդ արար նոցա, թէ ահա անցին պայմանեալ աւուրքն, հրամայեսցեն 'ի կատարումն գործոց, զոր 'ի մեծահանդէս ժողովին դաշնադրեալ ուխտիւ յանձն առին:

Բայց նոքա վերստին խնդրեցին 'ի պատրիարքէն, զի թէ հնար է, գրով յայտնեսցեն զմիտս իւրեանց, 'ի ձեռն թղթոյ խօսակցեսցին:

Ընդ այս բնաւին ոչ հաճեցեալ պատրիարքին, գրեաց առ նոսա, թէ կամք իցեն ձեզ, փութասջիք գալ օր մի յառաջ 'ի կատարումն գործոյս, բայց գրութեամբ խօսակից լինելոյ չունիմ հրաման, զի ոչ կամիմ զվիճաբանութիւն, վասն զի անթիւ վիճաբանութեան գիրք մինչ ցայժմ ոչինչ զօրեցին բառնալ գերկառակութիւն ազգիս, մի խօսեսցի գրիչ 'ի ձեռին, այլ լեզու 'ի բերանի յանդիման ամենեցուն, զի եւ զայս պահանջէ բան հաւատոյ համարձակ խօսիլ եւ յայտնել ունկնդրաց զճանաչողութիւն սրտի եւ մտաց:

Ընթերցեալ իշխանաց նոցին զգրութիւն պատրիարքին, եւ յորդորանօք եւ սպառնալեօք չեղեն բաւական առաքել զկարգաւորս իւրեանց 'ի պատրիարքարանն առ 'ի յայտնել գողողափառութիւն հաւատոյ իւրեանց, զոր պահանջէին 'ի մէնջ, ուստի եկեալ առ իշխանապետս մեր 'ի շուկայն 'ի սենեակ նոցին, սկսանին գանգատանօք ամբաստանել զկարգաւորաց իւրեանց ասելով, թէ նոքա բնաւին ոչ կամին գալ եւ երեւիլ առաջի ձեր, եւ երես առ երես խօսիլ, տէր հատուցէ նոցա զարժանն, ուստի զոր ինչ կամի պատրիարքն առ մեզ, արասցէ, պատրաստ եմք ասեն 'ի բանտս, 'ի գանս, եւ յայլ զինչ է իցէ պատիժս տառապիլ, եւայլն:

Ջայս լուեալ պատրիարքին, եւ զայրացեալ յոյժ ընդ արհամարհութիւն եւ զանցառութիւն նոցին, գրեաց առ ամենայն արհեստաւորս յերկուց կողմանց միանգամայն ժողովիլ 'ի պատրիարքարանի, եւ այս վերջին ժողով եղեւ 'ի դեկտեմբեր 12, ուր գումարեալքն էին աւելի քան զյիսուն թուով 'ի նոցանէ յիւրաքանչիւր արհեստէ, եւ սկսաւ յատենաբանութեան իւրում խօսիլ այլազգական բարբառով առ 'ի դիւրաւ իմանալ նոցին, եւ պատմեալ զամենայն, որ ինչ մինչեւ ցայն վայր անցեալ բանք եւ կոչ-



մոռնք եւ հրաւէրք սիրոյ, սկսաւ ապա գանգատանօք խօսիլ զապստամբութենէ նոցին, եւ խնդրել 'ի ժողովոյն զպատասխանի:

Ձոր լուեալ նոցա՝ որք էին 'ի ժողովին 'ի կողմանէ նոցին, սկսան աղաղակել միաբան եւ ասել. իրաւունս ունիս հայր սուրբ, զոր ինչ կամիս առնել ընդ նոսա, զի դու յօգուտ ազգիս փութացար մինչեւ ցարդ տքնիլ եւ աշխատիլ, եւ նոքա եղծանել եւ խոչընդոտն լինել քեզ վաստակեցան եւ վաստակին, եւ բազումք 'ի նոցանէ սկսան արտասուել առաջի պատրիարքին, զոր տեսեալ մերայնոց՝ ցաւակից եղեն ընդ նոսա, եւ պատրիարքն օրհնեալ զնոսա, արձակեաց զամենեսին խաղաղութեամբ 'ի տեղիս իւրեանց:

Իսկ նոցա գնացեալք, եւ իւրաքանչիւր արհեստաւորք առանձինն ժողով արարեալք 'ի տեղիս իւրեանց, պատմէին մի առ մի զամենայն զոր լուանն 'ի պատրիարքէն, եւ յորդորելով զմիմեանս՝ ժողովին աւելի քան զերեք հարիւր հոգիս 'ի Բերա յԵրրորդութեան եկեղեցւոջն Լատինացւոց, եւ կոչեն անդ զկարգաւորս իւրեանց, զի խօսեսցին եւ հարցցեն ցնոսա, թէ ո՞ր փախուտ տան 'ի գնալոյ եւ վասն 'ի խօսելոյ ընդ գիտնական վարդապետացն Հայոց:

Բայց 'ի սաղրելոյ կարգաւորացն սպասաւորք եւ քահանայք եկեղեցւոյն արտաքս վանեն զնոսա բռնութեամբ եւ գանիւ, ասելով, թէ այս եկեղեցի է Լատինացւոց, եւ չէ ձեզ տեղի գումարելոյ եւ խորհուրդ առնելոյ:

Եւ նոքա պատասխանի տան աղաղակելով, եւ ասեն, թէ յորժամ նուէրս պահանջէք 'ի մէնջ, եկեղեցին ձեր է ասէք, եւ 'ի պահանջել հարկին խորհուրդ առնելոյ՝ արտաքս վանէք զմեզ յեկեղեցւոյ, զի՞նչ այս քրիստոնէութիւն, ո՞րպիսի հովուութիւն, եւ զի՞նչ անիրաւ զրկողութիւն է զոր առնէք ընդ մեզ:

Եւ քանզի բազմութիւն ժողովրդեան մնաց արտաքս եկեղեցւոյն, եւ անձրեւն նեղէր զնոսա առ ժամն, անճարացեալ նոցա գնան 'ի տուն պարոն Աթանասի գրագրին Տիւղեանց, եւ 'ի սրահ տանն գումարեալք տան բերել անդր զկարգաւորս իւրեանց քառասնիւ չափ, եւ սկսանի ժողովն աղաղակել եւ ասել. ո՞չ ապաքէն դուք էք, որք զօր ամենայն նախատինս ծանունս զնելով 'ի վերայ ազգին Հայոց, պախարակէիք զնոսա, եւ հերձուածողս եւ հերետիկոս ճանաչել զնոսա հրամայէիք մեզ, եւ ահա կոչէ զձեզ ազգն ոչ իշխանութեամբ եւ բարեկամութեամբ, այլ սիրով եւ

հանդարտութեամբ, ընդէ՞ր ոչ երթայք ապացուցակ, զի յայտնի արասջիք զճշմարտութիւնն, ո՞չ ապաքէն եւ պաշտամանց ձերոց պայման զայս պահանջէ, զի եւ մահ կացցէ ձեր առաջի, չէ պարտ ձեզ խուսափել, այլ զմահ յանձն առնուլ վասն հաւատոյն Քրիստոսի:

Ադ՝ ահա չիք մահ եւ ոչ երկիւղ ինչ, այլ սէրն Քրիստոսի կոչէ զձեզ, ընդէ՞ր զանգիտէք, մեք աշխարհական մարդիկ եմք, եւ որդւոց եւ ընտանեաց տէր, եւ ոչ կարեմք ՚ի պատճառս ձեր անկանիլ ՚ի փորձութիւնս եւ ՚ի տուգանս, զայս եւ որ սոցին նմա են բանք, խօսին ժողովուրդք ընդդէմ կարգաւորաց իւրեանց, եւ անհնարին սրտմտութեամբ ելանեն եւ զնան ՚ի տունս իւրեանց:

Իսկ նոցա ռիացեալ ընդ այս սատանայական քինու, եւ վրէժս առնուլ կամեցեալ ՚ի Հայոց, ՚ի ձեռն չարագրգիւռ եւ քսու արանց թիկնապահից իւրեանց Հատին քահանայից, ամբաստան լինին զազգէս մերմէ առ փոխանորդն Խաբուտան փաշային, որպէս թէ ժողով արարեալ Հայոց կոխեցին զեկեղեցին Հատինացւոց, եւ առաջադրեալ են նաեւ կոխել զպալատ դեսպանին յայսմ գիշերի:

Եւ նորա հաւատացեալ, բազմութեամբ զօրաց իւրոց գայ ՚ի նմին գիշերի, եւ յանկարծուստ մտանէ ՚ի սուրբ Երրորդութեան եկեղեցին մեր ՚ի Բերա, որպէս թէ անդ գումարեալ իցեն Հայք:

Եւ ոչ զոք գտեալ, այսր անդր հացուփորձ առնէ, եւ քննէ, զի սուտ են բանք նոցին բոլորովին, եւ զուր զրպարտութիւն, դառնայ ՚ի տեղի իւր զայրացեալ:

Լուեալ զայս խարդախութիւն նոցին պատրիարքին, եւ ժողով արարեալ ընդ իշխանաց ազգիս, վճռեցին լուել առ ժամն, եւ չխօսել ինչ, այլու՞մ ժամանակի թողեալ զկարեւոր զայս գործ սիրոյ եւ միաբանութեան, եւ մնաց այսպէս անկատար, որ ամենեցուն փափաքելին էր տեսանել մարմնոյ աչօք զկատարումն այսր աստուածահաճոյ փափաքանացս եւ գործառութեան:

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս գործոց Պողոսի պատրիարքին:

**Օ**րէն էր 'ի Կոստանդնուպօլիս, զի 'ի վախճանիլ ծխատէր քահանայի միում, ժողովուրդք նորին գրաւէին յիրաւոնս պատրիարքին, որ վաճառէր զնոսա այլում քահանայի, եւ պարտիք այն վախճանեալ քահանային մնային 'ի վերայ որդւոց եւ ընտանեաց նորին, որք անպատմելի խեղճութեամբ տուայտէին 'ի ներքոյ այնց պարտուց անհնարին տառապանօք:

Ի խօսել վասն այսր Պողոսի պատրիարքին ընդ Մարտիրոս քահանայի ուրուք ամօք ինչ յառաջ քան զնստիլ իւր յաթոռ պատրիարքութեան, խոստանայ ձեռագրով իւրով, զի եթէ Տէր յաջողեսցէ լինել ինքեան պատրիարք, բարձցէ զայս անիրաւ սովորութիւն 'ի Կոստանդնուպօլսոյ, այնպէս զի ժողովուրդք վախճանեալ քահանային վաճառեսցին 'ի մէջ քահանայից, եւ դրամքն տացին որդւոց եւ ընտանեաց վախճանելոյն, որով եւ նոքին մի լիցին ողորմելիք եւ տառապեալք 'ի ներքոյ ծանր պարտուց:

Զայս ձեռագիր Պողոսի առեալ տէր Մարտիրոս քահանայ, Հռչակեաց յամենայն եկեղեցիս, որք ուրախացեալք անպատմելի խնդութեամբ սկսան գովաբանել զՊողոս եպիսկոպոս, եւ պարսաւել զԱբրահամ պատրիարք պէսպէս մեղադրութեամբ վարուց եւ բարուց:

Եւ մինչ յաջողեաց Աբրահամու ընկեցիք լինիլ յաթոռոյն, եւ Պողոսի ընտրիլ պատրիարք, 'ի նմին ժողովի ուր իշխանապետք ազգիս հաւաքեալ ընտրել կամէին պատրիարք զմի ոք յեպիսկոպոսաց, քահանայք միաբերան աղաղակեցին ասելով, թէ զՊողոս եպիսկոպոսն Անդրիանապօլսեցի զփոխանորդն սրբոյ Երուսաղէմի խնդրեմք մեզ լինել պատրիարք, զի է այր շահեցող եւ խոհական եւ իրաւասէր:

Զոր լուեալ որոց ժողովեալքն էին յայն ատեան, որք եւ ինքեանք 'ի նոյն միտս էին, դիւրաւ յաջողեցաւ նոցա ընտրել զնա առանց երկպառակութեան, եւ կնքեցին ամենեքին ընդունիլ զնա պատրիարք:

(1819) Այլ յետ չորից ամաց պատրիարքութեան նորա, իբրեւ վախճանեցաւ քահանայ ոմն 'ի Պալատ տէր Գէորգ անուն, եւ ժողովուրդք նորին գրաւեցան 'ի պատրիարքէն ըստ առաջնոյ սովո-

րութեանն, եկեալ տէր Մարտիրոս Քաջանայ անձամբ անձին առ Պօղոս պատրիարք, յիշեցոյց նմա զուխտ իւր եւ ձեռագիր, որ ոչ կատարեաց զխոստումն իւր, զոր ուխտեաց ձեռագրով իւրով:

Լուեալ զայս Պօղոսի պատրիարքին, եւ պատասխանի տուեալ նմա, ասէ, զոր ինչ տեսի եւ գտի յառաջնոց պատրիարքաց, ոչ կարեմ փոփոխել, եթէ իրաւացի եւ եթէ անիրաւ: Տէր հատուցէ, որոց սահմանեալք են զայս սովորութիւն:

Այս բան տարածեալ 'ի մէջ քաջանայից, զղջացին ամենեքին, որք աղաղակեցին եւ խնդրեցին զընտրութիւն նորա, եւ սկսան թշնամանալ նմա եւ պարսաւել, եւ ոմանք 'ի նոցանէ անխոհեմութեամբ ձեռն 'ի գործ արկեալ, ետուն առ արքայ զգիր աղերսանաց, յորում գրեալն էին, թէ Պօղոս պատրիարք մեր եւ Ազնաւուրեան Կարապետ գլխաւորն հատավաճառաց՝ երկոքին այսոքիկ կեզեքեն զմեզ եւ զժողովուրդս մեր, զերծո զմեզ տէր արքայ՝ 'ի բռնակալութենէ սոցին:

Ընթերցեալ արքայի զայս գիր, յանձն արար մեծի եպարզութիւն, եւ յայնմ ժողովի զլացաւ Պօղոս պատրիարք զձեռագիր իւր, զոր տուեալ էր յառաջ քան զնստիլ իւր յաթոռ պատրիարքութեան, եւ գեղեցիկ ատենախօսութեամբ իւրով որսաց զամենեսին 'ի կողմն իւր:

Յայնժամ ժողով իշխանաց միաբան հաւանութեամբ վճռեցին մեղապարտ լինել քաջանայիցն, եւ ծանուցեալ 'ի դուռն արքունի, աքսորեցին զտէր Զաքարիա Պէյօղլուի, զտէր Վրդանէս եւ զտէր Մկրտիչ քաջանայսն Պալատու, եւ զոմանս զհամախոհս նոցին արգելին 'ի քաջանայագործութենէն զաւուրս երեսուն, զի ապաշխարեսցեն:

Բայց յետ ամսոց ինչ դարձան ամենեքին 'ի տեղիս իւրեանց, եւ մնաց այն առաջին սովորութիւն յաւուրս պատրիարքին Պօղոսի, եւ ոչ փոխեցաւ ինչ:

Ի սմին ամի առաջնորդն Թրակիոյ ծերունի Յակոբ եպիսկոպոսն վախճանեցաւ իբրեւ հարիւր եւ քսան ամաց, եւ եղաւ 'ի տեղի նորին Առաքել վարդապետ վէքիլն պատրիարքարանի, իսկ վէքիլ պատրիարքին եղեւ Յակոբ եպիսկոպոսն Ագէտհիրցի 'ի միաբանութենէն սրբոյ Երուսաղէմի, որ յետ ժամանակաց խառնեցաւ յաղանդս Լուտերականաց, եւ եղեւ գօնսօլ Անգլիացւոց յԱսկաղոն քաղաքի:

## ԳԼՈՒԽ Ի.

*Յաղագս ապստամբութեան Ուլնեցւոյ Հայագգեաց, եւ մահամերձ վտանգի տեսուն Կիրակոսի կաթողիկոսին Ստոյ:*

(1819) **ՋԱՅՍՈՒ** ժամանակաւ Ուլնեցիք՝ որք են ազգաւ Հայ, եւ քաջավարժք 'ի մրցմունս արիական պատերազմաց, կորովիք, եւ կիրթք յաշտանակել 'ի ձի, եւ 'ի ձգել դէպ ուղիղ 'ի նպատակն զհրացանս եւ զատրճանակս:

Սոքա 'ի վաղ ժամանակաց հետէ սովորեալք յապստամբութիւն, 'ի սմին ամի բոլորովին 'ի բաց քերեցին յանձանց իւրեանց զհպատակութիւն արքայի, եւ զարքունի հարկն՝ որ պարտ էր նոցա ամ յամէ հատուցանել արքայի ընդ ամենայն զվաթսուն հազար դահեկան ըստ վաղեմի սովորութեան, որ եւ բաղդատելով ըստ այժմեան սովորական հարկին, ոչինչ իմն է:

Իսկ նոքա սիրելով զապստամբութիւն եւ զինքնագլուխ հասարակապետութիւն իւրեանց, եւ յիշելով զվաղեմի թավաւորական ազատութիւն իւրեանց, մանաւանդ զի եւ գաւառ սոցին լինելով տեղի անառիկ եւ դժուարամատչելի, ընդ ապացելոց յամենայն կուսէ, եւ 'ի գազաթ լերանցն դաշտ ընդարձակ եւ բազմաբեղուն արգասեօք ցորենոյ եւ գարւոյ եւ այլոց պիտանեաց, ապաստանեալք սոքա յանառիկ դիրս երկրի իւրեանց, եւ 'ի քաջավարժ կորովութիւն անձանց իւրեանց, վստահացան բնածին իմն գօրութեամբ, եւ սկսան չտալ արքայի յայնմհետէ զսովորական հարկ իւրեաց:

Յառաջ քան զամս ութ, տէր Կիրակոս կաթողիկոս Ստոյ՝ առեալ հրաման յարքունի դրանէ, նորոգեաց զկաթողիկոսարանն իւր եւ զմեծ եկեղեցին յանուն սրբոյն Սոփիայ, այն է՝ իմաստութիւն որդին Աստուծոյ, եւ քակեալ զհին շէնն, կանգնեաց նորոգ 'ի հիմանց, եւ զչրջապատ նորին բարձր պարսպաւ ամրացուցեալ, սքանչելարուեստ յօրինաց ըստ նմանութեան սրբոյ Էջմիածնի:

Ջայս գործ նորոգութեան կաթողիկոսարանին եւ եկեղեցւոյն առիթ գտեալ մեծանուն բղեշխն Բերիոյ, գրեաց ամբաստանութիւն առ արքայ, թէ կաթողիկոսն Ստոյ մտաբերէ, եւ ահա այս ութ ամ է, զի պատրուակաւ շինութեան վանից կառուցանէ զամրոց մեծ 'ի Սիս, աշտարակս անմատչելիս եւ բրգունս բարձրա-

բերձս 'ի նմա հաստատեալ, եւ զհայկազուն բնակիչս Զէյթուն քաղաքի՝ որք անդստին թեկնածեն ընդդէմ արքայի, գնացեալ միաբանեաց ընդ իւր, եւ զհամազգիս իւր՝ որ 'ի Կիլիկիա, յինքն յանկուցեալ հանդերձեալ է վտարանջել, եւ եթէ ոչ վաղվաղակի կարճեսցի 'ի կենաց, աշխատ առնէ զմեզ պատերազմու:

Ընթերցեալ զայս արքայի, գրեաց հրովարտակ առ բղեշխն Գերմանիկ քաղաքի, փութանակի ունել զկաթողիկոսն Սոյ Հնարիւք իմն, եւ անհրաժեշտ մահուամբ բառնալ զնա 'ի կենաց, եւ զաթոռն սուր հիմն յարեւու արկանել իբրեւ ամրոց ապստամբաց, եւ զքաղաքն Զէյթուն ամենայն բնակչօքն հանդերձ մատնել 'ի սուր եւ 'ի գերութիւն:

Չայս ամենայն ոչ գիտելով երբէք երանելի կաթողիկոսն տէր Կիրակոս, այն ինչ 'ի պէտս նպաստից շրջէր անկասկած յայնոսիկ կողմանս, ազդ առեալ բղեշխին, առաքեաց սպասաւորս, եւ կոչեալ առ ինքն, ծանոյց նմա զհրամանն արքունի:

Լուեալ զայս երանելոյն, յողոց եհան, արտասուեաց, եւ միամտութեամբ սրտի իւրոյ եւ հաւաստի վկայութեամբ արժանահաւատ արանց՝ եցոյց զիւրն անմեղութիւն, մի՛ զի ոչ աշտարակ անմատչելի եւ ոչ բրդունս բարձրաբերձս շինեալ էր, այլ միայն զվանս իւր եւ զեկեղեցին նորոգեալ, եւ այն հրովարտակաւ արքայի:

Եւ երկրորդ՝ զի չէ երբէք համամիտ եւ միախորհուրդ ընդ Զէյթուցոց, այլ հաւատարիմ հարկատու ծառայ արքայի՝ իւրով իսկ համօրէն վիճակաւն:

Եւ այսպէս բազում բանիւք աղաչանաց եւ միջնորդութեամբ բարեկամաց տուեալ նմա 'ի ծածուկ զամենայն՝ զոր ունէր առ ինքն զոսկի եւ զարծաթ, եւ զհանդերձս պատուականս, եւ զայլ եւս բազում արծաթ, զոր շտապ տագնապաւ 'ի հաւատացելոց բնակչաց քաղաքին ժողովեաց, հազիւ հազ կարաց հաճել զնա, զի գրեացէ վասն այսր 'ի դուռն արքունի զանմեղութենէ իւրմէ, եւ մինչեւ 'ի դարձ պատասխանելոյ նորին սպասեացէ, եւ եթէ չիցէ հրաման յարքունուստ վասն ազատութեան իւրոյ, յայնժամ սպանցէ զինքն չարաչար:

Եւ յայսմ միջոցի ժամ գտեալ երանելոյն, ծանոյց գրով առ իշխանաւորս ազգիսս 'ի Կոստանդնուպօլիս, զի դարման ինչ աղետիցս գտանել մարթասցին, ոչ վասն անձին իւրոյ ազատութեան, զոր յօժար էր զոհել ընժ քաջ հովուին պատկերի վասն

փոքրու հօտին, որոց պարգեւեալն էր տեսուչ 'ի յԱստուծոյ, այլ մանաւանդ վասն սրբոյ աթոռոյն՝ որ հանդերձեալ էր կործանիլ իսպառ, եւ վասն բիւրաւոր բազմութեան հաւատացելոց, որք մատնւոց էին 'ի կերակուր սրոյ:

Փութանակի հասեալ մահաշունչ լրոյ ապաժոյժ աղետիցս 'ի Կոստանդնուպօլիս, հանդերձ գրովք երանելոյն, ապշութիւն կալաւ զիշխանաւորս ազգիս, եւ բարեջան փութով Պօղոսի պատրիարքին՝ զեղանակ հնարից ազատութեան նորին եւ բազմութեան հաւատացելոց 'ի խնդիր եղեն գտանել:

Աստ էր տեսանել զգթութիւնն Աստուծոյ եւ զառատ մարդասիրութիւն նորա, զի որ ոչ ննջէ պահապանն Իսրայելի Ակնն ամենատես, գթութեամբ հայեցաւ 'ի մնացուածս ժողովրդեան իւրոյ, եւ գերծոյց զնոսա 'ի մահաբեր վտանգէն:

Զի ինքն իսկ Գրիգոր Զէլէպի Տիւզեան ելեալ 'ի ժողովոյ պատրիարքարանին յորում խորհեցան ամենեքին երթալ առ մի մի 'ի նախարարացն արքայի, զնաց եւ ինքն 'ի պալատն արքայի, եւ բազմօք ապացուցութեամբ վկայեալ զանմեղութիւն կաթողիկոսին եւ զսուտ ամբաստանութենէ թշնամեաց, զիջոյց զբարկութիւն արքայի, սոյնպէս եւ այլք ոմանք յիշխանաւորաց ազգիս, քաղցրացուցին զսիրտ աւագորերոյն արքունի, ինքեանք ազգովին երաշխաւոր լինելով վասն անմեղութեան նորին հանդերձ պատրիարքաւն Պօղոսիւ:

Ուստի եւ հրամանաւ արքայի առաքեցաւ հրովարտակ յարքունի դրանէ 'ի Գերմանիկ քաղաք, եւ ածին զկաթողիկոսն 'ի Կոստանդնուպօլիս, եւ տարեալ առ Բէյիզ էֆէնտին եւ առ փոխանորդն եպարգոսին՝ եւ առ այլ մեծամեծս, հարցին քննեցին զայնը ամենայնէ, զորմէ լուեալն էին, եւ ծանուցեալ՝ եւ ստուգեաց զանմեղութիւն նորին առաքեցին առ պատրիարքարանն կալ մնալ առ ժամանակ մի՝ յուսադրելով զնա ազատիլ 'ի վտանգէս, եւ առնուլ զհրովարտակ ներողութեան, եւ դառնալ անդրէն 'ի Կիլիկիա:

Յետ աւուրց ինչ կոչեալ վերստին 'ի դուռն արքունի, հրամանաւ արքայի յորդորեցին զկաթողիկոսն աւագորեարն արքային, զի ինքն ամ յամէ հատուցէ տէրութեանն զհարկն Զէյթունցւոց յիսուն հազար դահեկան, եւ ինքն ժողովեսցէ եւ առցէ 'ի նոցանէ:

Ետ պատասխանի կաթողիկոսն եւ ասէ, նոքա արքա ապստամբք են եւ ոչ հնազանդին, ոչ տէրութեան հրամանի ձերոյ եւ

ոչ իմուժս անարգութեան, ոչ կարեմ զայդ առնել, եւ ոչ վասն նոցա հատուցանել ինչ:

Յայնժամ ասեն աւագորեարն, մեք հաճեսցուք զարքայ, եւ քսան հազար դահեկան ամ յամէ հատո՛ վասն նոցա զվարձս հարկի նոցա:

Ասէ կաթողիկոսն, եւ ոչ մի դրամ վասն այնց ապստամբաց յանձն առնում տալ արքայի, ես զիմ եւ զիմոյ վիճակի հպատակաց քոց՝ ամ յամէ հատուցանեմ տէրութեան ձերում զպահանջեալ հարկն արքայի, որպէս եւ հատուցեալ եմ մինչեւ ցայսօր, եւ վասն նոցա եւ ոչ մի փող կարեմ հատուցանել:

Լուեալ զայս ամենայն մեծամեծացն արքայի՝ եւ իրաւացի կշռեալ զբանս նորին, գրեցին առ արքայ զամենայն, եւ ընկալեալ յարքայէ զհրաման, ետուն հրովարտակ ներողութեան, զի դարձցի անվնաս յաթոռ իւր:

Յայնժամ եղեւ ուրախութիւն մեծ ազգիս, եւ կամեցան, զի ժամանակ ինչ մնասցէ երանելին աստ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ յամենայն եկեղեցիս պատարագեսցէ եւ օրհնեսցէ, եւ ապա զնասցէ յաթոռ իւր, եւ վասն արգելին զնա ՚ի զնալոյ, եւ մնաց աստ ՚ի Կոստանդնուպօլիս:



## ԳԼՈՒԽ ԻԱ.

Յարազս կործանման տանն Տիւզեանց, եւ բանի միաբանութեան Հայոց ընդ Հռովմէական Հայս:

(1819) Ի սմին ամի յամսեանն օգոստոսի 29 չարաբաստ եւ աղետալի դիպուած պատահեաց մեզ:

Քանզի հայրենասէր ազնուականքն Տիւզեան՝ որք ՚ի նախնեաց ՚ի յաջորդս Օսմանեան՝ սեպհականեալ էին զարքունի փողերանոցին գործակալութիւն, այժմ ՚ի դրդմանէ Հալէթ էֆէնտի անուն յիսերիմ թշնամոյ քրիստոնէից, իբրեւ բազմագումար դրամոց պարտապանս եւ անհաւատարիմս ՚ի գանձն արքային՝ եղան ՚ի բանտի ՚ի տալ զհաշիւ:

Երեւելի իշխանք ազգիս ոչ միաբանութեամբ զինեցան ՚ի պաշտպանութիւն պանծալի տանն այնորիկ՝ կալով առ տէրութեանն երաշխաւոր պարտուց նոցա, զորս դիւրաւ կարէին վճարել, եթէ ելանէին ՚ի բանտէ ազնուասերունդ պայազատքն:

Վասնորոյ նախարարք թագաւորին զնացին ՚ի տունս նոցա եւ ամենայն մերձաւորաց նոցին, եւ զինչս եւ զստացուածս նոցա ետուն յաճուրդ հանել վաճառել, եւ զպարտիս նոցա լնուլ ՚ի գանձն արքունի:

Եւ ահա տեսին ՚ի տունս ամենեցուն նոցա յատուկ սենեակս պատարագամատոյց խորանի, որ դէմ ընդդէմ ներհակ է կրօնից Տաճկաց, եւ մահապարտ կացուցանէ իբրեւ զհայհոյիչս դենի իւրեանց՝ որ առանց հրամանի եկեղեցիս կառուցանէ:

Վասնորոյ զգգեստս պատարագի եւ զպատկերս եւ զայլ անօթս սրբութեան՝ զորս գտին անդ, զամենեսին առաքեցին առ պատրիարքն մեր, որք էին եօթն բեռինս:

Եւ պատուիրեցին իբրեւ ՚ի գին նոցա հաւաքել ՚ի Հռովմէական Հայ ժողովրդոց հազար քսակի դահեկանս, եւ տալ ՚ի փողերանոցն արքունի, եւ նա արար:

Եւ ՚ի հոկտեմբեր 4, յաւուր տօնախմբութեան եօթանասուն երկու աշակերտացն Քրիստոսի, երեք եղբարքն բարեյիշատակք Գրիգոր, եւ Սարգիս՝ գլխատեցան առաջի մեծի եղբօրորդի նոցա Մկրտիչ, կախեցան ՚ի պատուհանէ ծովեցերեայ յարկի իւրեանց յեկնիգիւղ:

Ողբաց ազգն համօրէն ընդ մահ պայազատացս, այլ 'ի Գանտիլլի 'ի տան Անտոնի Տավուտեան խնջոյս կազմէին Թընկըրեան Յակոբ եւ Յովսէփ, Գըլճեան Գրիգոր եւ այլ հարազատ որդիք Գոլէճեան քահանայից ընդ մահ պաշտպանաց Աբբայեան ուխտին:

Իսկ մնացեալ երեքին եղբարք նոցա Կարապետ եւ Յակոբ եւ Պօղոս՝ աքսորեցան 'ի Կեսարիա, եւ Ալեքսանեան Յովհաննէս քեռայրն Տիւղեանց եւ երեք եղբարք նորա 'ի Նիյտէ: Չամչեան Յովսէփ 'ի Միտիլլի կղզին, Մարիանէ կին հօրեղբօր Տիւղեանց՝ հանդերձ որդւով իւրով 'ի Ստանքէօյ, Ազնաւուրեան երեք եղբարք յիլիմեա, եւ Քիւլչիկ Յովհաննէս 'ի Հոռոս, Թընկըրեան Յարութիւն եւ Աթանաս 'ի Կիպրոս, եւ հայր Ստեփանոս վարդապետն՝ որ գտաւ 'ի նմին գիշերի 'ի տանն Տիւղեանց, աքսորեցաւ յիլիմեա:

Բացաւ պատրուակն գաղտնի, եւ ակն յայտնի ծանուցաւ տէրութեանն, թէ անձնիւր Հոռովմէական Հայք ունին 'ի տունս իւրեանց զեկեղեցիս, եւ չեն ընդ Հայս միաբան:

Ուստի սաստիկ հրաման առաքեաց առ պատրիարքն մեր բառնալ զայս բաժանումն, զի մի է մեզ ասէ ծանօթ ազգն ողջոյն, եւ զոր անհնազանդ գտանին ինքեան՝ ծանուցանել 'ի դուռն:

Արդ արքունի ճարտարապետ Գրիգոր աղա, եւ Պէզճեան Յարութիւն աղա, որ առաջնորդութեամբ Գրիգոր աղայի յաջորդեաց գտեղի Տիւղեանց 'ի փողերանոցն, սոքա անզուգական սիրելիք էին միմեանց, եւ միախորհուրդ եւ միասիրտ գտան յայս գործ եւս:

Քաջ խելամուտ էին անցից եւ մտաց երկուց կողմանց եւ գիտէին, թէ բանակուածիւն հովուաց եւ առաջնորդաց է, որ զպարգամիտ դառինս միակ հօտին Քրիստոսի 'ի միմեանց հազորդակցութենէ խորչեցուցանէ. վասն որոյ փոյթ կալան ազգասէր բարոյիւք եւ երկիւղած սրտիւք յեկեղեցիւոյն Քրիստոսի զերկպառակութիւնն բառնալ:

Եւ նախ թախանձէին զպատրիարքն մեծի մայրաքաղաքիս՝ զՊօղոս արքեպիսկոպոսն քաջախորհուրդ, զի հովուական ցպովն յուշիկ 'ի բաց խրտուցելոյն զհետ ընթացի, մեղմաձայն սուլեսցէ, 'ի շրթունս բարբառեսցի, սրինգ հարկանիցէ, դարձուցանել զնոսա 'ի հօտ խաչանց իւրոց:

Արդարեւ Ռոբոլամ արքայ խստապարանոց գտաւ առ ժողովուրդն 'ի հնումն, եւ զի՞նչ օգուտ գործեաց թագաւորութեան իւրոյ եւ հասարակութեան:

Եւ որ 'ի նորումս գաւազան երկաթի առին 'ի ձեռին, եւ փայլատակեցան կայծակնացայտ բարկութեամբ 'ի վերայ ժողովրդոց, արդեօք ամբողջութեան հայրենի ազգիս նպաստամատո՞յց գտան, ոչ բնաւ, զի ոց միայն զրուցեալսն իսպառ վարատեցին, այլ եւ զժողովեալսն մոլորեցուցին:

Արդ վերոյիշեալ արքունի ճարտարապետ Գրիգոր աղա եւ Յարութիւն աղա Պէզճեան իշխանքս հայրենասէրք, խորհրդակից ինքեանց գտին եւ զճանիկ աղա հատավաճառ եպարգոսին, եւ զՀաճի Յովհաննէս, եւ զՅարութիւն աղա, եւ զՅակոբ աղա Մանանեան, այլեւ սաստկութեամբ բանից սպառնացան Ազնաւուրեան Կարապետ աղայի՝ որ էր հատավաճառաց վերակացու եւ համախոհ պատրիարքին, զի անխարդախ լիցի 'ի բանս, եւ 'ի գլխաւորել զազգային միաբանութիւնս ամենայն հաւատարմութեամբ տնօրինեսցէ:

Ի սոյն միտս եւ 'ի խորհուրդ բազումք 'ի բարեսիրաց ազգիս վառեալ էին բարենախանձ փութով:

Եւ որք 'ի նոյն առ անգիտութեան ատելութեամբ բերէին, սիրայորդոր յօժարութեամբ կամակից եղեն նոքա: Վասն որոյ յամենեսին 'ի նոսա պտուղ հոգւոյն, սէր խնդութիւն եւ խաղաղութիւն թագաւորէր, եւ արգասիք չարեաց մահաբերին՝ ատելութիւն եւ թշնամանք այլովքն հանդերձ տեղի ետուն:

Բայց ես դարձայց 'ի կանխացեկոյց տեղեկութիւն զսարտուցելոցն 'ի մէնջ վարդապետաց բաժանմանէ 'ի կարգս եւ 'ի կրօնս, որք կարեւորագոյն են յառաջիկայ պատմութեանս հեշտընկալ իմացումն:

Առաջին երեւելիքն են Գմլէճեանք, որք ունին դպրոցս 'ի Հոռովմ, որ 'ի լեզու Լատինաց Գոլէճ անուանի, ուր գնացեալք մանկունք ոմանք հայկազունք, ուսանին զվեր 'ի վերոյ գիտելիս ինչ բարբառոյն Հայոց եւ Հոռովմայեցւոց, եւ ձեռնադրեալ կուսակրօն քահանայ՝ առնուն հրաման քարոզութեան, եւ գնան աստ եւ այլուր, եւ սոքա անուանին Տէր:

Երկրորդն են Դրեստեանք, որոց վանքն է այժմ 'ի Վիէննա, եւ առաջնորդ նորին էր Ծատուր անուն ոմն, որ յաղագս խռովայոյզ բարուց իւրոց բաժանեցաւ 'ի խաղաղասէր միաբանութենէ

Մխիթարեան, եւ գնացեալ 'ի Հռովմ, եղեւ եպիսկոպոս 'ի վերայ վիճակին էջմիածնի, եւ ունի աստ զոմանս 'ի միաբանից իւրոց, որք Վարդապետ անուանին:

Երրորդն են Լիբանանեանք, քանզի անդ ունին մենաստանս, ուր նստի ոմն Կաթողիկոս անուամբ, եւ կարմիր կնքով եւ կաթողիկէիւք անուան իւրոյ՝ առաքէ կոնդակս 'ի վիճակս իւր, որք են Բերիա, եւ Եւդոկիա, եւայլն:

Եւ սա ունի աստ միաբանս, որ Հայր անուանին, եւ ճգնաւոր անուամբ պարծին:

Արդ այս երեք միաբանութիւնքս միմեանց համախոհ գոլով, եւ 'ի խռովութեան մի քան զմի առաւելեալք, առ հասարակ Գոլէճեանք անուանին աստանօր:

Որք յազգէս Հայոց օցտեալ են, եւ յարժամ զօղանջեն 'ի վերայ ազգիս.

Տգէտ են կարեւոր ուսմանց, այլ պարծին յաչս պարզամիտ հետեւողաց իւրեանց լինել աստուածաբանք:

Այս են ուսուցմունք նոցա, թէ Հայք հերետիկոս են եւ հերձուածող, ոչ հնազանդ են Պապին, ուստի արտաքոյ են 'ի փրկութենէ հոգւոյ:

Եւ այսպիսի բանիւք զարհուրեցուցեալ զուամիկս մեր, հետեան յազգիս միութենէ:

Վասն որոյ երեւելի եւ բազմաթիւ ժողովրդովք մեծացեալ են, որոց մեծ մասն Գաղատացիք են:

Արդ Գոլէճեան կարգաւորաց գլուխ նստի աստ 'ի Բերա ոմն հայկազուն եպիսկոպոս, զոր Հայ բարբառով Գերապայ ծառ կոչեն, եւ Լատին բառիւ Վիքար, այն է վէքիլ կամ փոխանորդ, եւ ձեռնադրէ քահանայս 'ի տան իւրում՝ առեալ հաւանութիւն 'ի Լատին եպիսկոպոսէն որ է երեսփոխան հայրապետին Հռովմայ:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս ջատագովութեան Աբբայեան հարց գեղեղեցւոյն Հայոց:

(1819) Է եւ այլ միւս կարգ անուանեալ Մխիթարեան միաբանութիւն քաջածանօթ բոլոր Եւրոպիոյ, որք ունին 'ի Վենետիկ վանս մեծանուն եւ երեւելի, բարեկարգ եւ բարեկրօն:

Եւ նորին միաբանք մոչ պակաս քան զհարիւր, որք Հայր անուանին եւ զանազան գիտութեամբ պերճացեալ են, լեզուագետք եւ բարեհանճարք, որք 'ի պայծառութիւն հայրենի ազգին անդադար աշխատասիրեն թարգմանութեամբք մատենից, եւ ինքնահիւս հեղինակութեամբ եւ տպագրութեամբ բազմապատիկ գրեանց:

Սոքա նախանձախնդիր էին հնաւանդ սովորութեանց եւ ողջամիտ ասացուածոց նախնի սրբոց հարց Հայաստանեայց եկեղեցւոց, եւ որոց օտարաձայն գտանին 'ի լուսահետ շաւղաց նոցա՝ բանիւ եւ գրով հակառակէին, որպէս յայտէ՝ որոց բարեսէր մտօք արձակին յընթերցանութիւն տպագրեալ մատենից նոցա:

Եւս առաւել՝ եթէ հանդիպեալ իցեն Վահանին հաւատոյ, (որոյ համառօտեալն միայն գտանի առ մեօք՝ հնարիւք Պէզճեան Յարութիւն աղայի անցեալ 'ի ձեռս մեր ամօք ինչ յառաջ) որ առաւել տեղեկագոյն կացուցանէ զբարեսէր վերձանողս Աբբայեան հարց գովելի մտաց:

Գտանէին 'ի մայրաքայաքիս իբրեւ քսան վարդապետք 'ի միաբանից այսր վանուց, եւ ունէին ժողովուրդս ոչ սակաւ, մանաւանդ զազնուականսն Տիւղեան եւ զմերձաւորս նոցա:

Ի սմին կարգէ Չամչեան հայր Միքայէլ վարդապետ բազմարդիւն ծերունին, յեցեալ յալիս ութսուն ամեայ ծերութեան հիւանդագին անկեալ կայր այժմ 'ի մահիճս ցաւոց զառամութեան:

Վասն որոյ պարագլուխ հանդիսանայր Աբբայեան հարց՝ որ 'ի մայրաքաղաքիս Հ. Մեսրոպ Աղաչըրրաղեան, վերընծայեալ ծննդեամբ 'ի Կոստանդնուպօլսոյ՝ քաջավարժ 'ի փիլիսոփայական եւ յաստուածաբանական մակացութիւնս, խոհեմ եւ նրբին բնախօս, եւ ժրաջան վաստակաւոր 'ի պայծառ բարեկարգութիւն հայրենի ազգին:

Սա 'ի 1820 ամի տեառն 'ի սկզբան յունուարի՝ լուկեայնգայր յԵՖՆԻԽԱՓԻՈՒ 'ի ծովեզերեայ տունն Եօնուզեան Յովհաննէս աղայի:

Ձայն լգացեալ երեւելի իշխանք մեր Գրիգոր աղա եւ Յարութիւն աղա՝ ընդ Ազնաւուրեան Կարապետ աղայի գնացին 'ի տեսութիւն նորին, որոյ ազգասէր բարուց ծանօթ էին եւ յառաջն:

Եւ առաջարկեցին նմա բազում սիրով եւ մեծարու յարգանօք, զի ամենայն կրօնաւորք թէ Աբբայեանք եւ թէ Գոլէճեանք միաբան սիրով եկեսցեն՝ առանց կարծիս կասկածանաց ունելոյ զումեքէ:

Դուք՝ եւ որ 'ի մեզ գիտնականք են, ասեն, քննեցէք զիրսն, յորոց վիճէք, հասու լիցուք ճշմարտութեանն, հետախաղաղ արասցուք զատելութիւնն, սէր եւ խաղաղութիւն հաստատեսցուք, եւ մի այր զընկեր հարստահարեսցուք, եւ յաղագս մարդկային աւանդութեանց եւ յետամուտ սովորութեանց ապախտ մի արասցուք զուխտ սիրոյ սիրողին զմեզ Աստուծոյ:

Եւ եթէ դուք ոչ յօժարեսձիք գալ, ժողովրդոց ձերոց բանաք դուռն տուգանաց եւ վնասուց, քանզի ահա ըստ հարկի ստիպանացն պատրիարքն ծանուցանելոց է տէրութեանն զանհնազանդս իւր:

Իսկ հայր Մեսրովպայ ուրախութեամբ սրտի ընկալեալ զբան նոցա՝ կոչէ առ ինքն զբարեխոհ եւ զպարկեշտակրօն Սահակ վարդապետ, որ գնացեալ էր յԵՖՆԻԽԱՓԻՈՒ առ հիւանդոք:

Եւ յայտ արարեալ զբանս իշխանաց մերոց՝ առաքէ զնա երթալ եւ ծանուցանել իշխանաց այնու կողման, եւ հրաւիրել զվարդապետսն:

Եւ նորա եկեալ զառաջինն՝ խօսի ընդ Կարնեցի Մահտեսի Աստուածատուրեան բարեյիշատակ Մանուկ ամիրայի, եւ եղբօր նորա Մատթէոս աղայի, եւ նոքա ետուն հաւանութիւն գնալ:

Յետոյ գնացեալ յեկեղեցիս Լատինացոց, ուր թագուցեալ կային տակաւին վարդապետք յօրէ կալանաւորութեան Տիւզեանց, յայտ առնէ նոցա թէ զպատգամս Հ. Մեսրովպայ, եւ թէ զհաւանութիւն իշխանաց իւրեանց:

Հարք Աբբայեանք առ օրինաւոր գործելոյ զիրն՝ մատուցին զիր առ եպիսկոպոսն Լատինաց՝ Վենկենտիոս Քօռէզի, զի հրամանաւ նորին լինիցի:

(1820) Եւ նորա ժողով արարեալ երեւելի վարդապետաց եւ մեծաւորաց եկեղեցեաց Լատինացւոց՝ առաջի արկանէ նոցա զառարկութիւնս հարց Մխիթարեանց, թէ արժա՞ն իցէ երթալ կարգաւորացն յազազս ապահովութեան ժողովրդոց, որոց վտանգ կայ առաջի, եւ վասն պայծառութեան հռովմէական հաւատոյ, որ գուցէ նսեմացի պարզամտաց գայթակղութեամբ, թէ ընդէ՞ր ոչ գնացեալ բարձրաձայն քարոզեցին եւ ցուցին, թէ արդարեւ ուղղափառութիւն է, զոր ուսուցանեն մեզ:

Եւ ժողովն զդատումն իւր որոշեաց, թէ պատ է դոցա երթալ. զի կամք սրբազան գահին եւս այսպէս հրամայէ, այլ եւ ինքեանք պարտաւոր են առ այդ:

Եւ զի ամօք ինչ յառաջ՝ յորժամ ստէպ կոչէր Պօղոս պատրիարքն մեր զվարդապետսն գայնոսիկ, տեսին անիմաստ Գոլէճեանք, զի առանձինն ոչ կարեն գալ եւ պատասխանել Հայոց, թէ ոչ ընդ ինքեանս լինիցին Աբբայեան հարք:

Վասն որոյ գրեցին ՚ի ժողովն Փրոփանկանտայու, թէ ահա ստիպմամբ կոչէ գմեզ պատրիարքն Հայոց, ՚ի գնալն մեր զայս միայն ունի մեզ հարցաբանել, թէ այս Աբբայեան հարք՝ զոր ընծեզ ածիք, չե՞ն ուղղափառ, եւ վարդապետութիւն սոցա մոլորակա՞ն են:

Եթէ ասեմք, չեն ուղղափառ, ասէ ցմեզ, թէ ընդ է՞ր երկինք ընդ սոսա առ մեզ ՚ի պատասխանատուութիւն. եւ եթէ ասեմք, ա՜յո՛, ուղղափառ են, յայնժամ զվահան հաւատոյ մատեանն ցուցանէ մեզ, եւ սպառնայ, թէ ընդէ՞ր այսմ վարդապետութեան հակառակ զինիք:

Եւ այսպէս երկուստեք զմեզ յորոգայթս արկանել մտաբերէ, զոմանս ՚ի մէնջ յաքսորս առաքէ, եւ զայլս ՚ի թէ նաւատեղեաց:

Ահա խաբեբայքն այսպիսի բանիւք ստուրթեան խարդախեցին յայնժամ զիրացն ստուգութիւն, եւ խաբեցին զայն ժողով, զոր անսխալ քարոզեն տգիտաց, եւ ետուն գիր բերել անտի, որ նահանջէր զնոսա յերթալոյ ՚ի խօսակցութիւն:

Այս նախադատութիւն՝ որ ըստ խելամուտն առնելոյ նոցա վճռեալ էր, բայց ըստ պայմանի ժամանակին չեղեւ այժմուս արգելք խափանարար այսմ առաջարկութեան Աբբայեանց:

Միայն թէ ասացին, զիտութեամբ դեսպանին Գաղղիացւոց գնասցեն:

Քանզի սոյն այս Գոլէճեանք, որ նախապատրաստ զգուշու-  
թեամբ հոգան զօգուտն անձանց, յառաջագոյն գրեցին 'ի Հռովմ,  
թէ այս եպիսկոպոս դիւրահաւան եւ պարզամիտ լինելով, Աբբա-  
յեանց եւ Հայոց բանից անսալով՝ դիւրաւ խաբի, եւ 'ի բազում  
իրս գթէ:

Պարտ է սմա քաջուշիմ խորհրդակից ոք, զի առանց նորին  
խորհրդոյ մի ինքնահրաման գործեսցէ եւ արասցէ ինչ. ուստի եւ  
'ի Հռովմայ եկն պատուէր առ Վենկենտիոս Քօռէզի, զի առանց  
խորհրդակցութեան ընդ դեսպանին Գաղղիոյ եւ հաւանութիւն  
առնելոյ 'ի նմանէ, մի գործեսցէ եւ արասցէ ինչ:

Վասն որոյ եւ այժմ պարտաւորեցաւ եպիսկոպոսն ծանուցա-  
նել դեսպանին զայս ամենայն, եւ առաքեաց զսւրբ Անտօն եկե-  
ղեցոյ մեծաւորն Փաթէրփօնի այր ճարտարաբան, զի յայտ արա-  
րեալ վճիռ ժողովոյն, առցէ հաճութիւն եւ 'ի նմանէ:

Գնաց Փաթէրփօնի յապարանս դեսպանին, բայց անդ էր եւ  
դեսպանն Ռուսաց, եւ 'ի միասին 'ի խաղս ինչ պալօ ձայնեալ պա-  
րապէին, եւ ոչ կարէ մտանել առ նա եւ խօսել զբանն: Եւ զի օրն  
յերեկոյս խոնարհէր, դարձ արարեալ զայ յեկեղեցին իւր, եւ ծա-  
նուցանէ վարդապետաց, թէ ահա այսչափ հաւանութիւն եղեւ յե-  
պիսկոպոսէն եւ 'ի ժողովոյն, ոմանք 'ի ձէնջ այսօր զնասցեն առ  
Հայս, եւ մնացեալքդ 'ի վաղիւն, յորժամ եւ 'ի դեսպանին առ-  
նումք հաճութիւն:

Վասն որոյ յայնմ գիշերի 'ի 19 յունուարի, Հ. Թովմայ եւ Հ.  
Սերովբէ եկին 'ի տուն Յովհաննէս աղայի, ուր էր եւ Հ. Մես-  
րովպն:

(1820) Արդ ոխերիմ թշնամիք միաբանութեան ազգիս Գոլէ-  
ճեանք տեսին, թէ ամենայն ամուր ապաստանի իւրեանց խորտա-  
կեցան, եւ ոչ կարեն համարձակ չրջել, ուստի խորամանկ բանիւք  
իւրեանց փոյթ կալան յինքեանս յանկուցանել զոմանս յիշխա-  
նաց իւրեանց, զի գիրին յաջողութիւն 'ի ձեռն նոցին չրջեսցեն,  
եւ ժամանակ աւուրց առցեն 'ի Հայոց մտածելոյ, որպէս զի յե-  
ցեալ զթիկունս իւրեանց 'ի Հռովմ, զկամակորն 'ի գլուխ տացեն  
չարիս:

Բայց իշխանք նոցին յանհնարին երկուսն ըմբռնեալ յահէ  
սաստիկ հրամանին արքունի՝ փութացուցանէին մի կալ մնալ այլ  
եւս:



Եւ որ Հռովմայ աթոռոյն երեսփոխանն էր եւ բարձրապատիւ եպիսկոպոս, ժողովով իւրով իրաւացի որոշէր գնալ:

Վասն որոյ եւ նոքա մերժեցին զբանս իշխանաց, ասելով, թէ զանձանց հոգածու են ունելով զհանգիստ եւ ոչ զապահովութիւն հասարակաց:

Իսկ ազգատեացք եւ խռովասէրքն այնոքիկ առ ոտն հարին եւ զիրաւունս դատաստանի եպիսկոպոսին, ասելով, թէ գործ եւ արարք եպիսկոպոսին արտաքոյ են ամենայն օրինաց եւ իրաւանց:

Այս միայն կայր նոցա հնար վերջին, եւ զայն տարան 'ի գլուխ: Քանզի գլխաւորն 'ի նոսա Անտօն վարդապետ Քուցիանթի՝ այր չարագրգիւ եւ խռովայոյզ, մուտս արարեալ յայնմ գիշերի գաղտագողի առ դեսպանն, հաճեցոյց զնա չտալ հրաման երթալոյ կարգաւորացն:

Եւ նա պարզամտութեամբ անսացեալ բանից Քուցիանթի նենգ ամիտ վարդապետին՝ ոչ միայն արգել կարգաւորաց երթալ, այլ եւ անհնարին սպառնացաւ եպիսկոպոսին, զի յետս կոչեսցէ զառաջին հաւանութիւն իւր:

Իսկ եպիսկոպոսն անճարացեալ չկարաց զդէմունել, քանզի գիտէր, թէ յանձինս նոցա բազմեալ է գահն առաքելական, եւ սուրբ ժողով հրատարակեալն. եւ թէ ոչ 'ի հաճոյս նոցա աղաւաղեսցէ զիրաւունս բանից, տեղատարափ թափին 'ի վերայ իւր նետք բանից եւ տէգ սպառնալեաց 'ի Հռովմայ:

Ուստի զոր վճռեաց ըստ իրաւանց 'ի ժողովս, առանձինն 'ի շնորհուկս սոցա ունայնացոյց:

Այս բնաբոյս սովորոյթ աստուածաբանից եւ եպիսկոպոսաց Հռովմայեցւոց է, որ զողջմտութիւն հաւատացելոց խանգարէ, զհանդարտութիւն ազգաց ալէկոծէ, զկարծիս հերետիկոսաց արծարծանէ:

Քանզի գործունեայ ճշմարտութեան անուանին, բայց մտահաճոյ մարդելուզութեամբ 'ի կողմն կործանին զրպարտչաց եւ չարախօսաց, քան իրաւասիրաց եւ բարեխօսաց: Մոլորական ընթացք իւրեանց թէ եւ ճշմարտութեան երեւեսցին 'ի դէպ, այլ 'ի ճշմարտութենէ են տարադէպ:

Բայց արդարակորով Աբբայեանք՝ հայեցեալք 'ի սիրալիր հրաիւէր ազգին, եւ երկուցեալ 'ի վնասու է ժողովրդոց իւրեանց յայտնապէս ասացին:

Վստահ եմք յառաջին հրաման եպիսկոպոսին եւ իւրոյ ժողովոյն, որ ըստ իրաւացի վճռոյ հրամայեաց մեզ գնալ. եւ զի չիք յատուկ արգելք 'ի Հռովմայ վասն երթալոյ, ուստի ունիմք վճիռ հաստատուն 'ի ձեռին գնալոյ եւ խօսելոյ ընդ Հայս հրամանաւ եպիսկոպոսին, եւ վկայութեամբ այսչափ վարդապետաց Լատինացւոց, որք ոչ կարեն յուրաստ գալ:

Ուստի ոչ ունին մատուցանեմք վերջնումն արգելանաց՝ զոր 'ի սաղրելոյ Գոլէճեանց արար, որ վտանգաւոր եւս է ժողովրդոց մերո. եւ զայս ասացեալ գնացին նոքա յԵէնիխաբու:

(1820) Յառաջ քան զամիսս ինչ եղեւ նորոգութիւն եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի 'ի Խումիսաբու, որոյ օծութեանն հանդէս եղեւ մեծաշուք հանդիսիւ, քանզի զհարաւային կողմն այն է՝ զեկեղեցին կանանց էօծ տէր Կիրակոս կաթողիկոսն Սսոյ, զմիջին եկեղեցին Պօղոս պատրիարք, զհիւսիսային կողմն կոչեցեալ Պաղչէ ժամ՝ էօծ Աստուածատուր եպիսկոպոս, եւ զգաւիթ եկեղեցւոյն՝ Դիոնեսիոս եպիսկոպոս, յառաջներողլժամէ գիշերոյն սկսեալ մինչեւ ցչորրորդ ժամ յաջորդ աւուրն, 'ի փետրվար 25, յամի տեառն 1820:

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս աքսորանաց եւ փախստեան Գոլէճեան կարգաւորաց, եւ գալստեան առ մեզ Աբբայեան հարց եւ խօսելոյ նոցա ընդ վարժապետս մեր վասն խնդրոց ինչ:

(1820) ՍԱՀԱԿ վարդապետ՝ զոր 'ի վեր անդր յիշատակեցաք, ունէր թուղթ 'ի պատրիարքէն Հնգօրեայ ազատութեան, շրջել ժողովել զկարգաւորան: Վասն որոյ առեալ զնոսա եբեր յեֆնիխափուն 'ի 23 յունուարի:

Եւ որք եկինն, էին Հ. Գրիգոր Գապարաճեան, Հ. Թադէոս Ասկերեան, Հ. Քերովբէ Աբբայեանք, նաեւ Հ. Պօղոս բժիշկ: Յուղի անկան ընդ նոսա տէր Սահակ եւ տէր Յարութիւն Դրեստեանք, այլ 'ի ճանապարհին խոյս տուեալ 'ի փախուստ դարձան, քանզի յետս կոչեցան 'ի Գոլէճեանց:

Արդ մինչ այսոքիկ այսպէս լինէին, եկն 'ի դրանէ հրաման առ պատրիարքն գտանել զվեց քահանայս տանն Տիւզեան եւ մերյաւորաց նոցա, զի աքսորեցին:

Եւ պատրիարքն փութացոյց շտապաւ զիշխանս այնու կողման, զի զո՞ եւ իցէ վեց քահանայս յիւրեանցայնոց գտեալ տացեն:

Եւ նոքա փութացեալ, խաբէութեամբ հրաւիրեցին 'ի տունս իւրեանց զքահանայս՝ որպէս թէ վասն խոստովանութեան ինչ իցէ կոչումն նոցին, այլ գիշերայն ազդ արարեալ ժամկոչաց Հայոց՝ հանին 'ի տանէն, եւ ետուն 'ի ձեռս նոցա, եւ առաքեցին 'ի պատրիարքարանն, եւ էին անուանք նոցա այսոքիկ. Անտոն եպիսկոպոս վիքար իւրեանց, Քայիշքուչաք ճգնաւոր կոչեցեալն, Պօղոս վարդապետ Գաղատացի Մարուշ կոչեցեալն, Պետրոս վարդապետ, եւ Յովհաննէս վարդապետ, ընդ սոսա գտաւ եւ հայր Դաւիթ խոհեմափայլ վարդապետն Աբբայեան, հինգ Գոլէճեանք, եւ մին այս Աբբայեան, եւ սա կամովին յօժարեցաւ երթալ, ասելով, եթէ չէ լցեալ թիւ աքսորելոցն, ես կամաւ գնամ, զիս առաքես՞ չիք: Մնաց միայն յԱբբայեանց Հ. Սրապիոն, եւ ոչ եկն ընդ նոսա:

Քանզի ընտանիք Տիւզեանց յանձնեալ եղեն պատրիարքին յօրէ կնքելոյ գտունս նոցա:

Ընդ նոսա էին եւ արու սպասաւորք, եւ Հ. Ստեփանոս, որ գտաւ յայնժամ 'ի տան նոցա:

Եւ զամենայն զնոսա եղ պատրիարքն հանդէպ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն 'ի տան միում, եւ զգուշանայր պահպանօք:

Եւ զհայր Ստեփանոսն առանձինն 'ի միում խցի պահէր իբրեւ 'ի բանտի:

Յաւուրսն յայնոսիկ Հ. Սրապիոն ելեալ գայ առ պատրիարքարանն, եւ առ ժամն ոչ գտանի անդ վէքիլն, եւ բազմի 'ի յաթոռոյն. հարցանեն ցնա վարդապետքն, եւ ասեն, դու ո՞վ ես եւ վասն է՞ր եկիր այսր:

Եւ նա պատասխանէ, վարդապետ եմ ես 'ի վանուց սրբոյն Ղազարու Հ. Սրապիոն անուն, եւ եկի աստ խնդրել հրաման երթալ յայցելութիւն կարգակից եղբօր իմոյ Հ. Ստեփանոսի:

Յայնժամ ոմն 'ի վարդապետացն՝ որոյ անուն էր Պօղոս վարդապետ Գաղատացի, եւ էր տեղապահ փոխանորդի պատրիարքին, եւ ունէր թշնամութիւն մեծ անդստին 'ի մանկութենէ իւրմէ 'ի Գաղատիա 'ի վերայ Հռովմէական Հայոց, հանէ զնա արտաքոյ սենեկին, եւ ինքն զնացեալ 'ի ներքո ելանէ առ Պօղոս պատրիարքն եւ ասէ, եթէ 'ի Հռովմէական Հայոց կարգաւոր ոմն եկեալ յանդիմանէ զմեզ անվայել բանիւք եւ ասէ, թէ դուք լինէիք ուղղափառ եւ բարեկրօն, զուղղափառ վարդապետսն ոչ տայիք ըմբռնել եւ 'ի բանտի արգելուլ, բայց զի անմասն էք յուղղափառութենէ, առանց խղճի առնէք զոր ինչ եւ կամիք:

Եւ պատրիարքն լուեալ գայս, հրամայէ դնել զնա 'ի բանտի, մինչեւ եկեսցէ փոխանորդ իւր, եւ քննեսցէ գայն:

Եւ Գաղատացին տեսեալ, թէ անպատիժ ունի գերծանիլ 'ի ձեռաց իւրոց, զայրանայ առաւել եւս, եւ ածեալ առաջի վէքիլարանի՝ տայ պնդել զոտս նորա յաղախան, եւ հարկանեն նմա բիրս եօթանասուն:

Իսկ նա ինքն եղկելին յետոյ 'ի գանակոծ ոտիցն կանգնեալ 'ի վերայ՝ հարցանէ զիրաւունս բանից, թէ զի՞նչ էին իմ յանցանք:

Իսկ Գաղատացին որ անօրէնութեամբ գործեացն գայն, եւ բերան իսկ բանալ ոչ ետ նմա, եւ տարեալ արկին 'ի բանտ:

Բայց Կարնեցի Յակոբ աղա՝ որ ծանօթացեալ էր 'ի Կարին Հ. Սրապիոնի, եւ 'ի բազում իրս մանաւանդ 'ի շինութեան զպրոցի գործակցեալ նմա, եւ սիրէր զնա ոչ սակաւ, իբրեւ գայս ամենայն

լսէ, փութացեալ զայ առ պատրիարքն, եւ ազատեալ հանէ զնա 'ի բանտէ, եւ պատրիարքն առաքէ յաքսորս զԳաղատացին զայն 'ի հայրենիս իւր 'ի Գաղատիա:

Արդ սա զի գանակոծ հարուածով վշտացեալ էր 'իի վերայ վարդապետաց մերոց, այժմ ոչ ընդ միաբանս իւր միաբանեցաւ դալ առ մեզ, այլ եկաց մնաց յեկեղեցիս Լատինացւոց:

Սահակ վարդապետ երթայ 'ի սկզբան փետրվարի առ Ստեփանոս եպիսկոպոսն Աւնէրեան, որ երբեմն եւ վիքար էր, եւ յայնժամ թագուցեալ կայր, եւ 'ի մտի եղեալ էր գաղտնաւարկել 'ի Թրեստ, ասէ ցնա, ընդէ՞ր ոչ գաս ընդ մեզ, յորո՞ց կասկածիս, մինչ ամենայն իշխանք Հայոց պաշտպան կան մեզ:

Որում պատասխանէ Ստեփանոս եպիսկոպոս թէ եւ ես ոչ սակաւ քան զձեզ ցանկացող եմ միաբանութեան ազգիս, բայց երկնչիմ 'ի Գոլէճցւոց աստի ինքնին ելանել եւ գալ: Բայց եթէ իշխանք Հայոց կանխեալ խնդրեսցեն զիս 'ի մերայնոց, եւ սոքա ստիպեսցեն զիս գնալ, յայնժամ փութացեալ գամ:

Սահակ վարդապետ զայս բան ծանոյց Հ. Մեսրոպայայ, եւ նա հաճեցոյց զիշխանս մեր, եւ ետ խնդրել յիշխանաց այնու կողման, զի առաքեսցեն զՍտեփանոս եպիսկոպոսն:

Եւ նոքա պատուիրեցին նմա գնալ, բայց ոչ երբէք կուսակից լինել եւ միտել 'ի կողմն Հայոց եւ Աբբայեանց:

Եւ նորա գնացեալ՝ զբռնադատութիւն իշխանաց իւրոց՝ եպիսկոպոսին Լատինաց յայտ արար, եւ էառ 'ի նմանէ հաւանութիւն լռելեայն:

Սահակ վարդապետ եւ այլ ոմանք յիշխանաց առեալ բերին զնա յԵփեսոս:

(1820) Արդ յայսմ միջոցի՝ յաւուրս պահոց, զօրականքն Եփեսոսի ձայնեալք՝ զոր միանգամ տեսանէին 'ի Հայոց ձուկն գնել կամ ուտել, կալեալ զնա տանէին 'ի պատրիարքարանն, եւ վէքիլ պատրիարքին ակամայ տայր զօրականին դահեկան մի խոժոռեալ դիմօք, եւ զայրն յանդիմանէր վասն յայտնի զձուկն ուտելոյն, եւ արձակէր 'ի բաց:

Եւ զայս բազմարդիւն շահավաճառ իմն արարին իւրեանց, զօրականքն, որք զհետ լինէին գտանել զո եւ իցէ Հայ ազգաւ, որ ուտիցէ եւ գնեսցէ 'ի շուկայս զկերակուրս անուտելիս մեզ յաւուր պահոց:

Այլ Պողոս պատրիարք որ քաջախորհուրդ հեռատեսութեամբ իւրով դիտէր եւ մտածէր զվախճան ամենայն իրաց, կոչեաց առ ինքն զՅարութիւն աղա Պէգճեան եւ խորհեալ ընդ նմա, կոչեցին զՅարութիւն Շամպէօրէկեան, որ ունէր ելուժուտ 'ի դուռն զօրապատին, եւ ոսկերիչ նորին է, 'ի ձեռն նորին ազդ արարին Եէնիչէրի աղասի զօրապատին զի հրամայեսցէ ամենայն զօրականաց՝ յայնմ հետէ կալնուլ եւ ոչ զոք վասն այնպիսի իրաց:

(1820) Յամսեանն յունվարի խորհրդով իշխանաց մերոց պատրիարքն կոչէր մի առ մի 'ի Հոովմէական Հայ ժողովրդոց գերեւելի իշխանս եւ զմիջակային արհեստաւորս, եւ առաջարկէր նոցա զբան միութեան:

Եւ զի ահ սաստիկ պաշարեալ էր զնոսա, բազումք գային 'ի հաւանութիւն, եւ ստորագրէին պայմանագրին, որ ունէր օրինակ զայս:

“Ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մերմէ սկսեալ մինչեւ ցարդ, զոր ինչ ընդունի Հայաստանեայց ուղղափառ սուրբ եկեղեցին, ընդունիմ եւ ես, եւ զոր ինչ մերժէ, մերժեմ եւ ես. 'ի Հաստատութիւն այսր ողջամիտ դաւանութեանս յօժարակամ կամօք կնքեցի եւ ստորագրեցի ես (այս անուն) եւայլն”

Բայց եւ բազումք դժկամակ գտեալ առ այն՝ ոչ հաճէին ստորագրել:

Հայր Մեսրոպայ՝ այր մեծախորհուրդ եւ բազմահանճար առ շահելոյ զերկաքանչիւր կողմանս՝ հաւանեցոյց զիշխանս մեր, զի Լուսաւորչեան հանգանակն անպակաս եւ անյաւելուած գրեսցի 'ի թղթի, եւ նմին ստորագրեսցէ հասարակութիւնն:

Եւ յայնժամ առանց ինչ դիմադարձ բանից գային եւ ստորագրէին ամենեքեան:

Ի նոյն աւուրս 'ի միում գիշերի ժողովեցան իշխանք մեր առ Հ. Մեսրոպայ վարդապետ, եւ նա զամենայն խնդիրս՝ յորոց վերայ լինէին վէճքն՝ մի ըստ միոջէ յայտ արար:

Անդ էր եւ Փէշտրմալճեան Տիրացու Գրիգոր մեծանուն վարժապետն, եւ հաճութեամբ ժողովոյն գրիչ 'ի ձեռին նշանակէր 'ի թղթի, եւ միաձայնութեամբ զբանս հարց ընդհանուր եկեղեցւոյ՝ ընտրէին եւ բերէին 'ի վկայութիւն առաջարկութեանց իւրեանց:

Եւ ընդ առաւօտն Գրիգոր խալֆա, հաճի Չէլչպի, ձանիկ աղա, Մանանեան Յակոբ աղա, եւ Ազնաւուրեան Կարապետ, առին զթուղթն զայն, եւ զնացին 'ի պատրիարքարանն, տարան ընդ ին-

քեանս եւ գ Գրիգոր վարժապետն, զի թէ վասն բանից թղթոյն դէպ ինչ լինիցի, խօսեցի:

Մտեալ իշխանաց առ պատրիարքն, պատմեն նմա զխորհուրդ իւրեանց, յետոյ յերեւան հանեն եւ զթուղթն, զոր 'ի գիշերին գրեալ էին:

Ուր իբրեւ յաղագս բղխման Հագւոյն սրբոյ եւ յՈրդւոյ բանք եղեն, ասէ պատրիարքն, է՞ ոք 'ի հարց մերոց սրբոց այդպէս գրեալ կամ բացատրեալ. ես ընդունիմ եւ ասեմ, թէ Հոգին սուրբ հոսի 'ի Հօրէ եւ յՈրդւոյ, կամ առնու 'ի Հօրէ եւ յՈրդւոյ, որպէս եւ Հարքն մեր ասացեալ են, բայց ոչ ընդունիմ, թէ Հոգին սուրբ բղխի 'ի Հօրէ եւ յՈրդւոյ, զի բղխումն նշանակէ զծագումն յառաջին սկզբնէ, եւ յայնժամ լինին յԵրրորդութեան երկու սկզբունք: Նա զի եւ Լատինք Հոգին Բրօշետի ասեն, որ նշանակէ, Հոգին յառաջագոյն կամ հոսի կամ առնու, եւ ոչ թէ բղխի:

Ուստի եթէ Լատինք բղխի ոչ ասեն, զմեզ ընդ է՞ր ստիպեն բղխի ասել:

Ապա որպէս ասացեալ են սուրբ հարք Հայաստանեայց եկեղեցւոյ, զնոյն ասեմ եւ ես ըստ նոցին բառից, որպէս ասացեալ է եւ Շնորհալի սուրբ հայրն մեր, թէ 'ի Հօրէ բղխումն Հոգւոյդ ոչ քննեցան, եւ հոսման յՈրդւոյ առումն ոչ պատմեցան:

Զայս այսչափ ընդունիմ եւ ասեմ, եւ այլովք բառիւք ոչ կարեմ բացատրել, եւ չունիմ հրաման առաջի բղխի բառին դնել զբառն եւ յՈրդւոյ. զի հաւատամ ես, թէ Հոգին սուրբ բղբի 'ի Հօրէ եւ առնու յՈրդւոյ ըստ սուրբ Շնորհալւոյն որպէս ասէ, բղխումն Հօր անքննաբար, առող յՈրդւոյ անճառաբար. զայս գիտեմ ես, եւ զայս հրամայեմ գրել. աւելի ինչ բացատրել արժան չէ:

Զայս հրահանգ առեալ նոցա, առաքեցին զվարժապետն յԵկեղեցւոյն առ Հ. Մեսրոպ պատմել նմա զհրաման պատրիարքին, զի այնու եղանակաւ լրացուցեն զխօսս իւրեանց, եւ մի ընդունայն վէճք լինիցին:

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս խօսելոյ Աբբայեան հարց ընդ վարժապետաց մերոց վասն մասանցն հաւատոյ, գորոց էին խնդիրք:

(1820) ԱՐԴ յառաջ քան զայս ամենայն հրամանաւ արքունի բերեալ էր 'ի Կոստանդնուպօլիս սրբազան հայրապետ տանն Կիլիկիոյ Կիրակոս կաթողիկոս, որ եւ յամբաստանութեանց բղեշխին Բերիոյ իրաւացի քննութեամբ գերծեալ, առեալ էր ներողութեան հրովարտակ դառնալ 'ի սուրբ աթոռն իւր: Բայց իշխանք մեր զբազում ժամանակս պահեցին աստ:

Մի՛ զի յամենայն եկեղեցիս մայրաքաղաքիս պատարագեսցէ, եւ նպաստ ինչ հաւաքեսցէ 'ի ժողովրդոց, եւ միւս՝ զի 'ի գործ ցանկալի միաբանութեանս գտանիցի եւ մի ոք վեհափառ կաթողիկոս:

Արդ սա ինքն ազնուասերունդ եւ ազնուաբարոյ գոլով, ոչ սակաւ օգուտս գործեաց համազգային միաբանութեանս:

Քանզի զիւր տնկակից ճշմարտասիրութեանն զհանդերձ գօտեպինդ զգեցեալ՝ ուղիղ խորհրդով ողջ եւ անարատ նահատակէր 'ի բանս ճշմարտասիրաց, եւ դիմագրաւ հանդիսանայր, որոց զարտուղի խուսափէին 'ի ճշմարտութենէն:

Արդ որովհետեւ հարկ եղեւ ընտրել զքանի մի գիտնական անձինս 'ի մերայնոց, զի խօսեսցին ընդ Աբբայեան վարդապետս 'ի վերայ այնց խորհրդոց, յորոց վերայ լինէին մինչեւ ցայժմ տարապարտ վէճք եւ հակառակութիւնք:

Եւ ընտրեաց Պօղոս պատրիարք գտէր Մեսրոպ գիտնական քահանայն Խումխափուի, եւ գտէր Բարթողիմէոս Իւսկիւտարու, եւ զթագաւոր վարժապետ ոմն, որ թէպէտ ծանօթ էր տրամաբանութեան, բայց ոչ այնչափ Աստուածաբանութեան, եւ խռովեալ կրիւք խօսէր:

Էին յայնժամ յԵնիիխափու Հ. Ստեփանոս եպիսկոպոսն Աւգէրեան՝ գերապայծառ կոչեցեալ, եւ յԱբբայեանց Հ. Մեսրոպ վարդապետ Աղաչըրաղեան, Հ. Սերովբէ վարդապետ Ճէվահիրճեան, Հ. Քերովբէ վարդապետ Ազնաւուրեան, Հ. Գրիգոր վարդապետ Գապարաճեան, Հ. Թադէոս վարդապետ Ասկէրեան, Հ. Թովմայ վարդապետ Մագսէթեան, Սահակ վարդապետ եւ Պօղոս վարդապետ:



Իննեքին սոքա էին 'ի ծովահայեաց տան Եօնուզեան Յովհաննէս աղայի, 'ի սոցանէ ընտրեցան խօսել ընդ ՀԱյս, Հ. Մեսրոպ Աղաչըրաղեան, զի որովհետեւ երեք էին 'ի կողմանց Հայոց յառաջացեալք 'ի խօսել, 'ի սոցունց եւս այս երեք միայն ընտրեցան, բայց յամենայն ժողովի նախագահ նստէր Հ. Ստեփանոս եպիսկոպոսն Աւգէրեան, եւ ունկնդիր լինէր երկոցունց կողմանց, եւ ունկնդրութիւն սորին օգուտ մեծարար Աբբայեան հարց յետ ժամանակաց, իբր զի լինէր երբեմն, զի երկու կողմանք հակառակէին 'ի վերայ միոյ բառի, մինն պնդէր, թէ զայս բառ պարտ է բանալ փոփոխել, եւ միւսն հաստատէր ուղիղ եւ իրաւացի գոյ, եւ ոչ փոփոխել, եւ երկաքանչիւր կողմանք մնային 'ի վերայ մի եւ նոյն բառի վիճեալք, եւ ոչ մին կամէր միւսոյն զիջանել:

Յայսպիսի բանս տեսեալ Ստեփանոսի եպիսկոպոսին զերկաքանչիւր կողմանն զյամառեալ կարծիս, հրամայէր լռել, եւ ինքն գրիչ 'ի ձեռին առեալ, տնօրինէր ըստ պիտելոյ խնդրոյն այնպիսի բառս, որ ընդունելի լինէր երկաքանչիւր կողմանն, բայց առաւել Հայոց, զի Աբբայեան հարք ոչ կարէին հակառակիլ ենթադրութեան Ստեփանոսի եպիսկոպոսին, որովհետեւ 'ի դիմաց Հռովմէական եկեղեցոյյ գլխաւոր էր նոցա կարգեալ, եւ եթէ աթոռն Հռովմայ խոժոռէր եւ գժտմնէր ընդ սահմանադրութիւնս Աբբայեան հարց, թէ վասն է՞ր զայնպիսի բառ եղեալ են, կամ ոչ եղեալ, առձեռն պատրաստ ունէին Աբբայեան հարք զայս բան, թէ մեք զի՞նչ արասցուք, զի Ստեփանոս եպիսկոպոսն 'ի միջի մերում էր, եւ նա այսպէս տնօրինէր, եւ թէպէտ մեք բազմօք պնդէաք ընդդէմ Հայոց, բայց նա այսպէս կամեցաւ եւ լռեցոյց զմեզ, եւ իւրով իսկ գրութեամբ խափանեաց զվէճ մեր:

Եւ զայս այսպէս ասացին յետոյ Աբբայեան հարք առ աթոռն Հռովմայ, որպէս ունիս տեսանել 'ի կարգի պատմութեանս:

Արդ վէճք սոցին էին 'ի վերայ հնգեցունց խնդրոցս այսոցիկ, նախ թէ Քրիստոս ունի զերկուս բնութիւնս եւ զերկուս կամս, եւ զերկուս ներգործութիւնս:

Երկրորդ՝ թէ Հոգին սուրբ բղխի 'ի Հօրէ եւ յՈրդւոյ:

Երրորդ՝ թէ հոգիք զղջացեալ եւ խոստովանեալ մեղաւորաց գնան 'ի կայանս քաւարանին, եւ անդ գտանեն զներումն շնորհօք սուրբ պատարագին եւ գնան յարքայութիւն:

Չորրորդ՝ թէ Պետրոս է գլուխ առաքելոց, եւ զնոյն գլխաւորութիւն ունին յաջորդք նորա 'ի յաջորդս առաքելոց:

Հիգիենայի թիվ վերջին օժուկն է խորհուրդ սուրբ եկեղեցույ, եւ պարտ է առնել զայն ՚ի ծանր մահամերձ հիւանդս:

Ի վերայ հնգից խնդրոցս այսոցիկ եղեն բազմաքննին վէճք իբրեւ զամիսս երիս, զի յութօրէից սրբոյ Մննդեան սկսեալ տեւեաց վէճն մինչեւ ցաւագ չորեքշաբաթ օր սուրբ Զատիկին:

Եւ թէպէտ երկաքանչիւր կողմանք ուղղափառապէս ընդունէին զայս ամենայն մասունս հաւատոյ, բայց ոչ գիտելով զմիտս եւ զճանաչումն իրերաց, զմիմեանս հերետիկոս եւ հերձուածող դատէին անգիտութեամբ, զոր օրինակ Հայն մի բնութիւն ասէր, եւ Հռովմէական Հայն երկու բնութիւն, երկոքին եւս ուղղափառութիւն են, եթէ ուղղափառ մտօք ասիցին, եւ երկոքին եւս չարափառութիւն են, եթէ մոլորական մտօք ասիցին:

Զի Հայն ասէ մի բնութիւն փոխանակ մի անձնաւորութեան, որ է ուղղափառութիւն, եւ Հռովմէական Հայն ասէ երկու բնութիւն, փոխանակ Աստուածութեան եւ մարդկութեան Քրիստոսի, որ է ուղղափառութիւն:

Սոյնպէս է տեսանել եւ ՚ի միւս խնդիրս, յորոց վերայ լինէին մինչեւ ցարդ տարապարտ վէճք եւ հակառակութիւնք, զի զիրն ամբողջապէս երկոքին կողմանք եւս ողջմտութեամբ ընդունէին, բայց ՚ի վերայ բառի եւ ձայնի հակառակ ոգևով վիճէին եւ կռուէին ոչ գիտելով զմիտս իրերաց:

Ահա այս եղեւ պատճառ բազմաց հակառակութեան եւ հերձուածողաց կորստեան ՚ի սկզբանէ մինչեւ ցայժմ, որով միոյ սուրբ ավագանի ծնունդք, միոյ հօր սուրբ Լուսաւորչի հարազատ զաւակունք, ազգակիցք եւ արիւնակիցք անգոսնէին եւ արհամարհէին զիրեարս, զմիմեանս հերձուածող կոչելն իբրեւ զարդարութիւն գիտէին, եւ արքայութեան ժառանգութեան պատճառս համարէին, որո գտութիւն եղբարց, անհաւանութիւն ծնողաց եւ զաւակաց, բաժանումն եւ աւերումն տանց, եւ այլ անթիւ չարիք:

Առ որս ճարտար բժիշկք նախնի պատրիարքունք բազմապիսի հնարս հոգացին ՚ի դարման վիրացս, եւ մինչեւ ցայժմ չեղեւ բոլորովին բժշկութիւն, այլ օր ըստ օրէ ճարակեալ՝ մահառիթ խոցուածովք կսկծեցուցանէին զհոգիս ազգասիրաց:

Բայց յայսմ ժամանակի իղձ սիրոյ եւ փափաքանաց ազգասէր անձանց՝ որ մինչեւ ցայս վայր աղեկիզեալ բորբոքէր տեսանել զկատարումն պատուիրանին Քրիստոսի, մինչդեռ յաջողեցաւ արքունի հրամանաւ դեգերիլ ՚ի գործ սիրոյ եւ միաբանութեան,

վառեցան եւ պատրաստեցան ՚ի գլուխ տանել զայս հոգեւոր պաշտօն աստուածային սիրոյ, ուստի եւ զամիսս երիս տքնեցան եւ վաստակեցան յամենայն երեկոյս ժողովիլ ՚ի յեջնիխաբու, եւ զգիշերն ողջոյն ունկնդիր լինել վիճաբանութեանց եւ խնդրոց երկոցունց կողմանց, եւ յորդորէին զերկոսին կողմանս չխօսել կրիւք եւ ոգւով հակառակութեան, այլ աստուածային սիրով եւ քաղցր կենակցութեամբ լրումն տալ բանից եւ գործոց իւրեանց:

Եւ այսպէս յետ եռամսեայ բանախօսութեանց եւ ժողովոց հաճութեամբ եւ հաւանութեամբ երկոցունց կողմանց՝ գրեցին զսահմանադրութիւն ժողովոյն իւրեանց, եւ միաբան խոստովանութեամբ ստորագրեցին ամենեքին, եւ ընդ առաջին իշխանապետքն աստուածասէրք տարան զսահմանադրութիւնն առ պատրիարքն, եւ նա մի առ մի քննեալ զամենայն, հաւանեցաւ, եւ ինքն եւս ժողով արարեալ եպիսկոպոսաց, յորս էր եւ աստուածաբանտիր կաթողիկոսն Սսոյ տէր Կիրակոս, եւ վարդապետաց, եւ քահանայից, եւ ամենայն երեւելի անձանց արուեստաւորաց, եւ ՚ի ժողովին յայնմիկ արարեալ ատենաբանութիւն իմն սքանչելի, ընթերցաւ ՚ի լուր ամենեցուն զսահմանադրութիւնն զայն, եւ մի առ մի բացայայտեալ՝ կնիքս պահանջեաց ՚ի նոցանէ յամենեցունց:

Անդ էր տեսանել զայն անպատմելի ուրախութիւն սրտի ժողովելոցն ամենեցուն, եւ զքաղցր արտասուս փափաքելի սիրոյ եւ խաղաղութեան, որ վառեալք աստուածային սիրով յօժարեցան եւ ստորագրեցին ամենեքին կնքելով զսահմանադրութիւնն, եւ խնդրեցին, զի տպեսցի այն ՚ի յիշատակ յաւերժական սիրոյ, եւ մնասցէ հաստատուն ՚ի մէջ ազգիս, որ եւ յետոյ միաբան խորհրդով իշխանապետաց ազգիս տպեցաւ եւ կոչեցաւ ՀՐԱԻՆՏ ՍԻՐՈՅ, եւ յառաջն եւ ՚ի վերջն կնքեցաւ կնքով Պօղոսի պատրիարքին, եւ այնպէս տարածեցաւ ընդ ամենայն աշխարհ:

Արդ զօրինակ սահմանադրութեան այնորիկ բարիոք վարկայ դնել աստանօր, զի որոց ոչն իցեն տեսեալք զտետրակն Հրաւէր սիրոյ, ընթերցցին աստանօր, եւ ծանիցեն թէ ոչ նորոգ եմուտ ՚ի մեզ ուղղափառութիւնն, այլ զոր ՚ի սկզբանէ ունէաք եւ անխափան պաշտէաք յեկեղեցիս մեր, նոյն իսկ է այն, զոր անփոփոխ ունիմք եւ պահեմք իսպառ:

## ԳԼՈՒԽ ԻԵ.

*Սուրբ եւ ուղղափառ վարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է, յորոյ վերայ միայն է խնդիրն:*

“ՏԷՐՆ մեր Յիսուս Քրիստոս է Աստուած ճշմարիտ եւ մարդ ճշմարիտ, նոյն ինքն որդի մարդոյ եւ որդի Աստուծոյ, Համագոյ Հօր ըստ Աստուածութեան, եւ Համագոյ մեզ ըստ մարդկութեան: (Ընդհանրական 118):

“Ուստի ասեմք ընդդէմ Նեստորի՝ մի բնութիւն փոխանակ մի անձնաւորութեան: Ասեմք ընդդէմ Եւտիքի՝ երկու բնութիւն անբաժանելի՝ ի մի Քրիստոս, ըստ մտաց սուրբ Հարց եւ ժողովոց:

“Քանզի՝ ոչ ըստ Նեստորի՝ ի յերկուս բնութիւնս եւ յերկուս դէմս բաժանեմք զմին Քրիստոս, եւ ոչ ըստ Եւտիքեայ եւ Համախոհից նորին՝ ի մի բնութիւն ժողովեմք շփոթմամբ եւ այլայլութեամբ:

“Այլ ունիմք ասել զերկու բնութիւնն ըստ մեծին Գրիգորի Աստուածաբանի՝ առ Կղողիոս թղթին գրեալ ընդդէմ Ապողինարի՝ եւ որոց ըստ նմա, եթէ՝ բնութիւնք երկուք: Յաւելու ասել եւ զպատճառն՝ քանզի Աստուած եւ մարդ... եւ այլուր ասէ, եթէ կրկին էր, յայտ է թէ՝ բնութեամբ եւ ոչ անձնաւորութեամբ:

“Իսկ զմի բնութեանն եղանակ՝ զոր ասեմք մեք, մի ոք յայլ դէմս կարծիցէ, բայց... զոր ուսաք ՚ի յուղղափառ վարդապետաց եկեղեցւոյ, մանաւանդ ՚ի սրբոյն Կիւրգէ Աղէքսանդրացւոյ, որ ընդդէմ Նեստորի, որպէս եւ գրէ յառաջին թղթին՝ որ առ Սեկունդոս, եթէ խոստովանիմք մի բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս եւ Հարքն ասացին, փոխանակ մի անձնաւորութեան:

“Սոյնապէս եւ կրկին լինել կամաց եւ ներգործութեանց ՚ի միաւորութեան անդ՝ անհակառակս միմեանց, երբեմն Աստուածային՝ յորժամ զԱստուածութեանն կամէր ցուցանել զգօրութիւն, եւ երբեմն մարդկային՝ յորժամ զմարդկութեանն կամէր յայտնել զխոնարհութիւն”։ (Ընդհանրական 119):

“Հաւատամք եւ ներգործութեանցն նոյնպէս լինել Աստուածայնոցն եւ մարդկայնոցն ՚ի միաւորութեան անդ... միոյ անձնաւորութեան զերկոսին զայսոսիկ խոստովանիմք, երբեմն որպէս զԱստուած՝ զԱստուածայինս ներգործելով, եւ երբեմն որպէս զմարդ՝ զմարդկայինս:

“Իսկ զՀոգին սուրբ խոստովանիմք Հօր եւ Որդւոյ, քանզի ըստ սրբոյ Լուսաւորչին Հայր յանձնէ, Որդի ՚ի Հօրէ, Հոգին սուրբ ՚ի նոցունց եւ ՚ի նոսին”։ (Ագաթանգեղոս 397)։

Վասնորոյ ասեմք ըստ Շնորհալուոյն այսպէս, “Թէ Հոգին սուրբ բղխի ՚ի Հօրէ եւ առնու յՈրդւոյ, բղխումն Հօր անքննաբար, առող յՈրդւոյ անճառաբար”։ (Շարական Կէ)։

“Եւ թէ ՚ի Հօրէ բղխումն Հոգւոյդ ոչ քննեցան, եւ հոսման յՈրդւոյ առումն ոչ պատմեցան”։

“Եւ ըստ Շարականին, Աղբիւր կենաց եւ փրկութեան մերոյ՝ Հոգի Հօր եւ Որդւոյ”։ (Շարական Բ.)։

Իսկ հատուցումն անջատեալ Հոգւոց՝ ՚ի հրաժարիլ նոցա յաշխարհէ, ըստ ուսուցանելոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին այսպէս. “Որք սուրբքն են, ՚ի Քրիստոս մերձ լինին, զի ուր ենն եմ (ասէ) անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի”։ (Յովհ. ԺԲ. 26)։

“Դարձեալ, իբրեւ երկրաւոր կեանքս ՚ի ձեռն մահուան ՚ի գլուխ ելանեն, Հոգին յուղարկի առ Աստուած, որ ետն զնա, եւ մարմինն դառնայ ՚ի հող, յորմէ ստեղծաւ յարարչէն”։

“Եւ սուրբ եւ արդար Հոգւոցն ընդ յառաջ գան հրեշտակք եւ սրբոցն Հոգիք, եւ տանին առաջի Աստուծոյ՝ սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ երգօք հոգեւորօք, գովեն զամենազօր փառսն Տէրութեան, ամենասուրբ Երրորդութեանն, եւ գոհանան գերախտաւոր բարութենէն, որ փոխէ յերկրաւորացս յերկնաւորսն, յանարգութենէս ՚ի պատիւ, զհրաւիրեալսն եւ զկոչեցեալսն յիւր արքայութիւն եւ ՚ի փառսն”։ (Յաճախապատում 152)։

“Եւ յայլուր ասէ, իսկ որ ՚ի սուրբ սէրն Քրիստոս հաստատեալ են, որք զանձինս իւրեանց ետուն ՚ի մահ... ապրեալք լինին”։

“Եւ բացցին դրունք կենաց բարեբարութեանն շնորհօք Հոգւոյն սրբոյ վերին կայանիցն, ուր ժողովք սրբոցն են հանգուցեալք”։ (Յաճախ. 171)։

Իսկ յաղագս ներելի մեղօք ննջեցելոց՝ եւ թողեալ մահու չափ մեղաց զապաշխարանսն ոչ վճարողաց աստ՝ աղօթս առնեմք ասելով. “Արա արժանի ողորմութեան եւ քաւութեան եւ թողութեան մեղաց”։

Եւ վերագոչեմք յեկեղեցիս, ”Որ թողութեանց ես տուող Աստուած, թող զմեղս մեր ննջեցելոց”։ (Շարական Ճժէ.)

“Եւ հանգո ՚ի խորանի քում յարքայական ՚ի հանգստեան”։

Եւ դարձեալ Շարական ”Ահեղ խորհուրդ քահանային”։

Վասնորոյ եւ մաղթէ քահանայն 'ի սուրբ պատարագին ասելով. “Յիշեա տէր եւ ողորմեա, եւ գթա 'ի հոգիս հանգուցելոց, հանգո զնոսա եւ լուսաւորեա ընդ սուրբ քո յարքայութեանդ երկնից”:

Քանզի այպէս ուսոյց սուրբ Լուսաւորիչն մեր յասելն, իսկ զհաւատացելոց մեղուցելոց եւ խոստովանողաց եւ ապաշխարողաց եւ հաղորդելոց փրկական խորհրդոյն՝ եւ հրաժարելոց յաշխարհէ, եւ նոցա կատարեսցին յիշատակք Քրիստոսի պատարագաւն՝ եւ աղօթիւք եւ գթովք տնանկաց՝ այլ եւ բարի գործովք, զի վերջնոցն բարեգործութեամբք հանգուցեալքն նորոգեսցին նորոգութեամբ կենացն անվախճանից”։ (Յաճախ. 160):

Վասն որոյ եւ տեղին՝ յորում կան այսպիսի ննջեցեալ հոգիք, որ կարօտ են օժանդակութեան եկեղեցւոյ, կոչի 'ի մեզ կայան, զոր այլք կոչեն քաւարան կամ մաքրարան:

Իսկ զանգեղջ մեղաւորս եւ զամբարիշտսն եւ զանհաւատսն գիտեմք լինել արդէն իսկ անարգեալս եւ դատապարտեալս 'ի գեհենի, ուստի ասեմք բանիւ սուրբ Լուսաւորչին. ”Այլ կայանք են նոցա, որք արհամարհեցին զօրէնս նորա, եւ ծառայեցին դժնդակ ցանկութեանց ախտին եւ պէս պէս չարեաց, որ ժառանգելոց են զարտաքին խաւարն, խաւար է աստ արտաքին չար, որոց խաւարեալ ն միտք եւ զգայութիւնք, եւ օտարացեալ են 'ի կենաց անտի... եւ են անդ 'ի հուր գեհենի, ուր լալ է աչաց, եւ կրճել ատամանց”։ (Յաճախ 253):

Իսկ սուրբ առաքեալն Պետրոս է գլուխ առաքելոց սրբոց, եւ վէմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց, որպէս երգեմք. ”Որ գերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց անուանեցեր լինել գերանելին զՊետրոս, գլուխ սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ”։ (Շարական ԺԹ):

Եւ սուրբ Լուսաւորիչն մեր ասէ. ”Քրիստոսագունդ եւ խաչակիր առաքելոցն, որոց գլխաւորն Պետրոս”։ (Ագաթ. 30):

“Եւ թէ՛ արար զնա վէմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց”։ (Ագաթ. 198):

Եւ որպէս իւրաքանչիւր առաքեալք ունին 'ի Քրիստոսէ զիշխանութիւն առաքելական, նոյնպէս եւ ամենայն աթոռք՝ որք ունին զօրինաւոր յաղորդութիւն առաքելոց, Աստուածային իրաւամբք ունին զամենայն իշխանութիւն եւ զիրաւապէս ուսուցանեն սուրբ գիրք, եւ սահմանադրութիւնք սրբոց հարց եւ ժողո-

վոց, ըստ այնմ. ”Ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ, եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի”: (Մատթ. ԻԸ. 20):

Իշտէ պու մատտէի տէ Հայոց սուրբ եկեղեցիսի պէօյլէ ինանըր, վէ ընդհանրական սուրբ եկեղեցի տէ՝ պու թարզ ինանըր, վէ Հռովմէական սուրբ եկեղեցի տախի:

Իւչիւնճիւ, Պետրոս առաքեալ գլուխ տուր, վէ իպթիտա քի առաքեալ տըր՝ առաքեալարըն իչինտէ, վէ հէր առաքեալարըն



Պէշինճի մատտէ, վերջին օծում տուր, ճայից տիր Հաստայաւրա վերմէք, նասըլ քի սուրբ առաքեալար վերիւրէր իտի Քրիստոս էֆէնտիմիդ պու ճիհանտէ իքէն, վէ Յակոբոս առաքեալ տա թէնպիհ իտէր, վէ ճիւմլէ խրիստիյան միլլէթլէր տէ իտէրլէր, վէ պիգիմ միլլէթ տախի իտէր իտի իլէրի, պիր պաշլըճա սէպէպ իչին օծումու գալտըրտըլար, լաքին գիշեր ժամ գալտը օծումսուզ, վէ իսթէյէնէ վերիւրէր, գիրա Գաթուրիկլէրտէ տախի գուրուր իտէր քի, եա Հասթա իստէմէզ ալմայա, վէ եախօտ Հասթանըն էթրաֆը դօյվէրմէզ քի, Հասթա էօլէճէյնի տույմասըն տէյի:

Պունլար ճէմիսի տէ պիր այնի իտի պիգիմ միլլէթին սուրբ վարդապետլէրին քիթապլարընտա: Պունտան սօնկրա պէյէնմէտիյինիզ ազիզ աստուածաբան Աբբալը վարդապետլէր նէ՞ եաբտըլար, պագըն կէօրիւն, վէ էօյրէնին, միլլէթիմիգին ազիզ վարդապատլէրինէ վէ ազգասէր ամիրալարա աղնաթտըլար քի, միլլէթիմիգին խրիստիյանլըզընա խալէլ վէրէնլէրին իսմի գալգսըն քիլիսէտէ օգունան քիթապլարըն իչինտէն, քի պունլար տըր. Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի, եւ Մովսէս Տաթեւացի, վէ Շարականտան Դէոսկորոս Ասորի, վէ ձեռնադրութիւն քիթապընտան Լեւոն բաբըն վէ Քաղկեդոն ժողովքունուն նգովքու, պունլար իչին եասաք իթմիշլէր իտի Հոովմայ քիլիսէնին միսիօնարլարը, վէ պու մատտէլէր իչին տէրլէր իտի էրմէնի քիլիսէսինէ կիթմէյին:

Իշտէ պունլար տըր Աբբալըրարըն կէօրտիւ քլէրի իշ, աղնայըն վէ պիլին:

Վէ գուսուր արարողութիւնլար, վէ ծէպէր էսկի թագվիմ տիր, պին սէնէտէն էվվէլի նասըլ ըսա իւմիւմէն խրիստիյանլէրին, օնուն այնիսի տիր էրմէնի քիլիսէնին գայտէլէրի:

Մէքրուհ փափազլար էսկի քիթապլարտան թասիհ իթսինլէր պագսընլար, աղնասընլար: Նաֆիլէ եէրտէ էրմէնիլէրէ պուլստան իթմէսինլէր, վէ էրմէնի քիլիսէսինէ հերետիկոս տէմէսինլէր, իշտէ պու եօգարքի եազըլան մատտէլէրին խիւլասէսինի վէրէլիմ, Հոովմայ քիլիսէսի իլէն էրմէնի քիլիսէսինի պիրպիրինէ ըուպար իտէրէք, նասըլ քի հէր մատտէնին նիհայէթտինէ օլմուշ տուր:

1. էրմէնի միլլէթինին քիլիսէսի նէ թարզ ինանըյօրսա Հոգին սուրբուն բղխումունու, ելումունու, պիր այնը ինանըր Հոովմայ քիլիսէսի:

2. Էրմէնիլէր նասըլ ինանըրլարսա իքի բնութիւնու Քրիստոսուն, օնուն կիպի ինանըրլար Հոովմալըլար:

3. Պետրոսուն գլխաւորութիւլա վէ բաբըն պէճօյիւքլիւղիւնէ կէլիրսէ՝ իֆրաթ սօլ թարաֆընա սափարլար, լա թէշպիհ Ալլահ կիպի իտէրլէր:

4. Քաւարանը պիր այնի էրմէնիլէրին տէտիզի կայանք կիպի տէրլէր:

5. Վերջին օծումու թարաֆէյին գապուլ իտէրլէր, օլտու քի իքի թարաֆ տա պիր այնի հիչ պիր ֆէրք եօգ տուր:

Վաքին Քօռէսի լաթէշպիհ եպիսկոպոս, վէ մէքրուհ միսիօնասլար, քի էրմէնի քիլիսէսինէ հերետիկոս հերձուածող տէրլէր, էկէր Հոովմայ քիլիսէսի տէ պունլարա ույուպ, օ տա տէրսէ, իւմիւմէն հերետիկոս վէ հերձուածող քէնտիլէրի օլուրլար, գիրա իլիմտար ատէմլէր տէրլէր քի, (հաւասարաց նոյն է հետեւութիւն) օլ քի իքի մատտէ պիր այնի տիր, պիրինէ էյի տէնիրսէ, հէլ հէլէթտէ օ պիրինէ տէ էյի տէնիլիր, վէ էկէր պիրինէ ֆէնա տէնիրսէ օ պիրինէ տէ ֆէնա տէնիր, գիրա իքիսի տէ պիր տիր:

Վէ լաքին պիգ Հոովմայ քիլիսէսինէ հերետիկոս տէմէյիգ, վէ հերձուածող հիչ, գիրա սուրբ եկեղեցի պիլիրիգ, բաբ տա օնտա օթուրմասը իչիւն բաբ տէրիգ, աստուածաբանճա իպթիտաքի մասնաւոր եկեղեցի:

Վէ տին թարաֆընտա պէօյիւնքի կիւնտէ կէրչի եազնըչը եօգ տուր, լաքին էյի բարք ամէլ թարաֆընտան, վէ իլլա շէրաաթ թարաֆընտան իֆրաթ եազնըչը վար:

Զիրա չար, մոլորեցուցիչ, խաբեբայ, վէ մէքրուհ միսիօնարլարըն, վէ պագի մօնսինեօլարըն ճէվապլարընը սահիհ տիր տէյի տիյնէմէ իլէն, չօգ եազնըչ շէրաաթ կէօրիւյօր պէօյլէճէ մալիւմլէրի օլտուն ագըլլը Գաթոլիկլէրին:

1820. Մայիս 7

Հ. Սերովբէ Վ. Ճէվահիրճեան  
'ի միաբանութենէ Մխիթարեան:



## ԳԼՈՒԽ ԼԱ.

*Յաղագս օրհնութեան իւղոյ վերջին օծման, եւ աղմկի ժողովրդեանն Հայոց:*

**Ա**րդ 'ի սկզբան օգոստոսի, օրհնեաց պատրիարքն ցիւղ վերջին օծման 'ի մայր եկեղեցին սուրբ Աստուածածնի:

Եւ յեկեղեցիս ինչ առաքեաց, զի ոք 'ի հիւանդաց յօժարին առնուլ զայն խորհուրդ, երիցունք օծցեն զնա անխափան:

Բայց հակառակասէր Գոլէճեանք ոչ սակաւ զրգուէին զոմանս ոմանս 'ի մերայնոց, եթէ զպապն եւս յիշէք 'ի պատարագի, կատարեալ ուղղափառ լինիք, եւ այլ եւս անտեղի եւ անյարմար բանս ասէք, ասէին:

Եւ եօթներորդ աւուր օգոստոսի, որ էր շաբաթ, Գաղատացի ոմն 'ի հակառակասէր Գոլէճեանց՝ խորհրդով Քուցիանթի կոչեցեալ խռովայոյզ կարգաւորին՝ որ ոխերիմ թշնամին էր եկեղեցւոյս Հայոց, ունելով 'ի ձեռին իւր զՀրաւէր սիրոյ գիրքն, եւ փոխանակ պատկրի Լուսաւորչին՝ մածուցեալ ըզ պատկեր պապին Հռովմայ, սկսաւ շրջիլ 'ի սենեակս կօշկակարաց Կեսարացոց, եւ ցուցեալ ամենեցուն զպատկեր պապին, ասէ ցնոսա, առ իմէ՞ նստեալ էք եղբարք աստ անհոգս եւ միամիտ, ո՞չ գիտէք, զի պատրիարքն մեր Ֆռանկացեալ՝ ուրացաւ զԼուսաւորիչ հայրն մեր, եւ զպապն Ֆռանկաց ընկալաւ. անարգեաց զէջմիածինն սուրբ, եւ Հռովմայ աթոռոյն հնազանդեցաւ, այսուհետեւ ոչ գոյ սրբալոյս միւռոն, որով որդիք մեր զրոշմեսցին 'ի Հոգի սուրբ, այլ իբրեւ աղցան խոսոյ՝ իւղով ձիթոյ ունիք օծանիլ. տեսէք եղբարք, տեսէք ըզ պատկերս զայս, միթէ նմանիցի՞ սա սուրբ Լուսաւորչին մերում, երանի թէ եղբարք՝ մեռեալ էաք, եւ ոչ տեսեալ զայս օր, արիք եղբարք արիք, լուելոյ ժամանակ չէ, ահա երեք հարիւր ոգիք սուրբ Լուսաւորչի զաւակունք 'ի վաղիւն ունին գնալ առ պատրիարքն, բողոք բառնալ, գոչել եւ աղաղակել, եւ սասանեցուցանել զնա, զի թերեւս զղջասցի, եւ մի փոխեսցէ զհայրենի աւանդութիւնս նախնեաց մերոց, եւայլն:

Ջայտսիկ լուեալ անմիտ ժողովրդեան, եւ տեսեալք զպատկեր պապին՝ հաւատացին դժոխալուր բանից նորա, եւ խոստացան նմա ինքեանք եւս կանխել ընդ առաւօտն յեկեղեցին 'ի Խուժխաբու, եւ գլխաւորք կօկակարացն խռովեալք յօյժ 'ի բանիցս յայ-

ցանկ, առաքեցին զարս 'ի կրպակս արհեստակցաց իւրեանց պատուիրել եւ ասել, զի թէ յառաւօտուն յեկեղեցին խոստովանուի ոչ գտանիցին, յարհեստէ անտի տարագիր լինիցին:

Այս ճայն եհաս յականջս պատրիարքին ընդերեկս աւուրն, եւ իսկոյն փութացաւ զԴիոնէսիոս եպիսկոպոս վեքիլ իւր առաքել յիւսկիւտար առ Գրիգոր ճարտարապետ՝ եւ առ Յարութիւն աղա Պեղճեան ծանուցանել նոցա զայս՝ զոր լըուաւն:

Բայց որովհետեւ երրորդ ժամ էր գիշերոյն, ոչինչ կարացին առնել նոքա, եւ ասէ Յարութիւն աղա Պեղճեան, եթէ լուեալ էր իմ զայս յերեկոյն, դիւրին էր ցրուել զխորհուրդս նոցա, բայց զի գիշեր է, զի՞նչ կարացից առնել:

Եւ 'ի վաղիւ անդր 'ի կիւրակէի յառաւօտուն Գաղատացին այն՝ որ յառաջնում աւուր վրդովեալ էր զհասարակութիւնն, շրջագայեալ յիջեւանս ամենայն ապխտավաճառ օտարականաց 'ի կերպարանս Կեսարացոյ՝ հրաւէր կարգաց 'ի չորրորդ ժամուն իջանել յեկեղեցին ուտել զմատաղ:

Եւ Տէլի Պաղտասար՝ որ էր 'ի մակոյկն ծովակալ բղեշխին, թելադրեալ 'ի բանից երկուց ապխտավաճառ Կեսարացոց՝ որոց անուանք էին Յակոբ եւ Կարապետ, առաքեաց եւ նա 'ի պատրիարքարանն յայն օր զսրիկայս Սամաթիոյ:

Եւ ամբոխ մեծ գումարեալ ժողովեցան 'ի Պաղչէ ժամն եկեղեցոյն, եւ միաբան աղաղակէին, թէ պատրիարքն Փռանկացաւ, եւ զմեզ 'ի Փռանկութիւն փոխելոց է, մեք Հայ եմք, Փռանկ ոչ լինիմք, 'ի սուրբ Լուսաւորչէ մերմէ ոչ բաժանիմք, եկեսցէ պատրիարքն եւ ծանուցէ մեզ:

Առաքեաց Պօղոս պատրիարք Մարկոս եւ զՅակոբ եպիսկոպոսունս Երուսաղէմի, եկին նոքա, եւ յորդորէին զնոսա բանիւք բազմօք, թէ սուտ են այն ամենայն, զորս լուեալն են, բայց նոքա հարին նոցա բռունս, եւ վանեցին զնոսա:

Ապա գրոհ տուեալ զնացին 'ի պատրիարքարանն, եւ տեսեալ զի վակ էր դուռն, հարին եւ խորտակեցին, եւ հեղան 'ի ներքս, յուզէին զամենայն սենեակս, եւ ոչ կարէին գտանել զպատրիարքն, զի նա ոստուցեալ անդէն էն ընդ պատուհանն՝ անցեալ էր 'ի փախուստ 'ի մերձակայ տուն Տաճկին, եւ թագուցեալ անդ:

Եւ այսու պաշտպանեաց ոչ միայն զանձն, այլ եւ որ մեծ է՝ զազգն՝ զի թէ վնաս լինէր անձին նորա, տուժէր ազգն զանհնարին տուգանս:

Յայնժամ Դիոնիսիոս եպիսկոպոս փոխանորդ պատրիարքին՝ ազդ արար 'ի դուռն Եֆնիչէրի աղասիին, որ իսկ եւ իսկ եհաս անդ 5-600 զօրականօք, եւ զոմանս կալեալ՝ առաքեաց 'ի բանտ առ Միւհիսիւր աղա, զայլսն ցրուեաց, եւ եթող անդ զՊաշ աղա հանդերձ զօրականօք, որ պահէին զդուռն պատրիարքարանին զաւուրս հնգետասան, եւ զպատրիարքն հանեալ 'ի տանէ Տաճկին հրամանաւ Տէրութեանն, նստուցին 'ի տեղի իւր:

Եւ 'ի միւսում աւուր, որ էր 9 օգոստոսի, ոմանք 'ի կօչկակարաց յետ գայն ոճիրս գործելոյ յանդգնեցան ելանել նաեւ աներկիւղ յատեան եպարգոսին, եւ թուղթ բողոքանաց մատուցանել նմա:

Եւ եպարգոսն սպառնայ նոցա, թէ ո՞րով իշխանութեամբ արարիք գայդ 'ի վերայ պատրիարքին ձերոյ յարքունուստ կարգելոյ՝ կուտիլ ապստամբութեամբ. եթէ դատ ինչ ունէիք ընդ նմա, եւ բողոք զնմանէ, ահա ատեան, ա՞յժմ ծանեաք, թէ գոյ իշխան 'ի վերայ ձեր, զի յետ ձեռներէց լինելոյ յայդ չարիս անհրնարին՝ եկիք այսր ամբաստան լինել:

Եւ հրամայէ ձերբակալ առնել զամենեսին, եւ արկանել 'ի բանտ:

Ի նմին աւուր կոչեցան 'ի դուռն եւ իշխանք մեր, ուր Բէիզ էֆէնտի եհարց նոցա՝ թէ գո՞հ էք զպատրիարքէն ձերմէ, զորմէ չարախօսեն ապստամբեալք, եւ թէ զի՞նչ իցէ այս իւղ օրհնեալ, նո՞յն է ընդ պալասան իւղոյն եկելոյ յէջմիածնէ, թէ այլ:

Պատասխանի արարին իշխանք մեր, թէ սա այն է, որ յաւուրց անտի առաքելոց եւ Քրիստոսի կայր 'ի մեզ, բայց 'ի սակաւ ժամանակս խափանեալ, եւ զի վասն սորա անկեալ էր բաժանումն 'ի մէջ մեր, նորոգեցաք անդրէն, զի խոչընդոտն բարձցի:

Եւ այս խոստովանութիւն բանից իշխանաց մերոց գրեցաւ յարքունի դիւանագիրս, եւ այս իբրեւ նախադատութիւն նանրացուցանէ՝ զոր յայսմ հետէ ամբաստանութիւն զայսմ գլխոյ լինիցի, նոյնպէս եւ վասն նորատիպ գրքոյ Հրաւէր սիրոյ անուանելոյն, վկայեցին լինել վարդապետութիւն հին եւ ոչ նորամուտ, զոր Տաճիկք էՍԿի էՐՄէնԻԼԻՔ կոչեն:

Այլ քանզի 'ի բանս դատախազից կայր հնազանդութիւն պապի, եւ Քրանկութիւն, թէ եւ դժուարահաւատ եղեւ ասացուած իշխանաց մերոց առաջի արքային, այլ մերժեցաւ տարակոյսն, յորժամ զՀրաւէր սիրոյն թարգմանեալ 'ի լեզու Արաբացւոց ընթեր-

ցան, հոսակ յետոյ ասէ Րէիզ Էֆէնտի, եթէ այդպէս է, ո՞ր զայդչափ բազմութիւն յոտին կացոյց:

Պատասխանեն իշխանք մեր, թէ սոքա արք տգէտք եւ առանց դպրութեան են, իրաց չեն հասու լեալ խրթնութեան, եւ այլ ընդ այլոց կարծեօք յայս 'ի սոյն են ձեռնարկեալ:

Եւ քանզի 'ի քրէական մեղս համարի ոճիր ապստամբութեանս, եւ դէմ ընդդէմ ներհակ իշխանութեան, վասնորոյ անհնարինս զայրացոյց զարքունի որեարսն եւ զթագաւորն, զի մինչ նոքա հնարին զստահակսն ազգին իւրեանց ածել 'ի հպատակութիւն, քանի՞ մեծ զայրացումն ոչ լինի նոցա տեսանել զստրուկսն եւս 'ի նոյն չարիս մտաբերեալ:

Ուստի յայնոսիկ աւուրս պատգամ սաստիկ եկն 'ի դրանէ առ պատրիարքարանն մեր յայտնել զհեղինակն, որ զբազմութեանն ամբոխ գումարեաց, եւ զի՞նչ է պատճառ այդմ, յայտ առնել:

Եւ նա պատասխանեաց, թէ չիք այդմ պատճառ բանաւոր, բայց միայն բազմադիմի կոհակք ծովացեալ մեղաց իմոց, որ զխուժան պարզամիտ ժողովրդոց կուտեաց 'ի վերայ իմ, բայց առ 'ի գտանել զհեղինակն՝ առանձինն զամենայն գլխաւորս արհեստաւորաց կոչեաց, յերդումն հրաւիրէր եւ նզովս կարգայր 'ի վերայ նորա, որ իրագէտ գոլով՝ ոչ վկայէ եւ ծանուցանէ, զի մատնեսցուք ասէ զչարն, եւ չարիքն անցցեն յազգէս:

Ի 22 օգոստոսի առաքեաց յամենայն եկեղեցիս վարդապետս, հրատարակեաց զհրաւէր սիրոյն՝ վարդապետութիւն ուղղափառական, բանք ողջամիտ դաւանութեան սրբազան հարց, եւ ոչ նորահնար գայթակղեցուցիչ եւ մոլորամիտ:

Նաեւ կոնդակաւ բանադրանս ընթերցաւ վասն նոցա, որք գիտեն, թէ ու՞ր եղեւ սկսուած այսր չարախորհուրդ ապստամբութեան, եւ ո՞րք էին՝ որ զայդ հնարեցին, եւ ոչ յայտ արարեալ ծանուցանեն:

Յեկեղեցին սուրբ Հրեշտակապետի՝ յորժամ Եփրեմ վարդապետ փակեալ զվարագոյր խորանին ընթեռնոյր, ժողովուրդք դիմադարձ գտան եւ չետուն թոյլ կարգալ:

Այլ 'ի հանդիպակաց կիւրակէին գնացեալ վէքիլ Դիոնէսիոս եպիսկոպոս ընթերցաւ:

Բայց այս ամենայն վճարեաց ոչինչ, եւ ոչ յերեւան կացոյց զոք, եւ բազումք 'ի բանտարգելոցն մատնեցան 'ի տանջանարանս Պօսթան պաշիին, ուր ոմն խոստովանեցաւ, թէ Տէլի Պաղ-

տասարն յորդորեալ զմեզ առաքեաց անդ, եւ առաքեալ արս՝  
ըմբռնեցին զնա, եւ արկաւ ՚ի բանտ:

Եւ այլ ոմն ասաց, թէ սարկաւագ ոմն Կարապետ անուն Կե-  
սարացի յորդորեաց զմեզ յայս գործ:

Եւ զայն գտին ՚ի տուն Սախայեան Գրիգոր աղայի, եւ բերեալ  
եղին ՚ի բանտի:

Այլ ապա յայտնեցաւ թէ Գաղատացի ոմն գնացեալ ՚ի սե-  
նեակս նոցա յորդորեալ է զնոսա եւ համոզեալ ամբոխ մեծ յա-  
րուցանել:

Ուստի հրամայեաց տէրութիւնն, եւ զոմանս ՚ի նոցանէ  
ծպտեալ կերպարանօք շրջեցուցին ակուրս բազումս ՚ի փողոցս  
Կոստանդնուպօլսոյ գտանել զԳաղատացին զայն, այլ չգտաւ  
այրն, զի փախուցեալ էին զնա Գողթնեանք յԵւրոպա:

Եւ վասն այսր շրջէր Դիոնէսիոս եպիսկոպոս յեկեղեցիս Կոս-  
տանդնուպօլսի եւ գիւղօրէից նորին, եւ բանադրանս կարգայր,  
թէ որ ոք պահեալ իցէ զայրն զայն ՚ի տան իւրում կամ զայնպիսի  
ոմանս, յայտնի արասցէ, այլ ոչինչ օգտեցաւ:

Իսկ սարկաւագն ՚ի տանջանս անդ մատնեաց նախ զԱստուա-  
ծատուր եւ զԵրեմիա եպիսկոպոսունս, զորս իջուցեալ առ Պօսթան  
պաշին, եւ բերեալ առաջի զսարկաւագն, ասէ ցնա Պօսթանճի  
պաշին, սոքա՞ են սեւագլուխքն, զորս մատնեցեր, եւ զի՞նչ ասա-  
ցին քեզ՝ ծանո: Ասէ սարկաւագն, սոքա են, բայց ինձ ոչինչ ասա-  
ցեալ են սոքա, այլ առ ահի եւ սաստկութեան տանջանացս մատ-  
նեցի զսոսա:

Յայնժամ ետուն զնա վերստին ՚ի տանջանս, եւ նա մատնեաց  
յայն օր զտէր Կիրակոս կաթողիկոսն Սսոյ, որ յաւուրսն յայնոսիկ  
ելեալ զնայր յաթոռ իւր:

Առաքեցին իսկոյն սուրհանդակս զկնի նորա, եւ գտեալ զնա  
՚ի ճանապարհին ՚ի Նալլը խան, ածին ՚ի Կոստանդնուպօլիս, եւ  
տարեալ ՚ի բարձրագոյն դուռն, հանին առաջի մեծի փոխարքա-  
յին:

Հարցանէ եպարգոսն եւ ասէ, զի՞նչ է այն նորատիպ գիրքն,  
զորս հնարեալ է պատրիարքն հակառակ ականդութեանց ձերոց,  
եւ պատճառ եղեալ է աղմկայոյզ լինելոյ ժողովրդեան ձերում:

Պատասխանի առնէ կաթողիկոսն ճշմարտախօս բանիւք եւ ա-  
սէ, գիրքն այն ոչ է բնաւ հակառակ հայրենի ականդութեանց մե-  
րոց, այլ է բուն իսկ հարազատ՝ համառօտութիւն հաւատոց մե-

րոց, եւ այն գիրք իմովս հրամանաւ տպեցաւ եւ ոչ պատրիարքին:

Իսկ եթէ պատրիարքն վասն կնքելոյ զսկիզբն եւ զվերջ գրքոյն այնորիկ յանցաւոր գտանի, նախ իմ գլուխ պարտ է հատանիլ, զի ես կնքեցի զառաջինն կարմիր կնքով իմով՝ պարագլուխ եղեալ այլոցն ամենեցուն:

Ասէ ցնա փոխարքայն, ըստ օրինի վեհափառ թագաւորութեան ձերում զոր Տէր հաստատուն պահեսցէ մինչեւ ՚ի կատարած աշխարհի, պատրիարքն մեծ է քան զիս, եւ հրամայէ ինձ ՚ի մարմնաւորական դէպս: Այլ ըստ հարկաւորութեան քրիստոնէական կրօնի մերում մեծ եմ ես քան զնա, եւ հրամայեմ նմա ՚ի հոգեւորական մասին:

Եւ այսպիսի բանիւք յանկուցեալ զմիտս փոխարքային՝ մերժէ ՚ի մտաց նորին զամենայն կասկած եւ զերկբայութիւն:

Յայնժամ փոխարքայն հրամայէ նմա անհոգս լինել, եւ երթալ ուր եւ կամիցի եւ հանգչել աւուրս ինչ, որ եկեալ եկաց ՚ի պատրիարքարանն, եւ ՚ի 18 սեպտեմբերի առեալ վերստին հրովարտակ յԱրքայէ՝ յուղի անկեալ չոգաւ յաթոռ իւր:

Յայսօսիկ աւուրս զՏէլի Պաղտասարն եւս ետուն ՚ի տանջանս, եւ նա խոստովանեցաւ, թէ երկու Կեսարացիք Յակոբ եւ կօշկակար Կարապետ թելադիր եղեն ինձ եւ համոզեցին յայս չարիս ընդդէմ պատրիարքին:

Գնացին զօրականք կալնուլ զնոսս՝ այլ նոքա փախուցեալ էին, յետ աւուրց ինչ Յակոբն գտաւ յԵփեսոսէն ծպտեալ կերպարանօք մսավաճառի, եւ բանտարգեալ եղեւ ընդ այլսն:

Այլ յետ աւուրց ինչ սարկաւազն ՚ի տանջանսն անդ մատնեաց զՍախայեան Գրիգոր աղայն, եւ զազգական նորին զխեղճ պատանին Ագարիա, որ առ ահի տանջանացն ՚ի բանտի անդ յեղաշրջեցաւ ՚ի Մահմէտական օրէնս, նոյնպէս եւ Տէլի Պաղտասար, եւ անիծեալն այն սարգաւազ՝ որ ժամանակաւ յառաջ ուրացեալ ՚ի հաւատոց իւրոց ՚ի Պաֆրա քաղաք Պոնտոսի՝ եւ ապա որպէս թէ ստրջացեալ եւ փախուցեալ, այժմ ՚ի բանտին վերստին ուրացաւ, զի զերծանիցի ՚ի տանջանացն, այլ առ ոչինչ գրեցաւ դաւանութիւն Մահմէտական կրօնին, միայն կերպարանափոխ եւ անուանափոխ արարեալ զնա, վերստին արկին ՚ի տանջանս յայտնել զհամախոհս ապստամբութեանս:

Եւ նա եցոյց յայն օր զՊէկխօզցի տիրացու Յովհաննէսն Իւսկիւտարու՝ ասելով, թէ եւ գիրս անգամ գրեաց առ կաթողիկոսն Էջմիածնի՝ գանգատ զպատրիարքէն, զհէտ եղեն զօրականք ունել զնա, այլ նա փախուցեալ էր ՚ի Ղրիմ:

Եւ մինչ զթուղթն գրեալ առ կաթողիկոսն՝ խնդրեցին յարքունուստ, Պէզճեան Յարութիւն աղա՝ որ հնարիւք իմն ՚ի ձառս իւր ածեալ եւ առ իւր պահեալ էր, տարաւ առ Պօտանճի պաշին, զոր Աստուածատուր եպիսկոպոսին թարգմանել ետ ՚ի տաճկական բարբառ, եւ առաքեաց առ Արքայ:

Յետ երկուց ակուրց դժոխատանջ ուրացողն մատնեաց եւ զԱրփիարեան Մկրտիչ աղա, զԳարաքէհեա մահտեսի Աբրահամ աղա, զԿէլկէլեան մահտեսի Պօղոս աղա, եւ զՄարգարեան աղա Պօղոս:

Այլ Գարաքէհեա մահտեսի Աբրահամ աղա յետ երկուց ակուրց զերծաւ ՚ի բանտէն միջնորդութեամբ Նէճիպ էֆէնտին՝ որ Գափու քեահեասի էր կուսակալին Եգիպտոսի, եւ այլքն մնացին ՚ի բանտին:

Անդ ՚ի 26 օգոստոսի յերեկոյս հինգշաբթի ակուր յերկրորդ ժամու գիշերոյն կոչեաց փոխարքայն զՊօղոս պատրիարք, եւ առանձինն հէարց ցնա եւ ասէ, չեղե՞ր դու նախածանօթ ապստամբութեանս, եւ ընդէ՞ր ոչ յայս արարեր ՚ի դուռն արքունի զելս իրացն գտանել:

Ասէ պատրիարքն, տէրութիւնն հրամայեաց ինձ բառնալ զբաժանումն ՚ի յազգէս, եւ եթէ այս գործ խոհականութեան մերում միայն մնայր, բարւոք յաջողէր ՚ի ռամիկ ժողովրդեան, բայց վասն զի քանի մի անձինք ՚ի մեծամեծաց ազգիս ոչ թոյլ ետուն ինձ ըստ խելաց իմոց տնօրինել, այլ ինքեանք ձեռներէց եղեն զպաշտօն պատրիարքի կատարել, զանվայելս եւ զանդէպս հրամայել եւ ՚ի գործ դնել, եւ ահա այս վախճան է նոցա խոհականութեան:

Հարցանէ փոխարքայն եւ ասէ. եւ ո՞ք են նոքա:

Ասէ պատրիարքն, Գրիգոր ճարտարապետ, Յարութիւն Պէզճեան, Ճանիկ Փափագեան, Հաճի Յովհաննէս Երկանեան եւ Կարապետ Ազնաւուրեան:

Ասէ փոխարքայն, կարճեա զլեզու քո, եւ մի եւս յաւելցիս առնուլ ՚ի բերան քո զձանիկ, (զի իւր սեղանաւոր էր նա), եւ ա-

առաքեաց զնա՝ ՚ի պատրիարքարանն, եւ գրեաց առ Արքայ՝ զոր լուաւն ինչ՝ ՚ի պատրիարքէն:

Իսկ Պօստանջի պաշին յաւել եւ զՍախայեան Գրիգոր մատնել ՚ի տանջանս, որ յետ եօթն աւուրց այլ ոչ կարացեալ զգէմ ունիլ տանջանացն յալեւորեալ հասակի ութսնամեայ ծերութեան իւրոյ, զամենայն մեղս յանձին իւր կալաւ, ասելով ես միայնակ արարի զամենայն, եւ պատճառ գտայ ամենայն չարեացդ, չունի ոք ընդ իս մասն եւ բաժին, թողէք երթալ զայսչափ բազմութիւն անպարտ անձանց, եւ մահ իմ աւարտ լիցի ամենայնի: Սոյնպէս եւ ապխտավաճառ Յակոբն ՚ի տանջանսն անդ ասէ, ես եւ Տէլի Պաղտասարն եղաք գրգռիչ աղմկայոյց խռովութեանս:

Նոյնպէս եւ Ազարիա պատանին խոստովանեցաւ, թէ ընդ ուրացող սարկաւազին շրջեցայ աստ անդ, եւ զոր ինչ քարոզէր սա ՚ի գրգռու ապստամբութեան, եւ ես վկայէի իրաւացի լինել: Եւ զամենեցուն սոցա զխոստովանութիւնս բանից՝ որ կոչի թագրիր, առաքեաց Պօսթան պաշին առ արքայ:

Եւ ՚ի 18 սեպտեմբերի յաւուր շաբաթու յերեկոյան ժամերգութեան մինչ երգէին զլոյս զուարթն, ասին ՚ի դուռն մայր եկեղեցւոյն Խումխարուի զծերունագարդ Գրիգոր աղան Սախայեան, եւ հատին անդ զանպարտ եւ զպատուական գլուխ նորա, նոյնպէս եւ զապխտավաճառ Յակոբն ՚ի Չեմպէրլի Տիքիլի թաշն գլխատեցին, զուրացեալ սարկաւազն եւ զպատանին Ազարիա տաճկական զգեստով կախեցին ՚ի Բարմազ գափուն: Եւ զՏէլի Պաղտասարն ՚ի Սամաթիա առաջի սրճանոցին իւրոյ կախեցին:

Ի յաջորդ աւուր զԱստուածատուր եւ զԵրեմիա եպիսկոպոսունս հանեալ ՚ի բանտէ՝ արձակեցին զնալ ՚ի տեղիս իւրեանց, ընդ նոսին եւ զտասն եւ ինն անձինս, որք չէին իրագէտ կամ յանցաւոր:

Այլ զիշխանսն՝ որք էին ՚ի բանտին, առաքեցին յաքսորս, զՄկրտիչ Արփիարեան ՚ի Ստանքէօյ, զմահտեսի Պօղոս Կէլկէլեան յիլիմեա, եւ զաղա Պօղոս Մարգարեան ՚ի Հոողոս:

Իսկ զորս յառանձնախօսութեան անդ մատնեաց պատրիարքն զհնգեսին իշխանսն առաջի փոխարքային, նոքա եւս արժանաւոր դատեցան աքսորանաց, միայն ճանիկ աղա՝ որ սեղանաւորն էր փոխարքային, ազատեցաւ ՚ի շնորհս նորա, եւ Գրիգոր ճարտարապետ՝ որ կայր մնայր ՚ի տան իւրում պակուցեալ, յերրորդ աւուր հոկտեմբերի եղեւ սաստիկ մրրիկ, եւ վնասեաց զբազում շի-



նուաժառ արքունի պալատին, հրամանաւ արքայի կոչեցաւ 'ի նորոգումն նոցին, եւ 'ի շնորհս այնը ջերծաւ 'ի փորձութենէ՝ որում ակն ունէր հասանել:

Երկանեան հաճի Յովհաննէս՝ որ 'ի ծովու այսմիկ փորձութեան արեւոտեալ լինէր, յյեղաշրջեցաւ 'ի Մահմէտական օրէնս: Եւ Ազնաւուրեան Կարապետ աքսորեցաւ 'ի Սաքըզ կղզի:

Պէզճեան Յարութիւն աղա խնդրեցաւ 'ի վերատեսչէն փողերանոցին տալ զհաշիւ իւր զամենայն, եւ տուեալ զամենայն յաւելուածովք պարզերես համարձակութեամբ, ոչինչ պակասութիւն ցուցանելով յանձն իւր 'ի պաշտամանէն, հրամայեաց նմա վերատեսուչն երթալ մնալ 'ի տան իւրում:

Եւ յետ վեց աւուր 'ի հոկտեմբերի 10, առաքեցաւ եւ նա յաքսորա յիլիմեա, որ ջեմեռանդ գոլով յաստուածապաշտութեան իւրում՝ էառ ընդ իւր զաղա Պօղոս վարդապետ զքարոզիչն Խարզալի, եւ գնաց, եւ գիր յանցանաց նորա էր այս, թէ՛ "Յարութիւն Պէզճեան ամենայն հաւատարմութեամբ եկաց 'ի պաշտօն արքունի փողերանոցին, եւ անպակաս զհաշիւ իւր ետ. բայց յազգային գործս լինելով ձեռնամուխ, 'ի խրատ զգուշութեան այս օրինակ պատժապարտութեան արժանի դատեցաւ":

Իսկ 'ի տեղի Յարութիւն աղայի Պէզճեան նստաւ Պօղոս Պիլէզկճեան Հռովմէական ազգայինն զամ մի եւ եթ, զի իբրեւ վերադարձաւ Պէզճեան յաքսորանացն, կալաւ նախ զպաշտօն սեղանաւորութեան ճիպի հիամայսան կոչեցեալ, եւ ապա զտեսչութիւն փողերանոցին եւ օր ըստ օրէ յաչս լինէր արքային եւ յոյժ սիրելի նմա:

Այս ամենայն խոռովութիւնք՝ որք եղեն յազգի մերում, առաւելապէս ցրտացողին զեռանդն սիրոյ եւ ջանից հոգեսէր իշխանաւորաց մերոց եւ ամենայն ազգասիրաց, եւ Պօղոս պատրիարք առաքեաց հրաման առ Աբբայեան վարդապետսն, զի առեալ զվեղար եւ զփիլոն իւրեանց՝ եկեսցեն առ ինքն 'ի պատրիարքարանն, զի հանդերձեալ եմ ասէ առաքել գերկուսն յէջմիածին, զերկուսն 'ի Մուշ, եւ զերիսն 'ի սուրբ Երուսաղէմ:

Ձայս լուեալ Աբբայեան վարդապետաց՝ յոգի խոցեցան, եւ փախուստ տուեալ 'ի Պէյօղլու՝ թագեան յեկեղեցիս Լատինացւոց, եւ ապաշխարեցին անդ:

Յայնժամ եղեւ խնդութիւն մեծ Գոլէճեանց, որք զչար կամս իւրեանց տեսին կատարեալ, 'ի քակել զմիաբանութիւն ազգիս, զի

եւ ժողովուրդք Աբբայեան վարդապետաց՝ որ եկեալ էին յեկեղեցիս մեր, գնացին եւ նոքա յեկեղեցիս Լատինացւոց, եւ եղեւ յետինն չար քան զառաջինն:

Բայց զայսր ամենայնի տուգանաց եւ վնասուց՝ զորս կրեցին Հայք յերեսաց Գողէճեանց, արձանագրեցին ՚ի սիրտս իւրեանց պահանջել զարժանի վրէժս ՚ի դէպ ժամանակի, որ եղեւ յաւուրս Կարապետ պատրիարքի:

## ԳԼՈՒԽ ԼԲ.

*Յարգազ ապստամբելոյ Յունաց 'ի հպատակութենէ Օսմանեան տէրութեան, եւ գլխատման Լիզորիոսի պատրիարքի եւ մետրապօլտաց՝ եւ մեծամեծաց Յունաց, եւ բազմաց հասարակութեան:*

**Մ**ինչ յայս աղմուկ շփոթի վարանեալ էին Հայք անհնարին ատելութեամբ ընդդէմ Հռովմէական Հայ ժողովրդեան, բացաւ եւ այլ իմն դուռն խռովութեան եւ մեծամեծ չարեաց 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի, քանզի Իբսիլանթեան Աղէքսանդր կոչեցեալ բղէշխն Մոլտաւիոյ, որ հնգետասան ամօք յառաջ խոյս տուեալ էր յերկիր տէրութեան Ռուսաց, եւ մեծամեծ շնորհս գտեալ 'ի կայսերէն՝ երեւելի ոմն էր 'ի Ռուսաստան աշխարհին:

Սա այժմ թեկն ածեալ կանգնել զկործանեալ թագաւորութիւն ազգի իւրոյ՝ երեք հարիւր արամբք սպառազինօք եկեալ մտանէ յերկիր Մոլտաւիոյ, եւ զբղէշխն երկրին՝ որ էր Միխալ պէյ կոչեցեալ, կոչէ առ ինքն, եւ յանկուցանէ զմիտս նորա, գլուխ ամբառնալ ապստամբութեան 'ի հպատակութենէ Օսմանեան թագաւորութեան:

Իսկ նա թէպէտ զառաջինն երկուցեալ 'ի մեծագօր տէրութենէն արքայի, ոչ համարձակի միաբանիլ ընդ նմա, այլ նա պէսպէս խրախուսական բանից պէրճութեամբ քաջալերէ զնա եւ յորդորէ միակամ լինել ընդ ինքեան ցուցանելով, եթէ թագաւորք եւրոպական ազանց համամիտ եւ համակամ են ընդ ինքեան յայս հոգեւոր գործ ազգասիրութեան:

Եւ խոստացեալ են պաշտպան լինել ինքեանց ըստ ամենայնի՝ ձեռնտուութեամբ զինուց եւ չրամոց եւ որ այլ եւս են պիտանացու կահք եւ կարասիք պատերազմին գործոց:

Յորդորեալ 'ի բանից աստի եւ Միխալ պէյ, միաբանի ընդ նմա, եւ գաղտնի գիրս գրէ եւ հասուցանէ առ մեծամեծս եւ առ երեւելի իշխանաւորս Յունաց, որք գտանէին յայնժամ 'ի Կոստանդնուպօլիս, որք էին արք սրամիտք եւ մտավարժք, տեղեակք գրոց գիտութեան եւ հնարագէտք ճարտարք:

Որոց ընթերցեալ զգիրն, եւ վերահասու լեալ մեծամեծ չարեացն՝ որք լինելոցն էին, զանխուլ 'ի տէրութենէն գիշերայն մտանեն 'ի նաւս եւրոպացի վաճառականաց, եւ խոյս տան 'ի

Կոստանդնուպոլսոյ որդւոյք եւ ընտանեօք եւ մեծագին ընչիւք եւ ապրանք իւրեանց, եւ դէպ ուղիղ գնան ՚ի Պեղոպոնիդա եւ ՚ի կղզիս միջերկրական ծովուն:

Եւ ՚ի փետրվարի 2, յամի տեառն 1821, Միխալ պէյ եւ Աղեքսանդր հրամայեն Յունական զօրուն ջնջել ջարդել զամենայն Տաճիկս, որք գտանէին ՚ի գաւառին յայնմիկ, եւ զքաղաքն Քալաս այրել, եւ զնաւս Օսմանեան վաճառականաց գրաւել. այս եղև սկիզբն պատերազմի նոցա ընդ Օսմանեան տէրութեան:

Բայց վասն զի միտ նոցա դիտաւորութիւն էր զազգն ողջոյն յուրացնել յոտս, եւ առաւել եւս զՊեղոպոնիդացիս, ուստի զտիւ եւ զգիշեր խորհէին խորհուրդ, թէ որո՞վ եղանակաւ ապստամբեցուսցեն զազգ իւրեանց ՚ի հպատակութենէ տէրութեանն, զի գիտէին, թէ առանց համակամ միաբանութեան ազգին ոչինչ վճարի:

Եւ յետ ընդ երկար յուզողութեանց եւ խորհրդածութեանց՝ գտին զեղանակ իմն ցրտացուցանել զազգ իւրեանց ՚ի սիրոյ հպատակութեան, եւ ատելի առնել զՕսմանեան տէրութիւնն առաջի ազգին իւրեանց, եւ այս էր անպարտ մահ եւ չարաչար սպանութիւնք պատրիարքաց մետրապօլտաց եւ եպիսկոպոսաց եւ քահանայական դասուց, որոց մահ արդարեւ վշտացուց զամենայն ազգս քրիստոնէից, թող թէ՛ զՅոյնս:

Ուստի Միխալ պէյ եւ Աղեքսանդր հաւանեալ եւ վճռահատեալ զայս գիւտ հնարից, խորհեցան, թէ որո՞վ եղանակաւ տացեն սպանանել Տաճկաց զպատրիարքունս եւ զմետրապօլիտս իւրեանց, զի կսկիծ նոցին ցաւեցուցէ զսիրտ ազգի իւրեանց, եւ ոգւով վրէժխնդրութեան բորբոքեսցին ՚ի բարկութիւն եւ ՚ի պատերազմ ընդդէմ Օսմանեան տէրութեան:

Ուստի գիրս բազումս սկսան գրել առ պատրիարքն Կոստանդնուպօլսոյ, եւ առ իւրաքանչիւր մետրապօլիտս յականէ յանուանէ, եւ այս էր իմաստ գրութեանն, եթէ ըստ առաջին խորհրդեան մերում մեք Աստուծով սկիզբն արարաք ջնջել յերեսաց երկրի զՄահմէտականս, եւ հանդերձեալ եմք յայտոսիկ աւուրս գալ պատերազմաւ ՚ի վերայ Կոստանդնուպօլսոյ, եւ պաշարել, եւ առնուլ, եւ դուք որպէս խոստացայք մեզ, փութացէք, ՚ի ներքուստ օգնական լինել մեզ, հրդեհել զքաղաքն եւ խռովել, եւ այլն:

Եւ զայս ամենայն նամակս գրութեանց եղեալ 'ի միում ծրարի, եւ կնքեալ կնքով իւրով տայ 'ի ձեռն սոսկական առն միոյ, եւ հրամայէ նմա տանիլ 'ի Կոստանդնուպօլիս 'ի պատրիարքարանն Յունաց:

Զի գիտէր, եթէ այն գրութիւնք անշուշտ ունէին անցանել 'ի ձեռս Օսմանեան տէրութեան, զի ընդ ամենայն ճանապարհս լրտեսք երթեւեկէին:

Իսկ իբրեւ համբաւ այսր ամենայնի հասանէր 'ի Կոստանդնուպօլիս յամսեանն մարտի, եւ տէրութիւնն փութայր զճշմարիտ լուր ինչ առնուլ վասն իրացն եղելոց, եւ ահա ածին 'ի Կոստանդնուպօլիս 'ի մարտի 11 զնամակագրութիւնսն զայնոսիկ եւ զայրն թղթաբեր, զոր կալեալ էր վօյվօտան Իսաքճայի, եւ բացեալ զգիրսն ընթերցան, իսկ եւ իսկ ծանուցին արքայի, եւ խոռվեցաւ քաղաքն առ հասարակ, եւ հրաման եղեւ 'ի թագաւորէն, զի ամենայն ոք՝ որ ազգաւ Մահմէտական է, զէն բարձցէ յանձին, եւ զգոյշ լինիցին զտիւ եւ զգիշեր, եւ լրտեսեսցեն զքաղաքն ողջոյն, մինչեւ արքայն վճարեսցէ զամենայն ինչ որ կարեւորն է առնել:

Ուստի յեօթն եւ տասներորդ աւուր մարտի ամսոյն սկիզբն արարին սպանանել զերեւելիս Յունաց ազգին, եւ 'ի նմին աւուր գլխատեցին զԼէղօֆէթ ազգին, զԱքանավի օղլուն, եւ զփեսայն նորին, եւ զերկուս եւս ընդ նոսա:

Եւ 'ի 24 աւուր մարտի գլխատեցին զԶօրպաճի օղլու կոչեցեալն հանդերձ վեց արամբք պաշտօնէիւք իւրովք, եւ յապրիլի 4 գլխատեցին զՏիվան թէրճիման պէյն հանդերձ եօթն ազգականօք նորին:

Տեսեալ զայսոսիկ Եէնիչէրի կոչեցեալ սրիկայից սկսան նոքա առանց հրամանի արքայի գանել եւ կռիւհարել զՀայս եւ զՅոյնս, եւ նախ առաջին զՊապա օղլու պարոն Հայրապետն յօշատեցին անդամ 'ի Տիվան եօլուն, եւ յետ աւուրց ինչ եւ զայլ եւս Հայազգիս սկսան սրամահ խողխողել 'ի Կոստանդնուպօլիս եւ 'ի գիւղօրսէն, եւ եղեւ քաղաքն իբրեւ ըզ ծով ալեկոծեալ, եւ ամենայն քրիստոնեայ 'ի վտանգ մահու հասեալ՝ զԱստուած կարգային յօգնականութիւն:

Իսկ 'ի տասներորդ աւուր ապրիլի՝ որ օր էր սուրբ Զատիկին, Լիդօրիոս պատրիարքն Կոստանդնուպօլսոյ, որ էր այր առաքինի եւ ճգնազգեաց վարուք, մատուցեալ զպատարագն յակաղացւոջն, իբրեւ ելանէր 'ի սենեակ իւր 'ի հանգչել, եկեալ զօրականք յար-

քունի դրանէ՝ տարան զնա եւ կացուցին առաջի մեծի եպարզոսին, որ կոչէր Պէնտէրլի Ալի փաշա, որ ցուցեալ նմա զգիրն հարցանէ ցպատրիարքն ասէ, ընթերցիր զգիրս եւ թարգմանեա մեզ, թէ զի՞նչ գրեալ իցէ 'ի սմա:

Եւ առեալ պատրիարքին՝ ընթեռնու, եւ 'ի տարակուսի լեալ՝ պատասխանի տայ եւ ասէ. տէր իմ, զայս գիր գրեալ է առ իս Միխայ պէյ բղեշխն Մուտաւիոյ, որպէս թէ ես խորհրդակից իցեմ ընդ նմա, բայց ես անպարտ եմ 'ի չարէ աստի:

Յայնժամ հայհոյեալ զնա եպարզոսն, վանէ արտաքս, եւ հրամայէ տանել զնա եւ կախել 'ի դրանէ պատրիարքարանին, եւ բերեալ կախեցին եւ զմետրապօլիտն Եփեսոսի 'ի դուռն Պալըի պազար, եւ զմետրապօլիտն Թեսաղոնիկեայ 'ի Բարմախ խափու:

Եւ յետ երկց աւուրց զմարմին պատրիարքի ետուն զօրականք 'ի ձեռս հրէից շրջեցուցանել 'ի փողոցս 'ի նշաւակ խայտառակութեան, եւ ապա արկին 'ի ծով:

Բայց նաւապետ ոմն Ռուսաց՝ գիշերայն փոքրիկ մակուկաւ շրջահայեաց լինի 'ի ծովն, ուր ընկեցաւ, եւ գտեալ զնա, տանի եւ հանէ 'ի նաւ իւր, եւ զփորոտիս նորին հանեալ զմուսէ դեզովք, է յետ աւուրց ինչ ելանէ եւ երթայ յՕտէսա 'ի քաղաքն Ռուսաց, եւ ազգ արարեալ ձէնէրալի քաղաքին եւ եպիսկոպոսին բազմութեամբ եւ մեծաւ փառօք եկեալ հանեն 'ի նաւէն, եւ տանին թաղեն անդ 'ի փառաւոր շիրիմի, ուր կայ մինչեւ ցայսօր:

Յետ աւուրց ինչ կոչեաց եպարզոսն զտեղապահ պատրիարքին Յունաց, եւ նա առ ահի սրտին ոչ գիտելով զպատճառ կոչելոյ նորա զինքն, երկուցեալ յոյժ, անդէն 'ի դուռն արքունի անկաւ յերկիր, եւ մեռաւ յանկարծակի մահուամբ:

Իսկ յապրիլի 19 զտասն անձինս կախեցին 'ի Կոստանդնուպօլիս, ընդ ոս էին եւ եպիսկոպոսն Արնաւուտ գիւղին, եւ Խանչէրլի պէյն եւ եղբարք նորին, եւ 'ի 29 ապրիլի կախեցաւ եւ Չարագեան Գասպար ամիրայ 'ի դրանէ Վալիտէ խանին 'ի պատճառս լինելոյ հատավաճառ Տէփէտէլէնի Ալի փաշային, որ ապստամբեալն էր յայնժամ 'ի տէրութենէն:

Յայսոսիկ աւուրս 'ի յունիս 4, հրկէզ արարին Տաճիկք զԱյվալըի կոչեցեալ գիւղաքղաքն, կոտորեցին զծերս եւ ըզպառաւունս, եւ 'ի գերութիւն վարեցին զաղայս եւ զաղջկունս:

Եւ 'ի յունիսի 27 գնորոգ կարգեալ Գալիմաքի բղեշխն Մուտաւիոյ հանդերձ ընտանեօք իւրովք աքսորեցին 'ի Պօլու, եւ անդ սպանին:

Եւ յետ ինն ամսոց յաւուր սուրբ Զատկին 'ի մարտի 31 յամի տեառն 1822 այրեցին զկղզին Սախըզ, եւ զքնակիւն նորին 'ի գերութիւն վարեցին, ընդ որ առաւել զայրացեալ Մոռացիք, որք հրայրեաց նաւուք շրջին 'ի կողմանս յայնոսիկ, յետ երից աւուրց գիշերայն եկեալ Գերմանացի դրօշակաւ, հրդեհեցին զմեծ նաւն եռայարկ առաջի Քիւլ կղզոյն, եւ այրեցաւ նաւն՝ եւ որ 'ի նաւին էին, ծովակալ բղեշխն Գարա Մէհմէտ փաշա եւ զօրք նորին՝ եւ ամենայն ինչք նոցին, զոր տեսեալ այլոց նաւապետաց արքունի նաւահանդիսին՝ խոյս ետուն երկիւղիւ մեծաւ 'ի Կոստանդնուպօլիս:

Այս անպարտ մահ պատրիարքին եւ եպիսկոպոսաց կարեվէր խոցեաց բոլոր ազգին, մինչ զի 'ի լսելն անգամ ընդ ամենայն տեղիս, վառեցան բորբոքեցան անհնարին բարկութեամբ, եւ ոգևով վրէժինդրութեան գլուխ ամբարձին ապաւինեալք 'ի զօրութիւնն Աստուծոյ եւ յօգնականութիւն թագաւորաց քրիստոնէից:

Եւ այսպէս ապստամբեցան ամենայն Յունաստան, ողջոյն նահանգն Պեղոպոնիդա եւ ամենայն վիճակ նորին, եւ գաւառն Մակեդոնիոյ եւ Ելլադա եւ Կրետէ, եւ բազում կղզիք Միջերկրական ծովուն, եւ սկսան պատերազմիլ ընդ արքայի, որ տեւեաց շարունակ զամս եճօթն, եւ ուր եւ գտանէին զայլազգիս եւ զհրէայս, սպանանէին չարաչար տանջանօք: Եւ ահա այս էր, զոր խնդրէր Իբսիլանդեանն Աղեքսանդր եւ Միխալ պէյ, որք այսու խորամանկ հնարիւք մինչեւ ցայս վայր հասուցին զայս մտածութիւն եւ զխորհուրդ իւրեանց, թէպէտ եւ բազմաց վնասուց եղեն պատճառք եւ անհամար անձանց չարաչար սպանման, եթէ ազգի իւրեանց եւ եթէ Տաճկաց, եթէ Հայոց եւ եթէ Հրէից:

Բայց անդրդուելի ուխտադրութեամբ իւրեանց ոչ երբէք յետս կասեցան 'ի քաջութեամբ պատերազմելոյ, եւ գաղտնի ձեռնտուութեամբ Գաղղիացւոց եւ Անգղիացւոց եւս եւ Ռուսաց՝ տարան ամենայն նեղութեանց 'ի մարտս պատերազմաց, եւ յետ ութ ամաց կանգնեցին զթագաւորութիւնն Հելլենական, զոր եւ ընկալան թագաւորք Եւրոպիոյ, եւ ետուն ընդունել Օսմանեան տէրութեան զթագաւորութիւնն զայն՝ իբրեւ օրինօք եւ իրաւամբք սահմանեալ եւ կարգեալ, եւ այրեցին զնաւատորմիղն արքայի վաթ-

սուն եւ հինգ նաւուց առաջի Նաւարին բերդին Մօռայի, որով եւ վերջացուցին զպատերազմն որ 'ի մէջ Յունաց եւ Տաճկին:

Ի սմին ամի 1822 յօգոստոսի 3, եղեւ երկրաշարժութիւն ահաբեկին 'ի Բերիա եւ 'ի Դամասկոս եւ 'ի շրջակայս նոցա, եւ կործանեցան մեծամեծ ապարանք եւ մզկիթք եւ պանդոկք եւ բաղանիք, եւ բազում անձինք ընդ փլատակօքն անկեալք մեռան, եւ էր տարաբաղդութիւն մեծ տեսանել 'ի վերայ Օսմանեան տէրութեան, չարիք մեծամեծք եւ վնասք բազումք, խռովութիւնք եւ երկպառակութիւնք բղէխից, եւ մարտք պատերազմաց բազմատեսակք, որոց ամենեցուն կարծեմ լինել պատճառ եւ սկիզբն՝ անաստուած նախարարն Հալէթ Էֆէնտի կոչեցեալն, զոր յիշատակեցաք 'ի վեր անդր, եւ հատավաճառ նորին Խէսկէլ հրէայն ամենաչարն, որք զօրհանապազ յարուցանէին խռովութիւն 'ի մէջ տէրութեան, եւ բազմադիմի չարիս հասուցանէին 'ի վերայ Հայոց եւ Յունաց, զոր տեսեալ ամենատես Ակն 'ի բարձանց, գթացաւ 'ի վերայ փոքու հօտին իւրոյ, եւ աղետալի մահուամբ եբարձ գչարսն յաշխարհէ, քանզի երկոքին նոքա հրամանաւ արքայի վտարեցան յաքսորս, Հալէթ Էֆէնտի յիկոնիոն քաղաք, եւ հրէայն 'ի Թէքէ Ատալիոյ, եւ անդ չարաչար գլխահատեալք սատակեցան 'ի Նոյեմբերի 1, որով եղեւ ոչ փոքր ինչ ազատութիւն եւ խաղաղութիւն քրիստոնէից 'ի Կոստանդնուպօլիս եւ ընդ ամենայն տեղիս Տէրութեանն:

(1822) Ի սմին ամի վախճանեցաւ եւ Կիրակոս կաթողիկոս Սսոյ, դեղ մահու արբուցեալ յայլազգի իշխանէ տեղւոյն, կացեալ 'ի կաթողիկոսութեանն զամս քսան, եւ յաջորդեաց նմա Եփրեմ եղբօրորդի նորա 'ի յուլթն եւ տասն ամաց հասակի:



## ԳԼՈՒԽ ԼԳ.

Յաղագս պատերազմին Պարսից ընդ Մոսկովաց, եւ քաջութեան ազգին Հայոց, եւ յաղագս գրաւելոյ Մոսկովաց զԱրարատեան գաւառն ընդ իշխանութեամբ իւրեանց:

**Ի** սմին ամի 1823 յանկարծօրէն շահն Պարսից յարձակեցաւ ութսուն հազար զօրօք ՚ի սահմանս Վրաց՝ որք կային ընդ իշխանութեամբ Ռուսաց, եւ եկեալ յաշխարհն Սիւնեաց՝ էառ զՇամախի, զՇուշի, զԳանձակ, եւ եկեալ պաշարեաց զՏիփլիս մայրաքաղաքն Վրաց:

Եւ որովհետեւ զօրք Մոսկովաց, սակաւք յոյժ եւ նուազունք էին ՚ի կողմանս յայնոսիկ, եւ տէրութիւնն Մոսկովաց չէր վաղագոյն ծանօթ եւ իրազէկ դաւաճանութեանցն Պարսից, որք ընդդէմ կանոնի դաշնադրութեանն զոր արարեալ էին, մինչեւ զամս քսան եւ եօթն չպատերազմիլ ընդ իրեարս. յանկարծուստ եկեալ կոխան արարին զսահմանակից բերդաքաղաքս Մոսկովաց, եւ յաւարի առեալ կողոպտեցին զինչս եւ զստացուածս ամենայն, եւ ՚ի գերութիւն վարեցին զբազումս ՚ի բնակչաց:

Հայք տեսեալ զահագին յարձակումն սոցին ՚ի վերայ իւրեանց, եւ ժողով արարեալ գունդ կազմեցին, եւ բազմօք աշխատ արարին զՊարսիկս, եւ ՚ի նեղ արկին այնչափ, մինչ զի՝ ուր եկեալն էր, մնացին անդ, եւ չեղեն կարող խաղալ յառաջ, մինչեւ եւ զօրքն Ռուսաց մեծամուր պատրաստութեամբ հասին ՚ի վերայ նոցա, եւ սկսան կոտորել անխնայ, եւ ՚ի փախուստ դարձուցանել, եւ յառաջ խաղացեալք պատերազմու մտին ՚ի սահմանս Պարսից, եւ եկեալ առին զԽոյ, զՍալմաստ, զԳանձակ, զԵրեւան, եւ զԴաւրէժ, եւ զԱտրպատական:

Մինչեւ յուսակտուր լեալ Շահին Պարսից՝ յետ զամս երկու պատերազմելոյ բազում ողորջանօք եւ միջնորդութեամբ դեսպանաց ամոքեցին ՚ի հաշտութիւն զէրութիւնն Ռուսաց, եւ զամենայն պայմանս դաշնադրութեան նոցին ընկալեալք խաղաղեցուցին զպատերազմն ահագին:

Այլ ՚ի յայսմ միջոցի երեւելի էր յոյժ ներսէս արքեպիսկոպոսն ՚ի Ռուսաստան աշխարհին, եւ հաճոյ եւ սիրելի յաչս տէրութեանն, եւ պատուեալ բազում եւ մեծամեծ նշանօք եւ արտօնութեամբք կայսերն, սա իբրեւ հոտս, զի քաղաքք Պարսից՝ որք ա-

ուան 'ի Մոսկուաց, ունին անդրէն դառնալ 'ի Պարսս, փութացաւ ել 'ի ճանապարհ, եւ ընդ իւր առեալ զերիս գլխաւոր եպիսկոպոստունս Սիւնեաց աշխարհին, եհաս 'ի Պետրբուրգ, եւ օգնականութեամբ աղա Մինասին Լազարեանց յանկոյց յինքն զմեծամեծս Տէրութեանն, եւ բողոք աղերսանաց մատուցեալ առ կայսրն՝ խնդրէր 'ի դիմաց համօրէն ազգիս՝ զգաւառն Կոտայից յԱրարատեան աշխարհին զերծուցանել 'ի բռնակալութենէ տնօրէն Խանիցն Պարսից, եւ լինել ընդ հովանաւորութեամբ ամենաբարձր տէրութեանն Ռուսաց:

Այս խնդիր Հայոց յոյժ ընդունելի գտեալ յաչս Տէրութեանն Ռուսաց, իսկ եւ իսկ զբանաւոր առիթ ինչ 'ի ձեռս բերեալ, մոռնին 'ի կարգս դաշնադրութեանն իւրեանց՝ զգաւառն Կոտայից մինչեւ ցվերին սահման Ատրպատականին Պարսից՝ լինել ընդ տէրութեամբ իւրեանց, որով գաւառն Վաղարշապատու, սուրբ Էջմիածին, Երեւան քաղաք, Գեղարքունի, Բզնի, Կարբի, Գառնի, եւ Ակոռի անկան ընդ իշխանութեամբ Ռուսաց, եւ զերծան յայնչափ բազմադէտ հարստահարութեանց բռնաւորացն Պարսից, որ գրեթէ անպակաս յիւրաքանչիւր ամի չնչին առիթ ինչ գտեալ, նեղէին եւ չարչարէին զբնակիչ Հայ ազգիս գիւղօրէից եւ վանօրէից՝ ծանր եւ ծանր հարկապահանջութեամբ եւ տուգանօք, եւ վնասուք, կեղեքէին, կողոպտէին եւ մերկացուցանէին զբնակիչս, եւ բազում անգամ հրձիգ առնէին եւ աւերէին գտունս եւ զստացուածս նոցին զամենայն:

Այլ այս ամենայն ողորմութեամբն Աստուծոյ բարձաւ դադարեցաւ յայնց քաղաքաց 'ի ձեռն քաջախորհուրդ առն Աստուծոյ սրբազան Ներսէսի արհի եպիսկոպոսին, զորմէ ունմիք խօսել եւ այլուր:

## ԳԼՈՒԽ ԼԳ.

Յարգազս բարձման ապստամբ Օճազին Եէնիչէրի գօրաց:

(1824) Ի սմին ժամանակի ծագեցաւ 'ի Կոստանդնուպօլիս աղմուկ շփոթի եւ խռովութիւն մեծ 'ի մէջ Եէնիչէրի գօրականաց Տէրութեանն, քանզի այս Օճազ Եէնիչէրի գօրաց գոլով բնաւին անկիրթ 'ի պատերազմական մրցմունս, յեթմանասուն ամաց հետէ եւ աւելի եւս յաղթեալք յամենայն պատերազմունս, կոր 'ի գլուխ փախուստ տային յետս ընդ կրունկն, ուստի եկեալն էին, որով եւ տէրութիւնն Տաճկաց օր քան զօր սկսաւ նուաճիլ եւ փոքրկանալ. եւ որ երբեմն յաղթող եւ անպարտելի հանդիսանայր յաչս ամենայն թագաւորութեանց, 'ի վերջին ժամանակս յայսոսիկ եւ ոչ միումն յապստամբաց իւրոց փաշայից ձեռնհաս գտաւ զգիմի հարկանիլ եւ սանձահարել զբռնութիւն նոցին:

Եւ թէպէտ Տէրութիւնն՝ մանաւանդ իսկ քաջախորհուրդ արքայն Սուլթան Մահմուտ գուն գործէր գտէրութիւն իւր գօրացուցանել, զգօրսն զամենայն հրահանգել 'ի մարզս պատերազմաց ըստ այժմեան կանոնի Եւրոպական թագաւորութեանց:

Այլ այս փոյթ եւ կամք Տէրութեանն չէր բնաւ երբէք հաճելի Եէնիչէրի գօրաց իւրոց, մինչ զի վասն այսր բազում անգամ յարուցեալք յոտս, ընկեցիկ արարեալ են յաթոռոյ զութեսին թագաւորս այսր Օսմանեան Տէրութեանն, եւ 'ի մահ հրաւիրեալ:

Վասն որոյ եւ խորախորհուրդ արքայն Սուլթան Մահմուտ թէպէտ յօրէ անտի նստելոյ իւրոյ յաթոռ թագաւորութեան՝ եղեալ էր 'ի մտի բառնալ զայս ապստամբ Օճազ Եէնիչէրի գօրաց իւրոց, այլ սպասէր բարեպատեհ առթի եւ բարեդէպ ժամանակի 'ի կոր կործանել զամբարտաւան ապստամբութիւն նոցին, եւ հնազանդեցուցանել զնոսս ընդ լծով ծառայութեան տէրութեան իւրոյ:

Եւ վասն զի 'ի տասն ամաց հետէ յաճախեցին չարիք ամենայն 'ի մէջ նոցա, գողութիւնք, աւազակութիւն, մարդասպանութիւնք եւ շնութիւնք, ահ եւ երկիւղ թագաւորի՝ եւ ամօթ երեսաց բնաւին բարձաւ 'ի միջոյ սոցա, եւ ամենայն չարագործ յանձն իւր պանծայր լինել Եէնիչէրի, եւ խրոխտայր ընդդէմ մեծամեծացն արքայի:

Արդ՝ քանի ինչ ամօք յառաջ Սուլթան Մահմուտ արքայ գաղտնի խորհրդով Յարուսթիւն աղայի Պէգճեան՝ որ հաւատարիմ սիրելին էր արքայի եւ մտերիմ խորհրդակից նմին, յինքն յանկուցեալ զոմն ՚ի գլխաւոր Ուստայից Եէնիչէրի զօրաց, որ կոչէր Տօգուզունճու Հիւսէին ուստա, մեծամեծ պարգեւս եւ արտօնութիւնս եւ հարստութիւնս խոստացեալ նմա հնարս խնդրէ ՚ի նմանէ կործանելոյ զայս չարագործ Օճագ ապստամբ Եէնիչէրի զօրաց, եւ նա խոստանայ նմա երդմամբ զայս գործ ՚ի գլուխ տանիլ խորագիտութեամբ իւրով. ուստի խնդրէ յարքայէ դասել զինքն ՚ի կարգս Պէօլիւկ աղայից, եւ հետզհետէ յառաջ խաղացուցանել զկարգ նոցին, մինչեւ ՚ի սուղ ինչ միջոցի ժամանակի լինել ինքեան ըստ կարգին Գուլ քէթիւիւտասի եւ Եէնիչէր աղասի, որպէս եւ եղեւ իսկ:

Իբրեւ եղեւ սա Գուլ քէթիւիւտասի ըստ յառաջանալոյ կարգի իւրոյ, յանկոյց յինքն զձէլալէտտին Եէնիչէր աղասին, որ էր առաջին իւր, եւ համոզեաց զնա, զի զչորեսին գլխաւոր Ուստայս Եէնիչէրի չարագործաց հանցէ ՚ի Կոստանդնուպօլսոյ, եւ առաքեսցէ պաշտօնիւ ՚ի Վան եւ այլուր ՚ի սահմանակից բերդաքաղաքս Անատօլուի:

Եւ նորա կոչեալ զնոսա առաջի իւր, յորդորանօք եւ սպառնալեօք հրամայեաց նոցա ելանել եւ զնալ ՚ի Կոստանդնուպօլսոյ, ուր հրամայէրն երթալ:

Եւ նոքա հնազանդութեամբ ընկալան զհրաման նորա առանց դիմախօսելոյ, եւ խոստացան երթալ, բայց անցեալք յիւսկիւտար եւ ՚ի Պուլկուրլու, աշխատ լինէին ամբոխ գումարել չարագործաց, եւ խռովութիւն՝ յարուցանել ՚ի Կոստանդնուպօլսոյ, եւ ՚ի սուր մաշել զԵէնիչէր աղասին եւ զմեծամեծս Տէրութեանն որպէս եւ արարեալ էին բազում անգամ:

Յայսմ միջոցի միակամ հաւանութեամբ աւագորերոյն եւ նախարարացն, եւ վճռով դենպետին եւ բարձրաստիճան օրինականացն սահմանեաց արքայ զկարգ իմն զօրաց Էչքինճի անուամբ, եւ այլ իմն ձեւով զգեստու զգեցուցեալ ՚ի մարգս պատերազմաց:

Ջայս իբրեւ տեսին Եէնիչէրիք, աղմուկ եւ շփոթութիւն մեծ ծագեցաւ ՚ի մէջ նոցա, եւ սկսան չարագործք ժողով գումարել ՚ի տեղիս, օր եւ ժամ որոշել, զի գլուխ ամբարձցեն, եւ վասն այսր բազում երթեւեկութիւն թղթոյ լինէր ՚ի յԱնատօլու եւ ՚ի Բոււմէլի

’ի քաղաքս քաղաքս, ուր կային Եփեսոսի բնակիչները, որպէս յԵւրոպիա, ’ի Կեսարիա, ’ի Տրգրանակերտ, ’ի Վան, եւ այլուր:

Այլ խորամանկ չիւսէին Գուլ քէթիւտասին՝ որ բազում լրտեսս ունէր ’ի միջի նոցա, իմացեալ զդաւաճանութիւն նոցին, գնաց առ արքայ գիշերայն, եւ խօսեցաւ ընդ նմա, զոր պարտն էր առնել:

Եւ ’ի վաղիւն եղեւ ինքն Եփեսոսի աղասի, եւ սկսաւ հաւատարիմ զօրականս որոշել եւ ժողովել առ իւր:

Եւ առեալ ընդ իւր երկերիւրս ’ի նոցանէ՝ էանց յԻւսկիւտար, եւ յանկարծուստ կոխեալ գտուն մի Տաճկի՝ զոր ուսեալն էր ’ի լրտեսաց իւրոց, եգիտ անդ զՄուսաց ուստա գոմն ’ի գլխաւորաց չարագործաց, եւ բերեալ ’ի Շէմսի փաշա յապարանսն արքայի՝ խեղդամահ արար զչարագործն, եւ ընկէց ’ի ծով:

Յետ քանի ինչ աւուրց կոխեաց յանկարծակի զԹահտագալէ կոչեցեալ թաղն, յորում էին պանդոկք, սենեակք, եւ մեծամեծք սրճանոցք չարագործաց, եւ զբազումս ’ի նոցանէ ձերբակալ արարեալ առաքեաց յԱղա գափուսի ’ի դուռն իւր, եւ գիշերայն խեղդամահ արար, եւ զտեղիս նոցա քակեաց եւ աւերեաց, եւ ոչ եթող տեղի ինչ խորհուրդ խորհելոյ չարագործաց:

Յետ աւուրց ինչ իբրեւ լուաւ, եթէ Տէլի Մէհմէտ գլխաւորն եւ առաջինն չարագործաց՝ գնացեալ թագուցեալ է գանձն իւր յԵփեսոս գուլէ ’ի ձմերանոցն արքունի մսագործաց՝ Սայա օճագի կոչեցեալ, խօսեցաւ արքայի, եւ եհան հրովարտակ, զի տացեն ’ի ձեռս իւր զՏէլի Մէհմէտ, ապա թէ ոչ՝ զձմերանոցն հիմնայտակ ունի առնել գլխովին:

Ձայս հրովարտակ ընթերցեալ նոցա, երկեան յարքայէ, եւ ինքեանք խեղդամահ արարեալ զՏէլի Մէհմէտ, ետուն զմարմինն ’ի ձեռս Եփեսոսի աղասիին, եւ նա ընկէց ’ի ծով:

Իբրեւ այս այսպէս լինէր, եւ անուն Եփեսոսիութեան սկսաւ օր ըստ օրէ յանարգութիւն եւ ’ի նախատինս բերել, փոխեաց արքայ գանուն Եփեսոսի աղասիութեն, եւ պատիւ եւ անուն Եւթուղեան փաշայութեան տուեալ նմա, կոչեաց զնա Աղա փաշա, այսինքն՝ Եփեսոսի աղասի՝ միանգամայն եւ փաշա, ուստի հանեալ զՍէրտէն կէտի Եփեսոսիութեան գլխանոցն ’ի գլխոյ իւրմէ, զկերպարանս փաշայութեան զգեցաւ, եւ յայնմ օրէ եւս սկսաւ անդադար գտիւ եւ զգիշեր շրջիլ ’ի շուկայս եւ ’ի թաղս Կոստանդնուպօլիս, եւ զոր միանգամ գտանէր ’ի չարագործաց, ըմբռ-

նէր, գանէր, առաքէր եւ խեղդամահ առնէր, եւ 'ի գիշերի լնոյր 'ի սայլս եւ առաքէր 'ի ծով:

(1826) Եւ զայս օրինակ գործ գործեալ առ նոսա Հիւսէին Աղա փաշայն մինչեւ զամս երկուս, թէպէտ կամէր բոլորովին վախճան հասուցանել Եփեսոսը օճախին, այլ ակնածեալ 'ի բերդապահ զօրաց նեղուցին Պոնտոսի որք էին Եփեսոսիք եւ բազմաթիւք յոյժ, զայս ինչ խորհուրդ խորհեցաւ ընդ արքայի, եւ ելեալ 'ի պաշտօնէ իւրմէ Աղա փաշայութեան՝ կարգեաց 'ի տեղի իւր զոմն 'ի խորհրդակցաց իւրոց՝ Եփեսոսը աղասի, որ եղեւ վերջինն 'ի նոսա, եւ ինքն ընկալաւ զպատիւ միայն փաշայութեան եւ զպաշտօն պահպանելոյ զնեղուցն Կոստանդնուպօլսի, (այն է՝ պօղազ մուհաֆրզը):

Իբրեւ հառ զայս պաշտօն, յետ աւուրց ինչ գնաց եւ շրջեցաւ 'ի բերդս յաջմէ եւ յահեմէ նեղուցին մինչեւ 'ի Գարապուրուն, եւ զգլխաւորս նոցին՝ որք կոչէին Գալէ աղասի, հրաւիրեաց առ ինքն գալ 'ի յէմիրկիւն 'ի ծովեզերեայ յարկ իւր, եւ զկարմիր կապայ խիլայութեան զգեցուցեալ նոցա, եւ պարգեւս ոսկւոյ եւ արծաթոյ պարգեւեալ նոցա առատաբար, շահեցաւ զկամս նոցա, եւ բազմիցս երթեւեկութեամբ հառ 'ի նոցանէ խոստմունսս եւ երդմունսս մեծամեծս, զի հպատակ կացցեն յամենայնի ամենայն հրամանաց արքայի, զի մինչեւ եւ 'ի մահ հրաւիրեսցէ զինքեանս, յօժարութեամբ ընդունիցին. եւ եթէ զԵփեսոսիք իւրեանս եւս բարձցէ, եւ զոր տարազ զգեստու զգեցուցէ նոցա, եւ զոր ինչ պաշտօն ցուցցէ նոցա պաշտել, կամակար յօժարութեամբ եւ ամենայն հնազանդութեամբ ընդունիցին յանձինս իւրեանց զկամս եւ զհրաման արքայի:

Ձայս այսպէս 'ի գլուխ հանեալ Հիւսէին փաշա, ազդ արար խորհրդակցաց իւրոց որք էին 'ի Կոստանդնուպօլսիս 'ի մէջ Եփեսոսիքի օճագին, եւ կառավարք էին նոցա Պէօլիւկ աղասի անուամբ:

Եւ նոքա կոչեալք առ ինքեանս զգլխաւորս սրիկայից եւ չարագործաց, հրամայեցին յայտնապէս, զի ամենայն Եփեսոսիք գնացցեն հանապազօր յորոշեալ ժամանակի 'ի կրթութիւն պատերազմի, եւ որ ոչ հնազանդեսցի, 'ի մահ վարեսցի:

Ձայս իբրեւ լուան Եփեսոսիք, թէպէտ եւ յուսակտուր էին զգլխի հարկանելոյ հրամանացն արքայի, զի գլխաւոր չարագործքն 'ի մահ վարեցան, եւ չէին նոքա 'ի միջի, բայց այսու ամենայնիւ 'ի յունիսի 2, յաւուր հինգաբարձի Երկնային վիճակին,

յառաջին գիշերոյն սկսեալք ամբոխ մեծ գումարեցին Եէնիչէրի սրիկայից, եւ ՚ի մէջ գիշերին կոխեցին յանկարծակի զդուռն մեծի եպարգոսին, որ էր Սէլիմ փաշա, եւ յայնմ գիշերի գտաւ ՚ի Պէյլէր պէյի հրաւիրեալ, սոքա սուր ՚ի ձեռին մտեալք ՚ի մէջ կանանց, ոչ թողին չարիս, զոր ոչ արարին ՚ի նմին գիշերի, եւ զամենայն ինչս զոսկեղէնս եւ զարծաթեղէնս եւ զականակուռ զարդս զամենեսին կողոպտեցին, եւ անտի ելեալք արշաւեցին ՚ի դուռն Աղա զաբուսին, եւ անդ եւս զնոյն օրինակ գործ գործեցին կատաղի գազանութեամբ:

Բայց Եէնիչէր աղասին հնարիւք հաւատարիմ սպասաւորաց գերծոյց զանձն ՚ի տուն միոյ բարեկամի իւրոյ ՚ի Շահգատէ պաշին:

Իսկ ընդ առաւօտն գումարեալք ՚ի դուռն Աղա գափուսին, գտանեն զԳուլ քէթիւխտասին, եւ հրամայեն նմա, զի ընդ առաջ իւրեանց անկեալ զնասցէ ընդ նոսա ՚ի պալատն արքայի, զի զկամս եւ զհաճոյս իւրեանց արասցեն առ արքայ:

Եւ նա գոլով խորհրդակից ընդ Հիւսէին փաշային, համոզէ զնոսա եւ յորդորէ, զի ամենեքին գնացեալք ժողովեսցին ՚ի ձմերանոցն յէթ մէյտանին, եւ մի ոք այսր անդր շրջոտեսցի, այլ ամենեքին անդ գտանիցին, եւ հրամայէ նոցա քարոզ կարգալ ՚ի փողոցս ճանապարհաց, զի ամենայն Եէնիչէրի գտանիցի յէթ մէյտանին, եւ ասէ ցնոսա, եթէ դուք գնացէք, եւ բազմութիւն մեծ գումարեցէք, եւ ես եկեալ ապա, կարգադրեմ զձեզ, եւ առեալ զձեզ զամենեսին, երթամք ՚ի պալատն արքայի, եւ առնեմք զամենայն, զոր հաճոյ է մեզ:

Եւ այսպէս խրատեալ զնոսա, առաքեաց զնոսա ՚ի ձմերանոցն, եւ ինքն ազդ արար իսկ եւ իսկ գրով իւրով Հիւսէին փաշային զամենայն, զոր ինչ եղեւն:

Իսկ Հիւսէին փաշայն՝ որ ապահով էր ՚ի վերին բերդապահ զօրաց նեղուցին, իսկոյն մտեալ ՚ի նաւ իւր, գնաց առ արքայ. եւ սրտապնդեաց զնա գալ իսկոյն ՚ի մեծ պալատն Կոստանդնուպօլսի, եւ չերկնչիլ բնաւ երբէք:

Ազդ արար եւ Իլլէթ Մէհմէտ փաշային, որ նստէր յայնժամ յիւսկիւտար, զի փութանակի հասցէ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի պալատն արքայի:

Եւ ինքն գնացեալ եգիտ անդ զվէզիր Սէլիմ փաշան, եւ առաքեցին ՚ի դիմաց արքայի հրաւիրակս առ դենպետն մեծ, որ կոչի Յէյխիւլիսլամ էֆէնտի, եւ առ Գազիասկէր էֆէնտիս, եւ առ Նադիպ իւլ էշրէֆն, եւ առ ամենայն մեծամեծ մօլլայս տէրութեան իւրոյ:

Իբրեւ եկն արքայ, եւ եգիտ զնոսա անդը ժողովեալս, հրամայեաց քարոզ կարգաւ ընդ ամենայն փողոցս քաղաքին, զի ամենայն հաւատացեալ ՚ի Մահմէտ՝ որ սիրէ զբարեպաշտութիւն հաւատոյ եւ վարուց, եկեսցէ ՚ի Սուլթան Ահմէտ յէթ մէյտանին՝ ՚ի ներքոյ Սանճագը շէրիֆին:

Եւ ահա հետզհետէ գումարեցան անդը թօրծիք եւ գումպարածիք եւ պօսթանճիք եւ չավուշք, եւ սօֆտայք, եւ արուեսաւորք, եւ ամենայն մեծամեծք եւ իշխանաւորք Տէրութեանն:

Եւ հանեալ արքայ զՍանճագը շէրիֆն՝ ել ՚ի պալատէ իւրմէ, եւ մեծամեծ պատուով եւ երգելով զերգս աղօթից, գնացին ՚ի մզկիթն Սուլթան Ահմէտի, եւ անդ աւարտեալ զնամազն, ելյամպիտն Րէյիզ իւլ իւլէմա Արիֆ պէյ էֆէնտին, եւ գամենայն եղեռն եւ զչարագործութիւն Եէնիշէրի սրիկայից պատմեալ յանդիման բազմութեանն, կնքեաց ՚ի վերջոյ զբան իւր առ այս, թէ սոքա չեն Մահմէտականք, այլ անհաւատք եւ չարք քան զանհաւատս, եւ անհնազանդք արքայի՝ եւ օրինացն Մահմէտի՝ եւ հրամանաց Աստուծոյ. արդ՝ պարտ է զսոսա ըստ արդար իրաւանցն Աստուծոյ եւ ըստ սուրբ օրինացն Մահմէտի սպանանել ՚ի սուր եւ ՚ի հուր. ուստի հրամայեմք այսօր ՚ի դիմաց Աստուծոյ եւ ՚ի դիմաց Մահմէտի մարտնչիլ ձեզ ընդ նոսին, եւ ազատել զքաղաքն եւ գամենայն բարեպաշտս ՚ի ձեռաց չարագործացս այսոցիկ:

Իբրեւ աւարտեաց նա զխօսս իւր, ել Հիւսէին փաշա, առեալ ընդ իւր եւ զՄէհմէտ Իզզէթ փաշա, եւ զեօթն թնդանօթս թօփճի զօրականաց, որոց հարիւրապետ էր յայնժամ Իպրահիմ աղա Գարտ ճէհէննէմ կոչեցեալ քաջասիրտ ոմն հաւատարիմ արքայի, եւ զնացեալք յէթ մէյտանն, իբրեւ ձայն ետուն պատերազմի, արձակեաց Գարա ճէհէննէմ զհինգ թնդանօթս, փախոյց գամենեսին ՚ի մէջ ձմերանոցին, եւ ապա հուր վառեալ վառօդոյ՝ եհար եւ հրդեհեաց զշինուածն ՚ի ստորէ ՚ի վեր:

Եւ ահա հուր ՚ի ներքուստ, եւ սուր արտաքուստ, զի որ արտաքս քան զդուռն յարձակէր խոյս նալ, զօրք փաշայից ՚ի սուր անցուցանէին, եւ որ ՚ի ներքս մնայր, ՚ի հուր ապրէր, եւ այսպէս



’ի միջոցի միոյ ժամու հրկէզ եղեւ ողջոյն ձմերանոցն, եւ որք փախստեամբ ապրեցուցին զանձինս իւրեանց յայն օր, յետ աւուրց ինչ կալանաւորեալք գլխահատ եղեն, եւ բազումք եւս յաքսորա վարեցան մերկամարմին ’ի քաղաքս իւրեանց. եւ մինչեւ զաւուրս քառասուն տեւեաց այս պատիժ դատապարտութեան մահու չարագործաց ’ի մէջ քաղաքին եւ ’ի յիւսկիւտար:

Եւ զայս օրինակ բարձաւ Օճագ Եէնիչէրի չարագործաց, որ զուրթն թագաւորս տէրութեան իւրեանց ընկեցեալ յաթոռոյ բարձեալ էին ’ի կենաց, որպէս գրէ հուշակաւոր բանաստեղծ նոցին Քէչէճի գատէ Իզգէթ մօլլայն:

Թախտի շէֆքէթտէն սէքիզ շահի ճիհանի խալի իտիւպ,  
Գրրտի մէվլա սայիրէնէ պաղի իտէն զալիմլէրի:  
Կիթտի ճէվրի դատրի իլէ իւչ թանէ Սուլթան Մուստաֆա,  
Շէրպէթի ճամի շահատէթ իլէ գանտի լէպլէրի:  
Ահմէտ, Իպրահիմ, Մուհամմէտ, հէմտէ Օսման, ու Սէլիմ,  
Խալ օլունտուլէր ճիհանտէ օլմուհիքէն Փէրման պէրի,  
Շահի տէվրանէ տիմէ՞զ մի բուհի Օսմանի շէհիտ,  
Պիր կազա իթտին քի խօշնուտ էյլէտին փէյզամպէրի:  
Խանի Միւրատ օլ գահրման պէօյլէ իթմէ՞զ մի խիթապ,  
Աֆէրին էյ բուզի կեարըն շէհսուվարի սաֆթէրի...  
Հագթաալա շահի տէվրանի միւվէֆֆէք իյլէյէ,  
Փարզ իտի լանէթ օճաղէ իքի եիւզ երլտան պէրի:  
Զօրպա գալգա գալգըտլար ախր պիւթիւն,  
Համտիւլլահ սէյֆի բէֆիտէն իյլէտի շուրու շէրի:

Իսկ յերկրորդում աւուր Հիւսէին փաշայն ընկալաւ զպատիւ եւ զիշխանութիւն սպարապետութեան ամենայն զօրաց, եւ կոչեցաւ Սէրասկէր փաշա, եւ նստաւ ’ի հին պալատն արքայի՝ առընթեր Սուլթան Պայագիտին, որ կոչէր էսկի սարայ, եւ այժմ կոչի Սէրասկէր գափուսի:

Իսկ Աղա գափուսին եղեւ Շէյխիսլամ գափուսի, յոր նստի գենպետն մեծ, եւ երեքին դատաւորք ընդ նմա, որք են Բումէլի գազիասկէրի, Անատօլ գազիասկէրի, եւ Ստամպօլ գատըսի էֆէնտի:

Յետ քառասուն աւուրց կարգեցան նոր զօրք Մանսուրէ աւուրամբ, նոր կանոնադրութեամբ եւ եւրոպական զգեստուք, եւ

ամսական իւրաքանչիւր նոցա տասնապետաց՝ եւ հարիւրապետաց՝ եւ հազարապետաց՝ եւ այլոցն ամենեցուն կարգեցաւ յարքունուստ ամսոյ յամիս տալ անխափան հանդերձ հանապազօրեայ կերակրովն եւ հացիւն եւ զգեստուքն:

Ուստի եւ վասն այսր՝ ամենայն արուեստաւորաց կարգեցաւ առօրեայ եւ ամսօրեայ տուրս տալ Արքայի՝ իւրաքանչիւրն ըստ իւրում կարի եւ արուեստի: Եւ զգին արքունի հարկին՝ որ էր քսան եւ չորս գահեկան ըստ մարգարթուի, արարին եռեսուն եւ վեց գահեկան:

(1826) Եւ վասն նորոգ զօրացս շինեցան ձմերանոցք ՚ի Տափուտ փաշա, ՚ի Րամիզ չիֆթլիկին, ՚ի յԻսկիւտար, եւ յայսոսիկ աւուրս գլխատեցին զՕճագ պագիրկեանի կոչեցեալ Հրեայն, որ նստէր յԱղա գաբուսին ՚ի ժամանակս Եէնիչէրիութեան:

Եւ յետ ամսոց ինչ խեղդամահ արարին եւ զշապճի Պօխօրաչի կոչեցեալ Հրեայն, եւ զստացուածս նորին եւ զինչս գրաւեցին յարքունուստ:

Յետ երկուց ամսոց յաւուր երկուշաբթի՝ յօգոստոսի 18, մինչդեռ Արքայն եւ բազմութիւնք բղեշխից եւ ամենայն մեծամեծաց ժողովեալք էին ՚ի Սուլթան Ահմէտ, զի զդրօշն նուիրական հանեալ ՚ի Մզկլթէն՝ պատուով մեծաւ տարցեն վերստին ՚ի պալատն Արքայի եւ դիցեն ՚ի տեղի իւր, յանկարծ եղեւ հրդեհ ՚ի Հօճա փաշայն Պաղչէ դափուի, եւ որովհետեւ ոչ ոք ՚ի բղեշխից կարողացաւ կանխել անդ ՚ի շիջուցանել զհրդեհն, զի էին ՚ի պալատն արքայի, հրդեհն պարապ գտեալ մինչեւ ցչորս ժամս, սկսաւ ճարակիլ ընդ լայնութիւն եւ ընդ երկայնութիւն քաղաքին, ՚ի Հօճա փաշայն մինչեւ ցլանկա Եէնի դափուսին, յորում այրեցան քարուկիր շինուածք, մզկիթք, պանդոկք, բաղանիք, եւ ամենայն շուկայք, եւ Փաշա դափուսին, եւ տունք բազմաթիւք, ընդ որս եւ Մայր եկեղեցին խումխաբուի, եւ Պատրիարքարանն Հայոց:

Յետ երկուց ամսոց այրեցաւ եւ աշտարակն կոչեցեալ Եանկըն քէօշկիւ ՚ի Սէրասկէր գաբուսին, որ էր փայտակերտ, եւ յետ այնր շինեցաւ քարուկիր:

## ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս դարձի յաքսորանաց տանն Տիւզեանց եւ Պատրիարքութեան տեանն  
Կարապետի, եւ աքսորանաց Թընկըրեան երկուց եղբարց:

(1823) Ի ԲՐԵԻ ողորմութեամբն Աստուծոյ բարձան յաշխարհէ երկոքին որդիքն սատանայի՝ Հալէթ Էֆէնտի եւ Հատավաճառ նորին Խէսկէլ Հրեայն, Պէզճեան Յարութիւն ամիրայ ժամ բարեպատեհ գտեալ, յանկոյց յինքն զսիրտս մեծամեծաց տէրութեանն ՚ի ձեռն մեծագին ընծայից վասն երից եղբարցն ազնուականաց Տիւզեանց, որք էին Կարապետ եւ Յակոբ եւ Պօղոս չէլէպիք, որք յերից ամաց հետէ մատնեալ էին յաքսորա ՚ի վանս Կեսարիոյ, եւ մատուցեալ զգիր աղերսանաց առ Արքայ, Հրաման եղեւ յԱրքայէ, եւ վերադարձան յաքսորանացն ՚ի Կոստանդնուպօլիս յամի Տեառն 1823 յապրիլի 15, ուր նախ զառաջինն մնացին ՚ի տան Յարութիւն ամիրային Պէզճեան ՚ի յեէնի գաբու, եւ ապա ՚ի վաղնջական տուն Հայրենեաց իւրեանց ՚ի Խուրու չէշմէ:

Պօղոս պատրիարք կացեալ զամս ութ ՚ի պատրիարքութեան իւրում, Հրաժարեցաւ յաթոռոյն, եւ միաբան հիւննութեամբ իշխանաւորաց ազգին՝ ընտրցին զԿարապետ վարդապետ Կոստանդնուպօլսեցի ՚ի հոկտեմբերի 2յ, որ շքեղ էր ատենաբառութեամբ եւ խորախորհուրդ մտօք: Յաւուրս սորա ՚ի նոյեմբեր 18, վախճանեցաւ երանելի Հ. Միքայէլ վարդապետն Չամչեան, որ ՚ի փառս եւ ՚ի յօգուտ ազգիս վաստակեալ էր մինչեւ յաալիս ծերութեան իւրոյ:

(1824) Ընդ այս ժամանակ եղեւ եւ նորոգութիւն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն Օրթագիւղի, զորոյ զհանդէս փառաւոր օժման կատարեցին ՚ի դեկտեմբեր 15:

(1827) Ի ժամանակս յայտոսիկ Պէզճեան Յարութիւն ամիրայ որ երեւելին էր ՚ի սմին ժամանակի յիշխանաւորս ազգի մերում, եւ գերագոյն նախագահ յազգային ժողովի Պատրիարքին կամեցաւ կացուցանել զմի ոք ՚ի վարդապետաց կաթողիկաց՝ երեսփոխան կամ փոխանորդ Պատրիարքին, որ նստիցի հանապազօր ՚ի Ղալաթիա կամ ՚ի Բերա, եւ զարքունի հրամանս եւ զկամս տէրութեանն՝ որ գայ հրովարտակաւ ՚ի պատրիարքարանն, պատ-

րիարքն ծանուցէ նմա, եւ նա ազդ արասցէ ժողովրդեան Հռովմէական Հայոց:

Ուստի յաւուր միում գնաց Պէզճեան Յարութիւն ամիրայ 'ի Բերա 'ի տուն Պիլէզիկեան Պարոն Պողոսին, եւ անդ կոչեալ հաւաքեաց զամենայն գլխաւոր անձինս Հռովմէական Հայոց, որոց բազումք էին երեւելի հատավաճառք 'ի Գաղատացոց:

Անդ էր եւ Տիւզեան Յակոբ չէլէպի, եւ Ելէքէնճեան Պարոն Մեսրոպլա եւայլն:

Եւ 'ի ժողովի անդ խօսեցաւ Պէզճեան Յարութիւն ամիրայ, եւ պատմեաց ամենեցուն նոցա զկամս եւ զհաճութիւն պատրիարքին, եւ ամենեքին նոքա՝ որք էին 'ի ժողովին, ընկալան եւ հաւանեցան, եւ շնորհակալ եւս եղեն վասն այսր ըզպատրիարքէն:

Եհարց ցնոսա Պէզճեան Յարութիւն, թէ զո՞ ոք 'ի վարդապետաց կամիք ընտրել:

Եւ ժողովեալքն պատասխանի ետուն, թէ հաճելի եւ ընդունելի է մեզ այն՝ զոր դու ընտրես մեզ: Եւ յետ բազում խօսս լինելոյ 'ի ժողովի անդ՝ առաջարկեաց նոցա Պէզճեան Յարութիւն, եթէ կամի՞ք զՆուրիճան Անտոն վարդապետն:

Եւ նոքա միաբան հաւանեցան եւ կնքեցին զխօսս իւրեանց, զի Նուրիճան Անտոն վարդապետ լիցի գլխաւոր 'ի մէջ վարդապետաց ազգին, եւ արձակեցաւ ժողովն:

Իսկ 'ի միւսում աւուր Գաղատացի հատավաճառք՝ Թընկըրեան Յակոբ, եւ Յովսէփ, եւ Գրիգոր, Տավուտեան Անտոն եւ Յովսէփ, Գըլճեան Գրիգոր եւ Վիչէն, էթէյի Ուզունեան Պողոս, Կիւզէլեան Գրիգոր, եւ այլք համախոհք ընդ նոսին, ժողովեալք 'ի տան Յակոբայ Թընկըրեան, ընտրեն զՄարուշ կոչեցեալ Գաղատացի Պողոս վարդապետն՝ լինել ինքեանց տեսուչ եւ կառավար, եւ ասեն, ոչ կամիմք զՆուրիճանն, զոր ընտրեցին հերետիկոս Հայք:

Այս ժողով նոցա եւ վէճ՝ հասեալ յականջս Պէզճեան Յարութիւն ամիրային՝ ոչ սակաւ ցաւեցոյց զսիրտ նորա:

Եւ որովհետեւ սպարապետ էր յայնժամ Խոսրով Մէհմէմէտ, եւ նմա հատավաճառ էր Թընկըրեան Յակոբ եւ որդի նորա Յարութիւն, կամեցան սոքա 'ի ձեռն այնր փաշային զատուցանել զՀռովմէական Հայս 'ի Հայոց, եւ կացուցանել Հռովմէական Հայոց որոշ պատրիարք՝ անկախ 'ի պատրիարքէն Հայոց:

Ուստի գաղտնի ժողովեալ սոցա՝ բան եղին 'ի միջի իւրեանց՝ զիր աղերսանաց մատուցանել առ թագաւորն, եւ իմաստ գրոյն էր այս:

“Յայտ է մեծագոր Տէրութեան ձերում ո՛վ թագաւոր, զի յանցեալ ամին արեւելեան Հայք՝ որք 'ի Պարսից բաժնին էին, միացեալք ընդ Մոսկովաց՝ ապստամբեցան 'ի տէրութենէն Պարսից, եւ ոչ սակաւ վնասս հասուցին Պարսից տէրութեան:

Արդ՝ խորհուրդ խորհեալ են արեւելեան Հայք յարձակիլ եւ 'ի սահմանս Օսմանեան տէրութեան, եւ կոխան առնել զքաղաքս եւ զգիւղորէս, առնուլ եւ գրաւել, եւ կանգնել ինքեանց զմասնաւոր թագաւորութիւն իմն 'ի Հայաստան աշխարհին՝ ընդ հովանաւորութեամբ Ռուսաց Տէրութեան:

Արդ զայս խորհուրդ խորհեալ են Հայք, եւ ունին թշնամութիւն գտէրութենէ ձերմէ, եւ մեք այսինքն Հռովմէական Հայքս, մի ազգ լինելով ընդ Հայոց, եւ 'ի միոյ պատրիարքէ եւ գլխոյ կառավարեալ գոլով, յայնժամ ընդ նոսին միաբան եւ միախորհուրդ երեւելոց եմք առաջի ձերումդ մեծափառ թագաւորութեան, եւ մերս հարազատութիւն եւ հաւատար:

Ուստի խնդրեմք այժմ յամենագուրթ եւ 'ի բարերար տեառնէդ գատուցանել զմեզ 'ի Հայոց, եւ տալ մեզ յատուկ պատրիարք եւ եկեղեցի, զի մի միաբան երեւիցիմք նոցա եւ հաջորդ չարախորհուրդ անհաւատարմութեան նոցա, եւ մեք ըզպարտուպատշաճ ծառայութիւն մեր աղօթս անխափան կատարեսցուք 'ի նմին եկեղեցւոջ, եւ ազատ եւս լիցուք յերթալոյ յեկեղեցիս Լատինացւոց, յոր երթայաք մինչեւ ցարդ՝ վասն չուլեոյ մեր յատուկ եկեղեցի”:

Զայս զիր ընթերցեալ Արքայի՝ խռովի յանձն իւր, եւ կոչեալ նոյն ժամայն զՊէղծեան Յարութիւն առաջի իւր, հարցանէ նմա զիմաստ գրոյն:

Եւ նա ըստ իւրումն խորախորհուրդ ուշի եւ բազմահանճար զգօնութեան՝ յայտ առնէ արքայի զչարախնդիր ատելութիւն եւ զմահայոյց թշնամութիւն Գաղատացի Հռովմէական Հայոցն՝ զոր տէր, պատրիարքն մեր հաւատարիմ ծառայ տէրութեանդ է, հարցցնա, թէ կարո՞ղ է երաշխաւոր լինիլ վասն ազգի իւրոյ առաջի ձեր, զի ազգ Հայոց յամենայնի հաւատարիմ է ընդ ամենայն տէրութիւնս, ուր եւ գտանիցի:

Գրեաց արքայն 'ի դուռն առ Եպարգոս իւր, զի կոչեալ զպատրիարքն Հայոց 'ի դուռն՝ հարցցեն եւ տեղեկասցեն ըզնմանէ, թէ երաշխաւո՞ր իցէ վասն իւրոյ ազգին լինել յամենայնի հաւատարիմ տէրութեան:

Կոչեցի զպատրիարքն 'ի դուռն, եւ զՊողոս պատրիարքն, որ նստէր յիւսկիւտար 'ի վանս սուրբ Երուսաղէմայ, եւ նա պատասխանի ետ մեծի Եպարգոսին, եւ ասէ. Երաշխաւորեմք մեք բոլոր ազգիս ընդ ամենայն գաւառս տէրութեան ձերոց, ուր եւ գտանիցի: Եհարց եպարգոսն թէ զիա՞րդ կարէք երառխաւորել վասն Հայ բնակչաց հեռաւոր քաղաքաց, ընդ այս ետ պատասխանի Պողոս եպիսկոպոսն եւ ասէ. 'ի Քրիստոնէական կրօնի մերում է խորհուրդ մի, որով իւրաքանչիւր ոք պարտի յորոչեալ ժամանակս խոստովան լինել զգաղտնիս սրտից իւրոց քահանայից. եւ եթէ քահանայք այդպիսի ինչ նշմարիցեն, պարտաւոր գտանին անյապաղ հաղորդել եպիսկոպոսաց. վասն այսորիկ համարձակութեամբ երաշխաւոր եմք մերոց ազգայնոց, այլ վասն Հռովմէական հայ ժողովրդեան ոչ եմք եւ չեմք կարող լինել երաշխաւոր, զի նոքա յեկեղեցի մեր ոչ գան, եւ բանից մերոց ոչ անսան, եւ քահանայից մերոց ոչ խոստովանին. այլ հանապազօր երթեւեկեն յեկեղեցիս Լատինացւոց եւ կենակցին ընդ քահանայս նոցա:

Այս պատասխանի Պողոս պատրիարքին հասեալ 'ի լսելիս արքային՝ զայրացաւ յոյժ ընդ վերջին աստիճան յանդրգնութեան նոցա, զոր յանդգնեցան նենգել եւ խաբել զարքայն խորամանկութեամբ իւրեանց:

Ուստի առ ժամայն զԹրնկրեան Յակոբ եւ գեղբայր նորա զՅովսեփ հանդերձ ընտանեօք իւրեանց առաքել յաքսորս. եւ անդէն արքայիցին զՅակոբ 'ի կեսարիա, եւ ըզՅովսեփ 'ի Սեբաստիա քաղաք փոքուն Հայոց, 1827 հոկ. 3:

## ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս այրելոյ Եւրոպացւոց զարքունի նաւատորմիդն Օսմանեան Տէրութեան:

(1827) ՅԱՅՍ վայր տեւէր պատերազմն Տաճկաց ՚ի վերայ Հելլենացւոց յեօթն ամաց հետէ, յօրէ անտի ապստամբելոյ նոցա ՚ի Մուտավիա, ՚ի կղզիս Միջերկրական ծովուն, եւ առաւել եւս ՚ի Պեղոպոնիզա:

Արդ ՚ի սմին ամի երեք թագաւորութիւնք, այսինքն Ռուսաց, Գաղղիացւոց եւ Անգլիացւոց, առաջարկեցին եւ պահանջեցին յՕսմանեն տէրութենէ՝ ազատութիւն շնորհել Յունաց Պեղոպոնիզացւոց, եւ առնել զՊեղոպոնիզա մասնաւոր դքսութիւն իմն անկախ եւ ազատ, միայն ամ ըստ ամէ տացեն Յոյնք զտարեկան տուրս ինչ Օսմանեան տէրութեան:

Ոչ հաճեցեալ ընդ այս արքայի՝ առաւել եւս թափեաց ըզցասումն եւ զգօրութիւն իւր ՚ի վերայ Պեղոպոնիզացւոց, ՚ի ցամաքէ երկոտասն փաշայս հանելով հարիւր երեսուն հազար զօրօք, եւ ՚ի ծովէ վաթսուն եւ հինգ պատերազմական նաւս մեծամեծս ամենայն պատրաստութեամբ, որոց ամենեցուն կարգեցաւ սպարապետ՝ Իպրահիմ փաշա որդի Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի:

Հանին եւ Եւրոպացի տէրութիւնք զնաւատորմիզս իւրեանց ՚ի ծովն Մօրայի, զի մի թոյլ տացեն երկուց կողմանց այսինքն Տաճկաց եւ Յունաց պատերազմիլ ընդ իրեարս:

Որոց եկեալ բացէ ՚ի բաց ծանուցին Իպրահիմ փաշայի՝ զի մի իշխեսցէ պատերազմիլ ընդ Յոնս, ապա թէ ոչ՝ եւ իքեանք ձեռնտու եւ զօրավիգ լինելով Յունաց՝ թափեն զամենայն ցասումն եւ զոյժ իւրեանց ՚ի վերայ Օսմանեան տէրութեան:

Իսկ Իպրահիմ փաշա պատասխանի ետ, թէ գրեմ առ արքայ եւ առ հայր իմ յԵգիպտոս, եւ սպասեմ հրամանաց նոցա:

Որոց հաւատացեալ՝ մտին ՚ի նաւահանգիստն, վեց նաւք Գաղղիացւոց եւ վեց նաւք Անգլիացւոց, եւ ինն նաւք Ռուսաց, եւ կացին հանդէպ Նաւարին բերդին Մօրայի:

Յետ չորից աւուրց մտանելոյ նոցա ՚ի նաւահանգիստն ՚ի հինգերորդում ավուր հրախլրեաց Թահիր փաշա զծովակալս Եւրոպացւոց՝ զալ առ ինքն եւ խօսել զբան հաշտութեան:

Մտանեն 'ի մակոյկս երկուս՝ ծովակալն Գաղղիացւոց եւ քարտուղար նորա՝ եւ երկու խորհրդակիցք ընդ նմա, սոյնպէս եւ Գոտրինկթօն ծովակալն Անգլիացւոց եւ քարտուղար նորա, ընդ ամենայն վեց երեւելի անձինք բաց 'ի նաւավարաց երկուց մակուկաց:

Եւ իբրեւ զան մակոյկք դէպ 'ի կղզին, որ է 'ի մէջ նաւահանգստին, ասեն թէ յանկարծակի արձակեալ իցեն 'ի նաւուց Տաճկաց երկուս թնդանօթս ուբաճիգս առ 'ի ընկղմել զմակոյկսն, բայց զգացեալ նոցին 'ի նշանաց պատրաստութեանցն, դարձ առնեն անվնաս 'ի նաւս իւրեանց. եւ ապա սկսեալ են թնդանօթք ձգիլ յամենայն նաւուց Տաճկաց՝ եւ 'ի պատնշաց կղզւոյն 'ի նաւս Գաղղիացւոց եւ Անգլիացւոց:

Որոց ոչ գիտելով յառաջնմէ զայս խարդախութիւն թահիր փաշային, սկսանին եւ ինքեանք արձակել ուուբս եւ թնդանօթս 'ի վերայ նոցա, եւ զի մերձ էին Գաղղիացւոց նաւք հրայրեաց նաւուց տաճկաց, հրդեհեն զնոսա իսկոյն:

Որոց վառեալ իսկ եւ իսկ անկանին 'ի վերայ պատերազմական նաւուց տաճկաց օգնութեամբ հողմոյն՝ որ վարէր զնոսա դէպ յայն կողմն, եւ զնոսա եւս հրդեհեն եւ բոցն տարածեալ շուրջանակի, մինն զմիւսն վառէ. եւ այնպէս 'ի միջոցի երկուց ժամուց վաթսուն եւ հինգ պատերազմական նաւք արքային 'ի հուր վառեցան հանդերձ ամենայն պատրաստութեամբ կահուց եւ կարասեաց եւ զանձուց իւրեանց:

Եւ զօրքն որք 'ի նաւսն էին, եւ նաւավարք եւ պաշտօնեայք նոցին, ծովակուր եղեն, սակաւք միայն ապրեցան, որ լողալով ելին 'ի ցամաք:

Յայնմ մեծի տազնապին եւ հնգետասան նաւք Ռուսաց՝ որք էին 'ի բերան նաւահանգստին, սկսան մարտնչիչ եւ հարկանել զբերդսն յերկուց կողմանց նաւահանգստին, եւ զինն ժամ անդադար թնդանօթս արձակելով կործանեցին եւ հիմնայատակ արարին զբերդսն նաւարին եւ Մուլթուն. եւ այնպէս դադարեցուցին զմարտ պատարազմին:

Յայսմ ահագին պատերազմի՝ երկու նաւք Գաղղիացւոց, եւ նաւ մի Անգլիացւոց վնասեցան չարաչար. բայց զերծեալ արտաքս 'ի նաւահանգստէն, եւ եկեալ 'ի Սիրա՝ նորոգեցան դարձեալ:



Այս դառն աղէտ եւ բօթալից լուր հրդեհակէզ կորստեան այնչափ անհամար զանձուց տէրութեանն հասեալ 'ի Կոստանդնուպօլիս 'ի լսելիս արքայի. վառեցաւ, բորբոքեցաւ 'ի սրտմտութիւն բարկութեան. եւ զդեսպանս Ռուսաց եւ Գաղղիացւոց եւ Անգլիացւոց վանեաց 'ի Կոստանդնուպօլսոյ. ընդ որս զնացին եւ վաճառականք եւ երեւելի ինձինքլեւրոպաց լոց՝ ահաբեկեալք 'ի ցասմանէ արքայի:

## ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս վերջին հալածանաց եւ աքսորանաց Հռովմէական Հայոց:

(1827) ՍՈՒԼԹԱՆ Մահմուտ արքայ, որ ցասուցեալ էր 'ի վերայ Գաղատացի Հռովմէական Հայոց, որպէս խօսեցաք 'ի վերանդր, մանաւանդ զի՝ ատելի էր ինքեան այս երկպառակութիւն ազգին, եւ կամէր, զի ողջոյն ազգն ընդ միով գլխով հպատակեալ կառավարեսցի, եւ վասն այսր բազում անգամ արքունի հրովարտակս առաքեալ էր 'ի պատրիարքարանն Հայոց, յօրէ անտի նստելոյ իւրոյ յաթոռ թագաւորութեան. եւ կամէր զայս պառակտումն Հռովմէական Հայոց բառնալ 'ի միջոյ, եթէ ոչ քաղցրութեամբ, գոնէ խստութեամբ, որպէս փորձիւ տեսաք անդ 'ի մահու Տիւզեան եղբարց ազնուականաց, որոց դատակնիք մահու գրեալ էր զլինելն յանցաւոր կրօնի՝ պատճառաւ Կաթողիկոսութեան:

Արդ թէպէտ յայս միտս էր արքայ, բայց ակնածեալ յԵՐՈՎԱԿԱՆ Թագաւորութեանց, որոց հաղորդս գիտէր ըզՀռովմէական Հայս 'ի բան հաւատոյ եւ կրօնի, լուէր ոչ կամաւ, այլում ժամանակի թողլով, զոր կամէրն առնել:

(1827) Արդ յետ վանելոյ զԳԵՍԱԿԱՆ ԵՐՈՎԱԿԱՆ 'ի Կոստանդնուպօլսոյ, առ 'ի լուծել զվրէժ կորստեան նաւատորմըին 'ի Նաւարին, յանցանել միոյ ամսեանն առաքեաց հրամանագիր արքունի 'ի Պատրիարքարանն Հայոց՝ յորում գրեալ էր զհինգ յօդուածս հրամանաց իւրոց ծանր եւ ծանր սպառնալեօք տուգանաց եւ վնասուց, այն է.

Ա. Զի Գաղատացիք ամենայն աքսորեսցին 'ի Գաղատիա որդւովք եւ ընտանեօք:

Բ. Քահանայք Հռովմէական Հայոց՝ աքսորեսցին յԵՐՈՎԱԿԱՆ Կամենայն սահմանաց տէրութեանն:

Գ. Կոստանդնուպօլսեցի Հռովմէական Հայք եւ որք յայլ եւ յայլ քաղաքաց իցեն եկեալք, եթէ իբրեւ զԳաղատացիս յամառեալ իցեն առ 'ի ոչ հնազանդիլ պատրիարքին Հայոց, աքսորեսցին եւ նոքա որդւովք եւ ընտանեօք 'ի քաղաքս Անատօլուի:

Դ. Մայրապետք նոցին՝ որք պաշտօնիւ ուսուցանելոյ խրատեն զկայանս լինել հակառակասէրս, աքսորեսցին եւ նոքա:

Ե. Կաթողիկք մի նստիցին 'ի Բերա, 'ի Ղալաթիա, եւ 'ի գիւղօ-

րէս նեղուցին Կոստանդնուպօլսոյ, ուր գտանին եկեղեցիք Լատինացւոց, այլ նստոցին 'ի Կոստանդնուպօլիս, յիւսկիւտար, եւ 'ի հայաբնակ գիւղօրէս, եւ տունք Հռովմէական հայոց՝ որք իցեն յարգելեալ տեղիս յայնոսիկ, վաճառեսցին այլազգեաց:

Այս հրովարտակ եկեալ 'ի պատրիարքարանն՝ որ էր յայնժամ 'ի Սամաթիա, զի այրեալ էր Պատրիարքարանն Խուճխաբուրի 'ի մեծի հրդեհին, որ եղեւ ամառ միով յառաջ, կոչեաց պատրիարքն, եւ եղեւ ժողով մեծ Հռովմէական հայոց յեկեղեցւոջ սրբոյն Գէորգայ, ուր ընթերցեալ զհրովարտակն, բացահայտեաց պատրիարքն ամենեցուն նոցա զհրաման արքայի:

Եւ ահա սկզբին եղեւ աքսորանաց Տավուտեանց՝ եւ Գլճեանց՝ եւ Թընկըրեանց երեւելի հատավաճառացն Հռովմէական հայք աքսորեցան հանդերձ ընտանեօք իւրեանց 'ի Գաղատիա մեծաւ խղճութեամբ. զի աւուրք ձմերան էին, եւ հողմունք խիստ շնչէին:

Մանաւանդ զի կանայք եւ մանկունք չէին սովորեալք ձիւրնթաց ճանապարհորդութիւնս առնել, թող թէ հիւանդք եւ յղիք եւ նորածինք՝ որք էին 'ի նոսին: Եւ զի՝ հազարաւոր անձինք էին սփռա, է ոչ բաւէր ամենեցուն սոցա զատ զատ ձի, եւ այլ պիտոյք ճանապարհի:

Ո՞ւր դիցուք, զի ամենայն ինչ թանկագին եղեւ, եւ չունէին բաւական դրամ 'ի ձեռին հոգալ զինքեանս եւ զկարեւորացն սակի:

(1828) Եւ 'ի յունվարի 27 եղեւ տեղափոխութիւն Կաթողիկաց 'ի Բերայէ եւ 'ի Ղալաթիոյ՝ 'ի Կոստանդնուպօլիս եւ 'ի հալաբնակ գիւղօրէս, եւ տունք նոցին վաճառեցան դիրագինս այլազգեաց:

Եւ յամսեանն փետրվարի քահանայք Հռովմէական հայոց աքսորեցան յԵւրոպա յամենայն սահմանաց տէրութեանն, թէպէտ ոմանք 'ի նոցանէ ծպտեալ 'ի կերպարանս Փրանկաց մնացին յեկեղեցիս Լատինացւոց եւ 'ի պալատս դեսպանաց, որպիսիք էին Գուցիանիթի Անտօնն, Խամուրճին, Յովսեփ վարդապետն, եւ այլք:

Եւ յետ աւուրց ինչ երեսունք 'ի մայրապետաց աքսորեցան 'ի Պանտրըմա, եւ մետասան մայրապետք 'ի Մահալլըճ, ամենեցուն սոցա տայր պատրիարքն զգիր հրամանի ճանապարհորդութեան նոցա:

Յայսոսիկ աւուրս եւ բազում անձինք 'ի Կոստանդնուպօլսեցի Հռովմէական հայոց եւ յայլոց քաղաքացեաց՝ որք ոչ հաղորդեցան ընդ Հայս 'ի հոգեւորս, եւ ոչ եկին յեկեղեցիս Հայոց, այնո-

քիկ եւս իբրեւ զանհնազանդս հրամանաց արքայի աքսորեցան 'ի քաղաքս Անատոլուի:

Եւ ոմանք խոյս ետուն 'ի Ռուսաստան, 'ի Սիրիա, եւ 'ի Թրեստ, եւ անդ մնացին առ ահի աքսորանաց, բայց ամենեքին սոքա որք գնացին յաքսորս եւ 'ի փախուստ, 'ի վերջին աղքատութիւն հասին, զի ոչ ունելով բաւական դրամ 'ի ձեռին՝ սկսան վաճառել զկահս եւ զկարասիս տանց իւրեանց, եւ այսպէս զրկեցան ամենեքին սոքա 'ի տանց եւ 'ի ստացուածոց իւրեանց, եւ ոմանք 'ի կենաց ցաւալի հիւանդութեամբ. եւ այսմ ամենեյնի անտանելի աղետից եւ չարաչար վնասուց եւ հարուածոց պատճառ եղեն անմիտ Գաղատացիք, ոպէս եւ 'ի վեր անդր յիշեցաք:

Երկու ամօք յառաջ երեք Հրեայք ընկալան զհաւատս Քրիստոնէութեան 'ի նորազանդից Ամերիկացւոց, զոր իմացեալ Հրէից՝ ետուն ըմբռնել զնոսա, եւ արքունի հրամանաւ արկին 'ի թի նաւատեղեաց:

Մինն 'ի նոցանէ կրկին անգամ դարձաւ 'ի հրէութիւն, եւ զերծաւ 'ի բանտէն 'ի ձեռս ազգին Հրէից. իսկ երկոքին մնացին անդ զամս երկուս:

Արդ՝ յայսոսիկ աւուրս եւ նոքա գիր աղերսանաց մատուցեալ առ արքայ՝ խնդրեցին ազատել զինքեանս 'ի բանտէ անտի, եւ ազգին Հայոց շնորհել: Ընդ որս գթացեալ արքայ՝ հրամայեաց, եւ ազատեալ զնոսա 'ի բանտէն՝ շնորհեաց ազգին Հայոց:

Որոց եկեալ 'ի Պատրիարքարանն, յետ աւուրց ինչ ընկալաւ զօծումն սուրբ դրոշմին խորհրդոյ յեկեղեցւոջ սրբոյն Գէորգայ 'ի Կարապետ պատրիարքէն:

Եւ ապա սկսան սոքա համոզել եւ գայլս 'ի Հրէից, եւ գաղտնի մկրտել 'ի տունս Հայոց 'ի ձեռս Հայոց քահանայից:

Զոր իմացեալ ապա Պէգճեան Յարութիւն ամիրայ, զչորեքտասանսն զնոսին՝ որք 'ի հրէութենէ դարձեալքն էին, աքսորեաց 'ի Կեսարիա քաղաք Կապադովկացւոց, եւ անդ մնացին զամս երիս, եւ ապա ցրուեցան անտի այս անդր 'ի Կոստանդնուպօլիս, յԱզրիանուպօլիս, 'ի Թրակիա, եւ այլուր: Աքսորեցան եւ մկրտող քահանայք նոցին, Անդրէաս վարդապետ Կոստանդնուպօլսեցի, Ստեփանոս վարդապետ Զմիւռնացի, Տէր Պաղտասար Պալատցի, Տէր Զաքարիա Բերացի:

Եւ կնքահարք նոցին՝ Յովսեփ վարժապետ Տէր Սահակեան, Ոսկերիչ Մարտիրոս, եւ այլք:

## ԳԼՈՒԽ ԼԸ.

Յաղագս պատերազմին Մոսկովաց ընդ Տաճկաց:

(1828) Մ ԵՌԵԱԼ էր երեք ամօք յառաջ Աղէքսանդր կայսր Մոսկովաց, եւ յաջորդեալ յաթոռ նորա եղբայր նորին Նիկողայոս Բաւլովիչ:

Իսկ Սուլթան Մահմուտ որ ցասուցեալ էր ՚ի վերայ Եւրոպացւոց թափաւորութեանց վասն հրկէզ առնելոյ նոցին ըզնաւատորմիղն արքունի ՚ի նաւահանգիստն Մօրայու, ձայն ետ պատերազմի ընդդէմ Ռուսաց ՚ի 18 աւուր դեկտեմբերի, եւ ՚ի սմին ամի յամսեանն ապրիլի կոխեցին Մոսկովք զՎալաքիա եւ զՄոլտաւիա, եւ սկսան մարտնչիլ ընդ Իպրայիլ մեծամուր բերդին, եւ առին զնա յամսեանն յունիսի զկնի ամսօրեայ պաշարման, ընդ նմին եւ զԻսաքճա, եւ զայլ տեղիս: Ընդդէմ սոցա եհան արքայ բանակ մեծ հարիւր յիսուն հազար զօրաց, որոց սպարապետ եղեւ Սէլիմ Մէհմէտ փաշայն, եւ երկրորդ նորա կարգեցաւ Հիւսէին Աղա փաշայն, որ զնաց ղէպ ուղիղ ՚ի Շումնու, եւ զգուշացաւ պահպանութեան նորա զբազում ժամանակս. իսկ Ռուսք առեալ զԻպրայիլ եւ զԵէրկէօլ, անցին ընդ գետն Դանուբ, եւ եկեալ պաշարեցին զՍիլիսթրէ: Գնաց ընդդէմ սոցա Սէլիմ Մէհմէտ փաշայն, բայց ոչ կարացեալ առնել ինչ, յետ քսան եւ հինգ աւուրց պաշարման քանդեցաւ բերդն ՚ի բազում հարուածոց թնդանօթաց, եւ մատնեցաւ քաղաքն ՚ի ձեռս Ռուսաց:

Յայտոսիկ աւուրս պաշարեցին Ռուսք եւ զքաղաքն Վառնա ՚ի ծովէ եւ ՚ի ցամաքէ, եւ սկսան պատերազմիլ ընդ բերդին զաւուրս երեսուն. իսկ Սէլիմ փաշայն՝ որ նստեալ էր բանակաւ ՚ի Բրավտա ընդդէմ մեծի բանակին Ռուսաց, յանկարծ ՚ի Բրավտա ընդդէմ մեծի բանակին Ռուսաց, յանկարծ յաւուր միում վաղքաջ ընդ առաւօտն առանց ազդ առնելոյ արձակեաց զերեսուն հազար այրուճիս ՚ի վերայ բանակին Ռուսաց, եւ կոտորեցին ՚ի նմին աւուր ՚ի Ռուսաց զհազար ոգիս:

Իսկ մեծ սպարապետն Ռուսաց որ կոչէր Տիպի Ֆէլտ Մարէշալ, զայրացեալ ՚ի բարկութիւն մեծ, յետ երից աւուրց ձայն ետ պատերազմի, եւ սկսաւ ռումբս արձակել իբրեւ զանձրեւ ՚ի գօրաց նորին, եւ զմնացեալսն արար փախստական. եւ զամենայն

աւար՝ եւ զկապուտ կողոպուտ անկելոցն բաշխեաց զօրականին իւրում: Ի պաշարման անդ Վարնայի վիրաւորեցաւ զօրապետն Ռուսաց Մէնչչիքով: Բայց Վօրօնցով անցեալ ՚ի տեղի նորա սաստկացոյց զպաշարումն, խրամատեաց զպարիսպսն, եւ անդադար ունմբս արձակէր ընդ մէջ քաղաքին զտիւ եւ զգիշեր հրկէզ առնել եւ աւերել, եւ ՚ի միոյ կողմանէ որ էր ՚ի ցամաքակողմն բերդին՝ սկսաւ ահան հատանել ՚ի ներքոյ պարսպացն, եւ հուր արկանել եւ կործանել, մինչեւ ուժաթափ լեալ զօրաց Տաճկաց, եւ տեսանելով զմօտալուտ մահ եւ զկորուստ քաղաքին, բազումք ՚ի մեծամեծաց՝ ընդ որս եւ քաղաքապետն Սէրէզցի Եռսուֆ փաշայն եւ որդի նորա անցին ՚ի կողմն Ռուսաց եւ անձնատուր եղեն:

Յայսմանէ ահ եւ դողումն պաշարեաց զբնակիչս քաղաքին, եւ աղաղակ ձայնի նոցա հասանէր յերկինս, յորմէ եւ ծովակալ Իզզէթ Մէհմէտ փաշայն անճարացեալ եւ յուսահատեալ՝ մատնեաց զքաղաքն ՚ի ձեռս Ռուսաց, հանելով զբնակիչ Տաճիկս եւ զգօրս իւր ՚ի միջոյ քաղաքին:

Եւ այսպէս ՚ի մէջ յիսուն աւուրց առաւ Վարնա ՚ի Մոսկովաց ՚ի 30 սեպտեմբերի, եւ բացաւ ճանապարհ անցանելոյ Ռուսաց ընդ ահագին ձիւնապատ լերինս՝ որք կոչին Պալզան եւ արշաւել ՚ի Բուլղարս, եւ ՚ի Մակեդոնիա, եւ ՚ի Թրակիա, եւ եւս դէպ ՚ի Կոստանդնուպօլիս, որպէս եւ եղեւ իսկ:

(1828) Յաւուրս յայսոսիկ եղեւ շինութիւն Մայր եկեղեցւոյն Ս. Աստուածածնի ՚ի Խոնմխափու, եւ Պատրիարքարանին Հայոց, որ այրեալ էր յերկուց ամաց հետէ, բայց մեծ եւ ընդարձակ շինեցաւ եկեղեցին, բաժանեալ յերիս մեծամեծ եկեղեցիս, եւ յերկուս փոքրադիրս առընթեր նոցին, որովք եղեն հինգ եկեղեցիք հաստակառոյցք եւ մեծայարկք: Եւ յանդիման եկեղեցւոյն շինեցաւ Պատրիարքարանն առընթեր Երուսաղէմայ տանն, եւ յաջէ եկեղեցւոյն աւագան մեծ ջրալից եւ պատրաստ վասն հրդեհի:

Եւ այս շինութիւն տեւեաց զամ մի ողջոյն, եւ հանդէս օծութեան եկեղեցւոյն կատարեցաւ ՚ի 14 հոկտեմբեր, 1828:

## ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս մեծի սովուն որ եղեւ 'ի Կոստանդնուպօլիս:

(1829) ՅԵՏ առման Վառնա քաղաքին հրաւիրակս առաքեաց Սուլթան Մահմուտ արքայ, եւ ետ բերել զղեսպանս Գաղղիացւոց եւ Անգլիացւոց, որք եկին 'ի Կոստանդնուպօլիս, եւ նստան 'ի պալատս իւրեանց յապրիլի 7:

Բայց յաւուրս յայտոսիկ սով մեծ եղեւ 'ի Կոստանդնուպօլիս հացի՝ եւ ձիթոյ՝ եւ իւղոյ՝ եւ որք 'ի կարեւորացն սակի իցեն. զի խափանեցաւ երթեկեկութիւն նաւուց բեռնաւորելոց ցորենով եւ ալերբ:

Վասնորոյ եւ օր ըստ օրէ պակասեցաւ եւ սպառեցաւ հանապազօրեայ ցորեն՝ եւ դարի՝ եւ ալիւր, որք տուեալք լինէին յարքունուստ 'ի փռունս հացագործաց:

Եւ քսանամեայ փտեալ կորեակ եղեւ նիւթ հացի, եւ այն մոխրախառն՝ հողանման՝ եւ սեաւ, զոր աղքատք՝ որ լոկ ուտէին, զմահ տարածամ համբուրէին:

Եւ այն եւս դառն էր եւ թանկագին եւ դժուարագիւտ, մինչ զի հարիւրաւոր անձինք կանգնէին յարածամ առաջի փռանց յամենայն ազգաց խառն 'ի միասին, մինչեւ չտալ անցս անցորդաց, թէպէտ եւ բիր 'ի ձեռին Գավասք փաշայից ծեծէին եւ վանէին զնոսին:

Եւ որպէս հացն, նոյնպէս եւ ամենայն պիտոյք, իւղ եւ միս, ձէթ եւ պանիր, ունդ եւ օճառ, եղեն ծանրագին, եւ սով եւ թանկութիւն պաշարեաց զբնակիչս Կոստանդնուպօլսոյ:

Յայս հայեցեալ մեծամեծ նախարարաց տէրութեանն, եւ բազմիցս ժողով արարեալք՝ չգտին այլ ինչ ճար վասն սովուս,բայց միայն այս, զի ամենայն օտարականք՝ որք 'ի տասն ամահ հետէ եկեալ էին 'ի Կոստանդնուպօլիս, գնասցեն 'ի քաղաքս եւ 'ի հայրենիս իւրեանց, ուստի եկեալքն են, եւ Կոստանդնուպօլսեցիք՝ որք ունին բաւական դրամ 'ի ձեռին, ելեալք մեկնեսցին որդւովք եւ ընտանեօք իւրեանց 'ի Նիկոմիդա, 'ի Պրուսա, 'ի Թրակիա, եւ յայլ մօտաւոր տեղիս:

Ուստի եւ վճռահատեալ այս որոշումն նոցա, եւ հաւանեցուցեալ զարքայ առ 'ի պակասեցուցանել զբնակիչս Կոստանդնու-

պօլսոյ այսու եղանակաւ, զի բաւեսցէ մնացելոցն ցորեան եւ այլ պիտոյք, որ ինչ գտանին 'ի շտեմարանս արքունիս, եղեւ հրաման յարքարէ, եւ եկն հրովարտակ 'ի Պատրիարքարանս Հայոց եւ Յունաց, եւ առ Հրեայս, զի մեկնեսցին 'ի Կոստանդնուպօլսոյ Կոստանդնուպօլսեցիք, եւ օտարականք 'ի հայրենիս իւրեանց:

Իսկ խորախորհուրդ եւ բազմահանձար Պէգճեան ամիրայ զմտաւ ածեալ զայլ ինչ եղանակ գտանելոյ զապրուստ հացի եւ կերակրոյ, գնաց առ արքայ, եւ ասէ ցնա. ով Տէր թագաւոր. յայտ իսկ է տէրութեան ձերում, զի այսչափ բազմութիւն քրիստոնէից գոլով 'ի քաղաքի յայսմիկ, ոչ իշխեն թշնամիք թշնամութիւն առնել քաղաքիս, եւ ոչ եւս զօրեն 'ի վերայ յարձակիլ, զի մի վնաս ինչ հասուցեն քրիստոնէից ազգաց, որք բնակեալքն են 'ի քաղաքի յայսմիկ:

Արդ եթէ դու զսոսա բարձցես աստի, եւ ցրուեսցես յայլ ինչ օտար երկիր, բառնաս եւ զահ եւ զերկիւղ թշնամեաց եւ որպէս թէ՛ հրաւէրս կարդաս առ նոսա գալ պատերազմաւ 'ի վերայ քաղաքիս:

Ահաբեկեալ արքայի 'ի բանիցս այսոցիկ՝ ասէ ցնա, զի ա՞րդ եւ ու՞ստի գտանիցի այսչափ բազմութեան հանապազօրեայ հաց եւ պարէն, եւ որ այլ ինչ են 'ի կարեւորացն սակի:

Պատասխանի տայ նմա Պէգճեան Յարութիւն, եւ ասէ ցնա, արքայ՝ յաւիտեան կաց, հրաման տուր ամենայնի, զի ով ոք կամիցի, երթիցէ 'ի մօտակայ քաղաքս եւ 'ի գիւղօրէս, եւ գնեալ զցորեան եւ զալիւր, բերցէ 'ի Կոստանդնուպօլիս, եւ վաճառեսցէ այնչափ գնոյ՝ որպէս ինքն կամիցի, եւ մի տացէ զմաքս կամ զայլ ինչ տուրս արքայի, զի շնորհեալ է նոցա այն ամենայն:

Արդ ընթերցցի այս հրաման 'ի լուր ամենայն ժողովրդեան, եւ տեսցես զյաճախութիւն հացի եւ ամենայն պիտոյից 'ի քաղաքի յայսմիկ:

Համոցեալ արքայի 'ի բանիցս յայսոցիկ, յետս կոչեաց զառաջին հրաման իւր, եւ շնորհեաց ամենեցուն կալ մնալ 'ի քաղաքի յայսմիկ, եւ անդէն ընթերցաւ հրովարտակ հրամանաց արքայի, զի ով ոք եւ կամիցի, երթիցէ 'ի մօտակայ քաղաքս եւ 'ի գիւղօրէս, որք շուրջ զքաղաքաւս իցեն, եւ գնեսցեն ալիւր եւ ցորեան, եւ այլ ամենայն պիտանիք, զոր ինչ եւ գտանիցեն, եւ բերեցեն 'ի Կոստանդնուպօլիս, եւ վաճառեսցեն ըստ կամաց իւրեանց, եւ մի



տացեն զմաքս, կամ զայլ ինչ սահմանեալ տուրս արքայի, զի 'ի շնորհեալ է յարքայէ:

Իբրեւ տարածեցաւ այս հրաման 'ի լսելիս ամենայն ժողովրդեան, բազումք 'ի բնակչաց քաղաքիս, 'ի Տաճկաց' 'ի Հայոց՝ եւ 'ի Յունաց, նաւեցին 'ի ծովեզերս Պոնտոսի մմինչեւ 'ի Սամսոն եւ 'ի Տրապիզոն, եւ ոմանք 'ի Պրուսա, եւ 'ի գիւղօրէս Նիկոմիդեայ, եւ այլք 'ի Թրակիա, եւ յԱնդրիանուպօլիս, եւ 'ի մէջ քսան աւուրց սկսաւ վաճառիլ ալիւր եւ ցորեան 'ի փողոցս քաղաքին, եւ եղեւ առատութիւն հացի եւ ամենայն պիտոյից, եւ բարձաւ սով եւ թանկութիւն 'ի քաղաքէս:

Եւ գովեաց արքայ զխելս եւ զուշիմութիւն Պէգճեան Յարութիւն ամիրային առաջի ամենայն մեծամեծաց իւրոց եւ ետ նմա նշան ականակապ կախել 'ի կուրծս իւր, եւ զգենուլ զկերպարանս զգեստուց ըստ Տաճկաց:

Յաւուրս յայսոսիկ եւ արքունի ճարտարապետ Գրիգոր ամիրայն աւարտեաց զշինութիւն մեծի պալատի արքային 'ի գիւղն Սթաւրօզ, եւ ետ նմա արքայ նշան ականակապ, եւ փոխեաց եւս զկերպարանս զգեստուց նորա:

Շնորհեաց եւ արքունի վառօդապետ Սիմէօն ամիրային զնշան ականակապ, եւ զգենուլ զկերպարանս զօրէն այլազգեաց:

Եւ երեքին այսոքիկ զօրհանապազ երթեւեկէին 'ի պալատն եւ յանդիման լինէին արքայի, եւ խօսակցէին ընդ նմա սիրեալաբար:

(1829) Ի սմին ժամանակի կառուցին 'ի Գարակէօմրիւկ կոչեցեալ թաղն զեկեղեցի իմն փոքրիկ եւ վայելուչ՝ բազմաշխատ վաստակօք Տէր Պաղտասար քահանային Պալատու, կատարեցին զօծումն նորա յանուն սրբոյն Յօհաննու Ոսկեբերան հայրապետին 'ի մայիսի 7:

Յաւուրս յայսոսիկ եւ գին արքունի հարկին՝ որ էր երեսուն եւ վեց դահեկան ըստ մարդաթուի, յաւելաւ եւ եղեւ քառասուն եւ ութ դահեկան:

## ԳԼՈՒԽ Խ.

*Յաղագս քաջութեան Հայոց Բաբերդու, եւ կոտորածի նոցա 'ի Մոսկովաց, եւ յաղագս գործոց Տիպիչ սպարապետին 'ի կողմն Բուսնի:*

**Մ**ինչ բանակն Ռուսաց էանց ընդ գետն Դանուբ 'ի կողմն Եւրոպիոյ, եւ եկեալ պաշարեաց զբերդն Իպրայիլ, յաւելաւ եւ այլ իմն բանակ եօթանասուն հազար զօրաց 'ի կողմն Ասիոյ, որոց սպարապետ կարգեցաւ Բասքէվիչ ժէնէրալ այր ոմն քաջ եւ մեծախորհուրդ յազգէ Ռուսաց, որք անցեալ ընդ Վրաստան, եկին եւ պաշարեցին զքաղաքն Ախլցխա, եւ սկսան պատերազմիլ ընդ նմա:

Իսկ բնակիչքն հաւատարիմ լինելով Օսմանեան Տէրութեան, յոտն կացին ամենեքին մեծ եւ փոքր, եւ սկսան 'ի ներքուստ քաղաքին անդադար պատերազմիլ ընդ Մոսկովս զաւուրս երեսուն: Բայց որովհետեւ չեղեւ սոցա օգնականութիւն ինչ արտաքուստ 'ի Դրանէ Օսմանեան տէրութեան, յետ երեսուն աւուրց առաւ քաղաքն 'ի Մոսկովաց, եւ կոտորեցան 'ի պատերազմին քսան եւ հինգ հազարք 'ի քրիստոնէից, որոց բազումք էին 'ի Կաթոլիկ ժողովրդեանէն:

Յետ աւուրց ինչ եկեալ Մոսկովաց, առին զԿարս, զՓօթի, եւ զՊայազիտ, եւ անցեալ ընդ Սօղանլը կոչեցեալ լեռն, զնացին եւ առին զԹօփրադ Գալէ, զՏիատին, զՀասան Գալէ, եւ զՄուշ, եւ անտի եկին յէրզրում, եւ զնա առին եւս:

Եւ զայս ամենայն քաղաք առանց պատերազմի եւ առանց կռուոյ ինչ առնուին, զի բնակիչք քաղաքաց՝ 'ի գալն Մոսկովաց անձնատուր լինէին, բանային զդրունս քաղաքաց, եւ հրաւիրէին զնոսա, երկուցեալք յահէ կոտորածի նոցա եւ լսելով զհարաչար հարուած Ախլցխա քաղաքին: Յառաջ խաղացեալ Ռուսաց 'ի Կարնոյ՝ եկին 'ի Բաբերդ, բայց բնակիչք Բաբերդու Տաճիկք, Քուրդք եւ Հայք, միաբանեալ ընդ միմեանս՝ ետուն նոցա պատերազմ՝ եւ ոչ թողին Ռուսաց մտանել 'ի քաղաքս իւրեանց:

Եւ որովհետեւ կորովիք էին սոքա, եւ վարժք 'ի ձգել զսուր եւ զնիզակ, բազում վնասս հասուցին Ռուսաց, եւ զեօթն անգամ 'ի պատերազմիլն յաղթեցին Ռուսաց, եւ զբազումս 'ի նոցանէ կոտորեցին, որոց կոտորած անկելոցն 'ի պատերազմին՝ իբրեւ զբլուր իմն կանգնեցաւ 'ի դաշտն Բաբերդու:

Տեսեալ Բասքէվիչ սպարապետ, զի չիք այլ ինչ հնար յաղթելոյ սոցա, դարձոյց զՋուրն՝ որ անցանէր յետ կոյս քաղաքին, եւ արար զդաշտն ջրալից իբրեւ գաւազան տասն մատին բարձրութեամբ, եւ մխեաց յերեսս երկրի բեւեռս սրածայրս հազարաւորս եւ բազմաթիւս: Եւ ՚ի վերջին անգամ պատերազմիլ սոցա, կեղծեցին Ռուսք զփախուստ ինչ ընդ կրունկն, զորոց զկնի եւ Բաբերդցիք անկեալ հալածեցին եւ վանեցին իբրեւ ժամս երկուս:

Բայց ապա ընդ կրունկն դարձեալ Ռուսք, մինչ սկսան արձակել թնդանօթս ումբաճիգս ՚ի վերայ Բաբերդցւոց, յայնժամ նոցա փախուստ տուեալք դարձան յետս, այլ տեսին, զի ճանապարհն՝ ընդ որ եկեալն էին, լի էր զօրօք Ռուսաց, ուստի շեղեցին երթալ ընդ ճանապարհ դաշտին, եւ եկին ՚ի դաշտն ջրալից, հարին զինքեանս ՚ի դաշտն, եւ որք կոխէինն, մնացին անդր, ոչ յառաջ եւ ոչ զկնի կարէին երթալ:

Զի յառաջ կոյս նոցա էին բեւեռք մխեալք, եւ ՚ի թիկանց կուսէ այրուճիք Ռուսաց, եւ այնպէս ՚ի դաշտի անդ կոտորեցան չորք հարիւրք ՚ի Քրթաց եւ հարիւր յիսուն եւ վեցք ՚ի Հայոց:

Յետ այսր ամենայնի մինչ աճապարեցին անցանել ընդ դաշտն եւ անկանիլ ՚ի Բաբերդ, զօրքն Ռուսաց որ յետ կոյս քաղաքին էին, ելին առաջի նոցա, եւ արձակեալ թնդանօթս երկերիւրս ՚ի միում ըոպէի՝ կոտորեցին զբազումս, եւ ապա եկեալ ՚ի Բաբերդ, մինչ անդ եւս սկսան ումբս արձակել, բնակիչք ամենեքին ծերք եւ տղայք սկսան միաբան գոչել եւ աղաղակել, եւ այնպէս մտեալ Բասքէվիչ ՚ի Բաբերդ, յաւել եւս կոտորել զկորովի բնակիչս քաղաքին ՚ի Հայոց եւ ՚ի Տաճկաց, առնուլ կամեցեալ զվրէժ կոտորածի զօրաց իւրոց, զոր նոքա կոտորեցին:

Իսկ ՚ի Հայոց բնակելոց ՚ի Բաբերդ՝ մեռան ՚ի մրցմունս անդ պատերազմաց հազար մետասան անձինք, եւ ՚ի Քրդաց եւ ՚ի Տաճկաց հազար հինգ հարիւր, իսկ ՚ի Ռուսաց աւելի քան զչորս հազար հոգիս:

(1829) Իսկ Տիպիչ Ֆէլտ Մարէշալ՝ որ էր ՚ի կողմն Եւրոպիոյ ՚ի քաղաքն Վարնա, յառաջ խաղացուցեալ զզօրս իւր ՚ի վեր կոյս, գնաց եւ էառ զբերդաքաղաքսն Սիլիստրէ, Ռուսսոսք, եւ Թոլլչա, եւ Մաչին, եւ Նիկէթօլի, եւ Բինէվրէ: Եւ աներկիւղ համարձակութեամբ անցեալ ընդ կիրճս Պալզան լեռանց, էառ զՄիւսէվրէ, զԱհեօլու, զՊուրկազ, զԱյտօս, զԳարնապատ, եւ զՍէլիմնէ, եւ եկն յիսլիմեայ, ուր բանակեալ էին Տաճիկք, Եւ յետ երկուց աւուրց

առաքեաց Տիպիչ տեսպան ՚ի բանակն Տաճկաց, թէ զի՞նչ կամիք, պատերազմաւ տայք ինձ զքաղաքդ, թէ առանց պատերազմի:

Անդ էր Խալիլ փաշա, որ ապա փեսայացաւ արքային, նա պատասխանի ետ եւ ասէ, առանց պատերազմի չէ հնար ինձ մատնել զձեզ զքաղաքս զայս, եթէ Սուլթան Մահմուտ կամէր առանց պատերազմի տալ ձեզ զայս ամենայն երկիր, ապա ընդէ՞ր առաքեաց զմեզ այսր եւ զզօրս զայս ամենայն:

Յայնժամ ասէ ցնա դեսպանն, ՚ի վաղիւն պատրաստ լերուք, եւ տեսանիցէք, զմարտ պատերազմին Մոսկովաց, եւ զայս ասացեալ՝ դարձաւ եւ գնաց:

Իսկ ՚ի վաղիւն ընդ այգանալ առաւօտուն՝ ՚ի յուլիսի 22, սկսան Ռուսք արձակել ռուսքս յայգուէ մինչեւ ցօր հասարակ, եւ ցրուեցին զբանակն: Էին ՚ի քաղաքին չորք հարիւր տունք Տաճկաց, եւ ահա յետ տունջեան՝ արձակեցին Ռուսք զինն եւ տասն ռուսքս ՚ի թաղն Տաճկաց, եւ հրկէզ արարին ողջոյն զչորս հարիւր տունսն:

Յայնժամ գողումն եւ գոչումն սկսաւ լսելի լինել, եւ աղաղակ ձայնի նոցա հասանէր յերկիրնս, յորմէ անկաւ ահ եւ դողումն ՚ի բանակ Տաճկաց, եւ թողեալ զբանակն՝ սկսան փախչել:

Եւ այսպէս առաւ Իսլիմեա ՚ի Ռուսաց, եւ ՚ի պատերազմի անդ ՚ի նմին աւուր անկան ՚ի Տաճկաց հինգ հազարք ՚ի կրթեալ զօրաց, եւ հազարք յԱսիացւոց, (այն է կէօնիւլլի):

Յետ վեց աւուրց յառաջ խաղացեալ Տիպիչ սպարապետ յօգոստոսի 7 յաւուր չորեքշաբթի եմուտ յԱնդրիանուպօլիս առանց պատերազմի եւ նստաւ ՚ի պալատն արքայի, եւ հրամայեաց զօրաց իւրոց խաղալ յառաջ, որոց գնացեալ՝ առին զՏիմէթօքա, Ֆէրէ, Իբսալա, Կիւմիւլիւնա եւ էնէզ:

Այս ամենայն քաղաքք եւ գիւղաքաղաքք՝ որք մատնեցան ՚ի ձեռս Ռուսաց, բազումք առանց պատերազմի անձնատուրք եղեն, մի՞ զի զղուեալք էին ՚ի գործոց Տաճկաց, եւ երկրորդ՝ զի յուսային ընդ հովանեաւ նոցա լաւ եւս ապրիլ՝ ապահովեամբ կենաց եւ ընչից, վասնորոյ ընդ առաջ ելեալք Ռուսաց ուրախութեամբ մուծանէին զզօրս նորա ՚ի մէջ քաղաքաց, եւ անձնամատոյցք լինէին նմա յամենայն ծառայութիւնս, որպէս ականատես եղէ այսմ ամենայնի, զոր պատմեցի այսր սակաւուք:

## ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս գալոյ Ռուսաց 'ի վերայ Կոստանդնուպօլսոյ քաղաքին, եւ Հաշտութեան նոցա ընդ Օսմանցիս ընդ երկոտասան դաշնադրութեամբք:

**Տ**իպիչ Ֆէլտ Մարէշալ՝ կարգադրեալ զամենայն պատրաստութիւն մեծի բանակի, եհան բանակ ութսուն հազար զօրաց, յորում էին ութ ժէնէրալք, քսան գնդապետք, չորեքհարիւր թնդանօթք, եւ ութ հարիւր յիսուն սայլք եզանց եւ ձիոց, եւ սպարապետ նոցա կարգեալ զԳրանտին ժէնէրալ յազգէ Ռուսաց զայր քաջ եւ հզօր, հրամայեաց նմա յառաջ խաղալ եւ երթալ մինչեւ 'ի դուռն Կոստանդնուպօլսոյ:

Այս բանակ զօրեաց ել յաւուր կիւրակէի յօգոստոսի 20, զոր եւ ես ինքն իսկ տեսի աչօք իմովք, որ պատմեմս զայս, եւ հարցի ցհարիւրապետ ցոմն նշանացի, թէ յո՞ երթաք: Պատասխանի ետ ինձ եւ ասէ, Բայտեօմ ցարիկուատ:

Իսկ ես ոչ գիտելով Ռուսերէն, հարցի ցոմն՝ որ տեղեակն էր Ռուսաց լեզուին, եւ ասեմ, զի՞նչ նշանակէ ասել, Բայտեօմ ցարիկուատ, եւ նա ասէ ցիս, նշանակէ թէ՛ երթամք 'ի մայրաքաղաքն:

Յառաջ խաղացեալ Ռուսաց, հասին 'ի Չօրլու, եւ անտի գունդ մի յառաջընթաց զօրաց՝ որք կոչին Գազագ, եկին 'ի Սիլվրի, յորմէ երկոտասան ժամէ 'ի Կոստանդնուպօլիս:

Համբաւ գալստեան սոցա հասեալ 'ի Կոստանդնուպօլիս, եւ տարածեալ 'ի լսելիս բնակչաց, ահ եւ դողումն պաշարէ զամենեւին, կրպակք փակին, շուկայք դատարկանան, եւ ամենայն մարդ փախչի 'ի տուն իւր, երկեցուցանելով զմիմեանս թէ ահա Ռուսք եկեալ են, որպէս թէ մտեալ են 'ի մէջ քաղաքիս:

Յայնժամ մեծամեծք եւ նախարարք տէրութեանն եւ ընթերցողք նոցին ժողովին 'ի պալատն արքայի, եւ աղաչեն զնա Հաշտութիւն առնել փութանակի ընդ Ռուսաց, ապա թէ ոչ՝ ասեն, կորնչիմք ահաւասիկ, եւ կործանի թագաւորութիւնս Օսմանեան:

Ակամայ կամօք յանձն առեալ Սուլթան Մահմուտ արքայ, հաւանի խորհրդոց նոցա, եւ իսկ խորհրդով եւ նամակագրութեամբ դեսպանաց Գաղղիացւոց եւ Անգլիացւոց՝ կարգեն զդեսպանն Բրուսիոյ տէրութեան՝ որ նստէրն 'ի Կոստանդնուպօլիս, երեսփոխան արքայի, եւ խորհրդականք նմին՝ զտէֆտէրտար Սա-

տըզ էֆէնտին, գքեհեա պէյ Թահիր էֆէնտին, գ Գատրի պէյ Ստանպօլ գատըսին, եւ գ Ամէտճի Նուրի էֆէնտին. որք 'ի միջոցի երեսուն եւ չորից ժամուց հասին յԱնդրիանուպօլիս:

Եւ յանդիման լեալ Տիպիչ Յէլտ Մարէշալ մեծի սպարապետին, ասէ, դեսպանն Բրուսիոյ, ես աւասիկ՝ երեսփոխան եմ Օսմանեան արքայի, եւ հրամանաւ եւ յատուկ գրով նորա՝ եւ խորհրով դեսպանաց եւրոպական թագաւորութեանց՝ եկի առ մեծանձնութիւն քո խօսել զբան հաշտութեան:

Արդ եւ տէրութիւն քո փութանակի այժմ հրաման առաքեսցէ 'ի բանակ զօրացդ, որք գնան 'ի վերայ Կոստանդնուպօլսոյ, զի ուր եւ իցեն, յամենեսցեն անդր. եթէ ըստ կամաց ձերոյ չլինիցի կատարումն խօսիցս, ազդ արա յայնժամ բանակիդ, եւ երթեալ պաշարեսցեն գ Կոստանդնուպօլիս:

Ի լսել զայս Տիպիչ, գառաջինն ոչ կամեցաւ յամեցուցանել զընթացս բանակին, բայց դեսպանն Բրուսիոյ ողորջաօք եւ ախորժալուր խօսակցութեամբ իւրով համոզեաց գ Տիպիչ. որ տեսեալ գ յատուկ կնքեալ գրութիւն Սուլթան Մահմուտ արքայի, որ 'ի դիմաց իւրոց երեսփոխան կարգէր զդեսպանն Բրուսիոյ, ցուցանելով, եթէ հաճոյ եւ ընդունելի է ինձ այն ամենայն, զոր կնքէ արժանապատիւ դեսպանս Բրուսիոյ:

Ուստի առաքեաց հրաման առ Գրանդին սպարապետ բանակին, զի ուր եւ իցեն, մնասցեն անդր, ոչ յետս դարձցին, եւ ոչ քայլ մի ոտին յառաջ գնասցեն:

Եւ ինքն յետ երից աւուրց սկսաւ խօսել ընդ նմա զպայմանս հաշտութեան, եւ 'ի մէջ քսան աւուրց վճռահատեալ վերջացուցին զբանն հաշտութեան 'ի 14 աւուր սեպտեմբերի յերկոտասան դաշնադրութիւնս:

Ա. Վալաքիա եւ Մօլտավիա ազատ լիցին, քաղաքական կառավարք նստցին երկուք, 'ի կողմանէ Օսմանեան տէրութեան՝ Մօլտովան պէյք, եւ 'ի կողմանէ Ռուսաց՝ դատաւորք Ռուսք, եւ Մօլտովան պէյք տացեն ամ ըստ ամէ Օսմանեան տէրութեան զքսան հազար քսակ ոսկւոյ:

Բ. Ի կողմն Անատօլուի Ախլցիսա քաղաք եւ գաւառ նորա մինչեւ 'ի Կարս, եւ 'ի Սեաւ ծով գաւառն Կէօնէէի՝ եւ ծովեզերեայ բերդաքաղաքք նորա Անափ, եւ Օֆ, եւ Փօթի, եւ Ազգօր, եւ Ախալքէլէք, որք Վրաստանու աշխարհին են ծովեզերք, այսոցիկ լիցին ընդ իշխանութեամբ Ռուսաց:

Գ. Օսմանեան տէրութիւնն տացէ Ռուսաց զմետասան հազար միլիոն Վենետիկեան ոսկիս, որոյ չորս հարիւր հազար քսակն է հին պատքն հաշուեալ 'ի յԱգքիրման, մնացեալն այժմեան պատերազմի ծախքն:

Դ. Նաւք Եւրոպական վաճառականաց 'ի նեղուցէ Միջերկրական ծովուն անցեալ՝ երթեւեկեսցեն 'ի Պոնտոս, եւ 'ի կողմանէ Օսմանեան տէրութեան մի գննեսցի 'ի մէջ նոցին:

Ե. Ի պատերազմական նաւուց Եւրոպական տէրութեանց ըստ պահանջելոյ հարկին մի նաւ միայարկ կամ կրկնայարկ, ազատ լիցի մտանել ընդ նեղուցն Դարդանելայ եւ գալ 'ի Կոստանդնուպօլիս, եւ յետ ամսօրեայ աւուրց վերադառնալ:

Զ. Նաւատորմիղն Օսմանեան տէրութեան՝ արտաքս քան գնեղուցն Պոնտոսի բնաւին մի ելցէ, բայց վաճառականաց իւրոց նաւք երթեւեկեսցեն ուր եւ կամիցին:

Է. Ութ եւ տասն ամիս միջոց տացի հարկատու ազգաց Օսմանեան տէրութեան, որ ոք կամի մնալ ընդ իշխանութեամբ նորա, եւ երթալ 'ի սահմանս այլոց տէրութեանց, գնասցէ համարձակ. յետ լրանալոյ այսր տասն եւ ութ ամսեայ միջոցի՝ ամենայն ոք մնասցէ 'ի տեղի իւր:

Ը. Ի ժամանակի ապստամբութեան Յունաց՝ Օսմանեան տէրութիւնն զորքան տունս կամ զստացուածս Յունաց յափշտակեալ գրաւեալ է, զայն ամենայն ըստ ուղիղ հաշուին վճարեսցէ Յունաց:

Թ. Ազատութիւն տացի Հելլենացւոց, որք են 'ի կղզիս Միջերկրական ծովուն, իբրեւ մասնաւոր տէրութիւն իմն անկախ յումեքէ, եւ զթագաւոր նոցին ընտրեսցեն եւ կառուցեն Եւրոպական թագաւորութիւն, այլ յաղագս սահմանաց նոցին ոչինչ հաւաստեալ սահմանեցին անդ:

Ժ. Կղզիք՝ որք 'ի կողմն Եւրոպիոյ անկանին, տացին Հելլենացւոց տէրութեան, որ նստելոց է 'ի Մօրա: Եւ Տաճիկք՝ որք բնակին 'ի կղզիս յայնոսիկ, եթէ կամին, ելցեն եւ գնասցեն յայլ երկիր ընդ իշխանութեամբ Օսմանեանց, իսկ եթէ կամին մնալ անդր, լիցին հարկատու Հելլենական տէրութեան, որպէս Յոյնք հարկատու են Տաճկաց 'ի Կոստանդնուպօլիս:

ԺԱ. Նաւք Հելլենացւոց վաճառականաց տացեն միայն զմաքսն՝ երեք առ հարիւր, եւ բաց 'ի մաքսէն զայլ ինչ տուրս մի

պահանջեսցին, եւ դրօշակք նոցին իցեն 'ի կապուտ պաստառ քարչեալք:

ԺԲ. Հարկատուք Տաճկաց, որք են Յոյնք, Հայք, Հռովմէական Հայք, եւ Հրեայք, ազատ լիցին 'ի պաշտել զո եւ իցէ հաւատս, եւ բռնութիւն հաւատոյ եւ կրօնի մի լիցի 'ի կողմանէ Օսմանեան տէրութեան, ուստի բռնութեամբ յեղաշրջել զՔրիստոնեայս 'ի Մահմէտական օրէնս մի երբէք լիցի, եւ Հռովմէական Հայք ազատ լիցին 'ի պաշտել զհաւատս իւրեանց:

Դեսպանն Ռուսաց ամենայն պատուով եւ արտօնութեամբ եկեալ նստցի 'ի Կոստանդնուպօլիս 'ի պալատ իւր եւ զերկոտասան դաշնադրութիւնս զայսոսիկ հոգ տարցէ 'ի գործ գնել, եւ ընդ հակառակն՝ եթէ ներհակ դաշնադրութեանցս այսոցիկ գործողութիւն ինչ արասցէ Օսմանեան տէրութիւնն, 'ի նմին աւուր բացցի վերստին մարտ պատերազմի:

Յաւուրս յայսոսիկ Րէշիտ Մէհմէտ փաշայն՝ որ ամբարձեալ էր 'ի պատիւ վէզիրի ազամութեան, հրամանաւ արքայի եկն յԱնդրիանուպօլիս, որում ընդ առաջ ելեալ Տիպիչ՝ մեծաւ պատուով ընկալաւ զնա, եւ զաւուրս երիս արար խրախուրթիւնս եւ հանդէսս խնճոյից՝ եւ զամիս մի մարդասիրաբար ընկալաւ զամենայն ազգս բնակեալս 'ի քաղաքին, ամենեցուն ըստ իւրեանց աստիճանի եւ արուեստի պատիւ ցուցանել եւ խնճոյս պատրաստեալ:

Իսկ յետ երեսուն աւուրց հաշտութեանն 'ի նոյեմբեր 7, դեսպանք Գաղղիացւոց եւ Անգլիացւոց զմեծածախ եւ զբազմազան ընթրիս պատրաստեսցին արքայի 'ի Կոստանդնուպօլիս 'ի Պէօյիւք տէրէ, եւ շնորհակալ եղեն զնմանէ, որ հոգացեալ զօգուտ եւ զբարին հասարակաց՝ զիջաւ 'ի հաշտութիւն ընդ Ռուսս, եւ վերջացոյց զպատերազմն, եւ անհետ արար զամենայն չարիսն, որք ունէին 'ի վերայ հասանեալ Կոստանդնուպօլսոյ:

(1830) Եւ յետ երկուց ամսոց յառաջներորդ օր յունվարի եկն դեսպանն Ռուսաց 'ի Կոստանդնուպօլիս:

Իսկ զօրքն Ռուսաց՝ որք եկեալ էին 'ի Սիլիվրի, յետ քառասուն աւուրց դարձան յետս, բայց 'ի Սիլիստրէ՝ որ 'ի կողմն Րումէլիյի, եւ Կարին՝ 'ի կողմն Անատօլույի, մնացին զօրք Ռուսաց զամ մի, եւ յետ այնր թողին զնոսս եւս, եւ գնացին:

Իսկ 'ի չուելն Ռուսաց՝ բազումք եւս 'ի Հայոց եւ 'ի Յունաց՝ հանդերձ ընտանեօք իւրեանց գնացին ընդ նոսս, թողեալք



զտուն եւ գայգիս եւ գանդս իւրեանց, որպէս 'ի Կարնոյ քաղաք յառաջ քան զպատերազմն էին տասն հազար տունք Հայոց, իսկ յետ պատերազմին եւ չուելոյ Ռուսաց մնացին հարիւր տունք, զի Կարապետ եպիսկոպոս առաջնորդ նոցա՝ զգուեալ գոլով յանարժան գործոց Տաճկաց եւ 'ի բռնութենէ փաշայից, յորդորեալ զքաղաքացիսն՝ էառ ընդ իւր, եւ գնացին 'ի Ռուսաստան 'ի Տփիսիս, յԱխլցիսա, եւ յայլ քաղաքս Ռուսաց: Ընդ իւրեանս տարան եւ զամենայն զարդս եկեղեցեացն Կարնոյ՝ զոսկեղէնս եւ զարծաթեղէնս, եւ զպատկերսն եւս, այնպէս արարին եւ 'ի բազում քաղաքս Անատոլոյի:

Իսկ Յոյնք 'ի կողմն Րումէլիյի առաւել քան զՀայս գնացին եւ 'ի Ռուսաստան չուեցին, նոյնպէս եւ Բուլկարք, թէպէտ յանցանել ժամանակաց բազումք եւս վերադարձան դարձեալ յերկիր իւրեանց, զոր թողեալք էին, վասն չգտանելոյ 'ի Ռուսաստան բաւական ապրուստ հացի եւ զգեստու, եւ վասն անգործ մնալոյ նոցա անդր:

Ի սմին ամի եղեւ հրդեհ 'ի Գուլէ գաբուն Բերայի, այրեցաւ եւ աշտարակն մեծ՝ որ անդ է, եւ կոչի Ղալաթա գուլէսի, եւ յետ ամաց ինչ վերստին շինեցաւ չքնաղ քան զառաջինն:

## ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս որոշելոյ Հռովմէական Հայոց 'ի Հայոց եւ Մետրապօլտի նոցա եւ առաջնորդի:

**Ի**բրեւ սկզբնաւորութիւն եղեւ 'ի գործ դնելոյ զպայմանս դաշնադրութեան 'ի կողմանէ Օսմանեան տէրութեան, որպէս յիշատակեցաք 'ի վեր անդր. դեսպանք Գաղղիացւոց եւ Անգլիացւոց առաջարկեցին արքայի՝ խնդրելով զազատութիւն եւ զդարձ Հռովմէական Հայոց յաքսորանաց իւրեանց, եւ տալ նոցա որոշ պատրիարք եւ եկեղեցին՝ անկախ զպատրիարքէն Հայոց:

Ընկալեալ արքայի զխնդիր նոցուն՝ հրաման առաքեաց 'ի դուռն մեծի Եպարգոսին, յորմէ առաքեցան հրովարտակք յԱնատօլու եւ 'ի Բումէլի, ուր աքսորեալք էին Հռովմէական Հայք, որպէս զի վերադարձցին 'ի Կոստանդնուպօլիս 'ի տունս իւրեանց, եւ աղօթող լիցին վասն կենաց արքայի:

Բայց այ ու պայմանաւ, զի մի իշխեսցեն յայսմ հետէ երթալ յեկեղեցիս Լատինացւոց, այլ աղօթել յեկեղեցիս իւրեանց, որոց շինութեան հրաման եղեւ յարքայէ, զի ուր եւ իցեն բնակեալք, անդր շինեսցեն եկեղեցին իւրեանց:

Աստանօր արժան համարեցայ դնել 'ի կարգի պատմութեանս զպատճէն հրովարտակի վերադարձման Հռովմէական Հայոց, որպէս զի թէրութիւնքն՝ որք 'ի նմա, բարիոք ծանիցին 'ի մտառու ընթերցողաց:

“Գըտվէթ իւլնէվապ իլ միւթէշէրին, Քիրմասս նայիպի մէվլանա զիյտէ իլմէհու, թէվգըրի բէֆրի հիւմայուն վասըլ օտա տէօրթ եօլ աղգընտա քեային պալըգճըլար տէրունինտէ թէրգի Մինաս, վէ Օրթաքէօյտէ միւթէմէքին թէրգի Յուսէփ նամ զիմմիլէր, միւնաֆի թավրի ըայէթ հարաքէթէ ճիւրաթ իյլէտիքլէրի ինհա օլտուղունա մէպնի, պունտան ագտէմ սատր օլան էմրի շէրիֆիմլէ Քիրմասս նէֆի վէ իլճա օլունմուշլար իսէ տէ, մէսֆուրլէր օլտուգլարընա պինաէն, վէ ֆիմապատ թավրի ըայէթէ միւնաֆի հարաքէթտէ պուլունմամագ իւզրէ, մէրհամէթէն աֆ վէ իթլագէրի գըլընըպ, օլ պապտէ իսթթըլ հիւմայուն մէքեարըմ նումուն փատիշահանէմ մէրհամէթրիղ օլմաղլա, մանթուղ միւնիֆի իւզրէ

մէրսուսմէր աֆ վէ իթլագ օլունմալէրի ֆէրմանըմ օլմաղին, իմտի ֆիմապատ տայրէյի բայէթ վէ իսթիգամէթտէ սէպաթ էյլէմէլէրի շարթը իլէ, մէրսուսմէրին աֆ վէ իթլագլէրին խոսոսուսինէ միւսսատէյի սէնիյէյի շահանէմ գըլընտըղը:

“Սէն քի նայիպ միւմայիլէյհ սին, մալիւմին օլտուգտա, շարթի իթլագլէրինի կիւշի հիւշլէրինէ թէֆհիմ միւպատէրէթ էյլէմէք պապինտէ ֆէրմանի ալիշանըմ սատըր օլունմուշ տուր. պուլուրտում վոսուլ պուլտուգտա, պու պապտէ վէչհի մէշրուհ իւ գրէ շէրէֆեաֆթէյի սատըր օլան վաճիպ իլ իթթիպա վէ լազիմ իլ իմթիսալիմին մէգմուսի իթաաթ մաքրունի իլէ ամիլ օլասըն, շէօյլէ պիլէսին, ալամէթի շէրիֆիմէ իթիմատ գըլասըն:

“Թահրիրէն ֆի էվայիլ շէհէր ճամագիլ էվէլ, սէնէ խամսա, վէ արպային, վէ միսթիյն, վէ էլֆ”:

Զայս օրինակ գրեալ եւ ամենայն հրովարտակք, զորոց զբազումս ընթերցայ ես ինքն:

Իսկ գմայրապետաց աքսորելոց զհրովարտակն վերադարձման գրեալ էր վէգիրն ՚ի դիմաց իւրոց, որոյ գրութիւն կոչի Մէքթուպի սամի, զի մայրապետք ոչ թագաւորական հրովարտակաւ աքսորեցան, այլ պատրիարքական թէգքէրէյիւ, վասն որոյ եւ նոցա վերադարձման գրութեան՝ բաւական եղեւ հրամանագիր մեծի եպարգոսին կոչել զնոսա յաքսորանաց որ գրեաց օրինակ զայս:

“Շէրիաթ մասպ Մահալըճ նայիպի էֆէնտի զիյտէ իլմէհու, պատ էս սէլամ ինհա օլունուր քի, էրմէնի միլլէթինտէն մայրապետ թապիր օլունան գարըլարընտան՝ պունտան ագտէմ Տէրսասատէթտէ մուքիմ էրմէնի պատրիկի մարիֆէթի իլէ՝ օն պիր նէֆէրի Մահալըճ, վէ օթուզ նէֆէրի Պանտըրմայէ՝ պատրիարք մէրսուսմ ետլէրինէ միւրուր թէգքէրէլէրի իթասի իլէ տէֆ օլունմուշ իսէլէր տէ, էլհալէթիւ հագա՝ մէրսուսմէրին իսլախի նէֆա էյլէտի քլէրի պէյանի իլէ՝ ճէգայի կիւգէշտէլէրինի աֆի խոսոսուսի իստիտա օլունմուշ, վէ մէրհամէթէն օլ վէչհ իլէ միւսասատէ գըլընմըշ օլմաղըն, սալիֆ իւլ զիքը Մահալըճէ տէֆ օլունան օն պիր նէֆէր դարըլէրին միւրուր թէսկիրէլէրի իթասի իլէ՝ Տէրսասատէթէ ավտէթլէրի խոսոսոսունա իրայէթի ըուխսէթ:

“Վէ պու վէսիլէ իլէ զինհար սայիր մէմնու օլան քէսանտէն ֆէրտին սալը վէրիլմէմէսի խոսոսոսունա տըգգէթ էյլէմէք իչիւն

մէքթուպ թատրիը վէ իրսայլ օլունմուշ տուր, ինչալլահու թաալա վուսուկիւնտէ պէր վէչհի մուհարէր հարաքէթ վէ տիգգաթ միւպատէրէթ էլլէյէսին վէսսէլամ:

Այսու հրամանագրով եպարգոսին, դարձան մայրապետք յաքսորանաց իւրեանց:

Իբրեւ այս այսպէս եղեւ, եւ հետզհետէ սկսան հռովմէական Հայք վերադառնալ ՚ի Կոստանդնուպօլիս, եղեւ նոցա ժողով մեծ ՚ի Ղալաթիա ՚ի տան Գըլճեան Գրիգորի վասն ընտրութեան պատրիարքի իւրեանց:

Բայց էր ՚ի նոսա երկպառակութիւն, զի ոմանք՝ մանաւանդ Աբբայեանք զՆուրիճան Անտօն վարդապետն արժանաւոր դատէին լինել պատրիարք, (որ յառաջ քան զամս չորս ընտրեալ իսկ էր ՚ի Պէգճեան Յարութիւն ամիրայէ լինել փոխանորդ Հայոց, զոր պատմեցաք ՚ի վեր անդր):

Իսկ Գաղատացիք ամենեքին զառաջին կամաւոր յամառումն իւրեանց ՚ի գլուխ հանել կամեցեալք, զՄարուշ կոչեցեալ Գաղատացի Պօղոս վարդապետն կամէին. եւ վասն այսր զՄօնսինեօր եպիսկոպոսն Լատինացւոց եւ զմեծաւորս եկեղեցեաց նոցա ՚ի կողմն իւրեանց շահեցեալք, գրեցին զիր աղերսանաց առ պապն Հռովմայ, զի զՄարուշ ընտրեսցէ եւ ձեռնադրեսցէ պատրիարք, եւ մի զՆուրիճան եւ թէ՛ ժողովուրդք ամենեքին զՄարուշ խնդրէին, եւ թէ՛ Նուրիճանն կուսակից է Հայոց եւ ջատագով նոցին, եւ թշնամի եւս Հռովմէական աթոռոյն:

Այ ամենայն գրութիւնք հասին ՚ի ձեռս պապին, զոր ընթերցեալ, եւ վաղու եւս գիտելով զչարայոյզ մախանս Գաղատացւոց, որք վասն ընտրութեան Նուրիճանին՝ եղեն պատճառք այն ամենայն չարեաց, որք հասին ՚ի վերայ հռովմէական Հայ ժողովրդեան:

Ուստի անարժան դատելով զՄարուշ՝ ետ բերել զՆուրիճան, եւ իջեալ յեկեղեցի՝ արար հանդէս Մետրոպօլտաց եւ եպիսկոպոսաց, եւ մատուցեալ պատարագ, ձեռնադրեաց զկնի պատարագին զՆուրիճան Անտօն վարդապետն՝ Արհիեպիսկոպոս եւ Մետրապօլիտ հռովմէական Հայոց Կոստանդնուպօլիս, եւ առաքեաց ՚ի Կոստանդնուպօլիս:

Յետ քան ինչ աւուրց զալստեան սորա՝ արդ արարին դեսպանք ՚ի դուռն արքունի, զի եպիսկոպոսն հռովմէական Հայոց ե-

կեալ է, եւ խնդրեմք, զի կոչեալ զնա՝ ՚ի դուռն արքունի՝ կացուցես զնա պատրիարք հռովմէական Հայոց:

Եհարց արքայ, թէ այդ նուրիճան հարկատու եւ ծառայ է ինձ, եթէ ոչ:

Պատասխանի ետուն, եթէ հպատակ է Գերմանական տէրութեան:

Ասէ ցնոսա արքայ, նա՛ որ չէ ինձ հպատակ, զիա՞րդ կարէ լինել գլուխ հպատակաց իմոց, եթէ այդ այդ դեսպան իցէ, ասացէք ինձ. թէ ո՞րոյ տէրութեան դեսպան է, եւ ես ըստ արժանեաց պատուեցից զնա եւ ընկալեաց, որպէս պահանջէ պատիւն դեսպանութեան:

Իսկ եթէ դեսպան չէ, եւ իմուժս տէրութեան հպատակ չէ, եւ զիա՞րդ մարթի լինել դժա գլուխ եւ կառավար հպատակաց իմոց:

Եւ վասն զի օրինօք խօսեցաւ արքայ, ոչ կարացին դեսպանք դիմախօսել նմա: Ուստի հրամայեաց արքայ Հռովմէական Հայոց, զի ընտրեսցեն ինքեանք զմի ոք՝ ՚ի վարդապետաց իւրեանց՝ որ իցէ հպատակ Օսմանեան տէրութեանն, եւ ազդ արասցեն ՚ի դուռն արքունի:

Եւ ժողովեալ նոցա՝ ընտրեցին զՅակոբ վարդապետ Մանուէլեան ՚ի միաբանութենէ Վեննայի վանիցն, եւ ծանուցեալ ՚ի դուռն արքունի՝ կոչեցին զՅակոբ վարդապետ, եւ զգեցոյց եպարգոսն զխիլայ պատրիարքական իշխանութեան, եւ ետ նմա հրովարտակ, կոչելով զնա, ”Յակոբ փիսգոփոս Գաթուիկեան”: Բայց զպատուէրսն արքայի՝ եւ զարտօնութիւնս փիսգոփոսին Հռովմէական Հայոց՝ եւ զտարեկան տուրս նորա՝ եւ զիշխանութիւն նորա՝ անսխալ բացայայտել կամեցեալ, լաւ համարեցայ զնոյն Պէրաթն Տաճկական դնել աստ ՚ի կարգի պատմութեանս, զոր ես արքայ առաջնորդին Հռովմէական Հայոց օրինակ գայս:

### ՊԷՐԱԹ

Տէվլէթի Ալիէյի տայիմ իւլ գարար, վէ սալթանաթի սէնիէյի սէրմէտիյիւլ իսթիմլարըմըն ճէգիյէ կիււազար բայասընտան օլան Գաթուիքլէրին պաշկաճա փիսգոփոսլէրի օլմայարագ, գատիմտէն քէնտուլէրի Բուժ վէ էրմէնի բաթրիկլէրի՝ թէվապի թահթի նագարէթ լէրինտէն պուլունմուշլար իսէ տէ, Գաթուիքլէրին ուսուլի այինլէրի Բուժ վէ էրմէնի այինլէրինէ ույմամագ ճիհէթի իլէ թէ-

մամճէ իճրայի ային իտէմէյէրէք պիգարուր էֆրէնճ քիլիսալէրինէ ամէտ շուտ իլէ, այնիլէրինէ թէագուտի նիքեաճէ տայիր ումուրու խուսուսլարընը սայիրլէրինէ ըուէթ իթտիրէրէք, տուչարի սէֆալէթ ու մէշագգէթ օլտուգլարը պի թահգիյգ մալիւմի աշիքեար, վէ մէրսոււմլէր էօթէտէն պէրու գիյրի սահէյի փատիշահանէմտէ սըղընմը ըայայի տէվլէթի ալէմտէն օլմագ միւլապէսէսի իլէ՝ ֆիմապատ էֆրէնճ քիլիսալէրինէ կիթմէյուպ, քէնտիլէրինէ թախսիս գըլընան քիլիսալէրտէ իճրայի ային էթմէք իւզրէ, օ միսիլու սէֆալէթ ու միւշագգէթլէրինտէն թէլիսիսլէրիլէ, պիր գաթ տախի իսթիհալի ըիֆահ ու սայիշլէրի լագըմէյի գիմմէթի միւքտարի վիւրիւրիլէթ բէրվէրտիտէն իտուկի պէտիյհի վէ պէտիյտար օլմագէն նաշի, կէրէք Ասիթանէի սաստէթ ալիյէմտէ՝ վէ կէրէք քեաֆֆէի մէմալիքի մահրուսէմտէ քեային պիլ ճիւմլէ Գաթօլիք մէգճէպիւնտէն օլանլարճն փիսգոփոսլուգի շէրէֆեաֆթէի սուտուր օլան խաթթի հիւմայիւն շէվքէթ մագրունի բատիշահանէմ միւճէպիւնճէ, իշպու պին իքի եիւզ գըրգ ալթը սէնէսի մահի ընճէպի շէրիֆին իկիրմի պիրինճի կիւնիւնտէ՝ էպէնան ճէտտէն տէվլէթի Ալիյէմ ըայասընտան օլմագ իւզրէ, քէնտուլէրինին ինթիխապ ու իխթիեար իյլէտիքլէրի ըաֆիի թէվգիի ըէֆի իւշահանի խագանի գըտվէթի միւլիթար իւլ միլլէթ էլ մէսիհիյէ Յակոբ վէլէտի Մանուէլ ըահիպ խուլթումէթ ավագուպէհիւ պիլ խայրէ եիւզ էլլի պին ագճէ փէշքէշի օթուզ սէքիզ պին ագճէ մալի մուգաթայի տախի պէհէր սէնէ ճանիպի միրիյէ էտա էյլէմէք շարթի իլէ, իհասանի թէվճիհ իտիւպ, պու պէրաթի հիւմայիւն սաստէթ մագրունի վեքտիմ, վէ պուլյուրտում քի, պատէլ եէվմ մէրսում Յակոբ ըահիպի մէրսումլէրին պէօյիւք վէ քիւշիւկի իւզէրլէրինէ փիսգոփոս պիլիւպ՝ այինլէրինէ միւլաալիք ումուրլէրինտէն մէրսումուն սէօղիւնտէն թէճավուզ վէ ախէրտէն միւտախէլէ օլունմայա: Վէ ազլիւ նասպէ մուստահագ օլան ըահիպլէրի մէրսում այինլէրի իւզրէ ազլիտիւպ եէրլէրին գայրի ըահիպէ վէրտիքտէ, ախէրի միւտախէլէ էյլէմէյէ:

Վէ փիսգոփոսի մէրսումուն արզի օլմա որգճս, ազլիւ նասպլէրի թէվճիհ օլունմայա:

Վէ փիսգոփոսի մէրսումուն մարիֆէթ իւ իզնի եօզ իքէն՝ սայիր ըահիպլէր այինլէրինէ միւլաալիֆ նիքեաճ ճայիզ օլմայան քէֆէրէյէ նիքեաճ էյլէմէյլէր:

Վէ պիր գիմմինին ավրէթ պօշամալը վէ եախօտ ալմալը օլսա, արալէրինէ փիսգոփոս մէրսուսուն վէքիլլէրինտէն զայրի քիմէսնէ կիրմէյէ վէ գարըշմայա:

Վէ ագտի նիքեահ վէ Ֆըսիսի նիքեահ խուսուսլարընը, վէ իքի գիմմի պէյնլէրինտէ վուգու պուլան տավայի ըիզայի թարաֆէյն իլէ մէրսուս ըույէթ իտէրէք, տավա իտէնլէրին պէյնլէրինի իսլահ էյլէմէսինէ, վէ քիլիսատէ այինլէրի իւղրէ եէմին վէրմէսինէ, էհլի էօրֆ թայֆէսի թարաֆկնտան տախիլ ու թարրուզ ու թէճրիմ օլունմայա:

Վէ միլլէթի մէրսուսէտէն պիլա վարիզ միւրտ օլան ըահիպլէր վէ քէշիշէ ավրէթլէրին թէրէքլէրինի փիսգոփոս մէրսուս միլրի իշիւն ախզ ու դապղ էյլէտի քտէ, պէյթիւլմալ վէ գասսամ ատէմլէրի վէ սայիր էհիլ էօրֆ թայֆէսի թարաֆընտան միւսանիյէթ օլունմայուկ, վէ պունլարըն վէ կէրէք ավրէթլէրին վէ Գաթուլիք օլան սայիր գիմմիլէրին այինլէրի իւղրէ քիլիսալէրի ֆուգարասընա վէ փիսգոփոս մէրսուսէ հէր նէ վասիյէթ իտէլէրսէ, մագպուլ օլուկ, չէր իլէ իսթիմա օլունա:

Վէ փիսգոփոսի մէրսուս թարաֆընտան մալի մուգաթասը վէ թասասատիւք ճէմի իշիւն թային օլունան ըահիպլէրէ միւրուր վէ ուպուր էյլէտիքլէրի մահալլէրտէ քիմէսնէ թարաֆընտան միւսանիյէթ վէ միւտախէլէ իթտիրիլմէյէ:

Վէ փիսգոփոս օլանըն ասասընա՝ վէ սիւվար օլտուզի հայվանէ՝ վէ ատէմլէրէ՝ վէ ճամէ՝ վէ քիսվէլէրինէ՝ վէ մէրսուսուն քէնտի մահաշի հասըլ օլան պաղլարի մահսուլինտէն, վէ թասասատիւք նամլէ վէրէկէլտիքլէրի շիրա, վէ պալ, վէ եաղ, վէ սայիր էշեալէրի, խանէսինէ նագլ էյլէմէլէրինէ միւտախէլէ օլունմայա:

Վէ փիսգոփոսի մէրսուսուն կէնտիւսինտէն լիէճլի մասլահաթէ կէլիւկ կիտէն վէ սայիր խըզմէթինտէ պուլունան օն նէֆէր ատէմլէրինտէն ճէգիյէ վէ ավարըզ վէ թէքեալիֆ միւթալէպէ գըրընմայա:

Վէ պագի էշիրանըն գուհուր իտէն տավալէրի ախէր մահալլէրտէ իսթիմա օլունմայուկ, արզ օտասընտա կէօրիւլէ:

Վէ քիլիսա ֆուգարասընա վագֆ օլան պաղ ու պահճէ վէ սայիր էմլաքլէր իլէ՝ քիլիսայէ միւթաալլիք էշեա էմսալի միսիլլու, փիսգոփոս զապթ վէ թասարրուֆ իթտիրիլիւկ, ախէրտէն միւտախէլէ օլունմայա:

Վէ պունըսըրըն ըահիպլէրինտէն փիսգոփոսի մէրսուժ մարիֆէթի իլէ մէն օլունա:

Վէ ալինլէրին ումուրու խուսուսլէրինէ Րուժ վէ էրմէնի պաթրիքլէրի վէ թէվապիլէրի թարաֆընտան վէ ճանիպիլախէրտէն մին էլ վիճուհ քիմէսնէ տախիլ վէ թաարուզ գըլմայա:

Շէօյլէ պիլէլէր, ալամէթի շէրիֆէ իթիմատ գըլալէր:

Հարէրէ հիւ ֆիյ էվմ իլ հատի վէ աշրիյն մին շէհրի ըէճէպ իւֆէրտ: Սէնէ սիթթէ վէ արպային վէ միէթիյն վէ էլֆ:

Յակոբ Չէլէպի Տիւզեան թարգմանեաց գայս պէրաթ 'ի լեզու Հայերէն աշխարհաբառ, առ 'ի գիւրութիւն վերածնողաց, գոր արժան համարիմ գնել աստանօր:

“Տէրութեան հարկատու Հռովմէական Հայ եղողներուն փիսկոպոսները՝ Յունաց եւ Հայոց պատրիարքներուն հրամանին տակը գտնուելով առաջուց, Հռովմէական Հայոց ծէսը՝ Յունաց եւ Հայոց ծէսին չի յարմարելուն համար, իրենց ծէսերնին չէին կրնար կատարել:

“Անոր համար ահամայ Յուէնկի եկեղեցի կերթային, իրենց ծէսը եւ պսակնին ուրիշներուն կատարել կուտային, եւ ասով շատ խեղճութիւն եւ նեղութիւն կը քաշէին, ինչպէս որ ամենուն յայտնի է:

“Բայց որովհետեւ այս Հռովմէական Հայք առաջուցմէ պէրի իմ տէրութեանս հովանաւորութեան տակը գտնուելով եւ հարկատու ըլլալով, Յուէնկի եկեղեցի չերթալու համար, եւ իրենց յատկացեալ եկեղեցիին մէջը ծէսերնին կատարելու համար, եւ առաջի քաշած նեղութենէն եւ խեղճութենէն ազատելու համար, եւ ամ տէրութեանս արդարութեանը կէօրէ ասոնց հանգստութիւն տալու համար, հազար երկու հարիւր քառասունը վեց սէնէին՝ ըէճէպի քսանը հինգին՝ իրենց հաւնած եւ ընտրած Մանուէլեան Յակոբ վարդապետը փիսկոպոս դրինք բոլոր Հռովմէական Հայ ըսուածներուն վրայ, թէ իմ թագաւորանիստ քաղաքիս մէջ գտնուածներն ըլլան, եւ թէ ուրիշ իմ իշխած տեղերս գտնուածներն ըլլան հարիւր յիսուն հազար ստակ առաջուց ընծայ տան իմ գանձիս, եւ երեք միլիոն երեսունը ութը հազար ստակ տարեկան տուրք տան: Եւ այս պայմանաւր այս պէրաթը տուի եւ հրամայեցի, որ ասկէց ետեւ Յակոբ վարդապետը Հռովմական Հայոց



վրայ փրսկոպոս ըսուի, եւ ծէսէրուն մէջը անոր խօսքէն դուրս  
չելլեն Հռովմէական Հայերն, եւ ուրիշէն կախում չունենան:

“Եւ իրենց սովորութեանը կէօրէ իշխանութենէ Հանելու եւ  
իշխանութիւն տալու արժանի եղող վարդապետները եթէ փրսկո-  
պոսը առաջնորդութենէն փոխելու ըլլայնէ, մարդ չը խառնուի.  
փրսկոպոսին արգը չըլլայ նէ, վիճակներուն փոփոխութիւն չըլ-  
լայ:

“Եւ այն չգիտնալով՝ ուրիշ վարդապետները իրենց իրենց կա-  
նոններուն դէմ ուրիշ քիւֆէրայի այսինքն՝ (Հայհոյիչ ազգի) հետ  
պսակ չընեն:

“Եւ թէ հարկատու կին մը փախչի, կամ մէկը իր կինը թողու,  
կամ մէկը կին մը առնէ նէ, այն փրսկոպոսին փոխանորդներէն  
պաշխա մէկը մէջ չի մտնայ եւ չի խառնուի:

“Եւ պսակի եւ թողուելու գործերուն եւ երկու հպատակի մէջ  
եղած դատաստանը՝ յերկու կողմանց ուզելովը” այն փրսկոպոս-  
ները տեսնեն եւ կատարեն:

“Եւ եկեղեցոց մէջ երգում ընելու համար իրենց սովորու-  
թեանը կէօրէ զապիթի կողմանէ խառնուող եւ վնասող չըլլայ:

“Եւ Հռովմէական Հայոց ալ ժառանգ չունեցող մեռնող վար-  
դապետներուն եւ մարապետ կնիկներուն կողոպուտները, այն  
փրսկոպոսը տարեկան տուրքին համար առնէ, եւ պէյթիմալի եւ  
գասամի կողմանէ մարդ չի խառնուի, եւ ուրիշ զապիթի կողմանէ  
արգելք չըլլալ:

“Եւ վարդապետներէն կամ մարապետներէն կամ Հռովմէա-  
կան Հայ եղող ժողովուրդներէն՝ իրենց ծէսերնուն կէօրէ եկեղե-  
ցիին աղքատներուն համար եւ յիշեալ փրսկոպոսին համար ինչ  
որ կտակ ընէ նէ, ընդունելի ըլլայ, եւ դատաստանաւ իմացուի:  
Եւ յիշեալ փրսկոպոսին կողմանէ եկամուտ ժողուելու համար թա-  
յին եղած վարդապետներն ուր երթան նէ՝ մարդ մը չարգելէ:

“Եւ փրսկոպոսին գաւազանին եւ հեծած ձիին՝ եւ իր մարդո-  
ցը՝ եւ անոնց հագուստներուն՝ եւ անոնց սեփական եղած պաղե-  
րուն պտուղներուն, եւ պտղի ըսուած տուրքերուն, որ է շիրա,  
մեղր, իւղ, եւ այլ բաներ, փրսկոպոսին տունը տանելու համար  
մարդ բան չըսէ:

“Եւ այն փրսկոպոսն իրմէն մասլահաթի համար եկող եւ զնա-  
ցող եւ ուրիշ գործին գտնուող տասը մարդէ խարած եւ տուրք  
չուզուի:

“Եւ երբեմն անառակութեան համար ըլլալու դատաստանը ուրիշ տեղեր չըլլայ, արդ օտասին տեսնուի:

“Եւ եկեղեցիին աղքատներուն վախըՔ եղած պաղ ու պաղճա եւ ուրիշ ապրանքի պէս բաներ, եկեղեցիին յատկացեալ, փիսկոպոսին ձեռ մնալու ըլլայ նէ, չի քննուի:

“Եւ վարդապետները անոր հրամանը չըլլայ նէ, մահալլէները պտըտելով խռովութիւն հանելու ըլլան նէ, փիսկոպոսը իր իշխանութեամբը արգելէ:

“Եւ ասոնց գործերուն վրայ՝ Յուաց եւ Հայոց պատրիարքները՝ եւ անոնց կողմնակիցները՝ եւ ուրիշ կողմանէ ով որ ըլլայ, հիչ մէկ պատճառաւ չի խառնուի:

“Ահա այս է իմ հրամանս, զոր ամեն մարդ ընդունի պիտի”:

Արտօնութիւնք եւ իշխանութիւնք առաջնորդին Հռովմէական Հայոց ՚ի պէրաթի յայսմիկ տեսանին, բայց սոքա սակաւք ինչ են, եթէ բաղդատեսցես ընդ պէրաթս պատրիարքաց Հայոց եւ Յունաց:

Ահաւասիկ պէրաթ Պատրիարքին Հայոց, յորոց երկու օրինակք գտանին ՚ի ձեռս մեր, մին տուեալ Յովհաննու պատրիարքին, ՚ի թուին Տաճկաց ԿԱ եւ միւսն տուեալ Ստեփան պատրիարքին ՚ի թուին Տաճկաց ԿԿԿ:

Նշանի շէրիֆի ալիշան թէվգիի ընթիւ հիւմայիւն օլտըրքի:

Իշ պու տարէնտի պէրաթի ալիշան գըտվէթի միւխթար էլ միլլէթի մէսիհիէ Ստեփան նամ ըհիպ խաթմէթի ավագըպէհու պիլիսայր, տիվանի հիւմաեիւնըմա մէհմուր արգի հալ իտուպ, Իսթանապուլ վէ թէվպպիի էրմէնիեանը բաթրիգի օլան Կարապետ նամ բաթրիգ ալիլ էլ միգաճ օլուպ ումուրի բաթրիգլիգի իտարէ վէ ըուեէթէ գուտրէթի օլմատըզընտան քէնտու հիւսնի ըրգա վէ իսթիեարը իլէ բաթրիգլըզընտան ավֆընը վէ ազլընը պա արգի հալ ըհճա վէ նիեազ իթմէկիյն իսթիտասընա միւսասատէի Ալիեէ էրգան գըլընարագ եէրինէ ախէրի ինթիխապ օլընմասը իրատէ օլընտըղընա պինայէն, էրմէնի միլլէթինտէն լագըմ կէլէնլէր բաթրիգիսանէտէ պիթ թէճէմմիւ մէրսումը ինթիխապ պիլլէ իւգէրլէրինէ բաթրիգ նասպ օլընմասընը թագտիմ յիլէտիքլէրի մահգէր կէօնա արգ հալլէրի իլէ նիեազ վէ իսթիտա իլլէտիքլէրի մահգէր

կէօնա արդ հալլէրի իլէ նիեազ վէ իսթիտա յիլէտիքլէրի էճիլտէն ըահիպի մէրսուժ թէրաֆի սալթանաթի սէնիեէմտէն իւզէրլէրինէ բաթրիգ նասպ վէ թաերն օլընմաղլէ միւրի բէշքէշիւնի թէսլիմի խազինէի ամիրէն իյլէմէք շարթի իլէ բաթրիգլիկի մէգքիւր սէլէֆի Կարապետ ըահիպին ըէֆինտէն քէնտուլէ թէվճիյհ,վէ եէտինէ շուրութի գատիմէսի տէրճի իլէ պէրաթի ալիշանըմ վիւրլիմէք պապընտա իսթիտայի ինսեթ իյլէտիկի էճիլտէն խազինէի ամիրէմտէն մասֆուզ փիսգոփոս մուգաթասը տէֆթէրլէրինէ նազար օլընտըգտա Իսթանպուլ վէ բէրաքէնտէի Անաթօլը վէ Րուճէլի վէ թէվապիի էրմէնի բաթրիգ լիզի եիւզ սէքսան թօգուզ ազէէ մագթու իլէ մէսֆուր Կարապետ ըահիպին պալասը խաթթը հիւմսեիւնի շէվքէթմագրուըմ իլէ մասնուն պէրաթի ալիշանըմլա իւզէրինտէ օլտըղը մուգայյէտ օլմագլէ մէհմուր արգհալի միւճիպինճէ միւրի բէշքէշիւնի թէսլիմի խազինէի ամիրէմ իյլէմէք իւզրէ պէր վէշհի միւթատ պէրաթը իթա օլընմագ պապընտա սատըր օլան ֆէրմանի ալիշանըմ միւճիպինճէ ատէթի բէշքէշի օլան մէպլազը մէգպուր եիւզպին ազէշի պէր վէշհի նագտ թէպիմի խազինէի ամիրէմ իյլէտիկինէ սուրէթի ըուզնմաշէի հիւմսեիւնըմ վիւրլիմէկիյն պին իքի եիւզ գըրգ եէտի սէնէսի ըէպիիւլ ախըրինին եիրմի սէքիզինճի կիւնիւնտէն պու պէրաթի հիւմսեիւնի ինսեթթմագրուընը վերտիմ, վէ պուլըրտամ քի՝ մէսֆուր Ստեփան ըահիպ ըէֆ օլընան մէրսուժ եէրինէ Իսթանպուլ վէ բէրաքէնտէի Րուճէլի վէ Անաթօլի վէ թէվապիի էրմէնի բաթրիգլիկինէ պէր վէշհի թէէպիտ միւթասարըֆ օլուպ բաթրիգլիկինէ թապի եէրլէրտէ մուրախխասալար վէ բաբասլար վէ սայիր ուլուսը վէ կէճիսի ըահիպի մէրսուժը իւզէրլէրինէ բաթրիգ պիլուպ բաթրիգլիկինէ միւթալլիւզ ումուրլարընտա ըահիպի մէրսուժէ միւրաճաաթ իտուպ թօղըր սէօգիւնտէն թէճապիւզ իյլէմէյլէր, վէ բաթրիգլիկինէ թապի եէրլէրտէ ազլ ու նասպէ միւթասհագ օլան մուրախխասալարը վէ բաբասլարը վէ գարապաշլարը ըահիպի մէրսուժ անիւլէրի իւզրէ ազլ ու նասպ իյլէտիքտէ ախէրտէն քիմէսնէ միւթալէֆէթ իյլէմէյուպ գարըշմայա. վէ բաթրիգի մէրսուժըն մէհմուր արզը օլմատըգճա դատը արզը վէ արզըհալ իլէ պիր ֆէրտէ միւրախխասալըգ վիւրլիմէյուպ վէ սայիր վաղըֆլարընա միւթաալլիւզ օլան խոսոսալարը ըահիպի մէրսուժըն մարիֆէթի իլէ օլուպ ախէրտէն քիմէսնէ միւթաալէլէ իյլէմէյուպ վէ պիւլա վարիս միւրտ օլան բաբաս վէ քէշիշ վէ միւրախխասա վէ գարա-

պաշլար վէ մարապետ թապիր օլընուր քէշիշէ ավրէթլէրին միւթատի գատիմ իւզրէ բաթրիգէ այիտ մէթրուքեաթլէրին ըահիպ մէրսուժ վէ եախուտ թէրաֆընտան վէքիլլէրի միրի իչուն ախզ վէ գապզ իյլէտիքէ խիլաֆի միւթատի գատիմ պէյթ իւլ մալ վէ գասսամ առէմլէրի միւտախէլէ իյլէմէյէլէր. վէ գատիմտէն գապթ ու թէսարրիւ ֆլարընտա օլան քիլիսա վէ մանասթըրլարընա վէ գիյարէթ կեահլարընա վէ քէնտուլէրինէ վէ պու անէ տէկին աեհնի աթըլլէրին իճրա իյլէտիքլէրինէ էհլի էօրֆ թայիֆէսի թէրաֆլարընտան վէ ախէրտէն պի վէչհ միւտախէլէ օլընմայուպ վէ բաթրիկի մէրսումուն մարիֆէթի վէ իզնի եօզ իքեն աեհիլէրինէ միւտախիֆ պազը գուրա բաբասլարը նիքեահ ճայիզ օլմայան գըմմիյէ նիքեահ իյլէմէյէլէր. վէ պիր գըմմիյէ ավրէթ էրինտէն գաչսա, վէ եա պիր գըմմի ավրէթ պօշամալը վէ եախուտ ալմալը օլսա արալարընա ըահիպի մէրսուժ վէ եախուտ վէքիլլէրինտէն գայրի քիմէսնէ կիրմէյէ վէ գարըշմայա, վէ միւրտ օլան էրմէնի միւրախխասալարը վէ բաբասլարը վէ քէշիշլէրի վէ սայիր էրմէնի թայիֆէսի քէնտու աեհիլէրի իւզրէ քիլիսալարը Ֆուգարասընա վէ բաթրիկէ հէր նէ վասիեթ իտէրլէրսէ մագպուլ օլուպ էրմէնի շահիտլէրի իլէ շէր իլէ իսթիմա օլընա վէ աեհիլէրինէ միւտախիֆ վազ ու հարաքէթ իտէն էրմէնի միւրախխասալարը վէ բաբաս վէ քէշիշլէրինի բաթրիգի մէրգում աեհիլէրի իւզրէ թէտիպ վէ սաչլարըն թըրաշ վէ քէնտուլէրին բաբաս վէ գարապաշլըգտան ազլ վէ քէլիսլէրին ախէրէ վիրտիքտէ միւտախէլէ իյլէմէյէլէր. վէ բաթրիկիգէ թապի եէրլէրտէ գատիմի քէնտու այինլէրի իւզրէ քիլիսալէրինէ միւթաալիգ պազ վէ պաղչէ վէ չիֆթլիք վէ չայիր վէ մանասթըրլարընա վէ պիւեուլթ վէ տէքեաքին վէ էշճարի միւմիւրէ վէ գայրի միւսմիւրէլէրինէ վէ սայիր պուներն էմսալի քէնիսայէ վագֆ օլան էշեա վէ թավարլարը միւթատի գատիմ վէ օլա կէլտիկի իւզրէ իշպու պէրաթի ալիշանըմլա էրմէնի բաթրիկի օլան մէսֆուր Ստեփան ըահիպ թէրաֆընտան գապթ վէ ըապթ իթտիրիլուպ ախէրտէն միւտախէլէ իյլէմէյէլէր, վէ քիլիսա վէ մանասթըրլարընա վէքիլ օլուպ տիւշէն բաթրիկիք ըուսումունտան էքլ ու պէլզ իտէն բաբասլարըն վէ քէշիշլէրին բաթրիկի մէրսուժ մուհասէպլէրին կէօրտիւքտէ խիլաֆի միւթատի գատիմ ախէրտէն միւտախէլէ օլընմայուպ վէ պազը գիյգուտէթ քիմէսնէլէր շու բաբասը ազլ վէ քիլիսասընը շու բաբասս վէր տէյու ալիլէրինէ միւտախիֆ էյլէմէյէլէր. վէ էրմէնիեան թայիֆէ

սինտէն պազըլարը քիլիսա վէ մանասթըրլարը եօղ ի քէն մահալլէ պէ մահալլէ կէզուպ խիլաֆի ալիսի սահիհ էրմէնի ըաեալէրինի իֆսատ իտէն մէսֆուրլէր բաթրիկի մէրսուլ մարիֆէթի իլէ վէ ֆէրմանի շէրիֆմլէ ախզ վէ հագլարընտա լազըմ կէլան թէտիպլէրի իճրա օլընա, վէ բաթրիկի մէրսուլմըն մուրուր վէ ուպուր յիլէտիկի մահալլէրտէ պիստիկի պարկիլլէրինէ վէ եանընտա օլան եասագճըսընա վէ ատէմլէրինէ վէ թէպտիլի ճամէ վէ քիսվէ իյլէմէյլէր. վէ ըահիպի մէսֆուրըն քէնտու մայիշէթի իչուն հասըլ օլան պաղլէրի մահսուլուլուտան, վէ թէսատտիւզ նմաընա զըմմի թայիֆէսինին վիրէ կէլտիքլէրի շէյլէրի վէ պալ վէ եազ վէ սայիր էշեալէրին խանէսինէ նագլէ իսկէլէլէրտէ վէ գափուլարտա էմինլէր վէ եասագճըլարտան պիր ֆէրտ խիլաֆի միւթատի գատիմ ըէնճիտէ, վէ իզնի շէրիլէ ալը գօնըլմագ լազըմ կէլտիքտէ էրմէնի բաբասլարըն վէ քէշիշլէրին բաթրիկի մէրսուլ մարիֆէթի իլէ ալը գօնըլուպ, վէ պիր զըմմիինին քէնտու ըըզասը եօղ իքէն պիզ սանա ճէպրէն եասագճը օլուրըզ տէյու վէ սայիր պէհանէլէր իլէ ասքէրի վէ սայիրլէրի թէրաֆլարընտան ըէնճիտէ օլընմայուպ, վէ սէնէվի մալի մագթուլին պէհէր սէնէ թէսլիմի խագինէի ամիրէմ իյլէտիքճէ բաթրիկիլիլինէ վէչհի մէշըուհ իւզըէ թէպիյտէն միւթէսարըֆ օլուպ պիր վէչհ իլէ գապթ ու ըապթընա թէրաֆընտան թէսատտիւզ ճէմի իչուն թայեին իյլէտիկի ըահիպլէր մուրուր վէ ուպուր իյլէտիկի մահալլէրտէն էհլի էօրֆ թայիֆէսի թէրաֆլարընտան միւտախէլէ իթտիրիլմէյուպ, վէ ալիլէրին միւխալիֆ նիքեահ իտեն զըմմիլէր քիլիսալէրինէ կիրմէք ալիլէրինէ միւխալիֆ օլմաղլէ միւրտ օլտըզլարընա գուզաթ վէ նիւվապ վէ սայիր գապիթլէր սիզ գալտըրըն տէյու բաբասլարա ճէվը ուէզիեէթ իթտիրիլմէյուպ վէ բաթրիկի մէսֆուր մատամ քի միւճիպի պէրաթ իւզըէ հարէքէթ իյլէյէ վէ բաթրիկիլիզի մին պաահ ախէրէ վիրիլմէմէք իւզըէ մահալլինէ գայտ վէ շերհ վիրիլմկլէ խիլաֆի շուրութի պէրաթի ալիշան ախէրտէն միւտախէլէ վէ մուլարագա իյլէմէյլէլէր տէյու շուրութի միւսարըրահ օլուպ, վէ մէսֆուր Ստեփան ըահիպ էմսալընա գեասէն քէնտուսի վէ գափուլ քէթիլիւտասը իլէ մաէն օն պէշ նէֆէր ատէմլէրինտէն ճիզիեէ վէ ավարիզ վէ թէքեալիֆի էօրֆիեէ միւթալէպէ օլընմայուպ վէ մէմալիքի մահրուսէմտէ վազը քիլիսա վէ մանասթըրլարընըն տէրուլլէրինտէ սաքին բաբաս վէ գարապաշլարընըն թէֆթիշ վէ հիսապլարը բաթրիկի մէսֆուր վէ վէքիլլէրի մարիֆէթի

վէ հիսապլարը բաթրիկի մէսֆոնը վէ վէքիլլէրի մարիֆէթի իլէ կէօրիլլիլայ վէ գատիմի էրմէնանէ մախսուս քիլիսա վէ մանասթըրլարը բաշա վէ միւթէսէլլիմ վէ վոյվօտա վէ գատը արգլէրի իլէ վէ միւրասէլէ իլէ ինէրէ վէրիլմէյոու վէ ախէրին տէյնի իչոուն քիլիսա վէ մանասթըրլարընըն էշեասընա թէարրիլզ օլընմայուայ, վէ ըէհն օլմագ իւզրէ ախզ վէ գապզ իթտիլլիլմէյէ, վէ պիր թագրիլ իլէ ախզ օլընմըշ իսէ՝ մարիֆէթի շէր իլէ կէրու մահալլէրինէ ըէտտ վէ թէսլիմ օլընուայ, վէ վէ այինի գատիմէլլէրի իւզրէ պիր գըմմի ալրէթ պօշամագ, վէ ալրէթ իւզէրինէ ալրէթ ալմագ գիեատէ այինլէրինէ մուղայիր օլմաղին օ մագուլլէլէրէ ըուխսէթ վիրիլմէյոու թէտիլլիլ վէ կուշմալ օլընուայ վէ բաթրիկի մէրսուլմըն էէտինտէ օլան ասասընա միւտախէլէ իթտիլլիլմէյոու վէ միրի մագուլթի ճէմի իչոուն մուրուր վէ ուպուր իտէն գարապաշլարընըն մուրուր վէ ուպուր իյլլտիքլէրի մահալլէրտէ էհսէն վէչհ իլէ կէշմէք իչոուն իւզէրլէրինտէն օլան ալաթլէրինէ վէ թավարլէրինէ էհլի էօրֆ թէրաֆլարընտան միւտախէլէ օլընմայուայ վէ քէնտուլլէրէ մախսուս քիլիսայէ միւթաալիգ էշեալէրինտէն գափուլարտա վէ իսկէլլէրտէ կէօմրիլկ վէ պաճ միւթալէպէ օլընմայուայ, վէ պաղը էշիտտանըն գուհուր իտէն տավալարը ախէր մահալլէրտէ իսթիմա օլընմայուայ տիվանի հիւմայունըմտա կէօրիլլիլմէք իւզրէ Ասիթանէի սաստէթիմէ հէվալէ օլընա. վէ իսթանպուլ վէ թէվապիի էրմէնիանը բաթրիկի օլան մէսֆոնը Ստեփան գափուլ քէթիլլիլտասը իլէ մահն օն պէշ նէֆէր ատէմլէրինտէն ճիգիյէ վէ ալարիգ վէ թէքեալիֆի էօֆիյէ թալէպ օլընմայուայ, վէ շէրի շէրիֆէ միւթաալիգ լազըմ կէլան տավալէրի տիվանի հիւմայունըմտա կէօրիլլիլկ շուրուլթ վէ գուլուտընա մուղայիր քիմէսնէ թէրաֆընտան վէչհէն մին էլ վիճուհ վէ սէպէպէն մին էլ էսպապ տախլ վէ թէարրիլզ օլընմահա. շէօյլէ պիլլէլէր ալեամէթի շէրիֆմէ իթիմատ գըլալար:

Հուրիրէ Փիլ էէվմէլ թասի մին շէհրի ճէմատիլլ իլլա, սէնէ սէպ վէ էրպաին վէ մէլթիյն վէ էլֆ:

ԿԵՎ Ճէմատիլլ էվվէլ Գ :

**ՊԵՐԱԹ**

Իսթանպուլ վէ թէվապիի էրմէնի պաթրիքլիգիինէ պուստէն ագտէմ միւթէսարըրֆ օլան Ագուայ նամ ըահիպ տիվանի հիւմա-

յունիմէ մէմհուրէն արգըհալ իտիւպ պաթրիքլիղի մէգքիւրէ երմէ տէօրթ սէնէյի գարիպ խաթթը հիւմայուն շէվքէթ մագրուն իլէ միււանվէն պա պէրաթի ալիշան պէրվէհհի թէպիտ միւթէսարրիֆ օլուպ՝ սատագաթ վէ իսթիգամէթ իւզրէ խըզմէթինտէ գուսուրի օլմայուպ՝ անճագ պու էսնալէրտէ իսթիյարլըք հասէպիլլէ իլլէթէ միւպթէլա, վէ վիճուտինէ գաֆ վէ խասթէլիք արիգ օլմագին գըյամ վէ գիւուտէ, վէ իւմուրի պաթրիքլիղի ըույէթինի՝ ատէմի իգթիտարինտէն նաշի պաթրիքլիղի մէգքիւրի գապթ իւրապթ, վէ ըիանըն ալինլէրի իճրայէ գատըր միւթէմէտ վէ միււճէրրէպիւլ աթվար պիր ըահիպի պաթրինասպ օլունմասի մուգթթագի օլտուղինտէն՝ ըիւհպանլէրի միւթարլէրինտէն կէնտի չէրաղի օլուպ, էհլի ըրգ վէ միււճէրրէպիւլ աթվար, վէ պիւճիւմլէ միլլէթլէրի կէնտուսինտէն խօշնուտ վէ ըագի օլուպ, նիշէ գէմանտէն պէրու Գիւտսի շէրիֆ պաթրիքլէրի վէքիլի օլան՝ իշպու տարէնտիլի ֆէրմանի հիւմայուն գըտվէթիւ միւթար միլլէթ իւլ մէսիհիյէ Գրիգոր նամ ըահիպ իսթիմէթ ավագըպիհու պիլ խայրէ պաթրիքլիղի մէգքիւրի ֆէրագաթ վէ գասրիյէն իլլէտիւկինտէ ալթը ճէմաաթ թապիր օլունուր էրմէնի ըիայասինին ըիւհպան վէ փափաս, վէ ճէմաաթ, պաշի, վէ իսմիւ մէքյանլէրի մայուն սանաֆ իսթիյարլէրինին ըիգա վէ իթթիֆագլէրի իլէ ճիւմլէսինին մինասիպ կէօրիւպ, մահալլիւ միւթահագ տըր տէյու գապուլ իլլէտիքլէրինէ պինաէն, տէվամի էօմրիւ տէվլէթիմ էտիյէսինէ միւտապլէմէթ պիրլէ՝ տիլէտիկի մահալտէ սաքին վէ իգամէթ իլլէտիկինէ միւմանիաթ օլունմամագ շարթի իլէ, պաթրիքլիղի մէգքիւրի հիւնիւ ըիգա վէ իսթիյարիլլէ մէգքիւր Գրիգոր ըահիպ՝ իսթիմէթ ավագըպիհու պիլխայրէ ֆէրագաթ վէ գասրիյէտ վէ եէտինտէ օլան պէրաթի ալիշանի թէսլիմ իթմէկին՝ իսթի յարլըզընէ մէրհամէթէն՝ պաթրիքլիղի մէգքիւր վէ գասրիյէտինտէն ատէթի փէշքէշին թէմլիմի խագինէի ամիրէմ իլլէմէք շարթի իլէ, պէրվէհհի թէպիտ ըահիպի մէսֆուրէ թէվճիհ, վէ շուրուրթի գատիմէսի իլէ եէտինէ պէրաթի շէրիֆի ալիշանըմ իհսան օլունմագ պապընտա, ֆուզ օլան փիսգոփոս միւգաթասի տէֆթէրլէրինէ նագար օլունտուգտէ՝ վէհհի մէշրուհ իւզրէ իսթանպօլ վէ փէրաքէնտէի Բումէլի վէ Անատօլի վէ թէվապիի էրմէնիյանի պաթրիքլիղի հիյնի թէվճիհինտէ՝ եիւզ պին ագճէ միրի փէշքէշին թէսլիմի խագինէի ամիրէմ իլլէմէք իւզրէ՝ սէնէվի եիւզ գըրգ պին ագճէ միւգաթաս իլէ Գէորգ նամ ըահիպ գասրիյէտինտէն մէսֆուր Ա-

ղուսակ ըրահիպէ պէրվէճճի թէպիտ թէվճիհ, վէ պէրաթի իւնվանընա խաթթը հիւմայուն շէվքէթմագրուն քէշիտէ գըլընուկ, հալա իւգէրինտէ օլտուղու տէրքէնար օլունմաղին, շէրէֆեաֆթէի սուտուր օլան էմրի հիւմայունու շէվքէթ մագրունիմ միւճիպինճէ՝ պաթրիքլիղի մէգքիւր՝ մէսֆուրուն գասրիյէտինտէն միրի հիւմայուն փէշքէշին թէսմիլի խագինէի ամիրէմ իյլէմէք շարթը իլէ պէրվէճճի թէպիտ թէվճիհ, վէ շուրութի գատիմէսի իլէ պէրաթ իթա օլունմագ պապընտա լագըմ կէլէն մէպլաղի մէգպուր եիւգ պին ագճէի պէրվէճճի նագա թէսլիմի խագինէի ամիրէմ իյլէտիկինտէ սուրէթի ըուգնամէշէի հիւմայունում վէրիլմէրնին \\\N սէնէսի գիլգատէնին եիրմիպէշինճի կիւնիւնտէ գասրիյէտինտէն պէրվէճճի թէպիտ թէվճիհ իտիւկ, իշպու պէրաթի ալիշան մատալէթ դայաթի վէրտիմ. վէ պուլուրտում քի մէսքուր Գրիգոր ըրահիպ խիւթիւմէթ ավագըպիհու կիլիսայըր գիքը օլունան իսթանպօլ վէ փէրաքէնտէի Րումէլի վէ Անատօլի վէ թէվապիտէ սաքին մէրխասալէր վէ փափասլէր վէ սայիր էրմէնիան թայֆէսի իւգէրլէրինէ գատիմտէն օլան կէլէն ատէթ վէ գանուն վէ այինլէրի իւգրէ պաթրիք օլուկ, պաթրիքլիղիինէ տախիլ եէրլէրտէ մէրխասալէր վէ փափասլէր վէ սայիր էրմէնիան թայֆէսինին ուլուսի վէ քիւշիւկիւ մէսֆուրի իւգէրլէրինէ պաթրիք պիլիւկ, պաթրիքլիղիինէ միւթաալիգ այինլէրի միւճէպինճէ տիւշէն ումուրլէրինտէ ըրահիպի մէսֆուրէ միւրաճաթ իտիւկ՝ տօղլու սէօգիւնտէն թէճավուգ իյլէմէյէլէր. վէ պաթրիքլիղիինէ տախիլ եէրլէրտէ ազլ իւ նասպէ միւթահագգ օլան մէրխասալէրի վէ գարապաշլէրի վէ փափասլէրի՝ ըրահիպի մէսֆուր այինլէրի իւգրէ ազլ իւ նասպ իյլէտիքտէ, ախէրտէն քիմէսնէ միւմանիաթ իյլէմէյիւկ գարըճմայալէր, վէ պաթրիքի մէսֆուրուն մէճմուր արգը օլմատըգճա գագի արլէրի վէ արգըհալ իլէ պիր ֆէրտէ մէրխասալըգ վէրիլմէյիւկ, վէ սայիր վագըֆլէրինէ միւթաալիգ օլան խուսուսլէրի ըրահիպի մէսֆուր մարիֆէթի իլէ օլուկ, փափաս վէ քէշիշ վէ մէրխասա վէ գարապաշլէր, վէ մարապետ թապիր օլունուր քէշիշէ ավրէթլէրին միւթատի գատիմ իւգրէ պաթրիքէ այիտ մէթրուքեաթլէրին՝ ըրահիպի մէսֆուր վէ եախօտ թարաֆընտան վէքիլլէրի միրի իշիւն ախգ ու գապգ իյլէտիքտէ խիւաֆի միւթատի գատիմ պէյթիւ մալ վէ գասսամ ատէմլէրի միւտախէլէ իյլէմէյէլէր. վէ գատիմտէն գապլ իւ թէսարրիւֆլէրինտէ օլան քէնիւսա վէ մանասթըրլէրինէ վէ գիյարէթկեահլէրինէ, վէ քէնտուլէրէ



Թապի օլուպ գատիմտէն ալազա իտէկէլտիքլէրինէ, վէ սլու անէ տէկին ալինի աթըլէլէրին իճրա իյլէտիքլէրինէ, վէ վազի գատիմի ֆէթվայի շէրիֆի վէ մախուսմէն ֆէրմանի պի իլէ քիլիսա վէ մանասթըրլէրինին օլա կէլէն մէրամէթլէրինէ էհլի էօրֆ թայֆէսի թարաֆլէրինտէն վէ ախէրտէն պիվէշհի միւտախէլէ վէ միււրազա օլունմայուպ, վէ պաթրիքի մէսֆուրուն մարիֆէթի իզնի օլմատըգճա՝ ալինլէրինէ մուխալիֆ պազը գուրա փափասլէրի նիքեաս ճայիզ օլմայան զիմմիյէ նիքեաս իյլէմէյէլէր, վէ պիր զիմմիյէ ալրէթ էրինտէն դաշսա վէ եա պիր զիմմի ալրէթ պօշամալու վէ եախօտ ալմալու օլսա, աբալէրինէ ըահիպի մէսֆուր վէ եա վէքիլլէրինտէն գայրը քիմէսնէ կիրմէյէ վէ գարըշմայա, վէ միւրտ օլան էրմէնի մէրխասալէրի վէ փափասլէրի վէ քէշիշլէրի վէ սայիր էրմէնի թայֆէսի քէնտու ալինլէրի իւզըէ քիլիսալէրի՝ ֆուգարասընա վէ պաթրիքէ հէր նէ վասիյէթ իտէրլէր իսէ մագպուլ օլուպ էրմէնի շահիտլէրի իլէ շէր իլէ իսթիմա օլունա. վէ ալինլէրինէ միւլխալիֆ վազի հարաքէթ իլէ էրմէնի մէրխասալէրի վէ փափասլէրի վէ քէշիշլէրի՝ պաթրիքի մէսֆուր ալինլէրի իւզըէ թէտիպ վէ սաշլէրին թըրաշ վէ քէնտուլէրին փափաս վէ գարապաշըգտան ազիլ վէ քիլիսալէրին ախէրէ վէրտիքտէ միւտախէլէ իյլէմէյէլէր:

Վէ պաթրիկլիզինէ թապի եէրլէրտէ՝ գատիմտէն քէնտու աեինլէրի իւզըէ քէլիսալէրինէ միւլթաալիզ պաղ վէ պաղչէ վէ չիֆթլիք վէ չաեիր վէ թարլալէրինէ, վէ տէկիրման, վէ պիեուլթ վէ փանայիր վէ մանասթըրլէրինէ, վէ պիեուլթ վէ տիւքեաքին, վէ էշճարի միւսմիրէ վէ գայրի միւսմիրլէրինէ, վէ սաիր պունուն էմսալի քէնիսայէ վագըֆ օլան էշեա վէ տավարլէրինէ միւլթատարի ալիշանըմ իլէ էրմէնի պաթրիքի օլան մէսֆուր Գրիգոր ըահիպի՝ խիւթիմէթ ալագըպիհու պիլիսայըր, թարաֆընտէն գապթ իւրապթ իթտիրի՛իւպ՝ ախէրտէն միւտախէլէ իթհիրիլմէյէ. վէ քէլիսա վէ մանասթըրլէրինէ վէքիլ օլուպ՝ տիւշէն պաթրիքիզի մահսուլինտէն էքիլպէէի իտէն փափասլէրին վէ քէշիշլէրին պաթրիքի մէսֆուր՝ մուհասսէպլէրին կէօրտիւքտէ՝ խիւաֆի միւլթատի գատիմ ախէրտէն միւտախէլէ օլունմայուպ՝ վէ պազի զիգուտըլթ քիմէսնէլէր շու փափասը ազիլ, վէ քիլիսասըն շու փափասէ վիր տէյու, վէ եախօտ շու զիմմիեէ ալրէթի՛ շու զիմմիյէ նիքեաս իյլէ տէյու աեինլէրինէ միւլխալիֆ ըէնճիտէ իյլէմէյէլէր, վէ էրմէնիան թաիֆէսինտէն պազիլէրի քիլիսա վէ մանասթըրլէրի եօղ իքէն

մահալլէ ալէ մահալլէ կէզիւկ՝ խիլաֆի աեին՝ սահիհ էրմէնի  
 րիաեալէրին իֆսատ իտէն մէսֆուրլէր պաթրիքի մէսֆուր մարի-  
 ֆէթիլլէ, վէ ֆէրմանի ալիշանիմլէ ախզ վէ հագլէրինտէ լագըմ  
 կէլէն իճրա օլունէ, վէ պաթրիքի մէսֆուրուկ միւրուր իւր ու-  
 պուր իյլէտիկի մահալլէրտէ՝ պինտիկի պարկիւրլէրինէ, վէ եանըն-  
 տէ օլան եասագճըսընէ վէ ատէմլէրինէ վէ թէպտիլի ճամէ վէ  
 քիսվէ իյլէտիքլէրինէ՝ էհլի էօրֆ թարաֆլէրինտէն պիվէճիհ միւ-  
 տախէլէ օլուկմայուկ՝ վէ րահիպի մէսֆուրուկ կէնտու մաեիշէթի  
 իշիւն հասըլ օլան պաղլէրի մահսուլինտէն, վէ թէսատտիւզ նա-  
 մինէ գիմմի թաիֆէսինին վիւրէ կէլտիքլէրի շիւրէ վէ եաղ, վէ պալ,  
 վէ սաիր հէալէրին խանէսինէ նագլ իյլէտիքտէ՝ իսկէլէլէրտէ վէ  
 գաբուկէրտէ էմինլէր վէ եասագճըլէրտէն պիւր ֆէրտ խիլաֆի  
 միւթատի գատիմ րէնճիտէ իյլէմէյուկ, վէ իզնի շէր իլէ ալըգօ-  
 նուկմագ լագըմ կէլէն էրմէնի փափասլէրին վէ քէշիշլէրին պաթ-  
 րիքի մէսֆուր մարիֆէթիլլէ ալըգօնուկուկ՝ վէ պիւր գիմմինին  
 կէնտիւ րիգասը եօզ իքէն ճէպրէն միւսլիւման իյլէմէյուկ. վէ րա-  
 հիպի մէսֆուրուկ րիգասը եօզ իքէն պիւր սանա ճէպրէն եասագ-  
 ճը օլուրուկ տէյու, վէ սաիր պէհանէ իլէ գափուկ գուլլէրի թա-  
 րաֆընտան րէնճիտէ օլուկմայուկ՝ վէ սէնէվի մալի մագթուկի օ-  
 լան եիւզ գըրգ պին ագճէեի՝ պէհէր սէնէ թէսլիմի խազինէի ամի-  
 րէմ իյլէտիքճէ՝ պաթրիքլիկինէ վէհհի մէշուրուհ իւզրէ թէպիտէն  
 միւթասարըրֆ օլուկ՝ պէր վէճիհ թէպիտ գապթ իւ թէսարըրիւֆի-  
 նէ թարաֆը ախէրտէն պիւր ֆէրտ մանի օլուկմայուկ՝ վէ պաթրի-  
 քի մէսֆուր թարաֆընտէն թէսատտիւզ ճէմի իշիւն թաեին իյլէ-  
 տիկի րահիպլէր՝ միւրուրի ուպուր իյլէտիկի մահալլէրտէ էհլը  
 էօրֆ թաիֆէսի թարաֆինտէն միւտախէլէ իթտիրիլմէյուկ՝ վէ  
 աեինլէրինէ միւխալիֆ նիքեա հտեն գիմմիլէր քէլիսալէրինէ  
 կիւրմէք աեինլէրինէ միւխալիֆ օլմագ իլէ՝ միւրտ օլտուգլէրինտէ՝  
 գիւզգաթ վէ նիւվվաթ վէ սաիր գապիթլէր սիզ գալտըրըն տէյու  
 փափասլէրէ ճէվը իւ էգիեէթ իթտիրիլմէյուկ՝ վէ պաթրիքի մէս-  
 ֆուր մատամ քի մուճիպի պէրաթ իւզրէ հարաքէթ իյլէյէ՝ պաթ-  
 րիքլիկի մինպատ ախէրէ վիւրիլմէմէք իւզրէ մահալլինէ գայտ վէ  
 շէրհ վիւրիլմէքլէ՝ խիլաֆի շիւրութի պէրաթի ալիշան՝ ախէրտէն  
 միւտախէլէ վէ միւարագգա իյլէմէյուկլէր տէյու շիւրութի միւսար-  
 րահա օլուկ՝ վէ մէսֆուր Գրիգոր րահիպի խիւթիմէթ ալագըպի-  
 հու պիլխայըր էմսալինէ գըեասէն կէնտուսի վէ գափու քէթիւիւ-  
 տասի իլէ մէան օն պէշ նէֆէր ատէմլէրտէն ճիզիէ վէ ալարըզ վէ

Թէքեալիֆի էօրֆիյէ միւթալէպէ օլունմայուպ՝ վէ մէմալիքի մահրուսէմտէ վազը քէլիսա վէ մանասթըրլէրինին տէրունլէրինտէ սաքին փափաս վէ գարապաշլէրինին թէֆթիշ իւ հիսսալլէրին՝ պաթրիքի մէսֆուր վէ վէքիլլէրի մարիֆէթի իյլէ կէօրիւլիւպ՝ վէ գատիմի էրմէնիեանէ մախսուս քիլիսա վէ մանասթըրլէրի փաշա վէ միւթէսէլլիմ վէ վօյվօտա վէ գազի արզլէրի վէ միւրասէլէ իլէ սահիհ էրմէնի ըիտեասի եէտլէրինտէ աեհնի ախէր իւզըն օլան գաթուլիգ թապիր օլունուր միւֆսիտլէրէ վիրիմէյուպ, վէ աեհնի ախէր իւզըն օլան գաթուլիկ թէօհմէթիյլէ միւթթէհիմ միւֆսիտլէրին ճիւրիւմլէրի իչիւն սահիհ էրմէնի ըիայասի ըէնճիտէ օլունմայուպ՝ էրմէնի պաթրիքլէրի մարիֆէթ իւ ինհալլէրիյլէ հազլէրինտէ լազըմ կէլէն աեհնլէրի իւզըն իճրա օլունուպ՝ վէ օլ մագուլէ մմիւֆսիտլէրին ճէրիմէլլէրի իչիւն օլան տիեուլի քէսիքլէրի իչիւն շէհր իւ գասսապաթ վէ գուրատէ օլան քիլիսա վէ մանասթըրլէրինին էշեասինէ թէարրիւզ օլունմայուպ վէ ըէհին օլմագ իւզըն ախզ իւ գապղ իթտիրիմէյէ, վէ պիր թագրիպ իլէ ախզ օլունմուշ վար իսէ մարիֆէթի շէր իլէ կիրու մահալինէ ըէտտ վէ թէսլիմ օլունուպ, վէ աեհնի գատիմէլլէրի իւզըն պիր զիմմի ալրէթ պօշամագ, վէ ալրէթ իւզլէրինէ ալրէթ այմագ, զիեատէ աեհնլէրինէ միւղաեիր օլմաղ իլէ՝ օլմագուլլէրէ ըիւսխաթ վիրիմէյիւպ վէ թէտիպ վէ կիւշ իւ մալ օլունուպ վէ պաթրիքի մէսֆուրուն եէտինտէ օլան սասսինէ միւտախէլէ իթտիրիւմէյուպ վէ միրի մագթուի ճէմի իչիւն միւրուր իւ ուպուր իտէն գարապաշլէրինին միւրուր իւ ուպուր իյլէտիկի մահալլէրտէ՝ ահսէնի վէչհ իլէ կէչմէք իչիւն իւզլէրլէրինտէ օլան ալաթլէրինէ վէ տավարլէրինէ էհլը էօրֆ թարաֆլէրինտէն միւտախէլէ օլունմայուպ վէ կէնտուլլէրէ մախսուս քէլիսայէ միւթէալիգ էշեալէրինտէն գափուլլէրտէ վէ իսկէլլէրտէ կէօմրիւկ վէ պամ միւթալէպէ օլունմայուպ՝ վէ պազի էշիրանըն զիւհուր իտէն տավալէրի ախէր մահալլէրտէ իսթիմա օլունմայուպ՝ տիվանի հիւմաեուլիմտէ կէօրիւմէք իւզըն Ասիթանէի սէատէթիմէ հավալէ իչիւն էմսալի շիւրուլթի պէրաթինէ իտխալ օլունմաք պապինտէ արզըհալ պիրլէ իսթիտա օլունտուգտէ էմսալի օլան իսթանպօլ վէ Օխրի պաթրիքլէրինին պէրաթլէրի շուրուլթլէրի կէօրիւլտիւքտէ իսթանպօլ վէ Օխրի պաթրիքլէրի վէ խըզմէթլէրինտէ օլան գափուլ քէթիսիւտալէրի իլէ, օն պէշ նէֆէր ատէմլէրինտէն ճիգիեէ վէ ալարըզ վէ թէքեալիֆի էօրֆիյէ թալապ օլունմայուպ, վէ շէրի շէրիֆէ միւ-

Թաալիզ լազըմ կէլէն տավալէրի շիւրութլէրինտէ միւսարրաճ օլ-տուղի տէրքէնար օլունմաղ իլէ արգուհալի վէ տէրքէնար օլունան էմսալի շիւրութի պէրաթինէ իտխալ օլունմազ պապինտէ՝ սատըր օլան Ֆէրմանի ալիշան մուճէպինճէ շիւրութինէ իտխալ օլունմազ իլէ՝ Իսթանպօլ վէ թէվապիի էրմէնիեանի պաթրիքի օլան մէսֆուր Գրիգոր բահիպ խիւթիմէթ ավագըպիհու պիլխայր իլէ՝ գափուլ քէթխիւտասի իլէ մէան օն պէշ նէֆէր ատէմլէրինտէն ճիզիեէ վէ ավարըզ վէ թէքեալիֆի էօրֆիեէ թալապ օլունմայուլ վէ շէրի շէրիֆէ միւթէալիզ լազըմ կէլէն տավալէրի տիվանի հիւմանուհիմտէ կէօրիւլիւլ վէճիհ մէշրուհ իւզըէ պէրաթինէ իտխալ օլունան շիւրութ վէ գուլուտինէ մմիւղայիր վէճհէն մինէլ վիւճուհ վէ սէպէպէն մինէլ էսպապ, պիր տիւրլիւ մանի՝ վէ տաֆի՝ վէ բաֆի՝ վէ միւղահիմ օլմայուլ, տախիւլ թէարրիւզ գըլմանալէր. շէօլէ պիլէլէր, ալամէթի շէրիֆիմէ իթիմատ գըլալէր:

Թահրիրէն Ֆիլեհմմիս սալիսի գիլհիճճէ. սէնէ սէպա վէ սէպինէ վէ միէ վէ էլֆ:

Սէնէ ՎՎՎ գիլհիճճէնին իւշիւնտէ:

## ԳԼՈՒԽ ԽԳ.

Յարգազս գործոց Յակոբայ առաջնորդին Հռովմէական Հայոց, եւ Նուրիճան Անտօնի Մետրապօլտի նոցա:

(1831) Նստաւ Յակոբ վարդապետ առաջնորդն Հռովմէական Հայոց հրամանաւ արքայի յամսեանն մայիսի 1831, եւ սկսաւ կառավարել զժողովուրդ իւր ըստ քաղաքական օրինաց եւ հրամանաց արքայի, եւ որ այլ եւս են նմա որոշեալ գործողութիւնք մարմնականք եւ քաղաքականք:

Բայց զեկեղեցական իշխանութիւնն սկսաւ ՚ի գործ դնել Նուրիճան Անտօն մետրապօլիտ նոցա ըստ իրաւանաց եւ կանոնաց եկեղեցւոց, եւ նախ զառաջինն հրամայեաց, զի յեկեղեցւոյն Հայաստանեայց, որպիսի են պաշտամունք եկեղեցւոյ, եւ ժամերգութիւնք, պատարագամատոյցքն յերեկոյի յաւուրս ճրագալուցից, մկրտութիւնք երեխայից, պսակք հարսանեաց, թաղումն մեռելոց, ողջունատուութիւն ՚ի մէջ ժողովրդեան ՚ի Պատարագի, Ծաղկագարդն, Ոտնլուայն, Տեառնընդառաջն: Զայս ամենայն որպէս առնեն Հայք, սոյնպէս առնեն եւ սոքա:

Այլ եւ շարականք ըստ պատշաճի աւուրց, զգեստք քահանայականք, շապիկք դպրաց, վարագոյրք խորանաց ըստ ձեւոյն նման Հայոց: Եւ վասն սոցին բազում անգամ եղեւ ժողով քահանայից եւ իշխանաւորաց առ Նուրիճան, զի զձէսս Լատինացւոց ՚ի կիր արկցեն, եւ մի զՀայոցն:

Այլ ընդդէմ եկաց այսմ Նուրիճան խորհրդակցութեամբ Աւգէրեան Հ. Մկրտիչ վարդապետին Աբբայեան, զոր ընդ իւր եբեր ՚ի Վենետիոյ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ Սէրվան Հ. Յովհաննէս վարդապետին, որ փոխանորդ նստաւ առաջնորդին նոցա:

Եւ վասն այսր ամենայնի գրեաց Նուրիճան ՚ի Հռովմ առ Պապն, եւ եբեր ՚ի նմանէ զկոնդակս հաստատութեան, յորում հրամայէր Պապն ըստ ամենայնի հնազանդիլ ամենայն հրամանաց Նուրիճան Անտօնի Մետրապօլտին իւրեանց, եւ ՚ի կիր արկանել զարեւելեան արարողութիւնս եւ զնախնի ծէսս Հայաստանեայց եկեղեցւոյ ՚ի յեկեղեցիս իւրեանց:

Եւ փակեալ էր ընդ նզովիւք զայնոսիկ, որք հակառակ գտանին մետրապօլտին իւրեանց: Բայց այսու ամենայնիւ ոչ սակաւ

փոփոխութիւնն եղեւ 'ի պաշտամունս եկեղեցւոյ, զոր օրինակ. պատճառաւ տօնելոյ զԾնունդն Քրիստոսի 'ի 25 դեկտեմբերի՝ յաւելի եօթնօրեայ պահս պահել, ուստի յեօթն եւ տասներորդ աւուր դեկտեմբերի եղին՝ “Բարեկենդան Ծննդեան”, եւ ապա պահս:

Եւ զպահսն ծննդեան՝ զոր պահեն Հայք, բարձին նոքա, եւ վասն սորին խախտեցին զկարգ հին Տօնացուցին, զոր արարեալն են Սահակ եւ Մեսրոպ, Գիւտ եւ Յօհան Մանդակունի, եւ յետ նոցա Գրիգոր Վկայասէր նգովս եղեալ էր այնոցիկ՝ որք միանգամ իշխեն փոփոխութիւնն ինչ առնել 'ի Տօնացուցին: Եւ զայս ինքեանք յառաջնմէ պնդէին ընդդէմ Սիմէոնի կաթողիկոսին, թէ զիս՞րդ իշխեաց ձեռներեց լինել 'ի փոփոխութիւնն հին Տօնացոյց ընդդէմ նգովից սրբոց հարց: Ուստի եւ զնոր Տօնացոյց Սիմէոնին ոչ ընդունելով, զՕրացոյց իւրեանց ըստ հին Տօնացուցի եկեղեցւոյն Հայոց կարգադրէին, եւ պանծային յասելն, թէ մեք ոչ փոփոխեմք ըզ նախնի աւանդս նախկին սրբոց հարց մերոց:

Ապա ընդէ՞ր փոփոխեցին այժմ, զաւուրս տճօնախմբութեան սրբոց յետ եւ յառաջ դասելով, եւ 'ի մէջ ութօրէից Ծննդեան տօնախմբելով զգլխաւոր տօնսն սրբոյն Ստեփանոսի, Պետրոսի եւ Պօղոսի, եւ Որդւոցն որոտման, որ 'ի հին Տօնացուցին արգիլեալ է յութօրէս Ծննդեան տօնել զտօն սրբոց:

Սոյնպէս եւ խառնումն ջրոյ 'ի խորհուրդ Պատարագին սահմանեցին լինել ընդդէմ լուսաւորչաւանդ արարողութեան, եւ զՍուրբ Աստուածն առանց խաչեցարի երգել:

Ի պատարագին զՊապն Լատինացւոց յիշել: Փոխեցին ըզ ձեւ վեզարի վարդապետաց, եւ խաչաձեւ գնտակ սեաւ բեհեզեայ ծածկութիւ յօրինեցին, իսկ մետրապօլտին եւ առաջնոգին եւ գլխաւոր վարդապետաց բեհեզեայ ծածկոյթն վեղարին՝ 'ի դոյն ծիրանի որոշեցին:

Եւ այսպէս եղեւ անջատումն ազգին Հայոց, ոմն Հայ անուամբ, եւ ոմն Հռովմէական անուամբ, ներհակք իրերաց, եւ թշնամանողք եւ ատեցողք զմիմեանս. զոր տեսեալ ազգասիրութեան ոգւով վառելոց՝ լան եւ ողբան զանմտութիւնն նոցին:

Եւ ետ հրաման արքայ շինել նոցա եկեղեցի, զորոյ զհիմն եղին 'ի Ղալաթիա 'ի յուլիսի 15, եւ շինութիւնն նորա տեւեաց զամս երկուս եւ աւելի եւս:

Կամեցան Հռովմէական Հայք եւ զԲերիացիս արկանել ընդ իշխանութեամբ առաջորդին իւրեանց, յոյր վասն եւ բազմօք աշխատ եղեն, այլ ոչ յաջողեցաւ նոցա այս, զի նոքա բաբայայտ ծանուցին 'ի դուռն Տէրութեան, եթէ մեք չեմք յազգէ Հայոց սերեալք եւ գատուցեալք 'ի նոցանէ. այլ եմք մեք յազգէ Լատինացւոց՝ գաղթականք եկեալք 'ի Բերիա յառաջին ժամանակս, եւ հպատակեալք Օսմանեան տէրութեան, վասնորոյ մեր քահանայք՝ Լատինացիք են, եւ եկեղեցի մեր՝ եկեղեցի Լատինացւոցն է:

Եւ ստուգեալ այսպէս 'ի Տէրութենէն, հրամանաւ տէրութեան որոշ մնացին նոքա ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին Լատինացւոց՝ անկախ գմետրապօլտէն եւ գառաջնորդէն Հռովմէական Հայոց: Ուստի Լատին քահանայք հովուեն զնոսա մինչեւ ցայսօր, եւ քաղաքական կառավարութիւնն է 'ի ձեռս երեւելի վաճառականաց նոցա:

## ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս խնամութիւն առնելոյ Գաղատացի Հռովմէականաց ընդ Ֆռանկաց,  
եւ արգելանաց հրովարտակին ՚ի դրանէ Տէրութեան:

(1831) Մինչչեւ էր աւարտեալ շինութիւն եկեղեցւոյն Հռովմէական Հայոց, որ տեւեաց զամս երկուս, ՚ի միջոցի յայսմիկ ՚ի տունս տունս պատարագէին քահանայք նոցին վասն չլինելոյ եկեղեցւոյ, եւ ոչ իշխէին երթալ պատարագել յեկեղեցիս Լատինացւոց վասն հրամանի արքային, որ արգելեալն էր ՚ի հրովարտակին իւրում, զոր գրեցաք ՚ի վեր անդր:

Այլ Գաղատացիք յամառեալք եւ կամակորք՝ որք մինչեւ ցայսօր յանդգնին երթալ յեկեղեցիս Լատինացւոց, ոչինչ անսացին հրամանաց արքայի:

Նաեւ ոմանք ՚ի նոցանէ յանդգնեցան խնամութիւն առնել ընդ Լատինացիս, տալով զգոտերս իւրեանց ՚ի կնութիւն նոցա, որ բացէ ՚ի բաց արգելեալ իսկ էր ՚ի հրովարտակի արքային. զոր լուեալ արքայ՝ խռովեցաւ յոյժ, եւ յատկապէս հրովարտակ առաքեաց առ առաջնորդն Հռովմէական Հայոց՝ խափանել զայս խնամութիւն առնելն ընդ Ֆռանկաց, յարելով ՚ի վերջն, թէ՛ որ ոչ անսայ այսր հրամանաց իմոց, ՚ի կախաղան մահո ելցէ այսպիսին առաջի տան իւրոյ, եւ էր հրովարտակն օրինակ զայս:

“Գաթօլիք փիսգոփոսու.

“Գաթօլիք մէզհէպի իլէ էֆրէնն մէզհէպի պէյնինտէ տէրքեար օլան ֆէրք վէ մապէյնիէթ մալիւմ. վէ Գաթօլիք օլանլէր Ֆիրէնք մէզհէպինի իսթիյար իթմէյէնէքլէրի էմրի զայրի մէֆում օլտուղինտէն, էֆրէնն թայիֆէսինին՝ սահիհ ըայայի տէվլէթի Ալիյէտէն օլան Գաթօլիքլէր իլէ թէզվիւմ վէ թէզվիւմ ուսուլինէ կիտէրէք իսթիլաթ էյլէմէլէրի մէմնու օլան գույուտտէն ի քէն, պիրազ վագըթտէն պէրու պու ուսուլէ պագըլմայարաք թէսէպիւպ վէ ատէմի տըքքէթտէն նաշի Ֆրէնքլէր կէլիւպ իսիլաֆի շարթ Գաթօլիք գըզլէրինի թէզվիւմ իտէրէք, ըայայի տէվլէթի Ալիյէ էֆրէնն մէզհէպինէ մէյլէ իլէ, նիհայէթ իշպու ֆէսատըն հուտուսի Գաթօլիք թայիֆէսինին միւլթէլայի վէ համէթ վէ հաթար օլմասինի միւլթտի օլարաք, պու քեարի մէքրուհուն մէնի ի-



լէ ըստ յայտնուած տէրերէն Արիւնիսին տիւնարնէտամէթ վէ համէթ օլմաք-լըքտէն վիգայէսի լազըմ կէլէրէք, պունտան սօնկրա պու քէյֆի-յէթէ սէպէպ օլանլէր՝ վէ ճէսարէթ իտիւպ ըուխսէթ վէրէնլէր՝ վէ այնընճա ագտ իտէն փափազլէր էզիյէթ ու քուպէթ իլէ թէյտիպ օլունաճաղի մէզմունինտէ, խաթթի հիւմայիւն շէվքէթ մաքրուն շահանէ մահապէթ էֆզայի սուտուր օլմազլէ, պու քէյֆիյէթի միլլէթինէ պէյանի իլէ, պունտան սօնկրա Գաթօլիքլէրտէն էֆ-րէնճ թայիֆէսինէ հէր քիմ գըզ վէրիւր իսէ, վիւրուպ վէ սէպէպ օ-լանլէր վէ այնընճա ագտ իտէն փափասլէր գաբուլէրի էօնլէրին-տէ սալպ իլէ թէյտիպի ճէզա օլունաճաղինտէն պաշկա, սէնին տախի թէյտիպին մուհաքքաք օլմազլէ, պու քէյֆիյէթի թահրիւր վէ թէճէսսիւզ օլունաճաղի բէշինճէ մալիւմին օլարաք, անկա կէօրէ պու քեարի մէքրուհտէն միլլէթինի մէն իտէրէք, պունտան սօնկրա պիւր վէչհ իլէ վուքուէ կէլմէմէսի էսպապիւնի էյլէմէլէրի քէմալի իլէ իհթիմամ վէ տըքքէթ վէ խիւաֆինտէն միւպայիէտ էյլէյէսիզ տէյու. ԿՅՎ ըէպիլ ախը \).

Ձայս հրովարտակ ընթերցեալ յառաջնորդարան իւրեանց ՚ի Ղալաթիա, գգուշացուցին գԳաղատացիս եւ գժողովուրդ իւ-րեանց՝ բացէ ՚ի բաց հրաժարիլ ՚ի հաղորդելոյ ընդ Լատինացիս ծիսիւք եւ ազգակցութեամբ եւ խնամութեամբ, թէպէտ Գաղատա-ցիք մինչեւ ցարդ անխտիր երթեւեկեն յեկեղեցիս Լատինացուց՝ առ ոչինչ համարեալք գհրաման եւ գհրովարտակ տէրութեան:

(1831) Յաւուրս յայտոսիկ գնաց Սուլթան Մահմուտ արքայ ՚ի նեղուցն Միջերկրական ծովուն յայցելութիւն բերդից նեղուցին, եւ յետ միոյ ամսեանն վերադարձաւ, որում ընդ առաջ ելին իւ-րաքանչիւր ազգք եկեղեցական գգեստուք ՚ի բանաղթութիւն արքայի, Հայք առաջի Ախըր գափուին, եւ Հոովմէական հայք ՚ի ծովեզերս Տօլմա Պաղչէին, եւ երգեցին երգս աղօթից վասն կենաց արքայի, գոր տեսեալ արքայ, ուրախացաւ, եւ գոհ եղեւ զամե-նայնէ:

(1831) Ի սմին ժամանակի եղեւ նորոգութիւն սուրբ Ստեփա-նոս եկեղեցւոյն Խասգիւղի, մեծ եւ ընդարձակ քան զառաջինն կատարեաց Կարապետ պատրիարք մեծաւ փառօք, եւ սահմա-նեաց ամ յամէ տօնել գլխատակ օձման եկեղեցւոյն յաւուր Աշ-խարհամատրան կիւրակէի գկնի Ջատկի:

## ԳԼՈՒԽ ԽԵ.

Յաղագս վտանգաւոր հարուածոց եւ անցից Կոստանդնուպօլսոյ քաղաքին:

(1831) Իբրեւ վերադարձան Հռովմէական Հայք յաքսորանաց, հրաման եղեւ յարքայէ, զի գտունս Հռովմէական Հայոց՝ զոր դիւրագնոց գնեալ էին այլազգիք, դարձուցեն յետս 'ի սեպհական տեարս իւրեանց, եւ հրամանաւ արքայի դարձուցին յետս այլազգիք գտունսն՝ զոր գնեալ էին, եւ սկսան Հռովմէական Հայք երթալ բնակիլ 'ի տունս իւրեանց:

Եւ ահա յանկարծակի եղեւ հրդեւ 'ի Չուգուր կոչեցեալ թաղն Բերայի 'ի յուլիսի 21, եւ ժամանակն ամառնային գոլով՝ նուազ էր ջուրն յաղբերս՝ որ անդ, եւ մեծամեծ նախարարք եւ փաշայք տէրութեանն դանդաղեցան վաղ ընդ փոյթ հասանել անդր: Հրդեհն ճարակ գտեալ՝ սկսաւ տարածիլ ընդ ամենայն կողմն, եւ եղեւ հնոց իմն անշիջանելի, եւ վառեաց զամենայն եւ 'ի մոխիր դարձոյց գտունս եւ զկրպակս եւ ըզ քարուկիր յօրինածս զամենայն, եւ զպալատս դեսպանաց եւրոպական տէրութեանց, եւ զեկեղեցիս Լատինացոց, եւ ոչ մնաց տուն եւ բնակութիւն: Եւ եղեւ սուգ մեծ եւ տրտմութիւն ամենայն ազգաց բնակելոց անդր, մանաւանդ Հռովմէական Հայոց, որք մինչ ուրախ լինէին, թէ ազատեցին ըզ տունս իւրեանց 'ի ձեռաց այլազգեաց, հրդեհն այրեաց եւ լաեաց զամենեսին, եւ արար զչէնն իբրեւ զանչէն, եւ իբրեւ զանապատ ամայի:

Յետ միոյ ամսեանն հրկէզ եղեւ եւ տիվանխանայն թէրսանէին յօգոստոսի 17, եւ յետ քանի ինչ աւուրց եղեւ հրդեհ մեծ եւ 'ի Սամաթիա յօգոստոսի 22, եւ այրեաց գտունս բազումս Հայոց եւ Յունաց եւ Տաճկաց, եւ զկրպակս եւ զշուկայս նորին:

Եւ յետ երկուց աւուրց եղեւ հրդեհ եւ 'ի Շահգատէ պաշի կոչեցեալ թաղն Կոստանդնուպօլսոյ, եւ այրեաց զմեծամեծ տունս Տաճկաց:

Բայց այս ամենայն հրդեհք ոչ եթէ պատահմունք ինչ լինէին առ անզգուշութեան, այլ թէ յատկապէս եւ գիտութեամբ զնէին կրակ եւ աբեթ ծրարեալ յիւզախառն կտաւի, եւ լուցեալ արկանէին 'ի տունս եւ 'ի կրպակս զանխուլ 'ի տանուտեարց, եւ լինէր

հրդեհ, եւ կողոպտէին զինչ եւ զստացուածս 'ի հրկէզ եղելոց տանց:

Եւ որք առնէինն զայս, էին սրիկայք Տաճկաց դրդեալք 'ի յընթերցողաց դենի իւրեանց: Զի նորա ունէին յարքունուստ կալուածս 'ի յԱնատոլու եւ 'ի Բումէլի Արփալըզ կոչեցեալ, եւ Սուլթան Մահմուտ արքայ կամէր յարքունիս գրաւել զկալուածս նոցա, որպէս գրաւեաց զկալուածս եւ զթօշակս Եննիչէրի Օճաքին:

Այլ իրագեկ լեալ ընթերցողացն, եւ ոչ կարելով յայտնի զդիմի հարկանիլ հրամանաց արքայի, կամեցան յարուցանել խռովութիւն մեծ՝ 'ի մէջ քաղաքին, եւ նովաւ խափանել ըզ կամս եւ զառաջադրութիւն արքայի:

Իսկ մեծամեծք եւ նախարարք տէրութեանն գիտելով զայս չարակամութիւն ընթերցողացն, եւ երկուցեալք յայտնի եւ անպատրուակ բանիւք կշտամբել եւ պատուհասել զնոսին, հրաման կարդացին 'ի Կոստանդնուպօլիս եւ յամենայն գիւղօրէս նեղուցին եւ 'ի յԻսկիւտար, զի ամենայն ոք առաջի դրան տան իւրեանց վառեսցէ լապտեր, եւ մէն մի յիւրաքանչիւր տանց բնակչաց սպասեսցեն 'ի դրունս իւրեանց մինչեւ ցառաւօտ, եւ զգուշացին յամենայն կողմանց պահպանութեան թաղի իւրեանց:

Եւ այսպէս զամիսս երկուս զգուշանային ամենեքեան վառեալ լապտերս 'ի դրունս տանց իւրեանց սպասելով մինչեւ ցառաւօտ, մինչեւ յետ երկուց ամսոց նախարարք Տէրութեանն հաճեցուցեալ զկամս արքայի՝ թողին ընթերցողաց վայելել զկալուածս իւրեանց, եւ խափանելով զառաջադրութիւն արքայի՝ խափանեցին եւ զվնասս հրդեհին՝ որ սպառնայր յաւեր հասուցանել զամենայն շէն քաղաքին:

(1831) Չեւ եւս գերծեալ էին բնակիչք Կոստանդնուպօլսի 'ի պէս պէս վտանգի՝ որք մի զկնի միոյ հասանէին հանդերձ անտանելի եւ ծանր նեղութեամբ, դիպաւ նոցա եւ այլ իմն աղէտ մեծ եւ վտանգ սոսկալի, զի յառաջ քան զայս հրդեհն 'ի մոխիր դարձոյց զշէնս եւ զստացուածս նոցին, այլ ոչ մահ տարածեաց: Զրկեաց այո՛ 'ի յընչից եւ 'ի ստացուածոց, այլ ոչ 'ի կենաց:

Բայց զկնի հրդեհին՝ դժնդակ եւ անագորուն ախտ ինչ սոսկալի եւ յանկարծամահ եհաս 'ի Կոստանդնուպօլիս, ըստ բժշկաց (գօլէրա մօրպուս) վերածայնեալ, որ չար քան զժանտամահն գուրով՝ 'ի միջոցի կիսոյ կամ միոյ ժամու հարեալ՝ սառուցանէր զարիւնս երկարաց, բառնայր զներքին ջերմութիւն սրտին եւ լեր-

զին, եւ ցամաքեցուցանէր զաւելչկեան անօթսն եւ զկենդանական ոգիս, եւ չարաչար սպանանէր:

Եւ եղեւ ահ եւ երկիւղ մեծ 'ի վերայ ամենեցուն, եւ դողայր ամենայն ոք եւ սարսափէր: Զի բազումք ողջ եւ կենդանի ելանէին 'ի տանց իւրեանց երթալ 'ի շուկայս, եւ ոչ վերադառնային, զի 'ի ճանապարհին մեռանէին: Եւ որք ժամ մի յառաջ տեսաւորէին զմեռանիլ այնմ, ընդ որում խօսէին:

Եւ անկաւ յուսահատութիւն 'ի վերայ ամենեցուն, եւ ոչ կամէին երթալ 'ի գործողութիւնս արուեստից եւ շահս վաճառուց, այլ միայն 'ի գերեզմանատունս 'ի թաղումն մեռելոց:

Եւ թէպէտ չէր ծանուցեալ, եթէ այս ախտ, եւս տարափոխիկ է իբրեւ զժանտամահ, այլ չար էր քան զնա, զի նա քսան եւ չորս ժամ միջոց տայ հարուածելոյն եւ այնպէս մահացուցանէ, իսկ սա անդէն 'ի միջոցի միոյ ժամու սպանանէր:

Եւ դարման սորա ոչ այլ ինչ լինէր, բայց միայն շօշափլ զմարմին հարուածելոյն ջերմ ջուխայիւ ստէպ ստէպ, եւ հանել զարիւն յերակաց, եւ տալ յարբումն զոգի կամ զիւղ անանխոյ խառնեալ 'ի ցուրտ ջուր:

Բայց այս ամենայն պարտ էր իսկ եւ իսկ առնել 'ի հարկանիլն հիւանդին. ապա թէ ոչ՝ յետ միոյ ժամու անօգուտ լինէին ամենայն ջանք եւ վաստակք, եւ մեռանէր հարուածեալն:

Տեւեաց այս ախտ զամիսս երիս սկսեալ 'ի տասներորդ օրէ սեպտեմբերի մինչեւ ցդեկտեմբեր, եւ ապա իբրեւ զաշխարհաշրջիկ ոք ելեալ 'ի Կոստանդնուպօլսոյ՝ զնաց 'ի Թրակիա, եւ յԱնգլիանուպօլիս, եւ շրջեցաւ ընդ ամենայն գաւառս Օսմանեան Տէրութեան, եւ անտի զնաց 'ի Գերմանիա, եւ 'ի Բրուսիա՝ եւ 'ի Գաղղիա, եւ յԱնգլիա, եւ յամենայն տեղիս՝ ուր զնաց, արար կոտորած մեծ իբրեւ ոխերիմ թշնամի մարդկայինս ընկերութեան:

Յաւուրս յայսօսիկ եղեւ հրդեհ 'ի Չէնկէլ գիւղն, եւ այրեաց զգիւղն ողջոյն:

Եւ յետ երկոտասան աւուրց եղեւ հրդեհ եւ 'ի Թաթավլա աւրնթեր Բերայի, եւ այրեաց զերրորդ մասն գիւղին:

## ԳԼՈՒԽ ԽՁ.

Յաղագս պատերազմի Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի ընդ Ապտուլլահ փաշային Ասկադոն քաղաքին:

(1832) Իբրեւ վերջացաւ հարուած գօլէրա ախտին 'ի Կոստանդնուպօլսոյ, բացաւ պատերազմն 'ի մէջ արքայի՝ եւ 'ի մէջ մեծի բղեշխին Եգիպտոսի, որ կոչէր Մէհմէտ Ալի Փաշա: Սա գոլով այր քաղաքավար յամենայնի եւ շահեցող, համբաւեալ էր առնուն մեծութեան եւ փարթամութեան եւ իմաստութեան եւ քաղաքավարութեան նորա ընդ ամենայն Եւրոպիա, եւ սիրելի էր յոյժ յաչս Եւրոպացւոց թագաւորութեանց, որք ալն ածէին 'ի նմանէ, եւ զխնդիր նորա դիւրաւ 'ի գործ գնել ախորժէին, եւ առաւել համարէին զյարգ եւ զգարկումն նորին 'ի մէջ իւրեանց քան զՍուլթան Մահմուտ արքային, յորմէ ոչ սակաւ նախանձ եւ զրգիռ ատելութեան 'ի մէջ առնոյր:

Տուեալ էր Մէհմէտ Ալի զպաշտօնատարութիւն Եգիպտոսի եւ ամենայն աշխարհաց ընդ իշխանութեամբ իւրեւ եղելոց՝ 'ի ձեռս հայկազուն Պարոն Պօղոսի Եոսուֆեան Ջմիւռնացւոյ, որ գոլով այր բանիբուն՝ խորագէտ՝ եւ իմաստուն՝ եւ տեղեակ Եւրոպական լեզուաց՝ սիրելի էր յոյժ յաչս Մէհմէտ Ալիին, եղեալ նմա թարգման եւ խորհրդատու՝ եւ ներքին քարտուղար, միանգամայն եւ իշխան եւ կառավար ամենայն եկամտից եւ գանձուց նորա, մմինչեւ ալն ածել 'ի նմանէ ամենայն մեծաց՝ եւ քօնսօլից՝ եւս եւ որդւոց եւ թոռանց նորին իսկ Մէհմէտ Ալիին:

Ի ձեռն կառավարութեան եւ խոհեմութեան առնս այսորիկ առնապատք Եգիպտոսի զշինութիւն զգեցան, խոպանացեալք պարարտացան, արուեստք ծաղկեցան, գիտութիւն բազմացաւ, հարստութիւն գեղաւ, փարթամութիւն առաւելաւ, գանձք եկամտից յաճախեցան, եւ իշխանութիւն Մէհմէտ Ալիին զօրացաւ ընդարձակեցաւ այնչափ, մինչ զի ոչ միայն վերին եւ ստորին Եգիպտոս, այլ եւ Ֆէս, եւ թագաւորութիւնն Մաւրիտանցւոց եւ մասն ինչ Եթովպիոյ, եւ ըջանիկն Արաբիա մինչեւ ցՈվկիանոս՝ լինիլ սմա հարկատու. ուստի եւ իրօք թագաւորակերպ սկսաւ հրամայել եւ տիրել, կարգել զօրապետս եւ զօրագլուխս եւ սպարապետս եւ փաշայս 'ի ներքոյ իշխանութեան իւրոյ:

Եւ յայտոսիկ աւուրս պատահեցաւ այսպիսի ինչ դիպուած, որ եղեւ պատճառ պատերազմին, զոր մղեաց արքայ ՚ի վերայ նորա:

Իբր զի՝ նստէր ՚ի յԱսկաղոն քաղաքի բղեշխ ոմն Ապտուլլահ կոչեցեալ, այր սէգ՝ հզօր եւ ամբարտաւան:

Սա՝ սրտմտեալ ընդ նաւապետս նաւուց Մէհմէտ Ալիին, որք երթեւեկէին անպակաս ՚ի ծովն Պաղեստինոյ, գրեաց առ Մէհմէտ Ալի բանս ինչ ծանունս՝ եւ զդժուարատանելիս՝ եւ անվայելս մեծի համարման նորա:

Ընդ որ դժուարացեալ Մէհմէտ Ալի, բողոք գրեաց առ Սուլթան Մահմուտ, որպէս օրէն էր առնել, զի սանձահարեացէ զամբարտաւանութիւն նորին, եւ պատուհասեսցէ զնա ըստ արժանաւոյն, առաքեաց առ արքայ եւ զանվայելուչ գրութիւն նորին իսկ Ապտուլլահ փաշային, զոր գրեալն էր առ Մէհմէտ Ալի:

Իսկ արքայն փոխանակ խրատելոյն զնա եւ պատժելոյ՝ իրաւունս ետ նմա, իբրեւ թէ իրաւամբ գրեալ է Ապտուլլահ փաշայն ամենայն առ Մէհմէտ Ալի, եւ յանցանքն Մէհմէտ Ալիին են, որ ոչ խրատէ զնաւապետս իւր, ունել զընտել բարս եւ զքաղաքավարութիւն:

Զայրացեալ Մէհմէտ Ալի այս անարժան դատաստան արքայի՝ գրէ առ արքայ, եթէ դու ոչ կամեցար խրատել զնա բանիւ, ես խրատեցից զնա գաւազանաւ, զոր տեսեալ եւ դու, զգասցիս եւ ծանիցես, եթէ ես քանի՞ մեկ եմ քան զնա, թէպէտ առաջի քոյ ոչինչ եւս իցեմ:

Արդ ահա աս պատերազմաւ ունիմ ելանել ՚ի վերայ նորա, եթէ եւ տէրութիւն քոյ կամակից իցէ օգնել նմա, ՚ի պատրաստի եմ եւ ընդ քեզ իսկ կռուիլ:

Զայս օրինակ գրեալ Մէհմէտ Ալի առ արքայ, եւ ծանուցեալ՝ զոր ունէրն առնել, եհան բանակ զօրաց, եւ կարգեաց սպարապետ զորդի իւր զԻպրահիմ փաշա, եւ առաքեաց ՚ի վերայ նորա յԱսկաղոն քաղաք, որոյ բերդն ամուր էր եւ անմատչելի յոյժ, զոր եւ յառաջին ժամանակս Նաբօլէոն Պոնաբարթ պաշարեալ բազումս աշխատ եղեւ, այլ ոչ կարաց առնուլ:

Եւ թէպէտ արքայ եղեւ ՚ի կողմն Ապտուլլահ փաշային, եւ առաքեաց յօգնութիւն նմա զզօրս եւ զամենայն պիտոյս պատերազմի, այլ հզօր գտեալ Իպրահիմ փաշա, եւ զամիսս վեց պաշարեալ զԱսկաղոն, պատերազմեցաւ անդադար, եւ ՚ի նեղ արկեալ ապա՝ եհար թնդանօթս գտիւ եւ զգիշեր գաւուրս երիս, եւ կործա-

նեալ զցամաքակողմն բերդին՝ եմուտ 'ի քաղաքն, եւ ձերբակալ արրարեալ զԱպտուլլահ փաշա, ողջ եւ կենդանի առաքեաց յԵփրատոս 'ի ձեռս հօր իւրոյ Մէհմէտ Ալիին:

Իսկ Մէհմէտ Ալի 'ի տեսանելն զնա՝ յոտն եկաց առաջի նորա, եւ ընդգրկեալ զնա ընդ աջմէ իւրմէ, եւ հարկս մեծամեծս՝ եւ ծառայս՝ եւ սպասաւորս՝ եւ աղախնայս՝ եւ զամենայն 'ի կարեւորացն սակի պատրաստեաց նմա, ոչ յիշելով բնաւ երբէք զհարիսն եւ զբանսն նորին, զոր գրեալ էր նմա Ապտուլլահ:

Յորմէ գամօթի հարեալ մեհապէս Ապտուլլահ փաշա, ելաց յաւուր միում առաջի Մէհմէտ Ալիին զհարիսն իւր, զոր արարեալ էր նմա. եւ փարեալ զծնգաց նորա՝ խնդրեաց ներումն եւ թողութիւն շնորհել անմտութեան եւ անբարտաւանութեան իւրոյ, այլ Մէհմէտ Ալի գովեաց զնա եւ ասէ. եթէ դու անձնատուր լինէիր ինձ իբրեւ գերկչոտ կանացի ոք, եւ ոչ 'ի մարտ մտանէիր ընդ իս, զմահ քան զկեանս առաւել դասելով, ոչ զայս գութ եւ սէր չուչանէի քեզ, եւ ճանաչէի զքէզ իբրեւ թշնամի եւ անհաւատարիմ արքայի: Այլ որովհետեւ գտար հրամանաց նորուն լսող եւ հնազանդ, եւ նորուն հաճութեամբ եւ կամաւ զանձն քո եղիր 'ի կշիռ մահու, եւ զայսչափ ժամանակ պատերազմեցար ընդ իս ամենայն զօրութեամբ, սիրեցի զքեզ եւ գովեցի, եւ թողի զամենայն յանցանս քո, զոր յանցեար առ իս, լեր ապահով եւ ուրախ, եւ հաց արքայի մի պակասեցի 'ի քէն յաւիտեան:

Եւ այսպէս եկաց մնաց անդ Ապտուլլահ փաշա մինչեւ ցվախճան պատերազմին, եւ ապա եկն 'ի Կոստանդնուպօլիս:

## ԳԼՈՒԽ ԽԵ.

Յաղագս պատերազմի արքային ընդ Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի, եւ  
գալոյ Ռուսաց 'ի Կոստանդնուպօլիս 'ի պաշտպանութիւն արքայի:

(1833) Իսկ Իպրահիմ փաշա յետ առնլոյ զԱսկազոն, գնաց 'ի  
Յոպպէ եւ էառ զԵրուսաղէմ, եւ հնազանդեցուցեալ ընդ իւրով  
իշխանութեամբ գրորուտոն եւ զՄարօնիս, որք կոչին Տիւրքիք, եւ  
զՍրաբացիս այնր կողման, եկն եւ էառ զԱսուր եւ զՍուր, եւ  
զՏրապօլիս, եւ զԴամասկոս:

Յայնժամ խռովեցաւ արքայ, եւ խորհուրդ խորհեալ ընդ մեծի  
սպարապետին՝ որ էր Խոսրով Մէհմէտ փաշա, եհան բանակ հա-  
րիւր յիսուն հազար զօրաց, որոց սպարապետ կարգեաց զՀիւսէին  
Աղա փաշայն՝ տուեալ նմա զմեծամեծ արտօնութիւնս սպարապե-  
տութեան եւ խանութեան, եւ առաքեաց 'ի վերայ նորա:

Որոյ գնացեալ այսպիսի մեծաւ պատրաստութեամբ եհաս 'ի  
Բերիա, եւ մինչ 'ի վերայ հասանել կամէր Իպրահիմ փաշային,  
երկպառակութիւն անկեալ 'ի բանակի իւրում, բազումք 'ի զօրաց  
եւ 'ի զօրապետաց խոյս ետուն 'ի կողմն Իպրահիմ փաշային, եւ  
քաղաքացիք սկսան տրտունջ առնել եւ բողոք բառնալ ասելով,  
զի՞ է, զի աստ եկիք կոխան առնել զմեզ սովոյ՝ եւ ծարաւոյ՝ եւ  
հրոյ՝ եւ մահու, ոչ կամիմք մեք, զի հըրձիգ եղիցի քաղաքս, եւ  
աւերեսցի, եւ մեք մատնեսցուք 'ի բերան սրոյ, եւ աւարի թշնա-  
մեաց:

Տեսեալ Հիւսէին փաշա զցրուիլ զօրաց իւրոց եւ զչարակա-  
մութիւն քաղաքացեաց, որք զիտէին միաբան եւ անձնատուր լի-  
նել Իպրահիմ փաշային, եւ մատնել զքաղաքն 'ի ձեռս նորա,  
խռովեցաւ յանձն իւր, եւ քանիցս համոզեաց զզօրսն եւ զհազար-  
ապետսն, յորոց եւ զչորեսին գլխատեաց յահաբեկութիւն այլոց,  
բայց ոչ կարաց առնել ինչ, ուստի ել 'ի Բերիոյ, եւ դարձաւ յետս,  
եւ սկն յԱնտիոք, եւ անտի գրեաց զամենայն, որ ինչ եղեւն:

Յետ ելանելոյհիւսէին փաշայի 'ի Բերիոյ, եկն Իպրահիմ փա-  
շա, եւ էառ զԲերիա առանց կռուոյ ինչ, եւ անտի խաղաց պատե-  
րագմաւ 'ի վերայ Անտիոքայ:



Ձոր տեսեալ Հիւսէին փաշա, խոյս ետ յետս, եւ եկն յԻկոնիոն, զորոյ զհետ ընթացեալ եւ Իպրահիմ փաշա, եմուտ յԱնտիոք առանց կռուոյ, եւ նստաւ անդ:

Իմացեալ արքայի զայս ամենայն, ընկէց զՀիւսէի փաշա 'ի պատուոյ իւրմէ, եւ կացոյց սպարապետ զվէզիր Րէշիտ Մէհմէտ փաշայն, եւ հարիւր տասն հազար զօրաց բանակ կարգեալ եհան 'ի Կոստանդնուպօլսոյ, որոյ գնացեալ այսպիսի ահագին պատրաստութեամբ խաղաց 'ի վերայ Իպրահիմ փաշային, որ նստէրն մերձ յԻկոնիոն:

Եւ զի աւուրք ձմերան էին, եւ տիղմն ութ մատին բարձրութեամբ ճահիճ գործեալ էր յերեսս երկրին, որ ոչ թոյլ տայր ձիոց եւ երիվարաց յառաջել եւ խաղալ 'ի մրցմունս պատերազմին, եւ յաւուրն՝ յորում ժամ եղեալ էին պատերազմիլ, յանկարծ մէգ եւ մառախուղ իմն ծածկեաց զօրն հանդերձ խիտ առ խիտ բքովք ձեան, եւ արար գտիւն իբրեւ ըզ գիշեր անտեսանելի. մինչ զի եւ զօրքն 'ի բանակին ոչ կարացին տեսանել ոչ զմիմեանս եւ ոչ զթշնամիս իւրեանց:

Յայնմ աղէտալի պահուն՝ յորում գոռային երկինք 'ի յահեղ ձայնէ թնդանօթից եւ հուր վառօղոյ փայլատակէր շուրջ զբանակաւն, եհար փողս Իպրահիմ փաշա, ձայն ետ զօրաց իւրոց, եւ սկսան յառաջ խաղալ, եւ սրով եւ հրով կոտորել զբանակն արքայի, եւ փախուցանել, եւ 'ի գերութիւն վարել զբազմութիւն զօրացն, ընդ որս եւ նա ինքն մեծ սպարապետն Րէշիտ Մէհմէտ փաշայն ձերբակալալ եղեալ, կացուցաւ առաջի Իպրահիմ փաշային:

Իսկ Իպրահիմ փաշա յետ այսր յաղթութեան՝ եմուտ յԻկոնիոն, եւ անդ կարգադրեալ զզօրս իւր՝ յետ աւուրց ինչ ել անտի, եւ եկն հառ զԱտանա եւ զՍիս եւ զգաւառն Կիլիկիոյ, եւ անտի առաքեալ գունդս գունդս զօրաց 'ի յԱնատօլու, հնազանդեցոյց ընդ իւրով իշխանութեամբ զԳաղատիա, զՄաղնիսս, զԱյտըն, եւ զորս 'ի կարգին:

Եւ ինքն եկեալ հառ զԿուտինա (այն է Քէօթահեա), եւ անտի եկն 'ի Պիլէճիկ:

Իբրեւ մերձեցաւ 'ի Պրուսս, որ մօտ է 'ի Կոստանդնուպօլիս, անկաւ շշուռն մեծ 'ի մէջ Տաճկաց, որպէս թէ՛ Իպրահիմ փաշա 'ի դատաստան մտանելոց է ընդ արքայի, եւ նորոգելոց է զառաջին

կարգն Եկնիչէրիութեան, եւ ինքն լինելոց է փոխարքայ, եւայլն, եւայլն:

Եւ այսպիսի ստապատիր բանից կեղծութեամբ եւ հնարիւք խռովեցաւ քաղաքն, եւ սկսան սրիկայք Տաճկաց գլուխ ամբառնալ, խորհուրդ չարութեան խորհել, հրկիզութիւնս առնել, եւ զժամ գալստեան Իպրահիմ փաշային թուել եւ խնդրել, զի յարուցեալք յոտս, տացեն մահ արքայի եւ մեծամեծաց, եւ աւեր քաղաքին Կոստանդնուպօլսոյ:

Տեսեալ արքայի զայս ամենայն, խռովեցաւ, եւ զահի հարաւ յոյժ, զի ազգ է զօրք իւր՝ զորս խնամէր, դարմանէր, կերակրէր, եւ զգեցուցանէր, էին իւրեան մահախնդիր թշնամիք:

Ուստի 'ի խոր խոցեցաւ, եւ սկսաւ մտածել յոյժ, եւ գտանել զհնար ապրեցուցանելոյ զանձն եւ զթագաւորութիւն իւր:

Եւ յայսմ միջոցի ոչ ոք յազգէ իւրմէ՝ եթէ 'ի մեծամեծաց եւ եթէ յընթերցողաց՝ գտաւ նմա մխիթար եւ քաջալերող, միայն Պէզճեան Յարութիւն հաւատարիմն իւր եւ սիրելի՝ տեսեալ զնա 'ի խորին մտածութեան, ասէ ցնա, արքայ՝ յաւիտեան կաց, զանձանքին են կեանք քո 'ի վերայ երկրի, զոր եթէ կամիս, կարող ես ապահովս առնել 'ի կասկածանացդ՝ զոր խոկաս:

Ասէ ցնա արքայ, զի՞նչ խորհեցար վասն իմ: Պատասխանի ետ Պէզճեան Յարութիւն եւ ասէ ցնա, գրեա առ կայսրն Ռուսաց, որ այժմ դաշնադիր եւ բարեկամ է թագաւորութեան քում, եւ բերցես անտի զօրս Ռուսաց այսր 'ի Կոստանդնուպօլիս, եւ պաշտպանեսցեն զթագաւորութիւնդ եւ զքաղաքս:

Եւ մինչ վերջացին արհաւիրք պատերազմաց՝ եւ ապստամբութիւնք թշնամեաց, յայնժամ արձակեա զնոսա 'ի տեղիս իւրեանց:

Համոզեալ արքայի 'ի բանից աստի՝ կոչեաց իսկ եւ իսկ ըզ Խոսրով Սէզմէտ փաշայն զձերունի խորհրդատուն իւր, եւ պատմեալ նմա զայս ամենայն, հաւանեցաւ եւ նա այսր գիւտի խորհրդածութեան, եւ կոչեալ 'ի պալատն արքայի զղեսպանն Ռուսաց, խօսեցաւ ընդ նմա արքայ, եւ ետ գրել առ կայսրն զխնդիր իւր, եւ 'ի ձեռն շոգեհաւու եւ սուրհանդակաց՝ հասուցին փութանակի զգիրն 'ի Բետրբուրգ:

Ընթարցեալ կայսերն զխնդիր Սուլթան Մահմուտ արքայի, եւ 'ի ձեռն խորհրդականաց իւրոց բարիոք վարկուցեալ պաշտպանել զթագաւորն Օսմանեան 'ի թշնամեաց իւրոց, առաքեաց զտասն

Հազար զօրս՝ եւ գտասն եւ ութ պատերազմական նաւս մեծամեծս, կարգեալ նոցա սպարապետ զժէնէրալ Օրլօֆ այր Հզօր եւ բարձրահասակ եւ մեծիմաստ եւ խոհեմ յազգէ Ռուսաց:

Որոց եկեալ Հասին՝ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի յեօթն փետրվարի, որ առաջներորդ օր էր Գուրպան պայրմի Տաճկաց, եւ երեւեցան յանկարծ ՚ի ստորոտս Եռւշա լերին ՚ի մէջ նեղուցին բանակս կարգեալ, վրանս կազմեալ, տաղաւարս Հազարաւորս յօրինեալ, զոր տեսեալ ամենեցուն՝ որոց միտք ապստամբութեան էին, զարհուրեցան, եւ նոյն ժամայն փոխեցին զլեզու եւ զբանս իւրեանց ՚ի բարեմաղթութիւն արքայի:

Լուաւ եւ Իպրահիմ փաշա, որ նստէրն յայնժամ ՚ի Կուտինա, եթէ Ռուսք եկեալ են ՚ի Կոստանդնուպօլիս, զտեղի էառ անդէն, եւ գրեաց յԵգիպտոս առ Հայր իւր Մէհմէտ Ալի:

Եւ նա որսացեալ ՚ի կողմն իւր զԳաղղիացիս եւ զԱնգլիացիս, արար ինքեան պաշտպանս եւ դաշնագիրս:

Եւ նոքա գրեցին առ Սուլթան Մահմուտ, եւ խնդրեցին ՚ի նմանէ առնել զՀաշտութիւն. յայնժամ ՚ի մէջ մտին դեսպանք, եւ Համոզեցին զմեծամեծս տէրութեանն, եւ զարքայ իսկ այսու պայմանաւ, զի Ասկազոն քաղաք, եւ Երուսաղէմ, եւ Տրապօլիս, եւ Դամասկոս, եւ բերիա, եւ որք՝ ՚ի ծովն Պաղեստնու են, Անտիօք, եւ գաւառն Կիլիկիոյ, Սիս եւ Աստանա, լիցին ընդ իշխանութեամբ Մէհմէտ Ալիի եւ զտարեկան եկամուտս սոցա ըստ նախնի Հաշուին ամ յամէ վճարեսցէ Մէհմէտ Ալի ՚ի գանձս արքայի:

Ակամայ կամօք յանձն առեալ արքայի զայս պայման, վերջացոյց զպատերազմն, եւ լռեաց, այլում ժամանակի թողեալ զվրէժխնրութիւն այսր ամենայնի, զոր արար նմա Մէհմէտ Ալի:

Իսկ արքայ սէր եւ պատիւ ցուցեալ Ռուսաց, Հրաիւրեաց բազում անգամ ՚ի պալատ իւր զսպարապետ նոցին եւ զՀազապետս եւ զգճօրագլուխս, եւ արար նոցա սեղան:

Եւ ինքն եւս գնաց առ նոսա ՚ի բանակ նոցա բազում անգամ, եւ ետ նոցա առնել Հանդէս պատերազմի, եւ ետես ըինուորական կրթութիւնս նոցա, եւ գովեաց զնոսա, եւ ընկալաւ ՚ի նոցանէ խրախուրթիւնս մեծամեծս:

Եւ ՚ի միում գիշերի՝ որ օր էր ծննդեան կայսէրն Նիկողայոսի, ՚ի պատիւ անուան նորա արարին Ռուսք զՀանդէս լուսավառութեան ՚ի Պէօյիւքտէրէ առաջի պալատի դեսպանին Ռուսաց, յորում գտաւ եւ ինքն իսկ արքայ՝ եւ մեծամեծք իւր՝ բազմեալ ՚ի

վերին յարկի նորաշէն եւ ոսկեզօծ շոգենաւի իւրում. եւ յառաւօտուն՝ հրաիւրեաց արքայ զնոսա՝ ՚ի ծովեզերեայ յարկ Խոսրով Մէհմէտ փաշայի՝ ՚ի յէմիրկիւն կոչեցեալ գիւղն, եւ անդ պատրաստեաց նոցա կոչունս բազմախորտիկս եւ համադամս, շնորհեաց սպարապետի նոցա եւ զօրագլխաց զնշան ականակապ եւ մեծագին, եւ ամենայն սոսկական զինուորաց՝ զնշան արծաթի կնքեալ յանուն իւր եւ ՚ի թուղրա. մեծամեծ գոհութիւնս եւ բազում շնորհակալութիւնս տուեալ նոցա, գրեաց եւ զգիր շնորհակալութեան առկայսրն Նիկողայոս:

Եւ տուեալ ՚ի ձեռս սպարապետին, արար բարեմաղթութիւնս բազում եւ զվերջին հրաժարական ողջոյնն տուեալ նոցա, եւ անտի եւ զնաց ՚ի պալատ իւր:

Եւ նոքա ՚ի նմին աւուր զամենայն կահս եւ զկարակիս բանակին՝ եւ զզօրսն զամենայն՝ զետեղեալ ՚ի պատերազմական նաւս իւրեանց, ՚ի նմին գիշերի յաջողակ հողմով ելեալք ՚ի նեղուցէն՝ զնացին ամենեքին. եւ ընդ առաւօտն ոչ ոք տեսաւ անդր ՚ի տեղի բանակին եւ ոչ մի ինչ, միայն արձան մի մեծ կանգնեալ ՚ի բանակետղ նոցա ՚ի յիշատակ գալստեան նոցա:

Եւ այս միջոց գալոյ Ռուսաց ՚ի Կոստանդնուպօլիս եւ վերադառնալոյ նոցա՝ տեւեաց զամիսս վեց:

## ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս մահամերձ բանտարգելութեան ճանիկ եւ Մագսուտ եւ Խնդիր  
ամիրայից, եւ ազատութեան նոցին: Եւ յաղագս կաթողիկոսութեան տեառն  
Յովհաննու:

(1832) Երեւելի էր 'ի սմին ժամանակի ներքին քարտուղար  
եւ խորհրդակիցն արքայի՝ Մուստաֆա աղա, այր ագահ եւ շահ-  
ասէր, որ ետ շինել նաւս մեծամեծս վաճառականութեան, եւ  
տայր բերել յՕտէսայէ զցորեան, եւ 'ի Վալաքիոյ՝ զոչխար եւ  
զկով, եւ յինքն գրաւեալ 'ի տէրութենէն զբուրդ, զմետաքս, զա-  
փիոն, եւ զիւղ, ժողովէր բռնութեամբ դիւրագնոյ, եւ վաճառէր  
Եւրոպացի վաճառականաց բազմագնոյ, որովք հարստացաւ յոյժ,  
եւ լինելով սիրելի յոյժ յաչս արքայի՝ լինէր նախագահ եւ հրա-  
մայող ամենայն մեծամեծաց տէրութեանն:

Զսա ոչ կարելով տանել նոցա, գտին ժամ բարեպատեհ, եւ  
պատմեցին արքայի զգործս նորա, եւ պէսպէս բանաւոր պատ-  
ճառս 'ի մէջ բերեալ, կնքեցին զբան իւրեանց առ այս, եթէ այրս  
այս յաւեր եւ յաղքատութիւն եւ 'ի վերջին տնանկութիւն հասոյց  
զբնակիչս Անատոլուի եւ Բումէլիի ագահութեամբ իւրով: Զոր  
լուեալ արքայ, դժուարեցաւ յոյժ ընդ գործս նորա եւ հրամայեաց  
հանել զնա 'ի պալատէ իւրմէ, եւ ընկենուլ 'ի պատուոյն, եւ խրա-  
տուք Խոսրով Մէհմէտ փաշային եռուղեան փաշայութիւն  
տուալ նմա, առաքեաց զնա 'ի Թըրհալա:

Սմա հատավաճառ էր Մագսուտ Սարիմեան՝ եւ սիրելի յոյժ  
յաչս նորա, որով եւ արքայի իսկ եղեւ ծանօթ, բայց 'ի պատճառս  
նորա ստացաւ զբազում թշնամիս 'ի մեծամեծ նախարարաց տէ-  
րութեանն, նաեւ յագգէ մէրմէ:

Եւ յայսմ միջոցի ժամ բարեպատեհ վարկուցեալ Պէզճեանի,  
որ յոյժ սրտմտեալ էր ընդ դէմ Մագսուտայ յաղագս զանց առնե-  
լոյ նորա զպատուիրանաւ իւրով չմտանել 'ի դասս քահանայից 'ի  
ժամերգութեան, այնպէս հասկացոյց արքայի, որպէս թէ՛ զայն ա-  
մենայն չարիս՝ զոր արար Մուստաֆա, ուսուցանէր նմա հատա-  
վաճառ իւր Մագսուտ հայագգին:

Ուստի եւ հրամանաւ արքայի կոչեցին զՄագսուտ եւ զՏօ-  
րեղբարս նորին՝ զճանիկ եւ զխնդիր, ընդ որոց ունէր ընկերու-  
թիւն, եւ եղին 'ի բանտի փողերանոցին, եւ դատաւոր սոցին կար-

գեցաւ հրամանաւ արքայի՝ տեսուչ փողերանոցին Նաֆիզ Էֆէնտին, այր անգուլթ եւ անողորմ, չարասէր եւ ազաճ, որոյ նմանն չէր երբէք երեւեալ ՚ի բազում ժամանակաց հետէ:

Եւ կնքեալ զսենեակ նոցա, տարան ՚ի փողերանոցն զարկեղս նոցին եւ զհաշուեգիրս, եւ գրեցին զամենայն:

Եւ բազմացաւ չարախօսութիւն թշնամեաց զնոցանէ առ արքայ, եւ մերձ էր նոցա վտանգ մահու: Այլ ողորմութեամբն Աստուծոյ եւ փութաջան վաստակօք Պէգճեն Յարութիւն ամիրայի սիրելլոյ արքային՝ յետ երկոտասան աւուրց բանտարգելութեան իւրեանց ազատեցան եւ գնացին ՚ի տունս իւրեանց:

(1833) Յաւուրս յայսոսիկ եղեւ հրդեհ մեծ ՚ի Կոստանդնուպօլիս, ելեալ ՚ի Թիւֆէնքխանայէ առ ընթեր ձիպալիին, եւ յերկուս բաժանեալ, մի ծայր գնաց մինչեւ ՚ի Սիւլէյմանիյէ, եւ միւս՝ մինչեւ ՚ի Սուլթան Մէհմէտ, եւ վնաս բազումս հասոյց այլազգեաց:

(1833) Ի սմին ամի եւ Տէր Եփրեմ կաթողիկոս՝ կացեալ յաթոռ իւրում զամս քսան երկու, եհաս ՚ի խորին ծերուրութիւն, եւ անկեալ յուժոյ եւ ՚ի տեսութենէ, եւ կամովին հրաժարեալ յաթոռոյն, հաւանութեամբ կայսերն Նիկողայոսի՝ ընտրեցին զառաջնորդն Ռուսաստանո՝ զՏէր Յովհաննէս եպիսկոպոս Կարփեցի՝ եւ օծին զնա կաթողիկոս ՚ի մարտի 2, 1833:

Իսկ Եփրէմ կաթողիկոս առանձնացաւ ՚ի վանսն Հաղբատու, ուր կացեալ զամս հինգ՝ հանգեալ խաղաղութեամբ ՚ի Քրիստոս:

## ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս գործոց Պէգճեան Յարութիւն ամիրային, եւ մահուան նորին:

(1834) **Յ**այտոսիկ աւուրս հիւանդացաւ Պէգճեան Յարութիւն ամիրայ, զորոյ զմեծամեծ գործս եթէ հարկ լինէր գովել, կամ ներբողս ինչ յօրինել, լինէր մատեան իմն մեծ արտաքոյ կարգի պատմութեանս:

Այլ թողեալ զսա ճարտասանից մերոց, մեք 'ի համառօտն փութացեալ՝ որպէս պահանջէ կարգ պատմութեանս, ասացուք սակաւուք:

Իբր զի՝ էր սա այր քաջուշիմ եւ մեծախորհուրդ, որ թէպէտ չէր յազնուական զարմէ յառաջ եկեալ, այլ նախապատիւ հանդիսացաւ քան զամենայն ազնուականս, եւ որք յազնուական զարմէ էին սերեալք, 'ի սպաս սորա կարգեցան ծառայաբար:

Ձէր 'ի հարուստ եւ 'ի փարթամ հօրէ ծնեալ, այլ փարթամք եւ հարուստք առաջի սորա 'ի կարգս աղքատաց էին համարեալք:

Ձէր ճարտար հնարագէտ բնական եւ ուսումնական արուեստից, այլ համբաւ եւ մեծութիւն սորա գերագոյն հանդիսացաւ քան զճարտարապետս Ֆիզիզական եւ քիմիական արուեստից, եւ քան զհմտավարժս աշխարհագրութեան եւ վաճառականութեան տօմարաց:

Իսկ ո՞րով արդեօք եղեւ սա, ոչ այլով իւրիք, բայց եթէ իւրով մտավարժ դատողութեամբ, եւ քաջախորհուրդ խոհեմութեամբ, որով զամենայն իրաց զապագայս նկատելով զգուշացուցանէր զանձն 'ի ճախողակի պատահարաց, եւ յառաջադէմ գտանէր 'ի յաջող բարեբաղդութիւնս:

Ձի սա յառաջին ժամանակս կենաց իւրոց աղքատօրէն ապրեալ, յետ այնր մտանէ 'ի պաշտօն Տիւղեան Յովհաննէս չէլէպիի, եւ առ կենդանութեամբ նորին սիրելի եւ հաւատարիմ ցուցեալ նմա զինքն, մտանէ 'ի պաշտօն գործակալութեան փողերանոցին արտաքոյ 'ի դասէ սոսկական պաշտօնէից:

Ե՛ի յետ մահուան նորա նոյնպէս սիրելի եւ հաւատարիմ գտաւ Գրիգոր եւ Սարգիս պայազատացն, որք յաջորդեցին 'ի տեղի հօր իւրեանց, եւ սիրէլին զՊէգճեան Յարութիւն իբրեւ իւրեանց եղբայր եւ ազգակից:

Բայց յետ ամաց ինչ իբրեւ ետես, զի ազգականք նոցին՝ Մկրտիչ չէլէպի, եւ Յովհաննէս Ալէսքանեան, եւ Ազնաւուրեան Յովսեփ, եւայլն, սկսան վատնել զգանձս արքայի՝ ՚ի փառս իւրեանց՝ եւ շինութիւն ապարանից՝ եւ ծովեզերեայ յարկաց մեծամեծաց, զգացեալ զապագայ չարին որ ունէր հասանել ՚ի վերայ նոցա յարքունուստ, զգուշացոյց միանգամ եւ երկիցս զԳրիգոր չէլէպի, զի մի թոյլ տացէ սոցա առնել ըստ կամաց իւրեանց շուայութիւնս ՚ի գանձուց արքայի:

Եւ իբրեւ ետես, զի ոչ ազդեցին բանք իւր ՚ի լսելիս նորա, լաւ համարեցաւ ելանել ՚ի միջոյ նոցա, եւ մնալ առանձինն, զի մի ապա եւ ինքն զպատիժ պատուհասի կրեսցէ ընդ նոսին:

Ուստի եւ տուեալ նմա զհաշիւ իւր զամենայն, էառ ՚ի Գրիգոր չէլէպիէ զապահովագիր կնքեալ կնքովն վերատեսչի փողերանոցի Ապտրահման պէյին, յորում գրեալ էր, "Եթէ Յարութիւն մերս գործակալ զայսչափ ամս աշխատեցաւ ՚ի պաշտաման փողերանոցիս, եւ յամենայնի հաւատարիմ գտաւ, եւ այժմ ըստ կամաց իւրոց հրաժարեցաւ, եւ չէ իսկ պարտապան եւ ոչ մի ինչ փողոյ եթէ մեզ՝ եւ եթէ գանձուց արքայի, յորոյ ՚ի հաստատութիւն զայս մուրհակ կնքեալ տուաք նմա":

Առեալ զայս թուղթ Յարութիւն Պէզճեան, գնաց ՚ի տուն իւր յԻսկիւտար, եւ մնաց անդ:

Եւ յետ միոյ ամի իբրեւ այն սոսկալի եւ մահաբեր վտանգ կործանման տանն Տիւզեանց՝ պատահեցաւ նոցա ՚ի դիմաց արքայի, եւ ամենայն գործակալք եւ սպասաւորք Տիւզեանց եզան ՚ի բանտի, եւ աքսորեցան, Պէզճեան Յարութիւն ազատ գտաւ յայսմ աղետալի դիպուածոյ՝ իւրով իսկ կանխագուշակ խոհեմութեամբն:

Եւ փոխանակ ընդ նոսին զպատիժ պատուհասի կրելոյ՝ առաջնորդութեամբ Գրիգոր ամիրայի կոչեցաւ ՚ի տեղի նոցին նստիլ հրամանաւ արքայի գլուխ եւ ճարտարապետ մեծի փողերանոցի արքային՝ իբրեւ յամենայնի հաւատարիմ աւանդապահ ամենայն գանձուց տէրութեանն:

Եւ յայնմ օրէ սկսաւ Պէզճեան Յարութիւն ՚ի կարգի դնել զպէսպէս պաշտամունս գործակալութեան փողերանոցին, եւ զամենեցուն նոցա զգործս եւ զհաշիւս ինքն իսկ տեսանել աչօք իւրովք, եւ ոչ հաւատալ այլոց, զանհաւատարիմս հանել ըստ արժանւոյն տալ զապրուստ հացի եւ զգեստու:



Եւ որովհետեւ երեւելի էր յայնժամ Հալէթ էֆէնտի աւագ նախարարն արքայի, եւ հատաւաճառ նորին Խէսկէլ Հրեայն, երկօրին եւս արիւնարբու գազանք անողորմք, սա իւրով իսկ ընտանեկան քաղցր կենակցութեամբն եւ զգօնամիտ ուշիմութեամբն շահեցաւ զկամս նոցա, եւ եղեւ նոցա սիրելի մինչեւ ցչարաչար սատակումն նոցին գլխատամբ: Եւ յետ այնր 'ի ժամանակի խռովութեան եւ ապստամբութեան Յունաց՝ մինչ Եէնիչէրիք սկսան զՀայս եւ զՅոյնս սպանանել կողոպտել՝ աներկիւղ գոլով 'ի թագաւորէն, եւ յայնժամ եւս իւրով առատաձեռն տուչութեամբ շահեցաւ զգլխաւորս նոցին զամենայն, եւ ոչ եբեր անձին եւ տան իւրոյ վնաս ինչ՝ մինչեւ ցբարձումն նոցին յաշխարհէ:

Եւ յետ սոցա իբրեւ մի զկնի միոյ երեւելիք հանդիսացան սիրելիք արքայի, նախ Հիւսէին Աղա փաշայն, եւ յետ նորա եպարգոսն մեծ Րէշիտ փաշայն, եւ սպարապետն մեծ Խոսրով Մէհմէտ փաշայն, եւ քարտուղարն արքայի Մուստաֆա, զսոսա զամենեւին շահեցաւ Պէզճեան Յարութիւն որով եւ իցէ եղանակաւ, եւ եղեւ սիրելի յոյժ յաչս նոցա, եւ ոչ եթող նոցա առնել քսութիւն ինչ զինքենէ առ թագաւորն, եւ անկանիլ 'ի փորձութիւն:

Այս ամենայն զոր ասացաք համառոտաբար, մեծի խոհեմութեան են գործք արժանիք, զի զժամանակն նկատէր եթէ չար եւ եթէ բարի, եւ ըստ այնմ վարէր զընթացս իւր անփորձ գոլով յամենայն պատահարաց եւ արկածից կենցաղոյս:

Սիրելի եղեւ յոյժ յաչս արքայի, եւ ընկալաւ 'ի նմանէ ըզպէսպէս նշանս ականակապս եւ մեծագինս, յորոց միջի գերագոյն հանդիսացաւ Սիւրէթի Հիւմայուն կոչեցեալ նշանն, զոր վճարելոյ զմետասան միլիոն Վենետիկեան ոսկւոյն ըզպարտսն արքային՝ 'ի շահուց պղնձախառն արծաթի դրամին:

Եւ յայնմ օրէ հրամայեաց նմա արքայ գտանլ 'ի ժողովս արքունի խորհրդականաց տէրութեանն, եւ նախարարական պատուով հեծանել 'ի ձի եւ 'ի նաւ:

Հրամայեաց նմա եւ հանապազօր գալ առ ինքն 'ի զբօսել զարքայ, եւ տնտեսել զկերակուրս իւր:

Եւ 'ի միում աւուր 'ի մէջ ըմազանի ամսոյն առեալ շրջեցաւ արքայ ընդ նմա 'ի շուկայս Կոստանդնուպօլսի 'ի տես այլոց:

Եւ այսպէս գերագոյն հանդիսացաւ քան զամենայն մեծամեծս տէրութեանն, եւ սկսան ամենեքին երկիւղիւ խօսիլ ընդ նմա, եւ մեծ յարգութիւն եւ պատիւ ցուցանել նմա իբրեւ արքայի:

Իսկ ըստ հոգեւորին ընթացք սորա՝ թէպէտ Աստուծոյ են գիտելի, եւ խոստովանահօր քահանային, բայց զոր աչօք իսկ տեսանէաք եւ լսէաք, այս էին, զի առատաձեռն էր առ ամենեսին, մանաւանդ առ աղքատս որեւիցէ ազգի:

Սիրէր յոյժ կերակրել զսովեալս, զգեցուցանել զմերկս, ժողովել զօտարս, հանել 'ի բանտէ զարգելեալս, ազատել 'ի մահուանէ զպատժապարտս:

Որովք առաջի դրան տան իւրոյ եւ 'ի ճանապարհին բազում նեղեալք եւ փորձանաւորք անպակաս գտանէին հանապազօր, եւ զկարօտութիւն իւրեանց լնուին:

Առատաձեռն էր եւ 'ի շինութիւն եկեղեցեաց, աթոռոց, վանօրէից, եւ դպրատանց, զորս մի առ մի թուել երկարին բանքս, եւ ամենեցուն յայտնի իմն են. բայց 'ի մէջ ամենեցուն նոցա մեծապանծ հանդիսանայ շինութիւն Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի 'ի Խումխափու, յորոյ շինութեան ժամանակի ընկալաւ յԱրքայէ զհրովարտակ իմն, "Ջի գերեզման Պէղծեան Յարութիւն ծառայի իմոյ եղիցի 'ի մէջ եկեղեցւոյն 'ի Խումխափու":

Եւ այսու հրովարտակաւ ինքնին ետ շինել զգերեզման իւր 'ի կենդանութեան իւրում, եւ պատրաստել զինքն 'ի թաղումն նորին, որպէս եւ եղեւ 'ի մահուան իւրում:

Առատաձեռնեաց եւ 'ի շինութիւն սուրբ Փրկիչ եկեղեցւոյն հռովմէական Հայոց 'ի Ղալաթիա, բայց ոչ ետես զօծումն նորին, զի օրհաս մահուան յառաջեաց քան զայն:

Եւ ո՞ թուեսցէ զայնչափ անհամար ծախս քահանայական զգեստուց, եւ շապկաց դպրութեան, եւ արծաթի կանթեղաց, եւ ոսկեզօծ խաչից եւ աւետարանաց, եւ ամենայն սպասուց եկեղեցւոյ, զորս յօրժամիտ ոգևով տայր շինել անպակաս, եւ առաքէր յեկեղեցիս եւ 'ի վանորայս:

Առաքեաց եւ 'ի սուրբ Էջմիածին եւ 'ի Սիս՝ զաման միւռոնոյ արծաթի եւ ոսկեզօծ, եւ ընկալաւ 'ի նոցանէ զաղօթս եւ զօրհնութիւնս:

Արդ՝ յետ այսր ամենայնի մինչ կամք եղեն Ամենահաստիչ Բարձելոյն զերծուցանել զնա 'ի բազմավտանդ հոգոց եւ արկածից կենցաղոյս, եւ տալ սմա վայելել զյաւիտենական կեանսն, հիւանդացաւ ջրգողութեան ախտիւ, եւ չեղեւ ճար եւ օգուտ 'ի բժշկաց եւ 'ի դեղօրէից:

Գնաց 'ի հիւանդութեան իւրում եւ 'ի Պրուսա 'ի ջերմ բաղանիս, այլ ոչինչ օգտեցին նմա:

Եւ յետ ամենայնի զվախճան կենաց իւրոց ետես 'ի յՕրթագիւղ 'ի տան Բիշմիշեան պարոն Յովհաննու, ուր գնացեալ էր վասն առողջարար գոլոյ օդոյն:

Եւ ծանուցեալ արքայի զմահ սորին՝ ցաւեցաւ յոյժ, եւ աւաղ կարդաց նմա, եւ հրամայեաց, զի մեծահանդէս եղիցի թաղումն նորա, եւ բերեալ զմարմինն առընթեր պալատին արքայի 'ի նաւահանգիստն, դիցեն անտի 'ի նաւ, զի զվերջին տեսութիւնն կատարեսցէ արքայ:

Ուստի եւ Յակոբ չէլէպի Տիւզեան եկեալ, ազդ արար իշխանաւորաց ազգիս, եւ կատարեալ զկարգ թաղման, եղին 'ի դագաղն, յորոյ առաջի գնային Ստեփանոս պատրիարք, եւ Կարապետ եւ Աստուածատուր եպիսկոպոսունք, եւ 'ի վերջոյ քանիք ոմանք յիշխանաւորաց ազգիս, եւ տարեալ 'ի նաւահանգիստն անդ, եղին 'ի նաւ: Զոր տեսեալ արքայի 'ի պատուհանաց պալատին, ողբաց զմահ նորա:

Եւ ո՞ կարիցէ պատմել զանհամար բազմութիւն մարդկան, որք գտան յայնմ աւուր 'ի թաղումն նորա, սկսեալ յԵփեսոսէ 'ի դրանէ տան իւրոյ մինչեւ ցՄայր եկեղեցին 'ի Գուճգափու, Հայք, Յոյնք, Ֆրանկք, եւ Տաճիկք, արք եւ կանայք, յամենայն ազգաց խուռն բազմութիւն ժողովրդեան, մինչեւ չտալ անգս անցորդաց, եւ այր զարամբք ելանել:

Եւ մինչ մերձեցան յեկեղեցին 'ի Գուճգափու, եկեղեցականք Յունաց զգեստաւորեալք մոմեղինօք՝ ելին ընդ առաջ երգովք աղօթից, եւ մտին յեկեղեցին:

Եւ անդ որպէս սովորութիւն է ասել, եբաց Կարապետ եպիսկոպոս զբերան իւր ասել ճառ ինչ դամբանական 'ի թաղումն նորա, բայց ոչ կարելով լսելի առնել զձայն իւր բազմամբոխ աղաղակի ժողովրդեան, լռեաց, եւ սկսան կատարել զկարգ թաղման նորա, եւ եղին 'ի գերեզմանի իւրում առընթեր որմոյ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն 'ի մատուան Սուրբ Յարութեան Տեառն մերոյ, զոր նա ինքն ետ շինել 'ի կենդանութեան իւրում, եւ ապա արձակեցաւ ամբոխ ժողովրդեան 'ի տեղիս իւրեանց:

Զայս օրինակ մեծահանդէս թաղումն ոչ ոք 'ի ծերունեաց լուեալ եւ տեսեալ էր երբէք, եւ ոչ միումն յազգէ մերմէ պատահեալ 'ի վաղ ժամանակաց հետէ անտի, մինչեւ արքայի իսկ 'ի

տես բերել մարմնոյ մեռելոյն, եւ հրամանաւ նորին թաղիլ 'ի մէջ եկեղեցւոյ, եւ եկեղեցւոյն Յունաց ընդ առաջ ելանել 'ի թաղումն նորա երգոյ պաշտամամբք:

Մինչեւ համառօտիւ կամեցեալ ասել, որպէս միակ եւ անհամեմատ էր սա 'ի կենդանութեան իւրում, նոյնպէս եւ թաղումն նորա եղեւ միակ եւ աննման այլոց՝ յազգի մերում:

Իսկ վախճան կենաց սորա կարծեն լինելոմանք 'ի հակի եօթանասուն ամաց, բայց յայտ իսկ է, զի անցեալ էր նա զվաթանամենիւք. եւ թաղումն նորա եղեւ յամի Տեառն 1834, յերրորդ աւուր յունվարի 'ի պահս Մննդեան Փրկչին:

## ԳԼՈՒԽ Ծ.

Յաղագս օծման եկեղեցւոյն հռովմէական Հայոց եւ նորոգութեան եկեղեցեաց Հայոց, եւ յաղագս երեւելի դիպուածոց ինչ:

(1834) Յակոբ վարդապետ առաջնորդն հռովմէական Հայոց կացեալ զամս երկու եւ զամիսս ութ յառաջնորդութեան իւրում, վախճանի, եւ յաջորդէ նմա Յարութիւն վարդապետ 'ի միաբանութենէ Վեննայի վանիցն 'ի Փետրուարի 3:

Յաւուրս սորա կատարեցաւ շինութիւն սուրբ Փրկիչ եկեղեցւոյն հռովմէական Հայոց, զորոյ զհանդէս օծութեանն կատարեցին յամսեանն յուլիսի 14, յորում հրաւիրեցան եւ իշխանաւորք ազգիս Հայոց, եւ Նուրիճան Անտօն գերապայծառ կոչեցեալ մետրապօլիտ նոցա արար հանդէս մեծ 'ի նորաչէն եկեղեցւոյն, եւ մատոյց Պատարագ:

Ի սմին ամի եղեւ նորոգութիւն եւ բազում եկեղեցեաց Հայոց եւ Յունաց՝ եթէ 'ի յԱնատօլու եւ 'ի Բումէլի, եւ եթէ 'ի Կոստանդնուպօլիս, եւ զոմանս եւս նորոգ հիմնադրեալ կառուցին, յորս ոչ գոյր եկեղեցի:

Իսկ 'ի Կոստանդնուպօլիս եղեւ օծումն նորոգեալ եկեղեցեաց Հայոց 'ի ձեռն Ստեփանոսի պատրիարքին, որք են այսոքիկ: Օծումն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն Ենիգիւղի 'ի յուլիսի 24: Օծումն սուրբ Նշան եկեղեցւոյն յԱլէմտաղի 'ի յուլիսի 29: Օծումն սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Պէյխօզի 'ի սեպտեմբերի 16: Օծումն սուրբ Խաչ եկեղեցւոյն Խուրուչէշմէյի 'ի նոյեմբերի 16: Օծումն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն Ղալաթիոլ 'ի դեկտեմբերի 11:

Եւ յայսմ ամսեան 'ի դեկտեմբերի 21 կոչեցան պատրիարքունք Հայոց եւ Յունաց, եւ առաջնորդն հռովմէական Հայոց 'ի պալատն արքայի, յորում ներկայացեալ էին եպարզոսն մեծ Բաղուպ փաշայն, եւ մեծ սպարապետն Խոսրով Մէհմէտ փաշայն, եւ փեսայ արքային Խալիլ փաշա, եւ այլ եւս վիւզէրայք եւ մեծամեծք տէրութեանն:

Եւ առաջի աչաց նոցա պարգեւեաց արքայ այսց չորից ազգապետաց զնշան ահանակուռ լինել նշան ազգապետութեան, եւ զգեցոյց զվերարկու 'ի պատուական չուխայէ հարվանի կոչեցեալ, եւ առաքեաց շքով 'ի տեղիս իւրեանց:

Յետ երկուց ամսոց ընկալաւ եւ ըստ ընկալեալ տնայնացեալ շրջից (այն է խախտմամբ) նշան ականակողն ազգապետութեան յարքունուտ, եւ դարձաւ 'ի տեղի իւր:

(1835) Իսկ յետ չորից ամսոց վախճանեցաւ առաջնորդն հռովմէական Հայոց Յարութիւն վարդապետ, կացեալ յառաջնորդութեան իւրում զամիսս երեքտասան, եւ այն նշանն ազգապետութեան վերադարձաւ 'ի դուռն եպարգոսին, եւ յետ հնգետասան աւուրց յաջորդեաց Սերովբէ վարդապետ 'ի միաբանութենէ Վեննայի վանիցն, եւ գնացեալ 'ի դուռն եպարգոսին՝ ընկալաւ զնշանն, եւ դարձաւ շքով յառաջնորդարան իւր:

(1835) Յաւուրս յայտոսիկ արքունի ճարտարապետ Յովհաննէս աղայն ընկալեալ զհրաման յարքայէ, կառոյց զեկեղեցի իմն փոքրիկ եւ վայելուչ 'ի Գուգկունճուք կոչեցեալ գիւղն՝ յանուն Սրբոյ Հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչին՝ 'ի յիշատակ հոգւոյ Հանգուցեալ աներոյ իւրում՝ արքունի ճարտարապետ Գրիգոր ամիրային, եւ փառաւոր օծումն նորա կատարեցաւ 'ի մայիսի 11, 1835, եւ եղաւ օր տօնախմբութեան եկեղեցւոյն կատարել ամ յամէ յաւուր տօնի ելիցն 'ի վերապէն Սուրբ Լուսաւորչին:

Որովհետեւ գոյ եւ այլ իմն եկեղեցի Հայոց 'ի Ղալաթիա յանուն Սուրբ Լուսաւորչին, եւ տօն նորա կատարի յաւուր տօնի գիւտի նշխարաց Սրբոյ Հօրն:

Յաւուրս յայտոսիկ եղեւ նորոգութիւն եւ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն Պալատու, եւ օծումն նորա կատարեցաւ 'ի սեպտեմբերի 7:

(1835) Ի սմին եղեւ երկրաշարժութիւն ահագին 'ի Կեսարիա Կապադոկիացւոց, որ սկսեալ յառաջներորդ օրէ օգոստոսի՝ տեւեաց զամ մի ողջոյն, եւ արար վնաս բազումս 'ի քաղաքին, եւ առաւել եւս 'ի գիւղօրէս, յորոց եւ գերկուսն կառոյց իբրեւ անապատ ամայի եւ անմարդաբնակ, կործանեաց զտունս բազումս, զքարուկիր շինուածս, զմզկիթս եւ զբաղանիս, փլոյց եւ զորմունս պարտիզի սուրբ Կարապետի վանիցն, եւ զքանի ինչ սենեակս միաբանից:

Եւ յայսմ երկրաշարժութեան մեռան անձինք 'ի Կեսարիա եւ 'ի գիւղօրէս նորին ըստ ոմանց եօթն հարիւր, եւ ըստ այլոց հինգ հարիւր, եւ ըստ պատմելոյ առաջնորդի նորուն տեսուն Յակոբայ վարդապետին՝ երեք հարիւր երեսուն ոգիք:

Ի վախճան տարւոյս յամսեանն ղեկտեմբերի 20, յաւուր ուրբաթու յանկարծ հնչեաց փոթորիկ իմն բքաբեր՝ ճիւնալից՝ եւ սաստկաշունչ, եւ արար զտիւն իբրեւ զգիշեր անտեսանելի, եւ ալեկոծութիւն մեծ ՚ի ծովու, եւ վարեաց զնաւս բազումս ՚ի նեղուցէն Կոստանդնուպօլսոյ ՚ի ծովն Պրոպոնտոսի, ընդ որս եւ երկուքորք Երկանեան Յարութիւն ամիրայի, եւ դուստր մի Պետրոս աղայի, եւ կին ոմն ընկերակից նորուն, եւ աղջիկ մի յոյն, եւ այր ոմն սասաւոր, եւ երկու նաւավարք ութեքին սոքա նաւակոծեալք անյայտ եղեն մինչ զի եւ բեկորք նաւուց նոցին չերեւեաց ուրեք երբէք:

(1836) Ի սմին ամի պատահեաց եւ այսիպիսի ինչ դիպուած որ չէր երբէք լեալ մինչեւ ցարդ, որոյ եւ սահմանիչ հեղինակն վայելէ անդադար զանէծս ՚ի բիւրաւոր մարդկանէ:

Իբր զի արքունի հրամանաւ բերին զմանկունսն յազգէ մերմէ ՚ի կողմանց Կարնոյ՝ եւ Սեբաստիոյ՝ եւ այլոց քաղաքաց Անատօլուի, ծառայեցուցանել զնոսս ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի յիբլիքխանէն եւ ՚ի նաւարանն արքայի, ՚ի գործ մանուածոյ կտաւուց առագաստից, եւ ծեծել զհրավառ զերկաթ:

Եւ միայն հանդերձ եւ հաց հրամայեցաւ տալ նոցա առանց թոշակի եւ ամսականի:

Եւ այս հրաման ամ յամէ նորոգի մինչեւ ցայսօր, եւ յամենայն քաղաքաց ժողովեն հարիւրաւոր մանկունս հայազգիս զրկելով ՚ի ծնողաց եւ ՚ի հայրենեաց նոցա, եւ երեսնօրեայ ճանապարհ հետեւակ ոտիւք ընթացուցեալք մերկ եւ պատառատուն զգեստովք՝ բերեն ՚ի Կոստանդնուպօլիս, յորոց բազումք մեռանին խղճութեամբ ՚ի բռնութենէ գործակալաց նոցա, եւ ոմանք յեղաշրջին ՚ի Մահմէտական օրէնս յուսով ազատութեան:

Եւ զայս չար աղէտ բազմատագնապ վտանգիս ոչ ոք յիշխանաւորաց մերոց կարաց ՚ի բաց վտարել յազգէ իւրմէ, տէր այց արասցէ նոցա եւ մեզ:

Ի սմին ամի եղեւ հրդեհ եւ ՚ի Յիշէնքխանէն Խիսգիւղի, եւ ՚ի փայլատակմանէ վառօդոյն հրկէզ եղեն հարիւրաւոր անձինք, որք ծառայէին անդր ՚ի պաշտօն արքայի:

## ԳԼՈՒԽ ԾԱ.

*Յաղագս Հարսանեաց դատերց արքայի, եւ թլփատութեան որդւոց նորին, եւ յաղագս ճանապարհորդութեան արքունի վառօդապետ Յովհաննէս ամիրայի յԵւրոպիա, եւ վերադարձման նորին:*

**Յ**առաջ քան զամս երկուս յամին 1834 արար արքայ Հարսանիս 'ի Տօլմապաղչէ սարային, եւ զՍալիհէ կոչեցեալ դուստր իւր ետ 'ի կնուծիւն Խալիլ փաշային, որ էր որդեգիր մեծի սպարապետի Խոսրով Մէհմէտ փաշային:

Եւ զաւուրս Հնգետասան տեւեաց այս Հանդէս Հարսանեաց երգոց նուագարանաց՝ եւ պէս պէս խաղուց, վառելով կանթեղս զգիշերն ողջոյն 'ի դրունս տանց եւ առաջի կրպակաց եթէ 'ի Կոստանդնուպօլիս եւ եթէ 'ի գիւղօրէս, եւ արձակէին 'ի պալատէ արքային եւ մեծամեծաց՝ եւ պատերազմական նաւուց զփամփուշտս բազմատեսակս եւ օգաթօռիչս. իսկ 'ի ցերեկի բազմութիւնք յամենայն ազգաց ժողովէին 'ի Տօլմապաղչէն, յորում խաղային լարախաղացք Տաճիկք եւ Եւրոպացիք զանազան զարմանասքանչ խաղուց տեսակօք:

Ընդ այս ոչ շատացեալ արքայի, 'ի սմին ամի արար Հարսանիս 'ի նմին պալատի Տօլմապաղչէին, եւ զՄիհրիմահ կոչեցեալ դուստր իւր ետ 'ի կնուծիւն Սայիտ փաշային, որ էր իւր վաղեմի սպասաւոր 'ի պալատն արքայի, եւ զաւուրս երկոտասան նոյն օրինակ եւ աւելի եւս Հանդէս Հարսանեաց կատարեաց 'ի տես եւ 'ի զուարճութիւն սրտի ամենեցուն:

Հրաւիրեաց արքայ 'ի Հարսանիս իւր զդեսպանս ամենայն Եւրոպական թագաւորութեանց, եւ զերեւելի վաճառականս նոցին, եւ զպատրիարքունս Յունաց, Հայոց, հռովմէական Հայոց եւ զրաբունապետն Հրէից, եւ զերեւելի հատավաճառս 'ի Հայոց եւ 'ի հռովմէական Հայոց, եւ սոցա ամենեցուն յորոշեալ աւուրս պատրաստեաց արքայ սեղան բազմախորտիկ եւ համադամ, իսկ Հրէից եղ առաջի զսեր եւ զչաքար եւ զհաց միայն ըստ խտրութեան օրինացն թալմուտին:

Յետ երկոտասան աւուրց Հարսանեաց՝ արար արքայ Հանդէս Հարսանեաց եւ 'ի Քեաղատխանէ, եւ զերկոսին որդիս իւր զԱպտ իւլ Մէճիտ եւ զԱպտ իւլ Ազիզ ետ թլփատել 'ի Հանդիսին ըստ օրինաց իւրոց, ընդ նոսին եւ զբազմութիւն որդւոց այլազգեաց



չեւ եւս թլփատելոց՝ ետ բերել անդր 'ի Քեաղտխանէն, եւ պատրաստեալ նոցա տեղի վրանածեւ՝ եղ թլփատել զամենայն:

Տեսեալ արքայի զխրախուլթիւն մանկանց այլազգեաց՝ որք տօն ցնծութեան կատարէին անհամեմատ բերկրութեամբ, եւ զգուարճութիւն ծնողաց նոցին եւ ընտանեաց, ոչ կամեցաւ բարեփառ արքայն, զի մանկունք քրիստոնէից ազգաց հպատակաց իւրոց գտանիցին անմասն եւ զուրկ 'ի խրախուլթենէ յայսմանէ:

Ոստի հրամայեաց, զի եւ մանկունք Յունաց, Հայոց, հռովմէական Հայոց եւ Հրէից, որք տակաւին յընթերցանութեան պարապին 'ի դպրատունս, եկեսցեն հանդերձ վարժապետօք իւրեանց 'ի հարսանիս արքային:

Եւ առին վարժապետք զմանկունսն եւ գնացին 'ի Քեաղտխանէն, եւ սփռեցան 'ի ներքոյ վրանաց 'ի ծաղկալից մարգագետնին, եւ պատրաստեցաւ նոցա բլիլաւ շաքարախառն քրքմով եւ մեխակաւ, իսկ Հրէից միայն սեր եւ շաքար:

Եւ իբրեւ օրն ընդմիջէր, հրամայեաց արքայ, եւ սկսան ելանել 'ի թափօր եկեղեցական զգեստօք յառաջոյ՝ Յոյնք, եւ ապա Հայք, եւ յետ նոցա Հռովմէականք, եւ մի զկնի միոյ դասաւորեալք յերկուս դասս, երկու վարդապետք եղենյառաջընթացք կարգին, եւ ապա մանկունք, եւ առերի նոցին վարժապետք եւ խալֆայք, եւ ելին 'ի թափօր շուրջ զպալատաւն 'ի տես արքայի եւ ամենայն մեծամեծաց:

Հայք եւ Հռովմէականք ունէին յօրինեալ երգս 'ի բարեմաղթութիւն արքայի, զոր գեղեցկածայնքն երգէին, եւ այլք զամէնն կարդային:

Իսկ Յոյնք միահամուռ ամենեքին աղաղակէին առանց երգոց ինչ միայն "ամին", եւ ունէին 'ի ձռին տերեւս դաբնեաց, որ մեռելոցն են զարդարանք, նոյնպէս եւ Հրէայք միայն զամէն աղաղակէին խառնիխուռն ձայնիւ:

Լուաք ապա 'ի մերձաւորաց արքայի, զի արքայ զուարճացեալ էր ընդ բարեկարգ օրհնեղութիւնս Հայոց եւ Հռովմէականաց, եւ խոժոռեալ է ընդ խառն աղաղար Յունաց եւ Հրէից:

Եւ յետ աւուրց ինչ ել պարգեւ յարքայէ, եւ մի ոմն յաւագորերոյ՝ արքունի դրանն շրջեցաւ ընդ ամենայն դպրատունս Յունաց, եւ Հայոց եւ Հռովմէականաց եւ Հրէից 'ի Կոստանդնուպօլիս եւ յիւսկիւտար եւ յամենայն գիւղօրէս նեղուցին, եւ ետ ամենեցուն ձեռամբ իւրով զպարգեւսն արքայի, մէն մի մանկանց՝ երեք

դահեկան, եւ խալֆայից՝ քսան եւ հինգ դահեկան, եւ վարժապետաց յիսուն դահեկան, եւ գրեալ զհաշիւ ամենեցուն սոցա՝ տարաւ առ արքայ:

Ընկալայ եւ ես պատմագիրս զյիսուն դահեկան ըստ պաշտօնի իմում, որ պարապէի ՚ի դասատուութիւն հայկաբանութեան յԱռաքելոց կոչեցեալ ուսումնարանին ՚ի Ֆէնէր թաղին Կոստանդնուպօլսոյ:

Եւ օրհնեցաք զարքայ եւ զորդիս նորա եւ զմեծամեծս տէրութեանն, եւ յօրհնեցաք բազմատեսակ երգս բարեմաղթութեանց վասն կենաց արքայի:

(1836) Ի սմին ամի արար արքայ եւ այլ իմն գործ արժանի յիշատակաց, եւ ընկալաւ յամենեցուն զաղօթս եւ զօրհնութիւնս:

Իբր զի՝ ետ շինել եւ կանգնել կամուրջ մեծ ՚ի վերայ ծովու, անցանել ՚ի Կոստանդնուպօլսոյ յՈւնիսաբանի դրանէն ՚ի Ղալաթիոյ Ազապ գափուսի կոչեցեալ դուռն, որ մեծ դիւրութիւն եւ օգուտ եղեւ հասարակութեան՝ ոչ միայն հետեւակ մարդկան, այլ եւ հեծելոց՝ եւ մեծամեծ սայլից եզանց, եւ թնդանօթից կառաց, անցանել դիւրաւ առանց ծախուց ինչ ՚ի Կոստանդնուպօլսոյ ՚ի Ղալաթիա, մանաւանդ զի՝ բարձան այնուհետեւ սոսկալի դիպուածք նաւակոծութեան յայնոսիկ կողմանս, ուր ՚ի շնչելոյ կատաղի հողմոց լինէին երբեմն այնպիսի աղետալի պատահարք:

Յաւուրս յայտոսիկ պատահեաց հրդեհ մեծ ՚ի Սուլթան Պայագիտ, որ ոչ սակաւ վնասս հասոյց Հայագգի թիւլպնէնտի կոչեցեալ վաճառականաց, այրելով զկրպակս եւ զինչս նոցին զամենայն:

(1836) Ի սմին ամի արքունի վառօդապետն Յովհաննէս, որ սիրելին էր արքայի վասն զգօնամիտ եւ հանճարարուեստ գիւտից իւրոց, եւ ունէր գտեղեկութիւն Հայկական եւ Գաղղիական լեզուին, եւ հմուտ եւ վարժ էր բնական արուեստից եւ գիտութեանց, որովք ետ շինել զզանազան գործիս եւ զմեքենայս զարմանաւորս ՚ի վառօդարանն արքունի, եւ հաճոյ եւ սիրելի եղեւ յոյժ արքայի եւ մեծամեծաց տէրութեանն, մանաւանդ զի եւ ինքն գոլով այր հեղ եւ բարեպաշտ եւ երկրիւղած յԱստուծոյ՝ ընդ ամենեցուն սիրով եւ քաղցրութեամբ կենակցէր եւ ընտանենայր, եւ հաճոյ էր յաչս ամենեցուն:

Սա խնդրեաց յարքայէ, զի յատուկ հրամանաւ եւ յանճարարական թղթով նորին շրջեսցի յԵւրոպիա ՚ի գործարանս բնական

արուեստից Եւրոպական թագաւորութեանց, զի տեղեկութիւն ստասցի բազմաց հարկաւոր գիտելեանց, զի տեղեկութիւն ստասցի բազմաց հարկաւոր գիտելեաց շուրջ ըզ նոքօք, եւ կամ զթերին իւր լցուսցէ ակն յանդիման տեսութեամբ եւ փորձառութեամբ, զի այլ է ընթեռնուլն եւ տեսականին միայն հմտանալն, եւ այլ է փորձով իսկ եւ զգալի աչօք ճանաչելն եւ գիտելն. եւ զայսոսիկ ուսեալ ապա վերադարձցի 'ի Կոստանդնուպօլիս եւ 'ի կիր արկցէ զնոսին ըստ օրինակի Եւրոպացւոց յօգուտ եւ 'ի փառս Օսմանեան թագաւորութեան:

Ուրախացեալ արքայ ընդ այս բարեմիտ յօժարութիւն նորին, որ յօգուտ տէրութեանն յանձն առնու ճանապարհ առնել ընդ այսչափ հեռաւոր աշխարհս, գովեաց զբարեխոհ յառաջադիմութիւն նորին, եւ ետ նմա նշան ականակապ ունել յարածամ 'ի կուրծս իւր, եւ գիր յանձնարարութեան առ թագաւորութիւնս Գաղղիացւոց եւ Անգլիացւոց եւ առ կայսրն Աւսթրիոյ, խնդրելով 'ի նոցունց, զի մի զլասցին 'ի ցուցանլոյ Յովհաննու հաւատարիմ ծառայի իւրում հայկազնոյ զամենայն՝ զոր միանգամ անձնկայ տեսանել եւ հարցանել եւ զփորձ առնուլ:

Գնացեալ Յովհաննու վառօդապետի այսպիսի շքով, շրջեցաւ յիտալիա, 'ի Գաղղիա, եւ յԱնգլիա, եւ ետես 'ի նոցանէ պատիւս եւ ընդունելութիւնս, եւ ստացեալ բազմատեսակ ծանօթութիւնս հարկաւոր գիտելեաց բնական սկզբանց եւ նիւթոց՝ եւ որ այլ եւս կարեւորքն էին իւրում իսկ արուեստի վառօդաշինութեանն, եւ մեծաւ պատուով վերադարձաւ 'ի Կոստանդնուպօլիս:

Եբեր ընդ իւր եւ զգանազան գործիս հրաշաւորս 'ի տես արքայի, ընդ որ ուրախ լեալ արքայ, յաւել զպատիւ եւ զարտօնութիւն նորա:

(1837) Յայսմ յամի Աստուածիմաստ եւ բազմերախտ Հայր մեր Գրիգոր վարժապետ Փէշտըմալճեան կնքեաց զցաւալի կեանս իւր 'ի հասակի վաթսուն եւ չորից ամաց. եւ ձեռագիր մատեանք նորա՝ որք թանկագին էին վասն հնութեանն, յափշտակեցան 'ի Փափագեան ճանիկ ամիրայէ բռնութեամբ, տուեալ միայն 500 դահեկան:

(1838) Ի բազում ամաց հետէ ոչ պակասէր 'ի Կոստանդնուպօլսոյ եւ 'ի շրջակայ գիւղօրէից նորին ժանտամահ հիւանդութիւնն, որ զամս քսան եւ վեց անընդհատ առնոյր իւր զոհս հարիւրաւոր եւ հազարաւոր մանկամարդաց եւ երիտասարդուհեաց

յամենայն ազգաց, եւ երբեմն եւս չափաահասից եւ ծերունեաց, եւ չէր սմա հնար բարձման կամ խափանման, եւ կամ դեղ ապաքինութեան. 'ի ձմերան փոքր ինչ մեղմանայր, եւ յամարան սաստկանալով սաստկանայր եւ յաճախէր: Ուստի նախարարք տէրութեանն խրատեալք ՅԵՆՐՈՎԱԳԼՈՅ ազգաց, համոզեցին զարքայ, եւ հրամանաւ արքայի ձմերանոցն Չէնկէլ գիւղի եղեւ քառասնապահ զգուշութեան նաւուց եկելոց 'ի Պոնտոսէ, եւ ծոցն Քիւչիւք չէքմէճէի՝ եկելոցն 'ի Մարմայէ. շինեցան եւ այլ եւս քառասնապահք վասն եկելոց յԱսիակողմանց եւ յԵՆՐՈՎԱԿՈՂՄԱՆԿ, եւ ել հրաման ամենայն ազգաց չթաղել զմեռեալս իւրեանց 'ի զգուշութիւն 'ի ժանտամահէ, մինչեւ ոչ քննեսցեն կարգեալ բժիշկք զախտ եւ ըզհիւանդութիւն մեռելոյն. եւ այսու օրինակաւ մեռեալքն 'ի նոյն ախտէ առանց յուղարկաւորութեան հանդիսի միով յառաջընթաց քահանայիւ եւ չորիւք մեռելաթաղիւք ոմամբք տարեալ թաղէին, եւ ընտանիք նոցին մնային 'ի քառասնօրեայ զգուշութեան անմերձենալի յումեքէ. եւ սկսաւ մեղմանալ եւ պակասիլ ախտն չար եւ տարափոխիկ 'ի մայրաքաղաքէս եւ անհետ լինել յօրէ յայնմանէ մինչեւ ցայսօր:

(1838) Ի սմին ամի նորոգեցաւ 'ի հիմանց սուրբ Երրորդութեան եկեղեցին Հայոց 'ի Պէյօղլու չքնաղ եւ վայելուչ քարուկիր շինուածով, զորոյ զհանդէր օծութեանն կատարեաց Ստեփանոս պատրիարք 'ի յունիսի 18 հանդերձ երկու եպիսկոպօսք եւ եօթն վարդապետօք:

Յայսմ ամի եւ չորեք տասնամեայ կոյս աղջիկ մի հայագգի Վառվառ անուն Աշխարօվացի յափշտակեալ 'ի Մահմէտականաց տեղւոյն վասն գեղեցկութեանն, եւ զրպարտեալ առաջի դատաւորին Տաճկաց, եթէ խոստացաւ աղջիկս այս ընդունել զՄահմէտական կրօնս մեր, եւ յոչ առնուլ նորա յանձն՝ մատնեալ անտանելի չարչարանաց եւ բանտարգելութեանց վասն 'ի Քրիստո հաւատոցն, եւ հուսկ յետոյ աղերսանօք պատրիարքին բերեալ 'ի Կոստանդնուպօլիս, ածաւ յատեան մեծի վէզիրին, եւ անդ եւս խոստովանեալ զՔրիստոս, աքսորեցաւ 'ի Պրուսա, բայց յետ վեցից ամսոց միջնորդութեամբ Մագսուտ ամիրայի գերծեալ յաքսորանացն ամուսնացաւ ընդ Հայոց ուրումն 'ի Խասգիւղ:

## ԳԼՈՒԽ ԾԲ.

Յաղագս շինութեան ճեմարանին Իւսքիւտարու, եւ պատրիարքութեան Յակովբոսի:

(1838) Երեւելի էին 'ի սմին ժամանակի արքունի ճարտարապետք Կարապետ ամիրայ Պալեան եւ Յովհաննէս քեռայր նորին, երկոքին եւս ազգասէրք եւ ուսումնասէրք յոյժ, որք ցանկայլին բարեկարգ յառաջադիմութեան եւ զարգացման դպրոցաց յուսմունս կարեւորս եւ պիտանիս եւ 'ի գիտութիւնս հաւատոյ եւ բարի վարուց: Տեսեալ սոցա, զի չունէր ազգ մեր զգիշերօթիկ դպրոց իմն որպէս ունէին Յոյնք եւ Լատինք, եւ վասն այն յամը ընթանայր ուսումն դպրոցաց, եւ չէր մարթ 'ի ձեռս բերել զբաղձացեալն յառաջադիմութեան յո եւ իցէ դպրոցի, թէպէտ գանձք բազումք վատնէին յիւրաքանչիւրս 'ի նոսա եւ առաւելապէս 'ի նասագիւղ եւ յՕրթագիւղ:

Ուստի խորհուրդ արարեալ ընդ իշխանաւորաց Հայոց եւ ընդ պատրիարքին, գրեցին եւ հաճեցուցին զԳաբրիէլ պատրիարք սրբոյն Սաղիմայ՝ եւ զՊօղոս սրբազան փոխանորդ նորին, շնորհել ազգին զվանսն Երուսաղէմայ՝ որ էր յԻւսքիւտար, եւ նորոգեալ զնա 'ի հիմանց՝ կնգնեցին դպրոց մի մեծ եռայարկ եւ բազմասենեակ, եւ պատրաստեալ զամենայն կարեւոր հանդերձանս եւ զպիտոյս խոհանոցին եւ անկողնոցն եւ որ 'ի սոցուն սակի, ընտրեցին եւ զգասատուս հայկաբանութեան, գաղղիական լեզուի, թուաբանութեան եւ քանակաբանութեան, եւ եղեալ զանուն նորին՝ "Ճեմարան սուրբ Երուսաղէմայ", որոչեցին 'ի դպրոցաց իւրաքանչիւր թաղից զվարժեալսն 'ի նախակրթական ուսմունս՝ զտղայս ուշիմս եւ մտավարժ յիսնիւ չափ, եւ կարգադրեալ զնոսա զամենեսին յիւրաքանչիւր սենեակս եւ զվերակացուս նոցին եւ զսպասաւորս եւ զպահապանս, եւ զտնօրէն նոցա ամենեցուն, սկիզբն արարին դասատուութեան մանկանց յիններորդ աւուր դեկտեմբերի 1838:

Իսկ վասն եկամտից ճեմարանին՝ որ բազում ծախուց պէտս ունէր յիւրաքանչիւր ամսեան, որոչեցին վասն աղքատ մանկանց առնուլ 'ի տարւոջ հարիւր քսան հազար դահեկան 'ի սրբոյ աթոռոյն Երուսաղէմայ, որ բարեհաճեցաւ վճարել. եւ 'ի փարթամ

տղայոց երեք հազար դահեկան առ մէն մի տղայ հանդերձ ամառան եւ ձմերան զգեստուք նոցին: Այս եկամուտ չէր ինչ հաստատուն եւ մշտնջենաւոր, զի 'ի կամս ապաստանեալ էր տուողին. որ եթէ այսօր կամի, տայ, եւ 'ի վաղիւն եթէ չկամի, ոչ տայ, եւ յայնժամ եկամուտն պակասէ. վասն որ կեանք ճեմարանին յոյժ կարճ եղեն, որպէս տեսցի 'ի ստորեւ:

(1839) Զայսու ժամանակաւ նորազանգ քարոզիչք Ամերիկացւոց՝ որք 'ի վեց ամաց հետէ եկեալ էին 'ի Կոստանդնուպօլիս քարոզել եւ տարածել զաղանդ իւրեանց՝ պատճառաւ ուսուցանելոյ մանկանց ճրիաբար զլեզուն Անգլիերէն, զաշխարհագրութիւն եւ զթուաբանութիւն, եւ զայլ ուսմունս կարեւորս եւ զպիտանիս, բացին զգիշերօթիկ դպրոցս 'ի Բերա եւ 'ի Պէպէք գիւղ, եւ հաւաքեցին 'ի նոսա աշակերտս բազումս ըստ մեծի մասին 'ի Հայոց. որոց առ սակաւ սակաւ գաղտնի հնարիւք խորամանկութեան իւրեանց ջամբէին զթոյն մուր վարդապետութեան կաթիլ առ կաթիլ, 'ի փոքունց սկսեալ ծիսից պահոց եւ տօնից, հետզտհետէ ձեռնարկէին եւ զմասունս ուղղափառ հաւատոյ ստել եւ տալ յուրացութիւն. յանդգնեցան եւ 'ի դոյափոխութիւն սուրբ Հաղորդութեանն, 'ի միշտ կուսութիւն Աստուածամօրն, եւ 'ի բարեխօսութիւն սրբոց ամբարշտել, ջնջելով եւ զպատկերաց նոցին եւ զնշխարաց մասանցն յարգութիւն:

Լուեալ զայսոսիկ ճարտարապետքն երկոքին Կարապետ եւ Յովհաննէս, տրտմեցան եւ զայրացան 'ի սիրտս իւրեանց, եւ որովհետեւ այս պաշտօն հոգեւորականաց միայն էր անկ, եւ ինքեանք աշխարհականք գուրով չէին ձեռնհաս 'ի խափանումն ամբարշտութեան աղանդոյս, զի մի ճարակ գտցէ 'ի յագգիս. եւ տեսանելով զթոյլ եւ զանհոգ բնաւորութիւն Ստեփանոսի պատրիարքին, խորհեցան փոխել զնա. եւ ետուն բերել զՅակովբոս արքեպիսկոպոս զառաջնորդն Մարգուանու եւ Ամասիոյ 'ի Կոստանդնուպօլիս, եւ առ ժամն կարգեցին զնա խորհրդական պատրիարքին, եւ ետուն 'ի ձեռս նորա զղէկ ազգային կառավարութեան տնօրինել զամենայն ըստ իւրումն խոհականութեան:

(1839) Եւ նա կամելով ահ արկանել եւ դողացուցանել զամենեսին, զի մի ոք համարձակեսցի 'ի դպրոցս նորաղանդիցն երթալ եւ յայց ելանել, առանց ինչ քննութեան եւ հարցման աքսորեաց յանիրաւի զթովմայ վարդապետ 'ի վանս Արմաշու, եւ զՔիզիզայ Պօղոս եւ զՅովհաննէս վարժապետս 'ի Կեսարիա, որք անմեղք

էին յայսմ մասին ըստ վկայութեան բազմաց, աքսորեաց եւ գտէր Գէորգ քահանայ Խասգիւղի եւ գտիրացու Յովհաննէս ՚ի Թէքիրտաղ բանսարկութեամբ քսու արանց, եւ յաւել նզովել յատենի եկեղեցւոյ զաղանդն իսկ Լուտէրի: Բայց յետ չորից աւուրց լուաւ յանդիմանութիւն ՚ի Բ. Դրտնէն վասն նզովելոյն զաղանդն Լուտերականաց, զի դատախազ եկաց այսմ դեսպանն Անգլիացւոց Քանինկ, յորոյ ՚ի շնորհս եւ Լիզորիոս պատրիարք Յունաց՝ որ նզովեալ էր կոնդակաւ իւրով զաղանդն Լուտերականաց, ընկեցաւ ՚ի պատրիարքութենէն կայսերական հրամանաւ, եւ նստաւ Անթիմոս Մետրապօլիտն Կիզիկոնի:

Բայց Յակովբոս եպիսկոպոս սկսաւ վատահամբաւել զՊատրիարքէն, թէ առ պարզմտութեան իւրոյ խաբեալ ՚ի Լուտերականաց ՚ի կողմն նոցա իցէ միտեալ. եւ ՚ի ձեռն արքունի ճարտարապետացն ընկեց զՍտեփանոս ՚ի պատրիարքութենէն եւ նստաւ ինքն, իսկ Ստեփանոս գնաց յառաջին վիճակ իւր յԱրմաշու վանս:

Հռովմէականք Պաղեստինոյ բռնութեամբ գրաւեալ էին զեկեղեցիս Ասորւոց ՚ի Դամասկոս եւ ՚ի Բերիա, տուեալ կաշառս դատաւորաց եւ քաղաքապետացն, յոյր վասն եւ եպիսկոպոս ոմն Ասորւոց եկն ՚ի Կոստանդնուպօլիս առ Յակովբոս պատրիարք խնդրել ՚ի նմանէ զպաշտպանութիւն առ ՚ի դատ ելանել ընդ Հռովմէականաց: Եւ Յակովբոս պատրիարք առեալ ընդ իւր զՅովհաննէս եպիսկոպոս վոխանորդն սուրբ Երուսաղէմի եւ զԱնթիմոս պատրիարքն Յունաց, գնաց ՚ի դատ ընդ առաջնորդին Հռովմէական Հայոց առաջի յետ բազում վիճաբանութեան վճռեցաւ յետս դարձուցանել զեկեղեցիս Ասորւոց առ ինքեանս:

Սահմանեաց Յակովբոս պատրիարք եւ վասն ծախուց ճեմարանին զհինգ դահեկան տուրս պահանջել ՚ի միոյ միոյ ՚ի ճանապարհորդաց, որք ունին առնուլ զանցագիր. եւ գանձարան արկեզ ՚ի պատրիարքարան, հաւաքել անդ գտուրս ՚ի ժողովրդենէն, եւ անտի հոգալ զպէտս հիւանդանոցին, տնանկ աղքատաց եւ դպրատանց, եւ վասն այլ ինչ դիպուածոց, եւ կարգեաց հոգաբարձու արկեզն զքսան եւ չորս անձինս ՚ի գլխաւոր արուեստաւորաց, յորոց եւ երկուքն էին ՚ի սեղանաւորաց:

Փոփոխեաց եւ զառաջնորդսն Մշոյ, Կարնոյ, Սեբաստիոյ, Եւդոկիոյ, Պրուսայու, եւ այլոց վիճակաց առ ՚ի ժողովել ըզ տուրս եւ զընծայս ՚ի նորոգ վիճակաւորացն:

(1839) Բայց իբրեւ մեռաւ Սուլթան Մահմուտ, եւ յաջորդեաց որդի նորին Սուլթան Մէճիտ 'ի գահն արքայական եւ բարձաւ բռնութիւն եւ անպարտ մահ եւ աքսոր ըստ նորոգ սահմանադրութեան եւ օրինաց արքային, որ ընթերցաւ յապարանսն 'ի Կիւլխանէն 'ի լուր անհամար բազմութեան ամենայն ազգաց, յայնժամ ժամ բարեպատեհ համարեալ ամիրայից առնուլ զվրէժխնդրութիւն իւրեանց, գուն գործեցին 'ի ձեռս Յովհաննու արքեպիսկոպոսի փոխանորդին սուրբ Երուսաղեմայ՝ յերկարաձգել զհարիւր հազար դահեկան տարեկան տուրս ձեմարանին, հանին եւ զթողակաւոր տղայս բարեկամաց եւ ծանօթից իւրեանց 'ի ձեմարանէն, որ չունելով զայլ ինչ եկամուտս, եւ վասն հանապազօրեայ անհրաժեշտ ծախուցն սկսաւ հեծել ընդ պարտեօք, որ օրքան զօր յաւելոյր եւ սպառնայր վախճան տալ կատարածի դպրոցիս:



## ԳԼՈՒԽ ԾԳ.

*Յարգաս ազգային խռովութեանց, եւ պատրիարքութեան Ստեփանոսի եւ Աստուածատրոյ, եւ նահատակութեան Յովակիմայ:*

(1840) Տեսեալ զայս ամենայն Յակովբոս պատրիարք, եւ լուեալ հանապազօր զհակառակամարտ ընթացս ամիրայից, խորհեցաւ զառաջինն քաղցրութեամբ եւ սիրով շահել զսիրտ նոցին. եւ երիցս հրաւիրանաց նամակս գրեաց առ նոսա գալ ժողովիլ 'ի պատրիարքարանն, եւ կարգադրել զգործս ազգային, բայց ոչ ընկալան զհրաւէրն, եւ ոչ ոք գնաց առ նա, միայն Աշնանեան Պօղոս երթեւեկէր 'ի պատրիարքարանն:

Անճարացեալ պատրիարքին, եւ խռովեալ 'ի յոգի իւր ասէ զայրացմամբ՝ Անտէրունչ անօգնականաց վայելէ հիւանդանոցն, զի՞ կայ իմ եւ զարտաքինսն խորհելոյ՝ եւ փակեալ ըզ դուռն սենեկին յորում նստէրն, էջ եւ նստաւ յերիւար իւր, եւ գնաց ուղղակի 'ի հիւանդանոց սուրբ Փրկչին, եւ առանձնացաւ անդ:

Իմացեալ զայս ժողովուրդք 'ի վաճառանոցսն սկսան իջանել 'ի պատրիարքարանն, եւ հարցուփորձ առնել 'ի սպասաւորացն եւ 'ի քահանայից. եւ բազում զրոյցք լինէին 'ի սրճանոցս եւ 'ի տունս՝ ոմն այսպէս եւ ոմն այնպէս, եւ օր քան զօր շշուկ եւ աղմուկ ժողովրդեանն սաստկացաւ, մինչեւ եհաս 'ի լսելիս նախարարաց տէրութեանն:

Յետ չորից աւուրց կոչեաց եպարզոսն զերեւելիս 'ի սեղանաւորաց՝ զձանիկ Փափագեան, զՅարութիւն Երկանեան, եւ զՄագսուտ Սարիմեան 'ի Բ. Դուռն. եհարց ցնոսա եւ ասէ. ստո՞յգ է զոր լսեմքս, թէ պատրիարք ձեր կամովին հրաժարեալ 'ի պաշտօնէ իւրմէ առանց հրամանի տէրութեանն, զնացեալ նստի 'ի Հիւանդանոցն ձեր:

Ասեն եւ նոքա, թէ յայտոսիկ աւուրս խելագարութեան արտիւ ըմբռնեալ ոչ գիտէ, զոր առնէ: Եւ ասէ եպարզոսն, չգտանիցի՞ ոք յազգի ձերում այր խոհական եւ շահեցող, որ տեղակալեսցէ զաթոռ նորա: Պատասխանեն եւ նոքա, 'ի պատրաստի է նախորդ պատրիարքն մեր այր գովելի ըստ ամենայն մասին, զորոյ եւ զփորձն իսկ առեալ է տէրութիւն ձեր, եւ խնդրեմք զնոյն շնորհել մեզ 'ի բարիոք կարգադրութիւն ազգիս եւ 'ի փառս տէրութեանդ:

Յայնժամ արձակեալ զնոսա եպարզոսն յառաջոյ իւրմէ խօսի ընդ աւագանւոյն, եւ խորհրդով նոցին գրէ՞ առ արքայ եւ խնդրէ հրաման փոխել զպատրիարքն Հայոց. եւ հրամանաւ արքայի ընկեցեալ զՅակովբոս 'ի պատրիարքութենէն, դարձուցանեն վերստին 1840 զՍտեփանոս 'ի Նիկոմիդիայ, որում եւ խորհրդակից կարգեցաւ Պօղոս եպիսկոպոս առաջնորդութեան Մարգուան եւ Ամասիա քաղաքաց 'ի սեպտեմբերի 15, 1840:

Չայս տեսեալ հոգաբարձուաց ճեմարանին, հրաւիրեցին զբազմութիւն ժողովրդեան Հայոց 'ի ճեմարանն յաւուր Նոր կիւրակէի, եւ 'ի ժողովի անդ արար ատենաբանութիւն տնօրէն ճեմարանին Յակոբիկ Մանուէլեան փեսայ ճարտարապետին Յովհաննու, յայտ արարեալ զողորմելի վիճակ ճեմարանին, եւ յորդորեալ զունկնդիրսն 'ի պաշտպանութիւն նորին, որք միահամուռ ստորագրութեամբ ուխտեցին յառաջացուցանել զճեմարանն անկախ 'ի կարգադրութենէ ամիրայից:

(1841) Ուստի եւ յառաջիկայ ուրբաթու 'ի 13 ապրիլի թօհաֆճի Եղիազար անուն ոմն առեալ ընդ իւր զվեշտասան տղայս ճեմարանին՝ մատոյց առ արքայ զգիր աղերսանաց, խնդրելով, զի Բ. Դուռն վաւերացուցէ զպաշտօն քսան եւ չորս հոգաբարձուաց արուեստաւորաց՝ հոգ տանել ծախուց ճեմարանին, եւ լինել տեսուչ ազգային եկամտից եւ ծախուցն: Հրամայեաց արքայ 'ի Բ. Դուռն տեսանել զգատ սոցին, եւ զնաց Յովհաննէս եպիսկոպոս փոխանորդն սուրբ Երուսաղէմի 'ի կողմանէ պատրիարքին 'ի Բ. Դուռն խօսիլ ընդ գլխաւորաց ժողովրդեանն յատենի Արդարութեան ժողովոյն. եւ Բ. Դուռն խաղաղեցուցանել կամելով զխռովութիւն եւ գերկպառակութիւն ազգիս, շնորհեաց հրամանագիր (պուլրուլթու) քսան եւ չորս հոգաբարձուացն լինել տեսուչ ազգային ելուձտից եւ արկեղն պատրիարքարանին:

Բայց որովհետեւ արքունի հրովարտակաւ ոչ էին կարգեալք յայս պաշտօն, ոչինչ կարացին առնել, եւ ոչ զօրեցին զգէմ ունել ամիրայից, որք ծիծաղէին հանապազօր 'ի վերայ սոցա ունելով ինքեանց պաշտպան զԲ. Դուռն եւ զաւագորեարն արքունի. վասն որոյ եւ ժողովուրդք յուսահատեալք եւ զայրացեալք յոյժ, ետուն դարձեալ զգիր աղերսանաց առ արքայ մեծաւ բազմութեամբ, աղաղակաւ եւ պաղատանօք:

Հրամայեաց արքայ տեսանել զգատ սոցին եւ Բ. Դուռն կոչեաց զքսան եւ չորս հոգաբարձուսն, եւ խնդրեաց 'ի նոցանէ

զայնոսիկ, որք համարձակեցան բողոքել առ արքայ աղերսագրով. եւ ՚ի չքմեղս լինել նոցա ասելով, թէ ոչ գիտեմք, էարկ զնոսա ՚ի բանտ:

Կոչեցան ՚ի Դուռն եւ եպիսկոպոսունք եւ ամիրայք, եւ զնացին Աստուածատուր եւ Յովհաննէս եւ Պետրոս եպիսկոպոսունք, ընդ որս եւ ամիրայք, եւ մտին առ վերատեսուչ արտաքին գործոց Բիֆաթ փաշա:

Լուր բանտարգելութեան սոցա հասեալ ՚ի վաճառանոցս քաղաքին, եւ ահա խաժամուժ ամբոխ իբրու երից հազարաց լցան խոնեցան ՚ի սրահ արտաքին գործոց վերատեսչին ունելով յառաջոյ իւրեանց զգինեպան Իսկէնտէր զայրն ճարտարախօս, եւ միաբերան աղաղակէին, թէ ոչ կամիմք զպատրիարք մեր, եւ ոչ ճանաչեմք զսեղանաւորս զայսոսիկ:

Տեսեալ Բիֆաթ փաշայն զայս մեծ ամբոխ, զահի հարաւ, եւ քաղցրութեամբ համոզեալ արձակեաց զժողովն եւ զբանտարկեալ հոգաբարձուսն:

Իսկ յետ քսան աւուրց կոչեցան յԱրդարութեան ատեանն զլիւաւորք արհեստաւորաց, եւ հարցան նոցա խնդիրք, թէ ո՞վ ետ ձեզ խրատ, կամ որո՞յ խորհրդով յանդգնեցաք կոխել զԲ. Դուռն երեք հազար սրիկայիւք: Իսկ նոքա այլ ընդ այլոց պատասխանելով ՚ի վերջոյ խոստովանեցան, թէ արդարեւ մեծ յանդգնութիւն էր առնել, զոր արարաք, բայց յանցեաք անգիտութեամբ:

Յայնժամ Բ. Դուռն սկսաւ խուզարկել եւ քննել զգլխաւորս նոցին, եւ աքսորեցան Պօղոս եւ Յովհաննէս վարդապետք, Յակոբիկ Մանուէլեան, Ոսկերիչ Անդրէաս, Տիվիթեան Գէորգ, պասմաճի մահտեսի Պետրոս, Յարթաքի Յովհաննէսեան, իսկ գինէպան Իսկէնտէր փախեալ յՕտէսա, եւ այլ եւս ոմանք ՚ի գլխաւորաց ամբոխին փախուցեալք թագեան յահէ աքսորանացն:

(1841) Եւ ՚ի յաջորդ աւուրն հրամանաւ Բ. Դրան ընկեցաւ Ստեփանոս ՚ի պատրիարքութենէն, եւ զնաց ՚ի նախկին վիճակ իւր ՚ի վանս Արմաշու, եւ նստաւ պատրիարք Աստուածատուր եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի ընտրութեամբ ամիրայից:

Փակեցաւ եւ ճեմարանն իբրեւ պատճառ խռովութեան ազգիս, եւ ցրուեցան տղայք ՚ի տունս իւրեանց, եւ ահա այս էր զոր խնդրէին ամիրայք առնուլ զվրէժ իւրեանց յարքունի ճարտարապետացն:

Բայց յետ երկուց ամսոց բողոքեցին արհեսաւորք 'ի դուռն արքունի զամիրայից, եթէ մեք չեմք անհնազանդ տէրութեան հրամանաց եւ կանոնադրութեանց, բայց եւ ոչ ըստրուկք եւ գերիք սեղանաւորաց. եւ մինչ Բ. Դուռն օր 'ի յօր յերկարածգեաց զբողոք եւ զխնդիր սոցին 'ի շնորհս ամիրայից, աղաղակ ժողովրդեան սաստկացաւ, եւ միաբան ընտրեցին մեռանել, քան ծառայել հրամանաց ամիրայից, ընդ որ զահի հարան ամիրայք եւ Աստուածատուր պատրիարք, եւ առաքեցին 'ի կողմանէ իւրեանց զՅովհաննէս վառօղապետ Տատեան, եւ զԱրզուման սեղանաւորն Արզումանեան, որք գնացեալ 'ի Վէզիր խանն, եւ կոչեցեալ անդ զգլխաւորս արհեստաւորաց, պէս պէս համոզողական խրատուք եւ աղերսանօք հազիւ հազ կարացին խափանել զչարն եւ ցածուցանել զսրտմտութիւն ամբօխելոցն, խոստացեալ նոցա միաբանութեամբ ազգիս:

Եւ ծանուցեալ 'ի դուռն արքունի զպատճառ աղմկելոյ ժողովրդեանն եւ զպաղատանս նոցին, արքունի հրովարտակաւ ընտրեցան քսան եւ եօթն անձինք յարհեստաւորաց լինել տեսուչ եւ հոգաբարձու ազգային ելումտից եւ արկեղն պատրիարքարանին եւ ծախուց նոցին. եւ առին ստորագրութիւն 'ի պատրիարքէն եւ յամիրայից չխառնիլ ընդ կարգադրութիւնս նոցին որով եւ իցէ եղանակաւ, եւ այս եղեւ 'ի 12 դեկտեմբերի 1841 ամին:

Բայց որովհետեւ բազում ծախուց պէտս ունէին ազգային հաստատութիւնք, այսինքն պատրիարքարանն, վարժարանք, եւ դպրոցք, եւ առաւելապէս հիւանդանոցն, տնանկք, որք աղջկունք, եւ պատահական ծախք, եւ արհեստաւորքն չէին բաւական հայթհայթել զպէտս զայսոսիկ, զօր ամենայն բողոք եւ տրտունջ ձանձրացուցանէր զլսելիս նոցին յասնելն, եթէ չէիք կարող բառնալ զծանրութիւն ազգիս, ընդէ՞ր առիք յամիրայից, որք դիւրաւ զծանրութիւն ազգիս, ընդէ՞ր առիք յամիրայից, որք դիւրաւ կատարէին զամենայն, գոլով յաջողակք յամենայնի բանիւք եւ արդեամբք:

Վասն որոյ ձանձրացեալ եւ նոցա յոյժ յայսպիսի տրտնջանաց, եւ ոչ գտանելով զայլ ինչ հնար 'ի դարման աղէտիս, միաբան խորհրդովք գնացեալք առ Ճանիկ ամիրայ գլխաւորն սեղանաւորաց, ետուն զմուրհակ ստորագրութեանն՝ զոր առեալ էին յամիրայից, եւ խնդրեցին, զի ինքեանք դարձեալ 'ի ձեռս առնուցուն զղէկ կառավարութեան ազգիս, եւ հայթհայթեսցեն զամե-

նայն, որպէս առնէին յառաջն, եւ ինքեանք հրաժարեսցին յայս ծանր պաշտօնէն, զոր ոչ կարէին տանել:

Իսկ Ճանիկ ամիրայ ոչ ընկալաւ զխնդիր նոցին, եւ ետ պատասխանի, թէ դուք աղերսանօք եւ պաղատանօք թախանձեցիք զԲ. Դուռն, եւ մեք հրամանաւ Բ. Դրան թողաք ձեզ զայս պաշտօն. ուստի պարտ է ձեզ յայտ առնել զխնդիր ձեր 'ի Բ. Դուռն, եւ նա որպէս գիտէ եւ կամի, տնօրինեսցէ զարժանն:

Ելեալք ապա հոգաբարձուաց՝ զնացին 'ի Բ. Դուռն, եւ մտեալք յատեանն արդարութեան խոստովան եղեն զանբաւականութիւն իւրեանց, եւ թողեալք զհրովարտակն, խնդրեցին հրաժարիլ 'ի պաշտամանէն. եւ հրամանաւ Բ. Դրան եղեւ ժողով 'ի պատրիարքարանին ամիրայից եւ գլխաւոր արուեստաւորաց, եւ պատառեցաւ առաջին կնքեալ թուղթն, յորում էր ստորագրութիւն պատրիարքին եւ ամիրայից. եւ վերատեսչութիւն ազգային հոգաբարձութեան եւ կառավարութեան աւանդեցաւ դարձեալ 'ի ձեռս ամիրայից:

Յաւուրս յայսոսիկ այրեցաւ պատրիարքարան սրբոյն Գէորգայ եկեղեցւոյն Սամաթիոյ: Յաւալի եղեւ յոյժ եւ հրդեհն Զմիւռնոյ, որ այրեաց գրեթէ զերրորդ մասն քաղաքին, այրեցան եւ թաղք Հայոց, եւ սուրբ Ստեփանոս եկեղեցին, եւ վարժարանն, եւ վնաս հրդեհին հաշուեցին 250 հազար քսակք արծաթոյ:

(1842) Ի սմին ամի եւ երկուս սենեակս ընկերութեան հաստատեաց տէրութիւնն 'ի գլխաւորս սեղանաւորաց, մին՝ յանուն Ասիական ընկերութեան, եւ միւսն Եւրոպական:

Ասիակողմանն կարգեցան անդամք Յարութիւն Երկանեան, Քիւրքճի խանցի Պետրոս, Միսաք, Ճէզայիրցի Մկրտիչ. Պաղտասար Չարագեան, եւ Պօղոս Աշնանեան:

Իսկ Եւրոպակողմանն Ճանիկ, Մագսուտ, մահտեսի Յարութիւն Կէլիէլեան, Աբրահամ Ալլահվէրտեան, Յովհաննէս Թընկըրեան, եւ Յովսէփ Տավուտեան:

Եւ սոցա պաշտօն յանձնեցաւ զպայմանեալ հարկս եւ զտուրս յամենայն գաւառաց տէրութեան վերածել 'ի Կոստանդնուպօլիս, եւ աւանդել արքունի գանձուն ըստ ժամանակին, եւ ամենեցուն սոցա գլուխ կարգեցաւ Յարութիւն Երկանեան, որում եւ նշանականակապ շնորհեաց արքայ:

(1843) Ընդ այս ժամանակ Սամաթիացի երիտասարդ ոմն հայազգի Յովակիմ անուն՝ որ չորս ամօք յառաջ ընկալեալ էր

զՄահմէտական օրէնս, եւ ապա զղջացեալ եւ կերպարանափոխ եղեալ ըստ տարազու Եւրոպացւոց, եւ գաղտնի խոստովանեալ քահանայի իւրում շրջէր յանձանօթս, մատնութեամբ ոմանց կալանաւորեալ մատնեցաւ ՚ի տանջանս: Պատրիարքն եւ ամիրայք չհամարձակեցան աղաչաւոր լինել առ Բ. Դուռն, զի անարգութիւն էր Մահմէտական դէնին, եւ խրատ տային ողորմելի ծնողաց բանտարգելոյն երթալ աղաչել զդեսպանն Ռուսիոյ:

Եւ նոցա գնացեալ ետուն աղերսագիր դեսպանին, որոյ ընթերցեալ զթուղթն՝ իսկ եւ իսկ հրամայեաց երթալ առ Լօրտ Քանինկ դեսպանն Անգլիոյ, եւ մատուցանել նմա գայն թուղթ:

Ընթերցեալ դեսպանին Անգլիոյ զաղերսագիրն, եւ տեսեալ զարտասուլթոր աղաչանս նոցին, առաքեաց զԲիզանի զառաջին թարգման իւր ՚ի Բ. Դուռն առ վէզիրըն մեծ Րէուֆ փաշա եւ առ վերատեսուչն արտաքին գործոց, զի ՚ի շնորհս երեսաց իւրոց ազատութիւն տացի բանտարգեալ երիտասարդին այնմիկ: Գնացեալ թարգմանն խօսեցաւ առ վէզիրն զխնդիր դեսպանին, եւ ընկալաւ պատասխանի, թէ յետ երկուց աւուրց ժողով ունի լինել նախարարաց եւ օրէնագիտաց, եւ ՚ի ժողովին յայնմիկ յայտ առնեմ զխնդիր դեսպանի ձերում, եւ հանեալ ՚ի բանտէ զկալանաւորն առաքեմ առ նա: Եկեալ թարգմանն պատմեաց դեսպանին որպէս լուաւն, եւ դեսպանն մխիթարեաց զողորմելի ծնողս բանտարգելոյն համբերել աւուրս երկուս, եւ տեսանել զորդի իւրեանց առ ինքեանս:

Եղեւ ժողովն ՚ի Բ. Դրան, եւ պատմեաց վէզիրն զբարեխօսութիւն դեսպանին վասն ուրացեալ կալանաւորին. բայց դէնպետն եւ Րիզա Ալի փաշա եւ այլ եւս երկուք ՚ի մոլեռանդ նախարարաց՝ արհամարհեալք զխնդիր նորա՝ վճռեցին գլխատել զնա ըստ օրինացն Մահմէտի. եւ գլխատեցաւ ողորմելի երիտասարդն ՚ի Պալըզ բազար դուռն Կոստանդնուպօլսի յետ բազում յորդորանաց եւ խոստմանց մեծամեծ պարգեւաց, զի դարձեալ յանձն առցէ ընդունիլ զմահմէտականութիւն. բայց նա ուրախութեամբ եւ փառաւորելով զՅիսուս Քրիստոս խոնարհեցոյց զգլուխն առաջի դահճին, որ ձգեաց եւ ընկէց զգլուխն միով հարմամբ, որոյ եւ ես եղէ իսկ ականատես, եւ եղաւ բեղոյրն (չափզա) ընդ երաստանաւ գլխատելոյն ՚ի նախատինս քրիստոնէութեան:

Ընդ այս զայրացեալ դեսպանն Անգլիացւոց՝ ընդ որում եւ դեսպանք այլոց տէրութեանց՝ բողոք կալան գայսմ բարբարոսա-

կան գործոյ Բ. Դրան, եւ գրեցին առ կառավարութիւնս իւրեանց, եւ թագաւորք Եւրոպացւոց համաձայնութեամբ եւ խորհրդով միմեանց յետ հնգից ամսոց գրեցին առ Օսմանեան կառավարութիւնն խստիւ պահանջելով զազատութիւն եւ զհամարձակութիւն կրօնի ամենայն ազգաց. այնպէս զի թէ ուրացեալ ոք վերստին ստրջացեալ դարձցի յառաջին կրօնս իւր, մի լիցի նմա բռնութիւն. եւ եթէ ոք կրօնափոխ լինել կամիցի, զոր օրինակ Քրիստոնեայն կամիցի լինել Մահմէտական, եւ կամ Մահմէտականն՝ Քրիստոնեայ, մի արգելցի բնաւ, այլ թոյլ տացի ամենայն ումեք պաշտել զոր կրօն եւ ինքն կամիցի:

Առաջարկեցին դեսպանք զայս պահանջումն կառավարութեանց իւրեանց Բ. Դրան, եւ հրամանաւ արքայի եղեւ ժողով մեծ ՚ի պալատին, ուր կոչեցաւ եւ դենպետն, եւ յետ բազում բանախօսութեանց եւ խորհրդածութեանց զայս պատասխանի որոշեցին տալ Եւրոպացւոց. թէ կառավարութիւնս յօժարութեամբ սրտի ընկալաւ զայդ առաջարկութիւն, բայց լուր կրօնամոլ ժողովրդեան մերոյ, այլ խնդրեմք եօթնամեայ ժամանակ ՚ի հրահանգել եւ ՚ի համոզել զբիրտ հասարակութիւն մեր առ սակաւ սակաւ. ապա թէ ոչ՝ աղմուկ մեծ ծագի աղէտալի ՚ի վնաս Քրիստոնեայ ազգաց:

Այս մահ եւ նահատակութիւն Յովակիմայ եղեւ սկզբնապատճառ ազատութեան կրօնի. զի որք յառաջն բռնութեամբ ուրացուցանէին եւ յեղաշրջէին զբազումս ՚ի Մահմէտական կրօնս, զոմանս յորդորանօք եւ խոստմամբ պարգեւաց, եւ զոմանս ահիւ եւ սպառնալեօք, տանջանօք եւ մահացուցմամբ, այս ամենայն բարձաւ ՚ի միջոյ եւ խափանցեալ, եւ համարձակ թոյլատուութիւն եղեւ կրօնի ամենայն ազգաց պաշտել զկրօնս իւրեանց, շինել եւ նորոգել զեկեղեցիս առաւել վայելուչ եւ պայծառ քան զառաջինն. եղաւ զանգակատուն յեկեղեցիս Հայոց եւ Յունաց փոխանակ անախորժ ձայնից ժամակոչաց. եւ ազատութիւն տուաւ կրօնափոխութեան ամենայն ազգաց եւս եւ Մահմէտականաց առանց անարգելոյ եւ հայհոյելոյ զկրօնս եւ զհաւատս այլոց, որպէս տեսանեմք այժմ:

## ԳԼՈՒԽ ԾԳ.

Յաղագս կաթողիկոսութեան Ներսիսի Հինգերորդի, եւ պատրիարքութեան Մատթէոսի:

(1842) Ի սմին ամի վախճանեցաւ Կարբեցի Յօհաննէս կաթողիկոս սուրբ Էջմիածնի, եւ ընտրութեան միջոյ տուաւ ամ մի, լինել ժողով ազգյին երեսփոխանաց յամենայն կողմանց՝ յաթոռն սուրբ, եւ բացարձակ առաւելութեամբ քուէից ընտրել կաթողիկոս. եւ առաքեցան ազգարար նամակք յամենայն կողմանս առաքել զերեսփոխանս իւրեանց յաթոռն սուրբ:

Ընտրեցաւ Պետրոս վարդապետ Կեսարացի առաջնորդն Նիկոպօլսոյ՝ երեսփոխան Կոստանդնուպօլսոյ բաժնին ընդ իւրեւ հաշուեալ զամենայն հայաբնակ գաւառս Օսմանեան տէրութեան, ՚ի յաջորդ ամին երթալ գտանիլ յաթոռն սուրբ, եւ տալ զքուէն ՚ի ժողովի անդ:

(1843) Եւ եղեւ ՚ի մայիսի 18, 1843 ժողով ՚ի սուրբ Էջմիածին քառասուն անձանց հոգեւորականաց եւ աշխարհականաց երեսփոխանաց վասն ընտրութեան կաթողիկոսի. եւ յետ աղօթից եւ պաշտամանց եղեւ քուէարկութիւն ՚ի տաճարի անդ, եւ զկնի բացաւ քուէհամարն, եւ բացարձակ առաւելութեամբ քսան եւ եօթն ձայնից ընտրեցաւ Տէր Ներսես Հինգերորդ Աշտարակեցի առաջնորդն Պէսարապիոյ, Ղրիմու, եւ նոր Նախշուանու՝ այր մեծահամբաւ եւ խորախորհուրդ, ուսումնասէր եւ ազգասէր, եւ յաջողակ յամենայնի գրով եւ արդեամբք:

Զայս ընտրութիւն ժողովոյն ընկալեալ փոխարքայն Վրաստանու, ծանոյց ՚ի Պետերբուրգ առ վեհափառ Կայսրն Ռուսաց Նիկողայոս հաստատել եւ վաւերացուցանել ըստ բարեհաճութեան կամաց իւրոց:

Եւ նորա հաստատեալ բարձրագոյն հրովարտակաւ զնտրութիւն ժողովոյն, հրաւիրեաց զՆերսէս կաթողիկոս ՚ի Պետրբուրգ տալով յարքունուստ զամենայն ծախս ճանապարհին: Բայց Ներսէս կաթողիկոս յապաղեաց զերթալ իւր վասն ձմերան սաստկութեանն պատճառելով զձերութիւն իւր, եւ գրեաց առ Կայսրն շնորհակալութիւն վասն հրաւիրանացն, յորում խոստանայր ՚ի



յուենիսի յաջորդ ամին ելանել 'ի ճանապարհ եւ գնալ 'ի Պետերբուրգ, իսկ զձմեռն զայն անցուցանել 'ի Քիչնեւ:

Յաւուրս յայսոսիկ եղեւ ժողով ամիրայից 'ի Կոստանդնուպօլիս 'ի պատրիարքարանին նախագահութեամբ Երկանեան Յարութիւն ամիրայի, որ զամենայն անկարգութիւնս ազգային գործոց թէ ըստ հոգեւորին եւ թէ ըստ մարմնաւորին շարակարգեալ եւ պատմել, եցոյց ամենեցուն բարոյական պատճառ զԱստուածատուր պատրիարք, եւ զանխոհեմութիւն նորա եւ զզայրացկոտ բնաւորութիւն նորա եւ զանվայել խօսս 'ի քարոզի եւ 'ի խօսակցութեան:

Եւ նոքա համոզեալք 'ի շնորհս երեսաց նորին, երկուք 'ի նոցանէ մտին 'ի սենեակ պատրիարքին. եւ յետ քանի մի քաղաքավարական բանից խնդրեցին 'ի դիմաց ժողովոյն զհրաժարական նորին 'ի պատրիարքութենէն. եւ նա յառաջնմէ իսկ գիտակ գոլով խորհրդոց նոցա. եւ զգուեալ 'ի ցաւալի երկպառակութենէ ազգիս, ետ կոչել իսկ եւ իսկ զգրագիրն. եւ տուեալ նմա գրել զհրաժարական իւր պատճառելով զանձինն տկարութիւն եւ գորդին անհամբերութիւն, ստորագրեաց եւ կնքեաց: Որոց առեալք զհրաժարականն, տարան առ ժողովն, եւ նոքա առաքեցին 'ի Բ. Դուռն 'ի ձեռն գործակատարի պատրիարքին. եւ ինքեանք գնացեալք առ արտաքին գործոց նախարարն խնդրեցին զգործադրութիւն հրաժարականին:

Յետ երից աւուրց եկն հրաման 'ի Բ. Դրանէն. յարուժ գրեալն էր հրաժարել պատրիարքին յաղագս անբաւական լինելոյ իւրոյ այնմ պաշտաման. եւ հրամայէր ընտրութեամբ վեցեակ ժողովոյ Հայոց (ալթը ճէմաթ ինթիխապի իլէ) որոշել զոմն յեպիսկոպոսաց արջանաւոր պատրիարքական պաշտման, եւ 'ի նմին աւուր ժողով արարեալ ամիրայից 'ի պատրիարքարանն, ընտրեցին զՄատթէոս եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի առաջնորդն Ջմիւռնոյ՝ այր ազգասէր եւ ուսումնասէր, բայց միանգամայն փառասէր եւ նախանձոտ ընդ փառս այլոց, եւ հաստատ յառաջագրութիւն մտաց իւրոց, զոր ոչ կամէր փոխել, թէեւ լինէր ինքեան այն վնաս մեծ:

(1844) Ջայս ընտրութիւն ծանուցեալ 'ի Բ. Դուռն, առաքեցին եւ ածին 'ի Ջմիւռնոյ զՄատթէոս եպիսկոպոս 'ի պատրիարքարանն, որ գնացեալ 'ի Բ. Դուռն ընկերակցութեամբ վեց վարդապետաց եւ վեց պատուաւոր անձանց, յառաջոյ նորա քսան քա-

Հանայք, եւ յետուստ նորա բազմութիւն ժողովրդեան, ներկայացաւ արտաքին գործոց նախարարին, արդարութեան Բ. ատենին, եւ մեծի եպարգոսին. եւ ընկալեալ զնշան պատրիարքական իշխանութեան, դարձ արար մեծահանգէս շքով 'ի Մայր եկեղեցին, ուր համառօտ եւ գեղեցիկ ատենաբանութեամբ արար բարեմաղթութիւնս արքայի, եւ աղօթս վասն միաբանութեան ազգիս, եւ օրհնեալ զժողովուրդն գնաց 'ի պատրիարքարանն:

Յետ աւուրց ինչ Տէր Եղիա կաթողիկոսն Ասորւոց՝ որ յաղագս կարեւոր գործոց ազգին իւրոյ դեգերէր յայնժամ 'ի Կոստանդնուպօլիս, եկն յայցելութիւն եւ 'ի շնորհաւորութիւն առ Մատթէոս պատրիարք, որ յետ կարեւոր բանախօսութեանց եւ հարցաքննութեանց հրամայեաց նմա Մատթէոս պատրիարք մատուցանել պատարագ 'ի սուրբ Երրորդութեան եկեղեցւոյն Հայոց որ 'ի Բերա, ըստ արարողութեան ՀԱյաստանեայց եկեղեցւոյ, յոյր վասն յատկացոյց նմա անդ եւ մատուռ մի վասն պատարագելոյ երբ եւ կամեսցի, եւ նորա մեծաւ շնորհակալութեամբ ընկալեալ զքրիստոնավայել եղբայրսիրութիւն նորա եւ զարտօնութիւն, զի չէր յայնժամ եկեղեցի Ասորւոց 'ի Կոստանդնուպօլիս եւ 'ի Բերա:

Յառաջիկայ կիւրակէին մատոյց անդ պատարագ եւ յիշատակեաց զՏէր Ներսէս ընդհանրական կաթողիկոսն ամենայն Հայոց եւ զծայրագոյն պատրիարքն Արարատեան Մայր Աթոռոյն, որոյ յիշատակութիւնն չէր տակաւին սկսեալ յեկեղեցիս Հայոց. զի յաւուրց անտի պատերազմաց՝ որ եղեն 'ի 1828 ամին ընդդէմ Ռուսաց, բարձեալ էր յիշատակութիւն կաթողիկոսին Էջմիածնի յեկեղեցեաց Հայոց հրամանաւ Բ. Դրան, եւ երթեւեկութիւն նուիրակաց դադարեալ:

Հասեալ այս ամենայն յականջս սրբազան կաթողիկոսին Ներսիսի, գովեաց յոյժ զխոհականութիւն Մատթէոս պատրիարքին, եւ առաքեաց կոնդակ օրհնութեան 'ի Քիչնովայ, որ ընթերցաւ 'ի Մայր եկեղեցւոյ պատրիարքարանին փառաւոր հանգիսիւ: Գրեալ էր 'ի կոնդակին, եթէ հանդերձեալ է ելանել 'ի Պեսարապիոյ 'ի յունիսի 9, եւ երթալ 'ի Պետրբուրգ ըստ հրաւիրելոյ կայսերն Ռուսաց, եւ անտի երթալ յԷջմիածին, եւ օծանիլ անդ կաթողիկոս:

(1844) Զայս կոնդակ օրհնութեան առիթ կալեալ 'ի ձեռին Մատթէոս պատրիարք, արար ժողով մեծ 'ի Մայր եկեղեցւոյն հոգեւորականաց եւ աշխարհականաց, եւ ստորագրութեամբ ամենե-

ցուն եւ բարեհաճութեամբ սկսաւ դարձեալ յեկեղեցիս Հայոց յՕսմանեան տէրութեան. բայց երթեւեկութիւն նուիրակաց վճուեցաւ դադարիլ բոլորովին. այնպէս զի՝ պատրիարքն Կոստանդնուպօլսի լինիցի փոխանորդ կաթողիկոսին, զեկամուտս սրբոյ աթոռոյն նա հաւաքեսցէ, եւ հասուսցէ. միւռոնն սուրբ առ նա առաքեսցի, եւ նա բաշխեսցէ իւրաքանչիւր վիճակի ըստ պիտոյից ժամանակին:

Ջայս ամենայն գրեաց Մատթէոս պատրիարք առ Ներսէս կաթողիկոս, որ ոչ սակաւ ցաւեցաւ վասն նուիրակութեանն դադարման. բայց գիտելով զատելութիւնն Օսմանեանց՝ զոր ունին բնաւորաբար ընդդէմ Ռուսաց, իրաւունս ետ ժողովոյն կարգադրութեանն:

Իսկ ինքն կաթողիկոսն յուղի անկաւ ՚ի Քիչնովայ, եւ գնաց ՚ի Պետերբուրգ, ուր մեծահանդէս շքով ընկալաւ զնա կայսրն, եւ հանգոյց ՚ի ճանապարհի նեղութեանցն ՚ի պալատան միում, զոր պատրաստեալ էր նմա յառաջագոյն:

Յայսմ միջոցի դէպ եղեւ երբեմն Նիկողայոս կայսեր երթալ յայցելութիւն սրբազան կաթողիկոսին Ներսիսի, եւ ՚ի լինել անդ բանախօսութեանց եւ յիշատակութեանց անցելոց իրաց, յառաջ բերեալ Ներսէս զգովելի եւ զհաւատարիմ ծառայութիւնս ազգիս Հայոց, ասէ, ո՞չ արդեօք այս Ներսէսն էր, որ ՚ի խնդրոյ եւ յաղաչանաց Բասքելիչ զօրապետիդ յորդորեալ եւ համոզեալ, եւ ընկալեալ ՚ի նմանէ զյետկար դաշնադրութեանն, յորում եւ ձերդ ստորագրութիւն ցոլանայ ՚ի նմին վասն ազատութեան ազգի եւ հայրենեաց մերոց, իբրեւ մասնաւոր իմն դքսութիւն ընդ հովանաւորութեամբ եւ պաշտպանութեամբ Աստուածագօր կայսերութեանդ, լինել ձեզ միշտ աջակից եւ օգնական յամենայն մրցմունս պատերազմաց, այս Ներսէս՝ այո այս Ներսէս էր՝ որ յարոյց ընդ իւրեւ զամենայն քաջս Հայոց ՚ի Հայաստան աշխարհէ եւ ՚ի Կովկասեան գաւառաց Վրաստանու եւ Իմէրէթի, եւ առաջնորդութեամբ իւրով իբրեւ քաջ զօրապետ ոչ խնայեաց անձին, եւ կորստեամբ քսան եւ հնգից հազարաց ՚ի գլուխ տարեալ զյաղթութիւնն, զերծոյց ՚ի հպատակութենէն Պարսից զԵրեւան, զՆախընտան, եւ զայլսն ամենայն մինչեւ ցԱտրպատական, որոց այժմ տէր էք դուք եւ հրամայող:

Այս յետկար եւ ստորագրութիւն ձեր պահեալ կայ առ իս, ով վեհափառ տէր, իբրեւ մասն սրբազան, եւ ոչ գիտեմ, թէ ե՞րբ լինելոց է:

Պատասխանէ կայսրն, ես հաստատ եմ 'ի խոստմանս, եւ յուսամ կատարել, զոր ստորագրեցի յանուն Աստուծոյ, եւ չմնալ պարտական ազգի ձերում, եւ այնչափ անպարտ արեանցն հեզման, որք հեղան 'ի փառս կայսրութեանս: Բայց այժմեան քաղաքականութիւնն Եւրոպացւոց ընդդէմ ելանէ այսմ կարգադրութեանս, եւ ոչ յաջողի բնաւ, եւ ազգ ձեր տեսանէ վնաս յամենայն կողմանս, ուր եւ ցրուեալքն իսկ են: Եթէ ողորմութեամբն Աստուծոյ 'ի գլուխ տարայց զԱրեւելեան խնդիրն յազատութիւն Քրիստոնէից, յայնժամ դիւրաւ յաջողի եւ այդ խնդիր ձեր. ուստի պարտ է ձեզ համբերել, մինչեւ Աստուած ինքն իսկ տնօրինեսցէ, եւ ժամանակն յաջողեսցէ:

Եւ 'ի յաջորդ աւուրն երթայ կաթողիկոսն 'ի փոխադարձ այցելութիւն առ կայսրն Նիկողայոս, որ ընդ առաջ ելանէ նմա բացաւ գլխով եւ ըզունի յառանձին սենեկի իւրում մեծարանօք եւ պատուով: Եւ 'ի լինել սիրալիր խօսակցութեանց՝ յազւոց հանէ կայսրն հառաչելով, ասէ, ով հայր սրբազան, ցաւ մեծ ունիմ 'ի սրտիս 'ի վաղ ժամանակաց հետէ անտի, որում ոչ ոք կարէ դարման տանել եւ հնարս հայթհայթել, բայց միայն դու՝ հայր սրբազան, դու եթէ կամիցիս, կարես լինել ինձ դեղ բժշկութեան փարատիչ ցաւոց անձին իմոյ:

Ասէ կաթողիկոսն, զի՞նչ է ցաւդ ով վեհափառ Տէր, պատմեա ինձ, եւ եթէ կարեմ լինել նմա դարման, ոչ զլանամ: Ասէ կայսրն, մի է Տէր մեր, մի հաւատ, մի մկրտութիւն, եւ մի եկեղեցի, եւ զի՞նչ իցէ այս բաժանումն 'ի մէջ երկուց եկեղեցեաց ուղղափառացս լինել միութիւն, որպէս հաւատովք, նոյնպէս եւ ամենայն կրօնական պաշտամամբք եւ ծիսիւք եւ արարողութեամբք: Պատասխանի տայ կաթողիկոսն եւ ասէ, կամիք դուք զերկու եկեղեցիս ձուլել 'ի մի զանգուած, բայց ո՞րով եղանակաւ, հինն նորո՞յն պարտ իցէ ծառայել, եթէ նորն հնոյն. ո՞րն է իրաւացին եւ Աստուածահաճոյն: Լռեաց կայսրն եւ ինչ ոչ խօսեցաւ:

Եւ յայլում նուագի 'ի լինել բանախօսութեանց կայսերն ընդ կաթողիկոսին, ասէ կայսրն. խնդրեմ 'ի քէն սրբազան հայր, զի փոխեսցես զձեւ վեղարիդ, եւ արասցես, որպիսի է վեղար հոգեւոր Մինիսթրին մերոյ: Ասէ ցնա կաթողիկոսն. յաւուր յորում եղի զվեղարս զայս 'ի գլուխ իմ 'ի ձեռնադրութեան իմում քահանայ յեկեղեցւոջ սրբոյն Ստեփանոսի 'ի Զմիւռնիա քաղաքի, ուխտեցի յայն օր երկնաւոր Քահանայապետին Յիսուսի Քրիստոսի այսու

վեղարով իջանել 'ի գերեզման, արդ զայս ուխտ իմ զոր ուխտեցի Աստուծոյ, ոչ կարեմ փոխել 'ի շնորհս մարդկան: Յայնժամ հիացեալ կայսրն ընդ խորագիտութիւն եւ ընդ բազմահանճար խոհականութիւն կաթողիկոսին, ասէ ցմերձակայս իւր, առաւել յոյժ տեսի քան զոր լուեալս էի վասն առնս մեծի. եւ հրամայեաց խաչադամանդեայ դնել 'ի վերայ վեղարին յորոշումն յայլոց արք եպիսկոպոսաց:

Այս ամենայն բանախօսութիւնք նշանակեալք են յուսումնասէր եւ շնորհափայլ Թադէոս վարդապետի յորագրութիւնսն, որ էր ձեռնասուն եւ հաւատարիմ աշակերտ սրբազան կաթողիկոսին, եւ ընդ նմա եկաց զամս բազումս 'ի Քիչնով, 'ի Պէտրբուրգ, եւ 'ի Տփլիս, մինչեւ գնաց ընդ նմա 'ի սուրբ Էջմիածին, ուր եւ ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս մեծի վիճակին Չուղայու եւ Հնդկաստանու:

Իսկ Ներսէս կաթողիկոս յետ աւուրց ինչ հիւանդացեալ անդ 'ի Պետրբուրգ, եւ ախտ ցաւոցն օր քան զօր զայրացեալ եւ սաստկացեալ, յուսահատ արար զամենեւին ընդ առողջութիւն նորա, բայց հրաշիւք Ամենակալին եւ բազմաջան վաստակօք կայսեր՝ մինչ 'ի ձեռն ճարտար բժշկաց 'ի լաւ անդր փոխեալ օր ըստ օրէ սկսաւ ստանալ զառողջութիւն մարմնոյ, հրաման արար կայսրն մնալ անդ գձմեռն զայն 'ի Պետրբուրգ, եւ յառաջակայ ամին 'ի մայիսի ելանել 'ի ճանապարհ, եւ գնալ յԷջմիածին:

## ԳԼՈՒԽ ԾԵ.

Յաղագս օծման Ներսիսի կաթողիկոսի, եւ գործոց նորա, եւ Շահնազարեան Կարապետ վարդապետի:

(1846) **Ի** հետեւեալ ամին 'ի մայիսի ել Ներսէս կաթողիկոս 'ի Պետերբուրգայ հրամանաւ կայսեր ընկերակցութեամբ երեւելի պաշտօնատեարց կայսրութեանն, եւ եհաս 'ի Տփլիս, ուր ընդ առաջ գնացին նմա միով աւուրբ ճանապարհաւ պայծառափայլ փոխարքայն Վօրօնցօֆ, որ էր վաղածանօթ սիրելի կաթողիկոսին, եւ ժէնէրալք, եւ զօրականք, ասպետք, եւ վաճառականք, եւ բազմութիւն բնակչաց քաղաքին յամենայն ազգաց, եւ մեծահանդէս շքով ածին զնա մեծ եկեղեցին էջմիածնի որ 'ի Տփլիս: Ուր համառօտիւ օրհնեալ զկայսրն եւ զորդիս նորա եւ զազգատոհմ նորա եւ զքոխարքայն եւ զամենայն ժողովեալսն, ել 'ի վեհարան իւր եւ հանգստացաւ, եւ զաւուրս հնգետասան ընդունէր զեկեալսն առ ինքն յայցելութիւն եւ յաջահամբոյր, եւ ինքն փոխադարձ գնաց յայցելութիւն փոխարքային եւ արքեպիսկոպոսին Վրաց:

Կացեալ ամիսս ինչ 'ի Տփլիս եւ մխիթարեալ զամենեսին՝ ել 'ի Տփլիսէ ընկերակցութեամբ եպիսկոպոսաց եւ միաբանից սրբոյ էջմիածնի՝ որք ընդ առաջ եկեալք էին մինչեւ 'ի Տփլիս, եւ հասեալ յէջմիածին եւ հանգստացեալ, յետ աւուրց ինչ ընկալաւ զօծումն սուրբ 'ի գագաթ իւր փառաւոր հանդիսիւ, եւ նստաւ յաթոռ հայրապետութեան Հայոց 'ի յունիսի 9, 1846: Ի հանդիսի օծմանն գտաւ ներկայ կուսակալն Երեւանու հարիւր զօրականօք, եւ 'ի գիշերի եղեն հրախաղութիւնք եւ լուսավառութիւն յամենայն կողմանս վանորէիցն, եւ կերակուր պատուական եւ առատ, եւ ուրախութիւն մեծ:

Յետ երից աւուրց մեկնեցաւ կուսակալն եւ զօրականք իւր, որոց բաշխեաց պարգեւս սրբագան հայրապետն ըստ արժանաւորութեան իւրաքանչիւրոցն, եւ ընկալաւ զմիաբանութիւն սուրբ աթոռոյն, զիւրաքանչիւրոցն հարցուփորձ արարեալ զանուանս եւ զհայրենիս եւ զպաշտամունսն, զանպիտանսն եւ զանկարգսն առաքեաց 'ի Սեւան կղզի, եւ զբարեկիրթսն կարգաւորեաց առ մէն մի պաշտօն. 'ի կարգի եղ զխոհանոցսն եւ զգոմս խաշանց եւ կո-

վուց, եւ զսեղանատունն եւ զկերակուրս միաբանիցն, բարեկարգեաց զդպրոցն աթոռոյն եւ զվարժարանն եւ զեկեղեցին Վաղարշապատու, եղեալ 'ի նոսին վարժապետս բարեկրօնս 'ի միաբանից աթոռոյն: Զհետ եղեւ պայծառութեան եւ բարեկարգութեան, եւ ետ շինել զլիճ մի մեծ 'ի հանդիպոյ վանուցն յերկայնութիւն հարիւր կանգուն եւ 'ի լայնութիւն յիսուն, եւ զյատակ նորա եւ զշրջապատն 'ի սրբատաշ քարանց. եւ զջուրն՝ որ հոսէր յաւազանէն Ղազարապատու, հոսեցոյց 'ի լիճն ընդերկրեայ ճանապարհաւ, եւ բազմացոյց անդ ձկունս բազմատեսակս եւ ախորժահամս:

Կանգնեաց մօտ լճին եւ անտառ մի գեղեցիկ, տնկեալ 'ի նմա վաթսուն հազար թթենիս եւ քառասուն հազար ծիրանս, եւ շուրջ զնոքօք հաստարմատ ծառս կաղմախու եւ բարտի, զորս ոռոգանէր լիճն երկուստեք ճանապարհաւ: Յօրինեաց եւ զգործարանս մետաքսի իբրեւ եկամուտ ինչ աթոռոյն, եւ զօր ամենայն մտածէր պէս պէս բարեկարգութեամբ շքեղացուցանել եւ վայելչացուցանել զաթոռն սուրբ, եւ անհետ առնել զամենայն խանգարմունսն եւ զաղտեղութիւնսն: Սիրէր եւ պատուէր անաչառութեամբ, զորս համակամ էին ջանից իւրոց եւ տրամադրութեանց, եւ ատէր աքսորէր 'ի վանորայս զխառնագնացս եւ զբամբասեալս, եւ այսպէս օր յօրէ ջանահնար լինէր զաթոռն սուրբ պայծառացուցանել, եւ զարդարել ամենայն բարեկարգութեամբ:

Բայց եւ խոչնդոտք չէին նմա պակաս. յորոց մին եւ մեծագոյնն էր կանոնադրութիւն Ռուսաց տէրութեան որոշեալ 'ի հարիւրաւոր յօդուածս եւ աւելի եւս, Պալաժէնիա անուն, զոր միամտութեամբ սրտի (չասացից թէ անխոհեմութեամբ եւ փառասիրութեամբ) ընկալեալ էր նախորդ կաթողիկոսն Յովհաննէս Կարբեցի, իբրեւ անվնաս ինչ անկախութեան եւ հնաւանդ բարեկարգութեան Հայաստանեաց եկեղեցւոյ, թերեւս օգտակար նմին եւ պիտանի:

Իսկ Ներսէս՝ որ 'ի վաղ ժամանակաց հետէ լուեալ էր զնդունելն կաթողիկոսին զկանոնադրութիւնսն զայնոսիկ, եւ 'ի ձեռն մտերիմ բարեկամաց իւրոց զգուշացուցեալ էր զնա յետս կոչել զստորագրութիւն իւր՝ համոզելով եւ յորդորելով, թէ այն կանոնադրութիւնք վնասակար են անկախութեան եկեղեցւոյ մերոյ, ջնջեն բոլորովին զհնաւանդ առանձնաշնորհութիւնս Հայաստանեայց եկեղեցւոյ՝ տուեալս 'ի սուրբ ժողովոց յաւուրց անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի եւ Ներսիսի մեծի. բայց նա ոչ ան-

սաց նմա, եւ ամօթ համարեցաւ ինքեան զյետս կոչումն ստորագրութեան իւրոյ:

Ուստի այժմ՝ ՚ի նստիլ իւր յաթոռ Հայրապետութեան Հայոց՝ մերժեաց եւ հերքեաց զամենայն իբրեւ վնասակար եւ անընդունելի Հայաստանեայց եկեղեցւոյ, եւ հրատարակեաց ՚ի լուր կայսրութեանն Ռուսաց: Վասնորոյ եւ ոչ իսկ արժանի վարկաք մեք տալ ՚ի կարգի պատմութեանս ծանօթութիւն ինչ զյօդուածոց վնասակար կանոնադրութեանն, զոր մերժեաց Ներսէս այրն Աստուծոյ, եւ նոյնպէս յաջորդ նորա Մատթէոս կաթողիկոս մերժեաց, իսկ ազգն համօրէն ոչ երբէք ծանեալ զայն. ուստի լաւ է թաղել եւ զայն եւ չյանձնել ապագայ զաւակաց մերոց: Խորհեցաւ եւ զբազում ժամանակս տարւոյն կամ զամիսս ինն անցուցանել ՚ի Տփլիս, զի դիւրասցի նմա անդ զամենայն օր տեսանել զփոխարքայն եւ խորհրդակցել ընդ նմա. վասն որոյ զերիս ամիսս միայն յայց ելանէր սրբոյ աթոռոյն, ընդունէր զեկեալսն յուխտ եւ յերկրպագութիւն, օրհնէր զմիւռոնն սուրբ, եւ ձեռնադրէր եպիսկոպոսունս. յետ կարգադրութեանցս այսոցիկ ետ պատրաստել զկառս իւր, եւ կեցեալ օր մի յԵրեւան քաղաք, ել անտի բազմութեամբ ժողովրդոց, եւ եկեալ ՚ի Տփլիս մեծաւ հանդիսիւ, հանգեալ ՚ի վեհարանի իւրում:

Յետ աւուրց ինչ գնաց յայցելութիւն վարժարանին իւրոյ՝ զոր ինքն հիմնադրեալն էր եւ եկամուտս պատրաստեալ, եւ կոչեալ Ներսիսեան վարժարան, բայց ապա յաւուրս Կարապետ արքեպիսկոպոսի վիճակաւորի տեղւոյն խոպանացեալ եւ ՚ի վարձու տուեալ այլոց, վասն ցաւ մեծ զգաց կաթողիկոսն Ներսէս, եւ իսկ եւ իսկ վտարեաց անտի, զորս նստէին անդ իբրեւ ՚ի տան, եւ պահանջեաց ՚ի Կարապետ եպիսկոպոսէն զհաշիւ վարժարանին իւրոյ եւ վիճակին՝ կարգելով յանձնաժողովս քանի ինչ անգամ, որոյ անդամք էին Շահնազարեան Կարապետ վարդապետ եւ Յովհաննէս վարդապետ Արշարունեան, եւ յետ նոցա Գէորգ վարդապետ Կոստանդնուպօլսեցի առաջնորդն Պրուսայու, եւ Դաւիթ վարդապետ սուրբ Երուսաղէմի, որք գնացեա՞ք էին ձեռնադրիլ եպիսկոպոս, եւ զամ մի եւ աւելի տքնեցան յայս պաշտօն հաշուրնկալութեան, եւ այս վէճ եւ խնդիր հաշուին տեւեաց զամս բազումս, որ բազմօք տառապեցոյց զԿարապետ եպիսկոպոսն եւ ընդ պատրեօք էարկ, եւ մերկացուցեալ յամենայն հարստութեանցն առաքեաց



զնա յԱխլիսա իբրեւ առաջնորդական փոխանորդ, ուր եւ մեռաւ նա անդ:

Պատմի թէ Կարապետ եպիսկոպոս տայ կաշառս երից հազար մանէթաց Շահնազարեան Կարապետ վարդապետին՝ որ նախագահն էր յանձնաժողովոյն իւրոյ, զի գհաշիւն տեսցէ յօգուտ անձին իւրոյ. եւ նա այլընդ այլոց տեսանէ հաշիւ: Իմացեալ զայս կաթողիկոսին Ներսիսի խնդրէ զՇահնազարեանն պատուհասել զնա ըստ արժանաւոյն. բայց նորա զգացեալ՝ զիչերայն խոյս տայ ՚ի Տիխիսէ եւ անցանէ ընդ սահման Օսմանեան տէրութեան, եւ գնաց ՚ի Կոստանդնուպօլիս յաւուրս Յակոբոս պատրիարքի: Եւ Ներսէս կաթողիկոս առաքէ զկոնդակս առ Յակոբոս պատրիարք եւ առ իշխանաւորս ազգիս, առ Կարապետ արքունի ճարտարապետ, եւ առ Յովհաննէս եւ Պօղոս արքունի վառօդապետս, զի չընդունիցին զՇահնազարեանն իբրեւ Հայոց վարդապետ, եւ Յակոբոս պատրիարք ակնածեալ ՚ի կոնդակէ կաթողիկոսին՝ ոչ ցուցանէ նմա երես զուարթ, եւ արգելաւ զնա ՚ի քարոզչութենէն Ղալաթիոյ եկեղեցւոյն, ուր յղեալն էր յառաջ:

Իսկ նորա տեսեալ, զի չիք տեղի ապաստանի յերեսաց կաթողիկոսին, անցանէ ՚ի Փարիզ, ուր պարապեցաւ ժամանակս ինչ ՚ի թարբմանութիւնս նախնի պատմագրաց մերոց ՚ի Հայէ ՚ի Գաղղիացի բարբառ, զորս եւ սկսաւ տպագրութեամբ ՚ի լոյս մեծ գտեալ ՚ի Հայագգի վաճառականաց պանդխտելոց անդ՝ սկսաւ հրատարակել օրագիր. բայց ախտ ինչ դժնդակ եւ անբուժելի ՚ի վերայ հասեալ՝ արգել զնա ՚ի վաստակոցն, յոյր վասն վերադառնայ ՚ի Փարիզ, եւ չգտեալ անդ դարման անձին՝ գայ յԵգիպտոս, ուր տեսեալ զՆուպար փաշա խօսակցի ընդ նմա, եւ յայտնէ զիղձս իւր զամենայն ինչս եւ զգրեանս իւր յանձնել նմա առնելով կտակս վասն հաստատութեան ազգային դպրոցի միոյ ՚ի կողմանս Կիլիկիոյ յիւրոց իսկ արդեանց, եւ զՆուպար փաշա կարգել կտակակատար, եւ ապա եկեալ ՚ի Կոստանդնուպօլիս, յետ սակաւ ժամանակաց մեռանի անդ, եւ թաղի ՚ի Խասգիւղ:

Դէպ եղեւ յաւուրսն յայնոսիկ Ներսէս եպիսկոպոսի Վարժապետեան երթալ յԵգիպտոս հրամանաւ Պօղոսի պատրիարքին Կոստանդնուպօլսոյ, գնացեալ սորա անդ, տեսանէ զՆուպար փաշա, եւ միանգամ եւ երկիցս խօսակցի ընդ նմա վասն կտակին Շահնազարեան վարդապետին:

Բայց վասն զի այնչափ գոյք հանգուցելոյն չէին բաւական 'ի հասոյթ դպրոցին, եւ բազմաց ծախուց պէտք էին վասն շինութեան դպրոցին եւ կարեւոր պիտոյից նորին, ինքն իսկ փաշայն խոստացաւ հոգալ զամենայն յիւրոց իսկ արդեանց, յաւելլով 'ի վերայ հազար Օսմանեան ոսկւոյ գոյից Շահնազարեանի՝ երեք հազար ոսկիս եւս. եւ առ դիւրելոյ առ ժամանակ ինչ զպիտոյս վարժարանիս, խորհրդով Նուպար փաշայի հաստատեցաւ վարժարանս 'ի Խասգիւղ, ընդունելով 'ի նմա տասն աշակերտս ճրիավարժս 'ի զանազան կողմանց Կիլիկիոյ, ըստ բաղձանաց Շահնազարեան վարդապետին. որպէս զի յետ ժամանակաց դիւրեսցի հաստատութիւն վարժարանին 'ի Կիլիկիա, 'ի ձեռն բնիկ աշակերտացն վարժելոց 'ի վարժարանին Խասգիւղի:

Մեծապէս փայլի յազգօգուտ հաստատութեանս յայսմիկ աշխատութիւն եւ տքնութիւն Գերապատիւ Ներսէս սրբազան եպիսկոպոսի Վարժապետեան, որ յաջողեցաւ ըստ ամենայնի շահիլ եւ զսիրտ Նուպար փաշայի, եւ եղեւ պատճառ հաստատութեան վարժարանիս, յորում բաց 'ի ճրիավարժ տասն աշակերտաց՝ ամսականաւոր աշակերտք պարապին յոսոումն՝ առաւել քան զհարիւր:

## ԳԼՈՒԽ ԾՁ.

Յաղագս գտնութեան 'ի մէջ կաթողիկոսին, եւ Լազարեան Խաչիկ աղայի:

(1846) Մինչ բարեկարգեաց զգլխոց իւր Ներսէս կաթողիկոս, եւ օր քան զօր յայց ելեալ նմին տեսանէր զբարեկարգութիւն նորա եւ զուարճանայր յանձն իւր, հիմնադրեաց եւ զվանս մի կուճանաց անդ 'ի Տփլիս, հասոյթս եւ եկամուտս պատրաստեալ նմա, եւ եղ 'ի նմա վարժուհիս եւ մայրապետս եւ քահանայս դասատուս բարեկիրթս եւ մաքրակրօնս, եւ կանոնօք ամրափակեաց զնա չմտանել անդ այր մարդ, եւ եթէ հիւր ինչ օտարական եկեալ՝ յայց ելանել կամիցի, գնասցէ նախ յառաջնորդարանն, եւ ծանուցցէ զինքն, եւ ընկալեալ 'ի նմանէ զբարեհաճութիւնս եւ զհրամանազիր տոմսակ առ մայրապետն գրեալ, գնասցէ անդ, եւ զայցելութիւնն կատարեալ դարձցի վերստին:

Այս վանք կուսանաց օր քան զօր վայելչացեալ համբաւ մեծ ստացաւ յայնոսիկ կողմանս:

Երեւելի էր 'ի սմին ժամանակի աղա Խաչիկ Լազարեան՝ այր ազնուական 'ի տոհմէ Եղիազարեանց՝ ասպետ զանազան նշանաց՝ սենեկապետ եւ խորհրդական կայսերն Ռուսաց՝ հիմնադիր եւ տէր ձեմարանին Լազարեանց՝ որ 'ի Մոսկուայ: Սա կամեցաւ զդուստր իւր հարսնացուցանել ընդ որդւոյ Մուրատ պէյի Մանուկ պէյեան, որ էր որդի աներորդւոյն իւրոյ եւ մերձաւոր ազգական. եւ վասն այսր խնդրեաց հրաման պսակի 'ի սրբազան Կաթողիկոսէն, մինչ էր յայնժամ 'ի Պետրբուրգ: Բայց սրբազանն յիշեցուցանելով նմա զմերձաւոր ազգականութիւնն՝ որ 'ի մէջ երկուց ազնիւ գերդաստանացն, եւ զկանոնս սուրբ եկեղեցւոյ, որ չտայ թոյլ այսչափ մերձաւոր ազգականութեանց լծակցիլ ընդ միմեանս ամուսնութեամբ, խրատեաց զնա եւ յորդորեաց բազմօք չապստամբիլ ընդդէմ եկեղեցւոյ, եւ ժառանգել զօրհնութիւնս Աստուծոյ եւ սրբոց հարց, որք կանոնօք ամրափակեալ են զսրբազան խորհուրդսն, եւ ոչ թոյլ տան խառնազնաց վարուք լծակցիլ զօրէն Հրէից եւ Մահմէտականաց:

Տեսեալ Խաչիկ Լազարեան, թէ չէ հնար ամոքել զսրբազան Ներսէս վասն հրամանին, ոչ խոստմամբ պարգեւաց, ոչ աղաչա-

նօք, եւ ոչ ակնածութեամբ երեւելի միջնորդաց, ակամայ լուեաց, թողեալ այլուժ ժամանակի զոր փափաքէրն առնել:

Եւ մինչ մեկնեցաւ սրբազան կաթողիկոսն 'ի Պետրբուրգայ, եւ եկն 'ի Տփլիս, առաքեաց առաջնորդ Պեսարապիոյ Մատթէոս արքեպիսկոպոս, որ գնացեալ 'ի վիճակ իւր կոնդակաւ կաթողիկոսին, սկսաւ հովուել եւ բարեկարգել զմերագնեայ բնակիչս Ղրիմու նորոյն Նախըուանայ, եւ Պեսարապիոյ, գնաց հովուական պաշտօնիւ եւ 'ի Պետրբուրգ, զի եւ նա 'ի վիճակի իւրուժ էր, եւ մնաց անդ 'ի ձմերան ժամանակի:

Յայսմ միջոցի իսաչիկ Լազարեան պատրաստեալ յաւուր միում խնճոյս մի մեծ 'ի տան իւրում, եւ հրաւիրեալ անդ զմերձաւոր ազգականս իւր, եւ զերեւելի պաշտօնակալս կայսրութեանն, եւ զՄատթէոս արքեպիսկոպոսն. եւ յետ նուագարանաց եւ պարուց յերեկոյեան պահու բազմին 'ի ճաշ, եւ հանեալ զգինի Կախէթու հին եւ պատուական արբենան առաւել քան զչափն:

Զկնի ճաշուն իսաչիկ Լազարեան զՄատթէոս արքեպիսկոպոս, եւ տարեալ յառանձին սենեակ ինչ, յոգւոց հանէ առաջի նորա եւ ասէ, Հայր սրբազան, վէրք մի ունիմ 'ի սրտիս, եւ ոչ ոք կարէ բշկել, բայց միայն սրբազանութիւն ձեր: Ասէ եպիսկոպոսն, Պայծառափայլ տէր, երդնում յԱստուած, զի եթէ կարողս եմ, ոչ անխայեցից 'ի քէն եւ զկեանս իմ անգամ:

Ասէ իսաչիկ, սրբազան Հայր, դու գիտես, զի միակ դուստր մի ունիմ, եւ չունիմ այլ, եւ նա է յոյս եւ ակնկալութիւն իմ, զի ժառանգեսցէ զանուն Հայրենեաց մերոց, եւ անուն ազգատոհմի միոյ մի կորիցէ իսպառ: Արդ լուայ 'ի հաւատարիմ բարեկամաց, զի վեհափառ կայսրն պատրաստեալ է զերիտասարդ մի 'ի գերդաստանէ իւրմէ, եւ կամի հարսնացուցանել ինքեան զդուստրն իմ, յայնժամ ազդ Եղիազարեան տոհմին իսպառ ունի շիջանիլ եւ կորնչիլ, ընդ նմին եւ պարծանք ազգիս. եւ Ռուսք փոխանակեսցեն զտեղի հարց մերոց:

Վասն որոյ խնդրեմ եւ աղաչեմ, զի 'ի գիշերիս յայսմիկ դիցես պսակ օրիորդիս իմում ընդ որդւոյ Մուրատ պէյի, որ է յազգականութենէ իմմէ, եւ է աստ:

Ասէ եպիսկոպոսն. բարի է զոր ասէքդ. բայց վասն մերձաւոր ազգականութեան նորին՝ չգիտեմ, թէ զի՞նչ արարից: Ասէ ցնա իսաչիկ, սրբազան Հայր, միթէ Աստուածադիր եւ աւետարանա-

կա՞ն իցեն օրէնքս այս խնամութեան. եւ ո՞չ ապաքէն նահապետք սուրբք աստուածային կարգադրութեամբ առին իւրեան կանայս ՚ի մերձաւոր ազգականաց իւրեանց, զի մի այլակրօն ոք մտցէ յազգ իւրեանց եւ խանգարեսցէ զանուն նահապետութեանն. ահա նոյն բան է եւ այժմ յայսմիկ: Իսկ եթէ մարդկային իցեն օրէնքս այս, ապաքէն օրէնք ՚ի ձեռս առաջնորդաց են, որք կարեն փոփոխել եւ տնօրինել ըստ ժամանակին, եւ ՚ի պահանջել հարկին՝ բոլորովին եւս հերքել, զի հարկն զօրէնս լուծանէ:

Ի բանից աստի խրախուսեալ եւ յորդորեալ եպիսկոպոսին, ել յոտս, եւ ասէ, առաքեա արս յեկեղեցին, եւ բերցեն քահանայք առիս զԽաչ զՄաշտոց եւ զգեստս եպիսկոպոսութեան իմոյ: Յայնժամ առաքեաց Խաչիկ արս յեկեղեցին, եւ բերին զամենայն զոր ասաց եպիսկոպոսն, եւ զգեստաւորեալ արքեպիսկոպոսն՝ ել ՚ի սրահն մեծ զարդարեալ ամենայն հանդերձանօք, եւ վառէին հազար կանդեղք. եւ ածեալ զհարսն եւ զգեստայն յատենի բազմութեանն, պսակեաց եպիսկոպոսն ՚ի հանդիսին յայնմիկ, եւ եղեւ ուրախութիւն մեծ զաւուրս երիս:

Այս լուր հարսանեաց այն ինչ եհաս յականջս սրբազան հայրապետին Ներսիսի, եւ քաջ տեղեկացեալ, թէ Մատթէոս եպիսկոպոսն արարեալ է զայն պսակ, յանհնարին բարկութիւն շարժեալ հանէ սուրհանդակս, եւ գրէ կոնդակ առ Մատթէոս եպիսկոպոս, զի փութանակի եւ անյապաղ գայցէ առ ինքն:

Ընթերցեալ եպիսկոպոսին զկոնդակն եւ ՚ի վերայ հասեալ՝ թէ կաթողիկոսն ունի դատապարտեալ զինքն եւ չարաչար պատուհասել վասն ապօրինաւոր պսակի զոր արարն, գնայ առ Խաչիկ Լազարեան, եւ ցուցանել նմա զկոնդակն, աղաչէ զնա եւ թախանձէ ազատել զինքն ՚ի ձեռաց կաթողիկոսին: Եւ նա քաջալերէ զնա չերկնչիլ բնաւ երբէք, եւ մնալ անդ ՚ի Պետրբուրգ ընդ պաշտպանութեամբ իւրով, եւ ասէ, ցորչափ կենդանի եմ ես, ոչ կարէ կաթողիկոսն հանել զքեզ ՚ի պաշտպանութենէ իմմէ:

Բայց այսու ամենայնիւ գրեաց Մատթէոս եպիսկոպոս զիր աղերսանաց առ կաթողիկոսն Ներսէս մեծաւ պաղատանօք, յորում երկարօէն պատմէ զբանս Խաչկայ Լազարեան առ ինքն, եւ թէ ինքն խոհեմութեամբ գործ գործել կամեցեալ, զերկուց չարեաց փոքրագոյնն ընտրեալ է ՚ի պսակելն. զի արդարեւ անցանելն զօրինօքն եկեղեցւոյ՝ չար է ասէ. բայց եւ հարսնացուցանելն կայսեր զօրիորդն Հայ ընդ Ռուսս՝ է չարագոյն եւս. զի նովաւ բնա-

ջինջ ունի լինել անուն եւ հայրենիք պայծառափայլ ազգատոհմին Եղիազարեանց յազգէ Հայոց, վասն որոյ համարձակեցաւ ասէ ընտրել զփոքրագոյնն երկուց չարեաց:

Բայց ոչ համոզեցաւ Ներսէս կաթողիկոս 'ի բանիցս յայտոցիկ, այլ դարձեալ գրեաց առ նա գալ առ ինքն. յաւել եւ զգրել առ կայսրն, զի զՄատթէոս եպիսկոպոս 'ի ձեռս զօրականաց տուեալ առաքեսցէ առ ինքն. այլ ոչ լուաւ նմա կայսրն 'ի շնորհս Լազարեանց, եւ գրեաց պատասխանի, թէ Մատթէոս եպիսկոպոս անկեալ կայ 'ի մահճիս կաթուածով ախտիւ. եթէ առողջասցի, յայնժամ եկեսցէ. եւ այսպէս մնաց Մատթէոս եպիսկոպոս 'ի Պետրբուրգ մինչեւ ցմահ հայրապետին Ներսիսի, եւ վախճանիլ նորա՝ եղեւ առաջնորդ Աժտէրխանու կայսերական հրովարտակաւ:

Այս գժտութիւն եւ փոխադարձ սրտնեղութիւն 'ի մէջ սրբազան կաթողիկոսին Ներսիսի եւ Խաչիկ աղայի Լազարեանց տեւեաց զամս բազումս, եւ սա եղեւ պատճառ զի յետ տասն ամաց մինչ մեռաւ կայսրն Նիկողայոս, եւ յաջորդեաց զաթոռ նորա Աղէքսանդր Բ. որդի նորա, եւ հանդերձեալ էր օծանիլ կայսր ամենայն Ռուսաց, հրաւիրեցան յամենայն կողմանց տէրութեան նորա ըստ նախնի կայսերական օրինաց ամենայն աստիճանաւորք, որք պարտ էին ներկայ գտանիլ 'ի հանդիսի օծման նորա, եկն հրաւէր եւ առ Ներսէս կաթողիկոս, բայց այսու օրինակաւ, զի վասն ծերութեանն մի աշխատ լիցի ճանապարհորդել 'ի Պետրբուրգ, զի մի հիւանդութիւն ինչ առաքեսցէ զոմն յարքեպիսկոպոսաց օծանել զկայսրն. եւ կայսրն ընկալցի զեպիսկոպոսն զայն՝ իբրեւ զնոյն ինքն զկաթողիկոսն Հայոց:

Ընթերցեալ զայս թուղթ Ներսէս կաթողիկոս, ծանեալ իսկ եւ իսկ, զի Խաչիկ Լազարեան ձեռնարկեաց զայս հնար, քաղաքավարութեամբ արգելուլ զնա յերթալոյ յօծումն կայսեր. եւ յանգէտս եղեալ խորամանկ հնարիցն՝ առաքեաց իւր փոխանորդ զհաւատարիմ իւր զՍարգիս արքեպիսկոպոս Հասանջալալեան զայրն խորախորհուրդ, տուեալ նմա զշնորհաճիր կոնդակ օրհնութեան եւ բարեմաղթութեան վասն Աստուածընտիր կայսերն եւ ամենայն տան նորա. եւ նորա գնացեալ եւ տուեալ զկոնդակն, պատուեցաւ ըստ իւրում բարուցն, եւ ընկալաւ զնշան ասպետութեան սրբոյն Աննայի, եւ յետ կատարելոյ զօծումն կայսերն՝ վերադարձաւ պատուով առ կաթողիկոսն հանդերձ ընծայաբեր թղթով շնորհակալութեան եւ առաջին կարգի զանազան նշանաց:

(Զայս պատմութիւնն ինքն իսկ Մատթէոս եպիսկոպոս պատմեաց մեզ 'ի սուրբ Էջմիածին յաւուրս Մատթէոսի կաթողիկոսի, որում ընդ առաջ եկն, մինչ գայրն 'ի Կոստանդնուպօլսոյ, եւ հանդիպեցաւ մեզ մերձ 'ի ծովն Գեղամայ, եւ եկն ընդ մեզ 'ի սուրբ Էջմիածին, եւ գտաւ ներկայ 'ի ժամ օծման նորա 'ի փառաւոր հանդիսին):

Ի սմին ամի սաստիկ եւ անտանելի ցուրտ եղեւ յԵրեւան եւ 'ի սուրբ Էջմիածին, բայց ոչ այնչափ նեղեցան միաբանք սուրբ Էջմիածնի, զի սրբազան հայրապետն իւրով բնածին նախատեսութեամբ հոգացեալ էր 'ի ժամանակին զամենայն կարեւոր պիտոյս միաբանութեանն:

## ԳԼՈՒԽ ԾԷ.

Յաղագս հերձուածոյ բողոքական Հայոց:

(1846) Առաջին գործ Մատթէոս պատրիարքին եղեւ համոզել եւ դարձուցանել զմոլորեալսն 'ի ժողովրդենէ իւրմէ, որք որսացեալք էին 'ի ծուղակ երիցական աղանդոյն Ամերիկացւոց թելադրութեամբ եւ քարոզչութեամբ Միսիօնարաց նոցին՝ այսինքն քարոզչաց, որք երեքտասան ամօք յառաջ եկեալք 'ի Կոստանդնուպօլիս յաւուր Ստեփանոսի պատրիարքին, ցուցանէին զինքեանս եւ հաւատարմացուցանէին լինել քարոզիչ Հրէից եւ հեթանոսաց, եւ զՀայս ջատագովէին լինել ուղղափառ եւ ճշմարիտ քրիստոնեայ:

Իսկ 'ի վերջոյ ուր ուրեմն յերեւան ել բանն եւ խարդախութիւն նոցա, որ ոչ այնչափ զՀրեայս եւ զհեթանոսս կամին 'ի հաւատս ածել քրիստոնէութեան, որչափ զՀայս գուն գործեն մոլորեցուցանել զհետ աղանդոյն իւրեանց. եւ զայս դիտաւորութիւն իւրեանց երիւք եղանակօք խորհեցան յառաջ տանել:

Առաջինն, երթեւեկէին 'ի տունս Հայոց բարեկամաբար, եւ զպարզամիտս յանկուցանէին 'ի հաղբս մոլորութեան իւրեանց: Երկրորդն, աղքատաց եւ պարտատեարց օգնեցին, ոմանց ամսականօք, եւ ոմանց պատրաստ դրամովք: Երրորդն, բացին գիշերօթիկ դպրոցս 'ի Պերա եւ 'ի Պէպէք գիւղ յուսումն Գաղղիերէն եւ Անգլիերէն լեզուաց, եւ թուաբանութեան եւ աշխարհագրութեան, եւ բնական գիտութեանց, յորս ձրիաբար սկսան ուսուցանել: Եւ բազումք 'ի Հայոց հտուն զմանկունս իւրեանց միամտութեամբ, որք ընդ ուսմանցն դիեցին եւ թոյնս մուլար քարոզութեան նոցին, եւ եկեալ 'ի տունս իւրեանց՝ սկսան զծնողս եւ զագագականս մոլորեցուցանել:

Եւ նախ 'ի փոքունցն սկսեալ, հետզհետէ 'ի մեծամեծս ձեռն արկին յանդգնիլ եւ ջնջել. եւ 'ի վերջոյ յայտ յանդիման համարձակեցան քարոզել, նախ՝ թէ ամենայն գիրք եւ մատեանք սրբոց հարց անընդունելիք են բաց յԱւետարանէն, որով եւ զինքեանս Աւետարանականս կոչէին:

Երկրորդ, եկեղեցին Քրիստոսի է անտեսանելի, եւ չիք երեւելի եկեղեցի:



Երրորդ, ուրանային գսուրբ խորհուրդս եկեղեցւոյ. չորրորդ՝ զգոյափոխութիւն պատարագին՝ ՚ի մարմին եւ յարիւն Քրիստոսի. հինգերորդ՝ զբարեխօսութիւնն սրբոց, վեցերորդ՝ զմիշտ կուսութիւնն Աստուածամօրն մինչեւ ցվերափոխումն. եօթներորդ՝ զխոստովանութիւն մեղաց առաջի քահանային. ութերորդ՝ զերկրպագութիւն Խաչին՝ իններորդ՝ զյարգութիւն պատկերաց եւ սրբոց մասնաց. եւ տասներորդ՝ զպահս եւ զայլ կանոնս սուրբ եկեղեցւոյ: Համարձակեցան եւ յաղագս այսոցիկ տետրակս յօրինել եւ ջանալ հաստատել զմոլորութիւնս գայտսիկ, զբանս Սուրբ գրոց թիւր մեկնելով եւ այլ ընդ այլոց բացատրելով:

Իսկ Մատթէոս պատրիարք կամելով նախ եւ յառաջ իմանալ զհաշիւ սոցա, թէ քանի՞ք ոմանք եղեալ են մինչեւ ցայն ժամ ՚ի մեր ազգէ մոլորեալք եւ զակատեալք զհետ պիղծ աղանդոյն այսորիկ, եւ գտան ութ հազարիւ չափ հաշուեալք ՚ի տումարաց ծխատէր քահանայից Կոստանդնուպօլսոյ եւ գիւղօրէից նորին, յորմէ սկսեալ էր ճարակիլ եւ ՚ի կողմանս Անատօլուի եւ Բուսթիլիի, ՚ի Կեսարիա, ՚ի Նիկոմիդա եւ ՚ի գիւղօրէս նորուն, ՚ի Թէքիրտաղ, եւ այլուր:

Եւ սկսաւ ՚ի ձեռն իւրաքանչիւր քահանայից հրաւիրել զմոլորեալսն զայնոսիկ առ ինքն, զորս պատուասիրութեամբ ընկալեալ, բանայր զխօսս եւ հարցանէր, թէ զիա՞րդ մեկնեալ ՚ի մայրենի ծոցոյ եկեղեցւոյն իւրեանց՝ զակատեալ են զհետ մոլար աղանդոյն, եւ եգիտ զբազումս, որք արծաթովք խաբեալք էին աղքատութեան աղագաւ եւ ամսականս առնուին. եւ ոմանք ՚ի պարտուց իւրեանց դրամովք նոցին զերծեալք, պարտաւորեալ էին զհետ երթալ նոցին:

Չայսոսիկ ստուգեալ եւ տեղեկացեալ, եւ ՚ի տումարի արձանագրեալ, ինքն իսկ խոստացաւ տալ զամսականսն զայնոսիկ, որք մեծաւ շնորհակալութեամբ եւ ուրախութեամբ զնացին առ քահանայս իւրեանց, եւ խոստովանեալք ապաշխարեցին. եւ այսու եղանակաւ թիւ մոլորելոցն յութ հազարէն էջ յերիս հազարս:

Իսկ նոքա՝ որք պարզմտութեամբ խաբեալք էին մոլորեցուցչաց, կռապաշտութիւն համարելով զյարգութիւնն պատկերաց եւ զբարեխօսութիւնն սրբոց, համոզեալք ՚ի քարոզութենէ սրբազան պատրիարքին, որ յամենայն կիւրակէս ժամս երկուս եւ երիս խօսէր յատենի սուրբ եկեղեցւոյ, եւ հաւանեցուցանէր զնոսա ՚ի

սուրբ գրոց, թողին գտարակոյս իւրեանց, եւ դարձան յեկեղեցի իւրեանց հոգեւոր մխիթարութեամբ:

Եւ վասն նոցա որք վիճաբանել կամէին 'ի վերայ խնդրոցս այսոցիկ, որոշեաց զսենեակ մի 'ի Մայր եկեղեցւոջ, եւ եդ 'ի նմա զպատուելի Յովհաննէս Տէրոյէնց զայրն բազմահմուտ եւ լեզուագէտ, եւ հրամայեաց, զի որ ոք ունիցի տարակուսական խնդիր ինչ եւ վիճել կամիցին, գնասցէ առ նա, գրեսցէ զխնդիրն, եւ գրով առցէ զպատասխանին. եւ այսու եղանակաւ հազարք եւս շահեցան, եւ մնաց թիւ մոլորելոցն հազար հինգ հարիւր:

Յայսմ միջոցի եկն դարձեալ 'ի Կոստանդնուպօլիս Վրթանէս անուն քահանայն Նիկոմիդացի, որ ամօք յառաջ եւս եկեալ էր, եւ քարոզէր զմոլորութիւնս աղանդոյս այսորիկ 'ի սրճանոցս եւ 'ի շուկայս: Լուեալ զայս Մատթէոս պատրիարք, ետ բերել զնա առ ինքն, եւ նստուցեալ առաջի իւր քաղցթութեամբ եւ սիրալիր բանիւք, եհարց զորմէ լուեալն էր: Եւ նա ոչ ամօթ համարեցաւ գրել զամբարշտութիւնս իւր, եւ յայտնի անպատրուակ բանիւք ուրացաւ զխորհուրդս սուրբ եկեղեցւոյ, զգոյափոխութիւն սուրբ Պատարագին, զմիշտ կուսութիւն Տիրամօրն մինչեւ ցվերափոխումն, եւ զխոստովանութիւն մեղաց: Անարգեաց եւ գյարգութիւն պատկերաց եւ սրբոց մասանց, եւ յաւել ասել, թէ յարգ եւ պատիւ խաչափայտին՝ որում դուքդ երկիրպագանէք, մի եւ նոյն է առաջի իմ ընդ այլ ամենայն փայտից՝ որք գետեղեալք կան 'ի խանութս ատաղձավաճառաց:

Յայնժամ Մատթէոս պատրիարք քաղրութեամբ խրատել կամելով զնա, խօսեցաւ նմա ժամս երկուս 'ի սուրբ գրոց, եւ յորդորեաց հնազանդիլ սուրբ եկեղեցւոյ, պահել անփոփոխ զհայրենական ուղղափառութիւն հաւատոյն Քրիստոսի, եւ միջնորդ եւ բարեխօս ունել զԱստուածամայրն հաւատալով զմիշտ կուսութիւն նորա անապական մինչեւ ցվերափոխումն:

Պատասխանի ետ ամբարիշտն եւ ասէ, առ իմէ՞ այդչափ յարգ եւ պատիւ տայք լկտի կնոջ միոյ:

Ընդ հայհոյել նորա զայս, փոխանորդ պատրիարքին Թադէոս վարդապետ այր ջերմեռանդ եւ խստակրօն՝ որ կանգնեալ կայր ընդ մեզ առաջի պատրիարքին եւ ունկն դնէր, 'ի լսել նորա զայս ամբարշտութիւն վազեաց 'ի դուրս, եւ խնդրէր փայտ խոշոր, բիր, կամ երկաթ ինչ հարկանել զգլուխ ամբարշտին եւ սատակել զնա 'ի նոյն տեղւոջն:

Յարեաւ պատրիարքն եւ ասէ ցամբարիչտն, կորիւր եւ փախիր անզգամ, եւ ինքն ելեալ արտաքս 'ի սենեկէն, գրկեաց զԹաղէոս վարդապետեա, եւ աղաչէր զնա համբերել: Իսկ նա խռովեալ եւ ցասուցեալ անհնարին զայրացմամբ, գոչէր եւ աղաղակէր, սատակեցից զամբարիչտս զայս յերկրէ, եւ հեղցէ արիւն իմ առաջի դրան պատրիարքարանիս 'ի փառս սուրբ Աստուածամօրն:

Եւ 'ի միջոցի յայսմիկ խոյս ետ անզգամն, բայց լսելի եղեւ արտաքս այս ձայն, եւ 'ի յաջորդ աւուրն եկեղեցականք եւ պատուաւոր անձինք բազումք եկին առ պատրիարք, բողօք բարձին զամբարչտելոցն զայնոցիկ, եւ ասեն: Հայր սրբազան, ամբարիչտքս այսոքիկ հանապազօր քարոզեն 'ի սրճանոցս եւ 'ի շուկայս զանհաւատութիւն իւրեանց, եւ զՀայս կռապաշտս կոչեն եւ մոլորեալս, եւ յարուցանեն խռովութիւնս եւ նաւաւարք, գոլով ջերմեռանդ 'ի հաւատս իւրեանց պատասխանեն նոցա անլուր հայհոյութեամբ: Եւ ո՞ գիտէ, գուցէ եւ յաւուր միում արբեալ ոմն 'ի ջրհանակրաց ոչ կարելով համբերել, հարցէ զնոսս սրով կամ քարամբք եւ սպանցէ, եւ յայնժամ զի՞նչ լինիցի, ոչ ապաքէն դեսպանք Անգլիոյ եւ Ամերիկոյ յայնժամ ամբաստանեն զմէնջ առաջի տէրութեան, թէ Հայք բարբարոսք են, եւ զբողոքականսն սպանանեն, եւայլն:

Արդ քեզ մնայ սրբազան հայր՝ նախապես լինել չարավախճան աղետիս, եւ հնարս գտանել, զի Հայք չխօսիցին երբէք ընդ նորադանդից, եւ 'ի տունս եւ 'ի խանութս նոցա չմտանիցեն առեւտրութեան աղագաւ. ահա մեք պատմեցաք ձեզ զամենայն զոր տեսանեմքս հանապազօր. քեզ մնայ հոգալ եւ տնօրինել զարժանն եւ զկարեւորն:

Յետ մեկնելոյ նոցա զմտաւ ածեալ Մատթէոս պատրիարք, գրեաց եւ հրաւիրեաց զսրբազան Կարապետ նախորդ պատրիարքն՝ որ նստէրն յԻւսքիւտար, եւ զՅովհաննէս արքեպիսկոպոս փոխանորդն սուրբ Երուսաղէմի, եւ զԹերունին Յովհաննէս վարդապետ զքարոզիչն Խասգիւղի, եւ պատմեալ նոցա մի առ մի գեղեալսն ամենայն, եւ խորհուրդ արարեալ ընդ նոսս, միաբան վճռով եւ ստորագրութեամբ յառաջակայ կիւրակէին յայնմիկ ընթերցաւ կոնդակ բանադրանաց յամենայն եկեղեցիս Կոստանդնուպօլսոյ 'ի յունվարի 12, 1846:

Առաքեաց եւ զօրինակ կոնդակին յԱնատուլու եւ 'ի Րումէլի 'ի զգուշութիւն պարզամիտ ժողովրդեան Հայոց՝ ըստ յայսմ օրինակի:

“Ի տէր Մատթէոս արքեպիսկոպոսէ եւ պատրիարքէ մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ, համօրէն եկեղեցական հոգեւոր պաշտօնէից 'ի Քրիստոս, եւ համայն հայկազուն ժողովրդոց մերոց՝ ողջոյն 'ի Քրիստոս Յիսուս:

“Հոգւոյն սրբոց շնորհաց անօթն ընտրեալ՝ սրբազան առաքեալն Պօղոս բարիոք խրատէ զսպասաւորս եկեղեցւոյն Աստուծոյ ըստ ամենայն կարգի եւ աստիճանաց, թէ ո՞րպէս պարտ է կալ եկեղեցականաց 'ի հաւատս եւ 'ի վարս սրբութեամբ եւ անարատութեամբ. ո՞րպէս պարտ է երիցանց եւ քահանայից՝ որք պաշտօնեայք են աստուածային սուրբ խորհրդոյն՝ սնանիլ բանիւք հաւատոց, եւ լինել օրինակ հաւատացելոց բանիւք՝ զնացիւք՝ սիրովք՝ հաւատովք՝ եւ սրբութեամբ՝ չառնել անփոյթ զշնորհացն Աստուծոյ, որ տաւ նոցա 'ի ձեռնադրութենէ երիցութեան, եւ զգուշանալ անձանց եւ վարդապետութեան իւրեանց, որովք կարասցեն ապրեցուցանել զանձինս իւրեանց եւ զայնոցիկ՝ որք նոցա լսենն:

“Չայս ամենայն բարիոք աւանդէ սրբազան առաքեալն գրելով առ Տիմոթէոս, Ա. 6. “Յիշեցուցանեմ քեզ որդեակ իմ Տիմոթէէ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են 'ի քեզ 'ի ձեռնադրութենէ իմմէ. զբարւոք աւանդն պահեստիւր 'ի ձեռն հոգւոյն սրբոյ 'ի մեզ բնակելոյ, փութաստիւր զանձն քոյ ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան, յայդ խորհեաց եւ 'ի դոյն կանխեստիւր ով Տիմոթէէ, եւ պահեստ զաւանդն խոտորեալ 'ի պղծոց եւ 'ի նորաձայն բանից եւ հակառակութեանց”:

“Բայց այժմ 'ի յետին ժամանակս ըստ հոգեշունչ մարգարէութեան առաքելոյն վրիպեցան ոմանք 'ի սուրբ հաւատոցն՝ խոտորեալք յամբարշտութիւնս եւ 'ի մոլորութիւնս դիւաց, կեղծաւորութեամբ ստաբանք, պատրեալք իւրեանց խղճիւն մտաց, եւ զհետ երթեալք չար բաղձանաց իւրեանց կործանին յառասպելս նորաձայն հակառակութեանց եւ մոլորութեանց:

“Յորոց մին է այժմ 'ի մերումս ազգիս չիք եւ թշուառ Իզնիմիտցի Վրդանէս անարժան քահանայն ձեռնադրեալ 'ի վաղ ժամանակաց 'ի վերայ եկեղեցւոյն Իզնիմիտու 'ի հոգելոյս Պօղոս

արքեպիսկոպոսէ յառաջնորդէ նորին իսկ քաղաքի: Սա՛ ընդ մարմնասէր եւ զեղծ բնաւորութեան բարուցն թողու զեկեղեցի եւ զպաշտօն իւր սուրբ, աստ անդ թափառեալ թէ՛ ՚ի մայրաքաղաքիս եւ թէ՛ յԻգնիմիտ, բարբանջէ մոլորութիւնս անվայել իւրումն սուրբ կարգի եւ պատուոյ, եւ լինի պատճառ գայթակղութեան բազմաց, եւ մերժեալ յանձնէ իւրմէ բոլորովին զհաւատոցն սրբութիւն՝ զոր ընկալեալն էր ՚ի սուրբ եւ ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց, հետեւի մոլոր վարդապետութեան նորազանդից, եւ սկսանի մոլորութիւնս քարոզել յԻգնիմիտ, եւ ՚ի Կեսարիա, յԱրեւելս, եւ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ ամենայն տեղիս ուր եւ կոխեալ են ամբարիշտ ոտք սորին, եւ ընկղմել զպարգամիտ ժողովուրդս ՚ի կորուստ հոգւոյ: Յետ այսր ամենայնի ՚ի գալ նորին դարձեալ ՚ի Կոստանդնուպօլիս, կոչեցաք առ մեզ սիրով, եւ բազում անգամ խօսեցեալ ընդ նմա յորդորանօք եւ քաղցրութեամբ, առաջի արարաք նմա զհոգեշահ խրատս պիտանիս եւ օգտակարս՝ մերկանալ յինքնէ զամբարշտութիւնս մոլորական ընթացից իւրոց, եւ զգենուլ զլուսափայլ զգեստ սուրբ եւ ուղղափառ վարդապետութեան եկեղեցւոյս Հայաստանեայց:

“Այլ նա յամառեալ ՚ի չարիս իւր ըստ օրինակին Յուդայի՝ որ ոչ անսաց Աստուածային վարդապետութեան կենարարին մերոյ Յիսուսի, զոր ՚ի դէմս այլոց առաքելոց ասէր վասն Յուդայի, ”Բայց վայ մարդոյն այնմիկ յոյր ձեռն որդի մարդոյմատնեսցի, լաւ էր նմա, թէ չէր ծնեալ մարդն այն”։ զայս ոչ լուաւ Յուդա, եւ ոչ կամեցաւ խորհիլ ՚ի վերայ բանիս, զի ոչ կամէր թողուլ զչարութիւն իւր, զոր հանդերձեալն էր առնել: Նոյնպէս եւ սա ոչ կամելով մերժել յանձնէ իւրմէ զգիւական հոգին, առ հասանել չար բաղձանաց իւրոց՝ մերժեաց զսուրբ շնորհսն Աստուծոյ, զոր ընկալեալն էր ՚ի ձեռնադրութենէ իւրմէ: Արհամարհեաց զուխտն սուրբ, զոր ուխտեաց Աստուծոյ ընդ առնուլ զսուրբ կարգն քահանայութեան. ուրացաւ զեկեղեցին Քրիստոսի՝ որ ծնաւն զնա, եւ զանազանն սուրբ՝ որ ընկալաւ զնա յորդեգրութիւն Հօրն երկնաւորի: Եւ զայս ամբարշտութիւն իւր ոչ ՚ի գործոց եւ ՚ի բանից իւրոց եւ եթ եցոյց յանձին, այլ եւ յիւրում իսկ ձեռագրի՝ զոր ունիմք առ մեզ, ժայթքեալ է յայտկապէս զոր ունէր ՚ի սրտին, զմաղձն դառնութեան:

“Եւ որովհետեւ մոլորեցուցիչս այս գուն գործէ մտանել ՚ի տանէ ՚ի տուն, եւ ճանապարհորդել այսր անդր, եւ պատրել

զպարզամիտ ժողովուրդս մեր՝ ի կորուստ հոգևոյ, վասն որոյ փութալով զգուշացուցանել զհաւատացեալ սիրելիսդ իմ, յիշեցուցանեմ ձեզ ահա զբան առաքելական խրատուն, զոր գրէ առ Տիտոս Գ. 10. ”Թէ յառնէ հերձուածողէ յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ հրաժարեսձիր, գիտասձիր, զի թիւրեալ է այնպիսին, եւ մեղանչէ՝ անձամբ զանձն դատապարտեալ”. զի եթէ արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսիսի մեռանէր առանց ողորմութեան, ապա ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի համարի՞ջիք զայն, որ արհամարհէ զանարտ հարսն Քրիստոսի գսուրբ եկեղցին: Ահա մոլորեալ է այրս այս՝ որոշեալ կամաւ եւ յօժարութեամբ իւրով ՚ի միութենէ եկեղեցւոյն Քրիստոսի, թշնամի սուրբ եկեղեցւոյ եւ պառակտող անդամոց նորին, զայթակղեցուցիչ եւ մոլորեցուցիչ ժողովրդեան, մատնիչ եւ սպանող Քրիստոսի, որդի սատանայի, եւ ծնունդ Նեոին, վատթարագոյն քան զանհաւատս եւ զհեթանոսս, որ հաւատացեալ անուամբ կեղծաւորելով ուսուցանէ զամբարշտութիւնս եւ զմոլորութիւնս նորաղանդից:

“Վասն որոյ ըստ հրամանի Տեառն, թէ զգոյշ լերուք ՚ի սուտ մարգարէիցն, որք զան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, եւ ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք, որք ոչ խնայեն հօտին”: Մատթ. է. 15:

“Ահա սա է գայլ յափշտակող եւ պատառող, որ հանդերձիւք ոչխարաց՝ այսինքն քահանայական պարկեշտութեան կերպարանօք գայ առ ձեզ պատառել եւ յափշտակել, եւ զանմեղ գառինս զմանկունս սուրբ եկեղեցւոյ մերոյ անխնայ կեղեքել չար եւ դժոխային ատամամբք պիղծ բերանոյ իւրոյ: Վասն որոյ մերժեցաք զգա եւ արգեալք մտանել ՚ի խումբս հաւատացւոց մերոց իբրեւ գստանայ եւ որդի սատանայի, եւ կտրեցաք զքահանայութիւն սորա ընդ մէջ՝ բանիւն աստուծոյ, իբրեւ զհատեալ անգամ ՚ի խորհրդաւոր մարմնոյն Քրիստոսի, եւ իբրեւ ուռ հատեալ ՚ի հորթոյն՝ որ առ ոչինչ է պիտանացու՝ բայց միայն ՚ի հուր:

“Ուստի այսու ազդարարական կոնդակաւս պատուիրեմ եւ զգուշացուցանեմ զսիրելիսդ իմ հրատարակելով առ ամենայն քաղաքս հեռաւորաց եւ մերձաւորաց, չհայիլ յերեսս սորա իբրեւ յերեսս գտնաւեր գայլ յափշտակող, չառնուլ զողջոյն սորա իբրեւ զհոգեկորոյս մահադեղ, եւ զգուշանալ հանդերձ ամենայն տամբք ձերովք ՚ի սոյնպիսի մոլորեցուցիչ ամբարիշտ հետեւողաց մոլար վարդապետութեան նորաղանդից, եւ աղօթս առնել վասն

սոցա առ անյիշաչարն Աստուած, զի թերեւս զղջասցին եւ դարձցին ՚ի ճանապարհաց իւրեանց չարաց, եւ գտցեն փրկութիւն հոգւոց իւրեանց, շնորհօք Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ անսպառ յաւիտենիւ, ամէն:

“Գրեցաւ յայտարարութեան կոնդակս ընդ հովանեաւ Մայր եկեղեցւոյ սուրբ Աստուածածնին ՚ի Պատրիարքարանի Հայոց, յամի Տեառն 1846 ՚ի յունվարի 12, ՚ի Կոստանդնուպօլիս”:

Յետ բանադրելոյ Մատթէոս պատրիարք զերէցն Վրդանէս, բանադրեաց եւ գյամառեալ գլխաւոր արբանեակս նորին, որոց անուանքն են այսոքիկ. անհաւատ Ոսկան, Գամաղիէլեան երկու եղբարք Պօղոս եւ Յովսեփ, Աբիսողոմ երաժիշտ ամաց ինչ չարաչար վճարեցան ՚ի կենաց արտաքոյ կարգի հիւանդութեամբ ըստ վկայելոյ Լէոնի բժշկի նոցին՝ իւրով իսկ ձեռագրով, զոր գրեաց առ Մատթէոս պատրիարք, յորում պատմէ, թէ անհաւատ Ոսկանին լեզուն կապեցաւ զաւուրս երիս եւ ոչ կարէր խօսել, յետ երից աւուրց բացաւ լեզուն, եւ սկսաւ հայհոյել զԱստուած թէ ընդէ՞ր ստեղծեր զիս, եւ ՚ի հայհոյելն՝ փչեաց զոգին:

Գամաղիէլեան Պօղոսի որովայնն կապեցաւ անլուծանելի հանգուցիւք, եւ կարիք որովայնին ընդ բերանն ՚ի վեր հորդեալ խեղդեցին զնա:

Յովսեփ եղբայր նորին փախմուցեալ ՚ի կղզի օղափոխութեան աղազաւ փսխէ զարիւն յորդ, եւ խեղդամահ լինի:

Երաժիշտ Աբիսողոմ ընդոստուցեալ ՚ի վեր յանկողնոյն հարկարէ զգլուխ իւր չորիցս անգամ յերկաթի ծխնելոյզ վառարանին, եւ պատառոտեալ զգլուխն ցրուէ զուղեղն, եւ անկանի յերկիր մեռեալ:

Միրիքէլամ Կարապետ յոտից մինչ ցգլուխ վիրօք լցեալ, ժահահոտեալ որդնեռաց եղեւ զաւուրս եօթն, եւ սատակեալ չեղեւ արժանի թաղման ՚ի գերեզմանատան Հայոց, եւ եղեւ պատճառ մեծի խռովութեան, զորմէ ունիմք խօսել այլուր:

Ստեփան Քէրէստէճեան՝ որ գլուխ կարգեցաւ նորագանգից արքունի հրամանաւ, զճաշակ դժոխոցն յաստիս էառ անձնասպանութեամբ ՚ի կախաղան ելեալ եւ հրակէզ լեալ ամենայն տամբ իւրով. զսմանէ եւս ունիմք խօսիլ ՚ի ստորեւ:

Բանադրեալքս այսոքիկ ՚ի մի վայր եկեալ եւ խորհուրդ խորհեալ, ետուն աղերսագիր առ նախարարն արտաքին գործոց Բէշիտ փաշա եւ առ դենպետն մեծ՝ բողոքելով զպատրիարքէն Հա-

յոց, թէ բանադրեաց զմեզ վասն չընդունելոյ մեր զպատկերապաշտութիւն, եւ զխոստովանութիւն մեղաց, բայց վանեաց զնոսա Րէչիտ փաշա անարգանօք մեծաւ:

Յայնժամ եւ նոքա անկան աղերսանօք առ դեսպանն Ամերիկացւոց առաջնորդութեամբ Միսիօնարաց նոցին, եւ աղաչէին լինել պաշտպան ինքեանց, եւ հանել զինքեանս ՚ի հպատակութենէ պատրիարքին Հայոց:

Եւ նորա զնացեալ առ Քանինկ դեսպանն Անգլիացւոց բողոքէ զպատրիարքէն Հայոց՝ մեղս ծանունս դնելով ՚ի վերայ նորա, եւ թէ նզովեալ է զԼուտեր եւ զկրօն բողոքականաց եւ զեկեղեցի նոցա:

Լսելով բանադրելոցն, թէ դեսպանն Ամերիկացւոց զնացեալ է առ Քանինկ վասն բողոքելոյ զպատրիարքէն Հայոց, եւ վասն համարձակ քարոզելոյ ինքեանց զպիղծ աղանդ իւրեանց ՚ի մէջ ազգիս, փութացան եւ ինքեանք ՚ի նմին աւուր գիր աղերսանաց մատուցանել առ Քանինկ չարախօսելով եւ զրպարտելով զՄատթէոս պատրիարքէն, թէ վասն պաշտելոյ մեր զամբիծ հաւատս Լուտերականութեան բանադրեաց զմեզ եւ հրատարակեաց նզովս ՚ի վերայ Լուտերականութեան առ ամենայն քաղաքս յԱնատօլու եւ ՚ի Րուսիլի. տանուտեարք վանեն զմեզ ՚ի տանց իւրեանց արտաքս՝ մեղս համարելով բնակիլ ընդ մեզ վասն բանադրեալ լինելոյ մեր, եւ մնամք արտաքս ՚ի փողոցի ընտանեօք մերովք. խանութպանք եւ արհեստակիցք մեր ոչ ընդունին զմեզ ՚ի խանութս իւրեանց, եւ չառնեն զառ եւ զտուր, որով եւ ոչ կարեմք հայթհայթել զպարէն աւուրն, եւ կամք կարօտեալ եւ սովալլուկ որդուք եւ ընտանեօք: Նաեւ հրամայեալ է ջրհանակրաց եւ բեռնակրաց անզգաստից, զի եթէ պատահեսցին մեզ ՚ի գաղտնի տեղուղ ուրեք յառանձին փողոցի, դանեսցեն զմեզ անխնայ. վասն որոյ փակեալ կամք ՚ի տան, եւ երկնչիմք ելանել արտաքս: Զայսպիսի եւ որ սոցին նման են սուտ եւ անիրաւ զրպարտութիւնք, համաբարդեալ յաղերսագրին մատուցին խմբովին առ Քանինկ անդ ՚ի ներկայութեան դեսպանին Ամերիկացւոց:

Հաւատացեալ այսոցիկ Քանինկ, զայրանայ եւ բողոքէ առ Րէչիտ փաշա յասելն, թէ ”Ուստի՞ իցէ համարձակութիւն պատրիարքին Հայոց նզովել զհաւատ եւ զկրօն մեր. միթէ այսքան անա՞րգ եղեւ թագաւորութիւնն Անգլիացւոց, զի խայտառակեսցին հաւատք իւր ընդ ամենայն Տաճկաստան յատենի եկեղեցւոյ:



Առաքեաց առ Րէշիտ փաշա եւ զբանադրեալսն զայնոսիկ հանդերձ աղերսագրովն՝ զոր ետուն ինքեան, եւ հրամայեաց նոցա պատմել բանիւ բերանոյ զթշուառութիւն իւրեանց եւ զաղէտսն՝ զոր կրեն 'ի պատրիարքէն, եւ խնդրել, զի թոյլ տացի ինքեանց համարձակ պաշտել զկրօն իւրեանց յՕսմանեան թագաւորութեան:

Գնացեալ նոցա 'ի Բ. Դուռն, մտանեն 'ի սենեակ Րէշիտ փաշային, եւ տեսանեն անդ Զմագսուտ ամիրայ բազմեալ յաթոռի: Ընթերցեալ փաշայն զաղերսագիրն, հարցանէ ցնոսա եւ ասէ, եթէ գանկատ եւ բողոք ունէիք զպատրիարքէն ձերմէ, ընդէ՞ր ոչ եկիք այսր ծանուցանել ցմեզ, եւ գնացիք առ դեսպանն գլխացաւ տալ նմա:

Եւ մի ոմն 'ի նոցանէ Մկրտիչ անուն պատասխանէ անքաղաքավար բանիւք եւ ասէ, մեք զառաջինն եկաք առ ձեզ եւ աղաչեցաք, եւ դուք անտես արարիք զզհայցուածովք մերովք. վասն որոյ պարտաւորեցաք երթալ թախանձել զդեսպանն, զի միջնորդ եղիցի վասն ազատութեան մերոյ:

Յայնժամ Րէշիտ փաշա առ երեսս կեղծաւորի կատարել զհայցուածս նոցա, եւ արձակէ գնոսա քաղցրութեամբ, եւ խօսեցեալ ընդ Մագսուտ ամիրային վասն իրացս այսոցիկ, 'ի նմին գիշերի կոչէ զՄատթէոս պատրիարք 'ի տուն իւր, եւ պատմէ նմա գլխօսս դեսպանին, եւ յանդիմանէ զնա վասն բանադրանացն: Եւ Մատթէոս պատրիարք պատմէ նմա զհայհոյութիւնս Վրթանէս երիցուն 'ի պատրիարքարանի, եւ զմոլար բարբանջմունս նորազանդից, որք վեր 'ի վայր տապալել ջանան զազգ եւ զեկեղեցին Հայոց:

Զոր լուեալ Րէշիտ փաշա՝ համոզեցաւ, եւ իրաւացի դատեալ զխոհեմութիւն եւ զգործս պատրիարքին, հրամայեաց նմա երթալ անձամբ առ Քանինկ դեսպան Անգլիացւոց, եւ պատմել նմա զամենայն որպէս պատմեաց ինքեան:

Ելեալ Մատթէոս պատրիարք անտի՝ գնաց 'ի Բերա 'ի տուն Միսաք ամիրայի, եւ հրաւիրեալ անդ ղեպիսկոպոսն Անգլիացւոց, ընդ որում բարեկամացեալն էր յառաջագոյն, եւ պատմեալ նմա զայս ամենայն, աղաչեաց զնա 'ի միասին երթալ առ Քանինկ, եւ օգնել նմա 'ի խօսս: Հաճեցեալ եպիսկոպոսին ընդ խնդիր պատրիարքին յանձն էառ. եւ առաքեաց զթարգման իւր առ Քանինկ ազգ առնել նմա, եւ խնդրել հրաման զկարեւոր գործոյ ինչ:

Ընկալաւ դեսպանն զխնդիրն, եւ ժամադիր եղեւ յերկոտասաներորդ ժամու գնալ առ ինքն. եւ գնացին պատրիարքն եւ եպիսկոպոսն (ընդ որս եւ ես պատմիչս) ՚ի պալատ դեսպանին, որ մեծաւ մարդասիրութեամբ ընկալաւ եւ պատուեաց յոյժ, եւ սկսան բանախօսիլ, եւ Մատթէոս պատրիարք պատմեաց նմա զամենայն որպէս պատմեալն էր Րէշիտ փաշային. եւ զհայհոյութիւնս երիցուն զկուսութենէ Տիրամօրն ՚ի պատրիարքարանի, եւ զուրացութիւն երկուց սուրբ խորհրդոցն մկրտութեան եւ պատարագի, զորս ընդունին Անգլիացիք, եւ մերժեն Ամերիկացիք, եւ եպիսկոպոսն Անգլիացուց հաստատեաց զամենայն զբանս պատրիարքին, որպէս թէ խորհրդով իւրով արաբեալ իցէ պատրիարքն՝ զոր ինչ արարեալն է:

Ընդ որ հաճեալ դեսպանին եւ համոզեալ, հրամայեաց թէյ եւ պաքսիմատ եւ չէյ՛ չաքարեղէն ածել ՚ի մեծարանս պատրիարքին, եւ կոչեալ զԲիզանի զաւագ թարգման իւր առ ինքն, հրամայեաց նմա երթալ ՚ի վաղիւն առ Րէշիտ փաշա, եւ հասկացուցանել նմա, թէ անմեղ է պատրիարքն Հայոց զգործոց իւրոց՝ զորս արարեալ է. ուստի եթէ չարախօսք նորին եկեալ առ ինքն ամբաստանեսցեն զնմանէ, մի հաւատասցէ նոցա, այլ վանեսցէ զնոսս անարգանօք եւ յանդիմանութեամբ:

Գնացեալ Բիզանի ՚ի վաղիւն առ Րէշիտ փաշա, պատմեաց նմա զամենայն. եւ Րէշիտ փաշա գովեաց զխոհականութիւն պատրիարքին Հայոց եւ զքաղաքավարութիւն նորա, եւ նորադանդք զամօթի հարեալք խայտառակեցան անարգանօք, եւ բազումք ՚ի նոցանէ զղջացան եւ դարձան յեկեղեցի իւրեանց եւ ապաշխարեցին, եւ օր քան զօր պակասեցաւ թիւ նոցա, եւ հաշուեցաւ ընդ ամենայն ինն հարիւր երկոտասան ոգիւք:

Եւ յետ ամաց ինչ յաւուրս Յակոբայ պատրիարքին դեսպանք Ամերիկոյ եւ Բրուսիոյ հաճեցուցեալ զՔանինկ ընդ իւրեանս, խնդրեցին ՚ի Բ. Դրանէն շնորհել բողոքական Հայոց զանկախութիւն զպատրիարքէն Հայոց. եւ Բ. Դուռն ՚ի շնորհս նոցա անջատեաց զնոսս իբրեւ որոշ ժողովուրդ, տալով նոցա արքունի հրովարտակալ զանկախութիւն զպատրիարքէն Հայոց, եւ եղեւ զլուխ նոցա Քէրէստէճեան Ստեփան եղբայր Յակոբայ պատրիարքին Հայոց՝ մին ՚ի բանադրելոց անտի, զորմէ գրեցաք ՚ի վերանդր. եւ եղաւ պատուանուն սոցա էֆէնտի կամ Բրօզեսդան էֆէնտիսի:

Յաւուրս յայսոսիկ նզովեաց եւ Գերմանոս պատրիարք Կոստանդնուպօլսոյ զաղանդն Լուտերի յատուկ կոնդակաւ յամենայն եկեղեցիս Յունաց եւս եւ ՚ի հեռաւոր քաղաքս յԱնատօլու եւ ՚ի Րումէլի. բայց դատախազ եկաց դեսպանն Անգլիացոց Քանինկ՝ գնացեալ անձամբ առ արքայ եւ բողոք բարձեալ. եւ հրամանաւ արքայի ընկեցաւ Գերմանոս ՚ի պատրիարքութենէն. եւ յաջորդեաց նմա Մելիտոս մետրապօլիտն Նիկիոյ, որ նորոգեաց զնոյն նզովսն յաւուր մեծի Պենտեկոստէին ՚ի պատարագելն յեկեղեցւոջ պատրիարքարանին:

## ԳԼՈՒԽ ԾԸ.

*Յաղագս ընդունելոյ պատրիարքաց զաղամանդեայ պատուանչանս յարքայէ, եւ այցելութեան առ իրեարս, եւ վերստին բացման ձեմարանին Իւսքիւտարու, եւ փոփոխման գլխարկի եկեղեցականաց Հայոց, եւ առաքելոյ կաթողիկոսին զՊանակի առ Մատթէոս պատրիարք:*

(1845) **Յ**աւուրս յայտոսիկ արար արքայ հարսանիս քեռ իւրոյ Ատիլէ Սուլթանի, որ տուաւ 'ի կնութիւն Մէհմէտ Ալի փաշային. հանդէսն եղեւ յԻւքիւտար 'ի Հայտար փաշա ամարանոցն արքայի, որ տեւեաց զաւուրս եօթն: Հրաւիրեցան 'ի հարսանիս եւ պատրիարքունս Յունաց, Հայոց եւ հռովմէական Հայոց, եւ ըաբբին Հրէից. եւ յետ փառաւոր հացկերութիւն ներկայացան արքայի 'ի շնորհաւորութիւն եւ 'ի շնորհակալութիւն, որ իւրով մարդասիրութեամբն ընկալաւ զնոսա, եւ հրամայեաց փոխել զչքանչանս նոցա, եւ տալ զաղամանդեայ պատուանչանն բարձր աստիճանի խորհրդականութեան (միւսթէշար փայէսի):

Ջայս առիթ առեալ 'ի ձեռին Մատթէոս պատրիարք, գնաց 'ի Ղատիգիւղ առ բարձրապատիւ սպարապետ Րիզա փաշայն 'ի շնորհակալութիւն վասն ընդունելոյն զպատուանչանն խորհրդականութեան, եւ աղաչեաց զնա շնորհել զձեմարանն Հայոց Իւսքիւտարու, զոր երկու ամօք յառաջ արարեալ էր տէրութիւնն հիւանդանոց արքունի զօրաց: Ի յաջորդ աւուրն գնաց եւ առ Շէքիպ էֆէնտի նախարարն արտաքին գործոց, եւ զնոյն աղերս մատոյց նմա: Եւ յետ քսան աւուրց սպարապետն մեծ հանեալ զգօրականսն 'ի ձեմարանէն, զբանալիսն առաքեաց առ Մատթէոս պատրիարք, որ մեծաւ ուրախութեամբ ընկալեալ առաքեաց հրաման, եւ ետ սրբել եւ մաքրել զձեմարանն, շինել եւ նորոգել զփլուզեալսն, եւ պատրաստել կահս եւ կարասիս, եւ յարդարել զամենայն պէտս նորին. եւ ժողով արարեալ ամիրայից եւ գլխաւոր արհեսաւորաց, տնօրինեաց առնուլ 'ի ձեմարանն գլխուն տղայս յաշակերտութիւն. որոց քառասունքն պարտին տալ 'ի տարւոջն կանխիկ մէն մի երեք հազար դահեկան, եւ զհանդերձս ամարան եւ ձմերան, եւ զգործիս ուսանելեաց: Իսկ տասն տղայք յաղքատ գերդաստանաց լինիցին ձրի 'ի շնորհս ազգիս: Եւ ուսանելիք 'ի ձեմարանին նախ եւ առաջ քրիստոնէական վարդապետութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանու-

թիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, եւ Գաղղիերէն եւ Տաճկերէն լեզուք, եւ ուսումնապետ կարգեցաւ Տէրոյենց Յովհաննէս պատուելին: Ըստ այսմ կարգադրութեան բացաւ ձեմարանն 'ի 1 հոկտեմբերի 1846, 'ի ներկայութեան սրբազան պատրիարքին, որ օրհնեալ զամենեսին, եղ վերատեսուչ փոխանորդ իւր զբարեպաշտ ազգասէր եւ ուումնասէր Պօղոս աղա Պետրոսեան Օտեան, եւ նմա յանձն արարեալ զամենայն կարգադրութիւնս, դարձաւ ինքն 'ի պատրիարքարանն:

Ի տայն արքայի զպատուանշանս խորհրդականութեան պատրիարքացն, կոչեաց զնոսա առաջի իւր եւ ասէ, գոհ եմ գձէնջ, զի դուք ազգապետքդ գովելի քաղաքականութեամբ եւ հեզահամբոյր բարուք պատուասիրէք եւ յարգէք զմիմեանս երթեւեկութեամբ եւ մեծարանօք, եւ ժողովուրդք ձեր օրինակ բարի տեսեալ 'ի ձէնջ, նոքին եւս սէր եւ պատիւ ցուցանեն առ իրեարս, եւ տիրէ սէր եւ խաղաղութիւն 'ի հպատակսդ թագաւորութեանս իմոյ, եւ անհետ լինի կագ եւ կռիւ յամենայն կողմանց: Յուսամ, զի յայսմ հետէ եւս զսոյն եղբայրսիրութիւն ունիջիք միշտ ու իրեարս, որով եւ օր քան զօր բազմապատիկ շնորհաց իմոց լինիջիք արժանի եւ ընդունող 'ի փառս Աստուածագօր թագաւորութեանս:

Պատրիարքն Յունաց ոչ գիտելով խօսիլ համարձակ զՏաճկերէն բարբառն, միայն խոնարհեցաւ առաջի արքային, եւ ինչ ոչ խօսեցաւ. իսկ Մատթէոս պատրիարք յերկիր խոնարհեալ գոհ եղեւ զինամոյ մարդասիրութեան նորա, եւ օրհնեաց զարքայ եւ զորդիս նորա ամենայն բարեմաղթութեամբ, ընդ որ հաճեցաւ յոյժ արքայ:

Ելեալ յերեսաց արքայի իջին 'ի վայր, եւ բազմեալ յօսկեսանձ երիվար դարձան մեծաւ շքով 'ի տեղիս իւրեանց:

Ձայս հրաման արքայի առիթ համարեալ Մատթէոս պատրիարք, զնաց յԱրնավոտ գիւղ առ Մելիտոս սրբազան պատրիարքն Յունաց 'ի շնորհաւորութիւն պատուանշանին, եւ ընկալաւ ընդունելութիւն մեծ արժանաւոր յարգութեամբ եւ մեծարանօք:

Յետ երկուց ակուրց եւ Մելիտոս պատրիարք փոխադարձ քաղաքավարութեամբ եկն յայցելութիւն Մատթէոս պատրիարքին երկու եպիսկոպոսօք եւ վեց վարդապետօք. եւ նախ իջեալ 'ի Մայր եկեղեցին ել յաւագ խորանն սուրբ եւ երկիր եպագ. եւ օրհ-

նեալ զժողովուրդն ել ապա 'ի պատրիարքարանն, եւ մեծարեցաւ յոյժ արժանաւոր յարգութեամբ:

Ձայս լուեալ Անտօն Հասունեան պատրիարքն հռովմէական Հայոց՝ փութացաւ եւ նա 'ի յաջորդ աւուրն գալ 'ի պատրիարքարանն Հայոց յայցելութիւն. եւ ետես ընդունելութիւն 'ի Մատթէոս պատրիարքէ արժանավայել մեծարանօք: Յիշատակութեան արժանի է այս, զի ոչ բարեհաճեցաւ սրբազան եպիսկոպոս մտանել յեկեղեցին մեր գոնէ տեսութեան եղանակաւ, որով գայթակղեցոյց զժողովուրդն Հայոց. եւ եղեւ պատճառ հայհոյութեան եւ տարապարտ բամբասանաց եւ ատելութեան: Իսկ Մատթէոս պատրիարք առ ոչինչ համարելով զանվայել եւ զբասրելի քաղաքականութիւն նորին, ընկերութեամբ եկեղեցական եւ աշխարհական յարգի անձանց գնաց առ նա 'ի փոխադարձ այցելութիւն, եւ մեծարեցաւ յոյժ:

Եկն եւ մեծ բաբբին Հրէից 'ի պատրիարքարանն Հայոց յայցելութիւն վեց ըստունեօք եւ երեք սեղանաւորօք, եւ ետես պատիւ մեծ. զնոյն արար եւ Մատթէոս պատրիարք փոխադարձ այցելութիւն առ բաբբին Հրէից, որ արժանավայել մեծարանօք ընկալաւ ընդ առջ գնացեալ նմա մինչեւ 'ի դուռն տանն:

Այս երթեկութիւն եւ այցելութիւն պատրիարքաց առ իրեարս չէր երբէք եղեալ 'ի հին ժամանակս մինչեւ ցայն վայր, միայն փոխանորդք պատրիարքաց 'ի Զատկի եւ 'ի Ծննդեան երթեկէին առ իրեարս 'ի շնորհաւորութիւն, բայց պատրիարքունք ոչ եւս. յաւուրց անտի Տաթիհ Մէհմէմէտայ՝ որ էառ զԿոստանդնուպօլիս 'ի ձեռաց Յունաց, եւ հաստատեաց անդ զպատրիարքութիւն Հայոց, որ այժմ իբրեւ պարտք քաղաքականութեան պաշտի երթեկութիւն իրերաց բանաւոր պատճառանօք կամ շնորհաւորութեան աղագաւ: Եւ այսմ պատճառ եղեւ Մատթէոս պատրիարք, որ բարեմիտ քաղաքականութեամբ իւրով եւ խոհականութեամբ բարձրացոյց զպատիւ պատրիարքարանին Հայոց, որ լսելի եղեւ առ արտաքս, եւ սկսաւ գովութեամբ հռչակիլ:

Յայն սակս եւ Ռուսաց կայսեր որդին բարձրապատիւ մեծ դուքսն Կոստանդինոս՝ որ յայն աւուրսն եկեալ էր 'ի Կոստանդնուպօլիս, լսելով զհամբաւ եւ զգովեստ Մատթէոս պատրիարքին՝ բարեհաճեցաւ գալ յայցելութիւն նորին. եւ նախ իջեալ 'ի Մայր եկեղեցին, մեծաւ ջերմեռանդութեամբ երկիր եպագ սրբոց խորանացն եւ համբուրեաց. եւ ապա ել 'ի պատրիարքարանն եւ

Համբուրեաց զաջ սրբազանին, որ արժանաւոր պատուով եւ մեծարանօք ընկալաւ զվեհափառ այցելուն:

Ընկերակից էին մեծ դքսին վսեմափայլ Րիֆաթ փաշայն՝ ի կողմանէ արքայի եւ չորեքին հազարապետք, վսեմաշուք դեսպանն Ռուսաց, առաջին թարգման իմանչէրլի պէյն, եւ չորեքին ասպետք Ռուս պաշտօնատեարք, եւ Հայազգի պարոն Յովհաննէս Այվազովսքի երեւելի եւ քաջ ծովանկրան:

Յետ աւուրց ինչ գնաց օգոստափառ դուքսն Կոստանդիանոս ՚ի Պրուսա, իջեւանեցաւ գաւուրս երիս յառաջնորդարանին ՀԱյոց, եւ ետես պատիւ եւ ընդունելութիւն մեծ. եւ ՚ի դարձին իւր պարգեւեաց Գէորգ վարդապետի առաջնորդի քաղաքին մատանի ադամանդեայ հինգ հազար դահեկանաց արժէիւք, եւ հազար դահեկան սպասաւորաց առաջնորդարանին, եւ ոսկի տուփ մի թագթագեան Մարտիրոսի, որ թարգմանն էր անդ քօնսօլին Ռուսաց:

Չեւ էր անցեալ ամիս մի, եւ ահա եկն ՚ի Կոստանդնուպօլիս որդի թագաւորին Գաղղիոյ դուքսն Մօնթբանսիէ. եւ լսելով, զի Ռուսաց կայսերորդին գնացեալ է յայցելութիւն առ Մատթէոս պատրիարք ՀԱյոց, ինքն եւս պարտ քաղաքականութեան Գաղղիոյ, եւ ընդ չորից երեւելի պաշտօնատեարց ընկերակցաց իւրոց, եւ համբուրեալ զաջ սրբազանին խօսակից եղեւ իբրեւ ժամ մի եւ կէս, եւ ետես պատիւ եւ մեծարանս արժանավայել յարգանօք, եւ դարձաւ ՚ի տեղի իւր: Սա լսելով ՚ի Մատթէոս պատրիարքէն գսարսափելի հրդեհն Ջմիւնոյ՝ ՚ի դարձին իւրում ՚ի Կոստանդնուպօլսոյ գնաց ՚ի Ջմիւննիա, եւ շնորհեաց աղքատաց հրկիզելոց ողորմութիւն հինգ հազար ֆրանգ: Առաքեաց եւ զադամանդեայ տուփ մի մեծագին ՚ի ձեռն դեսպանին Գաղղիոյ առ վառօղապետ Յովհաննէս ամիրայ Տատեան՝ շնորհակալ լինելով զքաղաքավարական մարդասիրութեանց նորա, որ պատուասիրեալ է զարքայազուն իշխանն յաւուրս քառասնօրեայ զգուշութեանն ՚ի հովանոցին Այի Ստէֆանայի ՚ի գալ նորին յայնժամ ՚ի Միջերկրական ծովէ:

Յաւուրս յայտոսիկ վախճանեցաւ Մելիտոս պատրիարք Յունաց՝ կացեալ ՚ի պատրիարքութեանն զամիսս ութ. եւ յաջորդեաց նմա Անթիմոս մետրապօլիտն Կեսարիոյ, յորոյ ՚ի շնորհաւորութիւն գնաց Մատթէոս պատրիարք բազմութեամբ եկեղեցականաց, եւ պատուեցաւ մեծաւ յարգանօք:

Տեսեալ անդ Մատթէոս պատրիարք զգլխարկս քահանայից Յունաց, որք կանգեալք էին ՚ի դրան պատրիարքարանին ՚ի պատիւ ընդունելութեան իւրոյ, հաւանեցաւ յոյժ, եւ կամեցաւ փոխել եւ անհետ առնել զհինաւորաց այլանդակ փակեղս եկեղեցականաց իւրոց, եւ ըստ տարազու Յունաց յօրինել ՚ի ձեւ վայելուչ. եւ կարգադրեաց եպիսկոպոսաց եւ վարդապետաց գլխարկ ՚ի մանուշակագոյն թաւիչէ, եւ քահանայից՝ ՚ի սեւաւ չուխայէ:

Լուեալ զայսոսիկ սրբազանափայլ Ներսէս կաթողիկոս, առաքեաց զՊանակի աղամանդեայ եւ թագազարդ մինէագործ պատկերաւ Փրկչին առ Մատթէոս պատրիարք, զոր խորհրդով ամիրայից տարաւ առ նախարարն արտաքին գործոց Բէշիտ փաշա առ ՚ի ցուցանել, թէ տայցէ՞ հրաման տէրութիւնն կախել զայն ՚ի կուրծսն ըստ օրինի արքեպիսկոպոսացն Էջմիածնի, թէ ոչ: Առեալ զայն Բէշիտ փաշա տարաւ առ արքայ, եւ յետ երկուց ամսոց առաքեաց արքայ առ Մատթէոս պատրիարք կախել ՚ի կուրծսն թոյլատուութեամբ իւրով ըստ կարգադրութեան կաթողիկոսին:

Այս պատուասիրութիւն կաթողիկոսին զոր եցոյց առ Մատթէոս պատրիարք, զարթոյց զխորհրդածութիւնն նախարարացն եւ արքայի իսկ շնորհել աղամանդեայ նշանս երեւելի առաջնորդաց Հայոց եւ Յունաց, եւ առաքեցաւ ՚ի պատրիարքարանն Հայոց վեց նշան ականակուռ, զորս առաքեաց Մատթէոս պատրիարք, զմին՝ առ Միքայէլ սրբազան կաթողիկոսն Կիլիկիոյ, եւ զհնգեսին՝ առ առաջնորդսն երեւելի վիճակաց Արմաշու կամ Նիկոմիդեայ, Պրուսայու, Զմիւռնիոյ, Մշոյ եւ Եւդոկիոյ, հայեցեալ յարժանաւորութիւնն եւ ՚ի պատիւ ջիճակացն եւ առաջնորաց, որոց յանձնեալք են ՚ի հովուել եւ ՚ի բարեկարգել ըստ կանոնաց եկեղեցւոյ եւ ըստ օրինաց քաղաքականութեան:



ԳԼՈՒԽ ԾԹ.

Յաղագս աղետալի դիպուածոց 'ի Կոստանդնուպօլսի եւ յարտաքին գաւառս, եւ բողոքելոյ Հայոց ընդդէմ Յունաց վասն դրան վանից սուրբ Մննդեան փրչին 'ի Բէթլէհէմ, եւ հաստատութեան Հոգեւոր եւ Քաղաքական ժողովոց պատրիարքարանին Հայոց:

(1845) Ի սմին ամի պատահեցաւ հրդեհ սոսկալի 'ի Զմիւռնիա, յորում այրեցան 3500 տունք յորոց ութ հարիւր եօթանասունքն էին Հայոց. այրեցան եւ պանդոկք, բաղանիք, մզկիթք, եւ մառանք, եւ կահք կարասիք միանգամայն, վնասն հասարակօրէն հաշուեալ, հրատարակեցաւ յօրագիրս երկիւր միլիոն դահեկան Օսմանեան. այրեցաւ եւ սուրբ Ստեփանոս եկեղեցին Հայոց հանդերձ ամենայն անգիւտ զարդուքն եւ զգեստուք ոսկեղէնք եւ արծաթեղէնք, եւ եկամուտք իւր՝ որք ամի ամի բերէին հարիւր հազար դահեկանս, տպարանն սուրբ Մեսրոպեան վարժարանին, եւ տպագրատունն Արշալոյս Արարատեան օրագրին ամենայն գործեօք եւ գրովք իւրովք, եւ Սարգիսեան դպրոցն օրիորդաց. քսան ժամ տեւեաց հրդեհն, եւ 'ի մոխիր դարձոյց զամենայն:

Այսմ աղետալի դիպուածոյս շնորհեցաւ ողորմութիւն յարքայէ 500 քսակ ոսկւոյ, 'ի մօրէ արքային 100, 'ի թագուհեաց 200, եւ 'ի նախարարաց 500. ընդ ամենայն 1300 քսակ, բաշխել աղքատաց Հայոց, Յունաց, Հրէից, եւ Տաճկաց:

Լուեալ զայս սրբազան կաթողիկոսին Ներսիսի՝ առաքեաց հազար բօլիմբէնեալ ոսկի վասն նորոգութեան եկեղեցւոյն, եւ երեսուն ոսկի Սիւնեաց ընկերութեանն, որ էրն 'ի Զմիւռնիա:

Յայտասիկ աւուրս պատահեցաւ նոյն օրինակ հրդեհ մեծ եւ 'ի Սամաթիա թաղն Կոստանդնուպօլսի. յորում այրեցան չորս հարիւր տունք Հայոց, 150 տունք Յունաց, եւ 160 խանութք. խղճալիք Հայոց գետեղեցան 'ի հիւանդանոցն 'ի ներկայութեան իւրոյ ետ առ օրին 'ի քսակէ իւրմէ 25 հազար դահեկան 'ի պէտս հարկաւորութեան հրկիզեալ գերդաստանացն: Օգնեցին բազմօք եւ վառօդապետք երրկոքին բարեյիշատակք Յովհաննէս եւ Պօղոս կերակրովք՝ զգեստուք՝ եւ արծաթով:

Յետ երկուց ամսոց լսելի եղեւ հրդեհն Տփլիսու, եւ վնաս նորա եօթն միլիոն դահեկան:

Ի Ֆիլիպէ այրեցան 600 խանութք, եւ 140 մեծամեծ տունք. եւ վնաս նորա 10 միլիոն դահեկան:

Ի Զմիւռնիա դարձեալ բաց 'ի վերոյգրելոյն: Ի Պէրգամոն այրեցան վաճառանոցք ամենայն, եւ վնաս վեց միլիոն դահեկան: ՅԱնդրիանուպօլիս կրկին անգամ այրեցան 600 տունք, 1150 խանութք, տասն վարժարանք, վեց սինակոկայք, երկու մզկիթք եւ երկու պանդոկք, եւ վնասն քառասուն միլիոն դահեկան: Ի Թեսսաղոնիկէ այրեցան 2000 տունք եւ կրպանք: Ի Չանազ գալէ այրեցան վաճառանոցք ամենայն եւ տունք: Թող զայլ հրդեհսն 'ի Բերա երիցս, յԻսկիւտար երկիցս, յՕրթագիւղ կրկին անգամ, յԵնիգիւղ եւ 'ի Գանտիլի, որք բաղդատութեամբ ընդ վերոյգրելոց մանր հաշուին:

Յետ միոյ ամի եղեւ եւ երկրաշարժ 'ի կղզին Միտիլլի, որ կործանեաց բազում տունս եւ զեկեղեցիս. եւ 'ի Զմիւռնիա կործանեցան բազում պատդոկք, եւ ընդ փլատակօքն մեռան հնգետասան անձինք:

Յայսոսիկ աւուրս աւարտեցաւ շինութիւն երկաթի գործարանին 'ի Զէթին պուրնու մերձ յԱյի Ստէֆանայ, ուր ձուլեցաւ քսան եւ վեց կանգուն լայնութեամբ միակամար երկաթի կամուրջ իմն վասն կցելոյ զՉրաղանի պալատ արքային ընդ մեծ պարտիզին, եւ 'ի տես այսր գնաց արքայ ընդ երեւելի նախարարաց, եւ հաճեցեալ յոյժ, շնորհեաց վերատեսչաց նոցին վառօդապետացն Յովհաննու եւ Պօղոսի, եւ ճարտարապետին Կարապետի, եւ որդւոց նոցին զմեծագին աղամանդեայ տուփս: Բայց յետ միոյ ամի լապտերավառ աշտարակ նորին՝ որ էր շինեալ 'ի բարձրութիւն 120 կանգնոյ, յանկարծ կործանեցաւ. եւ 'ի ներքոյ փլատակին մեռան հարիւր տասն գործաւորք, յորոց եօթանասունքն Հայք էին, եւ վասն սոցին գրեաց Մատթէոս պատրիարք 'ի Բ. Դուռն զողորմելի խղճութիւն ընտանեաց սոցին, եւ հրամայեցաւ տալ յարքունուստ ամսական ըստ նոցին արժանաւորութեանց:

(1846) Ի սկզբին գարնան այսր ամի կամեցաւ արքայ յայց ելանել բերդաքաղաքացն 'ի գետեղերս Դանուբայ. եւ ամսեանն ապրիլի եմուտ 'ի նաւ եռայարկ, ընդ որում երթային եւ երեք շոգենաւք. եւ չեւ էր ճանապարհ արարեալ մղոնս յիսուն եւ հինգ, պատահեալ մրրիկ մեծ 'ի Հիւսիսային հողմոյ, դարձաւ ընդ կրունկն 'ի Կոստանդնուպօլիս 'ի պալատ իւր: Յետ հնգից աւուրցել 'ի Կոստանդնուպօլիսոյ ցամաքային ճանապարհաւ երթալ յայնոսիկ կողմանս, եւ յայն օր եւս լինելով օդն մառախլապատ եւ անձրեւային, գտեղի կալաւ զաւուրս չորս 'ի գիւղն Այի Ստէֆա-

նայ 'ի տան վառօղապետ Պօղոսի Տատեան, որ պաշտեաց զնա մեծավայելուչ յարգանօք, եւ ետ բերել 'ի դպրոցէն Գոլմգափուի զքսան տղայս գեղեցկաձայնս տեղեակս երաժշտական երգոց, եւ նուագեցին առաջի արքայի: Ընդ որս հաճեցաւ յոյժ արքայ, եւ ետ պարգեւս իւրաքանչիւրոցն երկերիւր դահեկան, եւ դասատուի նոցին Արիստակեաց Յովհաննէսեան հինգ հարիւր դահեկան:

Յետ չորից ակուրց ելեալ անտի գնաց յԱնդրիանուպօլիս, եւ զգեցոյց առաջնորդին Հայոց Սարգսի արքեպիսկոպոսի զվերարկու պատուոյ, եւ ետ նմա նշան աղամանդեայ. եւ ազաւ ակուրս երկուս 'ի տան Յովհաննու Պարտիզպանեան, եւ ետ նմա եւս նշան ականակուռ եւ եղբարց եւ քեռարց նորա. եբարձ 'ի քաղաքէն զցամաքային մաքսն, եւ այլ եւս բարիս բազումս ցուցեալ բնակչաց քաղաքին, ել եւ շրջեցաւ 'ի Ռուսճուք, 'ի Շումնի, 'ի Սիլիստրէ, 'ի Թըրնօվայ, 'ի Նիկէքօլի, եւ 'ի Վիտին. եւ յայս ամենայն տեղիս նուէրս եւ նշանս բաշխեաց:

Բղեշխին Մուտաւիոյ ետ զպատկեր իւր գոհարագարդ. իսկ բղեշխին Վալաքիոյ՝ որք ընդ առաջ եկեալք էին, ետ զմեծագին սուր ոսկի եւ ականագարդ, եւ ատենակալ պաշտօնատեարց նոցա մէն մի տուփ ոսկի:

Տըկրաֆ պաշտօնատէրն Ռուսաց՝ որ եկեալն էր 'ի դիմաց կայսեր յողջոյն գալստեան նորա, ընկալաւ նշան ասպետութեան (միւշիր փայտսի), եւ Տէսքօֆին հիւպատոսին Ռուսաց՝ աղամանդեայ տուփ մեծագին: Իսկ Տըհէս պաշտօնատէրն Աւստրիոյ՝ ընկալաւ նշան խորհրդականութեան (միւսթէշար): Եւ այսպէս բազում բարիս ցուցեալ ամենեցուն, եւ իջեալ 'ի Վարնա, եմուտ 'ի շոգենաւ իւր, եւ դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի պալատ իւր:

Եղեւ հանդէս լուսավառութեան զերիս գիշերս յուրախութիւն ամենեցուն, եւ երեսուն մանկունք ճեմարանին իւսքիւտարու նոր երգս յօրինեալ 'ի վերագարձ արքայի, եւ մտեալ 'ի նաւ եկին առաջի պալատի արքային, եւ երգելով համեղ եւ քաղցր եղանակաւ հաճեցուցին զարքայ եւ զմայր նորա, որ ետ նոցա զերիս հազար դահեկանս 'ի պարգեւ, եւ հրամայեաց այնպէս երգելով երթալ 'ի տեղիս իւրեանց:

Մեծ էր նեղութիւն ուխտաւորաց Հայոց՝ որք երթայինն յերուսաղէմ, զնալ յուխտ 'ի վանս սուրբ Ծննդեան փրկչին՝ որ 'ի Բէթլէհէմ. վասն զի Յոյնք զգուռն վանիցն միշտ փակ ունէին, եւ դռնապան մի Յոյն սպասէր 'ի ներքս դրանն բանալ՝ որոց բաշ-

խենն զգուռն: Զարմանք են, զի եթէ Հայ ոմն գնացեալ հարկանէր զգուռն, խլանային լսելիք պահապանին, եւ ոչ լսէր զբաղ-խիւն դրանն. եւ խեղճ Հայն սպասէր անդ, գոչէր եւ աղաղակէր առ պահապանն, Կոստանդին, Կոստանդին, բաց զգուռն. եւ Կոստանդին ոչ լսէ. եւ այնպէս Հայն՝ եթէ տիւ է, արեւակէզ սպասէ անդ. եւ եթէ գիշեր է, անձրեւաթաց եւ պաղ առեալ ողջունէ անշուշտ գտենդն: Իսկ եթէ Յոյն ոմն գնացեալ հարկանիցէ զգուռն, լսէ իսկոյն խուլն եւ բանայ: Եւ զայս գանգատ եւ տրտունջ բազմիցս արարեալ էին Հայք առ Յոյնս. բայց նոքա պէս պէս սնոտի պատճառանօք ներուամն խնդրեալ են ասելով, թէ պահապանն ոչ գտեալ է անդ՝ ի պահուն, կամ թէ ՚ի քուն եղեալ է եւ չէ լուեալ, եւայլն:

Բողոք կալաւ վասն այսր Կիրակոս պատրիարքն Երուսաղէմի առ Մատթէոս պատրիարք, եւ նա առեալ ընդ իւր զԳէորգ վարդապետ փոխանորդն սուրբ Երուսաղէմի, եւ գերկոսին ամիրայս զՃանիկ եւ զՄիսաք, գնացին ՚ի Տէնէր ՚ի ծովեղերեայ յարկ Ստեֆանաքի պէյին, յորում էր եւ պատրիարքն Յունաց ընդ երկուց եպիսկոպոսաց եւ Լէօֆէթ պէյն. եւ յետ բազում բանախօսութեանց որոշեցին եւ խոստացան Յոյնք առնել զմի ՚ի չորիցս յայսցանէ. Ա. Զուրիշ բանալի մի տալ Հայոց: Բ. Զայլազգի դռնապան կացուցանել: Գ. Բաց մնալ այնմ դրան գտիւ եւ զգիշեր: Եւ Դ. կից այնմ դրան բանալ եւ զգուռն մի վասն Հայոց: Բայց եւ ոչ զմի ՚ի խոստմանցս յայսցանէ կատարեցին. եւ այնպէս գործն մնաց անարդիւն մինչեւ ցպատերազմն Ռուսաց ընդդէմ Օսմանեան տէրութեան, զորոյ զկնի համարձակութեամբ դաշնադիր տէրութեան եղեւ կարգադրութիւն բաց մնալոյ դրանն գտիւ եւ զգիշեր դռնապանս կացուցեալ ՚ի նմին:

Լուեալ զայս Ներսէս կաթողիկոս, առաքեաց զկոնդակ օրհնութեան ՚ի Կոստանդնուպօլիս, որ ընթերցաւ ՚ի Մայր եկեղեցւոյն Խումբխափուի, յորոց վերայ արար Մատթէոս պատրիարք սքանչելի ատենաբանութիւն իմն՝ գնելով բնաբան ճառին, “Օրհնութիւն հարց՝ պսակ որդւոց”:

Ի սմին ամի արար Մատթէոս պատրիարք հիմնարկութիւն եկեղեցւոյ ՚ի յԵնիգափառու, ուր ոչ գոյր յառաջ եկեղեցի. եւ աւարտեալ զչինութիւն նորա էօժ փառաւոր հանդիսիւ ՚ի յունիսի 18 յանուն առաջին լուսաւորչաց մերոց Թադէոսի եւ Բարթողիմէոսի սրբազան առաքելոց: Յետ երկից ամսոց էօժ եւ զեկեղեցին ՚ի Գան-

տիլլի յանուն երկոտասան Առաքելոց: Էօժ եւ զեկեղեցին Գարա-  
կէօմրիւկի յանուն սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետին:

Հաստատեաց եւ օրագիր ազգային 'ի յայտարարութիւն ազ-  
գային գործոց եւ եղելութեանց վաւերացելոց 'ի պատրիարքարա-  
նէ, որ յառաջն կոչեցաւ Հայաստան, եւ այժմ կոչի Մասիս:

Տեսին ամիրայք, զի պատրիարքն ինքնին առնու եւ տայ, եւ  
ինչ ոչ հարցանէ ցնոսա եւ ոչ խորհրդած է, այլ ինքնին միայն  
կարգադրէ զամենայն, դժուարացան յոյժ եւ զղջացան, զի զսա  
պատրիարք ընտրեցին: Ձեռս արկին 'ի փոփոխել զառաջնորդս,  
այլ ընդդէմ եկաց նոցա պատրիարքն, եւ յատենի բացարձակ խօ-  
սեցաւ, թէ աշխարհականք ոչ կարեն խառնիլ 'ի հոգեւոր գործառ-  
նութիւնս, զհոգեւորսն հոգալ, քննել, կարգադրել, պատժել, եւ  
պսակել՝ մեզ է տուեալ եւ ոչ ձեզ. զառաջնորդսն մեք կարեմք  
ընտրել ըստ խնդրոյ եւ համահաճութեան քաղաքացեացն, որք  
յականէ յանուանէ խնդրեն զայս ոք կամ զայն ոք, եւ մեք հայե-  
ցեալ 'ի խնդիրս եւ 'ի համակամութիւն նոցա եւ յարժանաւորու-  
թիւն ընտրեցելոցն 'ի նոցանէ՝ տնօրինեմք զարժանն ըստ կանոնի  
եկեղեցոյ: Բայց եթէ քաղաքական ինչ վէճ եւ խնդիր պատահի-  
ցի, կամ տէրութեան հրաման, կամ ազգային կալուածոց յափշ-  
տակութիւն, կամ տնանկաց եւ հիւանդանոցաց եւ դպրոցաց այ-  
ցելութիւն, յայնժամ ժողովեմ զձեզ առ իս, յայտ առնեմ զեղելու-  
թիւնն, եւ խորհրդակից լինիմ ձեզ բերբէք:

Չայս լուեալ 'ի պատրիարքէն խոժոռեցան ամենեքին, եւ 'ի  
վերին երեսս առանց ցուցանելոյ զտհաճութիւն ինչ մեկնեցան եւ  
գնացին. եւ խորհուրդ արարեալ ընդ միմեանս, կամեցան արքու-  
նի հրովարտակաւ իշխանակից լինել պատրիարքին, այնպէս զի  
պատրիարքն ինքնին միայնակ չգործեսցէ ինչ առանց ծանուցա-  
նելոյ ինքեանց, այլ ժողով իւրեանց որոշեսցէ եւ վճռեսցէ:

Ուստի ձեռն 'ի գործ արկեալ եւ գօտի ընդ մէջ ածեալ՝ 'ի ձեռն  
ազգասէր անձինն Յակոբայ Կրճիկեանց որսացին զմեծ եպար-  
գոսն Բէշիտ փաշա, եւ 'ի ձեռն նորա ծանուցեալ արքայի, եկն  
հրաման 'ի Բ. Դուռն. եւ կոչեցան Մատթէոս պատրիարք եւ ամի-  
րայք 'ի ծովեզերեայ յարկ արտաքին գործոց նախարարին 'ի յէ-  
միրկիւն, եւ ընթերցաւ անդ հրովարտակն արքայի, յորում հրա-  
մայէ հաստատիլ երկուց ժողովոց 'ի պատրիարքարանի, մին՝  
վասն հոգեւորական գործոց, եւ միւսն՝ վասն քաղաքականաց:

(1847) Եւ Մատթէոս պատրիարք արար ժողով մեծ ՚ի Մայր եկեղեցին, եւ Հրաւիրեաց անդ գեկեղեցականս՝ եւ զամիրայս՝ եւ զգլխաւոր անձինս արհեստաւորաց. եւ ընըերցեալ զհրովարտակն արքայի՝ յանձնեաց ժողովոյն որոշել եւ ընտրել զանդամս ժողովոցն. եւ որոշեցան համահաճութեամբ ամենեցուն չորեքտասան անդամք Հոգեւոր ժողովոյն այսոքիկ.

1. Յովհաննէս եպիսկոպոս քարոզիչ Օրթագիւղի, որ եղեւ պատրիարք Երուսաղէմի:

2. Գէորգ վարդապետ փոխանորդ Երուսաղէմի:

3. Յովհաննէս վարդապետ քարոզիչ Խասգիւղի:

4. Յովհաննէս վարդապետ քարոզիչ Գուգիւղնճուղի:

5. Գրիգորիս վարդապետ քարոզիչ Պալատու:

6. Տէր Գալուստ աւագ քահանայ Օրթագիւղի:

7. Տէր Գէորգ աւագ քահանայ Խասգիւղի:

8. Տէր Յովհաննէս աւագ քահանայ Ս. Խաչ եկեղեցւոյն Իւսքիւտարու:

9. Տէր Պաղտասար աւագ քահանայ Ս. Կարապետ եկեղեցւոյն Իւսքիւտարու:

10. Տէր Զաքարիա աւագ քահանայ Պերայի:

11. Տէր Գրիգոր աւագ քահանայ Պէշիկթաշու:

12. Տէր Յարութիւն աւագ քահանայ Ղալաթիոյ:

13. Տէր Գրիգոր աւագ քահանայ Սամաթիոյ:

14. Տէր Պաղտասար աւագ քահանայ Պալատու:

Իսկ Քաղաքական ժողովոյն ընտրեցան քսան անդամք այսոքիկ.

1. Յովհաննէս Տատեան վառօղապետ:

2. Պօղոս Տատեան վառօղապետ:

3. Կարապետ Պալեան ճարտարապետ:

4. Յովհաննէս Պալեան ճարտարապետ:

5. Միքայէլ Փիշմիշեան սեղանաւոր:

6. Մազսուտ Սարիմեան սեղանաւոր:

7. Գէորգ Երամեան սեղանաւոր:

8. Մկրտիչ Ճէգայիրլեան սեղանաւոր:

9. Միսաք Միսաքեան սեղանաւոր:

10. Յովհաննէս Եղիա Չէլչպեան հացագործ:

11. Յովհաննէս Չօպանեան ոսկերիչ:

12. Յովհաննէս Սուրենեան ժամագործ:

13. Թովմածան Մարտիրոսեան վաճառական:
14. Աստուածատուր Սարաֆեան չուխածի:
15. Քերովբէ Պաշպաղիրկեանեան խազազ:
16. Սարգիս Գըլըճճի պաշի:
17. Գրիգոր Թիւյսիւզեան պէզազ:
18. Կարապետ Տէր Գրիգորեան թիւլպէնտճի:
19. Սահակ Քիւչիկ Յակոբեան քէրէստէճի:
20. Յակոբ Կրճիկեան ատենադպիր ժողովոյն Լէօֆէին կոչմամբ:

Երկուց ժողովոյս այսոցիկ նախագահ՝ նոյն ինքն պատրիարքն հրամանաւ արքայի որոշեալ եւ ՚ի հրովարտակին վառերացեալ:

Յետ որոշման եւ ընտրութեան ժողովականացն՝ արար Մատթէոս պատրիարք ատենաբանութիւն իմն, յորում յորդորեաց զժողովեալսն ամենայն ՚ի սէր եւ ՚ի միաբանութիւն անկեղծ եւ հաստատուն, եւ ՚ի խնամարկութիւն հիւանդանոցին, տնանկաց, եւ մանաւանդ դպրոցաց, եւ համահաճութեամբ ժողովոյն որոշեցաւ Քաղաքական ժողովոյն լինել յամենայն երեքշաբթի աւուր ՚ի պատրիարքարանին՝ հոգալ զագգային գործոց, եւ տնօրինել զպատշաճեալսն: Իսկ վասն Հոգեւոր ժողովոյն որոշեցաւ ՚ի հինգշաբթի օր լինել ՚ի պատրիարքարանն, եւ խորհիլ զեկեղեցական դիպուածոց յարտաքին գաւառաց գրեցելոց ՚ի պատրիարքարանն, զփոփոխութենէ առաջնորդաց եւ զգատից նոցին, զհարստահարութենէ փաշայից, եւ զանիրաւ պահանջմանց այլոց ազգաց, եւ զվերաբերեալսն առ Քաղաքական ժողովն յայտ առնել նմին ստորագրութեամբ պատրիարքին:

Եւ այսպէս տնօրինեալ զամենայն, գրեցան անուանք երկաքանչիւր ժողովականացն, եւ առաքեցաւ ՚ի Բ. Դուռն հաստատեալ զնոսա արքունի հրովարտակաւ, եղեալ պայման ժողովականացն, յերկու տարին միանգամ լինել փոփոխութիւն ժողովական անդամոյն, եւ զայլս յարժանաւորաց ընտրել փոխանակ նոցին եւ հաստատել արքունի հրովարտակաւ. եւ այսպէս կարգադրեալ զամենայն, արարին սկզբանաւորութիւն ժողովելոյ ՚ի 20 մայիսի 1847:

## ԳԼՈՒԽ Կ.

*Յաղագս ազատութեան Հայոց բնակելոց 'ի Վասպուրական, 'ի Տարօն, եւ 'ի Բագրեւանդ գաւառս 'ի հարստահարութենէ բարբարոս ազգին Մարաց շնորհիւ Մատթէոս պատրիարքին:*

(1847) **Ք**անի ամօք ինչ յառաջ անողորմ եւ ապստամբ ազգն Մարաց ունելով 'ի գլուխ իւրեանց զԽան Մահմուտ եւ զՊէտէրխան, պէյ հարստահարէին զբնակիչս Վանայ եւ Տարօնոյ եւ շրջակայ գիւղօրէիցն, կողոպտէին զվանօրայս եւ զեկեղեցիս, կեղեքէին եւ սպանանէին. եւ կուսակալն Կարնոյ եւ բղեշխն Վանայ յանգէտս լինէին զչարագործութեանց նոցա. եւ ոչինչ փոյթ էր նոցա, թերեւս եւ ինքեանք առնուին զբաժինս իւրեանց յաւարէ անտի՝ զոր կողոպտէին նոքա, եւ ոչ զգէմ ուէին նոցա կամ պատերազմաւ եւ կամ ահացուցմամբ:

Լուեալ զաղէտս սոցին Մատթէոս պատրիարք, բողոքս եբարձ երկիցս 'ի Բ. Դուռն. յերրորդումն նուագի գրեաց, եթէ բնակիչք Վանայ ոչ կարելով այլ եւս տոկալ անըմբեր տառապանաց՝ զոր հասուցանեն Մարք 'ի վերայ նոցա, որոշեալ են 'ի միջի իւրեանց խոյս տալ ընտանեօք հանդերձ եւ զաղթել 'ի Ռուսաստան. եւ որովհետեւ ինձ յանձնեալ է 'ի բարձրագոյն տէրութենէ ձերմէ հսկել 'ի վերայ նոցա, եւ զգուշանալ ելից եւ մտից նոցին, պարտ անձին վարկայ կանխաւ ազգ առնել տէրութեան ձերում, զի մի առ յապայս յանցաւոր գտանիցիմ առաջի ձեր:

Առ այս խորհուրդ արարեալ 'ի Բ. Դուռն, պատրաստեցաւ կամեցաւ բանակ պատերազմող զօրաց, եւ սպարապետ կարգեցաւ Օսման փաշա այրն քաջ եւ զօրաւոր. եւ զիմեաց 'ի վերայ ապստամբացն այնոցիկ 'ի հիւսիոյ եւ 'ի հարաւոյ նուաճել զնոսս անձողոպրելի փախստեամբ:

Յայնժամ գրեաց եւ Մատթէոս պատրիարք առ առաջնորդս Տիգրանակերտի, Բաղէշու, Բալուայ, Կարնոյ, եւ Վանայ, զի ժողովուրդք իւրեանց ելցեն 'ի վրէժխնդրութիւն այնչափ տառապանացն՝ զորս կրեցին մինչեւ ցարդ, յամենայնի օգնական լիցին եւ ծառայեսցեն արքունի բանակին, եւ զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջի արքայի:

Ժողովեցան Հայք Վասպուրական աշխարհին, եւ մարտ եղեալ յարձակեցան 'ի վերայ ձէզիրէ նահանգին, ուր որջացեալ



ամրացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, եւ այնչափ 'ի նեղ արկին զՊէտէրխան պէյ նոցա, մինչեւ յոգիս լինել նմա ապաստան, եւ յուսահատեալ յանձնեաց զինքն սպարապետ Օսման փաշային հանդերձ իւրով գերդաստանաւն, որ իսկ եւ իսկ առաքեաց զամենեսին զնոսա 'ի Կոստանդնուպօլիս, եւ տիրեաց ամրոցի նորուն, եւ Պէտէրխան պէյ աքսորեցաւ 'ի Կրետէ կղզին ընտանեօք իւրովք:

Իսկ իսան Մահմուտ գլխաւորն Մարաց ըմբռնեալ 'ի Վանցի Հայոց եւ կալանաւորեալ յանձնեցաւ 'ի ձեռս Օսման փաշային, եւ ածեալ 'ի Կոստանդնուպօլիս ընտանեօք իւրովք աքսորեցաւ 'ի Սիլիստրէ. եւ բազումք յապստամբացն մատնեցան 'ի սուր, եւ մնացեալքն ցրուեցան 'ի կողմանս Ռուսաց եւ Պարսից:

Այս լուր յաղթանակութեան արքունի գօրաց հասեալ 'ի Կոստանդնուպօլիս, ցնծութիւն մեծ պատճառեաց ազգիս Հայոց, եւ հրամանաւ Մատթէոս պատրիարքին երգեցին յամենայն եկեղեցիս Հայոց “Յնծացէք առ Աստուած, օգնական է մեր” մինչեւ ցվերջն (Սաղմոս) յաղագս ազատութեան ՀԱյոց բնակչաց Վասպուրական աշխարհի եւ շրջակայից նորա 'ի հարստահարութենէ անողորմ եւ բարբարոս ազգին Մարաց: Եւ այս գոհաբանութեան համբաւ եհաս մինչեւ 'ի լսելիս արքայի, որ 'ի ձեռն ներքինապետին իւրոյ Թայֆուր աղայի ծանոյց մասնաւոր գրով զշնորհակալութիւն իւր:

Ուստի եւ պարտաւորեցաւ Մատթէոս պատրիարք առաքել կոնդակա առ ամենայն գաւառս Օսմանեան տէրութեան շնորհակալ եւ բարեմաղթող լինել արքայի եւ իւրոյ մեծազօր տէրութեան, եւ տօն ցնծութեան կատարել վասն ազատութեան ազգիս Հայոց 'ի բռնութենէ անողորմ բարբարոսաց, զոր եւս դիւրահասկանալի լինելոյ ամենեցուն բնակելոց 'ի գաւառսն յայնոսիկ՝ գրեաց յաշխարհաբառ լեզու, որ ունի օրինակ զայս:

“Ի Տէր Մատթէոս արքեպիսկոպոսէ եւ պատրիարքէ մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ՝ գիտութիւն լիցի համօրէն լրութեան սուրբ եկեղեցւոյդ:

“Յայտնի է բարեպաշտութեան ձերում, որ մեր սիրելի հայրենիքը՝ Հայաստան աշխարհք՝ որ ամենայն աշխարհաց եւ ազգաց առջեւ Հայոց ազգիս պարծանք մըն էր իրեն անհամեմատ եւ աննման ձիրքերովը, այսքան հարիւրաւոր տարիներէ 'ի վեր

ապստամբ եւ աշխարհաւեր Քրդաց անողորմ եւ անգութ բռնակալներուն ձեռքը ինկած մատնուած, աւերակ եւ անապատ էր դարձեր, եւ անմռունչ բարբառով կուլար կողբար իւր սիրելի գաւակունքը՝ ողորմելի ազգս Հայոց, որ այն մարդակերպ գազաններուն պատառող ժանեացը որս ինկած էին տարաբաղդութեամբ:

“Եւ որովհետեւ ամենողորմն Աստուած իսպառ չի ձգեր իւր ժողովուրդը անտանելի գերութեան մէջ, ինչպէս օրինակ է մեզի Իսրայելացւոց ազատութիւնը Եգիպտացւոց գերութենէն, նայեցաւ երկինքէն Հայոց աշխարհին վրայ, որ աս վայրենի Քրդաց անասուններուն արօտ եւ ճարակ էր եղեր, եւ իւր առաջնաստեղծ մերդոն ամենագեղեցիկ բնակութիւն աս գաւաններուն որջ էր դարձեր, յաշեց իւր բարերար կամօքը Հայկ Նահապետին աստուածապաշտութեան եռանդը, որ աշխարհիս մէջ առաջին կռապաշտութեան հեղինակ՝ Բաբելոնեան աշտարակին վրայ պարծենցող Բէլը՝ իւր Աստուածագօր աղեղովը զարկաւ գետինը փռեց անոր վիթխարի մարմինը:

“Այս աննման եւ գեղեցիկ աշխարհը՝ հիմա ասանկ անողորմ բռնակալներուն ձեռքը ողորմելի տեսնելով, գլխացաւ ողորմեցաւ իւր Աստուածային անհուն բարերար կամօք, շարժեց ՚ի գութ եւ ՚ի կարեկցութիւն՝ բարեգութ եւ բարեխնամ Սուլթան Ապտիւլ Մէծիտ արքային մերոյ բարեսիրտ եւ ողորմած բնաւորութիւնը, որ իւր օգոստափառ կայսերական վեհափառութեամբը հրամայեց աս աշխարհին ազատութիւնը այն անիրաւ բռնաւորներուն ձեռքէն:

“Եւ որովհետեւ աս բարերարութիւնը յատկապէս Հայոց ազգին վերաբերեալ է, մենք ալ պարտաւորեցանք երախտագիտութեան օրինօք գիշեր ցերեկ հսկում աղօթքը եւ պաղատանք ընել առ Աստուած, որ իւր ամենակարող աջը հովանի եւ օգնական ընէ Տէրութեան հնազանդ եւ բարեկարգ եւ արիաբար պատերազմող զօրաց բանակին:

“Օրհնեալ է Աստուած, եւ օրհնեալ է աջ նորա ամենագօր եւ ամենայաղթ, որ լսելով դպրատանց անմեղ տղայոց թոթովախօս բարեբանութիւն, եւ քահանայից յատուկ եւ ջերմեռանդ եւ արտասուալից բազկատարած բարեմաղթութիւնը, ձգեց վախ եւ երկիւղ մը թշնամեաց խումբերուն մէջ, կորագլուխ ըրաւ, այն բռնաւորներուն գլխաւորները Խան Մահմուտը եւ Պէտէրխան պէյը, որոնք ընդհանուր զօրապետին ձեռքը ինկած յուսահատ եւ ամօթահար, իրենց կենացը խնայել կը խնդրէին, եւ շնորհեց աս

մեծապանծ եւ սքանչելի յաղթութիւնը նորին կայսերական վեհափառութեան բարձր անունին եւ հզօր հրամանին. որով եւ ազատէցաւ Հայաստան աշխարհը աս դառն վիճակէն աս անտանելի գերութենէն. եւ կը յուսամք, որ այսուհետեւ կընորոգի կը պայծառանայ, եւ իւր առաջին սքանչելի տեսիլը եւ գեղեցկութիւնը կստանայ շնորհիւ բարեգութ եւ ողորմած արքայիս մերոյ այսխարհաշէն եւ մարդասէր բնաւորութեանը:

“Տեսէք հիմա եւ մտածեցէք այս առաջիկայ խօսքիս վրայ, որ պիտի ծանուցանեմ ձեզ ամենեցուն. որ որքան մտածէք, այնչափ աւելի պիտի զարմանաք եւ ապշիք վեհափառ թագաւորին մերոյ անհամեմատ սիրոյն եւ յատուկ խնամոցը առաւելութեանը, որ ունի Հայոց ազգին վրայ, վասն զի նորին կայսերական վեհափառութիւնը լսելով եւ իմանալով մեր բազկատարած աղօթքն եւ խնդրուածքը որ ըրինք աս յաղթութեանս համար, եւ մեր ուրախութիւնը եւ անպատմելի խնդրութիւնը առաւել եւս շատցընել ուզելով, եւ ինքն ալ ուրախակից ըլլալով մեզի, ամսոյ նոյեմբերի 22ին շաբաթ օրը՝ իւր առաջակայ սիրելի պաշտօնատէրներէն մէկ հաւատարիմ մտերմին ձեռօքը հրաման խրկեց նուաստութեանս ՚ի պատրիարքարանս, ըսելով:

“Ձեր աղօթքը եւ խնդրուածը՝ որ ըրիք իմ աս բարեհաջող յաղթութեանս վրայ, լսեց Աստուած եւ ընդունեց, եւ շնորհք ըրաւ իմ թագաւորութեանս աս փառաւոր յաղթութիւնը, որուն կը բաղձայի իմ Աստուածաւանդ հպատակներուս կատարեալ հանգստութեանը համար: Արդ՝ դուքն պատրիարք, քու բոլոր ազգիդ խապար տաս եւ իմացընես, որ ես ալ ուրախ եմ ձեզի հետ, եւ ընդունելի եղաւ իմ թագաւորութեանս ձեր կատարեալ հաւատարմութեան սէրը եւ փափազը, եւ իմ փառահեղ թագաւորութեանս առջեւ ներկայացեալ տեսածի պէս եմ ձեր բարեմաղթութեան հանդէսը՝ որ ըրիք եւ կընէք. Աստուած ամենաբարին իւր շնորհօքը պահպանէ զձեզ զամենեսին”:

“Չարմացէք այժմ աս սքանչելի մարդասիրութեանը վրայ՝ որ ունի վեհափառ թագաւորը իւր հաւատարիմ հպատակ ազգաց վրայ, եւ աս ամենառատ բարերարութեանս համար տօն ազատութեան կատարեցէք միաբան խնդրուածովք եւ շնորհակալութեամբք առ Աստուած, ըսենք ամենքս միաբերան, կեցցէ բարեգութ եւ բարեյաղթ շէվքէթլու Սուլթան Ապտիւլ Մէճիտ Խան ինքնակալ կայսր եւ թագաւորն մեր. կեցցէ տէվլէթլու իսմէթլու

Վալիտէ Սուլթան ալիյէթիւշչան մայր նորին վեհափառութեան. կեցցեն կայսերագարմ եւ ծիրանածնունդ տէվլէթլու նէճապէթլու Շահզատէք արքայիս մերոյ 'ի պարծանս Օսմանեան հզօր թագաւորութեան, աջն Անեղին հովանի եւ օգնական լիցի 'ի վերայ նորին վեհափառութեան, զօրացուցէ եւ կարողացուցէ զբարձրապատիւ եւ զվսեմափայլ նախարարս տէրութեանն 'ի պաշտօն փառաւորութեան իւրեանց, եւ զազգս Հայոց ընդ հովանեաւ քաղցր աչաց նորին պահեսցէ եւ պահպանեսցէ 'ի խնամս ողորմութեան իւրոյ, շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամեն:

“Գրեցաւ հանդիսաւոր բարեմաղթութեան կոնդակս ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի Մայր եկեղեցւոյ 'ի Պատրիարքարանի ամենայն Հայոց, որ 'ի Կոստանդնուպօլիս”:

1847 Դեկտեմբեր 9.

Յետ երկուց ամսոց հիւանդացաւ մայր արքային, եւ խնդրեաց, զի Մատթէոս պատրիարք ընթերցցի 'ի վերայ իւր գաւետարան եւ արասցէ աղօթս, եւ զայս խնդիր նորա գրեաց ներքինապետն մեծ Թայֆուր աղա առ պատրիարքն, որ իսկ եւ իսկ հրաման առաքեաց յամենայն եկեղեցիս զաւուրս ութ”Տէր ողորմեա” ասել. եւ ինքն առեալ ընդ իւր զՎրդանէս վարդապետ գաւակերտ իւր՝ եւ զշուրջառ՝ եւ զԱւետարան՝ եւ զՆարեկ, կոչեաց զվառօդապետ Պօղոս Տատեան եւ զԿրճիկեան Յակոբ, եւ նոքօք հանդերձ զնաց 'ի պալատն արքայի, եւ ծանուցեալ մօրն արքայի զգալուստ պատրիարքին՝ եւ հրաւիրեալ 'ի սենեակ նորա առանձինն հանդերձ ներքինապետան, էառ շուրջառ, եւ Աւետարան 'ի ձեռին եմուտ 'ի ներքս 'ի սենեակն. զոր տեսեալ հիւանդին՝ զգաց յինքեան սոսկումն եւ ելաց. յայնժամ ընթերցաւ Մատթէոս պատրիարք 'ի վերայ նորա զԱւետարան բժշկութեան եւ զՆարեկ, եւ զՓարատեաց եւ քաջալերեաց զնա՝ յուսադրելով զառողջութիւն եւ զվերակենդանութիւն ողորմութեամբն Աստուծոյ. զոր լուեալ նորա հաճեցաւ յոյժ, եւ շնորհակալութեամբ մեծաւ շնորհեաց զաղամանդեայ տուփ մի մեծագին՝ պատրիարքին, եւ զտուփ մի գոհարագարդ՝ Պօղոսի Տատեան, զժամացոյց մի ոսկի՝ Յակոբայ Կրճիկեան, եւ զգոհարագարդ գաւաթ մի սրճոյ՝ Վրդանէս վարդապետին. եւ մեծաւ պատուով դարձոյց յետս:

Եւ յիններորդ աւուր առաքեաց ներքինապետն մեծ զաւետիս առողջութեան մօրն արքայի առ Մատթէոս պատրիարք, որ ուրախացեալ յոյժ փառս ետ Աստուծոյ, եւ առաքեաց գիր ուրախակցութեան եւ բարեմաղթութեան առ ներքինապետն մեծաւ գոհունակութեամբ:

Յետ երեսուն եւ հնգից աւուրց առաքեաց մայր արքային զցփսի մեծագին եւ պատուական առ Մատթէոս պատրիարք՝ ՚ի ձեռն արքունի ճարտարապետ Նիկողայոսի Պալեան. եւ Մատթէոս պատրիարք արար զնա շուրջառ ոսկեթել վերջաւորօք, եւ առաքեաց ընծայ առ Ներսէս կաթողիկոս ՚ի սուրբ Էջմիածին:

## ԳԼՈՒԽ ԿԱ.

Յաղագս փոխադարձ այցելութեան Ֆէրիէրի Կարդինալին Հռովմայ ՚ի պատրիարքարանս Յունաց եւ Հայոց, ուր եւ յաղագս բանախօսութեան ՚ի վերայ հաւատոյ:

(1848) Ի սմին ամի առաքեցաւ Ֆէրիէրի Կարդինալն Հռովմայ ՚ի Կոստանդնուպօլիս մեծագին ընծայիւք, եւ ընկալաւ զնա արքայ արժանավայել յարգանօք, եւ վարձեալ զհիւրանոցն Պլօնտէլ ՚ի Բերա ամենայն կարեւոր հանդերձանօք, հրաւիրեաց զնա նստիլ անդ, ցորչափ եւ կամք իցեն նմա մնալ ՚ի Կոստանդնուպօլիս: Կարգեաց ՚ի նմա հիւրընկալ եւ տնտես զՍրապիոն թարգման Բ. Դրան, եւ առաքեաց հրաման ՚ի պատրիարքարանս Յունաց եւ Հայոց երթալ առ նա յայցելութիւն քաղաքավարական օրինօք:

Ոչ կամեցաւ պատրիարքն Յունաց երթալ յոտս նորա, փոքրկութիւն եւ անպատուութիւն իմն համարելով իւրումն բարձր աստիճանի, որ տիեզերական պատրիարք գոլով՝ հաւասարապատիւ ճանացէր զինքն Պապին Հռովմայ՝ որ առաքեալն էր զնա, բայց եւ ոչ կարելով անցանել ըստ հրաման Բ. Դրան, պատճառեաց փոխանորդաբար զմետրապօլիտն Թրակիոյ զԱթանասիոս ընդ երկուց եպիսկոպոսաց ողջունել զգալուստ նորա. եւ զնացեալ նոցա տեսին ընդունելութիւն մեծ, բայց քառորդ մի ժամուկեցեալ վերադարձան յետս:

Գնաց եւ Մատթէոս պատրիարք, առեալ ընդ իւր զՎրթանէս վարդապետ, զՏէրոյէնց Յովհաննէս պատուելին, եւ զքարտուղար իւր զԱւետիս Պէրպէրեան, եւ զթարգման Մկրտիչ Աղաթոն, եւ մտեալ առ նա՝ ողջունեաց զգալուստ նորա, եւ քաղաքավարութեամբ խօսակցեալ ընդ նմա իբրեւ ժամ մի, ետես պատիւ մեծ եւ վերադաձաւ:

Յետ տասն աւուրց զնաց եւ Ֆէրիէրի ՚ի պատրիարքարանս Յունաց փոխադարձ այցելութեամբ, եւ ոչ՝ որպէս արժանն էր, պատուեցաւ. բայց իբրեւ եկն ՚ի պատրիարքարանս Հայոց ընդ առաջ ելին նմա երկոտասան քահանայք փիլոնազգեացք, եւ յետ նոցա վեց վարդապետք եւ երկու եպիսկոպոսք վեղարաւորք, եւ յետուստ նոցա ինքն իսկ Մատթէոս պատրիարք խաչաձեւ գլխարկաւ. եւ բազմեցուցեալ զնա ՚ի վեր կոյս նստարանին՝ որ

վասն նորա պատրաստեալն էր ոսկեթել եւ աստեղազարդ հանդերձանօք, նստաւ եւ ինքն առննթեր նորա, եւ երկու եպիսկոպոսքն յաջմէ եւ յահեկէ, եւ պատուեաց զնա թէյիւ եւ քաղցր օշարակաւ Հիւմմաս կոչեցեալ, եւ քաղցրաւենեօք վարդի եւ պէրկամօթի, եւ սիրալիր յարգութեամբ դարձոյց յետս:

Յետ միոյ ամսեան առաքեաց Յէրիէրի առ Մատթէոս պատրիարք զկոնդակ մի տպեալ Հայերէն, յորում յետ ցաւակցաբար խօսելոյ ՚ի վերայ հերձուածոց եւ մոլորութեանց, որք երեւեցան յեկեղեցւոջ ՚ի սկզբանէ անտի՝ գրէ, թէ՝ "Այժմեան եկեղեցին Հայոց է մոլորեալ եւ անջատեալ ՚ի յուզղափառ չաւղաց նախնի հարց իւրոց". եւ հրաւիրէ զմոլորութիւնսն ՚ի բաց քեցել յանձնէ իւրեանց, եւ ողջամիտ վարդապետութեամբ ընդունել զնախնի ուղղափառութիւն իւրեանց, եւ միանալ ընդ գլխոյն եկեղեցւոյ:

Այսմ ոչ կարելով տանել Մատթէոս պատրիարք, կոչեաց առ ինքն զվառողապետսն Տատեան զՊօղոս եւ զՅովհաննէս, եւ զճարտարապետն արքունի զԿարապետ Պալեան, եւ խօսեցաւ ընդ նոսա առնել գանգատ ՚ի Բ. Դուռն գայսմ անվայել քաղաքավարութենէն՝ զոր արար Յէրիէրի. բայց նոքա լաւհամարեցան զխորհուրդ նորա առնել այսպիսի ինչ. եւ ինքեանք յանձն առին երթալ առ նա այցելութեան աղազաւ, եւ ՚ի լինել խօսից՝ ծանուցանել նմա զցաւ սրտի պատրիարքին Հայոց վասն տետրակին այնմիկ՝ զոր առաքեալն է առ նա:

Գնացին վառողապետքն երկոքին, եւ յետ քաղաքավարական բանից ծանուցին նմա՝ որպէս խորհեալ էին. եւ խնդրեցին ՚ի նմանէ, զի ցուցցէ զմոլորութիւնսն գայնոսիկ, յորս անկեալ է այժմ եկեղեցին Հայոց ըստ բանի կոնդակին:

(1848) Յանձն էառ Յէրիէրի ուրախութեամբ զառաջարկութիւն սոցա, եւ խոստացաւ գալ ՚ի տուն Յովհաննու Տատեան ՚ի Պէշիկթաշ, յոր հրաւիրէին զնա վառողապետքն, եւ խօսիլ ՚ի վերայ այնց՝ զորոց կարծիս ունէր Հռովմայ եկեղեցին ՚ի վերայ Հայոց:

Ազգ արարին եւ Մատթէոս պատրիարքին զորոշումն իւրեանց. եւ նա գնաց ՚ի տուն Յովհաննու Տատեան:

Եկն անդ եւ կարգինալն թարգմանաւ իւրով. եւ յետ մեծածախ ընթրեացն մտին ՚ի քարոզկիր սենեակն, եւ հանեալ զսպասաւորսն արտաքս բակեցին զդուռն, եւ սկսան խօսիլ:

Առաջարկեաց Մատթէոս պատրիարք առ կարգինալն, զի ցուցցէ զմոլորութիւնսն Հայոց. եւ նա սկսաւ զհին սնոտի զրպարտութիւնսն յառաջ բերել. յորոց վերայ բազում անգամ եղեալ են վէճք, եւ ցուցեալ են Հայք զուղղափառութիւն իւրեանց համաձայն յամենայնի սուրբ գրոց եւ սրբոց հարց, որպիսի է խնդիրն 'ի վերայ երկուց բնութեանց, 'ի վերայ բղխման սուրբ հոգւոյն, 'ի վերայ կայանին ննջեցելոց, 'ի վերայ վերջին օծման, եւ 'ի վերայ գլխաւորութեան Հռովմայ աթոռոյն:

Զպատասխանիս սոցին խօսեցաւ Մատթէոս պատրիարք ըստ դաւանութեան եկեղեցւոյն Հայոց, զոր դաւանի մինչեւ ցարդ. զի ոչ եթէ յառաջն այնպէս դաւանէր, եւ այժմ այլազգ. եւ մի առ մի բացատրեաց առաջի նորին զճշմարիտ դաւանութիւնս Հայոց, եւ զթշնամեաց նոցին զհռովմէական գօլէճեանց զանխիղճ եւ զաստուածընդդէմ զրպարտութիւնսն, յոր ժպրհեցան յայսչափ ժամանակաց հետէ ծեփել տղմաւ բերանոյ իւրեանց զլոյս արեւու եկեղեցին Հայոց:

Զարմացաւ կարգինալն, զի ոչ՝ որպէս կարծէրն եւ լուեալ էր, ետես այնպէս, եւ խոստացաւ միանգամ եւս տեսանել զմիմեանս եւ խօսել. եւ ըստ վերջին որոշման գրել 'ի Հռովմ առ Պապն զվկայական իւր յաղագս ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ. եւ որոշեցաւ յերկրորդում նուագին խօսիլ յԱյի Ստէֆանայ 'ի տան Պօղոսի Տատեան:

Յայսմ միջոցի առաջարկութեամբ կարգինալին եղեւ խօսակցութիւն 'ի մէջ իւր եւ Պրոսպարի Տէրոյենց Յովհաննէս պատուելւոյն, որոյ իսկական ձեռագրովն գտեալ զբնագիր խօսակցութիւնն, կարեւոր դատիմք աստ դնել զիսկական օրինակն:

---

Պատմութիւն խօսակցութեան Մօնսինեօր Ֆէրիէրի դեսպանի սրբազան Քահանայապետին Հռովմայ 'ի Դուռն Օսմանեան մեծի տէրութեան, եւ Պրոսպարի Յովհաննէս Տէր Կարապետեան Տէրոյէնց. 6/18 Փետրվար 1848:

Յունվար 29 հինգշաբթի օրը Տ. Ֆէրիէրի արքեպիսկոպոսը պատրիարքարան գալով, եւ սրբազան պատրիարքը եւ Կրճիկեան Յակոբ աղայն եւ վերոյիշեալ Պրոսպարի Յովհաննէսը մէկ կողմէն, եւ Տ. Ֆէրիէրին, եւ հետը իբրեւ թարգման գտնուող Հ. Ար-



սէն վարդապետը մէկ կողմէն, բաւական ժամանակ տեսութիւն ընելէն ետքը, փետրվար 3 երեքշաբթի օրը Լազարիաթ քահանայներէն միւսիւ Կամպա անուն քահանայն գիր խրկեց Պրոսպերին, որ Տ. Ֆէրիէրին առանձին տեսութիւն ընել կուզէ հետը. գրով պատասխանելով օր որոշուեցաւ փետրվար 6 ուրբաթ օրը, եւ այն միւսիւ Կամպա եւ միւսիւ Փոլժըրէ քահանայներուն ընկերակցութեամբ Տ. Ֆէրիէրին դեսպանատունը երթալով, այն տեղի խօսակցութիւնը այս տեղս գրեցանք: Եւ որովհետեւ այս գիրս նոյն օրը չգրուեցաւ, ուստի չեմ կրնար ապահովցնել որ հոն եղած խօսակցութիւնը բառ առ բառ հոս գրուած է. այլ խօսակցութեան նիւթը եւ խօսուած խօսքերը մէկ մտքի վրայ են հոս գրուածներուն հետ:

Տ. Ֆէրիէրին առաջին խօսքը բացաւ ըսելով. ձեր պատրիարքին հետ տեսունելով շատ ուրախացայ, որ սիրոյ եւ միաբանութեան փափաք մը ունի. այս փափաքը Հռովմէական Հայոց պատրիարքին քովն ալ կը տեսնեմ. եւ ինձի այս զարմանք կուգայ, որ երկու իրարմէ բաժանեալ կողման գլուխները նոյն ոգևով վառուած ըլլալով՝ ի՞նչպէս եղեր է որ այսպէս մէկ բարի եւ օգտակար գործ մը մինչեւ հիմայ ետ մնացեր է, եւ խօսքը անգամ չէ եղեր:

Պ. Ասոր պատճառը այն է որ՝ թէպէտ երկուքին ալ մտքին մէջ դրած նպատակը նոյն է, բայց այն նպատակին հասնելու համար ընտրած միջոցներին տարբեր է: Հասունեանը կուզէ որ՝ Հայերը խոստովանին թէ մեր Հայաստանեայց եկեղեցին մոլորած է. մենք քննեցինք, ստուգեցինք, եւ գտանք որ Հռովմայ եկեղեցին անմոլար է. անոր համար մեր եկեղեցին միութիւն ընելու մեզնէ մարդ յանձնառու չըլար. որովհետեւ ամենն ալ գիտեն որ Հռովմէացուց եւ Հայոց եկեղեցիներուն մէջ հաւատալեաց տարբերութիւն չկայ:

Յ. Լսած եւ կարգացած եմ գրոց մէջ, որ Հայք Եւտիքական են:

Պ. Բոլորովին սուտ եւ անհիմն գրպարտութիւն է:

Յ. Ուրեմն Հայք կը խոստովանին, որ տէրն մեր Քրիստոս որ հօր Աստուծոյ համագոյ կատարեալ Աստուած էր, կատարեալ մարդ եղաւ սուրբ կուսէն ծնանելով, եւ աստուածային եւ մարդկային բնութիւնները բնաւ իրարու հետ չչփոթեցան. աստուածային բնութեամբ աստուածային գործերը, եւ մարդկային բնութեամբ մարդկային գործերը կը կատարէր:

Պ. Ամեն կերպով այդպէս կը դաւանին Հայք, եւ թէ որ մտքէդ անցնի որ ես ուրիշ լեզուներու տեղեակ ըլլալով ուղղափառ հայրապետներուն եւ աստուածաբաններուն գիրքերը կարդացեր եւ այս ուղղափառ դաւանութիւնս անոր համար կը խոստովանիմ, Հայոց եկեղեցւոյն դաւանութիւնը ձեր ըսածին պէս Եւտիքական է, կրնաք ասանկ բաներու բոլորովին հատուցիւն չունեցող տգէտ աշխարհականի մըն ալ հարցնել. այն ալ իմ ըսածին պէս կըսէ: Կրնայ ըլլալ որ մէկ ժամանակ մը տգէտ մարդ մը հոգեւորական իշխանութեան հասած ըլլալով ազգին մէջ, Եւտիքականներուն յարած ըլլալով այս մոլորութիւնս քարոզած ըլլայ. որովհետեւ չեմք ըսեր եւ չեմք կրնար ըսել որ մեր հոգեւոր գլուխները անսխալութիւն ունին: Այսպիսիներ թէ որ եղած ալ են նէ՛ բոլոր ընելիքնին այնքան կրնայ ըլլալ որ, ուղղափառութիւն քարոզողներուն ձայնը կտրելու բռնութեան ճամբայ մը բռնեն. եւ իրենց օրը ուղղափառութիւնը քարոզուած չըլլայ Հայոց եկեղեցւոյն մէջ, ինչպէս որ ատեն ատեն Յունաց մէջ եղած ըլլալը եկեղեցական պատմութեանց մէջ կը կարգամք. մեր եկեղեցւոյ մէջ այսպիսի բան մը եղած ըլլալուն յիշատակը չունիմք. բայց եղած ալ է նէ, որովհետեւ այնպիսի բռնութիւնը եկեղեցւոյն վրայ մնայուն վիճակ մը չէ, բռնութիւնը վերցածին պէս ուղղափառ վարդապետութիւնը նորէն ուժ կը գտնէ, առաձգական նիւթերու նման, որ քաշած տեղդ կերթայ. բայց քաշող ուժը դադարելուն պէս անիկայ ինքնին իր առաջին եւ բնական տեղը կը դառնայ:

Յ. Էվէլօք շնորհակալ եմ որ այս նիւթոյս վրայ ունեցած տարակոյսս լուծեցիր, եւ միտքս բժշկեցիր:

Պ. Տարակոյս ըլլալու ալ տեղի չկար: Ատեն ատեն մեր ազգին դաւանութեանը վրայ զրպարտութիւններ ըրած են ազգին թշնամիները, մանաւանդ խաչակիրներուն ատենը եւ ետքը ունիթօրներուն ատենը: Բենեդիկտոս երկոտասաներորդ պապին օրը Հայոց ընտանի թշնամիներէն երկու հոգի մինչեւ Ավինեօն երթալով՝ Հայոց ազգին վրայ 117 տեսակ մոլորութեան մէկ ցանկ մը ներկայացուցին պապին: Անիկայ խոհեմութեամբ վարուելով ուղեց նոյն իսկ Հայերէն տեղեկանալ բանին էութիւնը. Հայոց Մխիթար կաթողիկոսին գրեց. այն ալ ազգային ժողով ըրաւ Սիս, այն զրպարտութիւնները մէկիկ մէկիկ քննելով պատասխանը գրեցին եւ պապին խրկեցին: Թէ որ ամեն ատեն այս ճամբան բռնուէր նէ՛ երկու ազգի մէջ այս պաղուցիւնը չէր ըլլար: Ուստի կաղաչեմ.

Թէ որ Հայերը թշնամի ունին. անոնց ըրած զրպարտութիւնը անոնցմէ ստուգել չըլլայ. որովհետեւ այս պարզապէս անոնց խօսքին առանց քննելու եւ առանց Կոստանդնուպօլիս պատրիարք ունի. էջմիածին կաթողիկոս ունի. ասոնք ալ հոգեւորական ժողովք ունին. անոնցէ հարցուի եւ ստուգուի: Չեմ յիշեր որ ասանկ բան մը մեր պատրիարքին մէկուն հարցուած ըլլայ. եւ այն ալ պատասխանուց արժան չսեպելով պատասխան չտայ: Ես հոս եկեր եմ նէ իբրեւ պատրիարքէ խրկուած կամ իբրեւ ազգային հոգեւոր ժողովոյ անդամ չեմ. ազգին լրութիւնը ներկայացրնելու արտօնութիւն մը չունիմ հիմայ այս տեղս. այլ մասնաւոր մարդ մը, մասնաւորապէս իմ գիտցածս խօսելու եկեր եմ. իմ ըսածս ազգին ըսածնէ ըսելու մէկ իրաւունք մը չունիմ. եւ դուք աւելի ապահովութեան համար՝ այդ բանին վրայօք կրնաք պատրիարքէն եւ ազգային հոգեւոր ժողովքէն ստուգել:

Յ. Այդ խօսքերուդ իրաւունք ունիս. բայց կուզէի իմանալ թէ Հռոմայ աթոռոյն եւ Քահանայապետին վրայ ի՞նչպէս կըսէք:

Պ. Ասոր վրայօք ալ կրնաք ազգիս մէջէն պինդ տգէտ մարդու մը հարցընել թէ, երբ որ ամեն քրիստոնեայ ազգաց առաջնորդները եկեղեցւոյ մէկ պիտոյիցը համար ժողովք ընելու ըլլան եւ մէկ տեղ գան նէ՝ ժողովքին գլուխը նստելը որո՞ւ կ'իյնայ. ամենքը միաբան կը պատասխանեն թէ՝ Հռովմայ հայրապետին կ'իյնայ: Ըսել է որ՝ Հռոմայ հայրապետին նախագահութիւնը ազգը բոլոր կը ճանչնայ:

Յ. Բայց նախագահութիւնը այլ է, իրաւաբանութիւնը այլ է. Հայք չեն մի ճանչեր որ Պապը յաստուածային իրաւանց բոլոր քրիստոնէից եւ բոլոր քրիստոնէից եւ բոլոր եկեղեցւոյ վրայ իրաւաբանութիւն ունի, եւ ով որ զինքը անոր իրաւաբանութեանէն ազատ կը սեպէ նէ՝ հաւատքի յօդուածոց վրայօք մոլորութիւն մը չունենայ ալ նէ՝ եկեղեցիէն զատուած եւ հերձուածող (չիզմադիքօ) կը սեպուի:

Պ. Հայք այդ ընդհանուր իրաւաբանութիւնը չեն ճանչնար, ինչպէս որ Կալլիքան եկեղեցին ալ որ շիզմադիք ըսուած չունի, չճանչնար: Կալլիքանները կ'ըսեն որ ժողովքը Պապէն վեր է իրաւաբանութեան կողմանէ. մենք ալ կ'ըսեմք որ՝ եկեղեցւոյ մէջ ամեն առաջնորդներուն եւ եպիսկոպոսներուն միութիւնն է բուն իրաւաբանութեան տէրը, եւ այս իրաւաբանութիւնս առանձին մարդու չեմք տար, ինչպէս որ Կալլիքաններն ալ չեն տար:

Յ. Այս վէճիս սկիզբը Կոստանդեայ ժողովքէն է. այն ատենը մի եւ նոյն ժամանակի մէջ քանի մի Պապ կային, եւ ասոնց ճշմարիտ Պապ որը ըլլալը վէճի առարկայ եղած էր: Վէճը կտրելու համար Կոստանդեայ ժողովը ըսաւ որ, ով որ այս ժողովոյս վճռոյն չհնազանդի նէ՝ ժողովը անիկայ պապ չըճանչնար: (Այս խօսքս քիչ մը ընդարձակ ընելով պատմութիւնը՝ երկար քշեց. բայց հոս գրածս այն երկար պատմութեանը ամփոփումն է):

Պ. Սակայն Կոստանդեայ ժողովքէն երկու հարիւր տարի ետքը Բիէր Տէմարք Փարիզու արքեպիսկոպոսը, եւ անկէջ քիչ մը ետքը Պօսիւէ, Մօ քաղաքին եպիսկոպոսը, եւ Կալլիքան եկեղեցւոյ բոլոր եկեղեցականները Փարիզ ժողովուելով 1682ին վճիռ ըրին թէ ժողովքը պապին վրայ իրաւաբանութիւն ունի, եւ Պօսիւէ՝ ինչպէս որ յայտնի է, մեծ գիրք մըն ալ գրեց Կալլիքաններուն այս ժողովքին վճիռը արդարացնելու համար: Բայց թէ որ պապը հաւատոյ յօդուածներուն վրայօք մոլորի նէ՝ այն ատենը անոր ընդհանուր եկեղեցւոյ վրայ ունեցած իրաւաբանութիւնը ի՞նչ ընելու է:

Յ. Անհնար է որ Պապը հաւատալեաց վրայ սխալի, որովհետեւ Քրիստոս տէրն մեր յայտնի խօսքով ըսաւ Պետրոսի, եւ անով անոր ամեն յաջորդներուն որ, եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեղբարս քո: Բոլոր քրիստոնեայ եղբարց հաւատքը Պետրոսի առաքելոյն յաջորդը պիտի հաստատէ. եւ թէ որ ասանկ հաւատքը հաստատող հեղինակութիւն մը չըլլայ նէ՝ հաւատալեաց վրայ հերետիկոսութիւն մը եղած ատենը վէճը լուծելու եւ քրիստոնէից հաւատքը հաստատելու միջոց մը չմնար:

Պ. Կը մնայ այն ատենը համօրէն քրիստոնեայ եկեղեցիներուն միաձայն աւանդութիւնը, որովհետեւ հերետիկոսութիւնը նոր է, անհնար է որ ամեն քրիստոնեայք եւ անոնց առաջնորդները գիտնան, եւ գիտցողները հաճութիւն տան: Այս կերպով այն բանը չը լսուած եւ նոր վարդապետութիւն ըլլալը ապացուցուելէն ետքը՝ հերետիկոսութիւն ըլլալը ինքնին կը հետեւի. եւ ասով քրիստոնեայք իրենց նախնի հաւատքին վրայ չհաստատուին նէ՝ իրենց յարգած նախնեաց հաւատքը ըլլալը գիտնալով այն հաւատքը չը բռնեն նէ, իրենց ժամանակակից գտնուող Հռովմայ հայրապետին այն հաւատքը ունենալը իրենց վրայ ազդեցութիւն չընեն, իրենց նախնեացը համար եւ իրենցմէ զատ բոլոր քրիստոնէից համար սխալած են ըսողները ամենեւին խիղճ չեն

ըներ ըսելու թէ Հռովմայու պապն ալ սխալած է: Սակայն վերոյիշեալ Տէմարք եւ Պօսիւէ եպիսկոպոսները, եւ ուրիշներն ալ անոնցմէ առաջ եւ ետքը՝ պապերուն մէջ հաւատոյ յօդուածներուն վրայօք ալ մոլորածներ գտան, եւ կը յիշեն Լիբերիոս պապը որ Արիոսականներուն հաւատոյ դաւանութիւնը ստորագրեց. եւ Ոնորիոս պապը, որ Եւտիքականաց մէկ ճիւղը եղող միակամեան ըսուածներուն կուսակից եղաւ:

Ծ. Հռովմայ աթոռոյն թշնամիները (այսինքն աղանդաւորները) ասոնց վրայ ասանկ ձայներ հանեցին, հին պատմութիւններուն գրածներէն իրենց կամացը ուզածին պէս ծուռ բաներ հանելով: Այն ատենը քրիթի քայի արուեստը շատ ընդարձակ նիւթ չունենալովը հիմակուան պէս ծաղկեալ չէր. հիմայ բանին ստոյգը երեւան ելլելուն միջոցները շատցած են, անոր համար Պօսիւէ եւ անոր պէսերը պապերուն մէկ քանին հաւատոյ մէջ մոլորած կարծեցին նէ՝ մեղադրելի չեն. հիմայ բանին ճշմարտութիւնը ինչ ըլլալը երեւան ելլելէն ետքը տակաւին այդ հին եւ սխալ կարծիքին վրայ պնդելով հերետիկոսութեան մէջ ինկած պապ ցըցընելնին մեծապէս մեղադրելի է:

Պ. Ես ալ գիտեմ որ Լիբերիոս Արիոսականներուն շինած դաւանութիւնը ստորագրած ատենը պապական պաշտօնի վրայ չէր. Փելիքս նստած էր Հռովմայի աթոռը, եւ Լիբերիոս աքսոր խրկուած էր, եւ ստորագրած դաւանութիւնը թէպէտ Արիոսականներուն շինածն էր, բայց Արիոսական մոլորութեան նշան չկար մէջը, կասկածելի անոր համար էր որ՝ համագոյակից բառը չէր դրուած: Ասանկ յայտնապէս հերետիկոսութիւն չպարունակող դաւանութիւն մը՝ աքսորի ժամանակ ինքնագլուխ ստորագրելը մարդկային տկարութիւն մը ցըցընել է, հերետիկոսութեան մէջ իյնալ չէ: Նմանապէս Ոնորիոս պապն ալ իրեն եղած խնդրէն խաբուեցաւ: Քրիստոսի մարդկային կամք ունենալը ուրացող միակամեանները հարցուցին Ոնորիոսի, թէ Քրիստոս մարդկային կամք ունէր արդեօք ուրիշ մարդոց պէս, որոց համար առաքեալը կըսէ. “Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի հակառակ մարմնոյ”: Ոնորիոս պատասխան տուաւ թէ չէ: Այս չէ ըսելովը լսել կուզէր թէ Քրիստոսի մարդկային կամքը Աստուածային կամացը հակառակ չէր, մէկ էր միաբանութեամբ, չէ թէ թուական՝ այլ բարոյական միութեամբ: Պատասխան ուզողները այս պատասխանը իրենց ըսածին հաստատութեանը գործածեցին.

բայց այն ատենը հաւատացեալք՝ եւ այս աղանդոցս դէմ եղած ժողովքը մտիկ չըրին Ոնորհոսի անունով զրուցուած խօսքը. միակամեանները ով կըլլան նէ ըլլան՝ նզովեցին: Ետքը Սերգիոս եւ Պօղոս միակամեան աղանդաւոր պատրիարքներուն Ոնորհոս գրած նամակին օրինակը գտնուած ատենը իմացուեցաւ որ այս երկու աղանդապետները խարդախութիւն բանեցնելով Ոնորհոսի գրած նամակին օրինակը գտնուած ատենը իմացուեցաւ որ այս երկու աղանդապետները խարդախութիւն բանեցնելով Ոնորհոսը խաբէր եւ անոր անունովը ուրիշ պարզամիտներն ալ խաբելու համար անանկ գիր մը առեր են ձեռքէն:

Յ. Այո այդպէս է, այդ պատմութիւնները աղէկ գիտես եղեր:

Պ. Բայց մեր բուն խնդիրը այս չէ: Լիբերիոսի եւ Ոնորհոսի վրայօք ճշմարիտ պատմութիւնը գիտուցելէն առաջ այս երկուքը հերետիկոսութեան մէջ ինկան ըսող ուղղափառ վարդապետները եւ աստուածաբանները հաւատոյ դէմ մոլորած չեղան, շիզմաթիք չսեպուեցան: Անանկ է նէ՛ պապը հաւատալեաց մէջ կրնայ սխալիլ ըսելը Քրիստոսի յայտնի բանին դէմ պիտի չըլլայ, եւ կրնայ սխալիլ տէյի ենթադրուինէ՛ ընդհանուր եւ անկոպար իրաւաբանութիւն մը տալ չի վայելը, անոր համար Կալլիքեանները՝ որ պապին անսխալութիւնը չեն ընդունիր, ընդհանուր իրաւաբանութիւնն ալ չեն ընդունիր: Ֆրանսըզները՝ որ Հռովմէական են, եւ Լուդովիկոս ԺԴ. թագաւորին օրը Հռովմէականութիւնը տէրութեան կրօնք բռնուած էր, եւ մինչեւ 1789ին խռովութիւնը ասանկ տեւեց, պապին կողմէն եկած կոնդակ մը մինչեւ որ բարլամէնթին մէջ քննութեան չառնուէր նէ չէին հրատարակեր. ըսել է որ բարլամէնթին վրայ պապէն աւելի իրաւաբանութիւն մը կը ճանչնային, եւ բարլամէնթը պապին հանած կոնդակին քննութեանը իշխանութիւն ունեցած կըլլար, եւ յարմար չտեսածներն ալ կրնար խափանել. քանզի բարլամէնթը չտեսած պապին կոնդակը չհրատարակուի ըսելը այս ըսել է: Այս ալ դիտելու բան մըն է որ՝ ունեցած կասկածնին որով պապին կոնդակը քննութեան առնել կուզեն. քաղաքականութեան վերաբերեալ բան պիտի չըլլայ, որովհետեւ Հռովմայ պապին հանած կոնդակը միշտ եկեղեցական նիւթոց վրայ կրնայ ըլլալ: Ֆրանսըզներն աշխարհական մարդոցմէ բաղկացեալ բարլամէնթը պապին կոնդակին քննիչ ընդունելովնին շիզմաթիք չսեպուեցան:

Յ. Հռովմայ պապերուն համար համբաւ ելած էր, որպէս թէ եկեղեցական իրաւաբանութիւննին ամուր բռնելու պատճառաւ ժամանակաւոր իշխանութիւննին ալ եւելցնելու միտք ունին, եւ որովհետեւ պապին ժամանակաւոր իշխանութեան եւելնալը Եւրոպայի թագաւորները չեն քաշեր, այն կարծած միտքերնին առաջ երթալու միջոց չը ձգելու համար էր որ պապին կոնդակը բարլամէնթին քննութեանը տակը ձգեցին: Սակայն պէտք էր գիտնային որ, պապերը ինչ ժամանակ որ թէ Իտալացի իշխաններուն, թէ Գերմանիայի եւ թէ Գաղղիայի դէմ կռիւ բացեր են նէ, կամ Հռովմայու աթոռոյն ժառանգութիւն եղած երկիրները պաշտպանելու համար էր, ինչպէս են Յուլիոս Բ. պապին Վենետիկցիներուն հետ բացած կռիւը, կամ հասարակաց մէջ իրեն գեղիս վարովը գայթակղութիւն ձգող իշխան մը գսպելու համար, ինչպէս Գրիգոր Է. պապին Նէմցէի Հենրիկոս Դ. կայսեր դէմ բացած կռիւը, կամ աստուածային օրինաց վրէժխնդրութեան համար, ինչպէս է Վոնիփակիոս Ը. պապին բացած կռիւը Փրանսայի Ֆիլիբ Լը Պէլ թագաւորին դէմ. ասոնց եւ ուրիշ կռիւներուն վրայ թիզմը տեղ չաւելցուց. ինչ երկիր ունէր նէ՝ այն երկիրներուն տիրոջը առատաձեռնութեամբը նուէրք տրուած էին. եւ պապը ետքը աս երկիրներէս մէկ քանին կորսնցուց, նոր երկիր չստացաւ: Բայց թագաւորները պապէն ասանկ բաներու վրայ վախնալով՝ կոնդակները քննութեան տակ ձգելնին քաղաքական նպատակ մը ունի. շիզմաթիք չեն ըսուիր ասոր համար:

Պ. Ուրիշ բան մը ունիմ պատմելիք, որուն մէջ ոչ քաղաքական նպատակ կայ, եւ ոչ երկիր առնելու կամ բռնանալու երկիւղ. լոկ աստուածաբանական խնդրոյ մը վրայ է. որ մէկ կրօնաւորական միաբանութիւն մը յայտնի հակառակած է Հռովմայ աթոռոյն, եւ շիզմաթիք ըսուած չէ. Կլէմէս Կալանոս մատենագրին օրէն՝ ի վեր անանկ կարծիք մտած էր Հայոց պատմութեան աղէկ հմտութիւն չունեցող Հայագգի Հռովմէականներուն մէջ, թէ Յովհանն Օձենցի Հայոց հայրապետը Եւտիքական է. Վենետիկու Մխիթարեաններէն Հ. Միքայէլ Չամչեանը ասոր ուղղափառութիւնը աղէկ յայտնեց Հայոց պատմութեան մէջ. բայց Բրոպականտայի աշակերտ Հայագգի վարդապետները ծանր վէճ հանեցին ասոր դէմ: Օձենցիին երեւութական հերետիկոսաց դէմ գրած ճառին հին օրինակը Փարիզու դրատանը մէջ գտնուելով՝ նոյն Վէնէտիկի Մխիթարեաններէն Հ. Մկրտիչ Աւգէրեանը ծանօթու-

Թեամբ տպեց: Վէճը նորոգեցաւ. հարկ սեպեց Հ. Աւգէրեանը այս ճառը Լատիններէն թարգմանել եւ տպել, եւ Հռովմայու երեւեցի աստուածաբաններուն քննութեանը յանձնել: 1816 թուին տպուեցաւ. աստուածաբանները տեսան եւ քննեցին, որոց մէջէն հիմայ անուննին միտքս մնացածներն են կարգինալ Ծուրլա բազմահմուտ աստուածաբանը, եւ կարգինալ Մաւրօ Գաբէլլարի, որ ետքը պապ ալ եղաւ Գրիգոր ԺԶ. անունով, ասոնք գրով եւ նամակաւ վկայութիւն կուտան որ Յովհան Օձնեցիին ընդդէմ երեւութականաց ճառին մէջ ուղղափառ հաւատոյ դէմ բան չկայ. եւ ընդարձակ նամակներով գովութիւններ կելլեն նոյն Յովհան Օձնեցւոյն այն ճառին մէջ մոլորութիւն գտածի պէս, որպէս թէ իրենք Հռովմայու կարգինալներէն աւելի հմուտ են աստուածաբանութեան, գիրք կը գրեն, կաշխատին Յովհան Օձնեցիին հերետիկոս եւ Եւտիքական ցուցընելու, չէ թէ այն Լատիններէնի թարգմանուած գիրքը անորը չէ ըսելով, որ ասանկ ըսէին նէ յիշեալ աստուածաբաններուն վճռոյն դէմ բան մը ըսած չէին ըլլար. այլ ընդունելով թէ անորն է, եւ մէջէն մոլորութիւն գտնելով: Սակայն այսպէսով ալ՝ այն Վիէննայի Միթիթարեան վարդապետները չիզմաթիք չըսուեցան. թէեւ ասոնք ալ Հռովմայու աթոռոյն աստուածաբանից վճիռը քննութեան տակ առին:

Յ. Ասիկայ պապին վճռոյն չհնազանդիլ եւ անիկայ քննութեան տակ առնել չէ, քանի մի աստուածաբանից վճիռը դիմադրել է, որ չիզմաթիք անուան արժանի յանցանք մը չէ:

Պ. Գիրքերուն քննութիւնը կարգինալներ է բաղկացեալ ժողովքի մը մէջ կըլլայ միշտ. եւ հերետիկոսական խօսք պարունակող գիրքերուն ցանկն ալ հոն է, որ Խնդիկ կըսուի. անանկ որ՝ Խնդիկ մէջ անունը գրուած գիրք ըսելը՝ հերետիկոսական գիրք ըսել է. եւ ամեն Հռովմէական կը պարտաւորի այն գիրքը ձեռք չառնելու եւ չկարդալու, եւ հնազանդ չեղողը հաւատոյ կողմէն կասկածելի եւ անհնազանդ կըլլայ: Անանկ է նէ՝ նոյն ժողովոյն աստուածաբաններուն իբրեւ ուղղափառ հրատարակած գիրքերնին ալ հերետիկոսական է ըսողը՝ աթոռոյն վճռոյն անհնազանդ սեպուելու է:

Ծ. Այդպիսի խօսքերուն ամենուն ալ վերջը կուգայ, երբ որ հրատարակուի այն շրջաբերականը որ Պիոս Թ. սրբազան քահանայապետը գրեց բոլոր արեւելեան քրիստոնէից, որ Հռովմայէն բաժնուած են. եւ մօտ ատենս հրատարակելով մեզի ալ խրկեց,



հրաման ալ ունիմք որ այս շրջաբերականը արեւելեան քրիստոնէից մէջ գործածուած լեզուներու թարգմանուի եւ տպուի որ ամենքն ալ իմանան. թէ որ Լատիններէն գիտես նէ՝ բերեմ որ տեսնես:

Պ. Գիտեմ. եւ տեսնելու ալ կը փափաքէի:

Տ. Ֆէրիէրի գնաց մէկ հատ մը բերաւ. եւ սկիզբէն սկսելով մէկ երկու թուղթ բան 'ի միասին կարդացինք. ետքը ըսաւ Պրուսացին:

Այս բաներս աղէկ են. բայց աստուածաբանական փաստերով վիճաբանական ոճով բարակ տրամաբանութեամբ գրուած բաները հասարակութեան մտքին շատ յարմար գալու բաներ չեն. այսպիսի բաներ առաջկուց 'ի վեր մէկ կողմէն եւ մէկալ կողմէն գրուցուած, եւ յարմար կամ անյարմար պատասխան մը առած են: Հասարակութեան դիւրաւ հասկանալու բաներ են, որ ինչ նախադասութիւն պիտի հաստատուի նէ պատմական ձեւով հաստատուի՞ ինչ բանի վրայօք հասարակաց մտքին մէջ տպաւորուած թիւր կարծիքներ կան նէ պատմութեամբ հերքուին. եւ ասիկայ աստուածաբանական խնդրոց մէջ աւելի դիւրին է. որովհետեւ ճշմարիտ հաւատքը եւ եկեղեցին եւ ստոյգ ականդութիւնը հինն է. եւ հին բաները պատմութեամբ գիտեմք, եւ պատմութեամբ կրնամք ռամիկներուն գիտցունել: Այս շրջաբերականը պատմական քանի մի բաներ պարունակելուն համար աղէկ է. միայն սա կը փափաքէի որ՝ հայերէնի թարգմանողը աստուածաբանական եզերքները ճիշդ թարգմանէր հայերէն լեզուին, որպէս զի կարգացողները իրենց ընտել եւ սովորական լեզուն հոն գտնելով հակառակութեան խմորը վերնար, Քաղկեդոնի ժողովոյն եւ Լէոնի տոմարին ծուռ թարգմանութեանը պէս եւ մօտ ատեններս քանի մի լատինական բառերու անտեղեակ թարգմանութեանց պէս նոր հակառակութեան առիթ չըլար:

Յ. Այս շրջաբերականիս թարգմանութեանը մեր Հ. Արսէնը պիտի աշխատի. բայց ըսած խօսքերէդ այն միտքս եկաւ որ դուք Քաղկեդոնի ժողովը եւ սուրբն Լեոն Հռովմայ հայրապետը կը նզովէք եղեր: Թէ որ Եւտիքական չէք նէ՝ ասոնք ինչու՞ կը նզովէք, որ Եւտի քէսի աղանդը դատապարտեցին:

Պ. Որովհետեւ ատեն մը թէ Յունաց եւ թէ Հռովմայեցւոց եւ մեր մէջը վէճ եղած է ասոր համար. եւ ձեր յարգութիւնը յատուկ չխօսեցաք ասոր վրայ. դիպուկ առիթ գտայ այս տեղս ձեզի յի-

չեցնե, որ ասոր վրայօք ալ եղած կասկածը վերնայ: Քաղկեդոնի ժողովքը եղած տարին Հայերը Պարսից դէմ հաւատոյ վրայ կռիւ ունէին. քրիստոնէական եկեղեցին պաշտպանելու համար արիւն կը թափէին, Մարկիանոս կայսրէն ալ օգնութիւն ուղած էին եւ գտած չէին: Այն շփոթներուն ատենը Քաղկեդոնի ժողովքը Հայոց վարդապետներէն մարդ չգտնուեցաւ. ժողովը լմննալէն ետքն ալ Հայաստան ժողովական թուղթ մը չխրկուեցաւ. ինչպէս որ 20 տարի առաջ՝ Եփեսոսի առաջին ժողովքը լմննալէն ետքը ժողովական թուղթ գնաց մեր սուրբ Սահակ հայրապետին: Ասոր համար Հայերը չրկեցան տեղեկութիւն ունենալ Քաղկեդոնի ժողովոյն վրայ: Ատեն մը ետքը, երբ որ քիչ մը հանդարտեցաւ Հայաստան եւ ասանկ բաներու վրայ խօսելու պատեհութիւն եղաւ, Նեստորականները որ Եփեսոսի առաջին ժողովքէն ետքը Յունաց երկրին սահմաններէն դուրս ինկած ըլլալով Ասորեստան եւ Հայաստան բազմութիւն մէկէն եկած էին, սկսան ըսել թէ Եփեսոսի ժողովոյն անիրաւութիւնը յայտնի եղաւ. ահա ըսել թէ Եփեսոսի ժողովոյն անիրաւութիւնը յայտնի եղաւ. ահա Քաղկեդոնի ժողովքը վեց հարիւր հայրապետէն աւելի ժողովուելով Նեստորի դաւանութիւնը ընդունեցին. Քրիստոսի աստուածութիւնը եւ մարդկութիւնը իրարմէ գատ ըլլալը դաւանեցին, եւ երկու բնութիւն ըսին: Անդիէն Եւտիքականները՝ որ անոնք ալ Քաղկեդոնի ժողովքէն ետքը շատուոր մէկէն Ասորեստան եւ Հայաստան եկած էին, ժողովքը մոլորեցաւ, Նեստորական եղաւ. եւ մենք Նեստորի դէմ ուղղափառութիւն քարոզելնու համար ժողովքին բռնութեանը երեսին կը հալածուիմք կոր կըսէին: Հայերը Նեստորի մոլորութիւնը գիտէին, բայց Նեստորինը ինչ ըլլալը չը գիտէին. Եւտիքականներն ալ կեղծաւորելով եւ իբրեւ սուրբ եւ ուղղափառ ձեւանալով խօսքերնին լսողներուն միտքը իրենց որսացին, սիրտերնին ՚ի գութ շարժեցին. բայց եկեղեցին այն ատենը մէկ որոշիչ դատում մը եւ վճիռ մը չըրաւ, թէպէպտեւ երկու հակառակ կողման վկայութիւնը իրարու համաձայն գտաւ Քաղկեդոնի ժողովքը նեստորական ըլլալուն վրայ: Այսու ամենայնիւ դատումը կախ ձգեց մինչեւ այն ատենը որ իմացաւ թէ Յունաց Զէնոն կայսրը հրովարտակ հանելով Քաղկեդոնի ժողովոյն խօսքը ըլլալն անգամ արգիլեց: Այն ատեն Հայերը այս հրովարտակէս մակաբերեցին որ՝ Քաղկեդոնի ժողովոյն համար լսածնին ճշմարիտ պիտի ըլլայ. ուստի բոլորովին մերժեցին: Ետքը Լեւոնի տուժարն

ալ՝ որ Եւտիֆէսի դէմ գրած էր Փլաբիանոս պատրիարքին, գէշ թարգմանութեամբ մը հրատարակեցաւ Հայոց մէջ. թարգմանութեան մէջ յայտնի Նեստորականութեան հոտ կար. եւ նամակը Եւտիֆէսի դէմ էր, եւ Քաղկեդոնի ժողովոյն մէջ կարգացուած եւ հաւնուած էր: Քաղկեդոնի ժողովքը Նեստորական կարծողներուն ասկէց աւելի ապացոյց չուզէր կարծիք ընելու թէ Լեւոն պապն ալ Նեստորական է. անոր համար Քաղկեդոնի ժողովքն ալ նզովել սկսան, Լեւոնն ալ: Սակայն Եւտիֆէս ալ կը նզովուի մեր ամեն գիրքերուն մէջ. բնաւ մէկը չկրնար ցըցունել թէ մեր հայրապետաց եւ վարդապետաց մէկուն գրքին մէջ Եւտիֆէսի անունը գովութեամբ յիշուած ըլլայ:

Ծ. Բայց պէտք էր, երբոր ընդհանուր եկեղեցին Քաղկեդոնի ժողովքը կրնդունի, եւ Լեւոն պապին սուրբ կրսէ, դուք ալ ընդունէիք, թէ որ Եւտիֆէսի յարեալ չէիք նէ:

Պ. Ձեր յարգութեանը կը հարցունեմ, եղա՞ծ է անանկ մէկ ժամանակ մը որ Հռովմայ եկեղեցին պատկերաց եւ սրբոց մասանց յարգութիւն չտայ, եւ հակառակի:

Ծ. Անանկ բան բնաւ եղած չէ: Մանաւանդ Իտալիայի ազատութիւնը Յունաց կայսերաց ձեռքէն՝ այս պատճառաւս եղաւ, որ Յունաց կայսերը պատկերամարտ եղան. Հռովմայ հայրապետը այս նոր հերետիկոսներուն դէմ եկեղեցւոյ Հաւատքը կը պաշտպանէր՝ երբոր կայսրը հայրապետին վրայ բռնանալ ուղեց նէ, Իտալիա ալ Յունաց կայսերութեան երկիր ըլլալէն դադարեցաւ: Այսքան անլուր էր պատկերամարտութիւնը Հռովմ:

Պ. Պատկերամարտից դէմ եղաւ Նիկիոյ երկրորդ ժողովը, որ տիեզերական ժողովներուն կարգը եօթներորդն է, եւ արեւելեան եւ արեւմտեան քրիստոնէից միապէս ընդունելի է. երբոր այս ժողովոյն պատմութիւնը Եւրոպա հասաւ նէ՝ Հռովմէական եպիսկոպոսներ եւ վարդապետներ շատ բազմութիւն ժողովուեցան Ֆրանքֆորթ քաղաքը, եւ ժողովոյն վճիռը քնեցին եւ հերքեցին, բայց ասոր համար Ֆրանքֆորթի ժողովոյն մէջ գտնուած հայրապետները ոչ հերետիկոս ըսուեցան, եւ ոչ շիզմաթիք:

Ծ. Որովհետեւ Նիկիոյ Բ. ժողովոյն գործը որ Յունարէն էր, Լատիներէնի սխալ թարգմանուած էր. այն թարգմանութեանը նայելով դատապարտեցին, ետքը երբոր ժողովոյն վճիռը Յունարէն բնագրէն ստուգեցաւ եւ ճիշդ թարգմանութիւնը երեւան ելաւ, իմացուեցաւ ուղղափառ ըլլալը եւ ընդունելի եղաւ.

(Կրնար ըսուիլ ասոր վրայ թէ Նիկիոյ ժողովոյն մէջ Հռովմայոս պապին կողմէն ալ մարդ կար, եւ ետքը պապն ալ ժողովքը ընդունեց եւ հաստատեց, բայց Ֆրանքֆորթի ժողովքը ասոր չը նայելով դատապարտեց, եւ ասկէց կերեւի որ ժողովք մը ընդունելու կամ չընդունելու համար այն ատենն ալ, այսինքն ութերորդ դարուն մէջ, պապին ընդունելուն կամ չընդունելուն չեն նայիր եղեր: Բայց այս հետեւութիւնս հանելուն կարգը անցած ըլլալով այն ատենը միտք չեկաւ):

Պ. Քաղկեդոնի ժողովոյն վրայով ալ նոյնն է. գէշ թարգմանութեան նայելով ժողովքը դատապարտել, եւ ասկէց աւելի այն որ նոյն իսկ կը դատապարտէին:

Յ. Գէշ թարգմանութեամբ վայթակղութեան պատճառ եղած ի՞նչ բառեր կան ուրիշ:

Պ. Նապոլիտան եւ Բոնոնիոն եւ Բոնոնիոն բառերը. այս երեքիս վրայ ալ մեր եկեղեցին զրպարտողները կըսեն. Հայերը Քրիստոսի վրայ երկու նապոլիտան չեն ճանչնար, Հոգւոյն սրբոյն համար միայն ՚ի Հօրէ Բոնոնիոն կըսեն, ՚ի յՈրդւոյ Բոնոնիոն ըսելը չեն ընդունիր, ներելի մեղօք կամ ապաշխարութիւնը չվճարած մեռնողներուն համար չեն ըսեր թէ Բոնոնիոն մը կը կենան նեղութեան մէջ մինչեւ մաքրուին. այս երեքս ալ սուտ զրպարտութիւնն է. այս երեքիս վրայ ալ մեր եկեղեցւոյ դաւանութիւնը Հռովմայեցւոց պէս է. յիշեալ Լատիններէնուն տեղը դրուած Հայերէնները անանկ բառեր են որ այն նիւթերուն մէջ այն բառերէն ծուռ միտք կելլէ որ մենք չեմք կրնար ընդունիլ:

Յ. Ի՞նչպէս:

Պ. Նապոլիտան բառը որ նապոլիտան բառն էլած է, պիտի նշանակէ ծնած ատենէն եւ ծնելուն վերաբերեալ հանգամանքները եւ յատկութիւնները. եւ որովհետեւ Քրիստոս երկու ծնունդ ունի, մէկը ժամանակաւոր եւ մէկը յաւիտենական, կըրնայ եւ հարկ ալ է ըսուիլ թէ երկու նապոլիտան ունի. բնութիւն բառը, որ նապոլիտան բառին տեղը կը դրուի թարգմանութեանց մէջ, բուն բառն էլած ըլլալով կը նշանակէ էութիւն, իսկութիւն: Ասոնք մօտ կողման անձն բառով նշանակուած մտքին. եւ ինչպէս որ երկու անձն չըսուիր, երկու բնութիւն ալ չըսուիր: Քաղկեդոնի ժողովքին համար Նեստորականներէն եւ Եւտիքականներէն միօրինակ ըսուելով թէ ժողովքը Նեստորական էր, եւ սահմանին մէջը երկու բնութիւն տեսնելով՝ կարծիք ըրին վերոյիշեալ ստուգաբանու-

Թեանը ուժով, թէ լսածնին իրաւ էր. բայց Հայոց եկեղեցւոյն այս նիւթոյս վրայօք ի՞նչ դաւանութիւն ունենալը Ներսէս Կլայեցիին գիրքերէն եւ Յովհան Օձնեցիին վերոյիշեալ ճառէն աղէկ կը հասկցուի, Ներսէս Կլայեցիին գիրքն ալ Քաբէլէդդի քահանայն Լատին լեզուի թարգմանած եւ տպած է ՚ի Վէնէտիկ, 1837:

ԲՐՕՂԵՊԷՐԷ բառը Լատիներէնին մէջ երկու բառէ շինուած է. մէկն է ԲՐՕ, եւ երկրորդը ՂԵՊԷՐԷ: Բրօ՝ յառաջ ըսել կըլլայ Հայերէնին մէջ: Բայց այս բառիս դէմ Հայերէնին մէջ գործուած բառն է բղխել, որուն ճիշդ Լատիներէնը եւ Իտալերէնն է «*պապա*»-«*բաբա*». եւ Հայերէնը պարզ բառ մըն է եւ կը նշանակէ առաջին աղբերէն անմիջական ծագումը. առումն չենթադրեր. անոր համար յՈրդւոյ բղխումն ըսելը Հայերէն լեզուին մէջ ծանր եւ անլուր կուգայ: Բայց ուրիշ կերպ բացատրութեամբ, յառաջ բղխեալ ըսելով Հայոց եկեղեցւոյն մէջ բարձրաձայն կը կարգացուի. ՚ի հայրաշարժ ՚ի յաղբերէն յառաջ բղխեալ: Եւ բնաւ մէկ տեղը մեր գրոց մէջ՝ բղխել բառով Որդւոյ վրայ զրուցուած չէ Հոգւոյն սրբոյ համար. թէպէտեւ այս կողմէն Հոգւոյն սրբոյ Որդւոյ հետ ունեցած յարաբերութիւնը մեր նախնի հարք ալ կը խոստովանին, ինչպէս որ Հ. Գաբրիէլ Աւետիքեան՝ Մխիթարեան վարդապետը՝ յայտնի ըրած է իր ճառին մէջ, որ Իտալերէն տպուած է Վէնէտիկ 1824 թուին:

ԲՐՕՂԵՊԷՐԷՐԷ բառը ԲՐՕՂԵՊԷ բառէն կելլէ, որ մաքրել ըսել է: Ասոր Հայերէն դնել սորված են քաւարան բառը, որ քաւել բայէն ելած է. եւ այս բայը իրեն Լատիներէն համապատասխան ունի, եփ՞թիւրէ: Հայք հանդերձեալ աշխարհքը եփ՞թիւրէն չեն ճանչնար, որ մեղուցելոյն կողմէն ալ մէկ այս շնորհիս գործակցութիւն մը կենթադրէ, լոկ կըրող վիճակ մը չը ցուցներ: Մաքրութիւն կը ճանչնաք. անոր համար ննջեցելոց վրայ ալ աղօթքներ կարդալով կըսեմք. թող զմեղս ննջեցելոյս, եւայլն:

Յ. Երբեմն այդպէս բառերու նշանակութեան վրայ վէճեր կըլլան տէյի տեղեկութիւն չունին կամ ունին Հայերէն բառերուն ճաշդ նշանակութեանը, եւայլն. ասիկայ այն լսածներուս վերաբերեալ բան պիտի ըլլայ:

Պ. Այն վէճը ուրիշ բան է. Վէնէտիկի Մխիթարեաններուն եւ Հռովմայու Բրօբականդիսներուն կը վերաբերի: Եւ յիշուի Բրօբականդիսները թէպէտ եւ Հայ են ազգաւ, բայց Հայերէն լեզուի աղէկ տեղեակ ըլլալնին մինչեւ հիմայ ցուցընելու կարող չեն եղած ոչ իրենց գիրքերովը եւ ոչ խօսքովնին: Մեր նախնեաց գիր-

քերէն տեղեկութիւն չունին. Լատին հեղինակաց գիրքերուն մէջ աստուածաբանական ուսմունքը լմնցընելնուն պէս՝ որովհետեւ Հայոց քարոզելը իերնց նպատակ կը դնեն, վիճաբանական նիւթերու ետեւէ կիյնան, եւ ասոր վերաբերեալ տեղեկութիւններն ալ Կլեմէս Կալանոս կրօնաւորին գիրքերէն կը ժողվեն որ Իտալացի մը ըլլալով՝ Հայոց ոչ ազգին բնաւորութեանը եւ ոչ լեզուին յատկութեանը եւ ոչ ալ պատմական աւանդութեանցը տեղեկ չըլլալով, ինչ որ Հայոց թշնամի Յոյն մատենագիրներուն գիրքերուն մէջ գտեր է, եւ ինչ որ քանի մը Լատին հեղինակներու մէջ կարդացեր է Հայոց համար, անոնց ամենն ալ ստոյգ կը կարծէ եւ կը վիճի անոնց հետ:

Ճօվաննի տէ Սէրբօզ մարքէզը, որ բուն Հայագրի է եւ կըրօնիւք Հռովմէական, թէ Բրօբականդիսդներուն եւ թէ բուն Հռովմայի աստուածաբաններուն Հայոց եկեղեցւոյն վրայ ունեցած ծուռ կարծիքներին շիտկելու համար երեք հատոր գիրք շինած եւ Բրօբականտային նուիրած է. եւ Վէնէտիկի հոգեւորական պաշտօնի սրբաքննութեան նախագահ Տ. Մասքէրօնիին քննութեամբը եւ Բրատուայի դրոց քննութեան դիւանին հաւանութեամբը եւ հրամանաւը տպուած է Վէնէտիկ, 1786 թուին:

Ֆ. Շատ շնորհակալ եմ որ այս նիւթերու վրայ ինձի այս տեղեկութիւնները տուիր: Աստուծով կը տեսնեմք այն օրը որ տարապարտ գայթակղութեանց պատճառները վերնալով անկեղծ եւ հաստատուն սէր եւ միաբանութիւն մը կըլլայ:

Պ. Մեր ալ ամենայն ոգևով փափաքնիս այն է:

Ֆ. Կը ցաւիմ որ աւելի երկար ժամանակ չունեցանք ընդարձակ տեսութիւն ընելու:

Պ. Կը յուսամ որ ասիկայ մեր տեսութեանը վերջին անգամը չըլլար. երբոր հրաման ընէք՝ զիս պատրաստական ծառայ կը գտնէք. եւ ինձի պատիւ ալ կը համարիմ ձեր մեծութեանը քովը գալը, բայց այս կը կրկնեմ ինչ որ առաջ ըսի. իմ հոս գալս չէ թէ իբրեւ ազգին կողմէն գալ մըն է, այլ իբրեւ առանձին մասնաւոր մարդ մը. ուստի այսպիսի բաներու վրայ եղած խնդիրները աւելի աղէկ առած պատասխաննիդ՝ ազգէն առած կը սեպուի. որովհետեւ այն ալ ազգային ժողովներուն չառաջարկած ասոր պատասխան չտար:

Ֆ. Ինձի ըսուեցաւ որ ձեր պատրիարքը դաւանութեան գիր մը պիտի խրկէ եղեր ինձի:

Պ. Չը լսեցի. եւ ճշմարիտ ալ է նէ, թէ որ ինծի հարցուի նէ հաճութիւնն չեմ տար. որովհետեւ Հայոց եկեղեցւոյն դաւանութիւնը տայ նէ՝ եկեղեցական ժողովք մը ըրած պիտի ենթադրուի: Պօղոս պատրիարքին օրովը ժողովք մը եղաւ 1820 ին, բայց անկէց ետքը ասանկ բաներու համար ժողովք եղած չէ: Այն ատենի ժողովքը կը բացատրէ որ Հայոց եկեղեցին Շնորհալուոյն ժամանակը ինչ դաւանութիւն ունէր նէ՝ հիմայ ալ նոյնը ունի: Շնորհալուոյն գիրքերը Լատիններէն թարգմանուած ըլլալով, եւ յիշեալ ժողովքէն ոչ առաջ եւ ոչ ետքը Հայոց եկեղեցւոյն ոչ դաւանութեանը եւ ոչ արարողութեանցը փոփոխութիւն մը չըլլալով, այդպիսի դաւանութիւն մը տալը առանց պատճառի ըլլալէն զատ, ժողովքով տրուած է կարծուելով, սուտ ենթադրութեան պատճառ կըլլար:

Այս խօսքէս ետքը իրարմէ հրաժարեցանք. երեք ժամու մօտ ատեն քչեց խօսակցութիւնը. եւ այս խօսակցութիւնս գրի առնուեցաւ:

1848 Մարտ 25.

Իսկ Անտօն Հասունեան պատրիարքն Հռովմէական Հայոց լուեալ զխօսակցութիւնս զայսոսիկ, խռովեցաւ յոյժ, եւ իսկ եւ իսկ գրեաց նամակս առ մեծամեծ անձինս Հռովմէական Հայոց գալ անպատճառ 'ի տուն իւր. եւ ժողովեալ զնոսա առ ինքն, պատմեաց նոցա զամենայն:

Եւ 'ի նմին գիշերի ժողովին ամենեքին 'ի տուն Ֆէս նազըրի Յովհաննու, յոր հրաւիրեալն էր եւ կարգինալն. եւ 'ի սկսանիլ խօսիլ նոցա, հարցանեն ցկարգինալն զորոշումն ժողովոյն 'ի տան վառօղապետին: Եւ նա պատմեալ նոցա զուղղափառ դաւանութիւնն Հայոց՝ ասէ ցնոսա. համոզեցայ, թէ չիք 'ի Հայս կասկած հերձուածողութեան, եւ այսպէս ունիմ վկայել եւ 'ի Հռովմ:

Յայնժամ միաբան ամենեքեան եկեղեցականք եւ աշխարհականք սկսանին մեղադրել զնա եւ ասել, դուք մօնսինեօր, միամիտ ոք էք, եւ չէք տեղեակ չարամտութեան Հայոց, որք ոչ որպէս հաւատանն, այնպէս դաւանին, զի այլազգ հաւատան եւ այլազգ դաւանին, եւ միամտութեամբ քով կործանես զտուն մեր, զոր 'ի քսան ամաց հետէ աշխատիմք շինել 'ի պարծանս գահին Հռովմայ. բողոք գրէն բառնամք առ սուրբ գահն, զորոյ անսխալութիւնն դու սխալական երեւեցուցանես յաչս հերձուածողացն

’ի նմանէ, եւ այլն: Ջայս եւ որ զորցին նման են բանք, խօսին առաջի նորա, եւ այնչափ առնեն, մինչեւ խոստանայ նոցա յետս կոչել զխոստումն իւր, զոր խոստացաւ պատրիարքին Հայոց: Եւ յետ չորից ակուրց հրաւիրեցաւ կարգինալն յԱյի Սթէֆանայ, յոր գնացեալ էր երկու ակուրք յառաջ եւ Մատթէոս պատրիարք, եւ Կարապետ ճարտարապետ, եւ Յովհաննէս Տատեան. եւ ’ի լինել ընթրեացն՝ խօսեցաւ Յարուսթին Գարեգին Տատեան զճառ ինչ գովութեան եւ եղբայրասիրութեան, ընդ որ յոյժ հաճեցաւ կարգինալն. եւ յետ ընթրեացն ’ի լինել կրկին բանախօսութեանց ’ի վերայ հաւատոյ մասանց, ասէ կարգինալն, լուայ ’ի բազմաց, զի Հայք ոչ այնպէս հաւատան, որպէս ընթեռնուն. ուստի կասկածիմ, թէ մի գուցէ անխոհեմութեամբ սխալ ինչ դատեցայց եթէ զձէնջ եւ եթէ զայլոց. վասն որոյ ոչ կարեմ վկայել զձէնջ թէ բարի եւ թէ չար:

Եւ պատրիարքն ասէ ցնա, միթէ դու Աստուած ես, զի գներքին խորհուրդ սրտից մերոց իմասցիս. ո՞չ ապաքէն ’ի բանից իւրոց արդարանայ մարդ, եւ ’ի բանից իւրոց պարտաւորի, եւ զի՞նչ առնէին սուրբ հարք ’ի հին ժամանակս, ո՞չ ապաքէն զհերետիկոսն կոչեալ յատեան, տային նմա խօսել զոր ինչ հաւատայրն, եւ ըստ այնմ դատէին զնա. միթէ զճաճուկս սրտի՞ն դատէին, եթէ զխոստովանութիւնն. դու ուստի՞ ծանեար, եթէ մեք այլազգ խօսիմք եւ այլազգ հաւատամք, կամ ոչ՝ որպէս ընթեռնումքն, այնպէս հաւատամք: Ասէ կարգինալն, այնպէս վկայեցին զձէնջ, եթէ սուտ խօսեցան, Տէր դատեսցէ զնոսա: Ասէ պատրիարքն, ահա չարախօսքն այնոքիկ՝ որք դիւաշունչ բերանով որպէս խաբեցին զքեզ, եւ դու մարդ գոլով ճշմարիտ ծանեար զգրպարտութիւնս նոցա, եւ սխալեցար, խաբեալ են եւ զպապն ձեր, զլոյսն խաւար ցուցանելով եւ զքաղրագոյնն դառն. եւ դու որպէս խաբեցար այժմիկ եւ սխալեցար, նոյնպէս խաբեալ է եւ պապն ձեր եւ սխալեալ է, եւ սխալեցի մինչեւ ’ի կատարած աշխարհի:

Ջայս ասացեալ՝ ել արտաքս եւ առանձնացաւ ’ի սենեկի միում եւ ննջեաց: Տրտմեցան յայնժամ եւ ժողովեալքն, եւ ելին արտաքս ’ի սենեկէն, եւ գնաց կարգինալն ննջել ’ի սենեկի միում, որ պատրաստեալն էր վասն նորա:

Իսկ ’ի վաղիւ անդր ընդ առաւօտն ելեալ պատրիարքն արտաքս, նստաւ ’ի կառս իւր, եւ դէպ ուղիղ գնացեալ ’ի Սամաթիա, էջ անտի ’ի Ֆէնէր թաղն Կոստանդնուպօլսոյ ’ի ծովեզերեայ



տուն Գէորգ աղայի Եղիա Չէլչպեան. եւ կոչեալ անդ զՏէր Պաղտասար աւագ քահանայն Պալատու, առաքեաց զնա 'ի պատրիարքարանն Յունաց ազդ առնել պատրիարքին, թէ պատրիարքն Հայոց եկեալ է եւ կամի տեսանել զնորին սրբազանութիւնն:

Յետ երկուց ժամուց եկն փոխանորդ պատրիարքին Յունաց երկու քահանայիւք, եւ հրաւիրեաց զՄատթէոս պատրիարք. եւ նա ելեալ անտի զնաց ընդ նմա, եւ մտեալ 'ի պատրիարքարանն, ետես ընդունելութիւն մեծ, եւ բազմեցաւ:

Յետ սովորական ողջունատութեանց սկսաւ Մատթէոս պատրիարք պատմել նմա մի առ մի զկոնդակ կարգինալին, եւ զբողոք իւր զնմանէ, եւ զժողովսն 'ի տունս վառօղապետեանց, եւ զյետս կոչումն խոստմանն, զոր խոստացեալն էր յառաջին ժողովին: Ծիծաղեցաւ պատրիարքն Յունաց եւ ասէ, առ մեզ եւս առաքեաց զկոնդակ մի տպեալ Յունարէն, ուր գրէր, թէ Յոյնք 'ի ժամանակաց անտի Փոտայ հերձեալ 'ի միութենէ կաթողիկէ եկեղեցւոյ անկեալ կան 'ի պէսպէս հերձուածս եւ յաւելորդապաշտութիւնս, եւ յորդորէր զմեզ մաքրել զեկեղեցիս մեր:

Բայց մեք գրեցաք առ նա զպատասխանին լի արժանաւոր յանդիմանութեամբ, վասն հերձուածս կոչելոյ զարեւելեան եկեղեցիս, որ է իսկ ուղղափառ եկեղեցի Քրիստոսի. եւ բացայայտ ծանուցաք նմա.

Ա. Թէ չէ ինքն եւ եկեղեցին իւր անսխալ, այլ սխալական ըստ մեզ. զի անսխալ մի միայն ընդհանուր եկեղեցին Քրիստոսի է, զոր անսխալ մի միայն ընդհանուր եկեղեցին Քրիստոսի է, զոր կոչեմք Տիեզերական սուրբ ժողով:

Բ. Թէ չէ ինքն գերագոյն դատաւոր 'ի մէջ եկեղեցւոյ, կամ գլուխ պատրիարքաց, այլ հաւասար նոցա, միայն թէ առաջինն է 'ի հաւասարս:

Գ. Եօթն տիեզերական ժողովք հաշուեալք յառաջին ժողովոյն Նիկոյ՝ ընդունելիք են մեզ, եւ բայց 'ի նոցունց ամենայն ժողովք նոցին՝ որպիսիք են Լատերանու, Փլորենտիոյ, եւ Տրիտենդինոյ, եւայլն, անընդունելիք են մեզ:

Դ. Պարտին զեկեղեցի իւրեանց մաքրել յամենայն յետամուտ կարգաց, 'ի նորաձայն վարդապետութեանց, յանտեղի սահմանադրութեանց, 'ի փառասիրութեանց, եւ 'ի հերձուածոց, եւ ապա 'ի միութիւն յորդորել զայլս, եւայլն:

Ահա այս է իմաստ գրութեան մերոյ, զոր գրեցաք ՚ի պատասխանի մոլորական տետրակի նորին համաձայն ստորագրութեամբ սուրբ սիւնհոգոսիս մերոյ:

Եւ ՚ի յաջորդ ակուրն ՚ի շնորհս Մատթէոս պատրիարքին, գրեաց պատրիարքն Յունաց գանգատ ՚ի Բ. Դուռն, յասելն, ”Եթէ դեսպան է սա, ընդ Բ. Դրան ունի յարաբերութիւն, մեզ չէ փոյթ. իսկ եթէ չէ դեսպան, զի՞ է հապա, զի խռովութիւն արկանէ ՚ի ժողովուրդս մեր, եւ յորդորէ հնազանդիլ պապին Հռովմայ”:

Եւ Բ. Դուռն ՚ի ձեռն դեսպանին Գաղղիոյ ծանոյց գրողոք եւ զգանգատ պատրիարքին Յունաց՝ վասն կարգինալին Հռովմայ, զոր լուեալ նորին՝ հրամայեաց պատրաստել զչոգենաւն, եւ տուեալ նախարարաց զհրաժարական ողջոյն իւր, վերադարձաւ ՚ի Հռովմ:

## ԳԼՈՒԽ ԿԲ.

Յաղագս Համազգեաց ընկերութեան:

(1848) Ի սմին ամի ազգասէր եւ ուսումնասէր անձինք 'ի Հռովմէական Հայոց՝ յորոց բազումք աշակերտեալք էին 'ի Մուրատեան եւ 'ի Ռափայէլեան վարժարանսն եւ 'ի վանսն Վէնետկոյ եւ Վէննայու, եւ Համամիտ եւ Համակամ խորհրդով եւ հաւանութեամբ կամեցան հաստատել զընկերութիւն իմն ընդ Լուսաւորչեան Հայոց:

Նպատակ ընկերութեանն էր ազգասիրութիւն եւ ուսումնասիրութիւն եւ յառաջադիմութիւն 'ի բարոյական մասին, եւ բացէ 'ի բաց հերքումն տարապարտ վիճից եւ բանակոռութեանց վասն հաւատոյ խնդրոց, յորս արդէն միաբան են երկոքին կողմանք յէական մասունս հաւատալեաց, եւ տարբերին միայն 'ի վարդապետական բացատրութիւնսն դժուարիմաց բառից, որպիսիք են բառքս, բնութիւն, անձն, բղխումն, եւ քաւարան կամ կայան:

Իւրաքանչիւր ընկեր պարտ էր տասն դահեկան ամսական տրօք նպաստել ընկերութեանն առ 'ի հայթայթել զմեծ գումար դրամոց՝ բաւական լինել դպրոցական ծախուց: Եւ մինչ յառաջացին իղձք եւ աշխատութիւնք ընկերութեանն, տեսանելով օրքան զօր զանդամս յաւելեալ եւ բազմացեալ եւ հասեալ 'ի նպատակն, ունելով պատրաստ 'ի ձեռին զգումար դրամոց, գնեսցեն նովաւ եկամուտս, կամ շահեցուցեն տոկոսեօք, եւ բացցեն նոքօք դպրոցս 'ի հայաբնակ քաղաքս Ասիոյ, յորս ոչ գոյ դպրոց, ոչ ընթերցանութիւն եւ ոչ ուսումն գանազան արուեստից, վարժեսցեն եւ հրահանգեսցեն զնոսա 'ի կարեւոր ուսմունս հայկաբանութեան, թուաբանութեան, եւ աշխարհագրութեան, եւ երկրագործութեան, եւ զամենայն փոյթ 'ի մէջ առեալ, զխաւար տգիտութեան հալածական արարեալ, զյոյս գիտութեան առ համազգայինս տարածեսցեն 'ի փառս Աստուծոյ եւ 'ի պարծանս Հայկազեան ազգիս:

Զկանոնս ընկերութեանն խմբագրեաց Հ. Պետրոս վարդապետ միաբան Վէնէտկեան վանից, եւ զանուն նորա կոչեաց Համազգեաց Ընկերութիւն. եւ սկսան ազգասէր երիտասարդքս այսոքիկ իւրեանց եռանդուն եւ աշխոյժ բնաւորութեամբն քարոզել մի-

մեանց զազգասիրութիւն, ջանալ օր 'ի յօր աճեցուցանել զընկերութիւնն, եւ միաբանասէր ոգւով ընդգրկել զիրեարս: Եւ այսպէս 'ի սակաւ ինչ միջոցի բացաւ ընդարձակեցաւ ընկերութիւնն:

Լուեալ զայս ամենայն Հասուն վարդապետ, եւ իւրով բնական հեռատեսութեամբն նշմարեալ զապագայ նուաստութիւն միապետական ինքնիշխանութեան իւրոյ, 'ի խորհուրդ կոչեաց զհամախոհս իւր եւ զարբանեակս, եւ յօտն եկաց քայքայել ըզնորոգ սկսեալ ընկերութիւնն. ցրուել զանդամս նորա համոզելով եւ յորդորելով, թէ այս ջան եւ վաստակ ձեր ընդդէմ է Հռովմէական սուրբ եկեղեցւոյ, որ արգելու իսպառ յարիլ եւ միաբանիլ ընդ հերետիկոս, եւ հաղորդակցիլ ընդ նոսա հոգեւոր սիրով. ուստի ոչ կարեմք տալ ձեզ արձակումն եւ հաղորդութիւն, մինչեւ ոչ զղջասլիք եւ յետս կացլիք յայդոցիկ ընկերութենէն, որ ոչ միայն հոգւոց եւ մարմնոց ձերոց է վնաս մեծ, այլնաեւ անարգութիւն եւ նախատինք է ձեզ առաջի գահին Հռովմայ:

Եւ այսոքիւք քարոզութեամբք սերմանեցին յամենայն տունս որոմն եւ ատելութիւն, կագ եւ կռիւ. հակառակութիւն 'ի մէջ հօր եւ որդւոյ, եղբօր ընդ քեռ, եւ որ այլ եւս են չարիք:

Գրեաց Հասուն վարդապետ գանգատ իմն զսոցանէ 'ի Հռովմ, որպէս ինքն կամեցաւ. գրեցին եւ սոքա բողոք եւ գիր աղերսանաց յայտ առնելով զանմեզ նպատակ եւ զկանոնադրութիւնս ընկերութեան իւրեանց, եւ զհակառակութիւն Հասուն վարդապետին՝ որ ջանայ 'ի կոր կործանել զնորահաստատ ընկերութիւն իւրեանց: Եւ Հռովմ զգատ սոցա յանձն արար 'ի Վինչէնցիոս Ֆէրիէրի կարտինալ իւր, որ էր յայնժամ 'ի Կոստանդնուպօլիս, յատուկ գրով, յորում էր ստորագրութիւն Տարածման հաւատոյ կոչեցեալ ժողովոյն նախագահ Յ. Փ. Ֆրանսօնի կարդինալին, եւ Ա. Պառնապօ ատենադպրին:

Տարածման հաւատոյ սուրբ ժողովքին գերաստիճան ու գերապատիւ կարդինալ նախագահին 28 մայիս 1850 Կոստանդնուպօլսոյ Հայոց նախագահ եպիսկոպոսապետին Հասունեան գերապայծառ Անտոն վարդապետին խրկած թղթոյն թարգմանութիւնը:

Վերջի երեք տարուան ընթացքին մէջ թէ սրբազան պապը ու թէ սուրբ ժողովքը Համազգեաց անունով Պօլիս կանգնուած, ու ուրիշ տեղեր ալ ուղղափառ Հայոց մէջ քանի մը փոփոխութենով վերերեւցած ընկերութեան վրայօք զանազան ծանօթութիւններ

առին. աս ծանօթութեանց վախճանը նոյն ընկերութեան վրայ հրահանգներ առնել էր: Հրամանքնիդ արթուն հովուի մը պաշտօնը կատարելով՝ ձեզի յանձնուած հաւատացելոց առաջուց ծանուցիք այդպիսի ընկերութեան մը մօտակայ վտանգները, ոչ ալ զանց ըրիք իմացընելու միանգամայն սուրբ ժողովքին ու սա գործքիս մէջ ձեր բռնած ճամբան ու ձեր յայտնած կարծիքը անոր առջեւ դնելով՝ անոր դատումը խնդրեցիք: Միանգամայն ընկերութեան գլխաւոր պաշտօնատարներէն քանի մը անգամք անգամէն աւելի սրբազան հօրը դիմեցին ու իրենց կանոններուն օրինակը խոնարհութեամբ անոր ներկայացընելով վէճը եղած ընկերութեան վրայ օրհնութիւնը խնդրեցին:

Աս զանազան առնուած տեղեկութեանց կատարածը կրնար ծանրապէս խուճապել սուրբ ժողովքը Հայոց ազգին հոգեւոր նախագգուշութիւններ գործքի դրուեցան՝ որոնց վախճանը աւելի բուն իրաց վրայօք լիով ու ճիշտ ծանօթութիւններ առնել էր: Աս պաշտօնը մասնաւորապէս յանձնուեցաւ Սիդենոյ արքեպիսկոպոսին գերապայծառ Վինչենցիոս Ֆէրրիէրիին՝ որն որ սրբազան պապէն խրկուած էր բիր դեսպան վեհանձն ինքնակալ Սուլթանին ու նոյն առթիւ ալ առաքելական այցելուի պատուաւոր պաշտօնը իրեն յանձնուած էր: Աս բաներուս վրայ եկան ողբալի դիպուածները՝ որով կրօնքի թշնամիները սկսան յարձակիլ անոր վրայ բուն իր կեդրոնին մէջ, ուր գերագոյն գահն է. կարելի ալ չէր ասանկ դժուար պարագաներու մէջ աս գործքիս պարապիլ այնու ծանրութեամբ՝ զոր նոյն ինքը գործքը կը պահանջէր: Փոթորիկը դադրելէն ետեւ՝ սուրբ ժողովքը իր ընդմիջեալ ընդհանրական ժողովքները նորէն սկսելու կարող ըլլալուն պէս, իմ գերաստիճան պաշտօնակիցներս պէտք եղած մտադրութիւնը ըրին աս գործքիս վերաբերեալ ամեն տեղեկութեանց վրայ, ու սրբազան հայրերնիս ալ սուրբ ժողովքին դատմունքը հաստատած ըլլալով՝ կը փութամ ձեզի զանի հաղորդելու:

Սուրբ ժողովքը Համագգեաց ընկերութեան վերաբերեալ բաները ու մասնաւորապէս իրեն կանոնները, ու որչափ ալ անոր փոփոխութիւններ մտցընել ուզուեր է նէ ալ, այսու ամենայնիւ իրեն մէջ օրէ օր աւելի յայտնուած հոգին ճիշտ քննութեամբ մտածելով պարտք դատեցաւ իրեն՝ ձեր արդէն յայտնած դատմունքին յարմարիլը ու աս առաջիկայ թղթովս վերոյիշեալ ընկերութեան վրայ իր տհաճութիւնը ցըցընելը, մասնաւորապէս

վտանգներուն պատճառաւ՝ ու ուղղափառ Հայոց հոգեւոր աղէկութիւնը կրնան հոնկէց առաջ գալ: Ու յիշուի աս ընկերութիւնը անանկ անորոշ անսահման նպատակ մը կը ցըցընէ, որ անզգոյշները քիչ ու առանց իմանալու իրենց խղճմտանքին դատապարտած գործքերու ալ կրնան դիւրաւ ձգուիլ, աս բանս աւելի դիւրութեամբ կրնայ հանդիպիլ, որովհետեւ իր կառավարութեան մէջ աս բանս արգելելու բաւական ապահովութիւններ չիկան:

Ուրիշ ծանր վտանգ մ'ալ կերելի որ չըլլայ թէ աս ընկերութիւնը մինչուկ հիմայ Աստուծոյ ողորմութեամբը Հայոց ազգին մէջ պահուած ան հաստատուն բարեպաշտութեան ու քրիստոնէական կրթութեան կորսուելուն ու զանի մոլորեցընող սկզբունքներ մտնալու միջոց ըլլայ: Որովհետեւ հաւատքը Աստուծոյ ծանրագին պարգեւն է, պէտք է զանի նախանձով պահել ու հեռուանց ալ անոր մաքրութիւնը մթնցընող ու վնասող ամեն պատճառները մէկդի ընելու է: Ու թէպէտեւ 1848ին քանի մը թեթեւ փոփոխութեանց վրայ ճառուեր է, բայց նոյն բնաւորութիւնը՝ ու նոյն հոգին մնալուն համար ընկերութեան մէջ՝ նոյն հիմնական վտանգն ալ կը մնայ կոր, որ չըլլայ թէ անոր պատճառաւ ուղղափառ կրօնի եղած սերտ սէրը երթալով տկարանայ, մանաւանդ որ դեռ ամեն իշխանութենէ ազատ ըլլալու կը ջանացուի, ու ասանկ ճամբայ կը բացուի վերջապէս բանւորականաց աղանդին հասնելու՝ որ ազգային բարութեան ու յառաջադիմութեան պատրուակներովը՝ կրօնքը կը փճացընէ: Չէ թէ եկեղեցին դէմ կը կենայ ճշմարիտ բարութեան ու յառաջադիմութեան, որ ինչպէս յայտնի է կրօնքի ուղիղ սկզբունքներուն հետ միշտ կից կերթայ, նա մանաւանդ որ՝ ինչպէս քաջայայտ է, եկեղեցին աս պայմանաւ միշտ ու ամեն տեղ անիկայ առաջ տարած է: Բայց ուրիշ այսչափ ազգերուն ողբալի դիպուածները յայտնապէս կը ցըցընեն թէ ինչպէս աս անուններս չարաչար կը գործածուին, ուսկից ալ շատ գէշ հետեւութիւններ առաջ կուգան: Աս տարիներուս փորձն ալ կը հաստատէ՝ թէ ո՞րչափ իրաւամբ կը վախցուի՝ որ ան վերոյիշեալ անկարգութիւնները, Հայոց ուղղափառ ազգին մէջն ալ հանդիպին, որոնք ալ աւելի ողբալի կրնան ըլլալ, թէ որ ժամանակին յառաջատութեամբը իրօք կատարուին նէ: Ընկերութենէ ծագած բաները հրապարակապէս ծանօթ են ազգին, ու բոլոր բարի անձինք՝ որ բարեբախտութեամբ ազգին մեծագոյն մասն են, անոնց վրայ կուլան, աս պատճառներուս համար ով որ

սրտին մէջ կրօնի ուղիղ սկզբանց փոյթն ու հոգը ունի, ապագային վրայ աղետալի նախագուշակութիւններ ընելու կը ստիպուի:

Ուստի սուրբ ժողովքը յիշուած ընկերութեան որ եւ իցէ եղանակաւ կողմ բռնելը ու անոր ուղղակի կամ անուղղակի օգնելը թէ աշխարհական թէ կրօնաւոր կղերին բացարձակ արգելելէն ՚ի վատ, ձեզ ալ կը փութացուցանէ որպէս զի ձեր խնամոցը յանձնուած հաւատացելոց այդպիսի ընկերութենէ ետ քաշուելնուն պարապիք, ու ատ ալ ամեն փութով գործ դնելնուն բնաւ չերկբայիր, որովհետեւ համոզուած էր որ մեծ մասը միամտութեամբ գրուած է անոր, ու առանց կարող ըլալու առաջուց աղէկ մը իմանալու թէ ի՞նչ հետեւութիւններ ու պտուղներ կրնան անկից ծագիլ: Կը վստահի մանաւանդ թէ Կոստանդնուպօլսոյ Հայոց ազգը ապագային համար իրեն կանոն ու օրինակ բռնելով քիչ տարիներէ առաջ իրեն գլուխը եկած դիպուածները չի մոռնար, իրենց մէջ աւելի տարւոք եղողները աղէկ կը յիշեն ան ամեն բաները, որով կը սորվին զգոյշ կենալ ուր եւ իցէ ծածկուած վտանգներէն՝ որ կրնան զիրենք մոլորեցընել ուղղափառութեան միութենէ՝ որուն մէջ մինչեւ հիմայ՝ հաստատուն մնալուն համար թէպէտ ոչ զըրկանաց՝ ու ոչ այնչափ նեղութեանց խնայեցին, որն որ իրենց ազգին օգուտն ու փառքը եղաւ: Յիշելով ուրեմն որ թէպէտ եւ կրթութիւնը ըստ ինքեան մեզ Աստուծոյ կառաջնորդէ ու մեզ կրօնի մէջ կը հաստատէ, բայց շատ անգամ ալ գէշի գործածուելով գլխովին ուրիշ վախճան կուեննայ, անշուշտ իրենց պարտքը մը պիտի սեպեն զանիկա ստանալու, ուր որ Աստուծմէ իրենց հոգեւոր բարութիւն կարգած անձինք՝ անոր ուղղափառ կողմանէ ողջամիտ ու մոլորութեան ամեն վտանգէն ազատ ըլլալը յայտնի ընեն: Ուստի սուրբ ժողովքն ալ հրամանոցը ուղիղ ու ճշմարիտ կրթութիւնը ժողովուրդի մէջ առաջ տանելու յայտնած ջանքը թէպէտեւ գովելու պարտական է, բայց միանգաման պատշաճ ալ կը դատի ձեզ փութացուցանելու, որպէս զի յարատեւէք ոչ միայն հովուի մը պարտք եղած հսկողութիւնը պահելու, այլ յաւէտ անիկայ տարածելու յարմար միջոցները շատցընելու, եւ բնաւ տարակոյս չկայ՝ որ հրամանոցը հպատակ եղող երկաքանչիւր գղերին ալ եկեղեցականները ամեն ջանքով ձեզի հետ աս նպատակին գործակից ըլլան: Աս ճամբով անզգոյշները խաբելու համար ու անմաքուր աղբիւրներէ թունաւոր վարդապետութիւնները ծծելու զանոնք առաջնորդելու համար՝ Հայոց ազ-

գին հոգեւոր աղէկութեանը դէմ գինողներուն ամենեւին պատճառանք չմնար: Վերջապէս ձեր հօտին իմացընելու չըլլայ թէ զանց ընէք, որ թէպէտ աւետարանական օրէնքը մեզ պիտի շարժէ ամենուն սէր ցըցընելու, ու թէ առ Աստուած աղօթքով թէ առաքինի վարուց օրինակաւ ու թէ պատշաճ յորդորանքներով ճամբէ ելած եղբարներնուս ուղղափառ կրօնի հետ միաբանութիւնը դիւրինցընելու. այսու ամենայնիւ զգոյշ կենալու է ան անձերէն, որ բոլորովին ուրիշ միտքի ծառայելով, ան մասերուն վրայօք պայմանադրութեանց գիշանել կը պահանջեն, որոնց վրայ եկեղեցին իրաւամբ միշտ անդրդուելի կեցաւ, որովհետեւ ճշմարտութեան ու ստույգութեան մէջ միաբանութիւն չկրնար ըլլալ:

Մինչեւ հիմայ յայտնուած միտքն են եւ սրբազան հօրերնուս միտքն, որովհետեւ ինչպէս 'ի սկզբան ալ ձեզի ծանուցի, սրբազան պապը սուրբ ժողովքին ան յայտնած դատումը լիով հաստատել հաճեցաւ:

Կաղաչեմ զԱստուած որ, եւայլն:

Յ. Փ. Կարգինալ Սոսնոնի նախագահ

Ա. Պատնայօ ասէնապոստոլ

Գլխաւորք միաբանասէր կողման տեսեալ եւ լուեալ զայս ամենայն, առաւել եւս բորբոքեցան հրով ազգասիրութեան, եւ գուն գործեցին յաղթանակ կանգնել ընդդէմ Հասունեանց գտուն մի մեծ 'ի Բերա, զոր նորոգ շինեցին արդեամբք ընկերութեանն, եւ կոչեցին "Խորհրդարան Համազգեաց Ընկերութեան". եւ օրքան զօր յաւելոյր թիւ անդամոց նորին. եւ բազումք 'ի լուսաւորչածին Հայոց յաւելան յարձանագրութիւնս ընկերութեանն:

Լուեալ զայսոսիկ Հասուն վարդապետ, խորհրդով համախորհից իւրոց ամբաստան եղեւ զսոցանէ առ Բ. Դուռն. զօր իմացեալ միաբանասէր կողման ետուն գիր աղերսանաց առ արքայ՝ յայտ արարեալ 'ի նմին, եթէ Տէր արքայ՝ ըստ բարձր հրամանի եւ կամաց ձերոց՝ զոր ետուք արքունի հրովարտակաւ առ ամենայն ազգս հպատակեալս մեծազօր տէրութեան ձերում, փոյթ յանձին առաք կազմել զընկերութիւն իմն մեք ազգակից եղբարքս, եւ դիտումն եւ ջանք մեր են ծաղկեցուցանել զուսումն եւ զգիտութիւն 'ի մերազնեայս 'ի գաւառս Անաօլուի շնորհիւ կայսերական ակնարկութեան ձերոյ. բայց այժմ ազգապետ մեր Հասուն վարդա-



պետ հակառակ ջանից եւ դիտաւորութեան մերոյ կամի ցրուել եւ կործանել զընկերութիւն մեր, եւ ոչ թոյլ տայ մեզ յառաջ վարել զփափաք ուսումնասիրութեան մերոյ:

Ընթերցեալ արքայի զաղերսագիրն, հրամայեաց, զի հաստատեսցի ազգային ժողովն ՚ի Պատրիարքարանի հռովմէական Հայոց, եւ մի ոք խափան եւ արգել լիցի Համազգեաց ընկերութեան, եւ զկարեւոր հանգամանս հաստատութեան սոցին յանձն արար ՚ի Բ. Դուռն հոգալ եւ տնօրինել զամենայն, որ ինչ կարեւոր եւ արժանն էր:

Եւ Բ. Դուռն հրաւիրեաց զհնգեսին երեւելի անդամս ընկերութեանն Համազգեաց, եւ զհինգ կուսակիցս Հասունեանց, ընդ որս եւ զնախագահ նոցին զՀասուն վարդապետ ՚ի Բ. Դուռն, եւ յետ բազում բանակոութեանց եւ խօսակցութեանց պատշաճ դատեցաւ առաքել զերեւելի պաշտօնատար ոմն ՚ի կողմանէ Բ. Դրան յեպիսկոպոսարանն նոցին, առնել անդ ժողով յերկուց կողմանց, եւ ՚ի ժողովին յայնմիկ քննել զկանոնս Համազգեաց ընկերութեան, եւ եթէ փոփոխութեան եւ սրբազրութեան կարեւորութիւն ինչ պատշաճ դատիցի, համաձայնութեամբ որոշեսցի:

Եւ հրամանաւ Բ. Դրան առաքեցան առաջին թարգման էմին էֆէնտի, եւ թահրիրաթ միւտիրի Սայիտ էֆէնտի յեպիսկոպոսարանն նոցին առնել ազգային ժողով եւ քննել ըզմիտս եւ զբաղձանս երկուց կողմանցն, զվայելուչսն տնօրինել եւ զանվայելսն բառնալ. եւ եթէ հնար իցէ, հաշտեցուցանել զնոսս ընդ եպիսկոպոսին իւրեանց:

Եղեւ ժողովն ՚ի 28 յունիսի 1848, եւ Հասուն վարդապետ ընթերցաւ զպահանջմունս իւր, յորում փոփոխեալ էին կանոնադրութիւնք ընկերութեանն, որոց գլխաւորն էր այս, զի լուսաւորչածին Հայք ելցեն յընկերութենէն, եւ մի ընդունելի լիցին յայսմհետէ իբրեւ անդամ ընկերութեան:

Այսմ հակառակ կացին միաբանասէրքն եւ վիճեցան յոյժ, բայց վասն զի դատաւորն եկեալ ՚ի Բ. Դրանէ որոշեաց վրձուբար յասելն, թէ որովհետեւ սա գլուխ ձեր է հաստատեալ արքունի հրովարտակաւ, եւ սմա յանձնեալ է տէրութիւնն կառավարել զձեզ ըստ իւրումն խոհականութեան եւ ըստ քաղաքական օրինաց, պարտաւորութիւն ձեր է հնազանդիլ հրամանաց եւ կարգադրութեանց սորա, եւ որ սմա ոչ հնազանդի, այնպիսին եւ արքայի իսկ է անհնազանդ:

*Զայս լուեալ նոցա եւ ելեալ արտաքս, յոգի խոցեցան. եւ թէպէտ չեղեն հնազանդ հրամանաց նորա, բայց ցրտացան 'ի ջերմեռանդ սիրոյ եւ վաստակոց իւրեանց, եւ ցրուեցաւ ընկերութիւնն առաւելապէս, որ գերապանծ հանդիսանայր օր ըստ օրէ, եւ մեծամեծ օգուտս ունէր ցուցանել Արամեանս ազին շնորհիւն Աստուծոյ:*

*Գլխաւոր միաբանասէրք ընկերութեանն էին իննեքին սոքա, զորս ոչ կամելով անյիշատակ թողուլ յապայս ժամանակի, 'ի ճահ գատեցայ նշանակել աստանօր յականէ յանուանէ, որք էին Մկրտիչ Սամանճեան, Յակոբ Տավութեան, Ա. Լութֆեան, Խաչատուր Գազազեան, Յովսէփ Վարդանեան, Կարապետ Թիւլպէնտճեան, Սարգիս Ասկէրեան, եւ Սերովբէ Ազնաւուրեան:*

## ԳԼՈՒԽ ԿԳ.

Յաղագս հրաժարելոյ Մատթէոսի 'ի պատրիարքութենէն, եւ կրկին անգամ պատրիարքութեան Յակովբայ արքեպիսկոպոսի:

(1848) ԱՄԻՐԱՅՔ՝ որք սովոր էին 'ի վաղ ժամանակաց հետէ անտի փոխել զպատրիարքս եւ զառաջնորդս երեւելի գաւառաց, քանիցս անգամ կամեցան ընկենուլ զՄատթէոս պատրիարք, այլ ոչ յաջողեցան. զի ամենեքին չլինէին միաբան 'ի մի սիրտ եւ 'ի մի խորհուրդ. ոմն կամէր եւ միւսն ոչ կամէր. եւ ոչ կարէին զկիրս իւրեանց յառաջ տանել, զի անհամաձայնք գտանէին իրերաց:

Եւ նախ շանիկ ամիրայ թշնամացաւ պատրիարքին. զի քոյր շանիկ ամիրային մեռաւ, եւ պատրիարքն որ հրաւիրեցաւն 'ի հանդէս յուղարկաւորութեան ննջեցելոյն, ոչ գնաց պատճառելով զտկարութիւն անձինն:

Ի նոյն աւուրսն եւ Միսաք ամիրայ կամեցաւ զերկերիւր կանգուն գետին սուրբ Երրորդութեան եկեղեցւոյն Բերայի որ հայէր 'ի մեծ պողոտայն, գնոց առնուլ փոխանակ պահանջանաց իւրոց, զոր արարեալ էր 'ի ծախս շինութեան Գայիանեանց դպրոցին եւ արհեստարանին օրիորդաց եւ մշտահոս աղբերն 'ի նոյն թաղին:

Այսմ զդէմ կալաւ Մատթէոս պատրիարք, եւ ոչ թոյլ ետ նմա. եւ Միսաք 'ի ձեռն Պէրպէրեան Յակոբ վարդապետին՝ որ քարոզիչն էր եկեղեցւոյն, առաքեաց ընծայ առ պատրիարքն զպատուական մուշտակ իմն յովազենի, որ արժէր աւելի քան զհինգ հազար դահեկանս, աղաչելով եւ խնդրելով, զի թոյլ տացէ նմա գրաւել զգետինն: Բայց Մատթէոս պատրիարք ոչ զաղաչանսն ընկալաւ եւ ոչ յերեսս ընծայիցն նայեցաւ. նաեւ կոչեալ զտէր Զաքարիա աւագ քահանայ եկեղեցւոյն՝ պատմեաց նմա զկամս Միսաքայ եւ զընդդիմութիւն իւր առ նա. եւ նորա գնացեալ 'ի Բերա, ծանոյց ժողովրդեանն, եւ ըստ խորհրդոյ պատրիարքին գրեալ զբողոք իմն ստորագրութեամբ բազմաց, խնդրեցին 'ի պատրիարքէն փոխել զվերատեսուչ եկեղեցւոյն զՄիսաք, եւ զայլ ոք 'ի բարեպաշտ կոչեալ զվառօդապետ Պօղոս ամիրայն, աղաչեաց ըզ նա եւ համոզեաց, եւ հաճեցոյց յանձն առնուլ զվերատեսչութիւն եկեղեցւոյն:

Չայս լուեալ Միսաք, զայրացաւ անհնարին բարկութեամբ, եւ չուեաց 'ի Բերայէ յեջնիգիւղ. եւ գիտելով զթրշնամութիւնն՝

զոր ունէր ձանիկ առ պատրիարքն, եկեալ յարեցաւ 'ի նա. եւ գտեալ իւր համախոհս յամիրայից եւ յարհեստաւորաց, արարին ժողով 'ի Խումրի խան 'ի սենեակն Կէլկէլեանց, եւ պէս պէս սնուտի բարուրանս եւ զրպարտութիւնս ստայօդեալ, որոշեցին զփոփոխութիւն պատրիարքին. եւ ընտրեցին 'ի կողմանէ ժողովոյն պատգամաւոր զԳէորգ Փափազեան եւ զՅովհաննէս Նազըճեան 'ի սեղանաւորաց՝ երթալ առ պատրիարքն, եւ խնդրել զհրաժարական նորին 'ի դիմաց ազգին:

Եկին նոքա առ պատրիարքն, եւ խոնարհաբար յայտ արարին զկամս ժողովոյն, եւ խնդրեցին զհրաժարականն: Եւ պատրիարքն ընկալեալ զնոսա սիրով, մեծարեաց եւ օրհնեաց, եւ յետ բազում բանից կնքեաց զխօսս իւր առ այս, "Թէ ես ուխտիւք խնդրէի եւ խնդրեմ հրաժարիլ 'ի պաշտօնէ աստի, բայց ոչ այսու անարգական եղանակաւ. զայս պատասխանի տարէք, առ որս առաքեցինն զձեզ":

Եւ 'ի հետեւեալ աւուրն 'ի սկիզբն ապրիլի դարձեալ ժողովեցան ամիրայք, եւ առաքեցին պատգամաւոր զՅովհաննէս ամիրայ ճարտարապետ եւ զՊօղոս Աշնանեան, ընդ որս եւ յարհեստաւորաց զսահաթճի Յովհաննէս Սուրէնեան, եւ զոսկերիչ Մելքիսեդ, զԹիւլպէնտճի մահտեսի Պօղոս եւ զՅովսէփ Ալեանաքեան, զմինթանճի Աստուածատուր եւ զըլլըճցի Սարգիս, որոց եկեալ միանգամայն իբրեւ պատգամաւորս 'ի կողմանէ բոլոր ազգին եւ ոչ սոսկ ամիրայից, խնդրեցին զհրաժարական նորին:

Իսկ պատրիարքն զոր ինչ խօսեցաւ յառաջնում աւուր, զնոյն ասաց եւ առ նոսա եւ արձակեաց զնոսա, որք գնացեալք 'ի ժողովն, ասեն, թէ նա բնաւ երբէք չկամի տալ զհրաժարական իւր:

Յայնժամ ձանիկ եւ Միսաք առաջարկեն ժողովոյն առնել մահասարական գրութիւն 'ի դիմաց բոլոր ազգին եւ ստորագրել, թէ ոչ կամի համօրէն ազգն զպատրիարքն, եւ խնդրէ 'ի տէրութենէն, զի փոխեսցէ զնա:

Յոտն եկաց Պետրոս Քիւրքճիխանլեան, պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, եթէ հարցանիցէ տէրութիւնն, թէ վասն որո՞յ յանցանաց փոխել կամիք, եւ զի՞նչ մեղս գործեալ իցէ առ տէրութիւնն եւ առ ազգն, զի՞նչ պատասխանի ունիմք տալ, եւ թէ քանի՞ խռովութիւն ծագիլ յայնժամ յազգի մերում. վասն որոյ ես ոչ կարեմ ստորագրել զայդ գիր:

Եթէ քաղցրութեամբ խնդրեցիք զհրաժարականն, եւ ոչ ետ, բռնութեամբ ոչ կարէք առնուլ. եւ յայսչափ ժամանակաց հետէ այս օրէնք են, զի քաղցրութեամբ խնդրի հրաժարականն եւ ոչ բռնութեամբ:

Այսմ համաձայնին եւ Մագսուտ Սարիմեան, Միքայէլ Բիշմիշեան, Մկրտիչ Ճէզայիրլեան, Յարութիւն Երկանեան, եւ այլք: Ասեն եւս, թէ ու՞ր են վառօդապետքն երկոքին. ու՞ր է ճարտարապետ Կարապետ ամիրայն. ո՞չ ապաքէն նոցա եւս անկ է գտանիլ ՚ի ժողովիս, զի ըստ օրինի վճարեսցի ամենայն բան. եւ զայս ասացեալ ելանեն եւ երթան, եւ ցրուի ժողովն:

Անցին ամիսք հինգ, եւ պատահեաց դէպք ինչ այսպիսի:

Ազգասէր եւ բարեպաշտ Պօղոս աղա Պետրոսեան Օտեան՝ գրագիր շինուածոց արքունի պալատին՝ առեալ ընդ իւր գտէր Յովհաննէս աւագ քահանայ սուրբ Խաչ եկեղեցւոյն Իւսքիւտարու, որ էր իւր խոստովանահայր, զայ առ պատրիարքն, եւ յետ սովորական ողջունատութեանց խնդրէ փակել ըզ դուռն սենեկին, եւ պատուիրէ, զի մի ոք մտցէ ՚ի ներքս:

Եւ հանեալ ՚ի ծոցոյ իւրմէ գլխուն հազար դահեկան, դնէ դնէ առաջի պատրիարքին, եւ խնդրէ, զի կոչեալ զԱրզուման աղա զվերատեսուչ սուրբ Ոսկեբերան եկեղեցւոյն Գարակէօմրիւկի՝ տացէ նմա եւ ասասցէ, թէ բարեպաշտօն ոմն զայս յիսուն հազար դահեկանսն ետ ողորմութիւն եկեղեցւոյն, որում դու վերատեսուչդ ես, բայց այսու պայմանաւ, զի գտուոսիս սորին հինգ դահեկան առ մէն մի քսակ հաշուով՝ որ առնէ հինգ հարիւր դահեկան, տացես ամսոյ յամիս ՚ի պէտս դպրոցի եկեղեցւոյն: Բայց աղաչեմ ասէ, զի այս իբրեւ խոստովանութիւն եղիցի առաջի ձեր, եւ մի ոք գիտասցէ, թէ ես տուեալ եմ զայս ողորմութիւն. միայն դու գիտասջիր, եւ այս խոստովանահայր իմ, եւ արձանագրեսցի ՚ի յիշատակարան եկեղեցւոյն ընդ անուամբ բարեպաշտօն անձին միոյ եւ եթ:

Ընկալեալ պատրիարքին գլխեալ դահեկանսն դնէ յարկեղ իւր, եւ օրհնէ զնա ըստ բարեպաշտութեան նորին. եւ ՚ի յաջորդ աւուր կոչէ զԱրզուման աղայն առ ինքն, որ վասն տկարութեան անձինն ոչ կարելով երթալ, առաքէ զՄիքայէլ գորդի իւր. եւ Մատթէոս պատրիարք յանձն արարեալ նմա գլխուն հազար դահեկանսն, տայ նմա գրել եւ նշանակել, թէ բարեպաշտօն ոմն ետ զայս ողորմութիւն սուրբ Ոսկեբերան եկեղեցւոյն՝ այսու դաշամբ,

զի զտոկոսիս սորին հինգ հարիւր դահեկան ամսական պարտիք տալ 'ի պէտս դպրոցի եկեղեցոյն՝ այսու դաշամբ, զի զտոկոսիս սորին հինգ հարիւր դահեկան ամսական պարտիք տալ 'ի պէտս դպրոցի եկեղեցոյն. եւ նորա առեալ երթայ, եւ նշանակէ այնպէս յարձանագիրս եկեղեցոյն: Զայս լուեալ ձէզայիրլեանն, հետաքրքիր լինի հարցանել, թէ ո՞չ այրն այն, որ գլխուն հազար դահեկանս տայ ողորմութիւն միոյ եկեղեցոյ:

Հարցանէ ձէզայիրլեանն ցպատրիարքն. եւ նա ասէ, այդ խոստովանութիւն է, եւ ես ոչ կարեմ յայտնել զանուն տուողին: Եւ նա ասէ, տէրութիւնն՝ արքունի հրովարտակալ խորհրդակից արար զմեզ 'ի պատրիարքարանիս, ընդէ՞ր դու միայն առնուս եւ տաս, եւ մեք ոչ իմանայցեմք. միթէ այս արհամարհութիւն, պարտաւոր էի յայտնել ձեզ. բայց զի տուողն խոստովանաբար ետ, վասնորոյ ես ոչ կարեմ յայտնել ձեզ. եւ ձեզ մեզք են հարցուփորձ առնել:

Յայնժամ զայրանայ ձէզայիրլեանն, եւ ելեալ երթայ բարկութեամբ եւ հայհոյութեամբ. եւ գնացեալ առ մեծ վէզիրն Րէշիտ փաշա, որում սեղանաւորն էր եւ սիրելին յոյժ, աղաչէ զնա եւ թախանձէ փոխել զպատրիարքն, պատճառելով, թէ զքաղաքական ժողով պատրիարքարանին՝ զոր հաստատեաց տէրութիւնն արքունի հրովարտակալ, սա առ ոչինչ համարի, այլ ինքնին միայնակ առնու եւ տայ, հրամայէ եւ գործէ, եւ եթէ մեք հարցանիցեմք ցնա, թէ զի՞ եղեւ այն գործ եւ ո՞րպիսի ինչ է, պատասխանէ մեզ, թէ չէ արժան գիտել ձեզ զայն, եւ հարցանելն անգամ մեզք են ձեզ:

Յայնժամ Րէշիտ փաշա կոչեալ զթարգման իւր զՅակոբ Կրճիկեան, պատուիրէ նմա գնալ առ պատրիարքն եւ ասել, զի գրեսցէ զհրաժարական իւր 'ի Բ. Դուռն. եւ գնացեալ 'ի տուն իւր, հանգիցէ առ ժամանակ մի 'ի սրտամաշ հոգոց կառավարութեան ազգին. իսկ եթէ յամառեալ 'ի կամս իւր ոչ տացէ զհրաժարականն, անարգանօք հանեմ զնա եւ աքսորեմ:

Տօն էր Վերացման սրբոյ Խաչին, եւ պատրիարքն գնացեալ էր յԻւսկիւտար 'ի պատարագել յեկեղեցոյն. երթայ Յակոբ Կրճիկեան յԻւսկիւտար, եւ գտանէ զպատրիարքն 'ի տան Միքայէլ ամիրայի Բիշմիշեան, եւ պատմէ նմա զհրաման վէզիրին. եւ պատրիարքն ցուցանէ նմա զհնազանդութիւն հրամանաց նորուն, եւ խոստանայ տալ զհրաժարականն, եւ դարձ արարեալ գայ 'ի

պատրիարքարանն, եւ գրէ հրաւիրանաց թուղթս առ ժողովական ամիրայս:

Յաւուր հինգշաբթի եղեւ ժողով մեծ, եւ սկսաւ խօսել պատրիարքն առ ժողովեալսն, եւ ասէ ցնոսա:

Եղեն ոմանք ՚ի ձէնջ, որք երկիցս անգամ հանել կամեցան զիս ՚ի պաշտօնէ աստի, եւ խնդրեցին յինէ բռնութեամբ ըզ հրաժարական իմ. եւ ես պատասխանի ետու նոցա, ”Թէ զի՞նչ իցէ պակասութիւն իմ, եւ զի՞նչ մեղս գործեալ իցեմ յեկեղեցական եւ ՚ի քաղաքական կարգադրութիւնս, միթէ չիցե՞մ ջանադիր պայծառութեան դպրոցաց եւ յառաջադիմութեանց նոցին, եւ պաշտպան յամենայնի ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց շնորհիւն Քրիստոսի:

“Եթէ ՚ի սոսին պակաս ինչ գտեալ իցեմ, յայտնի արասցէ հրապարակաւ ազգային ժողովն հոգեւորականաց եւ աշխարհականաց գլխանս իմ. զի գիտացեալ ըստ այնմ հրաժարեայց ՚ի պաշտօնէ աստի, եւ մի յետ հրաժարմանս միւս անգամ մեղանչեցից, ըստ որում պաշտօնեայ եմ Քրիստոսի, եւ հովիւ հոգեւոր բանաւոր հօտին իւրոյ, եւ մինչեւ ցվախճան կենաց իմոց ունիմ ծառայել ազգիս եւ եկեղեցւոյս:

“Բայց եթէ բռնութեամբ հանել կամիցին զիս ՚ի պաշտօնէ աստի որպէս այժմս, յօժարութեամբ ընդունիմ եւ զայն, զի եւ առաքեալք ՚ի ժամանակի քարոզութեան իւրեանց անարգանօք ելանէին յատենէ անտի: Ոչ կամիմ լինել պատճառ գայթակղութեան ազգիս, երկուցեալ յԱստուածային բանէն, թէ վա՛յ որ գայթակղեցուցանէ, զի առանց հարցաքննութեան յազգային ժողովի եթէ յօժարիցիմ տալ զհրաժարականս՝ իւրաքանչիւր ոք յազգէս յայլեւայլ ունին կարծիս լինել, եւ գուցէ զանազան պակասութիւնս բարդիցեն ՚ի վերայ իմ. վասնորոյ կամիմ հրապարակաւ յայտնի լինել թէ հոգեւոր եւ թէ մարմնաւոր պակասութեանցս:

“Զի՞նչ առաջարկութիւնս արարին ՚ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ եւ ՚ի բարեկարգութիւն ազգիս, եւ ես դիմակաց եղէ եւ ոչ յօժարամտեցի յայնոսիկ, եւ եթէ հակառակ քաղաքականութեան Բ. Դրանն մեղանչեցի, կամիմ դիտել եւ զայն:

“Զի՞նչ խնդիր մատուցին ինձ ՚ի պէտս հրկիզելոց, աղքատաց, ՚ի հաւատս փորձանաւորաց, եւ ես անփոյթ արարի ըզ նոցանէ: Ահա 37865 դահեկան տուեալ եմ մինչեւ ցարդ ՚ի պէտս դարձի նորաղանդից ՚ի ծոց սուրբ եկեղեցւոյս: Քսան եւ հինգ

Հազար դահեկան ետու Սամաթիոյ հրկիզելոցն 'ի ձեռն եկեղեց-  
պանաց եկեղեցւոյ նոցին: Վեց հազար դահեկան ետու Գաղա-  
տիոյ աղքատաց հացագին 'ի ժամանակի սովուն: Եւ չորս հազար  
հինգ հարիւր դահեկան ետու 'ի պէտս փորձանաւորաց 'ի հա-  
ւատս: Այս ամենայն որոշակի քննեալ եւ ստորագրեալ է պարոն  
Յակոբ Կրճիկեան յարձանագրութիւնս պատրիարքարանիս, որ  
այժմս նստեալ կայ ընդ ձեզ. թող ինքն վկայեսցէ:

“Արդ ահա տամ ձեզ զհրաժարականս իմ որոց յանցեալքն ի-  
ցեն առիս գիտութեամբ եւ անգիտութեամբ, թողութիւն եղիցի  
նոցա. եւ ես եթէ ընդդէմ պատուոյ ձերոյ մեղանչեցի յանգէտս,  
խնդրեմ ներողամիտ լինել ինձ բարեսէր ոգւով. մնա՛յք բարեալ  
եւ ամենայն յաջողութեամբ, եւ Տէր օրհնեսցէ զձեզ զամենեսին”:

Եւ հանեալ զհրաժարականն 'ի գրպանակէն՝ տայ Մագսուտ  
ամիրային. եւ նա ընթերցեալ 'ի լուր ամենեցուն, ետ Յակոբայ  
Կրճիկեան տանիլ առ վէզիրն:

Յայնժամ ժողովեալքն ելեալ յոտս, արտասուալից աչօք համ-  
բուրէին զձեռս նորա. եւ ոմանք 'ի նոցանէ 'ի ծունկս անկ եալք  
աղաչէին, զի ասասցէ 'ի վերայ իւրեանց զպահպանիչ եւ զողոր-  
մեսցի, եւ այնպէս տրտմագին ելեալ անտի գնաց մեկուսացաւ ա-  
ռընթեր պատրիարքարանին 'ի տան ձանիկ ամիրային, զոր 'ի  
վարձու կալեալ էր մահտեսի Յովհաննէս Ասլանեան:

Եւ յաւուր շաբաթու ժողովեցան ամիրայք 'ի պատրիարքա-  
րանն. եկն եւ քարտուղար արտաքին գործոց նախարարին հրա-  
մանագրով եպարգոսին յընտրութիւն պատրիարքի:

Լուր եհաս 'ի վաճառանոցն, եւ սկսան արհեստաւորք խումբ  
իջանել 'ի պատրիարքարանն. եւ լցան զեղան 'ի Մայր եկեղեց-  
ւոջն եւ 'ի պատրիարքարանին, եւ գլխաւորքն 'ի նոսին ելին 'ի  
վեր, յառաջոյ իւրեանց ունելով զգինեպան Իսկէնտէր զայրն  
ճարտարախօս, եւ սկսան աղաղակել:

Ասէ ցնոսա քարտուղարն, զի՞նչ խնդրէք: Եւ նոքա ասեն,  
զՄատթէոս պատրիարք մեր: Ասէ ցնոսա, նա կամովին հրաժարե-  
ցաւ 'ի պաշտօնէ իւրմէ, եւ Տէրութիւնն ընկալաւ զհրաժարական  
նորա, եւ հրամայեաց զայլ ոք արժանաւոր կարգել 'ի տեղի նորա:  
Ասեն եւ նոքա. մեք գնացեալ առ նա աղաչեմք եւ թախաձեմք եւ  
հաճեցուցանեմք յանձն առնուլ դարձեալ զպատրիարքութիւնն:  
Ասէ ցնոսա քարտուղարն. անդարձ է հրաման տէրութեանն.  
Մատթէոսն ոչ կարէ դարձ առնել վերստին յիւր պաշտօն:



Յայնժամ գինեպան Իսկէնտէր պատասխանի տայ քարտուղարին է ասէ ցնա, ժողովուրդս այս խնդրէ, զի եթէ անհնար է Մատթէոս պատրիարքին վերադառնալ, Յակոբոս եպիսկոպոս առաջնորդն Եւզոկիոյ լիցի պատրիարք. կամ Մատթէոս եւ կամ Յակոբոս. զայլ ոք ոչ ճանաչեմք եւ ոչ ընդունիմք, թէ եւ յերկնից իջեալ իցէ: Ընդ այս բան նորա աղաղակեցին միահամուռ ժողովուրդքն, թէ զՅակոբոսն խնդրեմք, Յակոբո՛ս Յակոբո՛ս: Եւ քարտուղարն խոստացաւ նոցա կատարել զխնդիր նոցա, եթէ ցրուեսցին եւ գնասցեն ՚ի տեղիս իւրեանց:

Եւ ել ամբոխն արտաքոյ պատրիարքարանին, եւ կային առ դրան Մայր եկեղեցւոյն. եւ ամիրայք ակամայ կամօք զիջան յընտրութիւն ժողովրդոցն, եւ ստորագրութեամբ իւրեանց որոշեցին զՅակոբոս. եւ հրամանաւ Բ. Դրան առաքեցին հրաւիրակս յԵւզոկիա, եւ ամին զՅակոբոս ՚ի Կոստանդնուպօլիս, որ գնացեալ ՚ի Բ. Դուռն, ընկալաւ գնչան պատրիարքական իշխանութեան, եւ դարձաւ մեծաւ փառօք ՚ի պատրիարքարանն:

Իսկ Մատթէոս պատրիարք առանձնացաւ ՚ի տան իւրում յՕրթագիւղ, որում շնորհեաց արքայ ՚ի գանձուց իւրոց երկու հազար դահեկան ամսական. եւ ետ գանձն իւր յընթերցանութիւնս սուրբ գրոց, եւ արար ճառս հոգեշահս բազումս: Շարադրեաց զմատեանն ”Հանդիսարան հաւատոյ ուղղափառութեան Հայոց”. յորում երկուստեք հերքէ զգրպարտութիւնս պապականաց եւ նորաղանդից: Գրեաց յետ այնր եւ ըզ մատեանն ”Բարի մարդ եւ բարի Քրիստոնեայ” ընդդէմ զրպարտողաց զեկեղեցւոյն Հայոց:

Գրեալ էր եւ յեպիսկոպոսութեան իւրում ՚ի Զմիւռնիա քաղաքի ”Նորհրդածութիւնք նշանաց եւ խորհրդոց սուրբ եկեղեցւոյ”, զոր կրկին տպագրութեամբ հրատարակեաց գրաբառ եւ աշխարհաբառ:

Յետ երից ամաց հրաժարելոյ իւր ՚ի պատրիարքութենէն յամին 1851 ՚ի մայիսի 19 ընկալաւ դարձեալ յարքայէ գնչան աղամանդեայ եւ մեծագին ՚ի տան իւրում յՕրթագիւղ:

Եւ յետ երկուց ամաց ըստ բազում թախանձանաց եւ խնդրոյ ազգիս կարգեցաւ առաջնորդ մեծի վիճակին Նիկոմիդեայ եւ սուրբ ուխտին Արմաշու, յոր գնացեալ բարեկարգեաց եւ մխիթարեաց զժողովուրդն զամ մի եւ կէս. եւ հրաժարեալ անտի վերադարձաւ ՚ի տուն իւր յՕրթագիւղ, պարապեալ ՚ի գիրս հոգեշահս առանձինն:

## ԳԼՈՒԽ ԿԳ.

Յաղագս աղմկի եւ խռովութեան Հայոց եւ Հռովմէականաց, որ եղեւ 'ի պատճառս հրատարակման Իտալերէն եւ Հայերէն պարսաւագրոցն:

(1848) **ՅԱԻՈՒՐՍ** յայսոսիկ հրատարակեցաւ յանկարծ 'ի մայրաքաղաքիս պարսագիրք իմն Իտալերէն, որ ամբաստանէր զմիաբանութիւն Վենետիկեան վանիցն իբրեւ զհերձուածողս եւ զհերետիկոսս, պատճառելով եւ հաստատելով, թէ սոքա ջատագով եւ պաշտպան են Հայոց հերձուածողաց, արտաքուստ կեղծաւորաբար Հռովմէական ուղղափառ ցուցանեն զինքեանս, բայց գաղտնի հաղորդակից են ընդ հերձուածողաց 'ի հոգեւորս, եւ այլ այսպիսի ամօթալի եւ եպերելի զրպարտութեամբք եւ ստայօղբանիւք զԱբբայեան միաբանութիւնն դատապարտէր իբրեւ զհերետիկոսս. հեղինակ գրոցս չէր նշանակեալ 'ի դուռն մատենիս, բայց խոհական անձինք վաղ ընդ փոյթ գուշակեցին եւ հաստատեցին, թէ մատն Հասուն վարդապետին է 'ի սմա, եւ նորին խորհրդով շարադրեալ է սա յանխիղճ եւ յանամօթ Գոլէճեանց:

Յետ ամսոց հնգից հրատարակեցաւ եւ այլ իմն պարսաւագիրք Հայերէն 'ի կողմանէ Վենետիկեան միաբանից, որպէս թէ հերքել կամելով զցուցմունս եւ զփաստս Իտալականին, ցուցանէ զինքեանս եւ զմիաբանութիւն իւրեանց ջերմեռանդ յոյժ եւ յամենայնի հպատակ հրամանաց պապին Հռովմայ, յայտ յանդիման խոստովանի, թէ մեք բնաւ հաղորդակից չեմք եղեալ ընդ Հայոց 'ի հոգեւորս, եւ թէ մեք բնաւ հաղորդակից չեմք եղեալ ընդ Հայոց 'ի հոգեւորս, եւ թէ ազգ եւ եկեղեցին Հայոց է հերձուածող եւ հերետիկոս. եւ պարսաւագրոցս հեղինակ էր Հ. Արսէն Կոմիտասեան երեւելին 'ի միաբանս Վենետիկեան վանիցն, որ էր յայնժամ 'ի Կոստանդնուպօլիս:

Իբրեւ հրատարակեցաւ այս մատեան 'ի մէջ ժողովրդեան, զարմմանք կալաւ զամենեսին. զի ամենեքին մանաւանդ Հայք այնպէս գիտէին եւ այնպէս հաւատացեալ էին յայսչափ ժամանակաց հետէ, թէ Աբբայեան հարք ջատագով եւ պաշտպան են Հայաստանեայց եկեղեցւոյ, բարեկամ եւ սիրող հայրենի ազգին եւ հնաւանդ կարգաց եւ սովորութեանց. վասնորոյ եւ յամենայնի ձեռնտու եւ նպաստող էին առատաձեռն արգեամբք եւ նուիրօք

’ի տպագրութիւնս մատենից նոցին եւ Բազմավէպ օրագրին, որպէս Յովհաննէս Պէյ Տատեան աւելի քան զհազար քսակ ոսկւոյ ջերմեռանդ սիրով նուիրեաց ’ի նպաստ տպագրութեան նորոգ աշխարհագրական տախտակաց եւ ներածութեան նոցին, եւ Բազմավէպ օրագրին. սոյնպէս եւ այլք բազումք, զորոց չէ տեղւոյս յերկարել մի ըստ միոջէ:

Բայց այժմ ծանեան ամենեքին, զի եւ նոքա ոչինչ ընդհատ ’ի Գոլէճեանց կամ ոչ պակաս քան զնոսին ռիւերիմ թշնամիք են Հայաստանեայց եկեղեցւոյ. որպէս յետ ոչ բազում ամաց փորձիւ ծանուցին զինքեանս: Իբր զի Աբբահայր նոցին Հ. Գէորգ եպիսկոպոս Հիւրմիւղեան գրեաց զգիր իմն, թէ ազգ եւ եկեղեցին Հայոց է հերձուածող եւ հերետիկոս, եւ ետ ստորագրել բոլոր միաբանութեան իւրոյ, եւ ներկայացոյց առաջի դահին Հռովմայ. որով որպէս թէ սուտս եւ զրպարտիչս կացուցանել կամեցաւ զՀասուն եպիսկոպոս, վասնորոյ եւ արար բողոք առ ժողովն տարածման հաւատոյ, եւ խնդրեաց ’ի դատ ելանել ընդ նմին, եւ արդարացուցանել զմիաբանութիւն իւր:

Բայց ժողովն տարածման հաւատոյ ոչ ետ հրաման ժողովով քննել եւ որոշել զդատ սոցա. միայն հրամայեաց, զի պարսաւագիրքն այնոքիկ թէ Իտալական եւ թէ Հայկական՝ երկոքին եւս խափանեալ մնասցեն եւ բարձցին ’ի միջոյ:

Այս էր միտ եւ դիտաւորութիւն Հիւրմիւղեանին, զի եթէ ոչ յաջողեսցի ինքեան յաղթող լինել ’ի դատին, ’ի չքմեղս եղիցի ինքն, եւ հաշտութիւն խօսեսցի ընդ Հասուն եպիսկոպոսին միջնորդ ունելով ինքեան զոմանս յեպիսկոպոսաց ժողովոյն: Այլ եթէ յաղթող գտանիցի, յանկուսցէ յինքն զՀռովմէական ժողովուրդս մայրաքաղաքիս ’ի ձեռն միաբանից իւրոց, եւ ընկեցիկ արարեալ զՀասուն, ինքն փոխանակեսցէ զտեղի նորին իբրեւ մետրապօլիտ կամ պատրիարք Հռովմէական Հայոց:

Ձայսոսիկ գեղեցիկս նկարագրէ բազմավաստակ ծերունին Հ. Սարգիս վարդապետ Թէոդորեան ’ի քառահատոր օրագրութիւնս իւր. տեսցէ անդ, որ կամիցի լիովին տեղեկանալ այս ամենայն անցից ըստ հարկաւոր պարագայիցն. մեզ տաղտկալի է գրել զայսոսիկ:

(1855) Յետ երկուց ամաց Հ. Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի հրաժարեցաւ ’ի կեղծաւոր միաբանութենէ Վենետիկեան վարդապետաց վասն ստորագրելոյ նոցին զազգէն Հայոց հերձուածող

եւ հերետիկոս. եւ առանձնացեալ 'ի Փարիզ գրեաց եւ հրատարակեաց յայտարարութիւնս վասն հրաժարման իւրոյ, եւ սկսաւ հրատարակել նորոգ օրագիր ամսօրեայ Մասեաց Աղաւնի անուն:

Եբաց եւ գվարժարան իմն անդ 'ի Փարիզ Արեւելեան վարժարան կոչեցեալ. եւ սկսաւ անդ ժողովել զմանկունս յուսումն լեզուագիտութեան եւ բնական գիտութեանց:

Հ. Սարգիս վարդապետ Թէոդորեան՝ եւ Հ. Ամբրուիոս վարդապետ Գալֆաեան՝ ոգևով ազգասիրութեան վառեալք եկին եւ միաբանեցան ընդ Այվագոսքի վարդապետին. ընդ որս յետոյ միաբանեցաւ եւ Հ. Խորէն վարդապետ Գալֆաեան: Չորեքին սոքա գրեալք զգիր հպատակութեան սիրոյ եւ մեծարանաց առ Յակոբ պատրիարք եւ առ սրբազան Ներսէս կաթողիկոս, միանգամայն եւ զողջամիտ դաւանութիւն հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, ընկալան զկոնդակ օրհնութեան եւ եկեղեցական իշխանութեան իւրեանց՝ եւ զվեղար եւ զփիլոն ըստ տարազու եկեղեցականաց Հայոց, եւ մտին ընդ հովանաւորութեամբ եւ պաշտպանութեամբ պատրիարքին Հայոց՝ անկախ եւ ազատ գոլով 'ի պապական լծոյն:

Բացաւ եւ մատուռն մի Հայոց անդ 'ի Փարիզ վասն պատարագելոյ Հայ քահանայի ըստ արարողութեան Լուսաւորչեան եկեղեցւոյ հրամանաւ Նաբոլէօն կայսեր՝ ըստ խնդրոյ Յակոբ պատրիարքին. եւ սկսաւ պատարագել անդ Շահնազարեան Կարապետ վարդապետ:

Ի չորեսին կղզիս՝ որք կան յանդիման Կոստանդնուպօլսոյ, մինչեւ ցայս վայր չէր եկեղեցի Հայոց. եւ Հայագգիք՝ որք օղափոխութեան աղագաւ երթային 'ի կղզիս յամարանոցս, յաւուրս կիւրակէից գնային ակամայ յեկեղեցիս Յունաց առ 'ի չլինելոյ եկեղեցի Հայոց. ուստի 'ի սմին ամի ժրաջան վաստակօք բարեպաշտ անձանց մերազնեայց եւ սիրայորդոր քարոզութեամբ Յակոբայ պատրիարքի՝ եղեւ հիմնարկութիւն եկեղեցւոյ 'ի Գրնալը կոչեցեալ կղզւոջն, ուր 'ի քանի ինչ ամաց հետէ սկսեալ էին Հայք շինել տունս անդ եւ բնակիլ. եւ կատարեալ զշինութիւնն էօծ Յակոբ պատրիարք փառաւոր հանդիսիւ յանուն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին 'ի 15 յուլիսի 1855:

## ԳԼՈՒԽ ԿԵ.

Յաղագս պատուելոյ սրբազան կաթողիկոսին Ներսիսի զՅակոբ պատրիարք արժանաւոր մեծարանօք, եւ ահագին պատերազմին Ռուսաց, որ եղեւ վասն տնօրինական տեղեաց սուրբ Երուսաղէմի, եւ վախճանի սրբազան կաթողիկոսին Ներսիսի, եւ կաթողիկոսութեան Մատթէոսի առաջնոյ:

(1850) **Ձայս ամենայն դէպս՝** զոր 'ի վեր անդր յիշատակեցաք, պարտ է արժան համարեցաւ Յակոբ պատրիարք գրել եւ ծանուցանել սրբազան կաթողիկոսին Ներսիսի, որ հովուապետն էր Հայաստանեայց եկեղեցւոյ, եւ այս ամենայն դէպք վերաբերէին առ եկեղեցին Հայոց. ուստի գրեաց ըզգիր հպատակութեան սիրոյ եւ մեծարանաց առ սրբազան կաթողիկոսն, եւ պատմեաց զամենայն: Առաքեաց ընդ գրոյն եւ զշուրջառ իմն ոսկեթել եւ ծանրագին ընդ այլոց ընծայից, եւ սրբազան կաթողիկոսն ուրախացեալ յոյժ գովեաց զհաւատարմութիւն նորա եւ զհարազատութիւն առ ազգն եւ եկեղեցին Հայոց, եւ առաքեաց զմարգարտազարդ մեծագին Կոնքեռ հայրապետական զարդարեալ պատկերօք սուրբ Փրկչին եւ Աւետարանչաց, եւ զկոնդակ օրհնութեան առ ժողովուրդս մայրաքաղաքիս, որ ընթերցաւ յամենայն եկեղեցիս: Առաքեաց Ներսէս կաթողիկոս եւ հազար ոսկի բօլիմբէսիալ 'ի Զմիւռնիա 'ի նպաստ շինութեան հրկիզեալ սուրբ Ստեփանոս եկեղեցւոյն Հայոց, որ սկսեալն էր նորոգ շինիլ քարուկիր յօրինուածով:

Յաւուրան յայնոսիկ փոխարքայն Կովկասու Վօրօնցով ընդ իշխանուհւոյն իւրոյ յայց ել 'ի սուրբ Էջմիածին, ուր եղեւ ընդունելութիւն մեծ 'ի սրբազան կաթողիկոսէն Ներսիսէ, եւ եղեն լուսավառութիւնք եւ ուրախութիւնք: Յետ ամաց երկուց եւ թագաժառանգ մեծ որդի կայսերն Ռուսաց դուքան Աղէքսանդր եկն յայցելութիւն 'ի սուրբ Էջմիածին, ընդ առաջ նմա գնաց սրբազան կաթողիկոսն ընդ երից եպիսկոպոսաց, եւ արժանաւոր մեծարանօք եցոյց նմա սիրալիր ընդունելութիւն, որ կացեալ անդ օր մի, մեծաւ շնորհակալութեամբ վերադարձաւ, տուեալ 'ի նպաստ սուրբ Աթոռոյն Էջմիածնի երկու հարիւր յիսուն ոսկիս Հոլանտիոյ (Մաճառ):

(1852) Ի սմին ամի կայսերք Գաղղիոյ եւ Աւստրիոյ պահանջեցին զնոր կարգադրութիւն ինչ յարքայէ վասն տնօրինական

տեղեաց սրբոյ Երուսաղէմի. յորում պահանջէին 'ի Յունաց նախ՝ զբացարձակ իշխանութիւն մատուցանելոյ զԱստուածային պաշտօնն 'ի վերայ սրբոյ գերեզմանին, որպէս ունէին յամին 1808:

Երկրորդ՝ պահանջէին զթոյլտուութիւն նորոգելոյ զգլմբեթն սուրբ Յարութեան տաճարին:

Երրորդ՝ պահանջէին զմկրտարանն, եւ գեթն աղեղունսն Մարիամ կուսին, որք մասն համարին սուրբ գերեզմանին:

Չորրորդ՝ զԲէթղէհէմի մեծ եկեղեցին եւ զմերձակայ երկու պարտէզսն, զորս առին Յոյնք 'ի ձեռաց Լատինացւոց յամին 1757:

Հինգերորդ՝ զեկեղեցին, յորում են գերեզմանք Յովակիմայ եւ Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնին, սրբոյն Յովսեփայ Աստուածաձօրն, եւ սրբոյն Սիմէօնի ծերունւոյն:

Վեցերորդ՝ զայրն հովուաց, զոր առին Յոյնք 'ի ձեռաց Լատինացւոց յամին 1828:

Եօթներորդ՝ զաստղն, որ էր 'ի վերայ Ծննդեան խորանի Լատինացւոց, զոր յափշտակեցին Յոյնք 'ի նոցանէ յամին 1847 հոկտեմբեր 30:

Ընդ այս խնդիր Եւրոպական տէրութեանց՝ եղեւ ժողով նախարարաց եւ օրէնսգիտաց 'ի Բ. Դրան, եւ արժանաւոր վարկուցեալ զպահանջմունս նոցին, կամեցաւ արքայ նոր հրովարտակաւ տալ նոցա զոր պահանջէինն, բայց դեսպանն Ռուսաց ընդդէմ եկաց այսր կարգադրութեան, եւ օր քան զօր սաստկացաւ վէճն, մինչեւ եղեւ պատճառ մեծի պատերազմին Ռուսաց ընդդէմ Օսմանեանց եւ Եւրոպական թագաւորութեանց Անգլիոյ, Գաղղիոյ, եւ Իտալիոյ. եւ տեւեաց զամս երկուս, եւ 'ի սուր մատնեաց աւելի քան զմի միլիոն անմեղ անձանց յերկուց կողմանց, ընդ նմին եւ անբաւ հեղեղք ոսկւոյ 'ի ծախս պատերազմին, եւ աւերմունք քաղաքաց, գիւղից, եւ բնակութեանց, մինչեւ վերջացաւ մահուամբ Նիկողայոսի Ռուսաց կայսեր:

(1857) Յետ միոյ ամի Ներսէս կաթողիկոս յանկարծ 'ի գիշերի միում կնքեաց զկեանս իւր 'ի հասակի իննսուն եւ վեց ամաց բազմեալ յաթուռի գրիչ 'ի ձեռին 'ի վեհարանի իւրում 'ի Տիխիս քաղաքի՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս չորեքտասան, եւ ընդ առաւօտն ձայն ետուն զանգակատունք զանակնկալն մահ սրբազան հայրապետին, եւ լեցան զեղան քաղաքացիք յեկեղեցւոջ, եւ մեծաւ հանդիսիւ կատարեաց զկարգ թաղման Սարգիս

արքեպիսկոպոսն Զալալեան, եւ ամրափակեալ յարկեղ միում եւ հան սուրհանդակս յէջմիածին եւ ազգ արար զմահ սրբազանին:

Եւ իսկոյն ելին վեց արքեպիսկոպոսունք յէջմիածնէ եւ եկին ՚ի Տփլիս, եւ յետ աւուրց ինչ առեալ տարան զմարմին հայրապետին ՚ի սուրբ Աթոռն, եւ հանգուցին առ մեծի դրանն կաթողիկէ եկեղեցւոյն սուրբ Էջմիածնի: Կոծ մեծ արարին Հայք ընդ մահն առն Աստուծոյ, որ զտիւ եւ զգիշեր պարապէր թերեւս գտանել հնարս ինչ կանգնել զկործանեալ տուն Հայկայ ՚ի վաղեմի փառս իւր. առ այս տքնէր, եւ այս տենչանք սրտին եւ ակնկալութիւնք ազգիս թաղեցան ընդ նմա, բայց յիշատակ իւր յազգիս մերում անմոռաց մնասցէ յաւիտեան: Եւ գրեալ ազգ արարին ՚ի Կոստանդնուպօլիս զվախճան սրբազան կաթողիկոսին ՚ի 13 փետրվարի 1857, ծանուցանելով միանգամայն, եթէ ՚ի յաջորդ ամի յամսեանն յունիսի ունի լինել ժողով ազգային երեսփոխանաց յաթոռն սուրբ՝ վասն ընտրութեան նոր կաթողիկոսի:

Ի պարապ մնալ աթոռոյն՝ Սարգիս արքեպիսկոպոսն Զալալեան կայսերական հրովարտակալ կարգեցաւ առաջնորդ Վրաստանու եւ Իմէրէթի. եւ Մատթէոս արքեպիսկոպոսն առաջնորդ Աժտարխանի, եւ Գաբրիէլ վարդապետ Այվազովաքի՝ որ ընդ եղբոր իւրոյ պարոն Յովհաննու եկն ՚ի Փարիզէ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ պատիւ մեծ ընկալեալ յազգէս, յետ տասներեք աւուրց գնաց ՚ի Ղրիմ ՚ի հայրենիս իւր, կայսերական հրովարտակալ կարգեցաւ առաջնորդ նոր Նախիջեւանու, Պէսարապիոյ, եւ Ղրիմու: Պաշտօնաբաշխութիւնքս այսոքիկ էին եկեղեցւոյ, վասնորոյ ոչ սակաւ ցաւեցան սիրտք ազգասիրաց, առաւել ՚ի վերայ նոցա որք գիտելով զկարգ եւ կանոն, զիջան յընդունելութիւն այսց պաշտամանց:

Յաւուրս յայսոսիկ եղեւ եւ գիւտ Նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի ՚ի Շուշի քաղաքի աշխարհին Սիւնեաց ՚ի վանսն Ամարասու, զոր նորոգ սկսեալ էին շինել վասն հնութեանն, ել ՚ի գետնափորոյ արկղ մի մեծ երկաթի՝ կնքեալ կնքով Վաչական թագաւորին Աղուանից, յորում էր մարմին սրբոյն հանդերձ յիշատակարանաւ անապական մնացեալ յայնչափ դարուց հետէ:

Յամսեանն ապրիլի եղեւ ժողով եկեղեցականաց եւ աշխարհականաց ՚ի պատրիարքարանի վասն ընտրելոյ զերիս արժանաւոր անձինս յարքեպիսկոպոսաց ՚ի կաթողիկոսութիւն ՚ի բաժնի

Օսմանեան տէրութեան, եւ համահաճութեամբ ամենեցուն ընտրեցին նախ զՅակոբ պատրիարք. բայց նա հրաժարեցաւ պատճառելով զծերութիւն իւր եւ զտկարութիւն անձինն, եւ աղաչեաց արտասուօք զժողովեալսն ընդունիլ ըզ հրաժարական իւր:

Եւ նոքա զիջեալ յաղաչանս ծերունւոյն ընտրեցին ապա նախ զՅովհաննէս պատրիարքն սրբոյ Երուսաղէմի, երկրորդն՝ զնախորդ պատրիարք Մատթէոս սրբազան արքեպիսկոպոսն, որ առանձնացեալն էր ՚ի յՕրթագիւղ: Երրորդն՝ զվիճակաւոր սրբազան Գէորգ արքեպիսկոպոս զառաջնորդն Պրուսայոլ:

Եի գրեալ գանունս սոցա եւ ստորագրեալ ժողովելոցն ամենեցուն՝ գրեցին եւ առաքեցին ՚ի Տփլիս, կարգելով եւ ընտրելով երեսփոխան ՚ի կողմանէ իւրեանց զերկուս յերեւելի իշխանաց Տփլիսեցոց, զի գնացեալք յէջմիածին տացեն քուէս ՚ի կողմանէ Հայոց յՕսմանեան բաժնին եղելոց:

Եւ ՚ի 18 յունիսի 1858, եղեւ ժողովն ՚ի սուրբ Աթոռն, եւ ըստ վաղեմի սովորութեան արկին վիճակս երեսփոխանք ամենեքին, եւ ել վիճակն Մատթէոսի նախորդ պատրիարքին Կոստանդնուպօլսոյ, եւ ըստ այնմ գրեցին եւ ծանուցին ՚ի ձեռն փոխարքային Կովկասոլ ՚ի դուռն կայսերն Ռուսաց ՚ի Պետերբուրգ:

Վաւերացոյց կայսրն զընտրութիւն կաթողիկոսին, եւ ծանուցաւ հրաման նորին դեսպանին Ռուսաց ՚ի Կոստանդնուպօլիս, որ պաշտօնական կերպիւ առաքեաց զառաջին թարգման իւր զԱրեւրօբուլի ՚ի Բ. Դուռն՝ ծանուցանել, եթէ վեհափառ կայսրն Ռուսաց հաստատեալ զընտրութիւն Մատթէոսի կաթողիկոսին Հայոց, խնդրէ, զի հրաման տալիք նմա մեկնիլ ՚ի Կոստանդնուպօլսոյ ՚ի սուրբ Էջմիածին:

Եւ Բ. Դուռն ըստ խնդրոյ կայսերն Ռուսաց մասնաւոր գրով բարեհաճեցաւ շնորհել հրաման նորընտիր կաթողիկոսին գնալ ՚ի սուրբ Էջմիածին երբ եւ կամեսցի: Եւ Մատթէոս կաթողիկոս շնորհակալութեամբ մեծաւ ընկալեալ զհրամանն, կամեցաւ զձմեռն առաջակայ անցուցանել ՚ի Կոստանդնուպօլիս, եւ ՚ի գարնան յաջորդ ամին ճանապարհորդել յէջմիածին. եւ յայնմ օրէ սկսաւ յիշատակութիւն անուան իւրոյ յեկեղեցիս Հայոց ՚ի սուրբ Պատարագի:



## ԳԼՈՒԽ ԿԶ.

Յաղագս պատրիարքութեան Գէորգայ, եւ ճանապարհորդութեան Մատթէոսի  
'ի սուրբ Էջմիածին:

(1858) Յակոբ պատրիարք պատճառելով զձերութիւն իւր եւ զտկարութիւն անձինն, կամովին հրաժարեցաւ 'ի պատրիարքութենէն, եւ ընտրեցաւ 'ի տեղի նորա Գէորգ արքեպիսկոպոս առաջնորդն Պրուսայու յազգային ժողովի ընդ նախագահութեամբ սրբազան կաթողիկոսին, զոր ծանուցեալ արքունի Դրան, ածին 'ի Պրուսայէ եւ առաքեցին 'ի Բ. Դուռն, որ ընկալեալ զնշան պատրիարքական իշխանութեան, մեծահանդէս շքով վերադարձաւ 'ի պատրիարքարանն: Իսկ Յակոբ պատրիարք առանձնացաւ 'ի տան սուրբ Խաչ եկեղեցւոյն յԻւսքիւտար, եւ արար 'ի նմա նորոգութիւնս բազումս:

Յետ քանի ինչ ամաց նորոգեաց եւ զգլորոց թաղին քարուկիր յօրինուածով եւ հոյակապ շինուածով, որ հրկէզ եղեալն էր. եւ 'ի պարտիզի նորին պատրաստեաց զգերեզման գնացեալն էր յուխտ եւ յերկրպագութիւն 'ի կատարումն ուխտին, զոր ուխտեալն էր 'ի մանկութենէ իւրմէ:

Յետ երկուց ամսոց եկին 'ի կողմանէ սուրբ Էջմիածնի հրաւիրակք առ սրբազան կաթողիկոսն՝ Մակար արքեպիսկոպոսն եւ Մկրտիչ եւ Գալուստ վարդապետք եւ երկու սուրհանդակք. եւ նստան 'ի Բերա 'ի տան միում, զոր պատրաստեաց նոցա Պօղոս պէյ Տատեան կահիւք եւ կարասուվք եւ ամենայն կարեւորօքն հանդերձ:

Ի նոյն աւուրսն հրաւիրեցաւ սրբազան կաթողիկոսն 'ի պալատն արքայի, որ առեալ ընդ իւր զՊօղոս պէյ Տատեան, եւ զՄակար եպիսկոպոս, եւ զՄկրտիչ եւ զԳալուստ եւ զԱնդրէաս վարդապետսն, գնաց առ արքայ. եւ ընկալեալ զառաջին կարգի Մէծիտիյէ շքանշանն՝ վերադարձաւ մեծահանդէս շքով. իսկ Մակար եպիսկոպոսի եւ երից վարդապետաց շնորհեցան երրորդ կարգի Մէծիտիյէ նշանք, որք յետ աւուրց ինչ խնդրեցին հրաման 'ի սրբազան կաթողիկոսէն երթալ յուխտ յԵրուսաղէմ, եւեւ վերադառնալ զկնի Զատիին:

Եւ 'ի քսաներորդ աւուր ապրիլի Լօրիս Մելիքով Հայագգի ժէնէնալն եկն 'ի Կոստանդնուպօլիս ուղեկցութեամբ իւր բանակի

օգնական Հայագրի Միքայել Միանսարով հարիւրապետին տանել զսրբազան կաթողիկոսն յԷջմիածին. եւ իջեալ յապարանս դեսպանին Ռուսաց յերկուշաբթի աւուր, ծանոյց ՚ի պատրիարքարանն. եւ ՚ի յաջորդ աւուրն գնացեալ ընդ Տատեան Պողոս պէյին ՚ի պատրիարքարանն, տեսաւորեցան ընդ Գէորգայ պատրիարքին, եւ որոշեցին ՚ի հինգշաբթի աւուր գնալ առ սրբազան կաթողիկոսն յՕրթագիւղ, եւ զորոշումնս զայս ծանուցին սրբազան կաթողիկոսին:

Եւ ՚ի հինգշաբթի աւուր Գէորգ պատրիարք չորս վարդապետօք, եւ Պողոս պէյ եւ Յովհաննէս պէյ Տատեան եւ Գէորգ պէյ Երամեան բազմութեամբ իշխանաւոր անձանց ելեալք ՚ի Բերայէ ընդ վսեմափայլ զօրապետին, եկին յՕրթագիւղ առ սրբազան կաթողիկոսն, որ սպասէր գալստեան նոցին ընդ ութից վարդապետաց եւ Սարգսի եպիսկոպոսի եւ նախկին պատրիարք Յակոբ սրբազանին յընդարձակ եւ գեղեցիկ տան գերդաստանին ԵՈՒՍՈՒՔԵԱՆԳ:

Վսեմափայլ զօրապետն ներկայացեալ առաջի նորին վեհափառութեանն՝ համբուրեաց զաջ նորա եւ ասէ.՝ Վեհափայլ Տէր, փոխարքայն Կովկասու բարեհաճութեամբ թագաւոր կայսեր իմոյ եդ ՚ի վերայ իմ գթաղցր պարտաւորութիւն գալ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ ՚ի դիմաց ամենայն Հայոց Ռուսաստանի շնորհաւորել սրբազանութեան ձերում զհաստատութիւն ձեր յօգոստափառ Կայսերէ ՚ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց, հրաւիրել զձեզ ՚ի սուրբ աթոռն Էջմիածնի, եւ ուղեկից լինել Սրբազանութեանդ յամենայն սահմանս Ռուսիոյ: Երջանիկ համարիմ զանձն իմ, որ այսօր՝ առ ՚ի կատարել գեղեալն իմ պարտաւորութիւն, շնորհ ունիմ ներկայանալ վեհափայլութեան ձերում, եւ եռանդեամբ հոգւոյ համբուրել ըզ սուրբ աջն ձեր”:

Եւ սրբազան կաթողիկոսին համառօտ եւ գեղեցիկ ատենաբանութեամբ ետ նմա զհայրապետական օրհնութիւն իւր: Յայնժամ ԵՈՒՍՈՒՔԵԱՆԳ Տիգրան աղա երիտասարդ ազնաուկանն ՚ի դիմաց ազգային երեսփոխանաց եւ ամիրայից արար համառօտ ատենաբանութիւն իմն առ վեհափայլ կաթողիկոսն եւ ասէ.՝ Վեհափառ Հայրապետ, աներկբայ լինելով, թէ հայրախնամ սիրտ ձերդ վեհափայլութեան անպատում բերկրութեամբ լցեալ է այսօր, տեսանելով առաջի վեհափառութեան ձեր զյարգելի պատգամաւորս երեւելի իշխանաւորաց ազգիս եւ բոլոր հասարակութեան՝ որք

գտանին՝ ՚ի մայրաքաղաքիս, խնդրեմք հրաման ՚ի հրաման ՚ի Սրբազանութեան ձերմէ յայտնել վսեմափայլ զօրապետիս զհաւաստիս անպատում բերկրութեանց, զոր զգամք եւ վայելեմք շնորհիւ գալստեան նորին:

Եւ դարձուցեալ զերեսս իւր առ զօրապետն, ասէ, տէր զօրապետ, այո ներկայութիւն ձեր զկրկնակի ուրախութեանց զառիթս մատակարարէ մեզ, տեսանելով նախ զձերդ մեծանձնութիւն արժանաւորապէս վարձատրեալ յօգոստափառ ինքնակալէն ամենայն Ռուսաց, եւ նոյնպիսի մեծարանօք պատուեալ յօգոստափառ սուլթանէ մերմէ, որ ամենամեծ պատիւ եւ միանգամայն պարծանք է ազգի մերում, որով կարեմք պարծիլ այսօր եւ մեծարիլ յօտար ազգաց: Եւ երկրորդ՝ մեծ է ուրախութիւն մեր տեսանելով զհաւաստիս բերկրութեանց Ռուսիաբանկ մերագնեայց, զոր զգան յանձինս՝ տեսանելով զընտրութիւն նորին վեհափառութեան Մատթէոսի սրբազան կաթողիկոս, բարձրացեալ ՚ի գահ հայրապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ յառաքելական աթոռ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի, եւ համաձայնութիւն նոցին յայս աստուածապարգեւ շնորհ՝ հաւաստիք իմն են ազգի համաշխարհական քաղաքակրթութեան սիրաբորբոք միաբանութեան, որ անհրաժեշտ կերպիւ կարեւոր է ո եւ իցէ ընկեթութեան, որ ցանկայ մտանել ընդ լուսաւոր նորին պողոտայ:

“Ուրեմն իրաւունս ունիմք յուսալ մխիթարութիւն եւ ըզգալ ուրախութիւն տէր զօրապետ, տեսանելով զօգոստափառ ինքնակալացն ամենայն Ռուսաց եւ Տաճկաստանի զչնաշխարհիկ համարումնն, զոր ունին առ ազգ մեր, եւ զոր յայսմ առթի փառաւորագոյն կերպիւ յայտնեցին մեզ. որոց եւ բարեկամական յարաբերութիւնքն միջոց իմն են յառաջադիմութեան ազգի մերում:

“Ազգ մեր ՚ի վաղ ժամանակաց հետէ առատապէս վայելեալ է զհայրագորով խնամս օգոստափառ ինքնակալացս այսոցիկ փոխարէն իւրոց հաւատարիմ ծառայութեանցն. եւ որովհետեւ վեհափառութիւնք նոցին պատուիրեն մեզ մտանել ՚ի շաւիղ լուսաւորութեան այժմեան դարուս, յոր զառաջին կարեւոր քայլափոխն արարեալ է ազգ մեր, եւ խոստանայ կատարել զքաղցր պարտաւորութիւնսն զայնոսիկ, խնդրեմք ՚ի ձէնջ տէր զՂրապետ, զի լինիջիք թարգման յուսալից զգացմանցս այսոցիկ առ օգոստափառ ինքնակալսն, որոց կայսերական անգին կենաց եւ յարատեւ բարեկամութեանն եմք ցանկացողք եւ աղօթարարք”:

Պատասխանի ետ Մելիքով զօրապետն եւ ասէ՝ Ամիրայք, յորմէ հետէ ազգս Հայոց վայելէ զպաշտպանութիւն Օսմանեան եւ Ռուսիոյ մեծագոր տէրութեանց, գովելի հաւատարմութեամբ իւրով արժանի եղեալ է վստահութեան եւ համակրութեան նոցա, ջանասցուք ուրեմն պահել միշտ եւ առաւելուլ զայս պարծանք ազգիս, հաւատարիմ կալով իսպառ՝ դուք ձերում թագաւորի եւ մեք մերումն. եւ այսպէս կատարելով զպարտաւորութիւն մեր՝ յառաջադիմեսցուք ընդ շաւիղ քաղաքակրթութեան դարուս”:

Յետ ցնծալից այցելութեանս եւ բազմապատիկ մեծարանաց՝ զոր արար ազգասէր գերդաստանն Եռսուֆեանց ՚ի շնորհս սրբազան կաթողիկոսին եւ ՚ի պարծանս ազգիս, վերադարձաւ զօրապետն մեծաւ գոհանակութեամբ ՚ի Բերա ընդ որոց եկեալն էր:

Եւ ՚ի յաջորդ աւուրն հրաւիրանօք Բ. Դրան գնաց զօրապետն ընդ դեսպանին Ռուսաց ՚ի պալատն արքայի, եւ գտեալ սիրալիր ընդունելութիւն եւ մեծամեծ յարգանս, գնաց անտի ՚ի Բ. Դուռն, եւ արար այցելութիւն մեծի եպարգոսին՝ եւ արտաքին գործոց տեսուչ Ֆուատ փաշային՝ եւ այլոց երեւելի պաշտօնակալաց:

Բազմապատիկ եղեն կոչունք եւ խնճոյք եւ հրաւէրք վսեմափայլ զօրապետին ՚ի Բերա, յՕրթագիւղ, եւ ՚ի Պէշիկթաշ, բայց գերազանցեաց քան զամենեսին հրաւէրն ՚ի Բերա յօթեւանին՝ որ կոչէր Օթէլ տը պիզանս, զոր արարին ուսումնականք ազգիս ՚ի պատիւ նորին վսեմութեանն, ուր բազում ճառք խօսեցան համառօտ ձեռովք, եւ եղեն փոխադարձ բարեմաղթութիւնք:

Մեծահանդէս էր եւ շուք փառաւորութեան Սրբազան կաթողիկոսին ՚ի հրաւէրսն յեկեղեցիս ՚ի մատուցումն սրբոյ Պատարագի եւ ՚ի լուր սքանչելի ատենաբանութեանցն:

Առաքեաց եւ պատրիարքն Յունաց զփոխանորդ իւր հանդերձ երկու եպիսկոպոսօք ՚ի շնորհաւորութիւն առ Սրբազան կաթողիկոս, բերեալ շնորհաւորութիւն ՚ի պատրիարքէն, որք ընկալեալ սիրալիր ընդունելութիւն, վերադարձան ՚ի տեղիս իւրեանց:

Իսկ դեսպանն Անգլիացոց արար ՚ի պալատի իւրում ըզփառաւոր հացկերոյթ ՚ի պատիւ սրբազան կաթողիկոսին եւ Մելիքով զօրապետին, ընդ որս սեղանակից էին եւ դեսպանքն Ռուսաց եւ Պէլճիքայի՝ եւ Պօղոս պէյ Տատեան:

Յաւուրսն յայնոսիկ բարձրապատիւ Դուքսն Կոստանդիանոս եղբայր կայսերն Ռուսաց ընտանեօք իւրովք գնացեալ յուխտ ՚ի սուրբ Երուսաղէմ, արար այցելութիւն սրբոց Յակոբեանց գե-

րահուչակ ուխտին Հայոց. եւ սիրալիր ընդունելութիւն գտեալ 'ի Յովհաննէս պատրիարքէն հանդերձ ոսկի Խաչիւ ընծայիւք սուրբ Կենաց փայտին եւ սրբոց մասանց, վերադարձաւ մեծաւ շնորհակալութեամբ 'ի նաւ իւր. եւ յետ հնգետասան աւուրց եկն 'ի Կոստանդնուպօլիս, որում պատրաստեալ էր արքայ զապարանսն է՝ միրկիւնի:

Գնացին անդր յայցելութիւն նախարարք տէրութեան, դեսպանք Եւրոպացոց, եւ պատրիարքունք Յունաց եւ Հայոց: Իսկ սրբազան կաթողիկոսն պատրաստեալ զփոքր Խաչ մի համակ ոսկի մարգարտագարդ, ագուցեալ 'ի նմա զմասն սրբոյ Կենաց փայտին եւ սրբոյն Ստեփանոսի նախավկային, գնաց առ բարձրապատիւ Դուքսն ընկերութեամբ Գէորգայ պատրիարքին եւ Պօղոսի Տատեան. զորս ներկայացոյց Մելիքով զօրապետն առաջի նորին վսեմութեան, որ բացաւ գլխով ընդ առաջ ելեալ համբուրեաց զաջ սրբազան կաթողիկոսին. եւ նա օրհնեաց զնա, համբուրեաց զճակատ նորա, եւ ետ նմա զսրբազան նուէրն տանիլ եւ ալիսել զպարանոցէ որդեկին իւրոյ: Եւ բարձրապատիւ Դուքսն մեծարեալ յոյժ զսրբազան կաթողիկոսն, խօսեցաւ ընդ նմա սպասել աւուրս ինչ, եւ ընդ իւր մեկնիլ 'ի Կոստանդնուպօլսոյ 'ի միում աւուր:

Եւ 'ի նմին աւուր հեռագրով հրաման առաքեաց 'ի Նիքոյայէվ նաւատեղին յերկիրն Ղրիմու, առաքեալ զչոգենաւ մի մեծ պատրաստեալ ամենայն զարդուք 'ի Կոստանդնուպօլիս առ 'ի տանել զսրբազան կաթողիկոսն 'ի Բօթի:

Եւ ըստ հրամանին յետ երից աւուրց եկն պատուական եւ գեղեցիկ շոգենաւ մի 'ի Կոստանդնուպօլիս, եւ ըստ ազդարարութեան դեսպանատանն Ռուսաց եկն եւ խարսխեաց առաջի Օրթագիւղի:

Լուեալ արքայ, եթէ բարձրապատիւ Դուքսն ունի մեկնիլ 'ի Կոստանդնուպօլսոյ յերկիր իւր, հրաւիրեաց զնա 'ի Կէօքսուլ յամարանոցն 'ի հացկերոյթ, յոր զվերջի հրաժարական ողջոյնն ետ արքայի Դուքսն մեծ, ծանուցանելով միանգամայն, եթէ եւ կաթողիկոսն Հայոց ունի 'ի վաղիւն մտանել 'ի շոգենաւ երթալ 'ի սուրբ Էջմիածին:

Եւ 'ի յաջորդ աւուր առաւօտեան հրաւիրեաց արքայ ըզՍրբազան կաթողիկոսն 'ի պալատտ իւր տալ զվերջին հրաժարական ողջոյնն, եւ սիրալիր ընդունելութիւն եւ բազում մեծարանս ցու-

ցեալ նմա, դարձոյց շքեղ փառօք եւ պատուով յՕրթագիւղ. ուր եղեւ հանդէս մեծ ՚ի ծովեզերայ յարկի ճանիկ ամիրայի, յորում ժողովեալք էին պատրիարք, եպիսկոպոսք, վարդապետք, եւ քահանայք, իշխանք մեծամեծք, եւ բազմաթիւ հասարակութիւն Հայոց ընդ ծով եւ ընդ ցամաք. որոց ամենեցուն տուեալ սրբազան հայրապետն զսիրալիր ողջոյն իւր եւ զօրհնութիւն, եմուտ ՚ի շոգենաւ ընդ Մելիքով զօրապետին յիններորդ ժամու երկուշաբթի աւուր ՚ի յունիսի 2, 1859:

Ի նմին պատու եւ բարձրապատիւ դուքսն եմուտ ՚ի շոգենաւ իւր, եւ ՚ի միասին ելաք ՚ի ճանապարհ ընդ նեղուցն Վոսբորի: Ուղեկից եղեն ընդ սրբազան հայրապետին եւ Սարգիս եպիսկոպոս Անդրիանուպօլսոյ, Սարգիս վարդապետ Թէոդորեան, Աբրահամ վարդապետ Պիւլպիւլեան, եւ այլք: Ընդ նոսին էի եւ ես, որ գոլով ատենադպիր Նորուն վեհափառութեան եւ դասատու նորին ՚ի քառասուն եւ հինգ ամաց հետէ, ահանատես եմ այս ամենայն անցից, զորս հաւատարմաբար ՚ի գիր անցուցի մեկին եւ պարզ ոճիւ առ դիւրմաց ինելոյ ամենեցուն:

## ԳԼՈՒԽ ԿԷ.

Յաղագս Հանդիսից, որք դեն 'ի ճանապարհորդութեան սրբազան կաթողիկոսին մինչեւ յէջմիածին, եւ փառաւոր օծման նորա, եւ գործոց նորա, եւ պատրիարքութեան Սարգսի:

(1859) ՅԵՏ երից ակուրց հասաք 'ի Բօթի, ուր ընդ առաջ եկին Սարգիս արքեպիսկոպոսն Զալալեան առաջնորդն Վրաստանու եւ Իմէրէթի, եւ Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի առաջնորդն Պեսարապիոյ եւ Ղրիմու. եւ 'ի յաջորդ ակուրն մտեալ 'ի փոքր շոգենաւ, նաւարկեցաք ընդ գետն Ռէյօն ժամս իբր երկոտասան, եւ ելաք 'ի Մառան. ուր նստեալ 'ի պատրաստեալ կառան, ուղեւորեցաք 'ի Գուլթայիս, 'ի Սուրամ, 'ի Կօրի, 'ի Մծխիթայ, եւ հասաք 'ի Տփլիս:

Յայս ամենայն տեղիս մեծահանդէս շքով առաջ ելին բնակիչք եւ զօրականք. բայց գերագանցեաց քան զամենեսին հանդէսն՝ որ եղեւ 'ի Տփլիս, մինչեւ ըստ պատմելոյ իսկ քաղաքացեացն աւելի քան զքառասուն հազար ոգիս յամենայն ազգաց հեծեալ եւ հետեւակ թեւակոխէին յընթացս ճանապարհին, եւ փոշին որ ելանէր յերկրէ, ծածկէր գերեսս երկնից. եւ արք եւ կանայք լցեալ էին զճանապարհն, ընդ որ ունէր անցանել հայրապետն մինչև յեկեղեցին մեծ անուանեալ սուրբ էջմիածին. յոր իջեալ հայրապետն ազգ ու ատենաբանութեամբ իմն օրհնեաց զկայսրն եւ զկայսրուհին եւ զորդիս եւ զամենայն ազգատոհմ նորին, եւ զզօրապետս եւ զամենայն բնակիչս Ռուսիոյ:

Օրհնեաց եւ զազգ մեր գեկեղեցականս եւ զաշխարհականս մեծաւ բարեմաղթութեամբք, եւ ելեալ ապա 'ի վեհարանն հանգստացաւ: Ի գիշերին եղեւ լուսավառութիւն մեծ ընդ քաղաքն ողջոյն. եւ 'ի յաջորդ ակուրն գնացեալ յայցելութիւն 'ի դուռն Փոխարքային՝ ընկալաւ զչքանչանն համակ աղամանդեայ եւ ականակուռ՝ քառասուն հազար Ֆռանքաց արժողութեամբ, զոր առաքեալ էր օգոստոսփառ Կայսրն ընդ բարձր հրովարտակի կաթողիկոսական վերամբարձ իշխանութեանն, զոր ընթերցեալ 'ի մեծի սրահին, յորում կանգնեալ էին դասք դասք ճէկնէնալաց եւ պաշտօնէի, կախեաց զնշանն իւրով իսկ ձեռամբ տեղապահն Փոխարքային, զոր ընկալեալ հայրապետն, յայտնեաց զգոհունակութիւն

իւր մեծ առ կայսրն ամենայն բարեմաղթութեամբ եւ օրհնութեամբ, եւ վերադարձաւ 'ի վեհարանն:

Եւ 'ի յաջորդ ակուր եկն տեղապահ Փոխարքային յայցելութիւն հայրապետին, եւ ապա զակուրս տասն յայգուէ մինչեւ ցերեկոյ անպակաս էր յայցելութիւնն կարգ կարգ ճէնէռաց, պաշտօնակալաց, ասպետաց, աստիճանակորաց, վաճառականաց եւ արհեստակորաց:

Սոյն օրինակ եղեւ փառակոր հանդէսս մեծ 'ի Տփլիս յետ չորեքտասան ակուրց յակուր ելանելոյ հայրապետին 'ի Տփլիսէ ճանապարհորդել յէջմիածին, եւ ուր եւ հասաւ ընդ ամենայն գիւղս եւ իջեւանս եգիտ ընդունելութիւն մեծ եւ պատիւ բազում մինչեւ յերեւան քաղաք, ուր կուսակալն զօրականօք եւ դէնպետն Պարսից իւրովք օրինականօք, եւ ծերունի տեղապահն Ղուկաս արքեպիսկոպոս վարդապետօք եւ քահանայիւք եւ բազմութեամբ բնակչաց Հայոց՝ եկին ընդ առաջ մինչեւ 'ի Քանաքեռ գիւղ, եւ անցեալք ընդ առաջ՝ մտին յերեւան եւ տարան զհայրապետն 'ի վեհարան եկեղեցոյն, եւ մեկնեցան 'ի տեղիս իւրեանց:

Ի գիշերին եղեւ լուսավառութիւն մեծ, եւ 'ի յաջորդ ակուրն հացկերոյթ մեծածախ պատրաստեաց կուսակալն 'ի պատիւ հայրապետին, եւ յերրորդում ակուր ելեալ յերեւանայ եկաք յէջմիածին. եւ 'ի գիշերին եղեւ լուսավառութիւն 'ի չորեսին վանորայսն մինչեւ ցառաւօտ: Ի յաջորդ ակուրն ընկալաւ զհամբոյր հնազանդութեան ութ եպիսկոպոսաց, քսան եւ չորս վարդապետաց եւ քսան սարկաւազաց. որոց ամենեցուն տուեալ զօրհնութիւն իւր սուրբ, արձակեաց 'ի տեղիս իւրեանց:

Յակուր շաբաթու նաւակատեաց Վարդավառին էջ հայրապետն յեկեղեցին. եւ յաւարտման Պատարագին եկն եկաց 'ի սուրբ Իջման տեղին, եւ ընթերցաւ 'ի լուր ամենեցուն գերզմնաթողթն հաւատարիմ ծառայութեան կայսեր. եւ ելեալք 'ի թափոր, արարին օրհնութիւնս եւ բարեմաղթութիւնս վասն պահպանութեան կայսեր եւ ընտանեաց նորին, եւ ասացեալ Պահպանիչ, արձակեցաւ ժողովն:

Եւ յակուր շաբաթու նաւակատեաց սուրբ Աստուածածնի եղեւ օծումն վեհափայլ հայրապետին յընդհանրական կաթողիկոսութիւն ամենայն Հայոց՝ եւ 'ի ծայրագոյն պատրիարքութիւն Արարատեան կաթողիկէ եկեղեցոյ Առաքելական գահին լուսոյ



սրբոյ էջմիածնի, հանդէս հրաշալի, գոր չէ մարթ ընդ գրով արկանել:

Ի յաջորդ ակուր հրամայեաց բանալ զպատուհանսն գմբեթի եկեղեցւոյն, որք փակեալք էին յերկիւղէ պատերագմին՝ որ եղեւ 'ի 1853 ամի ընդդէմ դաշնակից տէրութեանց:

Եբաց զուսումնարան Վաղարշապատ գիւղին՝ որ կայր խաբանեալ: Բարեկարգեաց զուսումնարանն էջմիածնի եւ զսեղանատունն միաբանից: Խղճալի էին ընթացք միաբանիցն. կարգեաց նոցա տարեկանս զգգեստս, եւ փայտ եւ ածուխ վասն ձմերան, եւ մոմ, եւ մխիթարեաց զնոսա յոյժ:

Առաքեաց զհայրապետական կոնդակ օրհնութեան իւրոյ յԱնատուր եւ 'ի Րուսիլի. 'ի Կոստանդնուպօլիս եւ 'ի Վալաքիա, 'ի Պեսարապիա, եւ 'ի Պետրբուրգ, 'ի Պարսս եւ 'ի Հնդկիս:

Շնորհեաց եւ արժանաւոր եպիսկոպոսաց զՊանակիս, եւ վարդապետաց եւ քահանայից զԽաչս, եւ ընկալաւ յամենեցուն զգոհութիւնս բարեմաղթութեամբ հանդերձ:

Գրեաց եւ առ վեհափառ կայսրն ամենայն Ռուսաց եւ խնդրեաց վասն սրբազան Սարգսի եպիսկոպոսին՝ որ ուղեկիցն եղեւ 'ի Կոստանդնուպօլսոյ մինչեւ յէջմիածին, շնորհել զառաջին կարգի պատուանշանն ասպետութեան սրբոյն Աննայի. նոյնպէս եւ աշակերտի նորուն Մեսրովպ վարդապետի՝ զերկրորդ կարգի նշանն սրբոյն Աննայի: Ընկալեալ կայսրն զխնդիր սրբազան հայրապետին՝ առաքեաց յետ միոյ ամի զպատուանշանսն 'ի Կոստանդնուպօլիս առ դեսպան իւր, որ անձամբ գնացեալ մատոյց նորին սրբազանութեանն 'ի դիմաց կայսերն եւ հայրապետին:

Յետ վեցից ամսոց հիւանդացաւ սրբազան կաթողիկոսն, եւ սկսաւ օր քան զօր տկարանալ. տենդ առօրեայ եւ բորբոք թանջից տառապեցուցանէր զնա յոյժ, եւ ոչ գտանէր դեղ եւ դարման 'ի բժշկացն Ռուսիոյ. խնդրեաց հրաման 'ի կայսերէն օգափոխութեան աղագաւ գնալ 'ի Կոստանդնուպօլիս, եւ վերադառնալ յետ չորից ամսոց. բայց ոչ ետ հրաման կայսրն ցուցեալ նմա զԱղեքսանդրուբօլ, զՏփլիս, զՊեսարապիա, եւ զամենայն սահմանս Ռուսիոյ. զի յոր արտաքոյ սահմանաց կայսերութեան քայլ մի ոտին մի անցանիցէ:

Ընդ այս վշտացաւ մեծապէս կաթողիկոսն, եւ սկսաւ ողբալ զծերութիւն իւր. հեռացոյց յիւրմէ զբարեկամս իւր, եւ ոչ կամէր լսել յուճեքէ բանս մխիթարութեան, այլ առանձնացեալ 'ի սենեկի

իւրում՝ զօր ամենայն սկսաւ պարապիլ յընթերցանութիւնս եւ 'ի մատենագրութիւնս, զորս եւ տպագրել ետ 'ի Տփխիս. եւ զայս վիճակ ցաւալի հեծութեամբ ոչինչ իմիք այնպէս ցանկայ որպէս մահու. եւ այսպէս կայր անմխիթար 'ի կառավարութեան իւրում, զամենայն տնօրէնութիւն եւ զհոգ յանձն արարեալ սուրբ Սիւնհոգին:

(1860) Ի սմին ամի Գէորգ պատրիարք տաղտկացեալ 'ի ցաւալի երկպառակութեանց ազգիս, հրաժարեցաւ 'ի պաշտօնէ պատրիարքութեանն յոչ կամաց. եւ յաջորդեաց 'ի տեղի նորին Սարգիս եպիսկոպոս Անդրիանուպօլսեցի ազգային ընտրութեամբ. իսկ Գէորգ պատրիարք ընկալեալ 'ի տէրութենէն զամսական երկու հազար եւ հինգ հարիւր դահեկանաց, առանձնացաւ ժամանակս ինչ 'ի տան միում 'ի Րումէլի Հիսար, եւ ապա գնաց 'ի նախկին վիճակ առաջնորդութեան իւրոյ 'ի Պրուսա:

(1860) Մեռաւ 'ի սմին ժամանակի Հայ բողոքական ոմն Միրիքէլամ Կարապետ անուն, զորոյ զմարմինն կամէին բողոքականք թաղել 'ի գերեզմանատանն Հայոց յէտիրնէգափուսի, բայց Հայ ժողովուրդք գիտելով յառաջնմէ զհայհոյիչ բերան նորա՝ որ 'ի կենդանութեան իւրում հայհոյէր. զօր ամենայն զեկեղեցին եւ զազգն Հայոց կռատունս եւ կռապաշտս կոչելով եւ ծաղր առնելով, եւ ասէր զանձնէ իւրմէ լինել առաքեալ Քրիստոսի, եւ թէ տեսեալ իցէ զՔրիստոս եւ ձեռնադրեալ 'ի նմանէ 'ի քարոզութիւն Աւետարանին հանգոյն Պօղոսի, եւ այլ եւս բանս դժոխալուրս, որոց ոչ կարելով տանել ժողովրդականք Հայոց՝ ամբոխ մեծ յարուցին եւ ոչ թոյլ ետուն թաղել 'ի գերեզմանատան իւրեանց, լաւ համարեալ զմեռանիլ 'ի պարծանս ազգին, քան ընդունիլ զհայհոյիչն Տիրամօր կուսին 'ի սրբավայր իւրեանց:

Եւ 'ի սաստկանալ խռովութեանն՝ դեսպանք Անգլիացւոց եւ Ամերիկացւոց միջամուխ լեալք 'ի պաշտպանութիւն բողոքականաց՝ առաքեցին զառաջին թարգմանս իւրեանց 'ի պատրիարքարանն Հայոց, եւ մեծաւ գանգատանօք խնդրեցին 'ի պատրիարքէն թոյլ տալ թաղել զմեռեալն 'ի գերեզմանատանն Հայոց:

Բայց Սարգիս պատրիարք պատճառելով զազմուկ ժողովրդեան իւրում՝ ոչ կարացց ընդունել զխնդիր նոցա, եւ գուշակելով զսաստկանալ կռուոյն 'ի վերջին աստիճան, ընտրեաց զմահ քան զկեանս 'ի փառս սուրբ եկեղեցւոյ եւ 'ի պարծանս ազգիս:

Բողոք կալան յայնժամ դեսպանք 'ի Բ. Դուռն. եւ սպարապետն մեծ Րիզա փաշա՝ եւ նախարարն ոստիկանաց Մէհմէտ փաշա բազմաթիւ զօրօք գնացին 'ի գերեզմանատունն. գնաց անդ եւ Սարգիս պատրիարք 'ի պաշտպանութիւն ազգին, եւ իւրով խոհական եւ քաղցր բնաւորութեամբն ցածոյց զսրտմտութիւն սպարապետին՝ որ սպառնայր հրացանիւ գնտակաց ցրուել զամբոխն Հայոց. եւ յետ բազում վիճաբանութեանց կնքեաց զխօսս իւր Սարգիս պատրիարք առ այս բան. թէ լաւ է մեզ մեռանիլ վասն օրինաց մերոց, քան տեսանել զսրբավայրս մեր պղծեալ եւ ապականեալ յայսպիսի հայհոյիչ թշնամեաց եկեղեցւոյ մերոյ:

Յայնժամ տեսեալ սպարապետն, թէ վասն միոյ մեռելոյ Հազարաւոր անձինք պատրաստեալ են զոհ լինել 'ի պաշտպանութիւն օրինաց իւրեանց, խորհեցաւ ընդ Մէհմէտ փաշային, եւ որոշեցին զանկիւն ինչ արտաքոյ սահմանի գերեզմանատանն Հայոց ընդ մէջ ճանապարհին, եւ անդ ետուն թաղել զժահահոտեալ մեռեալն, որ ընդ բերանն եւ ընդ ոնգունսն որդնալից եղեալ էր յերից աւուրց հետէ. եւ այսպէս վերջացաւ կռիւն:

Լուեալ զայս ամենայն արքայի՝ հրամայեաց որոշ տեղի ցուցանել բողոքականաց թաղել զմեռեալս իւրեանց եթէ 'ի Կոստանդնուպօլիս եւ եթէ այլուր, եւ տուաւ նոցա տեղի յարքունուստ 'ի Պէյօղլու:

(1860) Լեռնականք Լիբանանու լեռանց՝ որք կոչին Տիւրգիք սերեալք 'ի նախկին բնակչացն Տիւրոսի եւ յեղաշրջեալք 'ի Մահմէտական օրէնս, հանապազ գժտութիւն ունին ընդ Մարօնի կոչեցեալ Քրիստոնէից դրացեաց իւրեանց, որք գուցէ Սիդոնացիքն իցեն հատուածեալք 'ի նոցանէ յաղագս Քրիստոնէութեան: Սոքա 'ի սմին ամի յարձակեցան 'ի քաղաքն Զահլէ, սպանին զվեց հարիւր ոգիս 'ի Քրիստոնեայ Մարօնեայց, եւ անտի սկսան յարձակիլ 'ի Տէյրէլգամէր. յարձակեցան եւ 'ի Հաշպէյա, 'ի Ռաշէլա, եւ 'ի յայնոսիկ կողմանս, զհինգ հարիւր յիսուն գիւղս յաւարի առեալ յաճին դարձուցին, եւ աւելի քան զտասն հազար անձինս սպանին չարաչար:

Ի սոսա հայեցեալ եւ Մահմէտական բնակիչք Դամասկոսի սկսան եւ նոքա 'ի սուր անցուցանել զՔրիստոնեայ բնակիչս քաղաքին հինգ հազարի չափ, յորս էին ութ Փրանչիսկեան կրօնաւորք, երեսուն քահանայք, երկու Հռովմէական եպիսկոպոսք, եւ մի Յոյն եպիսկոպոս: Այրեցին նաեւ զհիւպատոսարանս Ռուսիոյ,

Բրուսիոյ, Հոլանտայի, Պէլճիքայի, եւ Հելլենացւոց, եւս եւ զբոլոր վանորայս եւ գեկեղեցիս եւ զառաջնորդարանս: Եւ երկու հազար Քրիստոնեայք փախուցեալք ապաստանեցան 'ի տուն ձէգայիրցի հռչակաւոր Ապտ իւլ Գատիր Էմին իշխանին, զորս պաշտպանեաց մարդասիրական գլխով եւ մխիթարութեամբ:

Լու եղեւ այս 'ի Կոստանդնուպօլիս յականջս տէրութեան, իսկոյն հրամանաւ արքայի առաքեցաւ 'ի վերայ նոցա արտաքին գործոց տեսուչ Ֆուատ փաշա փսան եւ հինգ հազար կայսերական զօրօք երթալ յաղթահարել զապստամբան զայնոսիկ, վրէժխնդիր լինել չարագործաց, եւ հաստատել զբարեկարգութիւն արխարհին, որ ծփայր իբրեւ ծով ալէկոծեալ:

Եհաս 'ի Դամասկոս Ֆուատ փաշա, եւ նախ զքաղաքապետն Ահմէտ փաշա եւ զգորապետն Խուրշիտ փաշա, եւ զերկոտասան պաշտօնակալսն, եւ զհարիւր քսան եւ մի 'ի պահապան զօրաց քաղաքին, ետուն հրացանից հազարաւոր գնտակաց իբրեւ զանձրեւ տեղացեալք 'ի վերայ նոցա ըստ օրինի զինուորական կարգաց:

Յետ նոցա զեղեռնագործ պաստամբան 'ի քաղաքացեաց ամբարձ 'ի կախաղան մահու. եւ տուգանս մեծամեծս ետ 'ի վերայ բնակչաց Դամասկոսի Մահմէտականաց՝ վճարել զբոլոր ծախս շինութեան հրկիզեալ տանց Քրիստոնէից, եւ եկեղեցեաց, եւ վանորէից, եւ զգողացեալ աւարսն զամենայն հատուցանել ըստ նոցուն հաշուի:

Յայսմ միջոցի եւ ութ հազար զօրք Գաղղիացւոց եւ չորս հազարք Անգլիացւոց եկին 'ի Բրուտոն 'ի պաշտպանութիւն Օսմանեան բանակին, եւ անտի յարձակեցան 'ի վերայ լեռնականացն Լիբանանու, էր՝ զորս սպանին, եւ էր՝ զորս փախուցին 'ի մեծ անապատն, եւ սասնեցողին զաշխարհն ամենայն մինչեւ նորոգ կարգադրութեամբ պահանջեցին յՕսմանեան տէրութենէ օրինադրել եւ կարգել 'ի վերայ նոցա կուսակալս Հայագգիս Հոովմէադաւանս ամենայն իշխանութեամբ, զոր ունին Եղուղեան փաշայք Օսմանեան. եւ ընկալաւ արքայ զպահանջումն նոցա եւ հաստատեաց, եւ առաջին փաշա կամ կուսակալ ընտրեցաւ Անտոն Կարապետ Տավուտեան 'ի Հոովմէադաւան Հայոց, եւ գրեցաւ 'ի հրովարտակին Տավուտ փաշա, եւ առաքեցաւ պատուով 'ի պաշտօն իւր:

Աստանօր արժան համարիմ գեկուցանել, զի որպէս 'ի Հոովմէական Հայց, նոյնպէս եւ 'ի մերագնեայս էր տեսանել օր քան զօր բազմանալ պաշտօնաւորաց ազգիս թէ 'ի քարտուղարութեան արտաքին գործոց ղիւանատան Բ. Դրան, եւ թէ յայլ եւ այլ վարչական մասունս տէրութեան, զորոց մի առ մի թուուումն այլոց պատմաբանից որ գինի իմ գալոց են, թողում առնել:

Իսկ արքունի վառօղապետութիւնն՝ Տատեան երկոցուն գերդաստանացն, Յովհաննէս պէյի Տատեան, եւ Պօղոս պէյի Տատեան սեփականեալ գոլով որպէս նախնեաց սոցա, նոյնպէս եւ որդւոց սոցա, որք ամենայն յաջողութեամբ վարեն զայս պաշտօն ցարդ:

Նոյնպէս եւ ճարտարապետութիւնն Պալեան գերդաստանին սեփականեալ, Կարապետ պէյի Պալեան, եւ որւոց սորա, յայտնաբարբառ քարոզեն արքունի ճարտարարուեստ նորոգ շինութիւնք, պաալատք մզկիթք, եւ այլք զյաջողակութիւն սոցա յարուեստս եւ զհաւատարիմ ծառայութիւն առ Վեհափառ Սուլթանս. մանաւանդ անուանի գտաւ 'ի ճարտարապետութեան որդի Կարապետ պէյի Նիկողոս աղա, որ վաղ կնքեաց զընթացս կենաց իւրոց 'ի ցաւ գերդաստանին եւ ազգին, այլ յաջորդեցին նմա եւ միւս որդիք Կարապետ պէյի, Սարգիս պէյ եւ Յակոբիկ պէյ, որ գերագանցեալ յարուեստս, գնոյն իսկ Եւրոպացի ճարտարարուեստս, եւ զՕգոստափառ հիւրս, որք 'ի ժամանակս ժամանակս յայց ելանեն Սուլթանին, 'ի զարմացումն գրաւեալ են: Այս յաջողականութիւնք սոցա ոչ սակաւ պատիւ եւ պարծանս յաճախեն ազգիս. եւ մանաւանդ բազում Հայ արուեստաւորաց ասպարէզ կարդան յառաջադիմութեան եւ զարգացման, եւ բազմաթիւ գործաւորաց իսկ աւուր պարէնս հայթայթելոյ:

Այսպէս եւ յատաղձագործութեան անուանի եղեւ յոյժ Քէմհաճեան գերդաստանն, Գալուստ աղա տօղրամաճիպաշի, որ առաջինն եղեւ 'ի կայսերութեանն Օսմանեան հաստատելով գործարան մի մեծ (Ֆապրիքա) 'ի Պէշիքթաշ, բազմադիմի տառապանաց եւ ղժողարութեանց յաղթահարեալ, եւ բազմաթիւ Հայ արուեստաւորաց ծնող եղեալ. մանաւանդ որդի նորին Որդիք էֆէնտի յոյժ անուանի եղեւ, մինչեւ հայթայթել զամենայն ինչ որ 'ի զարգ կայսերական պալատանց եւ 'ի գործածութիւն կայսեր եւ կայսերագանց, ազգի ազգի կերտուածովք եւ նորագիւտ յօրինուածովք, եւ ոչ այլ եւս պէտս ունել Եւրոպական կահուց եւ կարասեաց:

Այս յառաջադիմութիւնն Պալեան եւ Քէմհաճեան գերդաստանաց որչափ պարծանք եւ պատիւ է ազգիս, նոյնչափ եւ բարեխնամ կառավարութեան մերում, զի աստի յայտ է թէ արուեստք եւ ճարտարութիւնք օր աւուր զարգանան 'ի շնորհս նորա, եւ գամքան զգամ պակասին հարկաւորութիւնք գիմելոյ յԵւրոպական ճարտարութիւնս եւ արուեստս:

## ԳԼՈՒԽ ԿԸ.

*Յարգազ հաստատութեան Ազգային Սահմանադրութեան Հայոց:*

(1860) **Յ**աւուրս պատրիարքութեան Մատթէոսի հաստատեցան ազգային կրկին ժողովք, Հոգեւոր եւ Գերագոյն, որպէս պատմեցաք անդր 'ի վեր. այլ ընտրութիւն սոցա ոչ օրինաւոր էր, որպէս արժան է լինել ժողովրդական կառավարութեանց. վասնորոյ խոհական անձինք կամելով բառնալ զանպատեհ ընթացս զայս եւ առ 'ի բարեկարգել զազգային իշխանութիւնս ազգային շնորհեալս յառատագութ կայսերաց Օսմանեան տէրութեան, եւ զձեւ ազգային իշխանութեանն, որ 'ի սկզբանէ հետէ ժողովրդախառն է, սահմանադրել եւ կանոնաւորել:

Յայս մեծ գործ վաստակեցան ոչ սակաւ Օտեան Գրիգոր, Ռուսինեան, Սէրվիչէն, Ասլանեան Ստեփան, Բարունակ Ֆէրուհ խան, Աղաթօն Մկրտիչ, Իւթիւճեան Կարապետ, Ալթուն Տիւրրի, Մինասեան Մինաս, եւայլք:

Աստ զնեմք զօրինակ Սահմանադրութեանն որ 'ի 24 մայիսի 1860 միաձայն հաւանութեամբ ընկալաւ ազգային ընդհանուր ժողովն եւ ստորագրութեամբք վաւերացոյց, մեք կնքեմք զընթացս պատմութեանս, յանձնելով պատմասէր երիտասարդաց յարատեւել կամ զվերջին մասանց պատմութեանս, զորովք մեք համառօտիւ անցեալ եմք, կամ զանց արարեալ, լիուլի տեղեկութիւնս տալ:

ԱԶԳԱՅԻՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔ

Ա.

Ազգին ամեն մէկ անհատը առ ազգը պարտաւորութիւններ ունի. ազգն ա՛ր իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի ազգէն եւ ազգն անհատներէն:

Այս պարտիքներն որոշող եւ այս իրաւունքները հաստատող իշխանութիւնը ազգային վարչութիւն կը կոչվի, որում Օսմանեան տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը:

Բ.

Ազգային վարչութիւնը հիմնեալ է իւրեանց ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունք է: Ամենայն տնօրէնութիւն ազգային որ չէ համաձայն սոյն սրբաբանց, ոչ արդար է եւ ոչ օրինաւոր:

Գ.

Ազգն ազգային վարչութիւնը փոխադարձ պարտիքներով կապված է իրարու հետ:

Դ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողութեան չափովը, ազգին խնդրած ծառայութեանցը յանձնառու ըլ-



լալ, եւ ազգային վարչութեան ըրած տնօրէնութեանցը ազգասիրարար հնազանդիլ:

Ե.

Ազգային վարչութեան պարտականութիւնն է՝ ազգին բարոյական, մտաւորական եւ նիւթական պիտոյիցը հոգ տանիլ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն ու ականդութիւնները անխախտ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը ազգին ամեն աստիճանի թէ մանչ եւ թէ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել, ազգին հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել եւ ծախքերը իմաստութեամբ տնտեսել, ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել եւ ապագան անդորրել, կարօտելոց խնամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ խաղաղել, եւ վերջապէս ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չը խնայել:

Զ.

Ահա այս ամեն պարտիքները կատարելու եւ իրաւունքները ապահովելու դիտմամբ է որ ազգը հետեւեալ կերպով կը սահմանադրէ զազգային գործոց վարչութիւնը:

## ԳԼՈՒԽ Ա.

### ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

#### ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

1. Բարձրագույն Դրան շնորհած արտօնութեանը համեմատ՝ Ազգային վարչութիւնը երեսփոխանական է: Ազգը ընդհանուր ժողովով մը կը ներկայանայ եւ անոր միջնորդութեամբ կը վարէ զազգային իշխանութիւնը: Ընդհանուր ժողովը՝ ազգին ընդհանրական գործոց տնօրէնութիւնն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ, Կրօնական գործոց մասը՝ կրօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ Քաղաքական ժողովի մը, իսկ խառն գործոց տնօրէնութիւնը՝ այս երկու ժողովոց առժամանակեայ մէկ տեղ գալովը ձեւացած խառն ժողովին կը յանձնէ:
  2. Ազգային վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանումը բարեկարգութեան առաջին պայման բռնելով, ազգային գործոց մէջ տեսչութիւնն ու մատակարարութիւնը իրարմէ կը գատէ երկու կարգ խորհուրդներու միջոցով: Տեսչութեան համար՝ ազգային գործոց գլխաւոր մասերուն յատկացեալ չորս ազգային խորհուրդ կը հաստատէ, որ են՝ Ուսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Ելմտական խորհուրդ, Դատաստանական խորհուրդ, եւ վաւերագործութիւնն իրեն պահելով՝ այս խորհուրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանը կը յանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնը: Մատակարարութեան համար՝ Պօլսի մէջ թաղական խորհուրդներ կը հաստատէ թողին եկեղեցւոյն անուամբը, եւ ամեն մէկ թաղին տեղական գործոց եւ հաստատութեանց մատակարարութիւնը իր թաղական խորհուրդին կը յանձնէ, ազգային խորհուրդոց տեսչութեանը տակ:
    3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պօլսի պատրիարքն է, եւ կեդրոն՝ Պօլսի պատրիարքարանը:

Ազգային ժողովներն ու խորհուրդները իրենց գլուխ ունելով ազգին պատրիարքը՝ Պօլսի մէջ ազգային վարչութեան կեդրոնական մասը կը կազմեն, որոց իշխանութիւնը բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կը տարածվի:

4. Ազգային կեդրոնական վարչութիւնը Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ կը ներկայանայ գաւառական ժողովներով, որոնք Պօլսէ դուրս ազգային վարչութեան գաւառական մասը կը կազմեն որոյ պաշտօնական գլուխ վիճակին առաջնորդն է, եւ կեդրոն՝ տեղին առաջնորդարանը:

5. Գաւառական վարչութիւնը նոյն փոխադարձ պարտօք կապված է գաւառաբնակ ազգայնոց հետ, ինչպէս կեդրոնական վարչութիւնը ընդհանուր ազգայնաց հետ. եւ իրեն յարացոյց պիտի բռնէ զկեդրոնական վարչութիւնը:

6. Գաւառական վարչութիւնը առաջնորդ անիստ քաղաքներու մէջ կրօնական եւ քաղաքական ժողովներ կը հաստատէ եւ անոնց կը յանձնէ գաւառին կրօնական եւ քաղաքական գործոտեսչութիւնը:

Այս ժողովները քաղքին թաղերուն մէջ թաղական խորհուրդներ կը հաստատեն իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ եւ անոնց ձեռքովը կը մատակարարեն տեղական գործերը, նոյն յարաբերութիւններով որով կը վարվին Կեդրոնական ժողովները Պօլսի թաղական խորհրդոց հետ:

Նմանապէս իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ թեմական խորհուրդներ կը հաստատեն, եւ ամեն մէկ թեմին տեղական գործոց եւ հաստատութեանց մատակարարութիւնը իր թեմական խորհրդին կը յանձնէ:

#### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

7. Իւրաքանչիւր ժողով եւ խորհուրդ իր մասին մէջ ձեռնհաս է՝ համարատուութեան պայմանով:

Գաւառական վարչութեան մէջ՝ թաղական ու թեմական խորհուրդները համարատու են Գաւառական ժողովներուն. Գաւառական ժողովները

համարատու են գաւառական Ընդհանուր ժողովներուն. Գաւառական վարչութիւնը Կեդրոնական վարչութեան համարատու է, եւ Առաջնորդը Պատրիարքին:

Կերտնական վարչութեան մէջ՝ Պօլսի թաղական խորհուրդները համարատու են ազգային Տեսուչ խորհուրդներուն ըստ իւրաքանչիւր մասին. Տեսուչ խորհուրդները համարատու են ազգային Քաղաքական ժողովին՝ բացի Դատաստանական խորհուրդէն որ համարատու է խառն ժողովին:

Կրօնական ու Քաղաքական ժողովները եւ Պատրիարքը Ընդհանուր ժողովին համարատու են:

Ընդհանուր ժողովը բարոյապէս պատասխանատու է Ազգին առջեւ:

#### ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Ց. Ազգային վարչութեան՝ ազգին հետ, Արարատեան մայր Աթոռին հետ, Բարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնները սա սկզբանց վրայ հիմնեալ պիտի ըլլան:

Ազգին եւ ազգայնոց հետ՝ միշտ հայրաբար վարվիլ:

Արարատեան մայր Աթոռին հետ՝ աւանդապահ մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեացմէ անտի կապված են իրարու հետ Ազգն ու Աթոռը:

Բ. Դրան հետ՝ թէ Ազգին եւ թէ ազգայնաց կրօնական ու քաղաքական իրաւունքները պահպանելու համար տէրութեան պաշտպանութիւնը խնդրել, եւ Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ Տէրութիւնը:

Սոյն յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է:

#### 1. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

9. Ազգային Ընդհանուր ժողովը կը բաղկանայ 220 ազգային երեսփոխաններէ որոնցմէ 160ը Պօլսի թաղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ, եւ 60ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ:

Ընդհանուր ժողովին մէջ ազգային երեսփոխանաց անդամակից են.

Նախ՝ ազգային կեդրոնական Վարչութեան անդամներէն՝ կրօնական ու Քաղաքական ժողովներուն եւ չորս Տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները:

Այս կարգի անդամոց թիւը իբր 100 է. բայց այս թիւը երեսփոխանաց թիւին վրայ ճշգիւ չը կրնար աւելցվիլ, վասն զի ասոնց մէջ արդէն երեսփոխան ընտրվածներ ալ կրնան գտվիլ:

Երկրորդ՝ Ազգին կամ Տէրութեան ծառայութեանը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք որոնց արժանաւորութիւնը Ազգին կամ Տէրութեան կողմէն վկայեալ կը համարվի, ինչպէս են Եկեղեցական դասէն՝ Պօլսի գտվող եպիսկոպոսները, Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները. ուսումնական դասէն՝ ազգային մատենագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դասատուներ, լրագրապետներ. քաղաքական դասէն՝ վերին պաշտօնաւորաց աստիճանակիցներ, արքունի ժողովոց անդամներ, Բ. Դրան դիւաններուն մէջ տնօրէններ եւ թարգմանապետներ, ազգային կամ արքունի հաստատութեանց մէջ տնօրէններ, ուսումնապետներ. զինւորական դասէն՝ վերին ըսպայից աստիճանակիցներ:

Այս կարգի անդամոց թիւն ալ չը կրնար ճշտվիլ վերոյիշեալ պատճառով. բայց իբր ըսկզբունք՝ այս երկու կարգի անդամոց բովանդակ թիւը երբէք չը պիտի հաւասարի երեսփոխանաց թիւինօ:

10. Ընդհանուր ժողովը էն շատը 400էն աւելի անդամ չը պիտի ունենայ, եւ քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասը այսինքն 111ը գոնէ ներկայ չըլլայ, նիստ չը պիտի կարենայ ընել:

11. Ընդհանուր ժողովին պաշտօնն է՝ Ազգին կողմէն երեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնաւորները ընտրել, Ազգային ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, եւ ազգային ծանր կամ ընդհանրական գործերը վճռաբար տնօրինել:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային Սահմանադրութեան ըսկզբունքները անխախտ պահել եւ անոնց տրամադրութեանցը համեմատ վարվիլ:

12. Ընդհանուր ժողով կը գումարվի.

Նախ՝ կանոնաւորապէս ամեն տարի մարտ ամսին վերջերը ազգային Վարչութեան տարեկան ընդհանուր համարատուութիւ-

նր մտիկ ընելու, ազգային ժողովականաց կէսին ընտրութիւնն ընելու եւ ազգային տարեկան տուրքին տնօրէնութիւնը հաստատելու համար: Սոյն տարեկան նիստին մէջ վարչութեան անդամները՝ տուրքի խնդիրէն զատ՝ միւս խնդիրներուն մէջ խօսք միայն ունին եւ ոչ քուէ:

2. Կաթողիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար:

3. Երուսաղէմայ եւ Պօլսի Պատրիարքաց ընտրութեանը համար:

4. Կրօնական ու Քաղաքական ժողովոց մէջ կամ Պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութեանց համար: Սոյն պարագայից մէջ ալ Վարչութեան անդամները խօսք միայն ունին եւ ոչ քուէ:

5. Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար.

Եւ վերջապէս արտաքոյ կարգի պատահած այնպիսի ծանր խնդիրներու համար զորոնք Ազգային ժողովները Ընդհանուր ժողովով որոշել հարկաւոր դատեն:

13. Ընդհանուր ժողով կը հրաւիրեն, նախ՝ Պատրիարքը՝ Ազգին կողմէն, երկրորդ՝ Ընդհանուր ժողովին ատենապետը՝ սոյն ժողովին դիւանին կողմէն, երրորդ՝ Կրօնական կամ Քաղաքական ժողովին ատենապետները՝ սոյն ժողովոց կողմէն:

#### Բ. ՊԱՏՐԻԱՐԿ

14. Պատրիարքը Ազգային ժողովոց նախագահն է եւ անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

15. Պատրիարքը իրեն եկած ամեն գործ՝ որ ժողովին ձեռնհասութեանը տակ է նէ՝ ժողովին քննութեանն ու որոշմանը պիտի յանձնէ, եւ ազգային որոշմանց մէջ ՚ի պաշտօնական դրութիւնքը անվաւեր պիտի համարվին եթէ ձեռնհաս ժողովին կողմէն ալ կնքեալ կամ ստորագրեալ չըլան. իսկ երբ ըստիպողական գործ մը պատահի որոյ տնօրէնութիւնը չը ներէ սպասել մինչեւ ժողովոց գումարման օրը եւ արտաքոյ կարգի ժողով գումարել կարելի չըլլայ, Պատրիարքը կրնայ ինքնին տնօրինել՝ պատասխանատուութիւնը իր վրայ առնելով, բայց եղելութիւնը կանոնաւոր կերպով միշտ արձանագրել տալով ձեռնհաս ժողովին պէտք է որ իմացնէ առաջիկայ նիստին մէջ զանի վաւերացնել տալու համար:

16. Պատրիարքը իր բացակայութեան ատեն Ազգային ժողովներու մէջ տրված որոշում մը չըստորագրած՝ իրաւունք ունի դիտողութիւն ընելու եւ խնդիրը կրկին քննութեան առնել տալու. իսկ երկրորդ որոշումը ետքը պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը անհամաձայն չը գտնէ:

17. Պատրիարքը իրաւունք ունի Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ չը վարվող ազգային գործակալ մը, այսինքն՝ եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրատան կամ հիւանդանոցի մատակարար մը, իր պաշտօնէն հանելու կամ արգիլելու առաջարկութիւն ընել որում որ անկ է:

18. Պատրիարքը իրաւունք չունի ազգային ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու. բայց երբոր տեսնէ թէ սոյն ժողովները Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը մէջ են, առջի անգամին՝ անոնց ատենապետին հետ կը բանակցի բացատրութիւն ուզելու համար. երկրորդին՝ գրով իմաց կուտայ նոյն ժողովին իր ապօրինաւոր ընթացքը եւ ի կարգ կը հրաւիրէ զանի. իսկ երրորդին՝ Ընդհանուր ժողով կը կոչէ եթէ ամբաստանելին Ազգային ժողովներէն մէկն է, կամ Քաղաքական ժողովին կը դիմէ եթէ խորհուրդներէն մէկն է, եւ պատճառներն իմացնելով ամբաստանեալ ժողովին լուծումը կը պահանջէ:

19. Պատրիարքը ազգային սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ, եւ Պատրիարքարանին ներքին մատակարարութեան պահանջած ծախքը իր վրայ ըլլայ:

#### Գ. ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

20. Կրօնական ժողովը 14 բանիբուն եկեղեցականներէ կը բաղկանայ:

21. Կրօնական ժողովին պաշտօնն է՝ ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնել, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անխախտ եւ անարատ պահել, եկեղեցեաց եւ եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել, քահանայից կացութիւնը լաւցնելու եւ ապագան անդորրելու հոգ տանիլ, արժանաւոր ու

բանիբուն եկեղեցականներ հասցնել, եւ ազգային մէջ ծագած կրօնական վէճերը քննել ու լուծել:

22. Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր խնդիր մը զոր կրօնական ժողովը չը կարենայ լուծել, Ընդհանուր ժողովին բազմական գտնուող եկեղեցականաց հետ համագումար ժողով պիտի կազմէ. եթէ այն համագումար ժողովն ալ իր ձեռնհասութենէն վեր դատէ ըզ խնդիրը, Արարատեան մայր Աթոռին պէտք է դիմէ:

23. Թէ մայրաքաղաքիս եւ թէ գաւառներու մէջ վարդապետի եւ քահանայի ձեռնադրութեան հրամանը կրօնական ժողովէն կը տրվի:

24. Քանի որ եկեղեցւոյ մը ժողովուրդը աւելի քահանայի մը հարկաւորութիւնը չըզգայ եւ Թաղական խորհրդին միջնորդութեամբ չը խնդրէ, նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չի պիտի տրվի:

25. Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները կրօնական ժողովը կ'որոշէ, եւ Պատրիարքը կ'անուանէ:

26. կրօնական ժողովին սրբազան պարտաւորութիւնն է հսկել որ՝ հոգեւոր պաշտօնները ձրի կատարվին եւ հոգեւոր պաշտօնեայք եկեղեցիէն ապրին:

Դ. ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

27. Քաղաքական ժողովը 20 քաղաքագէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

28. Քաղաքական ժողովին պաշտօնն է՝ ազգային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային խորհուրդներուն կողմէն իրեն մատուցված ազգօգուտ առաջարկութիւնները ուշի ուշով քննել եւ կարեւորութիւնը յայտնրվելէն ետքը հաստատել գանոնք եւ անոնց գործադրութեանը արգելքները՝ եթէ կան՝ բառնալու հոգ տանիլ, եւ Ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը ըստ ամենայնի փոյթ ունենալ:

29. Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը՝ որ խորհրդին վերաբերեալ է նէ, նոյն խորհրդին քննութեանը պէտք է յանձնէ, եւ անոր կարծիքը չառած չը տնօրինէ:

30. Քաղաքական ժողովը կրնայ՝ բանաւոր պատճառով մը՝ չը հաստատել կամ ետ ձգել խորհրդի մը ըրած որոշումը, բայց՝ անոր



ձեռնհասութիւնը յարգելով՝ չը պիտի կարենայ նոյն որոշման ներհակ որոշում եւ գործադրութիւն ընել:

31. Քաղաքական ժողովը իրաւունք չունի զազգային խորհուրդներէն մէկը լուծելու, քանի որ Սահմանադրութեան տրամադրութեանցը հակառակ ընթացքի մէջ չը տեսնէ զանի. իսկ եթէ պատահի այսպիսի պարագայ մը, առջի անդամին՝ անոր ատենապետէն բացատրութիւն կ'ուզէ, երկրորդին՝ գըրով իմաց կուտայ խորհրդին եւ կարգի կը հրաւիրէ զանի, իսկ երրորդին կը լուծէ. բայց Ընդհանուր ժողովին տրվելու տարեկան տեղեկագրին մէջ այս լուծման պատճառները պէտք է որ բացատրէ:

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի ծանր խնդիր մը գործադրական ժողովը իր ձեռնհասութենէն վեր դատէ, Ընդհանուր ժողովին պէտք է որ դիմէ:

Ե. ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

33. Ուսումնական խորհուրդը 10 ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ:

34. Ուսումնական խորհրդին պաշտօնն է՝ ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնագիր մը եւ դպրոցական կանոններ հաստատել, եւ անոնց համեմատ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակ ընթաց մը որոշել թէ ուսման եւ թէ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսումը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հոգ տանիլ, սոյն նպատակով հաստատեալ ընկերութեանց խրախոյս տալ եւ ձեռնտու ըլլալ, ազգային դաստիարակաց կացութիւնը լաւցնելու եւ ապագան անդորրելու խնամ տանիլ, ազգին մէջ բանիբուն դասատուներ հասցնելու եւ դպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ:

35. Ուսումնական խորհուրդը պէտք է իր կողմէն ամենայն ջան ՚ի գործ դնէ որ՝ թէ Պօլսի, եւ թէ գաւառներու մէջ ամեն թաղ սկզբնական դաստիարակութեան դպրոցներ ունենան, նոյնպէս Պօլսի եւ առաջնորդանիստ քաղաքները մէյ մէկ ազգային ուսումնարան ունենան դասական ուսմանց համար: Այս ուսումնա-

րանէն վկայականով կ'ելնեն աշկերտները, եւ մասնաւոր ուսմունք ընդունելուն՝ դասատուութեան վկայագիր ալ կը տրվի:

36. Ուսումնական խորհուրդը կ'որոշէ ազգային վարժարանաց մէջ ընդունվելու դասագիրքներն ու դասատուները. իսկ քրիստոնէական վարդապետութեան դասագիրքն ու դասատուն Կրօնական ժողովէն պէտք է որ խնդրէ:

37. Ուսումնական խորհուրդը կը նախագահէ ազգային վարժարանաց տարեկան քննութեանը. իսկ քրիստոնէական վարդապետութեան մասին քննութիւնը Կրօնական ժողովին ձեռօք կ'ըլլայ:

## Զ. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

38. Տնտեսական խորհուրդը 10 տնտեսապէս աշխարհականներէ կը բաղկանայ:

39. Տնտեսական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հաստատութեանց եւ կալուածոց մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ այն հաստատութեանց պայծառութեանն ու բարեկարգութեանը հոգ տանիլ:

40. Տնտեսական խորհուրդը վանօրէից եւ հիւանդանոցի համար մասնաւոր հոգեբարձութիւններ կը հաստատէ եւ անոնց միջնորդութեամբ կը մատակարարէ զայս հաստատութիւնները:

41. Վանօրէից հոգաբարձութիւնը եօթ հոգիէ կը բաղկանայ, որոնց երեքը եկեղեցական եւ չորսը աշխարհական:

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ զայս հոգաբարձուները եւ Քաղաքական ժողովին հաւանութեամբը Պատրիարքը կ'անուանէ:

42. Վանօրէից հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ սոյն հաստատութեանց եկամուտներն ու հասոյթները ազգին օգտին ծառայեցնել. նախ՝ վանօրէից մէջ ուսումնարան հաստատելով՝ Կրօնական ժողովին եւ Ուսումնական խորհրդին տուած հիմնադրին համաձայն, եւ որի մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց, տպարան, թանգարան:

43. Վանօրէից հոգաբարձութիւնը իւրաքանչիւր վանքի համար երկերկու գործակալ պէտք է ունենայ տեղացի, որոնք վանահօր նախագահութեամբ կը մատակարարեն ըզվանքը՝ Գալառական ժողովէն անկախ կերպով:

44. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը եօթ հոգիէ կը բաղկանայ որոնց երկուքը բժիշկ:

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս Հոգաբարձուները եւ Քաղաքական ժողովին հաստատութեամբը Պատրիարք կ'անուանէ:

45. Հիւանդանոցի հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ սոյն հաստատութիւնը իր նպատակին ծառայեցնել, հոն տնօրինելով նախ՝ կանոնաւոր Հիւանդանոց մը աղքատ հիւանդանաց համար. երկրորդ՝ Պատասպարան մը ծեր ու անկար աղքատաց համար. երրորդ՝ Զգաստարան մը անառակաց համար. չորրորդ՝ Կրթարան մը որը ու անտէրունչ տղայոց համար:

Այս օթեվաններուն իւրաքանչիւրը թէ շէնքի եւ թէ կարգի կողմէն բժշկական կանոնաց եւ ողջապահիկ օրինաց համաձայն պէտք է կարգադրեալ ըլլայ:

46. Կտակաց տնօրէնութիւնը Տնտեսական խորհրդին կը վերաբերի: Այս խորհուրդը պէտք է հսկէ որ ամէն կտակ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ, կտակօղին դիտաւորութիւնը անխախտ պահի եւ գործադրութիւնը ապահով ըլլայ:

Սոյն տրամադրութեանց համեմատ՝ կտակի վերաբերեալ յատուկ կանոններ ու մասնաւոր Հոգաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդը:

Երբ կտակին գործադրութիւն կտակօղին դիտաւորութեանը համեմատ չըլլայ, ընտանիքը իրաւունք ունի բողոքելու:

47. Թէ Պօլսի եւ թէ գաւառներու մէջ գտնուած ազգային անշարժ ըստացուածոց կալուածագիրներուն (Սէնէտ, Հէօճէին, Ֆէրազ) օրինակները Տնտեսական խորհրդին ձեռքով ժողովելով ազգային դիւանատան մէջ պիտի պահուի ամենայն ապահովութեամբ:

48. Տնտեսական խորհուրդը պէտք է հսկէ որ ամեն ազգային ըստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ:

49. Ազգային որ եւ է կալուածի գնումն ու վաճառումը չը կրնար գործադրվիլ առանց Տնտեսական խորհրդին գիտութեանը, Քաղաքական ժողովին հաճութեանն ու Պատրիարքին կնքադրութեանը:

Սոյն տրամադրութեանց միակնէլ էլլոականիւն ըսված բանը վերցած է:

50. Պօլսի մէջ եւ շրջակաները ազգային որ եւ է շինութիւն կամ նորոգութիւն չը կրնար ըսկսիլ առանց Տնտեսական եւ Ելմտական խորհրդոց գիտութեանն ու Քաղաքական ժողովին հաճութեանը:

Նմանապէս ազգային որ եւ է հաստատութեան համար ստակ չը կրնար ժողվըվիլ առանց վերոյիշեալ պայմանին:

Ե. ԱԶԳԱՅԻՆ ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

51. Ելմտական խորհուրդը 10 հաշուագէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

52. Ելմտական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հասութից եւ ծախուց ընդհանուր տեսչութիւնը եւ ազգային սնտուկին համարակալութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային հաստատութեանց մատակարարութեան հաշիւները կանոնաւորապէս առնել, ծախուց օրինաւորութիւնն ըստուգել, ազգային եկամուտներն աւելցնելու ջանք ընել՝ այն աստիճան որ օր մը ազգային սրնտուկին մուտն ու ելքը իրարու հաւասար գալով ընդհանուր տուրքը մեծապէս թեթեւնայ:

53. Ազգային սնտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր տուրք, կալուածական հասոյթ, դիւանական հասոյթ, կտակ, նուէր եւ այլն. ելքն են գլխաւորապէս՝ պատրիարքարանի եւ դիւանատան ծախք, Հիւանդանոցի ծախք, կարօտեալ թաղերու եկեղեցեացն ու վարժարանացը նպաստ եւ այլ պատահական ծախքեր:

54. Ազգային սնտուկին հաշիւը տօմարակալութեան կանոնով պիտի բռնըվի:

55. Ելմտական խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յետագայ տարւոյն մէջ ըլլալու հասոյթն ու թախքը կը շնորհով՝ հաշուեցուցակը Քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ:

Ը. ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

56. Դատաստանական խորհուրդը 10 իրաւասէր անձերէ կը բաղկանայ, որոնց հինգը եկեղեցական եւ հինգը աշխարհական:

57. Դատաստանական խորհրդին պաշտօնն է ազգային դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ հակառակորդները արդարութեամբ իրաւախոհ ընելու ջանալ եւ իր ջճիւղներուն հիմ բռնել կրօնական մասին՝ նախնեացմէ աւանդեալ կանոնները, եւ քաղաքական մասին՝ Տէրութեան դատարանաց արդի կանոնները:

58. Երբ պատահի այնպիսի խնդիր մը զոր Դատաստանական խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ազգային ժողովներէն որոշ անկ է անոր կը զրկէ:

59. Դատաստանական խորհուրդին մէջ դատեալ անձ մը միշտ իրաւունք ունի կրօնական կամ Քաղաքական ժողովին բողոքելու կամ Խառն ժողով պահանջելու ըստ գործին:

Թ. ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

60. Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն 5 էն մինչեւ 9 անդամներէ:

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ թաղին տեղական գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյն եկեղեցւոյն պահպանութիւնը, ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնը ու խաղաղարարութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ թաղին եկեղեցւոյն պայծառութեանը խնամ տանիլ, թաղին մէջ թէ աղջկանց եւ թէ տղայոց համար ըսկզբանական դաստիարակութեան բարեկարգ դպրատուններ ունենալու ջանք ընել, եւ թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնտու ըլլալ:

62. Թաղերուն մէջ թէ եկեղեցւոյ եւ թէ դպրատան որ եւ է կալուած Թաղական խորհուրդին անմիջական տնօրէնութեանը տակ է. այնպիսի կալուածոց գնումն ու վաճառումը ըստ 49. Յօդ. կը գործադրվի:

63. Ամեն թաղ մէյմէկ սնտուկ պիտի ունենայ Թաղական խորհրդին հսկողութեանը տակ:

Այս սնտուկին մուտքն են՝ թաղական տուրքը, եկեղեցւոյ եւ դպրատան կալուածոց եկամուտները, եկեղեցւոյն հասոյթները, աղքատաց համար եղած նուէրներն ու կտակները եւ այլն. ելքն են՝ թաղին եկեղեցւոյն եւ դպրատանց ծախքերն ու աղքատաց օգնութիւնները:

64. Ամեն թաղական խորհուրդ իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց եւ վախճանմանց արձանագրութիւնը պէտք է որ ունենայ կանոնաւոր կերպով:

65. Թաղական խորհուրդները իրենց պաշտօններուն մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին. եկեղեցականութեան գործերու համար՝ Տնտեսական խորհրդին հետ, դպրատանց ուսումնական մասին համար՝ Ուսումնական խորհրդի հետ, դրամական գործելու համար՝ Ելմտական խորհրդին հետ, դատական գործելու համար՝ Դատաստանական խորհրդի հետ:

Թաղական խորհուրդը երբ հակառակորդները իրաւախոհ ընել, գործը Դատաստանական խորհրդին պէտք է զրկէ իր քննութեան տեղեկագրովը:

#### Ժ. ԱԶԳԱՅԻՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

66. Պատրիարքարանին մէջ դիւանատուն մը պիտի հաստատուի որոյ գործը պիտի ըլլայ ազգային պաշտօնական գրութեանց տնօրէնութիւնը:

67. դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժանուի:

Ա. Թղթակցութիւն, որ Պատրիարքարանէն զրկվելու գիրերուն եւ ի Պատրիարքարան հասած թուղթերուն կարգաւորութեանը կ'զբաղի:

Բ. Արձանագրութիւն, որ ազգային ժողովոց եւ խորհրդոց վերաբերեալ թուղթերուն կարգաւորութեանը կ'զբաղի:

Գ. Ազդահամար, որ ազգայնոց քաղաքային վիճակագրութեանը՝ այսինքն ծննդեան, ամուսնութեան եւ վախճանման վերաբերեալ արձանագրութեանց կարգաւորութեանը կ'զբաղի: Սոյն գրասենեակէն կը տրվին ազգայնոց թէ՛ ճամբորդութեան համար եւ թէ՛ առեւտրական գործողութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաեւ ծննդեան, ամուսնութեան եւ վախճանման վկայականները:

68. Թղթակցութեանց գրասենեակը՝ ներքին եւ արտաքին թղթակցութեանց եւ թուրքերէն գրութեանց համար պէտք եղածին չափ դիւանադպիրներ պիտի ունենայ: Այս գրասենեակը Պատրիարքին հրամանին ներքեւ է եւ ինք կանուանէ ասոր անդամները Քաղաքական ժողովին հաւանութեամբը:

Արձանագրութեան գրասենեակը վեց դիւանադպիր պիտի ունենայ. երկուքը Կրօնական ու Քաղաքական ժողովներուն գործոցը կարգեալ:

Այս գրասենեակին անդամները ամեն մէկը իր վերբերական ժողովին կամ խորհրդին հրամանին ներքեւ է, գործնք նոյն ժողովները կամ խորհուրդները կրնարեն եւ Պատրիարքը կանուանէ Քաղաքական ժողովին հաւանութեամբ:

Ազգահամարի գրասենեակը պիտի ունենայ նօտար մը, գործ Քաղաքական ժողովը կրնարէ եւ Պատրիարքը կանուանէ:

Այս գրասենեակներուն անդամներուն թիւը ըստ հարկին կաւելնայ կամ կը պակսի:

69. Դիւանատունը պիտի ունենայ դիւանապետ մը որ Դիւանատան բոլոր գործոցը տնօրէն եւ պատասխանատու է, գործ Քաղաքական ժողովը կրնարէ եւ Պատրիարքը կանուանէ:

Դիւանապետը կրնէ Ընդհանու ժողովին դիւանադպրութիւնը:

70. Դիւանապետը պարտաւորեալ է տարին անգամ մը Պօլսի ամեն մէկ թաղէն եւ հինգ տարին անգամ մը ամեն մէկ գաւառէն իրենց ազգահամարին, այսինքն՝ ծննդոց, ամուսնութեանց եւ վախճանմանց տօմարներուն օրինակները պահանջել եւ ազգային Դիւանատան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ:

71. Դիւանապետը ազգային լեզուն քաջ գիտցօղ եւ Տաճկերէնի ու Փռանսերէնի բաւական հմտութիւն ունեցօղ անձ մը պէտք է որ ըլլայ: Նմանապէս դիւանադպիրները ազգային լեզուն քաջ գիտցօղ եւ իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան:

72. Դիւանադպիրները մասնաւորապէս պատասխանատու են իրենց վերբերական ժողովին կամ խորհուրդին առջեւ եւ ընդհանրապէս Դիւանապետին առջեւ:

73. Ազգահամարի գրասենեակէն տրված որ եւ է թուղթ եւ վկայական՝ պատրիարքական կնքով եւ դիւանապետին ստորագրութեամբ վաւերացեալ պէտք է ըլլան:

74. Ազգային դիւանատունը ամեն օր ութ ժամ բաց եւ դիւանադպիրները ներկայ պիտի գտվին բաց ՚ի տօնելի օրերէն: Եթէ տօնելի օր մը ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհրդին դիւանապետը նոյն օրը ներկայ պտք է գտվի:

## 2. ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### Ա. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

75. Գաւառներու մէջ Ընդհանուր ժողով կը կազմվի թաղական եւ թեմական երեսփոխաններէ, որոց անդամակից են նախ՝ գաւառին Կրօնական եւ Քաղաքական ժողովներուն անդամներն ու թաղական խորհուրդներուն ատենապետները, երկրորդ՝ Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք. (տես. Յօդ. 9):

76. Գաւառական Ընդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւրը իր գաւառին կողմէն երեսփոխանութեամբ գաւառին առաջնորդը ընտրել. Կրօնական ու Քաղաքական ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, եւ գաւառական ծանր կամ ընդհանրական գործերը տնօրինել:

### Բ. ԱՌԱՋՆՈՐԴ

77. Առաջնորդը Գաւառական ժողովներուն նախագահն է եւ անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

Իր պարտաւորութիւնն է՝ գաւառին մէջ ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել:

78. Առաջնորդը չը պիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ. այլ գաւառին գլխաւոր քաղքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի ուր կը գումարվին եւ Գաւառական ժողովները:

79. Առաջնորդը գաւառական սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ եւ Առաջնորդարանին ներքին մատակարարութեան ծախքը իր վրայ ըլլայ:

### Գ. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ

80. Գաւառաց Կրօնական ու Քաղաքական ժողովները՝ ըստ տեղւոյն 7էն մինչեւ 12 անդամներէ կը բաղկանան:

81. Գաւառաց թաղական եւ թեմական խորհուրդները ըստ տեղւոյն 5էն մինչեւ 9 անդամներէ կը բաղկանան:



82. Ամեն գալառ իր Քաղաքական ժողովին հսկողութեանը ներքեւ մէջմէկ գալառական սնտուկ պիտի ունենայ գալառին ազգային եկամտից եւ ծախուց տնտեսութեանն ու համարակալութեանը համար. նմանապէս ամեն թաղ եւ թեմ իր սնտուկը պիտի ունենայ:

Այս սնտուկներուն համարակալութիւնը կանոնաւոր կերպով պիտի կատարվի:

83. Գալառներու մէջ ամեն Առաջնորդարան իր գալառական դիւանատունը պիտի ունենայ. նմանապէս ամեն թաղ եւ թեմ:

Գալառական դիւանները պարտաւոր են գալառին թաղական եւ թեմական ազգահամարները ժողվել եւ անոնցմով գալառական ընդհանուր ազգահամար կազմել:

## ԳԼՈՒԽ Բ.

### ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ

84. Ամեն ազգային անհատ՝ որ չափահաս է եւ վաստակի տէր, պարտաւոր է ազգային պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ. բաց անոնցմէ որոնց կարողութիւնն չունենալը իրենց թաղին կամ իրենց արհեստակցաց կողմէն վկայեալ է:

85. Ազգային տուրքը տարեկան է եւ բաշխման հիմ պիտի բռնըվի իւրաքանչիւրին կարողութիւնը:

86. Երկու կերպ է ազգային տուրքը. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է եւ կը հաւքըվի Կեդրոնական վարչութեան կողմէն ազգային սնտուկին համար. եւ միւսը մասնաւոր՝ որ մասնաւոր ծախուց յատկացեալ է եւ կը հաւքըվի Թաղական խորհրդոց կողմէն թաղական սնտուկին համար:

87. Պօլսի մէջ ընդհանուր տուրքին բաշխման ու հաւաքման եղանակը Քաղաքական ժողովին մէջ կ'որոշվի եւ Ընդհանուր ժողովը կը հաստատուի: Իսկ թաղական տուրքը ամեն թաղ իր խորհուրդին մէջ կ'որոշէ ու կը հաստատէ:

Սոյնպէս կը տնօրինվին եւ գաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուրքն ու թաղական մասնաւոր տուրքը:

88. Գաւառները մասնակից պիտի ըլլան ազգային ընդհանուր տուրքին:

Գաւառներուն կողմէն ազգային կեդրոնական սնտուկին տրըվելու միջեւ ցարդ սովորութիւնն եղած տարեկան տուրքին փոխարէն՝ գաւառական սնտուկը իր հաւաքած գաւառական ընդհանուր տուրքին հարիւրին այսքան պիտի տայ ազգային կեդրոնական սնտուկին:

Հարիւրին որքան տրըվիլը Պօլսի Քաղաքական ժողովը պիտի որոշէ:

## ԳԼՈՒԽ Գ.

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

## Ա. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՔ

## 1. ԸՆՏՐՕՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

89. Ընտրելու իրաւունքը լման 25 տարւոյ հասակէն կ'ըսկսի:

90. Ընտրելու իրաւունքէն զրկեալ կամ արգելեալ են դատաստանապէս.

Նախ՝ քրէական յանցանօք դատապարտեալ եւ հրապարակաւ նշաւակեալ անձինք, որոնք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց տէրութեան:

2. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնըված եւ ազգային ատեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որոնց համար դատօղ ատեանը ազգային գործոց մէջ չը գործածվիլը վճռած ըլլայ:

3. Տէրութեան կողմէն զգաստացուցիչ պատիժ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք, որոնց ազգային ատեան մը արգելած ըլլայ ընտրելու իրաւունքը: Այս արգելքը կը վերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալը արգելօղ ատեանին կողմէն վկայվի:

4. Խելագարութեան պատճառով անբաւական դատեալ անձինք, որոնց կատարելապէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չըլլայ:

5. Հարկ եղած ազգային տուրքը կարօղութիւն ունենալով մերժօղ անձինք, որոնք ազգովին եպերելի են իբր ազգային պարտեաց զանցառու: Այս արգելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչել ըսկսին:

## 2. ԸՆՏՐԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

91. Ազգային գործոց տնօրէնութեանը մէջ որոշողական ձայն ունենալու իրաւունքը լման 30 տարւոյ հասակէն կ'ըսկսի:

Ամենայն անհատ ազգային որ եռսուներորդ տարին լրացուցած է եւ չէ դատաստանապէս գրկեալ կամ արգելեալ ազգային իրաւանց վայելումէն, ընտրելի է ազգային որ եւ է պաշտօնի համար:

Բ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱՑ

92. Ընտրութեան հիմ պիտի բռնվի բնակչաց թիւը:

Պօլսի ամեն մէկ թաղին եւ ամեն մէկ գաւառին ընկած երեսփոխաններուն բաշխման ցուցակը յատուկ պատկերով պիտի նշանակվի:

Երեսփոխանաց բաշխման ցուցակը՝ ամեն հինգ տարին անգամ մը կը նորոգվի, ազգային Դիւանատան ընդհանուր ազգահամարին համաձայն:

Այս վերանորոգումը Վարչութեան գլխաւոր անդամոց, այսինքն Կրօնական ու Քաղաքական ժողովոց ատենապետներուն եւ Տեսուչ ու Մատակարար խորհրդոց ատենապետներուն մէկ տեղ գալովը ձեւացած Համախորհուրդ ժողովին մէջ կըլլայ:

93. Թէ Պօլսի թաղերէն եւ թէ գաւառներէն ուղղված երեսփոխանները հարկ չէ որ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան, բաւական է որ Պօլսի մէջ բնակին, եւ ազգասիրութեան ու պատուաւորութեան մասին ընտրողաց համարումը ըստացած ըլլան:

Այս երեսփոխանները չէ թէ զիրենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը սեպվին Ընդհանուր ժողովին մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են համազօր իշխանութեամբ:

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

94. Ընդհանուր ժողովին լուծվելու օրէն երկու ամիս առաջ գաւառներուն՝ եւ մէկ ամիս առաջ Պօլսի թաղերուն կը ծանուցանէ Պատրիարքը ամեն մէկ թաղէն կամ գաւառէն ուղղված երեսփոխանաց թիւը եւ կը հրաւիրէ ընտրողական ժողով գումարել, յիշելով ընտրելութեան պայմաններն ու ընտրութեան կանոնները:

Սոյն կոնդակին օրինակը թաղական խորհրդարանին մէջ բացառեալ կը մնայ մինչեւ ընտրութեանց աւարտումը:

95. Ամեն թաղի մէջ ընտրողական ժողովներ կը կազմըվի թաղին բնակիչներէն՝ երեսփոխանաց հետ անդամակից ըլլալու ար-

ժանաւորութիւններն արդէն վկայեալ (տես Յօդ. 9) եւ ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ:

Ընտրողական ժողովը 21 հոգիէ կը բաղկանայ. եթէ թաղի մը մէջ վերոյիշեալ անձինքը այս թիւը չը լցեն, պակասը նոյն թաղին մէջ էն շատ տուրք տուող ընտրողացմէ պէտք է լցնել:

Ընտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցւոյն քարոզիչը կամ անոր բացակայութեանը՝ աւագերէցն է. իր դիւանը կը բաղկանայ մէկ ատենապետէ, մէկ ատենադպրէ եւ երեք քննիչներէ:

Ընտրողական ժողովը Թաղական խորհուրդին հետ միանալով կը նախագահէ ընտրական գործողութեանց:

96. Ընտրողական ժողովը ընտրելեաց ցանկ մը կը պատրաստէ ուղղած երեսփոխաններու թիւէն եռապատիկ աւելի՝ ընտրողաց որոշումը դիւրացնելու համար:

Սոյն ցանկն ալ բացադրեալ կը մնայ թաղական խորհրդարանին մէջ, իսկ ընտրողք ոչ մէկ կերպով ըստիպեալ են այս ցանկին հետեւելու:

97. Ընտրողական ժողովները ամէն մէկը իր թաղին մէջ՝ ընտրողութեան պայմանները ըստուգելով՝ ընտրողաց ցանկ մը պիտի պատրաստեն այբուբենի կարգով. այս ցանկը ութը օր բաց պիտի մնայ թաղական խորհրդարանին մէջ, որպէս զի թաղին ընտրողները կարենան իրենց անուանը վրայ դիտողութիւն ունին նէ՝ ընել:

98. Ընտրողական ժողովը ամէն մէկ ընտրողի մէյմէկ ընտրողագիր պէտք է տայ սոյն օրինակ:

Ա... ընտրող

Ա... (անուն թաղին)

եւ ընտրողական ժողովին կողմէն ըստորագրեալ:

Առանց այս ընտրողագիրը ներկայացնելու ոչ ոք պիտի կարենայ քուէտուփին մերձենալ:

99. Եթէ ընտրողութեան հրաւերը՝ որ եւ է պատճառով՝ Պատրիարքին կողմէն չըլլայ (տես Յօդ. 94) ազգային Վարչութեան կողմէն պէտք է որ ըլլայ Քաղաքական ժողովին ատենապետին ձեռօք:

Եթէ ազգային Վարչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնը կատարելու, եւ ընտրողութեան համար Սահմանադրութեան որոշած ժամանակը հասած ըլլայ: Այն ատեն ընտրողները իրաւունքներն վարելով՝ լիակատար իշխանութեամբ

կը ժողովրդին իրենց թաղին կամ թեմին եկեղեցւոյն խորհրդարանը եւ ընտրողական ժողով կազմելով կընտրեն իրենց երեսփոխանները ըստ ընտրական կանոնաց:

Երբոր այս կերպով երեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնը լմըննայ, անմիջապէս լուծեալ է ըստ օրինի հին ընդհանուր ժողովը եւ գուրկ ամենայն իշխանութենէ, ուստի եւ ինչ որ գործ է կամ գործած է նոյն կէտէն ասդին, ապօրինաւոր է եւ ապագօր իբրեւ չեղեալ:

#### ՔՈՒՆԱՐԿՈՒԹԻՒՆ

100. Ընտրողաց ցանկին բացվելէն շաբաթ մը ետքը՝ կիրակի առաւօտ ժամերգութեան աւարտումէն ետեւ՝ թաղական խորհրդարանին մէջ քուէարկութեան կըսկըսվի սապէս:

Ընտրողական ժողովին նախագահը ընտրողաց ցանկը ձեռքը առած կարգով կը կոչէ ընտրողները որոնք ընտրողագիրնին կը դնեն սեղանին վրայ եւ ընտրողաց ցանկին մէջ իրենց անուանը առջեւ ըստորագրելէն ետքը՝ հոն թուղթին մը վրայ քանի երեսփոխան ուզված է նէ՝ այնքան անձի անունը կը գրեն իրենց ձեռքովը վերէն ի վար կարգով եւ ամեն մէկ անուան առջեւ մականուն, բնակութիւն, արհեստ նշանակելով՝ թուղթը կը ծալեն քուէտուփին մէջ կը ձգեն:

101. Քուէարկութիւնը գաղտնի է. ուստի պէտք է որ քուէարկուք առանձին կերպով մը գրեն իրենց քուէթուղթը, որպէս զի ուրիշ մը չը կարենայ տեսնել գրված անունները:

102. Քուէարկութիւնը ըսկսած օրը պէտք է լմըննայ:

Ընտրողացմէ ով որ այն օրը քուէարկութեան չը ներկայանայ՝ իրաւունք չունի ետքը բողոքելու:

103. Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի կամ գաւառի մէջ քուէ տալ:

104. Միացեալ թաղերն ու ըմբերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, մէկ տեղ գալով կընեն քուէարկութիւնը, իսկ եթէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւրը զատ զատ քուէարկութիւն կընեն ու ետքը քուէարկութեանց արգիւնքը կը միացնեն:

#### ՔՈՒՆՆԱՄԱՐ

105. Քուէարկութիւնը լմըննալէն ետքը՝ նոյն օրը միեւնոյն

նիստի մէջ ընտրողական ժողովին հսկողութեանը ներքեւ տուփը կը բացվի. քննիչները քուէները կը համընեն եւ քուէարկուաց թիւին հետ կը բաղդատեն. եթէ տարբերութիւն գտվի կամ եղած տարբերութիւնը աննշան ըլլայ, այսինքն՝ մէկ կամ երկու թիւի (վասնզի կրնայ պատահիլ որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքը մոռցած ըլլան ընտրողաց ցանկին մէջ ըստորագրելու), քուէարկութիւնը վաւերական կը համարվի. իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնը եւ ընտրողական ժողովը խարդախութեան կասկած ունենայ, դարձեալ քուէարկութիւն ընել կ'որոշէ միւս օր մը մինչեւ առաջիկայ կիւակէն:

Նմանապէս եթէ ուղղած երեսփոխանաց թիւը չը լրցվի առաջին անգամին՝ մնացածին համար երկրորդ անգամ ընտրութիւն կ'ըլլայ ուրիշ օր մը:

106. Եթէ պատահի որ մէկը պէտք եղածէն աւելի թւով անուն գրած ըլլայ իր քուէթուղթին մէջ, նոյն թիւէն ետքը եկած անունները անընդունելի են:

Նմանապէս վերէն 'ի վար կարգով չը գրված անուններուն քուէթուղթը անհամարելի է:

107. Քուէարկուաց թիւին կէսէն աւելի քուէ ըստացողներուն մէջ են շատ ըստացող անձինքը երեսփոխան ընտրված են:

108. Եթէ մէկ կամ երկու անգամով առաւելութիւն չստացվի, ընտրողական ժողովը կը ծանուցանէ են շատ առաւելութիւն ըստացող երկու անունները, եւ երրորդ քուէարկութիւնը օրինակորապէս այն երկու անուանց վրայ կըլլայ:

109. Եթէ հաւասար քուէ պատահի երկու անձանց վրայ, երիցագոյնը ընտրեալ է:

#### ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

110. Ամէն ընտրողական ժողով՝ իր թաղէն կամ գաւառէն ընտրված երեսփոխանաց անունները Քաղաքական ժողովին կը ներկայացնէ Պատրիարքին ուղղեալ տեղեկագրով մը, որոյ մէջ պէտք է ճշգրիւ նշանակված ըլլայ քուէթուղթին օրինակը, այսինքն՝ ընտրեալին անունը, մականունը, բնակութիւնն ու արհեստը եւ քուէարկութեան բոլոր պարագաները:

Քաղաքական ժողովը՝ քուէարկութեանց տեղեկագիրները քննելով, կ'ըստուգէ երեսփոխանաց իշխանութիւնը:

Այս ըստուգութենէն ետքը Պատրիարքը պաշտօնական կերպով իմաց կուտայ նորընտիր երեսփոխանաց եւ կը հրաւիրէ զանոնք ընդհանուր ժողով գումարել որոշեալ օր մը:

111. Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ Քաղաքական ժողովին քննած տեղեկագիրները մտիկ ընելով՝ ընտրութեանց ըստուգութիւնը կը վաւերացնէ եւ երեսփոխանաց իշխանութիւնը հաստատելով իր կազմութիւնը կը լրացնէ:

112. Ընդհանուր ժողով կրնայ գումարվիլ երբ երեսփոխանաց մեծագոյն մասը՝ որ Պօլսի մէջ է՝ ընտրված ըլլայ, առանց սպասելու ընտրութեանց վերջը կամ գաւառական երեսփոխանաց որոնց ընտրութեան լուրը մէկ կողէմն Պօլիս հասնելու վրայ կ'ըլլայ:

113. Եթէ մէկը քանի մը թաղերու կամ քանի մը գաւառներու կողմէն ընտրված ըլլայ, ինքը կ'որոշէ որ թաղին կամ որ գաւառին երեսփոխանութիւնն ընդունելը: Եթէ ինքը չ'ուզէ որոշել, Ընդհանուր ժողովը վիճակով կ'որոշէ:

Սոյն պարագային մէջ ընտրող թաղին կամ գաւառին իմաց կը տրվի ուրիշ երեսփոխան մ'ընտրել:

Սոյնպէս կ'ըլլայ երբ վախճանման կամ հրաժարման պատճառով երեսփոխանաց մէջէն պակասող ըլլայ:

114. Ժողովարանին մէջ բացադրեալ պէտք է մնայ երեսփոխանաց ցանկը այբուբենի կարգով շինված, որոյ մէջ թւականովը կը նշանակվի անուան առջեւ՝ հրաժարում, վախճանու, եւ այլն: Նմանապէս երեսփոխանաց հետ առաջին եւ երկրորդ կարգէ անգամակից (Յօդ. 9) եղող անձանց ցանկը: Այս ցանկերը հինգ տարին անգամ մը կը նորոգվին Ընդհանուր ժողովին նորոգմանը հետ:

Ըստ հարկին գործածելու համար երեսփոխանաց մէյմէկ տպեալ արտօնագիր երեսփոխանութեան պէտք է տրվի սոյն օրինակ:

Ա . . . Ա գ Գ յ Ե Ն Ե ր Ե ս փ ո խ ան  
( Ա մ Բ ր Ի ս փ ո ս Ի )  
.....  
( Ս ր Դ Ե Գ ր Դ Ե Ի ն Ե ր Ե ս փ ո խ ան Ի ն )

Ե ճ ա կ ա տ ր պ ա տ ր ի ա ր ք ա կ ա ն կ ր ք ո վ կ ր ք ե ա լ



## Գ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

115. Պատրիարքը պէտք է որ էջմիածնայ Կաթողիկոսէն ձեռնադրեալ կամ անկէ իբր էջմիածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ'ըլլայ եւ Օսմանեան Տէրութեան հպատակ:

116. Կրօնական ու Քաղաքական ժողովները խառն ժողովով կազմելով ընտրելութեան պայմաններն ունեցող եպիսկոպոսաց եւ վարդապետաց արժանիքը կը քննեն թէ կրօնական եւ թէ քաղաքական մասին եւ կ'որոշեն երեք ընտրելի որոնց անունները Ընդհանուր ժողովին կը ներկայացնեն:

Ընդհանուր ժողովին մէջ այն երեք ընտրելի անձանց վրայ գաղտնի քուէարկութիւն ըլլալով՝ ով որ մեծագոյն մասին հաւանութիւնը ըստանայ, անի կ'ըլլայ օրինաւոր Պատրիարք Ազգին:

Եթէ առաջին անգամին մեծագոյն մաս չը վաստկվի, երկրորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ, եթէ երկրորդին ալ չը յաջողի, երկու առաւելագոյն քուէ ըստացողաց անունները կը ծանուցվի դիւանին կողմէն եւ երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ'ըլլայ:

Եթէ պատահի որ քուէները երկու անձի վրայ հաւասարապէս բաշխվին, այն ատեն երկուքին մէկը վիճակով կ'ընտրվին:

Եթէ ընտրեալը վարդապետ ըլլայ, անմիջապէս էջմիածին կը զըրկվի եպիսկոպոս ձեռնադրվելու համար:

117. Ընտրութիւնը լմըննալէն ետքը տեղեկագիր մը կը շինվի զոր բոլոր բազմականք կ'ըստորագրեն, եւ որոյ օրինակը՝ Ընդհանուր ժողովին կնքովը կնքեալ՝ Խառն ժողովին միջնորդութեամբը Բ. Դրան կը մատուցվի որ կ'անուանէ զՊատրիարքը:

118. Նորընտիր Պատրիարքը՝ դեռ Բ. Դրան չը ներկայացած՝ Եկեղեցւոյ մէջ եւ Ընդհանուր ժողովին առջեւ հանդիսաւոր ուխտ կ'ընէ սոյն օրինակ.՝ «Առաջի Աստուծոյ եւ առաջի Ազգիս Հայոց ներկայացեալ յԸնդհանուր ժողով՝ ուխտեմ հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան եւ հըսկել բոլոր սրտով նորին անթերի գործադրութեան»:

119. Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ գտվի, ամբաստանութեան տակ կ'ընկնի:

120. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մը՝ կամ ազգային երեսփոխանաց կողմէն, կամ Կրօնական ժողովին եւ կամ Քաղաքական ժողովին կողմէն կրնայ ըլլալ:

Երբ այսպիսի ամբաստանութիւն մը պատահի, Ընդհանուր ժողովը կը գումարովի եւ իր մէջէն քննիչ յանձնաժողով մը կը կարգէ 21 հոգիէ բաղկացեալ (7 եկեղեցական, 7 թաղական երեսփոխան, 7 գաւառական երեսփոխան) որոնք ամբաստանողաց մէջէն պէտք չէ որ ըլլան:

Քննիչ յանձնաժողովը՝ ամբաստանութիւնը քննելով, տեղեկագիր կու տայ Ընդհանուր ժողովին որ գաղտնի քուէարկութեամբ կ'որոշէ խնդիրը: Եթէ այս որոշումը՝ որ ստորագրեալ պէտք է ըլլայ որոշման կողմը քուէ տուող ժողովականներէն, Պատրիարքի հրաժարումը վճռած ըլլայ, երկու ժողովոց ատենապետները Պատրիարքին կը ներկայացնեն որ յայնժամ Ազգին որոշ կամքը տեսնելով հրաժարականը տալու պարաւորեալ է:

121. Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւոր եպիսկոպոսաց կարգը կ'անցնի եւ ըստ կը տնօրինվի Խառն ժողովին կողմէն:

#### Գ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

122. Առաջնորդի ընտրութիւնը գաւառական Ընդհանուր ժողովին մէջ կ'ըլլայ նոյն եւ նման Պատրիարքի ընտրութեան:

Սոյն ընտրութիւնը գաւառական Խառն ժողովին միջնորդութեամբ վաւերական տեղեկագրով կը ծանուցվի Պատրիարքին որ կեդրոնական Խառն ժողովին հաւանութեամբը կ'անուանէ գԱռաջնորդը:

123. Եթէ Առաջնորդը Սահմանադրութեան դէմ պակսութեան մը մէջ գտվի, ամբաստանութեան տակ կ'ընկնի Գաւառական ժողովոց կողմէն. եւ քննութիւնը ըստ 120 յօդուածին ըլլալով՝ դատար կեդրոնական Խառն ժողովին մէջ կը տեսվի որ ըստ պատշաճին կը տնօրինէ:

#### Ե. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎԱԿԱՆԱՑ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԱՑ

124. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ Կրօնական ու Քաղաքական ժողովոց անդամները:

Քաղաքական ժողովը կ'ընտրէ Տեսուչ խորհրդոց անդամները Կրօնական ժողովը կ'ընտրէ:

Դատաստանական խորհրդին անդամները 40 տարին լրացուցած եւ ամուսնացեալ անձինք պէտք է որ ըլլան:

Թաղին ընտրողները կ'ընտրեն Թաղական խորհրդին անդամները Թաղին Ընտրողական ժողովին ներկայութեանը, ըստ ընտրական օրինաց:

Սոյնպէս կ'ըլլայ եւ գաւառներու մէջ ժողովականաց եւ խորհրդականաց ընտրութիւնը:

125. Ընդհանուր ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվի եւ ապրիլի ըսկիզբը կը նորոգվի:

Կրօնական ու Քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհուրդները ամեն տարի մարտի վերջը կ'իսով չափ միայն կը լուծվին եւ ապրիլի ըսկիզբը կը նորոգվին<sup>1</sup>:

Թաղական ու Թեմական խորհուրդները չորս տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվին եւ ապրիլի ըսկիզբը կը նորոգվին:

Սոյնպէս կ'ըլլայ եւ գաւառներու մէջ ժողովոց եւ խորհրդոց նորոգումը:

126. Ազգային երեսփոխաններն ու Թաղական եւ Թեմական խորհրդականները անմիջապէս վերընտրելի են նոյն պաշտօնին համար: Իսկ Կրօնական ու Քաղաքական ժողովոց եւ Տեսուչ խորհրդոց անդամները՝ որ անմիջապէս վերընտրելի չեն նոյն պաշտօնին համար, ուրիշ որ եւ է պաշտօնի համար վերընտրելի են:

Սոյնպէս է նաեւ գաւառներու մէջ գաւառական պաշտօնաւորաց վերընտրութիւնը:

127. Ամեն անգամ որ Ազգային ժողովներն ու խորհուրդները նորոգվին, նորըտիր անգամոց ցանկը օրագրի միջոցով պէտք է հրատարակվի:

<sup>1</sup> Առջի անգամին միայն՝ ժողովականաց եւ խորհրդականաց կէսին լուծումը վիճակով կ'որոշուի:

## ԳԼՈՒԽ Դ.

### ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

#### ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

##### 1. ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

128. Ամեն ժողով եւ խորհուրդ պէտք է ունենայ ատենական դիւան մը, որ կը բաղկանայ ատենապետէ մը, ատենադըպրէ մը եւ պէտք եղածին չափ փոխանորդներէ զորոնք ժողովն իր մէջէն կը նտրէ:

Առջին անգամին երիցագուռին ատենապետութեամբը եւ կրտսերագուռին ատենադըպրութեամբը նիստ կընէ եւ իր դիւանը կը կազմէ:

129. Ատենապետին պաշտօնն է՝ ատենը բանալ եւ գոցել, ատենին ներքին վարչութիւնը տնօրինել, վիճաբանութիւններն ուղղել, կանոնադրութեանց պահպանութեանը հսկել եւ ատենաբաններուն կարգով խօսք տալ:

130. Ատենադըպրին պաշտօնն է՝ ատենին մէջ խօսվածները գրի առնել, եղած որոշումներն ու տրված պատճառաբանութիւնները ճշգրիտ նշանակել, եւ ատենադըպրութիւնը հետեւեալ ատենին ներկայացնել, եւ ամեն ատենին խնդիրներու ցանկը պատրաստել առաջնութեան կարգով:

131. Ատենապետի ու ատենադըպրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չը գտված ատեններուն մէջ զանոնք փոխանակել:

132. Ատենական դիւանը տարին անգամ մը կը նորոգվի եւ անդամներն անմիջապէս վերընտրելի են:

Ընդհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը Ընդհանուր ժողովին հետ կը նորոգվի:

##### 2. ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

133. Կրօնական ու Քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհուրդները շաբաթն անգամ մը կը գումարվին ի Պատրիարքարան որոշեալ օր մը:

Ատենապետները կրնան ուրիշ օր մը կամ ուրիշ տեղ մը արտաքոյ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել ըստիպողական պարագայի մէջ:

Ընդհանուր ժողովին գումարվելու օրը լրագրի միջոցով պէտք է ծանուցվի գոնէ երեք օր առաջ:

134. Առանց մեծագոյն մասի ներկայութեան նիստը անբաւական կը համարվի եւ խնդրի մը վրայ վերջին որոշում չը կրնար տրվիլ:

135. Առանց ատենապետի եւ ատենադպրի ատեան չը կրնար բացվիլ:

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով՝ ատենապետը կամ ատենադպիրը եւ անոնց փոխանորդները ներկայ չըլլան, երիցագունին ատենապետութեամբն ու կրասերագունին ատենադպրութեամբը կը բացվի ատեան:

136. Ատենապետէն խօսք չը խնդրած եւ չառած ներելի չէ խօսիլ ատեանի մէջ:

137. Խնդիր մը առաջարկել ուղղով՝ նախ խնդիրներուն ցանկին մէջ պէտք է գրել տայ խնդիրն ու իր անունը, եւ երբ կարգը գայ, այն ատեն իրաւունք ունի խօսելու նոյն խնդրին վրայ եւ ժողովը զանի մտիկ ընելու պարտաւոր է: Այս կարգը այն ատեն միայն կրնայ փոխվիլ՝ երբ ուրիշ խնդիր մը պատահի որոյ ըստիպողական ըլլալը ժողովն որոշէ:

138. Խնդիր մը լաւ մը քննըվելէն եւ անոր վրայ ամենուն կարծիքը առնվելէն ետքը պէտք է որ քըւէի գրվի, եւ որոշումը ներկայ գտվող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեամբը կը տրվի:

139. Երբ ձայները հաւասար գան՝ եթէ նախագահը ներկայ է՝ նախագահին կողմը կը հակի որոշումը, եթէ ոչ՝ ատենապետին կողմը:

140. Խառն ժողովին մէջ խնդրի մը որոշում տալու համար պէտք է որ երկու ժողովները զատ զատ քուէարկութիւն ընեն. երբ երկուքին ալ մեծագոյն մասը մի եւ նոյն որոշումն ըրած ըլլայ՝ խնդիրը կը լուծվի. իսկ հակառակ դիպուածի մէջ անհամաձայնութիւն կը սեպվի երկու ժողովոց մէջ, եւ տնօրէնութիւնը Ընդհանուր ժողովին կը մնայ (Յօդ. 1, 12):

141. Ժողովներուն մէջ որ եւ է ընտրութիւն, դատաստան, ագգային տուրքի հաստատութիւն, Սահմանադրութեան վերաքնն-

նութիւն, գաղտնի քուէարկութեամբ կ'որոշվի. նոյնպէս կ'ըլլայ նաեւ ուրիշ որ եւ է խնդրի մէջ երբ գաղտնի քուէարկութիւն պահանջող ըլլայ:

142. Խորհրդոց ատենապետները կրնան մինակ կամ ըստ հարկին խորհրդական մ'ալ հետ առնելով՝ ուղած ատեննին Քաղաքական ժողովին մէջ ներկայանալ եւ իրենց խորհրդին վերաբերեալ գործերուն վրայ խօսիլ, բայց քուէ չունին:

143. Ժողովներու եւ խորհուրդներու մէջ ամեն նիստ իր ատենագրութիւնը պէտք է ունենայ, զոր ներկայ գտնուող անդամները կ'ըստորագրեն:

Ընդհանուր ժողովին ատենագրութիւնները Պատրիարքն ու դիւանին անդամները միայն կ'ըստորագրեն:

Ընդհանուր ժողովին անդամները ներկայութեան ընդմէջ մը վրայ կ'ըստորագրեն ժողովարանը մտած ատեննին:

144. Ամեն ժողով եւ խորհուրդ իր տեսչութեան կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր տեղեկագիր պէտք է որ տայ իր համարառու ժողովին կամ խորհրդին:

Սոյն տեղեկագիրը բոլոր անդամոց կողմէն ըստորագրեալ պէտք է ըլլայ:

145. Երեք անգամ իրարու վրայ առանջ բանաւոր պատճառ մը գրով իմացնելու ներկայ չը գտնուող ժողովականին կամ խորհրդականին անունը ատենագրութեան մէջ կը յիշվի, եւ ժողովին կամ խորհրդին կողմէն ատենապետը անոր կը գրէ չը գալուն պատճառը հարցնելու համար. եթէ պատասխան չընդունի ժողովը, կամ ընդունած պատասխանը գինքը գոհ չընէ, երկրորդ գրութեամբ ժողովին դատումը կ'իմացնէ անոր եւ կը յորդորէ որ յաջորդ ատեննին ներկայ գտնուի. եթէ նորէն չը ներկայանայ, այնպիսին իր ազգասիրական պարտուցը մէջ զանցառութիւն ըրած ըլլալով՝ իր զանցառութիւնը հրաժարական կը սեպվի. եթէ այդպիսեաց թիւը մինչեւ 3 հասնի, ժողովին նախագահը կամ ատենապետը անոնց տեղ զանոնք ընտրող ժողովէն ուրիշ անդամներ կը խնդրէ<sup>1</sup>:

Նոյնը պէտք է ընէ երբ նոյն թիւով ժողովականք կամ խորհրդականք պակսին թէ վախճանման եւ թէ հրաժարման պատճառով:

<sup>1</sup> Այս տրամադրութիւնը Ընդհանուր ժողովին վերաբերեալ չէ:

## ԳԼՈՒԽ Ե.

## ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

146. Սահմանադրական ժողովով որոշեալ Ազգային Սահմանադրութիւնը առաջին անգամ առժամանակեայ ընդհանուր ժողովով կ'ընդունվի ու կ'ըստորագրվի, եւ յետոյ սահմանադրական պէս կազմեալ Ընդհանուր ժողովը դարձեալ ըստորագրելով՝ Ազգին կողմէն կը վաւերացնէ զանի եւ վճռաբար կը հաստատէ:

Սահմանադրութեան ըստորագրեալ բնագիրը ազգային դիւանատան մէջ կը պահվի եւ օրինակը տպագրութեամբ կը հրատարակվի:

147. Ազգային Սահմանադրութիւնը ազգովին ընդունվելէն ետքը՝ Ազգին որոշ ու յայտնի կամքը կը սեպվի, եւ անոր պարունակած տրամադրութիւնքը անփոփոխելի են ազգային Վարչութեան կողմէն:

Իսկ՝ երբ ազգային Վարչութիւնը Սահմանադրութեան գործադրութեանը մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ, ինք միշտ համեմատ վարվելով անոնց, իր ընթացքին երրորդ տարւոյն վերջերը միայն քննութեան առաջարկութիւն կրնայ ընել Ընդհանուր ժողովին:

148. Երբ Ընդհանուր ժողովը վերաքննութեան առաջարկութիւնը ընդունի, Վերաքննութեան ժողով մը կը կազմէ սա կերպով:

Կրօնական եւ Քաղաքական ժողովներէն չորսական հոգի, Տեսուչ խորհուրդներէն երեքական հոգի, եւ ասոնցմէ դուրս 10 հոգի զոր Ընդհանուր ժողովը իր մէջէն կամ դուրսէն կ'ընտրէ, ընդամենը 30 հոգի:

149. Վերաքննութեան ժողովը ազգային Վարչութեան կողմէն եղած դիտողութիւնները միայն քննութեան տակ առնելով, պէտք եղած փոփոխութիւնները՝ որոշէ եւ Պատրիարքին միջնորդութեամբը Ընդհանուր ժողովին կը ներկայացնէ:

150. Սահմանադրութեան վերաքննութիւնը Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական ըսկզբանց տրամադրութեանցը հա-

*մաճայն չըլլայ, այն սկզբանց՝ որով ապահովեալ են Ազգին իրա-  
ւունքները, իրաւունք՝ որոնց վրայ Ազգն անգամ չունի իշխա-  
նութիւն տնօրէնութեան զի միանգամայն պարտիք են:*

ՎԵՐՉ



## ՅԱՆԿ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ

- ԳԼ. Ա. Յաղագս պատրիարքութեան Զաքարիայ, եւ Յովհաննու Համատանցւոյ, եւ Հալաժանաց Հռոմէական Հայոց.....
- ԳԼ. Բ. Յաղագս փոփոխութեան տօնացուցին Հայոց եւ կաթողիկոսութեան Ստոյ Տ. Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Երուսաղէմի Տ. Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Կ. Պօլսոյ Տ Դանիէլի.....
- ԳԼ. Գ. Յաղագս վախճանի Ղուկասու կաթողիկոսի, եւ ընտրութեան Յովսեփայ, եւ Բարթողովմեայ եւ Դանիէլի.....
- ԳԼ. Դ. Յաղագս գործոց Յովհաննու եպիսկոպոսի Կ. Պօլսոյ, եւ Գալուստ նուիրակին Էջմիածնի, եւ ընտրութեան Դանիէլի 'ի կաթողիկոսութիւն, եւ Դաւթի 'ի պատրիարքութիւն .....
- ԳԼ. Ե. Յաղագս խռովութեան եւ երկպառապութեան Ազգիս 'ի Կ. Պօլիս, եւ պատրիարքութեան Յովհաննու.....
- ԳԼ. Ղ. Յաղագս աքսորանացն Դանիէլի եւ Գալուստ նուիրակին, եւ ընտրութեան Յովսեփայ 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, եւ վախճանի նորա.....
- ԳԼ. Է. Յաղագս երկիցս անգամ ընտրութեան Դանիէլի, եւ բռնանալոյն Դաւթի 'ի կաթողիկոսութիւն, եւ գործոց նորին.....
- ԳԼ. Ը. Յաղագս գրութեան Եփրեմայ Արշիեպիսկոպոսի առաջնորդի Ռուսաստանու, եւ աքսորանացն Յովհաննու պատրիարքի, եւ պատրիարքութեան Գրիգորի, եւ վախճանի Թորոսի կաթողիկոսին Ստոյ, եւ յաջորդելոյ Կիւրակոս եպիսկոպոսի.....
- ԳԼ. Թ. Յաղագս օժման Դանիէլի 'ի կաթողիկոսութիւն, եւ ժողովոյն Պայազիտու.....
- ԳԼ. Ժ. Յաղագս գործոց Գրիգորի պատրիարքի, եւ աքսորանաց նորին, եւ Դանիէլի, եւ վերադառնալոյ Յովհաննու կրկին անգամ յաթոռ պատրիարքութեան Կ. Պօլսոյ.....
- ԳԼ. ԺԱ. Յաղագս պատերազմին Պարսից եւ Ռուսաց, եւ դարձին Դանիէլի յաքսորանացն, եւ նստելոյ յաթոռ կաթողիկոսութեան յէջմիածին.....
- ԳԼ. ԺԲ. Յաղագս գալոյ Անգղիացւոց պատերազմական նաւօք 'ի Կ. Պօլիս, եւ բազմադիմի խռովութեանց, որք եղեն 'ի Կ. Պօլիս .....
- ԳԼ. ԺԳ. Յաղագս ջանալոյ Յունաց գրաւել զվանս սրբոյն Յակոբայ 'ի յերուսաղէմ, եւ յաղագս դատի նոցին ընդ Հայս.....
- ԳԼ. ԺԴ. Յաղագս վախճանի Տ. Դանիէլի կաթողիկոսի, եւ յաջորդելոյ Եփրեմի եւ յաղագս բանի միաբանութեան ընդ Հռոմէական Հայ կոչեցեալ ժողովրդեան.....
- ԳԼ. ԺԵ. Յաղագս հրաժարելոյ Յովհաննու 'ի պատրիարքութենէ, եւ յաջորդելոյ Աբրահամ պատրիարքի.....
- ԳԼ. ԺԶ. Յաղագս գործոց Աբրահամ պատրիարքի եւ աքսորանաց նորին եւ յաջորդելոյ Պողոսի եպիսկոպոսի Անգրիանուպօլսեցւոյ.....
- ԳԼ. ԺԷ. Յաղագս կոչելոյ Պողոսի պատրիարքին զՀռոմէական Հայս 'ի սէր միաբանութեան.....

- ԳԼ. ԺԸ. Յաղագս ատենաբանութեան Պօղոսի պատրիարքին, եւ կանոնական Կոնդակի նորին.....
- ԳԼ. ԺԹ. Յաղագս գործոց Պօղոսի պատրիարքին.....
- ԳԼ. Ի. Յաղագս ապստամբութեան Ուլնեցոյ Հայազգեաց, եւ մահամերձ վտանգի Տ. Կիւրակոսի կաթողիկոսին Սոյ.....
- ԳԼ. ԻԱ. Յաղագս կործանման տանն Տիւզեանց, եւ բանի միաբանութեան Հայոց ընդ Հռովմէական Հայս.....
- ԳԼ. ԻԲ. Յաղագս ջատագովութեան Աբբայեան Հարց զեկեղեցւոյն Հայոց.....
- ԳԼ. ԻԳ. Յաղագս աքսորանաց եւ փախստեան Գօլէճեան կարգաւորաց, եւ գալստեան առ մեզ Աբբայեան Հարց, եւ խօսելոյ նոցա ընդ վարդապետս մեր վասն խնդրոց ինչ.....
- ԳԼ. ԻԴ. Յաղագս խօսելոյ Աբբայեան Հարց ընդ վարժապետաց վասն մասանց հաւատոյ, զորոց էին խնդիրք.....
- ԳԼ. ԻԵ. Սուբբ եւ ուղղափառ վարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է, յորոյ վերայ միայն է խնդիրն.....
- ԳԼ. ԻԶ. Յաղագս խնդրոց Աբբայեան Հարց եւ ընդունելութեան նոցին.....
- ԳԼ. ԻԷ. Յաղագս գալոյ Աբբայեան վարդապետաց յեկեղեցիս մեր, եւ հաղորդելոյ ընդ մեզ ՚ի հոգեւոր պաշտամունս.....
- ԳԼ. ԻԸ. Թուղթ Հ. Թովմայ վարդապետին ընդդէմ Վինկենտիոսի Քօռեսի եպիսկոպոսին Լատինացւոց.....
- ԳԼ. ԻԹ. Յայտարարութիւն ՚ի Գրիգոր վարժապետէ Փէշտրմալճեան.....
- ԳԼ. Լ. Թուղթ Հ. Սերովբէ վարդապետի ձէվահիրճեան, ընդդէմ բանադրանաց թղթոյ Քօռեսի եպիսկոպոսին Լատինացւոց.....
- ԳԼ. ԼԱ. Յաղագս օրհնութեան իւղոյ վերջին օծման, եւ աղմկի ժողովրդեան Հայոց.....
- ԳԼ. ԼԲ. Յաղագս ապստամբելոյ Յունաց ՚ի հպատակութենէ Օսմանեան տէրութեան, եւ գլխատման Լիդօրիոսի պատրիարքին եւ մետրապօլտաց եւ մեծամեծաց Յունաց եւ բազմաց հասարակութեան.....
- ԳԼ. ԼԳ. Յաղագս պատերազմին Պարսից ընդդէմ Մոսկովաց եւ քաջութեան ազգին Հայոց, եւ յաղագս գրաւելոյ Մոսկովաց զԱրարատեան գաւառն ընդ իշխանութեամբ իւրեանց.....
- ԳԼ. ԼԴ. Յաղագս բարձման ապստամբ Օճաքին Եէնիչէրի գօրաց.....
- ԳԼ. ԼԵ. Յաղագս դարձի յաքսորանաց տանն Տիւզեանց, եւ պատրիարքութեան Տ. Կարապետի, եւ աքսորանաց Թընկըրեանց երկուց եղբարց.....
- ԳԼ. ԼԶ. Յաղագս այրելոյ Եւրոպացւոց զարքունի նաւատորմիզն Օսմանեան տէրութեան.....
- ԳԼ. ԼԷ. Յաղագս վերջին հալածանաց եւ աքսորանաց Հռովմէական Հայոց.....
- ԳԼ. ԼԸ. Յաղագս պատերազմին Մոսկովաց ընդդէմ Տաճկաց.....
- ԳԼ. ԼԹ. Յաղագս մեծի սովուն, որ եղեւ ՚ի Կոստանդնուպօլիս.....
- ԳԼ. Խ. Յաղագս քաջութեան Հայոց Բաբերդու եւ կոտորածի նոցա ՚ի Մոսկովաց, եւ յաղագս գործոց Տիպիչ սպարապետին ՚ի կողմն Բուսիլի.....

- ԳԼ. ԽԱ. Յաղագս գալոյ Ռուսաց 'ի վերայ քաղաքին Կոստանդնուպոլսոյ, եւ հաշտութեան նոցա ընդ Օսմանցիս ընդ երկոտասան դաշնագրութեամբք .....
- ԳԼ. ԽԲ. Յաղագս որոշելոյ Հռովմէական ՀԱյոց 'ի Հայոց, եւ մետրապոլսի նոցա, եւ առաջնորդի .....
- ԳԼ. ԽԳ. Յաղագս գործոց Յակոբայ առաջնորդին Հռովմէական Հայոց, եւ Նուրիճան Անտօնի մետրապոլսի նոցա .....
- ԳԼ. ԽԴ. Յաղագս խնամութիւն առնելոյ Գաղատացի Հռովմէականաց ընդ Յրանկաց, եւ արգելանաց հրովարտակին 'ի դրանէ տէրութեան .....
- ԳԼ. ԽԵ. Յաղագս վտանգաւոր հարուածոց եւ անցից Կոստանդնուպոլսոյ քաղաքին .....
- ԳԼ. ԽԶ. Յաղագս պատերազմի Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի ընդդէմ Ապտուլլահ փաշային Ասկաղոն քաղաքի .....
- ԳԼ. ԽԷ. Յաղագս պատերազմի արքային ընդդէմ Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի, եւ գալոյ Ռուսաց 'ի Կոստանդնուպոլիս 'ի պաշտպանութիւն արքայի .....
- ԳԼ. ԽԸ. Յաղագս մահամերձ բանտարգելութեան Ճանիկ եւ Մազուտ եւ Խնդիր ամիրայից եւ ազատութեան նոցին, եւ յաղագս կաթողիկոսութեան Յովհաննու Կարբեցւոյ .....
- ԳԼ. ԽԹ. Յաղագս գործոց Պէղճեան Յարութիւն Ամիրային, եւ մահու նորին .....
- ԳԼ. Ծ. Յաղագս օժման եկեղեցւոյն Հռովմէական Հայոց. եւ նորոգութեան եկեղեցեաց Հայոց, եւ յաղագս երեւելի դիպուածոց ինչ .....
- ԳԼ. ԾԱ. Յաղագս հարսանեաց դստերց արքային, եւ թլփատութեան որդւոց նորին, եւ յաղագս ճանապարհորդութեան արքունի վառօդապետ Յովհաննէս ամիրայի Յերոպա, եւ վերադարձի նորին .....
- ԳԼ. ԾԲ. Յաղագս շինութեան ճեմարանին Իսկիւտարու, եւ պատրիարքութեան Յակովբոսի .....
- ԳԼ. ԾԳ. Յաղագս ազգային խռովութեանց, եւ պատրիարքութեան Ստեփանոսի, եւ Աստուածատրոյ, եւ նահատակութեան Յովակիմայ .....
- ԳԼ. ԾԴ. Յաղագս կաթողիկոսութեան Ներսիսի հինգերորդի եւ պատրիարքութեան Մատթէոսի .....
- ԳԼ. ԾԵ. Յաղագս օժման Ներսիսի կաթողիկոսի, եւ գործոց նորա, եւ Շահնազարեան Կարապետ վարդապետի .....
- ԳԼ. ԾԶ. Յաղագս գժտութեան 'ի մէջ կաթողիկոսին եւ Լազարեան Խաչիկ աղայի .....
- ԳԼ. ԾԷ. Յաղագս հերձուածոյ Բողոքական Հայոց .....
- ԳԼ. ԾԸ. Յաղագս ընդունելոյ պատրիարքաց զադամանդեայ պատուանշանս յարքայէ եւ այցելութեան առ իրեարս, եւ վերստին բացման ճեմարանին Իսկիւտարու, եւ փոփոխման գլխարկի եկեղեցականաց Հայոց, եւ առաքելոյ կաթողիկոսին զՊանակի առ Մատթէոս պատրիարք .....
- ԳԼ. ԾԹ. Յաղագս աղետալի դիպուածոց 'ի Կ. Պօլիս եւ յարտաքին գաւառս, եւ բողոքելոյ Հայոց ընդդէմ Յունաց վասն դրան վանից Ս. Ծննդեան փրկչին 'ի Բեթղեհէմ, եւ հաստատութեան Հոգեւոր եւ Քաղաքական ժողովոց պատրիարքարանին Հայոց .....

- ԳԼ. 4. Յաղագս ազատութեան Հայոց բնակելոց 'ի Վասպուրական, 'ի Տարօն, եւ 'ի Բագրեւանդ գաւառս, 'ի հարստահարութենէ բարբարոս ազգին Մարաց շնորհիւ Մատթէոս պատրիարքին.....
- ԳԼ. 4Ա. Յաղագս փոխադարձ այցելութեան Ֆէրիէրի կարգինալին Հռովմայ 'ի պատրիարքարանս Յունաց եւ Հայոց, ուր եւ յաղագս բանախօսութեան 'ի վերայ հաւատոյ.....
- ԳԼ. 4Բ. Յաղագս Համազգեաց ընկերութեան .....
- ԳԼ. 4Գ. Յաղագս հրաժարելոյ Մատթէոսի 'ի պատրիարքութենէ եւ կրկին պատրիարքութեան Յակովբոսի արքեպիսկոպոսի.....
- ԳԼ. 4Դ. Յաղագս աղմկի եւ խռովութեան Հայոց եւ Հռովմէականաց վասն հրատարակման Իտալերէն եւ Հայերէն պարսաւագրոցն.....
- ԳԼ. 4Ե. Յաղագս պատուելոյ սրբազան կաթողիկոսին Ներսիսի զՅակոբ պատրիարք արժանաւոր մեծարանօք, եւ Արեւելեան պատերազմին Ռուսաց որ եղեւ վասն տնօրինական տեղեաց Ս. Երուսաղէմի եւ վախճանի սրբազան կաթողիկոսին Ներսիսի, եւ կաթողիկոսութեան Մատթէոսի առաջնոյ .....
- ԳԼ. 4Զ. Յաղագս պատրիարքութեան Գէորգայ, եւ ուղեւորութեան Մատթէոսի 'ի Ս. Էջմիածին .....
- ԳԼ. 4Է. Յաղագս հանդիսից, որք եղեն 'ի ճանապարհորդութեան սրբազան կաթողիկոսին մինչեւ յԷջմիածին, եւ փառաւոր օծման նորա, եւ գործոց նորա եւ պատրիարքութեան Սարգսի .....
- ԳԼ. 4Ը. Յաղագս հաստատութեան Ազգային Սահմանադրութեան Հայոց.....

ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՂԻՒՍԱԿ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՅԵՏ  
ՔՐԻՍՏՈՍԻ

ԴԱՐ ԺԸ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ  
ԱԻԵՏԻՍ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՊԷՐՊԷՐԵԱՆ



ՅԻՇԱՍԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն Քրիստոսի	Թոշակահան Հայոց	Թոշակահան Տաճկաց	Վաճառված Լճմիական	Պարտքերի Կ. Պ. Պ. Պ.	Թոշակահան Օսմանյան
						ՍԻՄՈՆ	ԳՐԻԳՈՐ	ՄԸՍՍԱՖԱ
Պատերազմ Տաճկաց ընդ Ռուսաց: Սուլթան Մուստաֆա արար Հանդէս պատերազմի (Էս- նաֆ ալայի): Ապա ել եւ դրօշակն Մահմէտի, եւ վասն տեսանելոյ զնա՝ սպանան 'ի քրիս- տոնէից 127 անձինք: Մազապուր զերծաւ դեսպանն Գերմանացոց Պրոնեառ .....	Մարտ	3	1769	ՌՄԺԹ	1112	7	7	13
Տեղաց մարախ յոյժ 'ի Կոստանդնուպօլիս .... ի ներքոյ Բէթրօ խափուի 'ի Ֆէնէր` գիշերի կայծակնահար եղեալ տուն մի, այրեցաւ բո- լորովին .....	Յուլիս	15	.....	.....	.....	.....	.....	.....
Աղա խափուսին այրեցաւ .....	Հոկտ.	20	1770	ՌՄԻ	1113	8	8	14
Բասենցի Յարութիւն նուիրակն Էջմիածնի փախեալ 'թրեստ .....	Օգոստ	14	1771	ՌՄԻԱ	1110	9	9	15
Ղազք կռուեցան 'Ղալաթիա ընդ նաւա- վարս. այրեցին զՆէնի գիւղ. եւ յետ աւուրց ինչ այրեցին եւ զպալատ դեսպանին Բրու- սիոյ 'ի Բերա .....	Փետր.	12	1772	ՌՄԻԲ	1116	10	10	16
Հրդեհ 'պալատն արքայի ' կողմն կանանո- ցին .....	Յունիս	3	.....	.....	.....	.....	.....	.....
						ՍԻՄՈՆ	ԳՐԻԳՈՐ	ՄԸՍՍԱՖԱ
Հանդէս 'ի սիւրբէ սէլիբին, յորոյ ' բազմու-								





ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրային Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թվականային Օմանական
սորին .....	Փետր	3	1779	ԲՄԻԸ	1193	17	7	6
Ծնանի որդի սուլթան Համիտի սուլթան Մուստաֆա 'ի չապան 26 .....	Յուլիս	17	.....	.....	.....	.....	.....	.....
Սիմէոն կաթողիկոս վախճանի, եւ յաջորդէ նմա Ղուկաս .....	Յունվ	4	1780	ԲՄԻԹ	1182	18 Ղուկաս	8	7
Գիւտ օգնապարիկ զնտոյ ' Քարլօ եւ Բօպէրթ Գաղղիացոց .....	Ապրիլ	6	.....	.....	.....	1	.....	.....
Հալաթումն կաթողիկաց ' Զաքարիա պատրիարքէ .....	Յուլիս	14	.....	.....	.....	.....	.....	.....
Զաքարիա պատրիարք աքսորի ' Պրուսա, եւ նստի Համատանցի Յովհաննէս վարդապետ ամիսս տասն .....	Մայիս	29	1781	ԲՄԼ	1190	2	9 Յօհաննէս ամիսս 10	8
Վերադառնայ Զաքարիա ' պատրիարքութիւն .....	Մարտ	31	1782	ԲՄԼԱ	1197	3	10	9
Հրդեհ մեծ ձիավալիչի .....	Օգոստ.	10	.....	.....	.....	.....	.....	.....
Երեք պատերազմական նաւք տէրութեանն Սպանիոյ եկին մեծագին ընծայիւք 'ի Կոստանդնուպօլիս. եւ եօթն անձինք 'ի նաւուց անտի յեղաշրջեցան 'ի Մահմէտական օրէնս առ 'ի մնալ այսր: Բայց խնդրեալ ' նաւուցն տաճկական զգեստուք նոցին` 'ի յելանելն աստի ' զնալ .....	Օգոստ.	30	1783	ԲՄԼԲ	1199	4 Ղուկաս	11 Զաքարիա	10 Համիտ
Երկրաշարժ մեծ 'ի Երիզա եւ 'ի Մուշ, եւ								

ՔՐՈՍԻԿՈՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնում	Օր	Ըմբռնում Քրոնիկոն	Թուսական Հայոց	Թուսական Տաճկաց	Կաթնոնկանոս Էջմիածնաց	Պարբերակներ Ա.Պ.Օլոնոյ	Թափանցում Օմանկանոց
վնաս բազում .....	Յուլիս	7	1784	ԹՄԼԳ	1198	5	12	11
Հրդեհ 'ի Պալատ 'ի Չորպաճի չէշմէսին .....	.....	25	.....	.....	.....	.....	.....	.....
Վախճանի եփրեմ կաթողիկոս Սսոյ, եւ օծա- նի Թէոդորոս ' Կոստանդնուպոլիս ' Զաքա- րիա պատրիարքէ .....	Սեպտ.	6	.....	.....	.....	.....	.....	.....
Հալիլ փաշայի գլուխն հատեալ ' Պողճա ա- տա, բերաւ ' Կոստանդնուպոլիս .....	Ապրիլ	19	1785	ԹՄԼԳ	1199	6	13	12
Ծնանի որդի սուլթան Համիտի սուլթան Մահմուտ, բազմազանի 13 .....	Յուլիս	9	.....	.....	.....	.....	.....	.....
Գլխատեցաւ Ապուլէիսցի Բէթրաքի Յոյն հա- տավաճառն արքունի փոզերանոցին . յորում աւուր եւ Մավրօ Եանի աննշան ոմն Յոյն ըն- կալաւ զԳուգա Վլախաց դքսութեան. ....	Ապրիլ	7	1786	ԹՄԼԵ	1200	Ղուկաս 7	Զաքարիա 14	Համիտ 13
Եէնիչէրիք այրեցին զԲէնտիկ կոչեցեալ գիւղն բոյորովին .....	Յուլիս	15	.....	.....	.....	.....	.....	.....
Ընթրիս պատրաստեաց արքայն եկելոցն 'ի Հնդկաստանէ .....	Օգոստ	21	1787	ԹՄԼԶ	1201	8	15	14
Շաբաթ օր տօնախմբութեան գիւտի նշխա- րաց սուրբ Լուսաւորչին սահմանեցաւ պահել կիւրակէ, որ յառաջն էր բարձեալ .....	Սեպտ.	11	.....	.....	.....	.....	.....	.....
Բացաւ պատերազմն ' վերայ Ռուսաց եւ Գերմանացւոց .....	Մարտ.	6	1788	ԹՄԼԷ	1202	9	16	15

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թոշակահատուցում	Թոշակահատուցում	Կառավարման օրոշակներ	Պարտավորություններ	Թափանցանքներ
Եաշ քաղաքի Վլադիմիր ասպետակեցալ 'ի Ռուսաց, ել Դուքս նորին Ալեքսանդր Իբսիլանտի խոյս ետ 'ի բանակ Ռուսաց Հանդերձ ամենայն տամբ իւրով .....	Ապրիլ	16	.....	.....	.....	.....	.....	.....
Արքունի նաւք ել լաստք խորտակեցան 'ի ծովն Պոնտոսի .....	Ապրիլ	24	.....	.....	.....	.....	.....	.....
Մեռալ Համա սուլթան, ել գլխատեցալ Ըսքանավի Յոյն վաճառական նորին ել լուծալափոխ Քիւրցի, ընդ նմին ել եղբայր նորին ..	Օգոստ	5	.....	.....	.....	.....	.....	.....
Փաշա խափուսին այրեցալ բոլորովին .....	Դեկտ	10	1788	ՌՄԼԷ	12.2	Ղուկաս 9	Զաքարիա 16	Համիտ 15
Մեռանի սուլթան Համիտ, ել յաջորդէ սուլթան Սելիմ ընդէպ 11 .....	Մարտ	27	1789	ՌՄԼԸ	12.3	10	17	16
Գլխատեցալ տեսուչն նաւատեղեաց Հաճի Սելիմ էֆէնտի՝ ածեալ գլուխ նորին 'ի բանակէն .....	Ապրիլ	7	.....	.....	.....	.....	.....	Սէլիմ 1
Անձրեւ սաստիկ, ել աւերութիւն բազում 'ի Կոստանդնուպօլիս, մանաւանդ ' Պէչիքթաշ ել յՕրթագիւղ .....	Հոկտ	11	.....	.....	.....	.....	.....	.....
Առին Գերմանացիք գլխակրատ գաւառան Հանդերձ .....	Մարտ	1	1790	ՌՄԼԹ	12.4	11	18	2
Հրդեհ Ուզուն չարչին մինչ 'ի պարիսպն Հսկի սարային .....	.....	24	.....	.....	.....	.....	.....	.....

ՔՐՈՍԻԿՈՐ



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	ԸՖԻՅՔ	ՕՐ	ԸՖՔ ՔՐԻՆՐՈՍՔ	ԹՊՆԱԿԱՆ ՀԱՅՈՅ	ԹՊՆԱԿԱՆ ՏԱՃԿԱՅ	ԿԱՆՈՉՆԵՐՔ ԷՋՄԻՋՆԱՅ	ՊԱՐՐԵՐԵՐՔ ԿՊՕԼՈՅ	ԹՎԱՆՈՐՔ ՕՍՄԱՆԵՆՅ
տար ..... Շինեցաւ վառօդանոց մեծ 'ի գիւղն Ազատ- լար, եւ վառօդապետ նորին կարգեցաւ ճար- տարապետ Հայազգի Հաճի Տատ Առաքել ա- ղա .....	Մայիս	16	1793	ԹՄԲԽ	ՂԿԿ	14	21	5
Վախճանի Յովակիմ պատրիարք Երուսաղէ- մի, եւ յաջորդէ Թէոդորոս .....	Յուլիս	3	1793	ԹՄԽԲ	ՂԿԿ	Ղուկաս 14	Ջաքարիա 21	Սէլիմ 5
Շինեցան մթերանոցք Համարաց յԻւսկիւ- տար, եւ յափունս Դանուբ գետոյ .....	Մայիս	28	1794	ԹՄԽԳ	ՂԿԸ	15	22	6
Շինեցան ընդարձակ հրապարակք 'ի հրա- հանգս գինուորաց .....	Սեպտ.	3	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի Թիւթիւն կէօմրիւկն .....	Յունվ.	20	1795	ԹՄԽԴ	ՂԿԹ	16	23	7
Սահմանեցաւ արծաթի նշան գինուորաց` բաշխել ըստ իւրաքանչիւր աստիճանի` մա- հիկ եւ աստղ ունելով 'ի վերայ .....	Ապրիլ	7	.....	.....	.....	.....	.....	.....
Վախճանի Կատարինէ թագուհին Ռուսաց, եւ յաջորդէ նմա որդի իւր Բավլի .....	Նոյեմբ.	4	1796	ԹՄԽԵ	ՂԿԻ	17	24	8
Կառուցաւ գործարան թղթոյ 'ի Հիւնքեար իսկէլէսին .....	Օգոստ	5	1797	ԹՄԽԶ	ՂԿԼ	18	25	9
Բացաւ տպագրատուն գրոց տաճկաց յԻւս- կիւտար .....	Սեպտ.	3	.....	.....	.....	.....	.....	.....
Ապստամբութիւն Փազուան օղլու բղէշխ- խին Վիտինայ, եւ պատերազմ 'ի վերայ նո-								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռն.	Օր	Ըմբռն. Բրնարտի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնայ	Պարբերակի Կ. Պոլսոյ	Թաղամասի Օմանեանց
րա. յորում եւ մահ Քիւրտ Ալօ փաշային .....	Հոկտ.	4	1797	ԹՄԽԶ	1211	18	25	9
Նորոգութիւն սուրբ Խաչ եկեղեցւոյն Ղուր- րու չէշմէյի .....	Փետր.	28	1798	ԹՄԽԵ	1212	19	26	10
Նաբօլեօն Պօնաբարդ տիրէ Եգիպտոսի .....	Յուլիս	16	.....	.....	.....	.....	.....	.....
Պատերազմ 'ի վերայ Գաղղիացւոց. եւ Գաղ- ղիացիք առին զՅոպպէ .....	Օգոստ	22	.....	.....	.....	.....	.....	.....
Վախճանի Զաքարիա պատրիարք, եւ յաջոր- դէ Դանիէլ .....	Մարտ	12	1799	ԹՄԽԸ	1213	20	27	11
Նորոգութիւն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն Ղալաթիոյ .....	Նոյեմբ	13	.....	.....	.....	.....	ԴԱՆԻԷԼ ամիսս 14	.....
Հաշտութիւն ընդ Գաղղիացիս . եւ Եգիպտոս վերստին դարձուցաւ առ Օսմանցիս .....	Յունվ.	12	1800	ԹՄԽԹ	1214	21	1	12
Վախճանի Ղուկաս կաթողիկոս, եւ զամ մի դատարկ մնայ աթոռն յընտրութիւն նորոյ կաթողիկոսի .....	.....	25	.....	.....	.....	.....	.....	.....
Խռովութիւն 'ի պատրիարքարանի եւ յեկե- ղեցւոջն. Դանիէլ պատրիարք ընդ Գալուստ նուիրակին երթան յաքսորս. Դանիէլ 'ի Պօղ- չատա, եւ Գալուստ 'ի Մալսա. եւ Յովհան- նէս եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի՝ լինի պատրիարք .....	Մայիս	13	1800	ԹՄԽԹ	1214	21	1	12
Նորոգութիւն սուրբ Եղիայի եկեղեցւոյն Է-								

Ղուկաս

ՅՕՀԱՆՆԷՍ

ՍԷԼԻՄ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրական Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թվականը Օսմանական
յիպուլ .....	Նոյեմբ	11	.....	.....	.....	ԴԱԽԻԹ	.....	.....
Յովսեփի արքեպիսկոպոսն Ռուսաստանու՝ անուանի կաթողիկոս. եւ 'ի գալն յԷջմիածին՝ վախճանի 'ի Տիխիս .....	Մարտ	6	1801	ՌՄԾ	1210	1	2 ԳՐԻԳՈՐ Ամիսս11	13
Դանիէլ զերծուցեալ յաքսորանացն՝ առաքի 'ի կաթողիկոսութիւն, բայց Դաւիթ յափշտա- կէ զկաթողիկոսութիւնն ընչիւք եւ բռնու- թեամբ Պարսից .....	Ապրիլ	11	.....	.....	.....	.....	.....	.....
Յովհաննէս պատրիարք աքսորի յԵւզոկիա, եւ Գրիգոր լինի պատրիարք .....	Հոկտ.	19	.....	.....	.....	.....	.....	.....
Նաբօլէօն Պօնաբարդ փախչի յԵգիպտոսէ ... վախճանի Թէոդորոս կաթողիկոս Սսոյ, եւ յաջորդէ Կիւրակոս .....	Նոյեմ.	8	.....	.....	.....	.....	.....	.....
Դանիէլ օծանի կաթողիկոս 'ի յԻւջ քիլիսա 'ի Պայագիտ .....	.....	12	.....	.....	.....	.....	.....	.....
.....	Մայիս	25	1802	ՌՄԾԱ	1216	2	3	14
Գրիգոր պատրիարք աքսորի յԷջմիածին ընդ Դանիէլի կաթողիկոսի. եւ վերադառնայ Յով- հաննէս 'ի պատրիարքութիւն .....	Հոկտ.	21	1802	ՌՄԾԱ	1216	2	3	14
Դաւիթ չարչարէ զԴանիէլ, եւ արգելու 'ի բանտի .....	Դեկտ.	9	.....	.....	.....	.....	.....	.....
Շինութիւն հիւանդանոցին Նարլը գափուի.. Նորոգութիւն սուրբ Գէորգ եկեղեցւոյն Սա- մաթիոյ .....	.....	14	1803	ՌՄԾԲ	1217	3	4	15
.....	Յունիս	13	1804	ՌՄԾԳ	1218	4	5	16





ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաշիվային Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թաղանթի Օմանեանց
ընտրու արքայի. իջուցին յաթոռոյ զՍուլթան Սէլիմ, եւ եղին զՍուլթան Մուստաֆա Դ. զորդի Սուլթան Համիտի Ա.....	Մայիս	28	.....	.....	.....	.....	.....	ՄԸՍՍԱՅԱ 1
Մուստաֆա փաշայն Ռուսճուխի՝ առեալ ընդ իւր զարքունի բանակն եւ զսատրազմ Չէլէպի Մուստաֆա վէզիրն, բազմութեամբ Եւրոպեան զօրաց եկն 'ի Կոստանդնուպօլիս, իջուցանել զՍուլթան Մուստաֆա, եւ դնել վերստին զՍուլթան Սէլիմ .....	Յուլիս	30	1808	ՌՄԾԷ	1223	5	9	Սէլիմ 1
Սուլթան Մուստաֆա խեղդամազ առնէ ըզ Սուլթան Սէլիմ. ընդ որ ցասուցեալ Մուստաֆա փաշայն Ռուսճուխի՝ ընկենու զվէզիրն 'ի պատուոյն, կոխէ զպալատն արքունի, ընկենու յաթոռոյ զՍուլթան Մուստաֆա, եւ դնէ 'ի տեղի նորին զՍուլթան Մահմուտ Բ. եւ ինքն լինի վէզիր մեծ, եւ կոտորէ զբազումս յԵնիչէրեաց 'ի ճէմաղիլ ախրը 4 .....	Օգոստ	11	.....	.....	.....	.....	.....	.....
Աղմուկ Ենիչէրի զօրաց, եւ խեղդամազ սպանումն Մուստաֆա փաշային, եւ Սուլթան Մուստաֆայի .....	Նոյեմբ	15	.....	.....	.....	.....	.....	.....
Այրեցան փաշա զափուսին եւ Մէհտէր օճաղին, եւ ձմերանոցքն Լէվէնդ չիֆլիկին եւ Իւսթիւտարու.....	Նոյեմբ	16	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռ	Օր	Ընդհանուր Բնակարան	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Ամենօրյա Էջմիածնայ	Պարբերակ Ա.Պ.Օլոսոյ	Թանգարան Օմանեանց
Անձրեւ սաստիկ, եւ աւերութիւն բազում յէյուպ, 'ի Գասըմ փաշա, 'ի Պէչիքթաշ, յՕրթագիւղ, եւ այլ տեղիս: Խեղճամահ եղեն 18 անձինք, եւ կովք եւ ոչխարք բազում յոյժ.....	Դեկտ.	17	.....	.....	.....	.....	.....	.....
<p>Հատաւ գլուխն ապստամբ Սիւլէյման փաշային Պաղտատայ՝ խորամանկութեամբ Հալէթ էֆէնտիյին՝ եւ դաւաճան խնայելի Հրէին, որ հատավաճառ իսկ էր գլխատելոյն .....</p> <p>Եռսուֆ փաշա կարգեալ վէզիր եւ սպարապետ, արքունի բանակաւ խաղաց 'ի վերայ Ռուսաց .....</p> <p>Ջանք Յունաց գրաւել զվանս սրբոյն Յակոբայ 'ի յԵրուսաղէմ .....</p> <p>Պատերազմ Պարսից ընդ Ռուսաց .....</p> <p>Սէրվացիք ապստամբեցան յարքայէ, եւ յարեցան 'ի Ռուսս .....</p> <p>Առին Ռուսք զբանակն արքունի, զՍիլիստրէ, եւ զայլ բազում տեղիս .....</p> <p>Վախճանի Դանիէլ կաթողիկոս, եւ յաջորդէ նմա Եփրեմ .....</p> <p>Հրդեհ ահագին 'ի Պէյօղլու, յորում այրեցան</p>	<p>Փետր.</p> <p>Մարտ</p> <p>Ապրիլ</p> <p>Մայիս</p> <p>.....</p> <p>Յունիս</p> <p>Օգոստ</p>	<p>14</p> <p>8</p> <p>23</p> <p>12</p> <p>16</p> <p>1</p> <p>21</p>	<p>1809</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p>	<p>ՌՄԾԸ</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p>	<p>1123</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p>	<p>Դանիէլ</p> <p>6</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>Եփրեմ</p>	<p>Յոհաննէս</p> <p>10</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p>	<p>Մահմուտ</p> <p>2</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p> <p>.....</p>

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռ	Օր	Ըմբռ Քրոնոգրաֆ	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրային Էջմիածնայ	Պարբերակի Կ.Պ.Օլոսոյ	Թափանցիկ Օմանկանց
տունք աւելի քան զերկու հազար .....	Ապրիլ	7	1810	ԲՄԾԹ	1220	1	11	3
Սով հացի 'ի Կոստանդնուպոլիս յերեսաց պատերազմաց .....	Ապրիլ	12	1810	ԲՄԾԹ	1220	1	11	3
Բարձին Ռուսք զբովանդակ թագաւորու- թիւն Վրաց ազգին .....	Մայիս	2	.....	.....	.....	.....	.....	.....
Ժողով 'ի պատրիարքարանին Հայոց վասն միաբանութեան ընդ Կաթողիկաց .....	Յուլիս	3	.....	.....	.....	.....	.....	.....
Ծնաւ արքայի որդի Սուլթան Համիտ անուն 'ի շապանի 6 .....	.....	4	.....	.....	.....	.....	.....	.....
Այլեցին Ռուսք զՌուսնոք եւ կործանեցին, եւ զբանական արքունի պաշարեցին 'ի Շումն Ծնաւ արքայի որդի Սուլթան Պայազիտ ա- նուն 'ի զիլքատէ 27 .....	Օգոստ	11	.....	.....	.....	.....	.....	.....
.....	.....	19	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ ելեալ 'ի պասմախանայէն Եէնի գա- փուի .....	Յունվ.	3	1811	ԲՄԿ	1226	2	12	4
Հրդեհ 'ի Ֆէնէր 'ի Գանլը քիլիսէ .....	Յուլիս	12	.....	.....	.....	.....	.....	.....
Գիսաւոր աստղ երեւեցաւ զարհուրելի տեսո- ղաց .....	Օգոստ	11	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ յՕրթագիւղ 'ի ծովեզերեայ յարկս Հա- յոց .....	Սեպտ.	18	.....	.....	.....	.....	.....	.....
Շինութիւն սուրբ Յակոբ եկեղեցւոյն Գասմ փաշայի .....	Սեպտ.	29	1811	ԲՄԿ	1226	2	12	4
Սաստիկ ձիւն, որ անտեսանելի էր ծերու-								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնաց	Պարբերականի Կ.Պ.Օլոնոյ	Թաղամասի Օմանեանց
նեաց .....	Նոյեմ.	15	.....	.....	.....	.....	.....	.....
Ահադին պատերազմն Նաբոլէօն Պօնաբարդին ընդդէմ Ռուսաց .....	Մարտ	17	1812	ՌՄԿԱ	1227	3	13	5
Հաշտութիւն Տաճկաց ընդ Ռուսաց .....	Ապրիլ	3	.....	.....	.....	.....	.....	.....
Տիմիրազքօ Մուրուզ արքունի թարգմանն յօշատեցաւ հրամանաւ արքայի 'ի բանակին, եւ եղբայր նորին Փանայօթաքի գլխատեցաւ 'ի Կոստանդնուպօլիս .....	Մայիս	21	.....	.....	1227	Եփրեմ	Յօհաննէս	Մահմուտ
Ժանտախտ բազմամեայ, որ զամս 27 եկաց մնաց 'ի Կոստանդնուպօլիս մինչեւ ցսկզնաւորութիւն դարանթինային .....	Յունիս	3	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի Պալատ 'ի թաղն Հրէից եւ Հայոց ..	Սեպտ.	14	.....	.....	.....	.....	.....	.....
Բէճէպ փաշայն Վիտինայ Հնազանդեցոյց զՍերվացիս եւ զՊէլկրատ, եւ սպան չարաչար զՉէնի Եօւկի ապստամբն Միւօզ Օպրենովիչ իշխանն Սերվացւոց .....	Մայիս	19	1813	ՌՄԿԲ	1228	4	ԱԲՐԱՀԱՄ 1	6
Յովհաննէս պատրիարք հրաժարի վասն ծերութեանն 'ի վանս Իւսքիւտարու, եւ ընտրէ յաթոռ իւր զԱբրահամ եպիսկոպոս Գոլեան նուիրակն Էջմիածնի .....	Մայիս	15	1813	ՌՄԿԲ	1228	Եփրեմ 4	Աբրահամ 1	Մահմուտ 6
Հրդեհ յապարանս դեսպանին Շուէտաց տէրութեան .....	Օգոստ	6	.....	.....	1228	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն Քրիստոսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրական Էջմիածնայ	Պատրիարքի Կ.Պ.Ս.Ս.	Թաղապետ Օսմանյան
Նորոգութիւն սուրբ Թադաւոր եկեղեցւոյն Գատրգիւղի .....	Յուլիս	4	1814	ԹՄԿԳ	1229	5	2	7
Մէհմէտ Ալի փաշայն Եգիպտոսի ընդ սուր անցոյց զչորեքհարիւր եւ եօտանասուն Քէօ- լէմէն իշխանս Արաբացւոց, եւ զմնացեալսն փախստական արար մինչեւ 'ի Նուպիտ .....	.....	22	.....	.....	.....	.....	.....	.....
Խոսրով Մէհմէտ փաշա ծովակալն զնացեալ պատերազմական նաւուք, գլխատեաց զապս- տամբ իշխանն Թէքքէյի եւ Ատալիոյ .....	Օգոստ	26	.....	.....	.....	.....	.....	.....
Չափան զատէ ձէլալէտտին փաշա ընդ սուր անցոյց զամենայն գլխաւորս Եէնիչէրեաց Բերիոյ .....	.....	30	.....	.....	.....	.....	.....	.....
Աղմուկ Եէնիչէրեաց, որք յօշատեցին զԵէնի- չէր աղասին .....	Փետր.	2	1815	ԹՄԿԳ	1230	6	1	8
Աբրահամ պատրիարք աքսորի 'ի Մարզուան եւ յաջորդէ Պօղոս Անդրիանուպօլսեցի փո- փանորդն սուրբ Երուսաղէմի .....	Դեկտ.	15	1815	ԹՄԿԳ	1230	Եփրեմ 6	Պօղոս 1	Մահմուտ 8
Գին արքունի հարկին՝ որ էր 1ն դահեկան, եղեւ 16 .....	Օգոստ	7	1816	ԹՄԿԵ	1231	7	2	9
Հրդեհ 'ի պալատն արքայի, յորում այրեցաւ եւ երկամեայ դուստր արքայի, դայեկաւն հանդերձ .....	Սեպտ.	13	.....	.....	.....	.....	.....	.....
Քարկեցաւ նորաչէն եկեղեցին Հիսարու, եւ								



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ամիս	Օր	Ամիսի Քրիստոսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Ամենամյակ Էջմիածնայ	Պարբերակի Ամիս	Թվական Օրական
<p>ապստամբաց Ուլնեցուց. բայց յետ ամսոց ինչ ստուգեալ զանմեղութիւն նորա դարձուցին յաթոռ իւր .....</p> <p>Երեքին եղբարք Տիւզեան՝ Գրիգոր եւ Սարգիս եւ Միքայէլ, եւ մի եւս հօրեղբորորդի նոցին Մկրտիչ՝ արգելան ՚ի փողերանոցին, խորամանկութեամբ անագորոյն Հալէթին, եւ Հատափաճառի նորուն Իսխէլ Հրէին, թէպէտ եւ ինքեանք ընկալան զչարաչար մահ .....</p>	Ապրիլ	11	1819	ԹՄԿԸ	1334	10	4	12
	Օգոստ	29	1819	ԹՄԿԸ	1334	10	4	12
<p>Տունք Տիւզեանց եւ ազգականաց նոցին եւ սպասաւորաց՝ ընդ ամենայն ՆՁ, արքունի կնքով կնքեցան. կանայքն առաքեցան առ Պօղոս պատրիարք պահել զնոսա զգուշութեամբ ՚ի տան միում. իսկ արքն եղան ՚ի բանտի ՚ի փողերանոցին, որոց անուանքն են այսոքիկ. Գրիգոր եւ Սարգիս եւ Կարապետ եւ Միքայէլ եւ Պօղոս հնգեքին եղբարք Տիւզեան, Մկրտիչ եւ Յարութիւն հօրեղբորորդիք նոցին՝ եւ մայր նոցա Մարիանէ: Մանասեան Գրիգոր, որ անդ մեռաւ ՚ի բանտին ՚ի ժանտախտէ: Աթանաս եւ եղբայր նորա Յակոբ: Ալէքսանեան Յովհաննէս եւ երեքին եղբարք նորա: Երկու որդիք Թրնկրեան Յա-</p>						Եփրեմ	Պօղոս	Մահմուտ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռն	Օր	Ըմբռն Բրնարոսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Ամբողջությամբ Էջմիածնայ	Պարբերակներ Ա.Պ.Օլոսոյ	Թաղամասեր Օմանեանց
<p>ընթացիկ աղայի: ԻՖրազճի Յարութիւն: Պետ- րոս Ամբրոսիոսեան: Հայր Ստեփանոս վար- դապետ Ռափայէլեան, որ պատահմամբ գտաւ անդ 'ի տան Տիւղեանց: Քիւզիւք Յովհան- նէս: Թօրուղեան Պօղոս Կէնճեան Յովսեփ եւ եղբարք իւր: Չամչեան Յովսեփ եւ սպասա- ւոր իւր: Ազնաւուրեան երեք եղբարք: Ելի- քէնճեան Գաբրելաքի եւ եղբայր իւր: Վէքիլ- խարճ Մարտիրոս: Բայց գլուխ Յովսեփ: Ռա- փայէլ: Մինաս: Յովակիմ: Էտիրնէլի Սահակ: Ռօքօս: Կրակեան Կարապետ: Խան կէլտի եւ այլ եւս սպասաւորք .....</p>	Սեպտ	2	1819	ՌՄԿԸ	1338	10	4	12
<p>Ծնաւ արքայի որդի Սուլթան Ահմէտ անուն Գլխատեցան Գրիգոր եւ Սարգիս Չէլէպիք ա- ռաջի Պապը Հիւմայիւն կոչեցեալ մեծի դրան պալատան, եւ Միքայէլ եղբայր նոցին եւ Մկկրտիչ հօրեղբորորդի նոցին կախեցան յեէնիգիւղ 'ի պատուհանէ ծովեղերեայ յարկի իւրեանց .....</p>	Հոկտ.	1	.....	.....	.....	.....	.....	.....
<p>Մարմինք պայազատացն Տիւղեանց, թաղե- ցան 'ի Ղուրուչէջմէ .....</p>	.....	4	.....	.....	.....	.....	.....	.....
<p>Բերին գՅակոբ Չէլէպի Տիւղեան 'ի Կոս-</p>	.....	6	.....	.....	.....	.....	.....	.....



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսական Էջմիածնայ	Պատրիարքական Սրբազան Կաթողիկոսություն	Թաղապետական Օրհանգ
տանդնուկային՝ գտեալ 'ի կղզին Սագրզ, յորմէ գնալոց էր յԵրուսաղիմ, եւ եղին 'ի բանտի 'ի փողերանոցին ընդ սպասաւորաց իւրոց ...	Հոկտ.	12	1819	ԹՄԿԸ	.....	10	4	12
Շամանթօ Հրեայն նստաւ 'ի տեղի Մանասեան Գրիգոր Աղայի, որ էր մուգաթա սարքաֆի .....	.....	20	.....	.....	.....	.....	.....	.....
Մեռաւ որդի արքային Սուլթան Սիւլէյման անունն .....	Դեկտ.	3	.....	.....	.....	.....	.....	.....
Զգեստք եւ սկիհք՝ պատկերք եւ գրեանք՝ որք գտան 'ի կնքեալ տունս Կաթողիկաց, բաշխեցան պատրիարքին Հայոց հրամանաւ արքայի, եւ գին նոցուն հազար քսակ ոսկւոյ՝ պահանջեցաւ 'ի Կաթողիկաց, եւ տուաւ արքունի գանձարանին .....	Յունվ.	1	1820	ԹՄԿԹ	1130	11	5	13
Մեռաւ որդի արքային Սուլթան Ահմէտ եւնամսեայ.....	.....	12	.....	.....	.....	.....	.....	.....
Աքսորեաց Պօղոս պատրիարք զԱնտօն գերապայծառն Կաթողիկաց 'ի Սուսամ կղզի, եւ զՄարուշ Պօղոս վարդապետն 'ի Միտիլի, ըզՔայիչ քուշաք ճգնաւորն յԻլիմիա, զՅովհաննէս վարդապետն 'ի Մավսա, եւ զԱբբայեան հայր Դաւիթ վարդապետն 'ի Սագրզ ...	Յունվ.	13	1820	ԹՄԿԹ	1130	11	5	13
Վարդապետք Կաթողիկաց թագեան յեկեղե-								

ՔՐՈՍԻԿՈՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	ԸՖԻՅՔ	ՕՐ	ԸՖՔ ՔՐՆԱԳՐՈՒՄ	ԹՈՒՍԱԿԱՆ ՀԱՅՈՑ	ԹՈՒՍԱԿԱՆ ՏԱՃԿԱՅ	ԱՄԽՆՆԵՆԻՍՈՒՄ ԷԶՄԻՓՆԱՅ	ՊԱՐՐԵՆԵՐԻՍՈՒՄ ԱՊՕԼՈՍՈՅ	ԹՎԱՆՈՐԵՔ ՕՄԱՆՆԱՆՑ
ցիս Լատինաց ծպտեալ կերպարանօք .....	.....	14	.....	.....	.....	.....	.....	.....
Պօղոս պատրիարք ետ կնքել Կաթողիկաց զՆիկիական հանգանակն. եւ Կիրակոս կաթողիկոս Ասոյ՝ համոզեաց զԿաթողիկ բնակիչս Օրթագիւղի ձեռնադրութեամբ հատավաճառ Արզուման աղայի .....	.....	14	.....	.....	.....	.....	.....	.....
Եկն արքունի հրովարտակ առ Պօղոս պատրիարք խօսիլ ընդ Կաթողիկ վարդապետաց, եւ բառնալ եւ զբաժանումն նոցին 'ի յազգէս ....	.....	18	.....	.....	1330	.....	.....	.....
Վեցեքին վարդապետք Աբբայեանք, այսինքն Հ. Մեսրոպ վ. Աղաչբրաղեան: Հ. Սերովբէ վ. Ճէվահիրճեան: Հ. Քերովբէ վ. Ազնաւուրեան: Հ. Թովմայ վ. Մաքսէթեան: Հ. Դաթէոս վ. Ասկէրեան: Հ. Գրիգոր վ. Գապարաճեան: Եւ երեքին միաբանք Վէննայի վանից, Հ. Սահակ վ. Կարնեցի: Հ. Պօղոս վ. բժիշկ: Եւ Հ. Պետրոս վ: Ընդ որս եւ Ստեփանոս եպիսկոպոս Աւգերեան: Սոքա տասնեքին եկին յԵՆՆԻԳԱՓԻՈՒ Ի տուն Պէղճեան Յարութիւն աղայի, եւ խօսեցեալք անդ զամիսս երիս ընդ վարժապետս Հայոց, կնքեցին զսահմանադրութիւնն ժողովոյն, կոչեցեալ Հրաւէր	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն Քանակ	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաշիվային Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թափանցող Օսմանյան
սիրոյ .....	Յունի.	23	1820	ԲՄԿԹ	1330	11	5	13
Հրդեհ յՕտու գափուէ մինչեւ 'ի Թիւթիւն կէօմրիւկն .....	Փետր.	2	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն եւ օծումն Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի 'ի Գումգափու .....	Փետր.	26	.....	.....	.....	.....	.....	.....
Երեքին եղբարք Տիւղեան՝ Կարապետ, Յա- կոբ, եւ Պողոս, աքսորեցան 'ի Կեսարիա: Ա- թանաս եւ եղբայր նորա 'ի Կիպրոս: Ալէքսա- նեան Յովհաննէս եւ երեքին եղբարք իւր 'ի Նիյտէ: Ազնաւորեան երեք եղբարք՝ յԻլի- մեան: Չամչեան Յովսեփ 'ի Միտիլիի: Քիւ- չիւկ Յովհաննէս 'ի Հոռոտոս: Յարութիւն Չէ- լէպ եւ մայր նորա Մարիանէ՝ 'ի Ըստանքէօյ: Իսկ միւս բանտարկեալքն արք եւ կանայք ազատեցան եւ գնացին 'ի տունս իւրեանց: Իսկ աքսորելոց տունք վաճառեցան այլոց յարքունոստ. որպէս եւ զտուն Տիւղեանց յափշտակեաց անօրէն իսխէլ Հրեայն .....	Մարտ	2	1820	ԲՄԿԹ	1330	11	5	13
Եօթներին սոքա՝ հայր Մեսրոպ, հայր Սե- րովբէ, հայր Գրիգոր, հայր Թովմայ, հայր Դաթէոս, հայր Սահակ, եւ Պողոս, եկին յեկե- ղեցին պատրիարքարանի, եւ վեղարաւո- րեալք պատարագեցին եւ հաղորդեցան ընդ								



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսական Էջմիածնայ	Պատրիարքական Կ.Պոլսոյ	Թաղապետական
տանին Եղիազար եւ ուրացեալն սարկաւազ կախեցան 'ի Բարմաք գափու, եւ Տէլի Պաղտասարն 'ի Սամաթիա .....	Սեպտ.	18	.....	.....	.....	.....	.....	.....
Աստուածատուր եւ Երեմիա եպիսկոպոսունք զերծեալք անվնաս, գնացին 'ի տունս իւրեանց .....	Սեպտ.	18	.....	.....	.....	.....	.....	.....
Ազնաւուրեան Կարապետ ամիրայն աքսորեցաւ 'ի Սաքրղ: Կէլկէլեան մահտեսի Պօղոս յիլիմեա: Արփիարեան Մկրտիչ 'ի Ըստանքէօյ, Աղա Պօղոս 'ի Ռատօս: Իսկ Գարաքէհեա մահտեսի Աբրահամ զերծաւ յաքսորանաց 'ի շնորհս Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի, որոյ էր հատաւաճառ .....	Սեպտ.	22	1820	ԹՄԿԹ	1230	11	5	13
Պէզճեան Յարութիւն աղա աքսորեցաւ յիլիմեա, եւ 'ի տեղի նորա նստաւ Պիլէգրիկեան Պօղոս աղա .....	Հոկտ.	3	.....	.....	.....	.....	.....	.....
Վերոյիշեալ եօթն վարդապետք Կաթողիկաց՝ որք վեղարաւորեալք հաղորդեցան ընդ մեզ 'ի հոգեւորս, տեսեալ զայս ամենայն անկարգութիւն ազգին՝ խոյս ետուն 'ի Բերա, եւ հաղորդեցան վերստին ընդ Լատինացիս: Միայն Գապարաճեան հայր Գրիգոր փախեալ 'ի Փարիզ, հրաժարեալ միաբանութենէ								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնված	Օր	Ըմբռնված Քանակ	Թուփային Տաճակ	Թուփային Տաճակ	Կաթնաշերտի Էլեմենտայ	Պարբերաբան Ա.Պ.Օլոն	Թափանցիկ Օմանկան
<i>Աբբայանց: Նոյնպէս եւ ժողովուրդը Կաթն- լիկաց՝ որք գային յեկեղեցիս մեր, արգելան 'ի գալոյ, որպէս էին յառաջին ժամանակս, եւ այսպէս բարձաւ վերստին սէր միաբանու- թեան ազգիս .....</i>	Ապրիլ	26	1821	ՌՄՀ	1336	12	6	14
<i>Աղէքսանդր Իրսիլանթի՝ որ յառաջ ժամա- նակաւ իշխան կարգեալ էր Մոլտաւոյ, եւ յինքն յանկուցեալ զՄիխայ Սուցցո պէյն Պուղտանու, եւ զԹէոդոր Վլատիմիրիչիքո պէյն Վլաճաց, յարուցին զապստամբութիւն մեծ, եւ այրեցին զԳալաս, եւ զՏաճիկս զամե- նայն ընդ սուրբ անցուցին .....</i>	Մարտ	11	.....	.....	1336	.....	.....	.....
<i>Լէօֆէթն՝ եւ Ըսքանավի օղլուն՝ եւ փեսայն նորին՝ եւերկուք եւս ընդ նոսին գլխատեցան .....</i>	.....	17	.....	.....	.....	.....	.....	.....
<i>Չօրպաճի օղլուն՝ եւ վեց Յոյնք եւս ընդ նմին գլխատեցան .....</i>	.....	24	.....	.....	.....	.....	.....	.....
<i>Յոտն կացին բազում գաւառք Մօրայի՝ եւ այլ եւս կղզիք բազումք աւելի քան զքառա- սուն, եւ նաւատորմիղ նաւուց կազմեալ Հա- րիւր եւ ութսնից՝ սկսան ասպատակեալ 'ի Մի- ջերկրական ծովուն, եւ գնաւս Տաճկաց ըմբռ-</i>								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրական Էջմիածնաց	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թվականը Օսմանական
նել եւ այրել, եւ ընդ սուր անցուցանել.....	Ապրիլ	1	1821	ԲՄՀ	.....	12	6	14
Արքունի թարգման պէյղատէն՝ եւ եօթն երեւելի անձինք ընդ նմին գլխատեցան .....	.....	4	.....	.....	.....	.....	.....	.....
ԶՊապա օղլու Յովհաննէս աղա Հայազգին յօշատեցին Եէնիչէրիք, եւ յետ աւուրց ինչ եւ զայլ եւս Հայազգիս սկսան սպանանել սրով 'ի շուկայն եւ 'ի ճանապարհին, եւ կողոպտել.	.....	7	.....	.....	.....	.....	.....	.....
Փախեցաւ վէզիրն մեծ, եւ կարգեցաւ 'ի տեղի նորա Պէնտէրլի Ալի փաշա .....	.....	8	.....	.....	.....	.....	.....	.....
Լիզօրիոս Պատրիարքն Յունաց կախեցաւ 'ի զբանէ պատրիարքարանին յաւուր Զատկին, ընդ նմին եւ մետրապօլիտն Եփեսոսի 'ի Պալխ բազար, եւ մետրապօլիտն Թեսաղոնիկեայ 'ի Բարմազ գափու .....	Ապրիլ	10	.....	.....	1336	.....	.....	.....
Մարմին պատրիարքին տուաւ 'ի ձեռս Հրէցին յաճեցուցանել ընդ փողոցս Պալատու 'ի նշանակ խայտառակութեան, եւ ապա արկին 'ի ծով .....	Ապրիլ	13	1821	ԲՄՀ	.....	12	6	14
Կոչեաց վէզիրն զվէջիլ պատրիարքին Յունաց, եւ նա ոչ գիտելով զպատճառս կոչելոյն՝ երկուցեալ յոյժ, անդէն 'ի Փաշա Գափուսին անկեալ յերկիր, մեռաւ յանկարծակի Կայան Յոյնք գնաւ մի Օսմանեանց, յորում	.....	4	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռն	Օր	Ըմբռն Քրոնիկոն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնայ	Պատրիարքի Ա.Պ.Օլսոյ	Թաղապետի Օսմանեանց
էր դատաւորն Մէքքէի հանդերձ կանամբք եւ որդւովք իւրովք, որ դայր 'ի Կոստանդնուպօլիս, կախեցին զդատաւորն եւ զկանայս նորա 'ի նաւէն, եւ զնաւն 'ի գերութիւն վարեցին .....	.....	18	.....	.....	.....	.....	.....	.....
Կախեցին զեպիսկոպոսն Արնաւուտ գիւղին, զնանչէրլի պէյն, եւ զեղբայր նորին, եւ ընդ նոսին զեօթն անձինս .....	.....	19	.....	.....	.....	.....	.....	.....
Աքսորեցաւ վէզիրն մեծ 'ի Կիպրոս, եւ անդ գլխատեցաւ, փոխանակ զի կամէր սպանանել զանաստուածն Հալէթ: Եւ 'ի տեղի նորին կարգեցաւ Փէփէի Սալիհ փաշա .....	.....	20	.....	.....	.....	.....	.....	.....
Հինգ հազար եէնիչէրիք ելին 'ի Կոստանդնուպօլսոյ երթալ 'ի վերայ Վլահաց, եւ յելանելն նոցա՝ ըստ նախնի սովորութեան իւրեանց կողոպտեցին զբազումս 'ի Հայոց եւ 'ի Յունաց, եւ բազում ծովեզերեայ տունս Քրիստոնէից կապարեայ գնտակօք հրացանաց ծակծակեցին .....	Ապրիլ	26	1821	ԹՄՀ	1737	12	6	14
Կախեցին Ջմետրապօլիտն Անդրիանուպօլսոյ զԿիրեզ .....	.....	27	.....	.....	.....	.....	.....	.....
Չարաղեան Գասպար ամիրայ կախեցաւ 'ի								



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թոշակահատուցում	Թոշակահատուցում	Աշխատանքի վերականգնում	Պարտավորություններ	Թափանցողություն
գրանի վալիտի խանին չարախօսութեամբ անաստուած Իսխել Հրէին .....	.....	29	.....	.....	.....	.....	.....	.....
Յարձակեալ Ենիշէրեաց յԱյվալըք, զծերս եւ զպառաւունս կոտորեցին, եւ զտղայս եւ զաղջկունս գերի վարեցին .....	Յունիս	4	.....	.....	.....	.....	.....	.....
Ձանհամար անմեղ մարդիկ 'ի Յունաց կոտորեցին 'ի Կիպրոս, 'ի Զմիւռնիա, եւ 'ի Թեսաղոնիկէ .....	.....	7	.....	.....	.....	.....	.....	.....
Ճրուա Անտօն վաճառականն ներքինապետին գլխատեցաւ .....	Յունիս	9	1821	ՌՄՀ	.....	12	6	14
Ձնորոգ կարգեալ Գալիմաքի պէյն Պուղտանո՛ հանդերձ ընտանեօք նորին աքսորեցին 'ի Պօլու, եւ անդ սպանին .....	.....	27	.....	.....	.....	.....	.....	.....
ՁԱՖէնտուլի Եօուկի հատավաճառն փողերանոցին՝ խեղդամահ արարեալ 'ի գիշերի՝ ընկեցին յաւազանն մեծի պարտիզին, եւ որպէս թէ խելագարեալ՝ ինքնին ընկեցեալ է զինքն անդ՝ համբաւեցին .....	Յուլիս	12	.....	.....	1336	.....	.....	.....
Հրդեհ 'ի պասմախանան Ենիգափուլի .....	Նոյեմ.	9	.....	.....	.....	.....	.....	.....
Տէրէտէլէնլի Սլի փաշայի գլուխն հատեալ բերաւ 'ի Կոստանդնուպօլիս .....	Փետր.	7	1822	.....	1337	13	7	15
Ծնաւ որդի արքային Սուլթան Ահմէտ տանուն ճէմազիլ էվվէլ 7.....	Ապրիլ	8	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռն	Օր	Ըմբռն Քրոնիկոն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնաց	Պարտիսանի Ա.Պ.Օլոսոյ	Թաղապարտ Օմանեանց
Այրեցին զկղզին Սազըզ, եւ հարիւր հազար ընակչաց նորա զուխուն հազարսն մատեցին 'ի հուր եւ 'ի սուր եւ 'ի գերութիւն: Մօրացիք այրեցին զմեծ նաւն Քաբտան Գարա Մէհմէտ փաշային առաջի Սազըզ կղզոյն, եւ զայլսն ցիրուցան կացուցին .....	Ապրիլ	10	1822	ԹՄՀԱ	.....	13	7	15
Պատերազմ Տաճկաց ընդ Պարսից. առին								
Պարսիկք զԿարս եւ զԹօրրազ զայլէ .....	Յուլիս	22	.....	.....	.....	.....	.....	.....
Երկրաշարժ ահագին 'ի Բերիա եւ 'ի Դամաս- կոս .....	Օգոստ	3	.....	.....	.....	.....	.....	.....
Վախճանի Կիրակոս կաթողիկոս Սոսյ, եւ յա- ջորդէ նմա Եփրեմ .....	Սեպտ.	10	.....	.....	.....	.....	.....	.....
Փոխեցաւ դենպետն եւ վեզիրն մեծ, եւ կարգեցաւ 'ի տեղի նորա Տէլի Ապտուլլահ փաշա .....	Հոկտ.	3	.....	ԹՄՀԱ	1337	.....	.....	.....
Անաստուած Հալէթ էֆէնտին աքսորեալ յԻ- կոնիոն, եւ անդ չարաչար գլուխն հատեալ բերաւ 'ի Կոստանդնուպօլիս .....	Նոյեմբ.	1	.....	.....	.....	.....	.....	.....
Մեռաւ որդի արքային Սուլթան Պայազիտ 14 ամաց 'ի ծաղկէ .....	Փետր.	2	1823	.....	1338	14	8	16
Աքսորեցին զեօթն գլխաւոր ուստայս Եէնի- չէրեաց, եւ զյիսուն գլխաւոր սրիկայս նոցին								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուսական Հայոց	Թուսական Տաճկաց	Ամենամեծագույն Էջմիածնաց	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թաղապետական
Խեղդեցին 'ի ծով .....		5						
Հրդեհ 'ի Թոբխանէյէ մինչեւ ցՏօլմա պաղ- չէն, յորում եւ ձմերանոցք թօբճաց եւ արա- պաճեաց, եւ 2000 տունք .....	Փետր.	17	1823	ԹՄՀԲ		14	8	16
Ծնաւ արքայի որդի Սուլթան Մէճիտ անուն չապան 11 .....	Ապրիլ	11						
Տիւզեան երեք եղբարք՝ Կարապետ եւ Յակոբ եւ Պօղոս Չէլէպիք դարձան յաքսորանացն 'ի Կոստանդնուպօլիս 'ի տուն իւրեանց .....		15		ԹՄՀԲ				
Ջանօրէն Իսխէլ Հրեայն աքսորեցին 'ի Թէ- քէ, եւ անդ հատեալ զորդնալից գլուխն, բե- րին 'ի Կոստանդնուպօլիս .....		26						
Հրդեհ 'ի Գասըմ փաշա եւ 'ի Գուլագսըզ, յո- րում այրեցաւ եւ զընտանն Թէրսանէին եւ նաւ մի մեծ եռայարկ .....	Յուլիս	1			1338			
Երկու նաւք Անգլիացւոց բերին 'ի Մօրայէ զգերեալս 'ի Յունաց զարս եւ զկանայս Տաճ- կաց, եւ կացեալք 'ի վերայ ծովու առաջի Թօբխանէյին, վաճառեցին այլազգեաց .....	Օգոստ	1						
Իպրահիմ փաշա որդի Մէհմէտ Ալի փաշա- յին Եգիպտոսի՝ եկեալ յօգնութիւն աքունի բանակին բազմութեամբ զօրաց եւ նաւուց, էառ գնաւարին բերդն Մօրայի .....	Օգոստ	16	1823	ԹՄՀԲ	1338	14	8	16

ՔՐՈՆԻԿՈՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնչ	Օր	Ըմբռնչ Քրոնիկոն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնայ	Պարբերակի Ա.Պ.Օլոնոյ	Թվական Օմանենայ
Պողոս պատրիարք հրաժարի յաթոռոյն, եւ յաջորդէ Կարապետ .....	Հոկտ.	27	.....	.....	.....	.....	.....	.....
Ննջումն Չամչեան երանելի հայր Միքայէլ վարդապետին .....	Նոյեմ.	18	.....	.....	.....	.....	Կարապետ 1	.....
Անճրեւ սաստիկ եօթն օր անդադար 'ի յԵ- գիպտոս .....	Մայիս	1	1824	ՌՄՀԳ	1339	15	2	17
Գին արքունի հարկին` որ էր 16 դահեկան, եղեւ 24 .....	Օգոստ	13	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն խնդրակատար Աստուածածին եկեղեցւոյն Օրթագիւղի .....	Դեկտ.	15	.....	.....	.....	.....	.....	.....
Հրճիգ եղեալ այրեցաւ նաւն Գաբտան փա- շային առաջի Թէրսանէին, եւ մագապուր զերծան ծովեզերեայ տունք Ֆէնէրին .....	Ապրիլ	14	1825	.....	1330	16	3	18
Մեռանի Աղեքսանդր կայսր Ռուսաց, եւ յա- ջորդէ նմա եղբայր նորին Նիկողայոս .....	.....	28	.....	.....	1330	Եփրեմ	Կարապետ	Մահմուտ
Հրդեհ 'ի Ղալաթիա, 'ի Քարաքէօյէ մինչ 'ի Մոմիսանէ .....	Դեկտ.	22	.....	.....	.....	.....	.....	.....
Մեռաւ որդի արքային Սուլթան Մէհմէտ 'ի չապան 29 .....	Դեկտ.	30	1825	ՌՄՀԴ	1330	16	3	18
Շարժ 'ի Կոստանդնուպօլիս, որ ցնցեաց եր- կիցս անգամ վայրկեան կէս .....	Յունվ.	27	1826	ՌՄՀԵ	1331	17	4	19

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	ԸՖԻՆՅ	Օր	ԸՖՅ Քրոնոգրաֆ	ԹՊՈՒՄԻ ՆԱԿԵ	ԹՊՈՒՄԻ ՏԱՃԿԱԿ	ԱՄԵՆՈՒՄ ԷՋՄԵՆՈՒՄ	ՊԱՐԵՆԵՐԻ ԱՊՕԼՈՍ	ԹՎԱՆՈՐԷ ՕՄԱՆԵՆԵԿ
<i>Առին Տաճիկք զԱրկաղիա՝ զՔալամաթա՝ եւ զԹրիբրօլիցա .....</i>	.....	28	.....	.....	.....	.....	.....	.....
<i>Առին Տաճիկք զՄիսոլունկ զամուրն Մօրայի .....</i>	Փետր.	4	.....	.....	.....	.....	.....	.....
<i>Նոր զօրք սահմանեցան Էջֆինճի անուամբ 'ի հրահանգս զինուորութեան, եւ բաշխեցան նոցա զէնք եւ զգաստք յէթմէյտանին .....</i>	Յունիս	12	.....	.....	.....	.....	.....	.....
<i>Աղմուկ Եէնիչէր ագասիին, եւ զապարանս վէզիրին. կողոպտեցին զամենայն զոր ինչ եւ գտին. եւ խռովեցին զքաղաքն իբրեւ ծով ալէկոծեա : Իսկ վէզիրն մէծ Սէլիմ փաշա, եւ Աղա Հիւսէին փաշա, եւ Իզզէթ Մէհմէտ փաշա, դնեպետն եւ ամենայն օրինականք եւ ամենայն աւաղանին, ժողովեալք արքայի, ուր ներկայացաւ մենայն զօրաց արքայի, եւ կոչեցաւ սէրասքէր փաշա, եւ նստաւ 'ի հին պալատն՝ որ կոչէր Էսկի սարայ, եւ այժմ կոչի սէրասքէր գափուսի: Իսկ Աղա գափուսին՝ ուր նստէր Եէնիչէր աղասին, եղեւ տուն մեծի դենպետին եւ գատաւորաց, եւ կոչի այժմ Շէյ խիսլամ գափուսի .....</i>	Յունիս	16	1826	ՌՄՀԵ	1142	17	4	19
<i>Ի Սէրասքէր գափուսին շինեցաւ աշտարակ բարձր փայտաշէն անուանեալ Եանկրն քէօշ-</i>	.....	21	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայտ	Թուական Տաճակ	Ամենամյա Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օ.Լ.Ո.Յ.	Թանգարանի Օմանեան
<p>Քիւ .....  Բաշխեցան Սուլթան Մահմուտ արքայ պատիւս եւ պարգեւս ամենայն աւագանւոյն եւ օրինականաց, եւ զօր ամենայն սկսան որոնել զմնացեալ եւ զփախուցեալ Ենիշէրիս, ըմբռնել եւ գլխատել եւ խեղդամահ առնել 'ի գիշերի՝ յաւուրն աւելի քան զհազար այր .....  Քսան եւ հինգ հազար խառնաղանձ մարդիկ աքսորեցան 'ի քաղաքս իւրեանց, որք եկեալ յԱսիոյ եւ Եւրոպիոյ՝ թեւարկեալք էին եւ ինքն Սուլթան Մահմուտ, եւ ժողովեալք անդր թօբճիք եւ գումպարաճիք՝ եւ բազմութիւնք բարեպաշտ տաճկաց, հանին զդրօշակն Մահմէտի, եւ տնկեցին 'ի մզկիթն Սուլթան Ահմէտի: Յայնժամ Հիւսէին եւ Նզգէթ փաշայք՝ եւ զօրագլուխն թօբճեաց Գարաճէհէննէմ՝ բազմութեամբ զօրաց զնացեալք յէթմէյտանն, հրդեհեցին վառեցին զձմերանոցն մեծ, ուր զփախուցեալսն 'ի դրանց ընդ սուր անցուցին: Կործանեցին եւ զմիւս ձմերանոցնգլորդ տէօրթ գափուսի կոչեցեալ 'ի Շահյատէ պաշին, եւ գործանոցս Ենիշէ-</p>	<p>.....</p>	<p>21</p>	<p>.....</p>	<p>.....</p>	<p>.....</p>	<p>.....</p>	<p>.....</p>	<p>.....</p>

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	ԸՖԻՈՒՄ	ՕՐ	ԸՖՅՐԵՆԻՍՏՈՒՄ	ԹՈՒՍԱԿԱՆ ՀԱՅՈՅ	ԹՈՒՍԱԿԱՆ ՏԱՃԷԱԿ	ԱՄԵՆՈՒՆԵՐԻ ԷԶՄԻՇՆԱԿ	ՊԱՐՏԵՐԻ Կ՝ՊՕԼՈՅ	ԹՎԱՆՈՐԷՒՄ ՕՍՏԱՆԵԱՆԿ
<p>րեաց, եւ զնշանակս, եւ զսենեակս նոցա. եւ այսպէս սպառ սպուռ բարձաւ կարգ եւ անուն Եէնիչէրի օճագին հարիւր իննսուն եւ վեց դասուց 'ի միում աւուր .....</p>	Յունիս	15	1826	ՌՄՀԵ	1242	17	4	19
<p>Աղա Հիւսէին փաշայն եղեւ սպարապետ անեալ կարգն Եէնիչէրութեան վերստին կանգնել. բայց խորհուրդն 'ի վեր ելեալ ազգարարութեամբ հայագգի այվազի ուրումն Վանեցոյ՝ մի առ մի ըմբռնեցան 'ի դուռն Սէրասքէր փաշային, եւ գիշերային խեղդամահ եղեալք՝ զիզան 'ի սայլս եղանց, եւ ընկեցան 'ի ծով: Իսկ ազգարար այվացն ընկալեալ պարգեւ բազում եւ ճի մի, չուեաց 'ի հայրենիս իւր 'ի Վան .....</p>	Հոկտ.	4	1826	ՌՄՀԵ	.....	17	4	19
<p>Գին արքունի հարկին՝ որ էր 24 դահեկան, եղեւ 36 .....</p>	Յուլիս	13	1827	ՌՄՀԶ	1243	18	5	20
<p>Թընկըրեան Յակոբ եւ եղբայր նորա Յովսեփ վասն սուտ զրպարտելոյ նոցա զՀայոց՝ արսորեցան ընտանեօք իւրեանց 'ի Սեբաստ եւ 'ի Կեսարիա .....</p> <p>Արքունի նաւատորմիդն 65 պատերազմական նաւուց՝ այրեցաւ 'ի նաւահանգստին Մօրայի 'ի Գաղղիացոց՝ յԱնգլիացոց՝ եւ 'ի</p>	Հոկտ.	3	.....	.....	1243	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնված	Օր	Ըմբռնված Քանակ	Թուական Հայտ	Թուական Տաճկաց	Կառնուղի Էջմիածնայ	Պարբերակ Ա.Պ.Օլոսոյ	Թաղամաս Օմանկանց
Մոսկովաց, եւ կործանեցան բերդք նաւարու- նին .....	.....	18	.....	.....	.....	.....	.....	.....
Դեսպանք Գաղղիացւոց՝ Անգլիացւոց՝ եւ Մոսկովաց աքսորեցան 'ի Կոստանդնուպոլ- սոյ յերկիր տէրութեան իւրեանց .....	Նոյեմ.	26	1827	ՌՄՀԶ	1723	18	5	20
Պատերազմ Տաճկաց ընդ Ռուսաց հրատարա- կեցաւ .....	Դեկտ.	18	.....	.....	.....	.....	.....	.....
Գաղատացի երեւելի հատավաճառք Կաթուղի- կաց աքսորեցան .....	.....	27	.....	.....	.....	.....	.....	.....
Եկն արքունի հրովարտակ առ Կարապետ պատրիարք, յորում հրամայէր, նախ՝ զի ա- մենայն Գաղատացի Կաթուղիք աքսորեսցին 'ի Գաղատիա ընտանեօք իւրեանց: Երկրորդ՝ զի կարգաւորք նոցին աքսորեսցին յԵւոպիա 'ի սահմանս Եւրոպական տէրութեանց: Եր- րորդ՝ զի խռովարար մայրապետք նոցին աք- սորեսցին 'ի Հայաբնակ գիւղօրէս փոքուն Ա- սիոյ: Չորրորդ՝ զի Կաթուղիք մի նստիցին 'ի Ֆրանկանիստ գիւղօրէս Կոստանդնուպոլսի, այլ բնակեսցին ընդ Հայս, ուր չիցեն Լա- տինք: Եւ հինգերորդ՝ Կոստանդնուպոլսեցի Կաթուղիք՝ որք ոչ հնա-Եկնիչէրեաց, եւ բա-	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթնաշերտի Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թափանցող Օմանկանց
զուգորդ նաև կոմիտեի նախագահի ծովն Նրկոմիդեայ: ..	Յունիս	21	1826	ԲՄՀԵ	1242	17	4	19
Բարձաւ կարգն Պէկթաշի տէրվիշաց, որք ձեռնտու եւ միախոհ էին Եէնիչէրեաց. մե- նաստանք եւ շիրիմք նոցա կործանեցան, բնակիչք նոցին աքսորեցան, եւ գլխաւորքն 'ի նոսա Ահմէտ եւ Սալիհ՝ եւ Գանլը Պապա՝ գլխատեցան .....	.....	22	.....	.....	.....	.....	.....	.....
Ջնջեցան եւ բարձան Սիբահի՝ Իլիլֆէհի՝ եւ Ղուրէպա կոչեցեալ հեծելագորք, որք նոյն օրինակ ապստամբք էին .....	.....	22	.....	.....	.....	.....	.....	.....
Նոր զօրք սահմանեցան Մանսուրէ ա- նուամբ՝ նոր կանոնադրութեամբ՝ եւ Եւրո- պական զգեստուք՝ 'ի հրահանգութիւն Եւրո- պեան կարգաց .....	.....	23	.....	.....	.....	.....	.....	.....
Կառուցան ձմերանոք նոր զօրաց 'ի Տավուտ փաշա՝ 'ի Րամիս չիֆթլիկին՝ եւ յԼսքիւտար, եւ գործարանք զինուց յայլ եւ այլ տեղիս.....	.....	29	.....	.....	.....	.....	.....	.....
Խեղդամահ արարին զՇապհի Պօխօրաչի Հրեայն առաջի դրան տան իւրոյ 'ի Ղուրու- չէչմէ .....	Յուլիս	2	1826	ԲՄՀԵ	1242	17	4	19
Գլխատեցաւ Օճաք պագիրկեանի կոչեցեալ Հրեայն .....	.....	8	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ ահագին, որոյ երկայնութիւնն 'ի Պաղ-								



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թոշակահատուցում	Թոշակահատուցում	Կաշիվի արժեք	Պարտքերի արժեք	Թափանցանք
Կին Օսմանեանց (ի Բրավատա, եւ աւելի քան զքսան 'ի հազարս զօրաց խորտակեցին .....	.....	15	.....	.....	.....	.....	.....	.....
Դեսպանք Անգլիացւոց եւ Գաղղիացւոց դարձան 'ի Կոստանդնուպօլիս .....	Ապրիլ	7	.....	.....	.....	.....	.....	.....
Սով հացի 'ի Կոստանդնուպօլիս յերեսաց ահաւոր պատերազմին .....	.....	20	.....	.....	.....	.....	.....	.....
Անցին Մոսկովք մեծաւ համարձակութեամբ ընդ կիրճս Պալգան լերանց, եւ առին զԱյտոս, զԳարնապատ, զՄիւսէվրէ եւ զԱհեօլու .....	.....	30	.....	.....	.....	.....	.....	.....
Օծումն սուրբ Ոսկեբերան եկեղեցւոյն գարակէօմբրիւկի .....	Մայիս	7	.....	.....	.....	.....	.....	.....
Երկոտասան Հրեայք ընկալան Քրիստոնէութեան 'ի Հայոց .....	Մայիս	15	1829	ՌՄՀԸ	.....	20	7	22
Գին արքունի հարկին՝ որ էր 36 դահեկան եղել 48 .....	Յունիս	20	.....	.....	1250	.....	.....	.....
Առնուն Մոսկովք զբերդաքաղաքսն Սիլիստրէ, Ռուսճուք, եւ Թուլչա .....	.....	22	.....	.....	.....	.....	.....	.....
Առնուն Մոսկովք Բինէվրէ, Մաչին, Նիկէթօլի, Սիւզպօլու, Իսլիմեա, Եանպօլու, Գըրգքիլիսէ, Լիւլէ պուրկազը, Պապայի աթիք, Եհնի Զաղարա, Էսկի Զաղարա, Սէլիմնէ, Պոյալըք, եւ Ճընտրգլը .....	.....	28	.....	.....	1250	.....	.....	.....
Հրդեհ 'ի Գուլէ գափուն Պէյօզլուի, այրեցաւ .....	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....

ՔՐՈՍԻԿՈՆ



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն Քանակ	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաշիվային Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թվական Օմանկանց
Մահալըճ եւ 'ի Պանտըրմա .....	.....	23	.....	.....	.....	.....	.....	.....
Երկու հրեայք ընկալեալ գհաւատս քրիստոնէութեան՝ արքունի հրամանաւ յանձնեցան 'ի ձեռս Պատրիարքին Հայոց .....	Մարտ	10	.....	.....	.....	.....	.....	.....
Առնուն Մոսկովք գիպրայիլ, գիսագճայ, եւ գԱնափայ .....	Յունիս	8	1828	.....	.....	19	6	21
Մարիանէ կին ոմն 'ի յՕրթագիւղ՝ մելամաղճ ախտիւ ըմբռնեալ՝ գերկոսին որդիս իւր գփոքրկունս ընկէց գիշերայն 'ի ջրհոր տան իւրոյ, եւ խեղզամահ արար .....	.....	11	.....	.....	.....	.....	.....	.....
Առնուն Մոսկովք գՊաղարճըզ, եւ գամուրն Շումնի պաշարեցին .....	Յուլիս	1	.....	.....	.....	.....	.....	.....
Ել արքունի բանակն 'ի վերայ Ռուսաց, որոյ սպարապետ էր Սէլիմ Մէհմէտ փաշա. եւ Սուլթան Մահմուտ առեալ գգրօշակն Մահմէտի՝ ուղեկից եղեւ բանակին իւրում, եւ նստաւ 'ի Րամիզ չիֆլիկին .....	Սեպտ.	15	.....	.....	.....	.....	.....	.....
Առնուն Մոսկովք գՎառնա սաստիկ պատերազմաւ .....	Հոկտ.	2	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն մայր եկեղեցւոյն Ս. Աստուածածնի 'ի Գումգաբու .....	.....	14	.....	.....	1243	.....	.....	.....
Բասքովիչ սպարապետ Մոսկովաց յԱսիա՝ էառ գԿարս, գՓոթի, գԱխլցիսա, գՊալազիտ,	.....	.....	.....	.....	.....	Եփրեմ	Կարապետ	Մահմուտ

ՔՐՈՍԻԿՈՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնված	Օր	Ըմբռնված Քրոնիկոն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթնաշերտի Էջմիածնայ	Պարբերակի Վ.Պ.Օլոսոյ	Թափանցիկ Օմանեանց
<i>Երկրի.....</i>	<i>Օգոստ</i>	17	1829	ԹՄՀԸ.	ՂԿԵ	20	7	22
<i>Առնուն Մոսկովի գերգրում, զԲաբերդ, եւ զՏրապիզոն .....</i>	<i>.....</i>	28	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>
<i>Հասան աղա ոմն՝ զօրագլուխ բերդականացն Վոսբորի՝ ընդ նմին եւ սպայք բազումք՝ եւ Ենիիզերիք վեց հարիւր, եւ քէթիսուտայք վեց էսնաֆաց, խորհուրդ արարեալ սպանանել զարքայ եւ զորդի նորա, եւ կանգնել դար- ձեալ զԵնիզերիութիւն, յայտնեցաւ խոր- հուրդ նոցա, եւ խեղդամահ եղեալք զիշե- րայն՝ կորեան .....</i>	<i>Սեպտ.</i>	2	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>
<i>Գնացին պատգամաւորք Հաշտութեան յԱն- դրիանուպոլիս առ Տիպիչ Ֆէլտմարէշալ Ռու- սաց՝ ՚ի կողմանէ Սուլթան Մահմուտ արքա- յի՝ դեսպանն Բրուսիոյ տէրութեան, տէֆթէր- տար Սատրգ Էֆէնտի, քէհիա պէյ Թահիր Է- ֆէնտի, եւ դատաւորն Ասիոյ՝ Ապտիւլ Գա- տիր Էֆէնտի .....</i>	<i>.....</i>	7	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>	<i>.....</i>
<i>Հաշտութիւն ընդ Մոսկովս. Ուլահ եւ Պուղ- տան մնացին ընդ պաշտպանութեամբ Ռու- սաց, եւ համօրէն Սէրվիա: Անափա, Փօթի, Ախյցխա, Ազդոր, Ախայքէլէք տուան Ռուսաց:</i>						<i>Եփրեմ</i>	<i>Կարապետ</i>	<i>Մահմուտ</i>

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթնաշերտի Էջմիածնաց	Պարբերականի Կ.Պ.Օլոսոյ	Թաղապետի Օմանեանց
Համարձակութիւն եղեւ պատերազմական նաւուց Եւրոպացւոց անցանել ընդ Վոսբոր եւ ընդ Չանազ դալէ: Եւ Օսմանեանք ետուն տուգանս պատերազմին եօթն հարիւր հազար քսակս արծաթոյ: Բաց 'ի սոցանէ՝ Մօրա հանդերձ ամենայն սահմանօք իւրովք՝ եւ յիսուն եւ մի կողմիք 'ի Միջերկրական ծովուն՝ ետուն Հելլենացւոց նոր թագաւորութեանն .....	Հոկտ.	7	1829	ՌՄՀԸ	1450	20	7	22
Խալիլ փաշա բազմապատիկ ընծայիւք գնաց 'ի Բէթրպուրկ, 'ի հաստատել գմշտնջանաւոր խաղաղութիւն .....	Նոյեմ.	6	.....	.....	.....	.....	.....	.....
Դեսպանք Եւրոպացւոց բազմաձախ ընթրիս արարին արքային Սուլթան Մահմուտայ 'ի Պէօյիւքտէրէ դաշտավայրին .....	.....	11	.....	.....	.....	.....	.....	.....
Դեսպանն Ռուսաց եկն 'ի Կոստանդնուպօլիս Ազատութիւն եւ դարձ Կաթողիկաց յաքսորանաց իւրեանց .....	Յունվ.	1	1830	ՌՄՀԹ	.....	21	8	23
Ծնաւ արքայի որդի Սուլթան Ապտիւլ Ազիզ շապան 15.....	Յունվ.	6	1830	ՌՄՀԹ	.....	21	8	23
Առին Գաղղիացիք զճէզայիր, եւ Օսմանեանք վշտացան յոյժ .....	Ապրիլ	19	.....	.....	1450	.....	.....	.....
Պատերազմ Ռուսաց ընդ Հեհաց .....	Մայիս	6	.....	.....	1457	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռ	Օր	Ըմբռ Քրոնիկոն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնայ	Պատրիարքի Վ.Պ.Օլսոյ	Թաղապետ Օմանեանց
Եկն մետրապօլիտ Կաթողիկաց Նուրիճան Անտօն վարդապետ, այլ ոչ ծանեաւ զնա Սուլթան Մահմուտ, զի էր հպատակ Գերմանական տէրութեան .....	Սեպտ.	30	.....	.....	.....	.....	.....	.....
Գնաց արքայն Սուլթան Մահմուտ 'ի Չանազ գալէ եւ 'ի Պօհճա ատա յայցելութիւն բերդորէից նեղուցին .....	Մայիս	23	1831	ՌՄՁ	ՂԿԿ	22	8	24
Նստի առաջնորդ Կաթողիկաց Յակոբ վարդապետ 'ի միաբանից Վեննայի .....	.....	24	.....	.....	.....	.....	.....	.....
Ընդ առաջ էլին արքայի Հայք՝ Յոյնք՝ Կաթողիկք՝ եւ Հրեայք՝ 'ի վերադառնալ նորին առաջի Ախրը գափուին .....	Յունիս	23	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն սուրբ Ստեփանոս եկեղեցւոյն Խասգիւղի .....	Յուլիս	4	1831	ՌՄՁ	.....	Եփրեմ 22	Ստեփան 1	Մահմուտ 24
Հրդեհ մեծ 'ի Պէյօղլու, յորում այրեցան պալատք դեսպանաց, քարուկիր շինուածք ամենայն, եւ տունք հազար եւ աւելի եւս .....	.....	21	.....	.....	.....	.....	.....	.....
Հրկէզ եղեւ տիվանխանայն թէրսանէին .....	Օգոստ	17	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ մեծ 'ի Սամաթիա .....	.....	22	.....	.....	.....	.....	.....	.....
Կարապետ պատրիարք հրաժարի, եւ յաջորդէ նմա Աղանի Ստեփանոս .....	Սեպտ.	4	.....	.....	ՂԿԿ	.....	.....	.....



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսական Էջմիածնայ	Պատրիարքական Սրբազան Կոլոսոյ	Թաղապետական Օսմանական
Հարուած 'ի Կոստանդնուպոլիս 'ի գոլէրա արտէ.....	.....	10	.....	.....	.....	.....	.....	.....
Աքսորեցան տէր Մելգոն, եւ որդիք նորա տէր Պաղտասար՝ եւ տէր Ստեփան քահանայքն Պալատու, եւ Գրիգոր վարդապետ ոմն՝ քարոզիչ եկեղեցւոյն, վասն յիշատակել տալոյ 'ի Պատարագի զՏաթեւացին .....	Նոյեմ.	13	.....	.....	.....	.....	.....	.....
Պատերազմ արքայի ընդ Մէհմէտ Ալի Փաշային եգիպտոսի .....	Մայիս	26	1832	ՌՄՁԱ	1248	23	2	25
Հրդեհ 'ի Չէնկէլ գիւղն, որ այրեցաւ բոլորովին .....	Օգոստ	14	1832	ՌՄՁԱ	.....	23	2	25
Հրդեհ մեծ 'ի Թաթաւլա, որոյ երեք մասն այրեցաւ .....	.....	26	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն սուրբ Կարապետ եկեղեցւոյն Պօլուի .....	Սեպտ.	2	.....	.....	.....	.....	.....	.....
Նաւատորմիղն Ռուսաց տասն հազար զօրօք եկն եւ եմուտ 'ի Կոստանդնուպոլիս կամաւ եւ խնդրանօք արքայի, եւ բանակ եհար 'ի լեառն Եոլա զամիսս հինգ, առ 'ի պաշտպանել զարքայ 'ի չար խորհրդոց ազգին իւրոյ ..	Փետր.	7	1833	ՌՄՁԲ	1248	24	3	26
Եփրեմ կաթողիկոս Էջմիածնի հրաժարի, եւ յաջորդէ Յովհաննէս .....	Մարտ	2	.....	.....	1248	Յոհաննէս 1	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայտ	Թուական Տաճակ	Կառուցվածքային Էջմիածնայ	Պարտականություններ Կ.Պ.Օ.Ը.Ս.Ս.	Թանգարաններ Ծանոթություններ
Առնու Իպրահիմ փաշա եգիպտացիներ գ Գազա, գ Յոպպե, գ Երուսաղեմ, եւ գ Աքքեա .....	Ապրիլ	4	.....	.....	1749	.....	.....	.....
Առնու Ապրահիմ փաշա գ Դամասկոս, գ Դարպուլուս, գ Հալէպ, գ Անթաքեայ, եւ գամենայն Ասորեստան, եւ գ Իկոնիոն, եւ գ Ատանա եւ վանք գ զօրս Աղա Հիւսէին փաշա սպարապետին արքայի .....	Մայիս	11	.....	.....	.....	.....	.....	.....
Առնու Իպրահիմ փաշա գ Մաղնիսա, գ Այտրն, Պալիքէսրի, Քէօթահեա, եւ Պիլէճիկ, եւ ձերբակալ առնէ գ Րէշիտ Մէհմէտ փաշա սպարապետն արքայի .....	Յունիս	22	1833	ՌՄՁԲ	.....	1	3	26
Բաշխեաց արքայ մեծամեծաց իւրոց՝ եւ ամենայն արքունի գործակալաց յո եւ իցէ ազգէ նշանս պատուոյ ականակապս՝ Նիշանի ի Ֆիթիսար անուանեալ .....	.....	27	.....	.....	.....	.....	.....	.....
Մահմանեաց արքայ լրագիր տպագրել 'ի Կոստանդնուպօլիս՝ 'ի Տաճիկ եւ 'ի Գաղղիացի բարբառ .....	Յունիս	1	.....	.....	.....	.....	.....	.....
Հաչտուլթիւն արքայի ընդ Մէհմէտ Ալի փաշային եգիպտոսի .....	.....	12	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ մեծ՝ ելեալ 'ի Թիւֆէնկիսանէյէ մինչեւ 'ի Սիւլէյմանիէ, եւ միւս ծայրն՝ մինչեւ 'ի	.....	.....	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրական Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թվականը Օսմանյան
Սուլթան Մէհմէտ .....	Օգոստ	18	.....	.....	1249	2	4	27
Վախճան կենաց Մեծաշուք Պէգճեան Յարուսթիւն Ամիրա յի, եւ մեծահանգէս թաղումն նորին 'ի Մայր եկեղեցւոջն Գումգափուի .....	Յունվ.	3	1834	.....	.....	2	4	27
Մեռանի առաջին առաջնորդն Կաթողիկաց Յակոբ վարդապետ, եւ յաջորդէ նմա Յարուսթիւն .....	Փետր.	3	1834	ՌՄԶԳ	.....	2	4	27
Գատը գլխան կոչեցեալ ապստամբ Տաճիկն փախուցեալ 'ի սահմանս Ռուսաց, եւ ըմբռնեալ յԱխլցիսա՝ առաքեցաւ 'ի Կոստանդնուպօլիս կապեալ, եւ սատակեցաւ 'ի թի նաւատեղեաց .....	.....	28	.....	ՌՄԶԳ	.....	.....	.....	.....
Միւշիւր Ահմէտ փաշա առաքեցաւ 'ի Բեթրպուրկ բազմապատիկ ընծայիւք 'ի կողմանէ Արքայի 'ի շնորհակալութիւն .....	Մարտ	30	.....	.....	.....	.....	.....	.....
Կարգեաց Սուլթան Մահուտ արքայ գունդ նոր 'ի քաղաքացի բնակչաց Ասիոյ եւ յԵւրոպայ՝ յիւրաքանչիւր քաղաքս իւրեանց ուսանիլ ըզ հրահանգութիւն զինուորութեան, եւ կոչեաց Ասաֆիրի Րէտիֆէ: Շինեցան ուսումնարանք մանկտեաց Տաճկաց՝ ուսանիլ զԳաղղիական լեզու, զերկրաչափութիւն, զբժշկականութիւն, եւ զնաւապետութիւն .....	Ապրիլ	4	.....	.....	1249	2	4	27

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռ	Օր	Ըմբռ Բրնարոսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կարողություն Էջմիածնայ	Պարբերական Ա.Պ.Օլոսոյ	Թվական Օմանեանց
Գին արքունի հարկին՝ որ էր 48 դահեկան, եւեղ 60 .....	Ապրիլ	17	1834	.....	1200	.....	.....	.....
Սահմանեաց արքայ դեսպանս ունել 'ի մայրաքաղաքս Եւրոպայ, եւ նախ առաջին առաքեաց զԲէշիտ Մուստաֆա փաշա 'ի Փարիզ, եւ զՖէթհի Ահմէտ փաշա 'ի Վեննա, զԲեամիլ Մէհմէմէտ փաշա 'ի Պերլին Բրուսիոյ, եւ զայլս 'ի Լօնտրա եւ 'ի Բերթպրուկ .....	Մայիս	1	.....	.....	.....	.....	.....	.....
Հարսանիք Սալիհէ Սուլթան դստեր արքային, որ տուաւ 'ի կնութիւն իսաիլ փաշային..	.....	12	.....	ՌՄՁԳ	.....	.....	.....	.....
Նորոգութիւն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն Եէնի գիւղի .....	Յունիս	24	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն սուրբ Նշան եկեղեցւոյն յԱլէմտաղի .....	.....	29	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Պէկիւօզի .....	Սեպտ.	16	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն սուրբ Խաչ եկեղեցւոյն Ղուրուհէշմէյի .....	Նոյեմ.	16	.....	.....	.....	2	4	27
Նորոգութիւն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն Ղալաթիոյ .....	Դեկտ.	10	1834	.....	.....	.....	.....	.....
Կոչեաց արքայն զպատրիարքունս Յունաց եւ Հայոց, եւ գառաջնորդն Կաթողիկաց, եւ								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսական Էջմիածնաց	Պատրիարքական Սրբազան Կաթողիկոս	Թաղապետական Օսմանյան
զխախամ պաշին Հրէից, եւ պարգեւեաց նոցա ականակապ նշան ազգապետութեան .....	.....	21	.....	.....	1200	Յոհաննէս 2	Ստեփան 4	Մահմուտ 27
Նորոգութիւն Պալլըխլը Այազմային եւ եկեղեցւոյն Յունաց .....	Ապրիլ	2	1835	.....	1201	3	5	28
Մեռանի Յարութիւն առաջնորդն Կաթողիկաց, եւ յաջորդէ նմա Սերովբէ .....	.....	16	.....	.....	.....	.....	.....	.....
Գնաց Նէճիպ փաշա նաւատորմաւ հանդերձ 'ի Թարապուլուս, եւ զապստամբ կուսակալ տեղւոյն՝ որ կոչէր Սէյիտ Ալի փաշա, խաբկանօք ըմբռնեալ 'ի ձեռս եղբօր նորուն, առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս, եւ տիրեաց ողջոյն գաւառին: Իսկ արքայ շնորհեաց նմա զկեանսն, բայց զինչս նորա գրաւեաց յարքունիս իբր հնգետասան միլիոն դահեկանաց .....	.....	17	.....	.....	.....	.....	.....	.....
Օծումն սուրբ Լուսաւորիչ նոր եկեղեցւոյն Գուզգունճուքի .....	Մայիս	11	1835	ՌՄՁԳ	.....	3	5	28
Շարժ ահագին 'ի Կեսարիա, որ ընդ բոլոր ամն մերթ ընդ մերթ շարժէր. կործանեցաւ եւ գիւղ մի .....	Օգոստ	1	.....	.....	.....	.....	.....	.....
Նորոգութիւն սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն Պալատու .....	Սեպտ.	7	.....	ՌՄՁԴ	.....	.....	.....	.....
Ծնանի արքայի որդի Սուլթան Նիզամէտտին ընէճէպ 16 .....	Նոյեմ.	24	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսական Էջմիածնայ	Պատրիարքական Կ.Պոլսոյ	Թաղապետական
Մուրշ Կէյն Սըրֆաց եկեալ 'ի Կոստանդնուպօլիս, պատուի յարքայէ, եւ դառնայ յերկիր իւր .....	.....	27	.....	.....	1201	.....	.....	.....
Փոթորիկ եւ մրրիկ մեծ եւ ձիւն բքաբեր 'ի ցերեկի, հանդերձ ահագին ալեկոծութեամբ ծովու, եւ վտանգ մահու նաւաբեկութեամբ բազմաց. ընդ որս եւ երկու քորք Ուզունեան Յարութիւն ամիրայի՝ եւ դուստր մի Պետրոս ամիրայի, եւ կին ոմն ընկերակից նոցին, եւ աղջիկ մի Յոյն, եւ այր ոմն սպասաւոր, եւ երկու նաւավարք, ութեքին սոքա 'ի միում նաւունաւակոծեալք առաջի Գուգգունձուքի զեղջն՝ անյայտ եղեն. մինչ զի՝ եւ բեկորք նաւու նոցին չերեւեցան ուրեք երբէք .....	Դեկտ.	20	1835	ՌՄՁԴ	1201	3	5	28
Ջմանկունս յազգէ մերմէ իբրեւ հինգ հազար՝ բերին 'ի քաղաքաց Անատօլուի 'ի Կոստանդնուպօլիս արքունի հրամանաւ, աշխատեցուցանել զնոսա 'ի գործ մանուածոյ կտաւուց առաջատից, եւ միայն հանդերձ եւ կերակուր հրամայեցաւ տալ նոցա առանց թոշակի, յորոց բազումք մեռան, եւ ոմանք Տաճկացան .....	Յունիս.	2	1836	ՌՄՁԴ	.....	4	6	29

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռ	Օր	Ըմբռ Քրիստոսի	Թոսական Հայոց	Թոսական Տաճկաց	Ամենայն Էջմիածնայ	Պարբերակ Ա.Պ.Օլոսոյ	Թաղաւոր Օսմանեանց
Հրդեհ 'ի Ֆիշէնկիւանէն Խասգիւղի, յորում հրկէզ եղեն վեշտասան անձինք 'ի գործաւո- րաց .....	Փետր.	24	.....	ԲՄՁԵ	1201	.....	.....	.....
Հարսանիք Միհրիմազ Սուլթանի դստեր ար- քային, որ տուաւ 'ի կնութիւն Սայիտ փաշա- յին.....	Ապրիլ	15	.....	.....	1207	.....	.....	.....
Հանդէս թլփատութեան որդւոց արքայի 'ի Քեղըտխանէն Խասգիւղի, յոր հրակրեցան եւ մանկունք Հայոց՝ Յունաց՝ Կաթուղիաց՝ եւ Հրէից՝ 'ի բարեմաղթութիւն արքայի, եւ պարգեւատրեցան յարքայէ Հանդերձ Իւ- րեանց վարժապետօք .....	Ապրիլ	28	1836	.....	.....	4	6	29
Կարգեաց արքայ զկենդանագիր պատկերի Իւրոյ 'ի զինուորանոցս քաղաքին, եւ զքրթմնջողս պատուհասեաց .....	Յուլիս	11	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի Սուլթան Պայագիտ .....	Օգոստ	26	.....	.....	.....	.....	.....	.....
Մեծ կամուրջ շինեալ, եղաւ առաջի Ազապ գափուսի դրան Ղալաթիոյ՝ եւ Ունգաբանի .	Հոկտ.	6	.....	.....	.....	.....	.....	.....
Արքունի վառօղապետ Պարոն Յովհաննէս՝ հրամանաւ արքայի շրջեալ 'ի գործարանս բնա- կան գիտութեանց ի Գաղղիա եւ յԱնգլիա, եւ տեղեկութիւն ստացեալ բազմաց հարկաւոր								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսական Էջմիածնայ	Պարսկաստանի Կ.Պոլսոյ	Թաթարական Օսմանական
գիտելեաց՝ դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս ....	Նոյեմ.	23	.....	.....	.....	.....	.....	.....
Ջարպխանէ միւշիւրի Ալի Րիզա փաշա սրախողխող սպանանի 'ի մէջ մզկիթին Այա Սօֆիայի 'ի Մուսա անուն վաղեմի սպասաւորէ իւրմէ, եւ նա 'ի նմին աւուր գլխատի 'ի Բարմազ գափուն 'ի Սուլթան Պայագիտ .....	Դեկտ.	20	1836	ՌՄՁԵ	1206	4	6	29
Սաչլը չէյիս անուանեալ տէրվիչ ոմն ելեալ ընդ առաջ արքայի 'ի նորակերտ կամուրջն Ղալաթիոյ, յանդիմանեաց զարքայ յիմարաբար, եւ 'ի նոյն տեղուղ գլխատեցաւ .....	Ապրիլ	1	1837	.....	1203	5	7	30
Գնաց Սուլթան Մահմուտ 'ի ծովն Պոնտոսի յայցելութիւն բերդաքաղաքացն Վարնայի՝ եւ Ռուսճուզի՝ Սիլիստրէի՝ եւ Վիտինի, եւ 'ի մայիսի 25 վերադարձաւ 'ի Կոստանդնուպօլիս..	.....	17	.....	ՌՄՁԵ	.....	.....	.....	.....
Ատենադպիր արքային Վասսաֆ էֆէնտի աքսորեցաւ 'ի Վարնա եւ անդ խեղդամահ եղեւ .....	Յունիս	14	.....	.....	.....	.....	.....	.....
Միւլքիէ միւշիւրի Բէրթէվ փաշայն աքսորեալ 'ի Տիմէթօքա, եւ դեղ մահու արբուցեալ սպանաւ անդ .....	Օգոստ	30	.....	.....	.....	.....	.....	.....
Շոգենաւ մի կառուցաւ 'ի նաւակայս Կոստանդնուպօլսոյ յԱմերիկացուոյ ումեմնէ, ընդ								



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնում	Օր	Ըմբռնում Քրիստոսի	Թոսական Հայոց	Թոսական Տաճկաց	Ամենամյակ Էջմիածնայ	Պատրիարքի Կ.Պոլսոյ	Թաղաւորի Օսմանեանց
որ հաճեալ արքայի՝ հրամայեաց եւ զմիւս եւս կառուցանել .....	Դեկտ.	3	1837	.....	.....	5	7	30
Աստուածիմաստ եւ բազմերախտ հայր մեր Գրիգոր վարժապետ Բէշտրմալճեան փոխե- ցաւ առ Աստուած 'ի հասակի վաթսուն եւ չորս ամաց .....	Դեկտ.	30	1837	ՌՄԶԶ	ՂԿՊ	5	7	30
Ի չորրորդ ժամ գիշերոյն եղեւ շարժ, եւ տե- ւեաց վայրկեանս երկուս՝ կրկին անգամ ցնցեալ զերկիր.....	Յունվ.	13	1838	ՌՄՁԷ	.....	6	8	31
Մեռաւ փոքր որդի արքայի Նիզամէտտին անուն .....	.....	15	.....	.....	.....	.....	.....	.....
Եւ հրաման յարքայէ ամենայն ազգաց չթա- ղել զմեռեալս իւրեանց՝ ի զգուշութիւն ի ժանտամահէ, մինչեւ ոչ քննեսցեն կարգեալ բժիշկք զախտ եւ զհիւանդութիւն մեռելոցն.	Մայիս	1	.....	.....	ՂԿԶ	.....	.....	.....
Հրդեհ արտաքոյ դրան Գուճաբուի, որ ե- ղեւ վնաս մեծ աղքատաց Հայոց բնակելոց անդ .....	Յունիս	12	.....	.....	.....	6	8	31
Օծումն սուրբ Երրորդութեան եկեղեցւոյն հայոց 'ի Պէրա .....	.....	18	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի Սուլթան Մէհմէմէտ .....	Յունիս	24	1838	ՌՄՁԷ	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի վառօդարանն Մազրի գիւղին .....	Յունիս	4	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի Մահմուտ փաշայն .....	Օգոստ	14	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնված	Օր	Ըմբռնված Քրիստոսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնայ	Պարբերակի Կ.Պոլսոյ	Թաղապետի Օմանեանց
Նորահնար շրահացն տարաւ 'ի Գանլըճա պուրնին, սրընթաց յորձանօք ջուրցն աղալ զցորեան. բայց 'ի բռնութենէ պեացն խորտակեցաւ .....	Սեպտ.	24	1838	ՌՄՁԷ	1208	6	8	31
Աշխարովացի Վառվառ չորեքտասանամեայ կոյս աղջիկն՝ յետ բազում չարչարանաց եւ բանտարգելութեանց վասն 'ի Քրիստոս Հաւատոցն՝ բերեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ ածաւ յատեն Եպարգոսին, եւ անդ եւս խոստովանեալ զՔրիստոս, աքսորեցաւ 'ի Պրուսա: Բայց յետ վեցից ամսոց բերեալ 'ի Կոստանդնուպօլիս, ամուսնացուցին ընդ Հայոց ուրումն 'ի Խասգիւղ .....	Նոյեմ.	15	.....	.....	.....	.....	.....	.....
Հաստատեցաւ ուսումնարան բժշկական արուեստին 'ի Պէրա յապարանսն, որ կոչի Ղալաթիա սարայի .....	Դեկտ.	3	.....	.....	.....	.....	.....	.....
Չմերանոցն Չէնկէլ գիւղի եղեւ Գարանթինա եկեղոց 'ի ծովէ եւ 'ի ցամաքէ: Շինեցան եւ այլ եւս գարանթինայք 'ի Պօսթան պաշի քէօբիւսի յԱսիակողման, եւ 'ի Քիւլիւք չէքմէճէն յԵւրոպակողման .....	Դեկտ.	5	1838	ՌՄՁԷ	.....	6	8	31
Ճեմարանն Իւսկիւտարու բացաւ .....	.....	9	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրական Էջմիածնայ	Պատրիարքական Կ.Պոլսոյ	Թաղական Օսմանական
Հրկէզ եղեւ նորաշէն պալատն դստեր արքային 'ի Տէֆթէրտար պուրնին 'ի միջօրէի 'ի միջօրի միոյ ժամու .....	Դեկտ.	14	1838	ՌՄՁԷ	ՂԿԵ	6	8	31
Օծումն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն Կաթողիկոս 'ի յՕրթագիւղ .....	Յունվ.	6	1839	ՌՄՁԸ	ՂԿԵ	7	9	32
Հրկէզ եղեւ Փաշա գափուսին ողջոյն .....	.....	9	.....	.....	.....	.....	.....	.....
Յակոբոս եպիսկոպոս առաջնորդն Մարգուանու՝ կոչեցաւ ազգային ժողովով 'ի Կոստանդնուպօլիս՝ լինել խորհրդական պատրիարքին .....	Փետր.	5	.....	.....	.....	.....	.....	.....
Ել շնչիւն 'ի մէջ ժողովրդեան, եթէ բազումք 'ի յազգէս Լուտերական եղեալ են, եւ առանց քննութեան աքսորեցան Յիզիգա Պօղոս եւ Յօհաննէս վարդապետք 'ի Կեսարիա, տէր Գէորգ եւ տիրացու Յօհաննէս 'ի Թէքլիքտաղ, եւ Թովմայ վարդապետ 'ի վանս Արմաշու ....	Փետր.	11	1839	.....	.....	7	8	32
Ընկեցաւ Ստեփանոս 'ի պատրիարքութենէն, եւ նստաւ Յակոբոս եպիսկոպոս. իսկ Աղաւնին Ստեփանոս գնաց յառաջին վիճակի իւր յԱրմաշու վանս .....	Մարտ	13	.....	.....	ՂԿԵ	.....	ՅԱԿՈԲՈՍ 1	.....
Հիւանդացաւ Սուլթան Մահմուտ ջրգողութեան ախտիւ, եւ գնաց վասն օդափոխութեան յապարանս քեռ իւրոյ 'ի ստորտն								



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնում	Օր	Ըմբռնում Քրոնոգրաֆ	Թոշակային Հայոց	Թոշակային Տաճկաց	Աշխատանքային Էջմիածնայ	Պարտադրանքային Ա.Պ.Օլոսոյ	Թափանցող Օսմանական
մէտ Ալի, յորմէ կոչեցաւ Ֆիրար Ահմէտ փաշա .....	Յուլիս	4	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ մեծ 'ի Պէյօղլու, ոչինչ պակաս քան զառաջինն .....	.....	28	.....	.....	.....	.....	.....	.....
Հրկէզ եղեւ Տէսհանան էյիպու .....	Սեպտ	26	.....	.....	1400	Յօհաննէս 7	Յակոբոս 1	Մէճիտ 1
Հրդեհ մեծ յեջնիգափու, որ այրեցաւ բոլորովին .....	Հոկտ.	3	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի Սամաթիա .....	Հոկտ.	5	1839	ՌՄՁԸ	.....	.....	.....	.....
Հանդէս մեծ 'ի Կիւլհանէ յապարանս արքայի, յորում եւ ներկայ գտաւ ինքն եւ վէզիրն մեծ եւ դենպետն եւ ամենայն աւագորհարն արքայի, եւ դեսպանք Եւրոպացւոց, եւ գլխաւոր ազգապետք ժողովրդոց Կոստանդնուպոլսի: Եւ ընթերցաւ սահմանադրութիւնն նորոյ յարքայիս՝ վասն ապահովութեան կենաց եւ պատուոյ՝ եւ ընչից հպատակաց, վասն իրաւացի պահաջման տրոց եւ հարկաց, եւ վասն կանոնաւոր ընտրութեան զօրականաց .....	Նոյեմ.	9	.....	.....	.....	.....	.....	.....
Կաթողիկոս Պաղեստինոյ բռնութեամբ գրաւեցին զեկեղեցիս Ասորւոց 'ի Դամասկոս եւ 'ի Բերիա. յոյր վասն եւ եպիսկոպոս ոմն Ասորւոց եկն 'ի Կոստանդնուպոլիս առ Յակոբոս								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնված	Օր	Ըմբռնված Քառակուսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթնաշերտի Էջմիածնայ	Պարբերակի Ա.Պ.Օլոսոյ	Թափանցիկ Օմանեանց
պատրիարք խնդրել 'ի նմանէ զպաշտպանու-	Դեկտ.	13	.....	.....	.....	.....	.....	.....
թիւն առ 'ի դատ ելանել ընդ Կաթողիկաց .....	Յունվ.	14	1840	ԹՄՁԹ	.....	8	.....	.....
Հրդեհ 'ի Մահմուտ փաշայն .....						Յոհաննէս	Յակոբոս	Մէճիտ
Լիզորիոս պատրիարք Յունաց՝ որ հակառակ էր Լուտերական աղանդոյն, ընկեցաւ 'ի պատրիարքութենէն 'ի խնդրոյ դեսպանին Անգլիացւոց: Եւ նստաւ Անթիմոս մետրապոլիտն Գափուտաղի .....	Փետր.	20	1840	ԹՄՁԹ	1200	8	1	1
Յակոբոս պատրիարք առեալ ընդ իւր զՅով-								
հաննէս եպիսկոպոս փոխանորդն սուրբ Երու-								
սաղէմի՝ եւ զԱնթիմոս պատրիարքն Յունաց,								
գնաց 'ի դատ ընդ առաջնորդին Կաթողիկաց								
առաջի Գատրի պէյ դատաւորին Կոստանդ-								
նուպօլսոյ, եւ անդ յետ բազում վիճաբանու-								
թեանց վճռեցաւ յետս դարձունել զեկեղե-								
ցիսն Ասորւոց առ ինքեանս .....		28	.....	.....	.....	.....	.....	.....
ՀԱրկ իւրաքանչիւր հարկատու ազգաց՝								
յանձնեցաւ 'ի ձեռս ազգապետաց նոցին՝ հա-								
ւաքել յազգէն, եւ հատուցանել արքունի					1207		2	.....
գանձարանին .....	Մարտ	1	.....	.....	.....	.....	.....	.....
Յակոբոս պատրիարք սահմանեաց գանձա-								
րան արկեց 'ի պատրիարքարանն, հաւաքել								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնում	Օր	Ըմբռնում Քրիստոսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրային Էջմիածնայ	Պարբերակ Կ.Պ.Օլոսոյ	Թվական Օմանկանց
անդ զտուրս 'ի ժողովրդենէն, եւ անտի հոգալ զպէտս հիւանդանոցին՝ տնանկ աղքատաց՝ եւ դպրատանց՝ եւ վասն պատահարաց .....	Մարտ	7	1840	.....	1206	8	2	1
Փոփոխեաց Յակոբոս պատրիարք եւ զառաջնորդսն Մշոյ, Կարնոյ, Սեբաստիոյ, Եւզոկիոյ, Պրուսայոլ, եւ այլոց վիճակաց՝ առ 'ի ժողովել զտուրս եւ զընծայս 'ի նորոգ վիճակելոց. Հազուագիւտ լինելով ոսկի եւ արծաթ՝ դրամաթուղթ սահմանեաց արքայ 'ի կիր առնուլ յառեւտուրս քաղաքին, զոր եւ տպագրութեամբ եւս 'ի լոյս էած յետ միոյ ամին .....	Մարտ	12	1840	ԹՄՁԹ	1206	8	2	1
Սահմանեցաւ եօթն թնդանօթս արձակել եւ կանթեղս վառել 'ի գլուխ աշտարակի Սէրասքէր գափուսիին, եւ 'ի գազաթ բարձր բլրոյն՝ որ կոչի Քիւնան թէքէսի առընթեր Իճատիէ ապարանիցն Վանի գիւղին, յորժամ հրդեհ ինչ պատահիցի .....	.....	17	.....	.....	.....	.....	.....	.....
Պատերազմ Անգլիացւոց ընդ Հնդկաց՝ ընդ Աղուանից՝ եւ Չինաց .....	Ապրիլ	20	.....	.....	.....	.....	.....	.....
Աւարտեցաւ հոյակապ շիրիմ արքային Սուլթան Մահմուտայ 'ի Ֆազլը փաշա .....	Ապրիլ	28	1840	.....	.....	8	2	1
Ծնաւ որդի արքային Սուլթան Մէհմէտ Միւրատ, ընդէպ 25 .....	Յուլիս	12	.....	.....	.....	.....	.....	2
.....	Սեպտ.	9	.....	.....	.....	.....	.....	.....

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնված	Օր	Ըմբռնված Քառակուսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթնոջված Էջմիածնայ	Պարբերակ Վ.Պ.Օլոսոյ	Թափանցիկ Օմանեանց
<p>Անձրեւ սաստիկ յոյժ, որ հեղեղեալ 'ի Պէ- չիքթաշ` տարաւ զկին ոմն 'ի ծով. եւ զհարիւ- րապետ զոմն Բրուսիացի շրահեղձ արար 'ի գետն Քեաղատհանէ` յանցանելն երիվարաւ ընդ կամուրջ նորին .....</p> <p>Հարսանիք Աթիէ Սուլթանի քեռ արքային, որ տուաւ 'ի կնուծիւն Ֆէթհի Ահմէտ փաշա- յին, ճէմազիւլ ախրը 15 .....</p> <p>Ընկեցաւ Յակովբոս 'ի պատրիարքութենէն, եւ վերադարձաւ Ստեփաննոս, որում եւ խորհրդական կարգեցաւ Պօղոս եպիսկոպոս առաջնորդն Զմիւռնոյ. իսկ Յակովբոս գնաց յառաջին իւր վիճակ առաջնորդութեան Մար- գուան եւ Ամասիա քաղաքաց .....</p>	<p>Օգոստ</p> <p>Օգոստ.</p> <p>Սեպտ.</p>	<p>22</p> <p>18</p> <p>15</p>	<p>.....</p> <p>1840</p> <p>.....</p>	<p>.....</p> <p>ԲՄՁԹ</p> <p>.....</p>	<p>.....</p> <p>1206</p> <p>.....</p>	<p>.....</p> <p>8</p> <p>.....</p>	<p>.....</p> <p>2</p> <p>ՍՏԵՓԱՆ վերադաս</p>	<p>.....</p> <p>2</p> <p>.....</p>
<p>Ծնաւ դուստր Արքայի Ֆաթմա Սուլթան ա- նուն .....</p> <p>Հրդեհ մեծ յՕտէսա, ուր ջուրք պաղեալ գո- լով` ճարակեցաւ յոյժ .....</p> <p>Անգլիացիք եւ Գերմանացիք ձեռնտու եղեն Արքայի նաւուք եւ զօրօք յաղթել Մէհմէտ Ալիի, եւ զերծուցանել զնաւատորմն 'ի գե- րութենէն: Ուստի եւ գնացեալ նաւատորմաւ</p>	<p>Սեպտ.</p> <p>Դեկտ.</p>	<p>16</p> <p>6</p>	<p>1840</p> <p>.....</p>	<p>ԲՄՁԹ</p> <p>.....</p>	<p>.....</p> <p>.....</p>	<p>Յօհաննէս</p> <p>8</p> <p>.....</p>	<p>Ստեփան</p> <p>9</p> <p>.....</p>	<p>Մէհմետ</p> <p>2</p> <p>.....</p>



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական հայոց	Թուական Տաճկաց	Կալենդրական Էջմիածնայ	Պարբերական Կ. Պ. Օլոսոյ	Թվականը Օսմանական
'ի Պաղեստին՝ առին 'ի ձեռաց Իպրահիմ փաշային գրբուտոն, գ Գազա, գ Յոպպէ, եւ հուսկ յետոյ գ Աքեայ. եւ փախստական արարին զգօրս Եգիպտոսի .....	Հոկտ.	17	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի միում գիշերի յԱրնավուտ գիւղն, յԱխրը գափուն, եւ 'ի Գասըմ փաշայն .....	Յունվ.	5	1841	ՌՄՂ	.....	9	9	.....
Այրեցաւ պատրիարքարան Ս. Գէորգ եկեղեցւոյն Սամաթեոյ .....	Փետր.	9	1841	ՌՄՂ	1406	9	9	2
Ծնաւ դուստր ԱՐ. քայի Պէհիյէ Սուլթան աւուն .....	.....	9	.....	.....	.....	.....	.....	.....
Շարժ յիններորդ ժամու գիշերիս .....	Մարտ	5	.....	.....	1407	.....	.....	.....
Հրդեհ յԱրնավուտ գիւղն, այրեցան 14 տունք Հրէից, եւ քանի մի տունք եւ կրպակք Յունաց .....	Մարտ	26	1841	.....	.....	9	9	2
Անճարացեալ Մէհմէտ Ալիի՝ եթող զՊաղեստին եւ գ Ասորեստան, բաւականացեալ միայն կուսակալութեամբն Եգիպտոսի տիրել յորդոնոց յորդիս, եւ յանձնեաց Գոմօտօր Նազիէ ծովակալին Անգլիացոց զնաւատորմն Ն4 նաւուց, որ յաղթանակաւ եկն եւ եմուտ 'ի Կոստանդնուպօլիս .....	.....	4	.....	ՌՄՂ	.....	.....	.....	.....
Իբրու երեք հարիւր ոգիք 'ի ժողովրդենէ Հայոց հաւաքեցան 'ի ճեմարանն Իւսթիւտա-								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռ	Օր	Ըմբռ Բրնարոսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Ամբողջությամբ Էջմիածնաց	Պարբերակներ Ա.Պ.Օլոսոյ	Թափանցող Օմանեանց
ըռ թելադրութեամբ Յակոբիկ աղայի Մանուէլեան տնօրինին յիշեալ ճեմարանին, եւ ուխտեցին գրով եւ կնքով յառաջացուցանել զճեմարանն՝ անկախ 'ի հպատակութենէ ամիրայից .....	Ապրիլ	13	.....	.....	.....	.....	.....	.....
Գլխաւորք ժողովոյն կոչեցան 'ի պատրիարքարանն եւ յանդիմանեցան. ուստի եւ այսօր Թօհաֆճի Եղիազար ոմն առեալ ընդ իւր զտասն եւ վեց տղայս ճեմարանին՝ մատոյց առ Արքայ զգիր աղերսանաց, զի արտօնութիւն շնորհեսցի արուեստաւորաց հոգալ ըզպիտոյս ճեմարանին՝ անկախ 'ի գործադրութենէ հատաւաճառաց .....	Ապրիլ	18	1841	ԹՄՂ	1407	9	9	2
Ապստամբութիւն յարուցին բնակիչք նիշ գաւառին Բուլղարաց. բայց Մուստաֆա բղեշխ տեղւոյն պատուհասեալ զգլխաւորս ապստամբաց՝ խաղաղեցոյց զամբոխն .....	Մայիս	6	.....	.....	.....	.....	.....	.....
Ծովակալ Թահիր փաշայն դնաց նաւատորմաւ հանդերձ 'ի վերայ ապստամբաց Կրետէ կղզւոյն, եւ հնազանդեցոյց զնոսա քաղցրութեամբ .....	.....	13	.....	.....	.....	.....	.....	.....
Յովհաննէս եպիսկոպոս փոխանորդն Երու-								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթնաշերտի Էջմիածնայ	Պարբերականի Կ.Պ.Օլոսոյ	Թաղամասի Օսմանական
սաղէմայ՝ 'ի կողմանէ պատրիարքին գնաց 'ի Դուռն արքունի առ Րիֆաթ փաշայն՝ խօսիլ դատաստանաւ ընդ գլխաւորաց հասարակութեանն .....	.....	27	.....	.....	.....	.....	.....	.....
Ժանտախտ ահագին 'ի Կարին եւ 'ի շրջակայ գիւղօրէս նորա .....	Յունիս	1	1841	.....	.....	9	9	3
Կարգեցան արքունի հրամանաւ 24 անձինք 'ի գլխաւոր արուեստաւորաց հոգաբարձու լինել ազգային ելուծից յարկեղէ պատրիարքարանին .....	Յուլիս	1	1841	ՌՄՂ	ՂԿԿ	9	9	3
Հրդեհ ահագին 'ի Ձմիւռին, որ այրեաց գրեթէ գերրորդ մասն քաղաքին, եւ վնաս հրդեհին հաշուեն երկու հարիւր յիսուն հազար քսակք արծաթոյ .....	.....	17	.....	.....	.....	.....	.....	.....
Վախճանեցաւ Գաբրիէլ պատրիարք Երուսաղէմի, եւ յաջորդեաց Ջաքարիա արք եպիսկոպոս .....	Օգոստ	2	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ 'ի Լանկա 'ի ձէլատ չէջմէսին .....	.....	11	.....	.....	.....	.....	.....	.....
Հրովարտակ արտօնութեան 24 հոգաբարձուացն յետս կոչեցաւ արքունի Դրանէն. յորմէ ծագեցաւ աղմուկ մեծ 'ի մէջ ժողովրդեան, եւ ետուն զգիր աղերսանաց առ Արքայ բողոքելով գհատավաճառ ամիրայից ....	.....	14	.....	.....	.....	.....	.....	.....

ՔՐՈՍԻԿՈՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնված	Օր	Ըմբռնված Քառակուսի	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթնոջեղակ Էջմիածնայ	Պարբերակ Ա.Պ.Օլոնոյ	Թափանցիկ Օմանկանց
<p>Կոչեաց խարիճիյէ միւշիբի Բիֆաթ փաշայն գքսան եւ չորս հոգաբարձունն, եւ խնդրեաց 'ի նոցանէ զայնոսիկ, որք համարձակեցան բողոքել առ Արքայ աղերսագրով. եւ 'ի գլանալ նոցա` էարկ զնոսա 'ի բանտ. կոչեցան 'ի Դուռն եւ եպիսկոպոստունք եւ ամիրայք: Լուր բանտարգելութեան սոցա հասեալ 'ի շուկայս քաղաքին, եւ ահա ժողովուրդ բազում իբրու երկուց հազարաց լցան յապարանս մեծի վէզիբին, եւ միաբերան աղաղակէին, թէ ոչ կամիմք մեք զպատրիարք մեր, եւ ոչ ճանաչեմք զհատավաճառս զայսոսիկ: Տեսեալ Բիֆաթ փաշայն զայս մեծ ամբոխ, գահի հարաւ, եւ քաղցրութեամբ համոզեալ արձակեաց զժողովն եւ գքսան եւ չորս հոգաբարձունն .....</p>	Օգոստ	24	1841	ՌՄՂ	1207	9	9	3
<p>Հրդեհ 'ի Զմիւռին. այրեցան 40 տունք եւ 60 կրպակք .....</p>	Սեպտ.	4	.....	.....	.....	.....	.....	.....
<p>Կոչեցան յԱհքեամի Ատիլիէն գլխաւորք առուեստաւորաց, եւ հարցան նոցա խնդիրք. իսկ նոքա այլ ընդ այլոց պատասխանեցին .. Աքսորեցան Պողոս եւ Սեթեան Յովհաննէս վարդապետք, Մանուէլեան Յակոբիկ, ոսկե-</p>	Սեպտ.	13	1841	.....	.....	9	9	3

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնություն	Օր	Ըմբռնություն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Ամենամյա Էջմիածնայ	Պարբերական Կ.Պ.Օլոսոյ	Թաղանթի Օմանեանց
ըիչ Անդաս, գինեպան Իսկէնտէր, պասմաճի Հաճի Պետրոս, Տիվիթեան Գէորգ, Յարթաքի. եւ այլ եւս ոմանք 'ի գլխաւորաց ամբոխին փախուցեալք թագեան յահէ աքսորանացն ..	.....	16	.....	.....	.....	.....	.....	.....
Ստեփանոս հրաժարեցաւ 'ի պատրիարքութեանն, եւ գնաց 'ի նախկին վիճակ իւր 'ի վանս Արմաշու. եւ նստաւ պատրիարք` Աստուածատուր եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի ...	.....	19	.....	.....	.....	.....	.....	.....
Սաստիկ շարժ յուր եւ կէս ժամու գիշերոյն, որ երիցս ցնցեալ` կործանեաց զբազում շինուածս տանց, որմոց, պանդոկաց, բաղանեաց, եւ 'ի ներքոյ փլատակացն մեռան բազում անձինք ..	Սեպտ.	23	1841	ԹՄՂ	1407	9	ԱՍՏՈՒԾՏՐ 1	3
Փակեցաւ Ճեմարանն, եւ ցրուեցան տղայք 'ի տունս իւրեանց ..	Հոկտ.	3	.....	ԹՄՂ	.....	9	1	3
Բողոքեցին արուեստաւորք 'ի Դուռն արքունի զամիրայից, թէ մեք չեմք անհնազանդք, բայց եւ ոչ ծառայք եւ ոչ գերիք հատապաճառաց ..	Նոյեմ.	9	1841	.....	.....	.....	.....	.....
Աղաղակ ժողովրդեանն սաստկացաւ, եւ միաբան ընտրեցին մեռանել, քան ծառայել հրամանաց ամիրայից. ընդ որ զահի հարան հատապաճառք եւ պատրիարքն եւս: Եւ մի								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռն	Օր	Ըմբռն Քրոնիկոն	Թուական Հայոց	Թուական Տաճկաց	Կաթողիկոսի Էջմիածնայ	Պարբերակի Ա.Պ.Օլոնոյ	Թվական Օմանկանց
<p>ոմն 'ի հատավաճառաց Արզուման աղա՝ այր ազգասէր եւ խոհական՝ բազում աշխատանօք եւ պէսպէս համողողական խրատութեւ եւ աղերսանօք հազիւ կարաց խափանել զչարն եւ ցածուցանել զսրտմտութիւն ժողովրդոցն .....</p>	Դեկտ.	4	.....	.....	.....	.....	.....	.....
<p>Արքունի հրամանաւ ընտրեցին զքսան եւ եօթն անձինս յարուեստաւորաց՝ լինել տեսուչ եւ հոգաբարձու ելումտից արկեղն պատրիարքարանին, եւ առին կնիքս 'ի պատրիարքէն եւ յամիրայից՝ չխառնիլ ընդ գործս նոցա որով եւ իցէ եղանակաւ .....</p>	Դեկտ.	12	1841	ՌՄՂ	1207	9	1	3
<p>Ծնաւ արքայի դուստր Բէֆիա Սուլթան.....</p>	Յունվ.	25	1842	.....	1208	10	2	3
<p>Թուղթ արքունի հարկին՝ որ երբեմն ազգապետաց յանձնեցաւ հաւաքել, այժմ յանձնեցաւ փօսթահանէ նազըրիին, որ եւ յետոյ աւանդեցաւ Իհթիսապ աղասիյին .....</p>	Մարտ	11	.....	.....	.....	.....	.....	.....
<p>Վախճանեցաւ Յովհաննէս կաթողիկոս Ս. Էջմիածնի, եւ ընտրութեան միջոց տուաւ ամ մի, 'ի յաջորդ ամին 1843 ազգային ժողովով ընտրել 'ի Ս. Էջմիածին .....</p>	Մարտ	25	.....	.....	.....	.....	.....	.....
<p>Երկու սենեակ ընկերութեան հաստատեաց տէրութիւնն 'ի գլխաւոր հատավաճառս, մին՝</p>								

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	ԸՖԻՆՅ	Օր	ԸՖՅ Քրիստոսի	ԹՊՈՒՆԱԿԱՆ ՀԱՅՈՅ	ԹՊՈՒՆԱԿԱՆ ՏԱՃԷԱՅ	ԱՄԵՆՈՒՆԵՐԻ ԷՋՄԵՆՅԱՅ	ՊԱՐՐԵՎԵՐԻ ԱՊՕԼՈՅ	ԹՎԱՆՈՐԷ ՕՍՄԱՆԵԱՆՅ
Ասիակողման, եւ միւսն՝ Եւրոպակողման: Ասիակողմանն՝ կարգեցան Ուզունեան Յարութիւն, Քիւրքճիխանցի Պետրոս, Միսաք, Ճէզայրլեան Մկրտիչ, Պաղտասար Չարագեան, եւ Պողոս Աշնանեան: Իսկ Եւրոպակողմանն՝ Ճանիկ, Մազսուտ, Մահտեսի Յարութիւն Կէլկէլեան, Աբրահամ Ալլահվէրտեան, Յովհաննէս Թընկըրեան, եւ Յովսէփ Տավուտեան: Եւ սոցա պաշտօնէ զպայմանեալ Հարկս եւ տուրս իւրաքանչիւր քաղաքաց վերածել 'ի Կոստանդնուպօլիս, եւ հատուցանել արքունի գանձարանին ըստ ժամանակին: Բայց ամենեցուն սոցա գլուխ կարգեցաւ Ուզունեան Յարութիւն ամիրայ՝ որում եւ Իֆթիխար նիշանի պարգեւեաց Արքայ ականակապ .....	Մարտ	26	1842	ՌՄՂԱ	1208	..... Միջոց Պարապոյ	ԱՍՏՈՒՄՏՐ 1	Մէճիտ 3
Ութեքին հատավաճառք հայազգիք խոյս ետուն 'ի Ռուսաստան՝ մտանել ընդ իշխանութեամբ Ռուսաց .....	Ապրիլ	25	1842	.....	.....	.....	.....	4
Սկսաւ շինութիւն Փաշա գափուսիին, որոյ ճարտարապետ կարգեցաւ Յոյն ոմն Հաճի Ստէֆանի անուն .....	Յունիս	9	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ յեջնի գիւղ, այրեցան 21 տունք Յունաց .....	.....	21	.....	.....	.....	.....	.....	.....





ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	Ըմբռնում	Օր	Ըմբռնում Քրիստոսի	Թո՛ւսական Հայոց	Թո՛ւսական Տաճկաց	Կաթոնջնակ Էջմիածնայ	Պարբերակ Կ.Պ.Օլոսոյ	Թա՛վաւոր Օսմանեանց
Եւ այլոց կարեւորաց .....	Հոկտ.	15	.....	.....	.....	.....	.....	.....
Ծնաւ արքայի դուստր Ալիէ Սուլթան .....	Հոկտ.	17	.....	.....	.....	.....	2	4
Հրդեհ 'ի Նաքըլ պէնտ, այրեցան 48 տունք.. Եղեւ ժողով 'ի պատրիարքարանին ամիրա- յից եւ գլխաւոր արուեստաւորաց, եւ պատա- ռեցաւ առաջին կնքեալ թուղթն՝ զոր ետուն ամիրայք, եւ վերատեսչութիւն ազգային հո- գաբարձութեան գրաւեցաւ դարձեալ 'ի ձեռս ամիրայից .....	Նոյեմ.	13	.....	.....	.....	.....	.....	.....
Հրդեհ մեծ 'ի Լիվրբուլ քաղաք Անգլիոյ, ո- րոյ վնասն հաշուեցին 11 հազար քսակ ոսկ- ւոյ .....	Դեկտ.	13	1842	ԲՄՂԱ	1208	.....	2	4
Մեռաւ քոյր արքային Սուլթան Մէճիտի Սալիհէ Սուլթան, որ էր կին ծովապետ Խալիլ փաշային .....	Յունվ.	24	1843	ԲՄՂԲ	1209	.....	.....	.....
Փոթորիկ ահագին հիւսիսային հողմով.106 նաւք կորեան 'ի Պոնտոս .....	.....	25	.....	.....	.....	.....	.....	.....
Եղեւ ժողով 'ի սուրբ Էջմիածին 40 անձանց հոգեւորական եւ մարմնաւորական երեսփո- խանաց վասն ընտրութեան նոր կաթողիկոսի, եւ առաքելական վիճակաւ ընտրեցաւ Տէր Ներսէս Ե" Աշտարակեցի առաջնորդն Պեսա- րապիոյ եւ Նոր Նախջեւանու: Զայս ընտրու-								



ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ	ԸՖԻՆՅ	Օր	ԸՖՅ Քրիստոսի	Թ՝Ո՝ԱԿԱՆ ՀԱՅՈՅ	Թ՝Ո՝ԱԿԱՆ ՏԱՃԷԱՅ	ԱՆՈՂՆԵՐԻ ԷՋՄԵՆՅԱՅ	ՊԱՐՏԵՐԻ ԱՊՕԼՈՅ	Թ՝ԱՆՈՂ ՕՎԱՆԵՆՅ
ձմերել 'տ Պետրբուրգ, եւ 'ի մուտս գարնան յաջորդ տարւոն ելանել 'ի ճանապարհ գնալ յէջմիածին .....	.....	13	.....	.....	.....	.....	.....	.....
Սամաթիացի երիտասարդ ոմն Հայազգի Յո- վակիմ անուն՝ որ չորս ամօք յառաջ ընկա- լեալ էր զՄահմէտական օրէնս, եւ ապա զղջացեալ եւ կերպարանափոխ եղեալ ըստ տարազու Եւրոպացւոց շրջէր յանձանօթս, մատնութեամբ ոմանց կալանաւորեալ մատ- նեցաւ 'ի տանջանս: Դեսպանն Անգլիոյ Լօրտ Քանինկ թախանձեալ յողորմելի ծնողաց երի- տասարդին, բազմօք աշխատ եղեւ ապրեցու- ցանել 'ի մահուանէ, բայց կառավարութիւնն զլիսատեաց 'ի Պալըզ բազար դուռն Կ. Պօլսոյ, եւ բեզոյրն (չաբղա) եղաւ ընդ երաստանաւ զլիսատելոյն .....	Օգոստ	17	1843	ՌՄՂԲ	1709	1	2	5
Աւարտեցաւ շինութիւն Փաշա գափուսիին, եւ ճարտարապետ նորին Ստէֆանի ընկալաւ նշան պատուոյ 'ի Բ. Դրանէ .....	.....	27	.....	ՌՄՂԳ	.....	.....	.....	.....
